Ա.Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ, ԱՆԱՏԱՐՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

9(47.925)
Հ-20

Ա.Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՏՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

XIX դարի վերջ-XX դարի սկիզբ

2704

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1990

ԳՄԴ 63.3 (22) 5
Հ 205

Գրախոս՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ.
Լ. Ա. ՀՈՒՐՇՈՒԴՅԱՆ
Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու
Դ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Համբարյան Ա. Ս.

Հ 205 *Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (XIX դարի վերջ—XX դարի սկիզբ) /[խմբ.՝ Դ. Ա. Մուրադյան].— Եր.։ Հայաստան, 1990.— 480 էջ։*

Աշխատության մեջ քննվում են հայ հասարակական հոսանքների և քաղաքական կուսակցությունների տեսակետները արևմտահայության ազատագրության ուղիների մասին 1878—1917 թթ. ժամանակաշրջանում։ Ցույց են տրվում նրանց դիրքորոշման փոփոխությունները պատմական տարբեր պայմաններում, մասնավորապես 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո։ Քննադատվում է բուրժուական շրջանների արևմտաեվրոպական սխալ կողմնորոշումը։ Վեր են հանվում արևմտահայության ազատագրման համար հայ ազգային ուժերի համախմբման փորձերը։

Նախատեսվում է պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար։

Հ 0503020913 / 701 (01) — 90 39 — 89

ISBN 5-540-00304-7

© Համբարյան Ա. Ս., 1990

ԳՄԴ 63.3 (22) 5

Նվիրում եմ
մեծագետ երկրաշարժից
զոհվածների հիշատակին

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության ուսումնասիրությունը խորհրդահայ պատմագիտության առաջնակարգ խնդիրներից է։ Մասնագետները, երկար տարիներ զբաղվելով այդ պրոբլեմով, գիտական շրջանառության մեջ են դրել նորանոր նյութեր և դրա վերաբերյալ ստեղծել արժեքավոր աշխատություններ։ Նրանք հետազոտել են նաև XIX դ. վերջի—XX դ. սկզբի հայ հասարակական-քաղաքական միտքը և լուսաբանել նրա առանձին պրոբլեմները։ Պատմաբաններն անդրադարձել են արևմտահայության ազատագրության խնդիրներին և ցույց տվել դրանց արտացոլումը նաև հայ գաղափարախոսության մեջ։

Ներկա աշխատության նպատակն է ներկայացնել հայ հասարակական հոսանքների ու քաղաքական կուսակցությունների տեսակետներն արևմտահայության ազատագրության ուղիների մասին XIX դ. վերջին և XX դ. սկզբին։ Այն ցույց է տալիս, թե նրանցից յուրաքանչյուրն ինչպես էր կամենում փրկել արևմտահայությանը վերահաս կործանումից։ Այդ պրոբլեմների լուսաբանման համար օգտագործվել են տարբեր ուղղություններին պատկանող պարբերականները («Մշակ», «Մուրճ», «Մասիս», «Արևելք», «Բյուզանդիոն», «Արարատ», «Անահիտ», «Արմենիա», «Նոր կյանք», «Ազատամարտ», «Վան-Տոսպ», «Հընչակ», «Մեղու Հայաստանի», «Մարտ», «Ձայն հայրենյաց», «Երկրի ձայն», «Կոչնակ», «Ապագա» և այլն), առանձին գործիչների հրապարակախոսական ու գեղարվեստական ստեղծագործությունները (Րաֆֆի, Ա. Արփիարյան, Ա. Չոպանյան, Գր. Զոհրապ, Դ. Վարուժան, Սիամանթո), բազմաթիվ այլ նյութեր,

ինչպես նաև խորհրդահայ պատմագիտության ու գրականագիտության նվաճումները։

Դիտելով երևույթներն իրենց դինամիկայի մեջ, մենք վեր ենք հանել նրանց ելևէջները՝ կապված այնպիսի կարևոր իրադարձությունների հետ, ինչպիսիք են 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, 1895—1896 թթ. հայկական կոտորածները, 1905—1907 թթ. ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխությունը, Հայկական հարցի վերաբացումն ու քննարկումը 1912—1914 թթ. և այլն։

Առանձնակի ուշադրություն ենք դարձրել այն հարցին, թե հայ հասարակական-քաղաքական ուժերն ինչ էվոլյուցիա ապրեցին իրենց հայացքներում ու ծրագրերում 1908 թ. Թուրքական հեղաշրջման ազդեցության տակ և ինչպես սկսեցին պատկերացնել արևմտահայության ապագան։ Այդ հարցի լուսաբանումն ունի արդիական նշանակություն. այն մերկացնում ու մերժում է ժամանակակից թուրք պետական, հասարակական-քաղաքական գործիչների ու պատմաբանների կողմից հայերին վերագրվող անհիմն մեղադրանքներն ու զրպարտությունները և համոզիչ կերպով ցույց է տալիս, թե ինչպես էին երիտթուրքերը ձգտում իրագործել իրենց հայակուլ քաղաքականությունն անգամ այն դեպքում, երբ հայերը 1908 թ. հետո, թողնելով անջատողական տրամադրությունները, կամենում էին ձեռնամուխ լինել ամբողջ Թուրքիայի վերակառուցման գործին, ապրել ու քայլել թուրքերի հետ միասին, լծվել կայսրության բոլոր ժողովուրդների առաջընթացին։

Շարադրելով հասարակական-քաղաքական հոսանքների, կուսակցությունների ու գործիչների հայացքներն առանձին-առանձին, միաժամանակ համեմատում ենք դրանք միմյանց հետ և վեր հանում նրանց միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները։ Մենք ելնում ենք այն փաստից, որ հոսանքները չեն անհետանում կուսակցությունների երևան գալով։ Նրանք մղվում են հետին պլան, բայց գոյատևում են նաև կուսակցությունների առկայության պայմաններում։ Կուսակցությունները հոսանքների առաջավոր, մարտական ջոկատներն են։

Ելնելով պրոբլեմի բարդությունից, մենք կատարել ենք մի շարք սահմանափակումներ։ Նախ՝ վերլուծել ենք տվյալ հոսանքի ոչ թե բոլոր, այլ առավել հայտնի ներկայացուցիչների հայացքները արևմտահայության ազատագրության մասին։

Երկրորդ՝ շրջանցել ենք այդ հարցի վերաբերյալ փոքր կազմակերպությունների ու խմբակների տեսակետները։ Երրորդ՝ օգտագործել ենք հասարակական հոսանքների ու քաղաքական կուսակցությունների առավել նշանավոր ու բնորոշ պարբերականները, գործիչների հրապարակախոսական աշխատությունները։ Չորրորդ՝ անդրադարձել ենք կուսակցությունների դրեթե բացառապես ծրագրային փաստաթղթերին, այսինքն՝ այն ամենին, ինչ վերաբերում է հասարակական-քաղաքական մտքին։ Հինգերորդ՝ գրականության մեջ արծարծված մեզ համար անընդունելի կարծիքները մերժել ենք մեր տեսակետների պողիտիվ շարադրանքով։

Մյուս կողմից, դիտելով երևույթներն իրենց փոխադարձ կապի ու կապակցությունների մեջ և խուսափելով նրանց մեխանիկական անջատումից, հասարակական հոսանքների, քաղաքական կուսակցությունների ու գործիչների հայացքները վերլուծելիս չենք սահմանափակվել միայն արևմտահայության ազգային ազատագրման հարցով։ Մենք անդրադարձել ենք նաև այն պրոբլեմներին, որոնք սերտորեն կապված են նրա հետ (հողային հարցը, Արևմտյան Հայաստանի ճնշված ժողովուրդների համագործակցության խնդիրը և այլն)։ Հանրահայտ է, որ արևմտահայության ազգային ազատագրումն անհնարին էր առանց նրա հողային խնդրի, առանց հարևան ժողովուրդների սոցիալական ու ազգային պրոբլեմների լուծման։

Անշուշտ, խորհրդային պատմաբաններն ու գրականագետները ավելի կամ պակաս չափով հետազոտել են մեզ հետաքրքրող պրոբլեմի առանձին կողմերը, բայց տակավին ամբողջական աշխատություն չեն ստեղծել նրա մասին։ Ներկա ուսումնասիրությունը փորձում է վերացնել այդ բացը։ Այն հաստատում է իր նախորդների ընդունելի դրույթները նոր փաստերով, ավելի է խորացնում նրանց գիտական մշակումը և առաջ է քաշում ու լուծում տակավին ստվերում մնացած մի շարք խնդիրներ։ Ընթերցողին համոզելու համար գերադասել ենք բերել կոնկրետ քաղվածքներ, քան վերաշարադրել դրանց բովանդակությունը կամ վկայակոչել աղբյուրները։

Գլուխ առաջին

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կղերապանպաննողականներ

XIX դ. վերջին և XX դ. սկզբին արևմտահայության դրությունը, սուլթանական կառավարության վարած հայաջինջ քաղաքականության հետևանքով, գնալով դառնում էր ավելի ու ավելի մղձավանջային։ Թուրքական բռնակալական վարչակարգը դատապարտել էր նրան ոչ միայն աղքատության ու թշվառության, այլև ֆիզիկական բնաջնջման։ Արևմտահայության ազատագրության հարցը դրվել էր հայ հասարակայնության բոլոր շրջանների ուշադրության կենտրոնում, դարձել էր նրանց հուզող ու այրող առաջնակարգ խնդիրը, անհապաղ լուծում պահանջող հարցերի հարցը։ Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության համար փրկության ելք էր որոնում։ Տասնամյակներ շարունակ այն դեգերում էր ծանոթ ու անծանոթ բավիղներում, մոտիկ ու հեռու ոլորտներում, բախվում էր անառիկ պատնեշներին, փշրվում, բայց, ուժեր հավաքելով, շարունակում էր իր որոնումները։

Դիտակցելով հզորի և տկարի հարաբերակցությունը և վերանայելով իրենց գործելակերպը, հայ հասարակական-քաղաքական ուժերը փորձում էին համախմբվել ու մշակել արևմտահայության ազատագրության միասնական տեսություն։ Սակայն չկարողանալով հաղթահարել իրենց դասակարգային հակասությունները, չէին հանդում ընդհանուր հայտարարի։ Ընդհակառակը, ներկուսակցական կատաղի պայքարում նրանք ավելի էին տարանջատվում և առավել դժվարացնում արևմտահայության ազատագրության հարցի լուծումը։

XIX դ. վերջին արևմտահայության ազատագրության վերաբերյալ իրենց որոշակի տեսակետներն ունեին հայ իրականության մեջ գործող կղերաազգային, ազգային-պահպանողական, լիբերալ-բուրժուական և դեմոկրատական հասարակական հոսանքները[1]։ Կղերաազգային հոսանքի ներկայացուցիչները, ինչպես նշում է Ա. Գ. Հովհաննիսյանը, կանգնած չէին «հայկական միջնադարում իշխած ֆեոդալական գաղափարախոսության դիրքերի վրա», չէին քարոզում «բացարձակ խավարամտություն»։ Ընդհակառակը, նրանց մեջ «կային կրթված մարդիկ, որոնք վայելում էին ուսումնական ու գիտուն մարդկանց համբավ[2]», նրանք այդ հոսանքի ներկայացուցիչներ էին հորջորջվում նրա համար, որովհետև պաշտպանում էին ֆեոդալական վերնախավերի շահերը։

Թեև XIX դ. վերջին և XX դ. սկզբին պահպանողական այդ հոսանքը կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով արտամղվում էր կամ կատարում բուրժուական էվոլյուցիա, բայց դեռ գոյատևում էր, որոշակի դեր խաղալով հասարակական-քաղաքական կյանքում։

Հայ պահպանողականները, որոնց մեջ շատ կային բարձրաստիճան հոգևորականներ, արևմտահայության կենսական հարցերի լուծումը տեսնում էին 1878 թ. Բեռլինի կոնգրեսի Հայկական հարցի վերաբերյալ հաստատած նախագծի, կամ, ինչպես հաճախ հիշատակվում է այն պատմագիտական գրականության մեջ, Ներսես Վարժապետյանի ծրագրի իրագործման մեջ։ Ահա այդ փաստաթղթի համառոտ բովանդակությունը.

1. Ստեղծել Արևմտյան Հայաստան կամ Տաճկահայաստան, մտցնելով նրա կազմում Էրզրումի ու Վանի վիլայեթները, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, Խարբերդի վիլայեթի արևելյան մասը, Արղնի սանջակը, Սղերդի սանջակի հյուսի-

---

1 *Հայ հասարակական հոսանքները լուսաբանված են Ա. Գ. Հովհաննիսյանի (Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, գլ. 5), Մ. Գ. Ներսիսյանի (Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Եր., 1955), Վ. Ա. Գաբամյանի (Հայ հասարակական մտքի հիմնական ուղղությունները XIX դարի երկրորդ կեսին, ՀԵՄՀ ԳԱ «Լրաբեր», 1966, № 12), Հ. Մ. Ղազարյանի (Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Եր., 1967), այդ գրքի մասին տե՛ս մեր գրախոսությունը՝ «Լենինյան ուղիով», 1969, № 7) և այլոց աշխատություններում։*

2 *Տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 1965, № 4, էջ 57։*

սային շրջանները և Բիզեի նավահանգիստը, որով նորաստեղծ վարչական միավորը կապվելու էր ծովախորշի հետ։ Արևմտյան Հայաստանն առաջվա նման մնում էր Թուրքիայի կազմում, սակայն նրա կառավարման համար բարձրագույն Դուռը նշանակում է գեներալ-նահանգապետ, որը հաստատվում է մեծ տերությունների կողմից։ Նահանգապետը, որ նշանակվում էր հինգ տարի ժամանակով, պաշտոնազրկվում կամ հաստատվում է իր տեղում Բ. Դռան կողմից և մեծ պետությունների գիտությամբ, հսկում է երկրի կարգն ու հասարակական ապահովությունը, նշանակում է ստորադաս պաշտոնյաներին՝ սանջակների ու կազակների կառավարիչներին, կազմակերպում է հարկերի հավաքումը, նախագահում է խորհրդի նիստերը՝ բաղկացած ֆինանսական ու հասարակական կառավարիչներից, իրավադետ խորհրդականից, զորամասի հրամանատարից և հայ ու մահմեդական դպրոցների տեսուչներից։

2. Արևմտյան Հայաստանում հավաքված հարկերի 80 տոկոսը ծախսվում է տեղական տնտեսական ու կուլտուրական շինարարությունների վրա և միայն 20 տոկոսը ուղարկվում է Թուրքական կայսերական ֆինանսական նախարարությանը։

3. Արևմտյան Հայաստանում սահմանվում է դավանանքի լիակատար ազատություն։ Մահմեդականների հոգևոր պետը հսկում է միայն շերիի դատարանների գործունեությունը, իսկ քրիստոնյաների ու մահմեդականների միջև առաջացած վեճերը լուծում են գեներալ-նահանգապետի կողմից նշանակված սովորական դատարանները։

4. Արևմտյան Հայաստանի կարգն ու կանոնը, քաղաքացիների անձի և գույքի ապահովությունը հսկում են ժանդարմներն ու ոստիկանները, որոնք հավաքագրվում են հայերից ու որոշ մահմեդականներից, բայց ոչ երբեք քրդերից ու չերքեզներից։

5. Արևմտյան Հայաստանի ընդհանուր խորհուրդը ընտրվում է բնակչության կողմից, տարբեր ազգություններից, զբաղվում է հարկերի բաշխման, հավաքման, երկրի մուտքի ու ելքի և այլ հարցերով։ Ընտրություններին մասնակցում են սեփականատերերը, ուղղակի հարկերի վճարողները և 25 ու ավելի տարիք ունեցողները։ Ընդհանուր խորհրդի նիստերը գումարվում են տարին մեկ անգամ։

6. Այդ բոլոր կետերի կենսագործումը հսկում է մեծ տերությունների կողմից նշանակված մասնաժողովը[1]։

Ինչպես տեսնում ենք, հայ բարձրագույն հոգևորականությունը ցանկանում էր ստեղծել ինքնավար Արևմտյան Հայաստան՝ Թուրքիայի կազմում և Եվրոպայի հսկողությամբ։ Նա ուզում էր պաշտպանել հայ բնակչության անձն ու գույքը ավազակներից և տեղական կարիքներին ծառայեցնել նրանից հավաքած հարկերի ու տուրքերի մեծ մասը։

Սակայն ծրագրում ոչինչ չէր ասվում ոչ հայ գյուղացիության հուզող հողային հարցի և ոչ էլ հարևան ժողովուրդների ազգային խնդիրների մասին։

Ծրագիրը կազմվել էր սուլթանի գիտությամբ և ուղարկվել նախ Սան Ստեֆանո, իսկ հետո՝ Բեռլին, նրա թողտվությամբ։ Գր. Զոհրապը նշում էր, որ 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ, երբ ռուսները ջախջախում էին թուրքերին ու շարժվում առաջ, Աբդուլ Համիդը նրանց առաջխաղացումը կանխելու նպատակով մտածեց ստեղծել «տեսակ մը պատնեշ-պետություն» և 1877 թ. նոյեմբերին առաջարկեց Կ. Պոլսի հայ բարձրաստիճան հոգևորականներին, որ նրանք «հայ բնակչությամբ նահանգներուն համար քաղաքական ինքնավարություն մը պահանջեն Օսմանյան գերիշխանության տակ»[2]։ Բայց երբ բրիտանական նավերը հասան Կ. Պոլիս, սուլթանի երկյուղն անցավ։ Եվ նա հրաժարվեց հայկական ինքնավարության գաղափարից։

Հայ պատվիրակությունը եղավ եվրոպական տերությունների մայրաքաղաքներում, դիմեց նրանց ղեկավարներին, խնդրեց աջակցել Հայկական հարցի լուծմանը, բայց չհասնելով արդյունքի, հետ վերադարձավ։ Զայրացած տերությունների խաբեբայական վարքագծից ու թուրքական կառավարության հայահալած քաղաքականությունից, Մ. Խրիմյանը կանգնեց դեմոկրատիայի դիրքերում և սկսեց պրոպագանդել, որ զենքի ուժով պետք է լուծել Հայկական հարցը։ Կ. Պոլսի հայկական Մայր եկեղեցում պատմելով Բեռլինի կոնգրեսի արդյունքների մա-

---

1 Տե՛ս Սրագիր կազմակերպական կանոնագրի օսմանյան Հայաստանի, Կ. Պոլսի, 1878, «Դրոշակ», 1891, № 1, էջ 4—5։

2 Գր. Զոհրապ, Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ, Պեյրութ, 1976, էջ 7։

սին, նա ասաց, որ այնտեղ հարիսա էին բաժանում, ով չուներ երկաթե շերեփ, «չէր կարող անոր մոտենալ»[1], իսկ ինքը թուղթ ուներ միայն։ Ապա հայտարարեց. «Ժողովո՛ւրդ հայոց, անշուշտ լավ հասկցաք, թե գենէր ինչ կրնար գործել և կգործէ, ուրեմն սիրելի և օրհնյալ հայաստանցինե՛ր, գավառացինե՛ր, երբ հայրենիք վերադառնալու լինիք ձեր բարեկամաց և ազգականաց իրրև պարգև՝ մեկ մեկ գենի տաբեխ, գենի առեխ և դարձյալ գենի. ժողովո՛ւրդ, ամենեն առաջ fո ազատության հույսը fո վրա դիր, fո խելիին ու բազուկին ուժ տուր, մարդ ինքնիրմեն պետք է աշխատի որ փրկվի»[2]։

Բայց հետագա իրադարձությունները փոխեցին Մ. Խրիմյանի համոզմունքները։ Նա հետ քաշվեց երկաթի կամ գենքի պրոպագանդայից և նորից բռնեց թղթի՝ խնդրագրերի, գանգատների, հրաժարումների ու դիմումների ճամփան։ Ավելի ուշ, երբ բազմեց էջմիածնի կաթողիկոսական աթոռին, Մ. Խրիմյանը սկսեց դատապարտել հայերի անգամ մասնակի ելույթները, գրտնելով, որ դրանք առիթ կտան նոր կոտորածներին։ Նա այլևս կողմնակից չէր Հայկական հարցի լուծման ապստամբական ճանապարհին։ Կաթողիկոսն այժմ հորդորում էր ներքին ուժերին՝ վնաս տալ միմյանց դեմ պայքարին, համախմբվել և ընդհանուր ուժերով, իր ղեկավարությամբ լծվել ազգային խնդիրների լուծման գործին։ Այդ գաղափարը նա պրոպագանդում էր նաև գաղթօջախներում։ 1907-ի սեպտեմբերի 20-ին, դիմելով ամերիկահայերին, որոնք տարված էին ազդավնաս ներքին կռիվներով, ահարեկումներով ու սպանություններով, կաթողիկոսն առաջարկում էր՝ թոթափել աւելությունը և լինել «ընդմիշտ մի սիրտ և մի հոգի, համերաշխ և եղբայրական սուրբ սիրով և գործեցեք այնպիսի խոհական իմաստությամբ, զի արգասցիք գործունեության ձերոյ ըստ ամենայնի ոչ լինելին երբեք ի վնաս թշվառ ազգին մերո, այլ օգուտ և ի զարգացումն նորին»[3]։

Կորցնելով հավատը ներքին ուժերի հաղթանակի նկատմամբ, Մ. Խրիմյանը Հայկական հարցի լուծման և արևմտահայության դրության բարելավման գլխավոր լծակը որոնում էր դրսի աշ-

1 Տե՛ս Հ. Ալեմյան, Հայոց Հայրիկ, հ. 1, Թավրիզ, 1927, էջ 512։

2 Նույն տեղը, էջ 513։

3 ՀԱՄՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 563, թ. 1։

խարհում՝ տերությունների միջամտության մեջ։ 1890-ական թվականների կոտորածներից հետո նա ամենից առաջ դիմեց ռուսական ցարին, թեև հանրահայտ էր վերջինիս բացասական դիրքորոշումը արևմտահայ շարժումների հանդեպ։ Շնորհակալություն հայտնելով ինքնակալին Ռուսաստանում արևմտահայերի օգտին հանգանակություն թույլատրելու համար, կաթողիկոսը 1897 թ. հունվարին Նիկոլայ II-ին ուղղած իր նամակում գրում էր, որ Թուրքահայաստանի քրիստոնյաների վիճակի բարելավումը կարող է կատարվել ռուսական սպաների հսկողության անցկացվող բարենորոգումների միջոցով։ «Միայն ռուս սպաների մեջ,— շարունակում էր նա,— կան շատ մարդիկ, այդ թվում նաև հայեր, որոնք գիտեն տեղական պայմանները և ունեն փորձառություն ասիական ժողովուրդների կառավարման համար։ Իհարկե, շատ ցանկալի կլիներ նաև, որ դրա հետ միաժամանակ հայկական պրովինցիաներում նշանակվեին կուսակալներ եվրոպական ներկայացուցիչների համաձայնությամբ՝ որոշակի ժամկետով՝ ոչ պակաս, քան հինգ տարով»[1]։

Գոհացում չստանալով ռուսական ցարից, կաթողիկոսն այնուհետև դիմում էր արևմտաեվրոպական տերություններին։ Այսպես, 1904 թ. գարնանը, Սասունի գոյամարտից հետո, հայկական ջարդերը կանխելու նպատակով, նա Պարսկաստանի, Հնդկաստանի և Ամերիկայի հայոց առաջնորդներից կազմեց մի պատգամավորություն և ուղարկեց Եվրոպա՝ բողոքելու Բեռլինի դաշնագիրը ստորագրած պետություններին՝ սուլթանի հայկական վարքագծի դեմ և առաջադրելու, թե հայերը պահանջում են ոչ թե անկախություն, այլ ապրելու և աշխատելու նորմալ պայմաններ։ Պատգամավորությունը Փարիզում այցելեց Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասեին, Հանրապետության նախագահ Լյուբեյին, իսկ Լոնդոնում՝ Անգլիայի արտաքին գործերի մինիստր Լանսդաունին և, պատմելով արևմտահայության ծանր կացության մասին, օգնություն խնդրեց, սակայն չհասնելով արդյունքի, հետ վերադարձավ[2]։

Չընկճվելով այդ անհաջողությունից, 1904 թ. մայիսի 30-ին Խրիմյանը կրկին դիմեց Ֆրանսիական Հանրապետության նա-

1 ՀԱՄՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 52, թ. 8—9։

2 Տե՛ս «Դրոշակ», 1904, № 8, էջ 109, «Արմենիա», 1904, օգոստոսի 6, հոկտեմբերի 13, 15։

խագահին, նշելով, որ Թուրքիայում, մասնավորապես կայսրության արևելյան վիլայեթներում, սպասվում են հայկական նոր կոտորածներ, խնդրեց կանխել վերահաս վտանգը։ Նա գրում էր, որ 85 տարեկան հասակում աղաչում եմ՝ բարձրացնել մարդասիրության և ազատասիրության ձայն՝ «ի պաշտպանություն և ի բարօրություն տառապյալ և անմեղ հոտին իմոյ, որ ընդ լծոյ մահմեդականության»[1]։

1904 թ. հուլիսի 1-ին կաթողիկոսը նորից դիմեց Նիկոլայ II-ին։ Նրա խնդրագրում ասվում էր. «Բավական է ձեր մի խոսքը, որ վերջ տրվի բոլոր կոպիտ բռնություններին, որոնք գործադրվում են Թուրքիայում իմ հոտի նկատմամբ»[2]։

Հովվապետը նույն հարցով նամակ հղեց նաև ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռուզվելտին։

Մենք չգիտենք, թե ինչ պատասխանեց ֆրանսիական կառավարության ղեկավարը։ Ցարը խոստացավ «Բեռլինի դաշնագիրն ստորագրող տերությունների աջակցությամբ» թեթևացնել արևմտահայերի վիճակը[3], «պայմանով, իհարկե, որ այդ ազգարնակչությունն էլ իր կողմից, մնալով օրենսդրության սահմաններում, դյուրություն կտա պետություններին՝ հասնելու իրենց մարդասիրական նպատակներին»[4]։ Այլ կերպ ասած՝ նա առաջարկեց արևմտահայերին չընդվզել սուլթանի տիրապետության դեմ, տանել նրա անտանելի ռեժիմը։ Իսկ Ռուզվելտը պատասխանեց, որ թեև ինքը համակիր է հայերին, «բայց Ամերիկա Պերլինի դաշնագիրը ստորագրող պետությանց մեջ չգտնվելուն, չի կրնար բան մը ընել»[5]։ Ապա ավելացրեց, որ Ամենայն հայոց կաթողիկոսի նամակը «գոթական գրերով գրված արվեստական հիանալի գործ մը կը ներկայացնե», ուստի ինքը «կախված պիտի պահե իր սենյակին մեջ, իբրև անմոռանալի հիշատակ մը հայոց ծերունազարդ Հայրիկին»[6]։

Այդուհանդերձ, կաթողիկոսը համառորեն շարունակում էր դիմել տերություններին։ 1907 թ. օգոստոսի 10-ին նրա հանձնարարությամբ Գևորգ եպիսկոպոս Յուրենճյանը, Ա. Ահարոնյանը և Հ. Շահնազարյանը խնդրեցին Հաագայի խաղաղության երկրորդ կոնգրեսի մասնակից տերություններին, որ նրանք հարկադրեն թուրքական կառավարությանը թեթևացնելու հայերի դրությունը։ Նրանց խնդրագրում ասված էր. «Նորին սրբություն Ամենայն հայոց կաթողիկոսը, Մկրտիչ I-ը, երեսուն տարուց հետո գալիս է խնդրելու քաղաքակիրթ պետությունների արդարությունն ու գթությունը։ Այսօր խոր ծերության մեջ նա չի կամենում թողնել աշխարհը առանց կատարելու այս գերագույնը պարտքը դեպի յուր ժողովուրդը»[1]։

Սակայն Հաագայի կոնգրեսի մասնակից տերությունների (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա և Ավստրո-Հունգարիա) ներկայացուցիչները կաթողիկոսի պատվիրակներին հայտնեցին, որ չեն կարող բավարարել նրանց խնդրանքը, քանզի «Հայկական հարցի քննությունը, առավել ևս լուծումը, իրենց իրավասությունից բարձր է»։ Իսկ կոնգրեսի նախագահ Նելիդովը ուղղակի հայտարարեց, որ «Հայկական հարցը դուրս է կոնգրեսի ծրագրից»[2]։

1907 թ. սեպտեմբերի 16-ին Մկրտիչ Խրիմյանը կրկին դիմեց ցարին, խնդրելով՝ հետամուտ լինել մյուս տերությունների հետ կենսագործելու հայկական բարենորոգումները։ Իսկ դրանց իրականացման համար անհրաժեշտ է սահմանել այնպիսի փաստական հսկողություն և սիստեմատիկ գործունեություն, որոնք կարողանան թուրքական կառավարությանը հիշեցնել կատարելու իր տարբական պարտավորությունները հպատակների հանդեպ։ Կաթողիկոսը բերում էր Մակեդոնիայի օրինակը և նշում, որ տերությունները երբ տեսան, որ Ռ. Դուրը չի կատարում իր խոստումները, հարկադրեցին նրան իրագործելու դրանք։ Թվում էր, թե տերությունները նույնը կանեին նաև Թուրքահայաստանում։ Բայց չարեցին։ Վերջում նա նշում էր, որ միայն ինքնակալի անսասան կամքը կարող է «վերջ դնել Թուրքիայի իմ հոտի բնաջնջման սիստեմին, ապահովել նրան ամենօրյա հացով, մարդկային կյանքով, քրիստոնեական հավատով»[3]։

---

1 «Դրոշակ», 1904, № 4, էջ 136—137։

2 Геноцид армян в Османской империи. Е., 1966, с. 153.

3 «Արմենիա», 1904, սեպտեմբերի 28։

4 «Դրոշակ», 1904, № 10, էջ 158։

5 Մ. Սեթոբյան, Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով (վերլուծումներ Հայկական հարցի շուրջը), Գահիրե, 1948, էջ 198։

6 «Արմենիա», 1905, մայիսի 10։

1 «Դրոշակ», 1907, № 8, էջ 107։

2 Նույն տեղը, էջ 108։

3 ՀԱՄՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 99, թ. 4։

Համարյա այդ ժամանակամիջոցում Մ. Խրիմյանը նույն հարցով դիմեց նաև Անգլիայի կառավարությանը։ Բայց նոյեմբերի 11-ին, երբ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր էդվարդ Գրեյը Եվրոպայի հայոց հոգևոր առաջնորդի միջոցով կաթողիկոսին էր ուղարկում իր թագավորի մերժողական պատասխանը, Մ. Խրիմյանն այլևս կենդանի չէր[1]։

Հետևելով կաթողիկոսներին, արևմտահայության հարցում պահպանողական գիծ էին վարում նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքները։ 1885 թ. Ներսես Վարժապետյանին փոխարինած Հարություն պատրիարքը գտնում էր, որ «եվրոպայի քաղաքականության այս խառնակ վիճակին մեջ լավ կլինի հաշտ երթալ տաջկաց հետ, որպեսզի Թորքահայաստանի հայք ենթակա չլինեն նորանոր տառապանաց և հալածանաց»[2]։

Նույն դիրքում կանգնեց նաև նրան հաջորդած Խորեն պատրիարք Աշըքյանը, որը, իր օսմանասիրությունը վերագրելով հայ ժողովրդին, ասում էր. «Հայ ազգը երկու գլխավոր բարեմասնություններ ունի, որոնցմով կպարծենա. մին յուր նախնի և նվիրական ավանդությանց անվթար և անղեղծ պահպանումն և մյուսն իր դարավոր հավատարմությունն առ Օսմանյան մեծազոր գահին»[3] Պատրիարքի սուլթանասիրությունը առելություն առաջացրեց արևմտահայ լայն զանգվածների շրջանում, որը մի առանձին ուժով բորբոքվեց, երբ համիդյան իշխանությունները սկսեցին նրանց զանգվածային կոտորածները։ Ժողովուրդն ամեն կողմից առաջարկում էր Խորեն Աշըքյանին՝ «վար իջիր»[4]։ Եվ նա 1894 թ. ստիպված էր հրաժարվել պատրիարքությունից։

Նույն թվի դեկտեմբերի 7-ին պատրիարք ընտրվեց Մատթեոս Իզմիրլյանը, որը թևև շարունակեց իր նախորդների պահպանողական վարքագիծը, հաղորդելով սուլթանին, թե իր «խնդրածը երկրին բարեկարգությունն է և հայ ազգին վրա Օսմանյան գթավոր հովանիին պահպանումը», թե ինքը «ոչ երբեք երազած է երևակայական անկախություն»[1], թե ինքն իր հոտի համար ցանկանում է «միայն կյանքի, ինչքերու և պատվո ապահովություն», քանզի «առանց կյանքի ինչքերու և պատվո ապահովության հավատարմություն գոյություն չունի»[2]։ Այնուամենայնիվ, Աբդուլ Համիդը, զանց առնելով նրա այդ տարրական պահանջները, շարունակեց իր հայաջինջ քաղաքականությունը։ Այնժամ Իզմիրլյանը համարձակորեն սկսեց դիմագրավել նրա այդ քաղաքականությանը, հղելով Բ. Դուռ բազմաթիվ բողոքներ։ Կոտորածների օրերին նա այնպիսի քաջություն ու բարոյական կորով դրսևորեց, որ ժամանակակիցների կողմից «իրավամբ արժանացավ երկաթե պատրիարք պատվանունին»[3]։ Բայց Իզմիրլյանը, ինչպես իրավացիորեն նշում է նրա կենսագիրը, «ոչ երբեք ապստամբապետ մըն էր, այլ երկիրը հարստահարող ղեղծ պաշտոնյաներուն ընդդիմադիր եկեղեցական մը»[4]։

Սուլթանը չհանդուրժեց Մ. Իզմիրլյանի հանդգնությունը և, պաշտոնանկ անելով պատրիարքի աթոռից, աքսորեց ս. Սիոն, ուր նա մնաց 12 տարի։

1896 թ. պատրիարքի տեղապահ նշանակվեց Բարդուղիմեոս եպիսկոպոս Ջամիլյանը, որը օգոստոսի 2-ին ներկայացավ սուլթանին և նրան հայտնեց իր ծառայությունն ու նվիրվածությունը, նշելով, թե «ինքը սուլթանի ստրուկն է, աղատագրվիլ հանձն չառնող ստրուկ մը, և թե այս կյանքին և թե հանդերձյալ կյանքին մեջ իր ամենեն մեծ պատիվն ու երջանկությունը կայսերական փափաքները իրականացնելու բախտավորությունն ունենալն է»[5]։ Ջամիլյանը ոչ միայն ինքը երդվեց հավատարիմ մնալ սուլթանին, այլև խոստացավ իր տիրոջը երդվեցնել ողջ արևմտահայությանը։

Չբավարարվելով դրանով, նա հայտարարեց, թե 90-ական թվականների կոտորածների մեղավորը հենց իրենք հայերն են։ Պատրիարքի տեղապահի այդ նվիրվածությունը չխանգարեց, սակայն, սուլթանին, որ 1896 թ. օգոստոսի 14-ին օգտագործեր

1 Տե՛ս Մ. Սերոբյան, նշվ. աշխ., էջ 214։

2 «Մշակ», 1886, № 20։

3 Նույն տեղը, 1890, № 7։

4 Տե՛ս Ս. Գաբամանյան, Ամենապատիվ Տ. Տ. Մատթեոս ս. արքեպիսկոպոս Իզմիրլյան, բարբառներ տ. Եղիշե ս. եպիսկոպոս Դուրյան, Կ. Պոլիս, 1908, էջ 16։

1 Ս. Գաբամանյան, Ամենապատիվ Տ. Տ. Մատթեոս ս. արքեպիսկոպոս Իզմիրլյան..., էջ 21։

2 Նույն տեղը, էջ 16։

3 Տե՛ս Ս. Գաբամանյան, Նոր պատմություն հայոց համառոտ, սկզբեն մինչև մեր օրերը (1908), Կ. Պոլիս, 1909, էջ 124։

4 Տե՛ս Ս. Գաբամանյան, Ամենապատիվ Տ. Տ. Մատթեոս ս. արքեպիսկոպոս Իզմիրլյան..., էջ 20։

5 Մ. Որմանյան, Ազգապատում, մաս Գ, Երուսաղեմ, 1927, էջ 5062։

Օտոմանյան բանկի դեպքերը, մայրաքաղաքում կազմակերպեր հայկական նոր ջարդ և երեք օրվա ընթացքում հողոտեր շուրջ 10.000 հայ[1].

Գիտակցելով, որ իր վարքագիծը կարող է ոչ միայն զզվանք առաջացնել հայ բնակչության մեջ, այլև վրիժառություն, Ջամիլյանը խուսափեց պատրիարքարան այցելելուց, հայտարարեց, թե իր տանն է աշխատելու և դիմելով ոստիկանության պաշտպանությանը, ստացավ 5—6 ծպտյալ հսկողներ, «որոնք տունին մեջ կը մնային և դուրս եկած ատեն կառքին հետևեն կը ձիավարեին վտանգներեն պահելու համար»[2]։ Ջամիլյանը ձգտում էր դառնալ պատրիարք և իր հեղինակությունը բարձրացնելու նպատակով հրահանգեց պահպանողական թևրթերին նպաստավոր հոդվածներ հրապարակել։

Սակայն պատրիարքի տեղապահի նմանօրինակ վարքագիծը հակառակ ռեակցիա առաջացրեց ժողովրդի մեջ։ Նրանից սկսեցին դժգոհել անգամ չափավոր ու ապազգայնացված տարրերը, որոնք, առժամանակ մոռանալով իրենց ներքին տարաձայնությունները, միացան Ջամիլյանի դեմ բարձրացած խուլ, բայց ընդհանուր շարժմանը։ Այդ շարժման գլուխ կանգնեց Հարություն փաշա Տատյանը՝ Թուրքական կառավարության արտաքին գործերի նախարարի խորհրդականը, մի մարդ, որը որոշակի հեղինակություն ուներ արքունիքում։ Խորհրդակցելով պոլսահայ վերնաշերտերի հետ, Տատյանը պատրիարքական աթոռի համար առաջ քաշեց մի քանի թեկնածուներ, որոնք, սակայն, այս կամ այն պատճառով մերժվեցին։ Խորհրդակցության մասնակիցները վերջապես կանգ առան Մաղաքիա Օրմանյանի թեկնածության վրա, որին և 1896 թ. նոյեմբերին ազգային ընդհանուր ժողովում ձայների մեծամասնությամբ ընտրեցին պատրիարք[3]։

Աբդուլ Համիդը երկմտությամբ ընդունեց Օրմանյանի պատրիարքության լուրը, քանզի կասկածում էր ինչպես բոլոր հայերի, այնպես էլ նորընտիր պատրիարքի վրա։ «Նույնիսկ իմ վրա,— գրում էր հետագայում Օրմանյանը,— անկասկած վրատահություն չուներ»[4]։ Սակայն հաշվի առնելով Օրմանյանի

1 Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս Գ., էջ 5065։
2 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., մաս Գ, էջ 5067։
3 Տե՛ս նույն տեղը, նշվ. աշխ., մաս Գ, էջ 5071։
4 Մ. Օրմանյան, Խոհք և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 188։

«մեղապարտ» անցյալը, սուլթանը ենթադրում էր, որ կդարձնի նրան իր կամակատարը, ուստի պատրիարք հաստատելիս շողոքորթեց, ասելով, թե ինքը «համոզված է, որ գիտնական անձը առաքինի ալ կլլա»[1], նկատի ունենալով, իհարկե, սուլթանասիրությունը։

Երբեմնի հեղափոխական գաղափարներով տոգորված Մ. Օրմանյանը, 1896 թ. նստելով Կ. Պոլսի հայոց պատրիարքի աթոռին, հրաժարվեց այդ հայացքներից և վարեց պահպանողական վարքագիծ։ Նա որոշեց. «Ազգը ընտրողական տագնապի չմատնել, և կամ անտերունչ մնալու վիճակին չենթարկել»[2]։ Նորընտիր պատրիարքը նշում էր, որ ինքն այժմ գիտակցում է խնդրի բարդությունն ու պատասխանատվությունը. «Ուրիշ է անհատական անձ մը ըլլալը, և ուրիշ է հանրության օգտին պատասխանատվություն կրել»[3]։

Նա արդեն համոզված էր, որ հայերը չեն կարող ազատել իրենց հայրենիքը օտարի տիրապետությունից և, հետևաբար, չպետք է ունենան ինքնավարության կամ անկախության ձգտումներ։ Նրանք «տգետ և տխմար եղած կըլլային, եթե... անհնարությանց ետևե ըլնային»[4]։

Մ. Օրմանյանը առաջնակարգ խնդիր էր համարում արևմտահայության գոյության պահպանումը։ Սակայն գտնվելով սուլթանի և հայ կուսակցությունների հակամարտությունների արանքում, հարկադրված էր տանել, իր խոսքերով ասած՝ «... սալին ու մուրճին մեջտեղ մնացող երկաթի դերը... մեկ կողմեն սալին պնդության և մյուս կողմե մուրճին ևևէջներուն հարվածները կրելով»[5]։

Խնդիրն այն է, որ Աբդուլ Համիդը Մ. Օրմանյանից պահանջում էր վերացնել կամ ցրել կուսակցությունները, իսկ կուսակցությունները առաջարկում էին նրան կամ միանալ իրենց և պայքարել բռնապետության դեմ, կամ հրաժարվել պատրիարքական աթոռից։

Պատրիարքը նախ փորձեց հաշտեցնել նրանց և այդ նպա-

1 Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս Գ, էջ 5075։
2 Մ. Օրմանյան, Խոհք և խոսք, էջ 18։
3 Նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 214—215։
5 Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս Գ, էջ 5088։

տակով, մի կողմից, համոզում էր սուլթանին, որ եթե ինքը բարեհաճ լինի հայերի հանդեպ, ապա կուսակցությունները կդադարեցնեն պայքարը, իսկ մյուս կողմից՝ հորդորում էր կուսակցություններին, որ եթե իրենք հանգիստ մնան, ապա սուլթանը կիրագործի հայկական բարենորոգությունները։ Բայց արդյունքի չհասնելով, նա հարկադրված էր Արդուլ Համիդին պատասխանել, որ ինքը հայկական ելույթների դեմ «երկու միջոց միայն ունի տրամադրելու՝ խրատ և ազոթք. խրատը լսող չկա, ազոթքը ուզող չկա»[1], որ ինքը «Թուրքիո պատրիարք ըլլալով՝ արտասահմանի վրա ներգործելու և ազդելու միջոցներ չունի...»[2], որ անդամ Թուրքիայում եթե հայկական «որևէ ապստամբական քայլ պատրաստվի, ինքն անզոր է առաջն առնել»[3]։

Իսկ կուսակցություններին Մ. Օրմանյանը մերժում էր, հայտարարելով, որ եթե ինքը հրաժարվի աթոռից, կդավաճանի ժողովրդին, եթե միանա իրենց, կդառնա արկածախնդիր։ Նա խստորեն քննադատում էր կուսակցություններին։ Իրավամբ նշելով, որ կուսակցություններն առաջացել են սուլթանական կառավարության հայերի հանդեպ գործադրած խստությունների հետևանքով, Մ. Օրմանյանը գտնում էր, որ պետք է ստեղծվեր միայն մեկ կուսակցություն, որը կարողանար խելացի վարել իր դերը և խոհեմությամբ արդյունավորել ճիգերը։ Մի քանի կուսակցություններ իրենց տաքբեր ծրագրերով ու գործելաեղանակներով առաջ են բերում տարաձայնություններ ու բնդհարումներ, որոնք հանգեցնում են միայն բացասական հետևանքների։ Ապա ընդգծում էր, որ կուսակցություններն իրենց զևկավարներ են ընտրել այնպիսի «հախուռն երիտասարդներ, անփորձ զպրոցականներ, բախտախնդիր պանդուխտներ, արկածախնդիր զլուխներ, որոնք ոչ հիմնական ծրագիր մը կրցան կազմել, ոչ հասատատուն ուղղություն մը ունենալ, և ոչ փորձություններ օգտվիլ»[4]։ Այդ զևկավարների գործակալները կուսակցության միջոցները ձեռք են բերում ամենաանթույլատրելի եղանակներով, ընդհուպ մինչև մարդասպանությամբ, որը վարկաբեկում է նրանց։

1 Տե՛ս Մ. Օրմանյան, Հոհք և խոսք, էջ 29։
2 Տե՛ս «Լուսաբեր», 1908, մայիսի 29, № 524։
3 Տե՛ս Մ. Օրմանյան, Հոհք և խոսք, էջ 29։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 216։

Մ. Օրմանյանը մերժում էր նաև կուսակցությունների այն վարքագիծը, երբ նրանք զրգռում էին սուլթանին, առիթ էին տալիս նոր կոտորածների և դրանով փորձում էին հրավիրել Եվրոպայի ուշադրությունը Հայկական հարցի վրա։ Պատրիարքը նշում էր, որ նրանց այդ քայլի ծանր հետևանքները կրում էին ոչ թե իրենք, այլ «անմաս ու անմեղ ժողովուրդը»[1]։ Նա անընդունելի էր համարում նաև կուսակցությունների այն քաղաքականությունը, երբ նրանք արևմտահայերի շարժումներին մասնակից դարձրին արևելահայերին, որի հետևանքով առաջ բերեցին Ռուսաստանի թշնամությունը Հայկական հարցի և հայկական ազատագրական ելույթների հանդեպ։ Դատապարտում էր հատկապես դաշնակցականների վարքագիծը, որոնք, թողնելով ազգային շրջանները, բանակցում էին երիտթուրքերի հետ, գայթակղվում նրանց սին խոստումներով։

Մ. Օրմանյանի կարծիքով, սխալ ու վնասակար էր կուսակցությունների արևմտաեվրոպական կողմնորոշումը։ Նա զրտնում էր, որ տերությունները հայերի խնդրով կզբաղվեն միայն այն ժամանակ, երբ կունենան շահագրգռվածություն։ «Մինչև որ,— գրում էր նա,— հայտնապես չցուցվի կամ չտեսնվի, որ եվրոպական տերությունները Հայաստան մը կազմելու կամ Հայաստան մը բարվոքելու մեջ իրենց օգուտն ունին, ոչ խոսքերնուն հնար է հավատալ, և ոչ ալ խոստումներուն վստահիլ։ Ահա իմ փորձառական հավատքի առաջին կետը»[2]։

Պատրիարքը նշում էր, որ կուսակցությունները խոհեմ կվարվեին այն դեպքում, երբ Հայաստանում նախքան որևէ գործ ձեռնարկելը պայմանավորվեին տերությունների հետ, ստանային նրանց համաձայնությունը, հետևաբար, նաև պաշտպանությունը։ Մոտիկից շփվելով ու առնչվելով տերությունների դեսպաններին ու հյուպատոսներին, մասնավորապես Կ. Պոլսում, Մ. Օրմանյանը գրում էր. «... գործունյա դեր մը դտած չեմ անոնց մոտ, իսկ ազգային շարժումներով անոնք ստիպելու միտքն ալ երազ-տեսություն սեպած եմ»[3]։

Ի տարբերություն Մ. Խրիմյանի, Մ. Օրմանյանը, գործելով սուլթանի թևի տակ, Հայկական հարցով երբևէ չդիմեց տե-

1 Տե՛ս Մ. Օրմանյան, Հոհք և խոսք, էջ 218։
2 Նույն տեղը, էջ 475։
3 Նույն տեղը, էջ 31։

բությունների միջամտությանը։ Միայն 1898 թ. հոկտեմբերին, երբ գերմանական կայսր Վիլհելմը Պաղեստին մեկնելիս հյուրընկալվեց Աբդուլ Համիդի կողմից, փորձնց հանդիպել նրան և խնդրել հայանպաստ միջամտություն, բայց չկարողացավ՝ «չենք գիտեր,— գրում էր Մ. Օրմանյանը,— թե ավելի Աբդուլ Համիդի ընդդիմությենեն, թե Վիլհելմի անտարբերությենեն»[1]։

Որքան էլ Մ. Օրմանյանը հայտարարում էր, թե ինքը չեզոք գիծ էր վարում սուլթանի ու հայ կուսակցությունների միջև, այնուամենայնիվ փաստը մնում է փաստ, որ նա կատարում էր բռնակալի կամքը։ Այսպես. 1898 թ. Աբդուլ Համիդի առաջարկությամբ նա դիմեց եվրոպական տերություններին, որպեսզի նրանք չղրաղվեն Հայկական հարցով։ Երբ 1899 թ. բռնակալը լսեց, որ Կ. Պոլսի պատրիարքին ենթարկվող բուլղարահայ գաղութը իր ներկայացուցչին՝ Մինաս Չերազին ուղարկել է Լահե, որպեսզի տերությունների դեսպանաժողովում բարձրացնի Հայկական հարցը, Մ. Օրմանյանից պահանջեց հետ կանչել նրան։ Պատրիարքը հեռագրեց Լահե՝ պաշտոնապես չճանաչել այն անձանց, որոնք դեսպանաժողովին «կդիմեն հայ ազգի անունով»[2]։

Սուլթանի թելադրանքով 1900 թ. հոկտեմբերին Մ. Օրմանյանը կարգադրեց գավառահայ հոգևոր առաջնորդներին՝ «չպաշտպանել և չօգնել հեղափոխականներուն (իմա՝ կուսակցություններին և հայդուկներին— Ա. Հ.)»[3]։ 1902 թ. մարտի 16-ին նա հեռագրեց Վանի առաջնորդին. «Կիմանանք, որ Օսմանյան սահմանագլխի վրա հայ խռովարարներու շարժումներ կան, ուստի զգուշացրեք կանխավ մեր խաղաղասեր ժողովրդին այդ բախտախնդիր խռովարարներեն և հայտարարեցեք, որ սույն վնասակար գործերը ձեր շահերուն և գաղափարներուն դեմ են»[4]։

Մ. Օրմանյանը դիմում էր նաև Ամենայն հայոց կաթողիկոսին, խնդրելով՝ «ազդել Կովկասի հայ հեղափոխական կուսակ-

1 Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս Գ, էջ 5189։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 5113։
3 «Դրոշակ», 1901, № 3, էջ 53։
4 Նույն տեղը, 1902, № 5, էջ 76։

ցությունների վրա, որպեսզի նրանք դադարեցնեն իրենց գործունեությունը Թուրքիայում...»[1]։

Չհանդուրժելով պատրիարքի վարքագիծը, քաղաքական կուսակցությունները սկզբում սպառնացին նրան և այդ բովանդակությամբ շուրջ 30 նամակ ուղարկեցին։ Բայց արդյունքի չհասնելով, որոշեցին սպանել։ 1903 թ. հունվարի 6-ին, դաշնակցականների դրդմամբ, դեղագործի աշակերտ Հակոբ Խաչիկյանը Գում-Գափուի մայր եկեղեցում կրակեց Մ. Օրմանյանի վրա, սակայն վրիպեց։ Թուրքական իշխանությունները ձերբակալեցին տեռորիստին, սկզբում դատապարտեցին մահվան, հետո՝ ցմահ աքսորի[2]։

Մյուս կողմից, Մ. Օրմանյանը հայ ժողովրդի մեջ համակրանք վայելելու համար դիմում էր սուլթանին, խնդրելով մեղմել հայոց հալածանքները և բարելավել նրանց վիճակը։ Այսպես. 1897 թ. հունվարին նա միջնորդում էր Աբդուլ Համիդին՝ ազատել արևմտահայերին զինվորական տուրքից մեկ կամ երեք տարի ժամանակով, փոխադրություններ բաց թողնել հայ երկրագործներին, նպաստներ տրամադրել հայկական գպրոցներին, վերականգնել հայ պաշտոնյաներին, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին հատկացնել 2000 ոսկի՝ նրա պետքերի համար, նահանգներում նշանակել հայ ոստիկաններ, դադարեցնել թուրքական թերթերում հակահայկական պրոպագանդան, վերականգնել պատրիարքարանի նախկին արտոնությունները, հայ երիտասարդներին ևս ընդունել զինվորական ու այլ վարժարաններում, ուր սովորում են կայսրության մյուս քրիստոնյաները, հատուցել կոտորածներից ու թալանումներից տուժած հայերի գույքի արժեքները, բռնի դավանափոխվածներին վերադարձնել իրենց հավատին և այլն[3]։

Նույն թվի հոկտեմբերին Մ. Օրմանյանը խնդրում էր սուլթանին նպաստ տալ կոտորածների հետևանքով որբ մնացած հայ երեխաներին, հնարավորություն ստեղծել արևմտահայերի անկաշկանդ երթևեկության համար, թույլատրել Բուլղարիա-

1 «Լումա», 1905, № 9—10, էջ 5, տե՛ս նաև «Լուսաբեր», 1905, նոյեմբերի 4, № 141, «Ազատ բեմ», 1905, հոկտեմբերի 17, № 25։
2 Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս Գ, էջ 5189, տե՛ս նաև «Հընչակ», 1903, № 2, էջ 6։
3 Տե՛ս «Արմենիա», 1897, հունվարի 27։

յում հանգրվանած փախստական հայերին վերադառնալու հայրենիք, առաջարկել զավառական պաշտոնյաներին չնեղել հայերին[1] և այլն։

1899 թ. սեպտեմբերին Մ. Օրմանյանը հարց բարձրացրեց կառավարության առաջ, որպեսզի վերջինս հայերին չդնի օրենքից դուրս, օժտի նրանց այն իրավունքներով, ինչ ունեն մահմեդականները։ Նա հայտարարեց, որ եթե բոլոր հայերը հանցագործներ են, ապա իր համար անցանկալի է մնալ հանցագործների ղլուխ, «իսկ եթե բոլոր հայերը հանցավորներ չեն, հանցավորներու պատկանյալ վարմունքները ընդհանուրի վրայեն վերցվին»[2]։

Նպատակին հասնելու համար Մ. Օրմանյանը կրկնում էր իր խնդրագրերը, իսկ երբ դրանք չէին օգնում գործին, հրաժարվում էր պատրիարքական աթոռից։ Մինչև 1906 թ., այսինքն՝ 10 տարվա ընթացքում, նա վեց հրաժարական ներկայացրեց բռնակալին[3]։

Համիդը սովորաբար մերժում էր պատրիարքին, բայց համաշխարհային առաջադեմ մարդկությանը և հայ հասարակայնությանը շողոքորթելու ու խաբելու համար որոշ դեպքերում ընդառաջում էր նրան, կատարում մանր զիջումներ, իսկ հետագայում, ինչպես արդեն ասվեց, հաճախ հրաժարվում էր անգամ դրանցից։ Փաստը մնում է փաստ, որ Մ. Օրմանյանը չկարողացավ ոչ փոխել, և ոչ էլ մեղմել բռնակալի հայահալած քաղաքականությունը։

* * *

Հայ բարձրագույն հոգևորականության դիրքորոշումը արևմտահայ ազգային ազատագրական շարժումների նկատմամբ պայմանավորում ու պրոպագանդում էր պահպանողական մամուլը։

Ամենայն հայոց կաթողիկոսության պաշտոնական օրգան «Արարատը» 1880 թ. գրում էր, որ հայ ժողովուրդն ու լուսավորչական եկեղեցին այնպես միասնական են, որ «մինն առանց մյուսի չի կարող լինել»[4]։ Նույն թվին ամսագիրը շարունակում

1 Տե՛ս «Արմենիա», 1897, հոկտեմբերի 6։

2 Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս Դ, էջ 5118։

3 Տե՛ս «Մշակ», 1906, № 159։

4 Տե՛ս «Արարատ», 1880, էջ 441։

էր. «Հայերիս սեպհական կրոնը եթե չլիներ, քաղաքական անկումից հետո, շատ վազուց կկորցնեինք մեր գոյությունը իբրև հայ»[1]։ Ուստի գտնում էր, որ ազգի գոյությունը, նրա միասնությունը պահպանելու համար չպետք է հեռանալ լուսավորչական եկեղեցուց, դառնալ կաթոլիկ, բողոքական կամ մահմեդական։ Դա ջլատում է ազգի ուժերը, հեշտացնում նրա պառակտումն ու բզկտումը։

Ամսագիրը հայտարարում էր, որ հայերն ունեն մեկ կենտրոն՝ բաղկացած հոգևորականներից և ընտրված ազգի ընդհանրությունից։ Նրանք պետք է համախմբվեն այդ կենտրոնի շուրջը և ղեկավարվեն նրա ցուցմունքներով։ Պարբերականը գրտնում էր, որ հայերը պետք է հետևեն հրեաներին, որոնք կարողանում են պահպանել իրենց գոյությունը, «պինդ պահելով յուրյանց կրոնը»[2]։

«Արարատը» դատապարտում էր արևմտահայ ազատագրական ելույթները, գտնելով, որ դրանք անօգուտ են ու վնասակար։ Նա գոհունակություն էր հայտնում, որ սուլթանը իբր թե տարբերում է հայ ժողովրդին նրա «խռովարարներից», և պատժելով վերջիններիս, գնահատում է ժողովրդի «նվիրվածությունն» իրեն և հարգալից է արտահայտվում նրա հանդեպ։ Կիսելով «Արևելքի» սուլթանամետ հայացքները, պարբերականը հաճախ էր իր էջերում արտատպում նրա նյութերը։ Ահա այդ նյութերից մի երկուսը։

«Տերության վստահությունն առանցքն է, որո վրա կդառնան մեր ազգային գործերը, երբ այդ առանցքը կխանգարի, ազգային գործերն ալ բոլորովին անգոհացուցիչ վիճակի մը կմատնվին։ Բայց այդ վստահության հայ ազգն իրավամբ արժանացած էր յուր բազմադիմի ծառայությամբ առ Օսմանյան գահն և յուր դարավոր հավատարմությամբ»[3]։

Ապա ամսագիրը արտատպում է «Արևելքի» այն հաղորդումը, թե սուլթանը իր ստորագրյալների միջոցով հայտնել է պատրիարքին, որ «յուր հավատարիմ հպատակ հայ ազգին դարավոր հավատարմության վրա յուր վստահությունը կատարյալ է»։ Նա խորություն չի դնում իր հպատակ ազգերի միջև,

1 «Արարատ», 1880, էջ 479։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 535։

3 Նույն տեղը, 1888, էջ 128։

«պատժում է չարագործները և խռովարարները», դարձյալ խտրություն չդնելով ազգությունների միջև, ընդ որում իրր պատժում է անհատին, բայց ոչ ազգին և անհատի հանցանքը չի վերագրում ողջ ազգին։ Սուլթանն այնուհետև նշել է, որ թեև մի քանի հայեր ձերբակալված են, բայց ինքը չի փոխում իր բարի վերաբերմունքը հայերի հանդեպ[1]։

1890-ական թվականների կեսերին, երբ Աբդուլ Համիդը, սրի քաշելով հարյուր հազարավոր անմեղ հայերի, ցույց տվեց իր «բարի» վերաբերմունքը նրանց հանդեպ, «Արարատը» մորմոքում էր, բայց ոչ նեղվում, արտասվում էր, բայց ոչ զայրանում, աղերսում էր, բայց ոչ անիծում։ Ազգության փրկությունը փընտրում էր ամենազոր աստծու մեջ և նրանից մեղքերի թողություն խնդրում։ Եվ առաջինն ինքն էր ցույց տալիս այդպիսի օրինակ։ 1895 թ. հոկտեմբերին, այսինքն՝ կոտորածների ահեղ օրերին, ամսագիրը գրում էր. «Ծանր է մեր Տաճկաստանի հայ եղբայրոց վիճակը։ Այժմ այլևս միայն հարստահարությանց, հալածանքի, լկանքի, առևանգությանց և բանտարգելության լուրեր չեն, որ գալիս են այնտեղից, այժմ միայն կոտորածի ձայներ են հասնում մեզ»[2]։

Թվելով, թե որտեղ, երբ, ինչ ջարդեր են տեղի ունեցել, «Արարատը» շարունակում էր. «Հայ քրիստոնեությունը բնաջինջ լինելու վրա է։ Ամենակալ տերը միայն կարող է փրկել մեր ս. եկեղեցին այդ փորձանքից։ Ուրեմն ամեն մի հայ քրիստոնեի պարտքն է ի սրտե աղոթել և վերին տեսչության գթությունն հայցել. «Արի աստված հարցն մերոց, որ ապավենդ ես նեղելոց, հաս օգնության ծառայից քոց, լեր օգնական ազգիս հայոց»[3]։

Ամսագիրը նշում էր, որ հայերն իրր զոհվում են հավատի համար։ Նրանք դիմեցին իրենց հավատակից եվրոպական ու ամերիկյան մեծ ազգերի օգնությանը։ Եթե այդ ազգերը չկարողացան փրկել, ինչ կարող է անել հայոց եկեղեցին։ «Ոչ մի միջոց չունինք անոնց օգնության և թշվառ մնացյալների խաղաղության և անդորրության համար»[4]։ Պարբերականը գրում էր, որ անցյալում, երբ հայերին օտար նվաճողները և տիրակալները կոտորել են, նրանց եկեղեցին միայն աղոթել է աստծուն։ Այժմ մենք էլ նույնն ենք անելու, թերևս հասցնենք «մեր ջերմաշունչ աղոթքն աստծուն»[1]։ Այնուհետև կոչ էր անում բոլոր հայերին լաց լինել, քանզի ամբողջ ժողովուրդն է լալիս։

Սակայն հակահեղափոխության հարցերում պարբերականը ակտիվություն էր ցուցաբերում։ Այսպես, XX դ. սկզբին, երբ ռուսական հեղափոխությունն իր հուժկու հարվածներով ջարդում էր ինքնակալության հիմքերը և տանում ժողովուրդներին դեպի ազատություն, «Արարատը» շարունակում էր կառչել իր հին հայացքներին և աշխատում էր հետ բերել պատմության կոզմից արդեն դատապարտված, մի կողմ նետված բարքերը։ Նա ցավով էր նշում, որ այդ հեղափոխությունն ու քաղաքական կուսակցությունները խաթարել են հոգևորականության հիմքերը, որի հետևանքով հայ եկեղեցին «կորցրել է իր բարոյական հեղինակությունը»[2], դարձել է «ծովի ալիքների վրա պատահականության ենթարկված անղեկ մի նավ»[3]։ Շատերը եկեղեցու գոյությունը և նրա դաղափարախոսությունը վնասակար են համարում ժողովրդի առաջադիմության համար։ Նրանք հակակրանք կամ սառն անտարբերություն ունեն «դեպի եկեղեցին և հոգևորականությունը»[4]։

Ամսագրի կարծիքով, հայ հոգևորականությունը պետք է համախմբի իր ուժերը, ամրապնդի կապերը ժողովրդի հետ, պրոպագանդի քրիստոնեության դաղափարները նոր լեզվով՝ ժամանակի պահանջներին համապատասխան։ Նա պետք է ապացուցի, որ ինքը «մեռած դիակ չէ»[5]։ Ընդհակառակը, պետք է ցույց տա, որ ինքը հարատևող ու աճող ուժ է։ Իսկ այդ ամենը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ է հայ հոգևոր առաջնորդների ու փոխանորդների ղեկավարությամբ ստեղծել քահանաների խմբակներ, ընկերություններ և նրանց վրա պարտականություն դնել գրաղվելու կյանքի հրատապ հարցերով։ Ավելին՝ պետք է քահանաներին օգտագործել որպես զինվոր-

1 Տե՛ս «Արարատ», 1888, էջ 128։
2 Նույն տեղը, 1895, էջ 403—404։
3 Նույն տեղը, էջ 404։
4 Նույն տեղը, էջ 441։

1 Տե՛ս «Արարատ», 1895, էջ 442։
2 Տե՛ս նույն տեղը, 1907, էջ 324։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 327։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 324։
5 Տե՛ս նույն տեղը, էջ 328։

նիր և ծառայեցնել լուսավորչական հավատի նպատակներին։ Անհրաժեշտ է հրավիրել եկեղեցական ժողով և լուծել հայ եկեղեցու վերաշինության հարցերը։ Մի խոսքով, պնդում էր ամսագիրը, «պետք է միացնենք մեր ուժերը, աղբյուրներից վտակներ, վտակներից գետակներ և գետեր կազմելու համար»[1]։ Պետք է կարողանանք հայ պապակ եկեղեցուն «կենդանության ջուր մատակարարել»[2]։

Պարբերականը դրվատանքով էր խոսում Մ. Օրմանյանի մասին, նշելով, թե նա միակ մարդն էր, որ կարողացավ վարել արևմտահայության նավը «այդ երկարատև ճգնաժամի, փոթորիկի ու ալեկոծության շրջանում»[3]։ Նա չէր կարող կատարել տաք գլուխների ցանկությունները և ճակատով ճեղքել պատը, այսինքն՝ չէր կարող վերացնել «իրենց սարքած բոլոր հիմարությունների հետ կապված ճնշումներն ու հալածանքները»[4]։

«Արարատը» դատապարտում էր կուսակցությունների գործունեությունը և ազատագրական ելույթները, սխալաբար գտնելով, թե դրանց պատճառով է, որ թուրքական կառավարությունը պաշտոնազրկում է հայերին, արտամղում հայ վաճառականներին, արդելակում երթևեկությունները, ուժեղացնում արտագաղթը և ընդհանրապես հայկական հալածանքները. «Արտասահմաններու մեջ սարքած հեղափոխական այլ և այլ ձևնարկները և անոնց գործադրությունը Թուրքիո մեջ պատմական այնպիսի արատավոր հանգրվաններ ստեղծեցին, որ մանավանդ 10—12 տարիներե ի վեր հայությունը կործանվեցավ։ Հեղափոխական շարժումներու հետևանքով հայ ազգը մեծ կորուստներ ունեցավ Թուրքիո մեջ և դեռ ունենալու վրա է»[5]։ Այդպիսով, ելնելով պահպանողական դիրքերից, պարբերականը հետևանքը դարձնում էր պատճառ և օբյեկտիվորեն արդարացնում սուլթանական իշխանությունների ոճրագործությունները։

Թիֆլիսում հրատարակվող կղերապահպանողական մի այլ օրգան՝ «Լուման», 1905 թ. իր առաջնորդողներից մեկում հարցնելով՝ «ի՞նչ է խնդրում այսօր հայը», պատասխանում էր, որ նա ամենից առաջ ցանկանում է իր եկեղեցու ինքնուրույնությունն, նրանից բռնագրավված կալվածքների վերադարձում, հայկական դպրոցների վերաբացում, հայ գյուղացու տնտեսական պահանջների արդարացի լուծում, իսկ «թուրքահայերի նկատմամբ ցանկանում է իրագործված տեսնել Ռուսաստանի ավանդական քաղաքականության լավագույն և լայն ծրագրերը, որոնք ամփոփված են Սան Ստեֆանոյի 16-րդ և Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածներում»[1]։

Պարբերականն այն կարծիքն էր հայտնում, որ հայը Թուրքիայում ցանկանում է խաղաղ ապրել, անարգել զարգացնել իր անհատական և ազգային ուժերը։ Սակայն սխալաբար հայտարարում էր, թե նրա անդորրը խանգարում են հեղափոխականները։ Եթե դրանք չլինեին, ապա հայը ավելի լավ կզգար իրեն, կկենտրոնացներ բոլոր ուժերը իր բարեկեցության, բարեկրթության և դաստիարակության վրա[2]։

«Լուման» պաշտպանում էր Մ. Օրմանյանի վարքագիծը և գտնում, որ կուսակցությունները պետք է «դադարեցնեն իրենց գործունեությունը, որովհետև հակառակ դեպքում կոտորածը կարող է վերջնական ու մահաբեր լինել հայության համար»[3]։

Համեմատելով Աբդուլ Համիդի արտահայտության հետ, թե «ամեն աղի մեջ չար մարդիկ կգտնվին» և անվերապահորեն ընդունելով նրա ինքնակեղծումը, թե, իբր «ինքը վստահ է հայոց հավատարմության վրա», պարբերականը բացականչում էր. «Երանի թե կայսերական այս բարի տրամադրությունները խանգարող որևէ դեպքեր տեղի չունենային և հայ անունը երբեք չհիշվեր այնպիսի արարքներու մեջ, որոնք ոչ պատվաբեր են, ոչ ալ օգտակար հայ ազգին համար»[4]։

«Լուման» 1905 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների իր առաջնորդողում («Որը պետք է լինի հայ ազգի քաղաքականությունը») ավելի հանդամանորեն էր խոսում արևմտահայության ճակատագրի մասին։ Այն նշում էր, որ անցյալում մեր պապե-

1 «Արարատ», 1907, էջ 431։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, 1908, էջ 722։
4 Տե՛ս նույն տեղը։
5 Նույն տեղը, էջ 46։

1 Տե՛ս «Լումա», 1905, № 3, էջ 12։
2 Տե՛ս նույն տեղը, № 8, էջ 105։
3 Տե՛ս նույն տեղը, № 9—10, էջ 8։
4 Նույն տեղը, № 8, էջ 103—104։

րը թեև մեզանից պակաս հայրենասեր ու քաջ չեն եղել, բայց չեն կարողացել «ստեղծել մի անկախ Հայաստան»[1]։ Իսկ ներկա սերունդը իր սեփական ուժերով, որքան էլ հերոսական լինեն նրա ջանքերը, անկարող է ստեղծել իր ինքնուրույն ազգային ապագան։

Պարբերականը ցնորք էր համարում անկախ Հայաստանի գաղափարը, գտնում էր, որ ներկա պայմանները «հնարավորություն չեն տալիս մեզ ազատ Հայաստան կամ նույնիսկ Հայաստանի ինքնավարություն ձեռք բերելու»[2]։ Ուստի հայերը կամ պետք է համերաշխվեն տեղական խաղաղ տարրերի հետ, նպաստեն ընդհանուրի առաջընթացին, պահելով իրենց եկեղեցին ու ազգային առանձնահատկությունները, կամ միանան այնպիսի հզոր պետության, որ ճանաչի նրանց ազգային սկզբունքները, չխլի նրանց ազգային կյանքի նեցուկները՝ լեզուն, եկեղեցին ու հայրենիքը[3]։

Տևական մտորումներից հետո պարբերականը գալիս էր այն եզրակացության, որ այդպիսի պետություն կարող է լինել Ռուսաստանը, բայց ոչ թե հեղափոխական-դեմոկրատական, այլ ցարական-միապետական Ռուսաստանը. «Թուրքահայոց վիճակի բարվոքումը,— գրում էր թերթը,— Ռուսաստանից ենք սպասում»[4]։

Պարբերականը քննադատում էր արևմտաեվրոպական տերությունների շահամոլ քաղաքականությունը, նշում, որ նրանք իրենց օգուտների համար են մեջտեղ բերում Հայոց հարցը և նրանց ազգային շահերը ոտնատակ տալով, հասնում իրենց նպատակին։

1906 թ. Թիֆլիսում սկսեց հրատարակվել մի նոր կղերապահպանողական օրգան՝ «Հովիվ» վերնագրով։ Նրա առաջին իսկ առաջնորդողում ասվում էր, որ շաբաթաթերթի նպատակն է ծառայել հոգևոր դասի բարեկարգմանը, բարձրացնել նրա բնակած վարկը, վերացնել հոգևորականության ու ժողովրդի միջև առաջացած սառնությունը և հաստատել ջերմ հարաբերություն-

1 Տե՛ս «Հումա», 1905, № 9—10, էջ 6։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 19։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 20—21։
4 Նույն տեղը, № 6—7, էջ 91։

ներ, մի խոսքով՝ «բարեփոխություն մտցնել եկեղեցական դասի կազմակերպության մեջ»[1]։

«Հովիվը» անդրադառնում էր Հայկական հարցին և նշում, որ Ալեքսանդր II-ի ժամանակ նրա լուծումն ավելի հեշտ էր, քան այժմ։ «Տաճկահայոց խնդիրը» հոդվածաշարում պատմվում էր, թե իբր Լորիս Մելիքովը 90-ական թվականներին Կոջորում հանգստանալիս ասել է, որ Ալեքսանդր II-ը իրեն «քանիցս կրկնել է. կոմս, կլինի՞ք տաճկահայոց իշխան»։ Իբր թե կոմսն էլ պատասխանել է. «Ձերդ մեծության ծառայելը ինձ համար ամեն իշխանությունից բարձր է»[2]։

Անշուշտ, ճիշտ չէ, թե Լորիս Մելիքովը Կոջորում հանգստացել է 1890-ական թվականներին, այն դեպքում, երբ նա մահացել է 1888 թ.։ Հնարավոր է, որ սխալ կամ հորինված լիներ նաև ցարին ու նրան վերագրվող խոսակցությունը։ Սակայն հանրահայտ է, որ ռուսական ցարերը Ալեքսանդր II-ից հետո խստացրին հայկական հալածանքները։

Հաշվի առնելով այդ հանդամանքը և ելնելով այն բանից, որ մեծ պետությունները շահամոլ են, իսկ սուլթանն էլ ուժեղ ու դաժան, պարբերականը գտնում էր, որ արևմտահայերը «պետք է բոլորովին խաղաղ պահպանողական դիրք բռնեին»[3]։ Բայց նրանք ողջամիտ չգտնվեցին, դրա փոխարեն կազմեցին «հեղափոխական կազմակերպություններ, որոնք ավելի քան 15 տարի գործեցին Տաճկաստանում, առանց հայկական խնդրի որոշման օգնելու և միևնույն ժամանակ անհուն վնասներ հասցրին ազգին»[4]։

Երկու տարի անց, ելնելով Մակեդոնական հարցի լուծման նախագծից, պարբերականը պահանջում էր, որ Արևմտյան Հայաստանում էլ հաստատվի ինքնավարություն՝ Ռուսաստանի հովանավորության տակ։ Բղթակից Ա. Ռոտինյանցը իր «Եվրոպայի դատապարտելի վերաբերմունքը դեպի Հայաստանի վիճակը և նրա արյունաքամ դառը Բեռլինի վեհաժողովում» հոդվածաշարում, տալով Հայկական հարցի պատմությունը, եզրափակում էր. «Ես կարծում եմ, որ ռուս տերությունը այ-

1 Տե՛ս «Հովիվ», 1906, № 1, էջ 4։
2 Նույն տեղը, № 41, էջ 644։
3 Տե՛ս նույն տեղը, № 42, էջ 658։
4 Տե՛ս նույն տեղը։

սուհետև պիտի որ տրամադրված լինի կատարել տալու Թուրքին՝ անգլիական տերության հետ համերաշխություն պահելով, այն պարտավորությունը, որ տաճիկը հանձն առավ իր վրա Եվրոպայի առաջ՝ բարեփոխություններ անել և խաղաղություն հաստատել հայկական վիլայեթներում, կամ ստիպել իւնճավարություն տալ հայերին իրանց ներքին գործերը կառավարելու. թեկուզ իր նահանգապետի վերահսկողության ներքո, որպիսին որ տրված է կամ տրվում է Մակեդոնիային»[1]։

Բղթակիցը գտնում էր, որ հարցի նման լուծումը «ընդմիշտ խաղաղություն կհաստատե թե Հայաստանի մեջ և թե Անգլիայի ու ռուսաց տերության մեջ. կթեթևացնե տերության ահագին ծախսերը. որ ներկայումս անում է նա՝ մեծ զորաբանակ պահելով սահմանների վրա. ոչինչ վախ չի ունենա Թուրքի կողմից, մինչ հայերը անհուն բարեկամական սեր տածելով մեծ տերության հանդեպ, միշտ պատրաստ կլինեն վիթել իրենց արյունը երախտապարտության»[2]։

* * *

Արևմտահայության ազատագրության հարցերին անդրադարձան նաև Կ. Պոլսում հրատարակվող «Մասիսն» ու «Արեւելքը»։ Իրավ է, XIX դ. վերջին և XX դ. սկզբին այդ պարբերականները գնալով ընդունում էին լիբերալ-բուրժուական, իսկ որոշ հարցերում՝ նույնիսկ դեմոկրատական բնույթ, բայց լինելով պատրիարքական օրգաններ և գործելով համիդյան դժնդակ պայմաններում, նրանք արևմտահայության ազատագրության խնդիրներին մոտենում էին պահպանողական, դիրքերից։

«Մասիսը» գտնում էր, որ գավառահայերի դրությունը թեև ծանր է, բայց նրանք չպետք է արտագաղթեն երկրից, մանավանդ Ռուսաստան, ուր բնակչության կացությունը նույնպես նախանձելի չէ։ Նա միամիտ խորհուրդ էր տալիս արևմտահայերին, այն է՝ քրդերի հարստահարություններից ազատվելու համար թող նրանք դիմեն կամ օսմանյան զորամասերի օգնությանը, կամ ապաստանվեն քաղաքներում, «ուր քյուրտեր չեն կրնար համարձակապես իրենց ավազակությունն ի գործ ընել»[1]։

Թերթը գտնում էր, որ հայերի պահանջը ոչ այլ ինչ է, եթե ոչ «բարվոք վարչության» ստեղծում, իսկ դա կարող է կատարել առաջին հերթին Եվրոպան՝ վերանորոգելով Թուրքիան և բարելավելով նրա իշխանության տակ ընկած ժողովուրդների վիճակը, Եվրոպան կվերացնի ազգային բոլոր անհավասարությունները, «այն ժամանակ հայերն ալ անտանելի վիճակ մը չեն ունենար»[2]։ Բայց Եվրոպայի հետ միասին, նշում էր պարբերականը, հայերի կացության բարելավմամբ շահագրգռված է նաև սուլթանական կառավարությունը։ Այնպես որ նրա և հայերի ցանկությունները այդ հարցում համընկնում են։ 1878 թ. հուլիսի 27-ի առաջնորդողում «Մասիսը» գրում էր. «Հայոց խընդիրը խիստ պարզ է, միմիայն բարվոք վարչության խնդիր մ'է, ուստի այդ մասին կրնանք առանց սխալմամբ ըսել, թե հայք և կայսերական կառավարությունը համամիտ են»[3]։

Պարբերականը «բարվոք վարչություն» ասելով հասկանում էր՝ «Հայաստանը վարչության նոր եղանակ մը ընդունի վեհ սուլթանի գերիշխանության ներքո»[4]։ Այլ կերպ ասած՝ թերթը խնդիր էր դնում հայկական ինքնավարության մասին։ Նա գտնում էր, որ այդ ցանկությունը զանցանք կամ հանցանք չէ, այլ օրինական պահանջ, որի իրագործումը կհամապատասխանի մեծ տերությունների ու Օսմանյան կառավարության շահերին և կնպաստի հայաբնակ շրջանների ազգային հարաբերությունների բարելավմանը։ «Անհնար է,— գրում էր «Մասիսը»,— որ այսպիսի փափաքներ հանցանք կամ եղեռն համարվին՝ իրրև անկախության և բաժանման հակամետ կարծելով. քանզի ընդհակառակն՝ երբ այս փափաքները գործադրին, երբ հայ տարրն յուր արժանի դիրքն ունենա յուր դրացի քյուրդերու և ուրիշներու առջև, երբ փոխադարձաբար ամեն տարրերք իրարու հարգ ճանչեն և ջիրար սիրեն, փոխանակ աոելու, այն ատեն Թուրքիո բաղձացյալ միությունն ու փրկությունը գոյացած կըլլա։ Ուստի տարակույս չունինք, թե կայսերական կառավարությունն

1 «Հուիվ», 1908, № 21, էջ 329։
2 Տե՛ս նույն տեղը, № 21, էջ 329։

1 Տե՛ս «Մասիս», 1878, մայիսի 6, № 2122։
2 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 27, № 2143։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը։

Ե. Հիմոոպա՝ հայոց փափաքներն օրինավոր համարելով՝ զանոնք կընդունին և գործադրությունը կերաշխավորին»[1]։

Բեռլինի կոնգրեսը թեև չարդարացրեց «Մասիսի» սպասելիքները, այնուամենայնիվ նա շարունակում էր հուսալ և, հակառակ իրականության, գրում էր, որ հայերը չեն ուզում միանալ Ռուսաստանին կամ լինել անկախ։ Նրանք կամենում են գտնվել «... վեհափառ կայսեր ուղղակի իշխանության ներքև, հայ պաշտոնատարներով կառավարվիլ հայու հողին վրա»[2]։ Նշելով, որ ըստ Բեռլինի կոնգրեսի Հայկական խնդիրը այսուհետև պետք է լուծեն Անգլիան ու Թուրքիան, համաձայնեցնելով իրենց որոշումը տերությունների հետ, պարբերականը գերապատվություն տալիս էր Թուրքիային։ Նա գտնում էր, որ հայերը եղել են խաղաղասեր մարդիկ, նպաստել են կայսրության զարգացմանն ու ծաղկմանը։ Եվ սուլթանը «այս հավատարմության փոխարեն մասնավոր վարձատրություն խոստացած է մեր ս. պատրիարքին»[3], իսկ այդ վարձատրությունը պիտի դրսևորվի ինքնավարություն շնորհելու եղանակով։ Հավանաբար Թերթը նկատի ուներ Աբդուլ Համիդի այն խաբեությունը, երբ նա պատերազմի օրերին ռուսների առաջխաղացումը կանխելու համար խոստանում էր հայերին ինքնավարություն, բայց պարբերականը չգիտեր, որ նա այդ խոստումներից ընկրկեց, հենց որ ստացավ Անգլիայի պաշտպանությունը։

Համենայն դեպս, «Մասիսը» շարունակում էր տոկալ ու սպասել, մխիթարել իրեն այն ցնորքներով, թե սուլթանական կառավարությունն ու մեծ տերությունները կլուծեն Հայկական հարցը, կբավարարեն հայերի ազգային բաղձանքները։ Այսպես, 1878 թ. հուլիսի 11-ին նա գրում էր, որ Բեռլինի կոնգրեսը թեև հայերի սպասածը չտվեց, բայց նրանց «բոլորովին անտես ալ չըրավ»[4]։ Այն հայկական բարենորոգումների խնդիրը դրեց Եվրոպայի հսկողության տակ, իսկ Անգլիային հանձնարարեց պաշտպանել Եփրատի հովիտը, խորհրդակցելով Թուրքական սուլթանի հետ։ Թերթի կարծիքով, դրանք «ունայն խոսքեր կամ պատիր ցույցեր չեն կրնար ըլլալ, հետևաբար իրավունք ունինք

1 «Մասիս», 1878, հուլիսի 27, № 2143։
2 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 4, № 2143։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 11, № 2148։

հուսալու թե Հայաստանի ներկա դժնդակ վիճակը վերջ գտնելու անհրաժեշտ հարկին մեջ է, և անդորրության քաղցրազվարթ արշալույսը ծագելու մոտ է մեր բազմաչարչար հայրենյաց հորիզոնին վրա»[1]։

1878 թ. նոյեմբերի 4-ին «Մասիսը» հայտարարում էր, որ իբր սուլթանական կառավարությունը քննարկել է ասիական գավառների բարենորոգումների հարցը և արդեն նախապատրաստել դրանց կենսագործումը։ Հետևաբար մոտ է ժամանակը, որ «Հայաստանի ժողովուրդք և, մասնավորապես հայք, Պերլինի դաշնագրության 61-րդ հոդվածին արդյունքը տեսնել պիտի սկսին»[2]։

1879 թ. հունվարի 12-ին պարբերականը գրում էր. բարենորոգումները «տարակույս չկա, որ վերջապես պիտի գործադրվին»։ Եվրոպական տերությունները արդեն տվել են իրենց հավանությունը, նրանք «անշուշտ, մեզ պես տկար ազգ մը խաբելու ալ ոչ պետք մը կրնային ունենալ, ոչ ալ շահ մը»[3]։

Թերթը դեռ շարունակում էր հուսալ, որ հայերին կտրվի ինքնավարություն, հայտարարելով՝ «Հայկական ինքնուրույնության գաղափարն ալ յուր արժեքը չէ կորուսած ամեն լրջամիտ և անկողմնակալ անձանց առջև»[4]։

Միաժամանակ «Մասիսը» ընդգծում էր, որ հայերը ինքնավարություն ձեռք բերելու համար պիտի պայքարեն, ակտիվ ելույթներով պահանջեն իրենց վիճակի բարելավում։ Հայը պետք է «սովրի իր բախտն յուր ձեռքով շինել, փոխանակ միմիայն օտարաց վրա հույս դնելու», այլապես նա «չկրնար ինքզինք կառավարել», այլապես նա կմնա ստրկական վիճակում, և տերերն ատյուծի բաժինն իրենց կվերցնեն, իսկ հայի առջև միայն փշրանքներ կնետեն[5]։ Բայց երբ կառավարությունը սաստկացրեց հայկական հալածանքները, «Մասիսը» սկսեց նահանջել ինքնավարության պահանջներից և նշեց, որ հայերն ուզում են «ոչ թե տեղական գերիշխանություն, այլ... հավատարմություն», ընդ որում հավատարմություն վարչությունում, գատաբանում, հարկերի ու տուրքերի բաշխման գործում և այլ բնա-

1 «Մասիս», 1878, հուլիսի 11, № 2148։
2 Նույն տեղը, նոյեմբերի 4, № 2198։
3 Տե՛ս նույն տեղը, 1879, հունվարի 12, № 2228։
4 Նույն տեղը, մայիսի 23, № 2332։
5 Տե՛ս նույն տեղը, հոկտեմբերի 27, № 2461։

դավառներում։ Նրանք կամենում են ոչ հարստահարել և ոչ էլ հարստահարվել, այլ ապրել կյանքի ու գույքի ապահովության պայմաններում։

Հետագայում պարբերականն ավելի կծկվեց։ Այն արդեն հանդես էր գալիս հայ ազատագրական շարժումների դեմ, դանելով, որ դրանք վնասաբեր են ազգի համար։ 1881 թ. հունվարին հրապարակված հոդվածներից մեկում կարդում ենք, որ հայոց քաղաքական վիճակը «հոյժ փափուկ է», բարենորոգումների համար նրանց պայքարը, զանազան տեղերում կազմակերպած ցույցերն ու ելույթները թշնամարար են ընդունվում կառավարող շրջաններում։ Բ. Դուռը խուսափում է լսել պատրիարքին և կատարել նրա պահանջները, մայրաքաղաքի թուրքական թերթերը խնդիր են դնում զրկել հայոց հոգևոր առաջնորդին այդ իրավունքից, անուշադրության են մատնվում գավառներից եկած բաղդրիրները կամ զանգատները, որի հետևանքով «գավառական բազմաթիվ կարևոր գործեր գոհացում չեն կրնար ստանալ»։ Պատրիարքն ու գավառական հոգևոր առաջնորդները կորցնում են իրենց հեղինակությունը, բայց ամենավատն այն է, որ իշխանությունները զանազան կասկածների պատճառով մարդկանց են ձերբակալում, բանտարկում ու տանջում[1]։

Թերթը գտնում էր, որ նման պայմաններում անհրաժեշտ է հսկողություն սահմանել ազգի գավառական գործերի վրա, զգուշացնել հոգևոր ու աշխարհիկ գործիչներին, որ «փուլ տեղը» կասկածների առիթ չտան, «հախուռն և անխոհեմ առաջնորդներու նկատմամբ ամենեն կտրուկ ընթացքը պետք է բռնել, որպեսզի շատ անմեղներ մեղավորի կրակով չայրին»։ Նույն կերպ պետք է վարվել նաև զանազան ընկերությունների ու կազմակերպությունների, ուսուցիչների և այլ մտավորականների հետ։

Արևմտահայության ազգային խնդրի հետ միասին «Մասիսը» մտահոգվում էր նաև նրա հողային հարցի լուծումով։

1879 թ. դեկտեմբերին նա նշում էր, որ արևմտահայերի համար հողային հարցը «ամենամեծ կարևորություն ունի»[2]։ Նրանք պետք է հողատեր լինեին և պահեին իրենց կալվածքները «իբրև հայրական թանկագին ժառանգություն»։ Սեփական տուն ու հող ունեցողը, շարունակում էր թերթը, ավելի ինքնուրույն և անկախ է, քան ուրիշի տանը բնակվողը և նրա տարածքները մշակողը։ Հողը ազգի մարմինն է, առանց հողի մարդ չի կարող ունենալ հայրենիք, լինել հայրենասեր։ Ուստի հայերը ոչ միայն չպետք է զրկվեն իրենց տարածքներից, այլև պարտավոր են հետ բերել կորցրածը։ Եթե դա անհնար է խաղաղ ճանապարհով, անհրաժեշտ է կատարել կռվով, ակտիվ պայքարով։ «Կալվածապետության դեմ,— գրում էր նա,— Եվրոպիո գյուղացոց ըրած պատմական կռիվներն ինչո՞ւ ազդեցություն չպիտի ունենան մեր Հայաստանի աղգայնոց վրա»[1]։ Սակայն կռվի կոչը «Մասիսի» համար պատահական էր՝ թելադրված ժամանակի ոգով։

Թերթը խնդիր էր դնում, որպեսզի պատրիարքարանն ու առաջնորդարանները օգնեն հայոց կալվածքների ընդարձակումներին։ Անհրաժեշտ է վարձել բանիմաց փաստաբաններ և պաշտպանել նրանց հողային դատերը, խրախուսել հայ դրամատերերին, որ իրենց միջոցները ներդնեն Հայաստանում, գնեն հայերի ձեռքից խլված տարածքները, դարձնեն դրանք ազգային կալվածքներ և օգտագործեն «իբրև տիպար աղարակներ, թե հայ գործավորաց վարձ տալով և թե տակավին ուրիշ եղանակներով»։ Պետք է նաև պրոպագանդել երկրագործական գիտելիքներ, թեթև տուրք հավաքել հարուստ հայերից կամ բոլոր հայերից և ծառայեցնել այն ազգի շահերին[2]։

Այնուհետև «Մասիսը» գտնում էր, որ անհրաժեշտ է Հայաստանում հիմնել փոխատվական դրամարկղներ, խրախուսել, որ ունևոր հայերը հող գնեն և մատչելի պայմաններով վիրավաճառեն չքավորներին կամ բնակեցնեն նրանց իրենց տարածությունների վրա։ «Եթե հայք իրանք իրար օգնեն,— գրում էր նա,— աստված էլ կօգնե իրենց»[3]։ Գյուղացիներից զատ, իրենց կալվածքները պետք է պահեն ու ընդարձակեն նաև հայկական վանքերը։ Պարբերականի կարծիքով, հայ ազգի պահպանման համար միայն դպրոցներն անբավարար են, «հողեր և արոտ-

1 Տե՛ս «Մասիս», 1881, հունիսի 10, № 2913։
2 Տե՛ս նույն տեղը, 1879, դեկտեմբերի 18։

1 Մասիս», 1879, դեկտեմբերի 18։
2 Տե՛ս նույն տեղը, դեկտեմբերի 19։
3 Նույն տեղը։

ներ ալ պետք են ազգին... գպրոց և հող, լույս և հարստություն, այս պետք է լինի մեր ազգային նշանաբանը»[1]։

«Մասիսը» հայ հասարակական-քաղաքական կյանքում առաջնակարգ նշանակություն էր տալիս եկեղեցուն, հայ լուսավորչական կրոնին։ Նա գրում էր, թե միակ բանը, որ մեր հայրենյաց ու ազգության «մեծ հիմք է եղել և է— դա մեր ազգային եկեղեցին, կրոնն է»։ Լուսավորչական եկեղեցին «ազգության պահպանողն է եղել շատ ժամանակ»[2]։ Ուստի պետք է այն պահպանել ու բարելավել, սիրել ու փայփայել։ Արձանագրելով, որ հայ հոգևորականության շարքերում տեղ են գտել բազմաթիվ ապիկարներ ու տգետներ, պարբերականը պահանջում էր, որ նրանց պետք է արտաքսել և փոխարինել կարող ու բարեկիրթ մարդկանցով[3]։

Պարբերականը քննադատում էր միսիոներների գործունեությունն արևմտահայ իրականության մեջ, կոնկրետ փաստերով ցույց էր տալիս, թե ինչպես են նրանք օգտագործում հայերի կարիքն ու աղքատությունը և փորձում շնչին գումարներով դավանափոխել նրանց։ Թերթը եզրափակում էր. «Շատ վնաս ու քիչ օգուտ, ահա միսիոներաց գործը Թուրքիո մեջ»[4]։

Անդրադառնալով հարևան ժողովուրդների հետ հարաբերությունների հարցին, «Մասիսը» բողոքում էր նրանց վերնախավի, հատկապես քուրդ ցեղապետերի ու աղաների չարագործությունների դեմ։ Միաժամանակ նշում էր, որ այդ ամենի դեմ ծառանում են նաև մահմեդականները, մանավանդ քրդերը։ Թերթը գրում էր. «Քուրդ պեյերու բռնությանց դեմ գանգատողք միայն հայերը չեն, այլ բազմաթիվ թուրքեր և մանավանդ քուրդ ժողովուրդներ կան, որ հավասարապես կգանգատվին անոնցմե»[5]։

Ինչ վերաբերում է շարքային մահմեդականներին, ապա պարբերականը նրանց նկատմամբ համակրանք ու կարեկցանք էր տածում։ Նա նշում էր, որ մահմեդականների մեծ մասը խաղաղ ու հանդարտ մարդիկ են և նույնպիսի կարիք ունեն բարե-

1 «Մասիս», 1879, դեկտեմբերի 19։
2 Տե՛ս նույն տեղը, 1881, մայիսի 20, № 2896։
3 Տե՛ս նույն տեղը, 1880, հունիսի 21, № 2652։
4 Նույն տեղը, 1881, մայիսի 20, № 2886։
5 Նույն տեղը, 1880, մայիսի 27, № 2631։

նորոգումների, ինչպես հայերը։ Եթե չլինեն չարագործները, հայերի և նրանց հարևանների միջև կհաստատվեն բարեկամական լավագույն հարաբերություններ։ «Հայը և քուրդ,— գրում էր Թերթը,— ամենահին դարերեն ի վեր միշտ իրարու դրացի ժողովուրդներ եղած են, և երբ հարմար բարենորոգումներ լինելով, բազմաթիվ պատեհություններ վերանան, կրնան ապագային մեջ շատ լավ կենակցել իրարու հետ»[1]։ Ուստի, Թերթը պահանջում էր, որ պետք է պատժել ոճրագործներին, հաստատել ազգաբնակչության հավասարություն, կյանքի և գույքի ապահովություն։ Այդ ամենից զոհ կլինեն թե՛ քրիստոնյաները, և թե՛ մահմեդականները։

«Արևելքը» պարտադրված էր շարել ու պճնազարդել բռնակալի այլանդակ էությունը, օգտագործելով վերամբարձ ու ճոռոմ բառեր, սուորաքարշ ու կեղծավոր տողեր, որոնք հազիվ թե կարելի է կարդալ առանց զզվանքի։ Ահա մի երկու քաղվածք։ Աբդուլ Համիդի ծննդյան ու թագադրման տարեդարձների առիթներով պարբերականը հայտարարում էր, թե նա իր առաքինությունների շնորհիվ «գրաված է յուր միլիոնավոր հպատակաց սերն ու հարգանքը...»[2], թե նա «իր բարիքները առատորեն և հավասարապես տարածած է իր հավատարիմ հպատակներու վրա...»[3], թե շնորհիվ նրա վարած քաղաքականության «բովանդակ Թուրքիա հսկայական առաջադիմության մը մեջ արագ ու հիանալի կերպով բարգավաճած է»[4]։

Անգամ այն օրերին, երբ սուլթանը մորթոտում էր Սասունի ու Մուշի անմեղ ու անպաշտպան հայերին և սպառնում էր վասպուրականին, «Արևելքը» գրում էր. «Վանցի ժողովուրդը Օսմանյան կայսրության և Օգոստ. սուլթանի հայրական խնամյաց տակ անդորր ու խաղաղ կապրի, կյանքի և խղճի բոլոր ազատությունները վայելելով»։ Ապա եզրափակում էր, որ հայ ժողովուրդը սուլթանի «վսեմ հովանիին ներքև օրըստօրե կաճի, կզարգանա նյութապես, բարոյապես ու մտավորապես»[5]։

Թերթը գտնում էր, որ ինքը «պիտի նպաստե տերության և

1 «Մասիս», 1880, մայիսի 27, № 2631։
2 Տե՛ս «Արևելք», 1890, ապրիլի 7, № 1860։
3 Տե՛ս նույն տեղը, 1901, № 4792։
4 Տե՛ս նույն տեղը, № 4717։
5 Նույն տեղը, 1904, № 5521։

ազգին միջև լավագույն հասկացողության և կատարելագույն վստահության մը գոյացման, հաստատ բռնելով միշտ այն սկզբունքը, թե տերության և ազգին շահերն անքակտելի կերպով կապակցյալ են։ Աւետիքը միշտ պիտի ջատագովէ ազգային ներքին բարենորոգման գաղափարին, ավելի ազատական, քան արմատական և ավելի պահպանողական, քան հեղափոխական ոճով[1]։

Պարբերականը դատապարտում էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները։ 1890 թ. Գում Գափուի ցույցի մասին գրում էր, որ մենք «... պիտի պնդենք ամենայնի օրինավորության հավատարիմ մնալու անհրաժեշտ հարկին վրա, հորդորելով մեր ազգայիններ չհրապուրվել այն տեսակ ծայրահեղություններեն, որք ազգին վիճակին բարվոքում չբերելե զատ՝ ընդհակառակը կծանրացնեն զայն»։ Ապա շարունակում էր, որ դարերից ի վեր մշակված սովորույթի համաձայն ազգի հոգսերը պատրիարքն է կարգավորում սուլթանի միջոցով։ «Արևելքը» «այսուհետև ալ այդ օրինավոր գործողության կուսակից կմնա հաստատապես», մանավանդ, երբ սուլթանն ամեն ինչ անում է երկրի ու իր հպատակների վիճակի բարելավման համար։ «Այսպիսի իմաստուն վեհապետի մը վստահությունն ու համարումն անեղծ պահել և վայելել ազգին համար մեծ պետք մ՝ է միշտ»։ Ուստի մերժելով ոմանց ծայրահեղ քայլերը և ապօրինի ինքնագործությունները, ազգը «հաստատաքայլ պիտի ընթանա միշտ օրինավորության շավղին մեջ»[2]։

Նույն դրույթներն էր պաշտպանում պարբերականը նաև հետագայում, երբ պատասխանում էր Մուրատ բեյի «Միության» շարաթաթերթի Գում Գափուի դեպքերի առիթով հայերի հասցեին ուղղված կշտամբանքներին[3]։

Թերթը գտնում էր, որ ինչպես աշխարհի այլ երկրները, այնպես էլ Օսմանյան կայսրությունը բարեկարգման կարիք ունի։ Սուլթանական կառավարությունը դա իրագործում է դանդաղ ճանապարհներով։ Հայերի համար նախընտրելին այն է, որ եվրոպական տերությունների հյուպատոսները հուշեն իշխանություններին, իսկ իշխանություններն էլ կենսագործեն նրանց թե-

1 «Արևելք», 1885, հունվարի 14, № 301։
2 Նույն տեղը, 1890, նոյեմբերի 13, № 2049։
3 Տե՛ս նույն տեղը, նոյեմբերի 17, № 2053։

լադրած հայանպաստ բարենորոգումները։ Պետք չէ, որ հայերը թողնեն այդ օրինավոր միջոցները և դիմեն ոճիրների[1]։

Շարունակելով այդ տեսակետի պաշտպանությունը, պարբերականը դատապարտում էր սուլթանի դեմ գործողների, մանավանդ մահափորձ կատարողների վարքագիծը[2]։ Նա ոչինչ չէր հաղորդում Օսմանյան կայսրության ժողովուրդների ազատագրական շարժումների, անգամ 1904 թ. Սասունի գոյամարտի մասին, երբ բռնակալը արյան ծովի մեջ հազարավոր անմեղ մարդկանց խեղդեց։

«Արևելքը» հողային կամ գյուղացիական հարցերը ևս մեկնաբանում էր պաշտոնական դիրքերից։ Այն, օրինակ, գրում էր. «Տերությունը բարերար օրենքներ դրած է ազգաւին ու անդորին հողային սեփականություններն անվթար պահելու համար։ Ասով հանդերձ, տեղ-տեղ այս սեփականությունը կեղծակործ վիճակ մը ունին։ Ամեն կողմ կրնան գտնվիլ անիրաւ անհատներ, որք իրենց դրացվուն պարտեզին աչք անկենն[3]։ Նշելով, որ կայսրության արևելյան մասում կատարվում են հայոց հողերի բռնագրավումներ, որի հետևանքով առաջանում է սակավահողություն ու հողազրկություն, թերթը վերացականորեն հայտարարում էր, որ մարդկանց ապրելու համար պետք է բավարարել հողով[4]։

Անդրադառնալով արտագնացությանը, պարբերականը վերլուծում էր նրա դրական ու բացասական կողմերը, բայց ի վերջո եզրափակում էր. «Այն հայը, որ Փոքր Ասիայեն կամ Կ. Պոլսեն կհեռանա, կորսված է հայության համար»[5]։

«Արևելքը» ջերմորեն պաշտպանում էր քրիստոնեությունն ու հայ լուսավորչական եկեղեցին, համարելով դրանք հայ ժողովրդի հավատի ու հարատևման անհրաժեշտ հենարանները։ Մանկական տոների առիթով թերթը գրում էր, որ ամեն մի քրիստոնյա պետք է հաշիվ տա իրեն, թե «ինքը որ աստիճանի քրիստոնյա է բարին լավագույն նշանակությամբ»[6]։ Այս փաստա-

1 Տե՛ս «Արևելք», 1890, նոյեմբերի 13, № 2049։
2 Տե՛ս նույն տեղը, 1905, № 6037—6049։
3 Նույն տեղը, 1890, օգոստոսի 4, № 1968։
4 Տե՛ս նույն տեղը։
5 Նույն տեղը, մայիսի 14, № 1897։
6 Տե՛ս նույն տեղը, 1885, մարտի 23, № 367։

բանելով լուսավորչական եկեղեցին, շարունակում էր, որ հայերի համար այն ոչ միայն բռնապետ չի եղել, այլև «ազգային մեծագույն ճգնաժամերուն մեջ բռնապետության դեմ գլխավոր պատվարն և ապաստանն եղած է ազգին»։ Եկեղեցին «մատուցած է ծառայություններ յուր հոտին ազգության պահպանման և մտավոր ու բարոյական մշակման»[1]։

Պարբերականի կարծիքով, հայերը պետք է միշտ հաստատ մնան իրենց եկեղեցուն, քանի որ այն թե՛ քրիստոնեական է, թե՛ ազգային, իսկ իրենք և՛ քրիստոնյաներ են և՛ հայեր։ Թերթը ցավ էր հայտնում, որ քաղաքակրթության զարգացման պատճառով աճում է «կրոնային անտարբերությունը» և այդ երևույթը քաղաքներում, մասնավորապես Կ. Պոլսում, ավելի նկատելի է, քան գավառներում ու գյուղերում։

«Արևելքը» դատապարտում էր նրանց, ովքեր հեռանում էին լուսավորչական եկեղեցուց և դառնում կաթոլիկներ կամ բողոքականներ։ Նա կոչ էր անում, որ պետք է պայքարել կրոնափոխության դեմ, քանզի «կրոն փոխել ազգություն փոխելու հոմանիշ է առ մեզ»[2]։ Պարբերականը գտնում էր, որ լուսավորչական եկեղեցին պաշտելի է եղել և է հայ հասարակության բոլոր խավերի համար[3]։

«Արևելքը» իր էջերում անդրադառնում էր հայ հոգևորականներին, մասնավորապես քահանաներին և ցույց էր տալիս, որ նրանցից շատերը զբաղվում են չարաշահումներով։ «Ի բաց առյալ քանի մը ողջամիտ եկեղեցականներե,— ասվում էր նրա առաջնորդողներից մեկում,— հայ կղերը... կշահագործե ժողովրդի միամտությունը»։ Նա պահանջում էր ազատվել անպատվաբեր ու անարժան հոգևորականներից և նրանց շարքերը համալրել բարեկիրթ ու բանիմաց մարդկանցով։ Առաջնորդողներից մեկում կարդում ենք, որ կրոնը կարող է կորցնել իր դերը, «եթե լուսամիտ կղերական տարր մը... չգա վտարել եկեղեցվո բեմերեն տգետ, շարաշահության սիրահար և ժողովրդի մտավոր զարգացման թշնամի կղերը»[4]։

Թերթն այն կարծիքին էր, որ կրոնական գործի բարեկավման համար պետք է կատարել վիրահատում, անպետքներին «հատանել և ի հուր արկանել»[1]։

Այնուհետև «Արևելքը» նշում էր, որ հոգևորականության հեղինակությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է պատրիարքարանի ու պարբերականների միջև ստեղծել սերտ հարաբերություններ, դնելով վերջիններիս պատրիարքի հսկողության տակ։ Նրա կարծիքով՝ «հարաբերությունները թերթերու և պատրիարքարանի միջև պետք է ավելի սերտ հանգամանք մը առնեն, բոլոր... անպատեհությանց վերջ մը տալու համար»[2]։

«Արևելքին» տարբեր ժամանակներում աշխատակցում ու թղթակցում էին այնպիսի առաջադեմ հեղինակներ, ինչպիսիք էին Ա. Արփիարյանը, Գր. Զոհրապը, Լ. Բաշալյանը, Ե. Սրմաքեշխանլյանը (Երուխան), Ե. Օտյանը, Հ. Ասատուրը, Տ. Կամսարականը, Տ. Քելեկյանը և ուրիշներ։ Իրենց առաջադիմական հայացքներով նրանք հակադրվում էին համիդյան բիրտ ռեժիմին, որի հետևանքով ստիպված եղան թողնել պարբերականը և տարագրվել Թուրքիայից։

* * *

Հայ բարձրագույն հոգևորականության դիրքորոշումը արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների հանդեպ պաշտպանում ու պրոպագանդում էին նաև մի շարք հեղինակներ։ Դրանցից կարելի է հիշատակել պահպանողական Սմբատ Գաբրիելյանին, որն իր հայացքներն ավելի ցայտուն արտահայտեց «Հայկական ճգնաժամը և վերածնունդը» աշխատության մեջ։

Ս. Գաբրիելյանը անդրադառնում էր հայ ժողովրդի պատմական անցյալին, բնութագրում նրա կացությունը թուրքական տիրապետության տակ, վերլուծում 90-ական թվականների կոտորածների պատճառներն ու հետևանքները և սխալմամբ մեղադրում կուսակցություններին։ Նա գտնում էր, որ «մեր ազգը պատրաստ չէր պայքարին»[3], որ նա թեև փափագում էր

1 Տե՛ս «Արևելք», 1885, մարտի 23, № 367։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը 1901, № 4622։
4 Տե՛ս նույն տեղը։

1 Տե՛ս «Արևելք», 1901, № 4728։
2 Նույն տեղը, № 4711։
3 Տե՛ս Մ. Սմբատ Գաբրիելյան, Հայկական ճգնաժամը և վերածնունդը, Պոսթոն, 1905, էջ 61։

ազատության համար, բայց անկարող էր այն ձեռք բերել։ «Ուրիշ բան է փափագել, ուրիշ բան է կարենալ»[1]։ Հեղինակը նշում էր, որ կուսակցությունների կազմակերպած ցույցերը ոչ միայն անօգուտ էին, այլև վնասակար։ Նրանք դիմում էին այդ քայլին, որպեսզի Եվրոպայի օգնությամբ թեթևացնեին հայերի վիճակը, բայց սպասվածին հակառակ արդյունք էին ստանում։ «Ցույցը երկծայրի սուր մ՝ է. եթե եվրոպական պաշտպանություն առաջ բերելն վրիպի, թուրքական հալածանքը սաստկացնելու կծառայե անվրեպ»[2]։ Եղան մարդիկ, որ քարոզեցին հրաժարվել ցույցերից, բայց նաև «գտնվեցան հայեր, որ լսելու ականջ չունեցան»[3]։

Ս. Գաբրիելյանը վնասակար էր համարում նաև հայկական ջարդերից հետո կուսակցությունների ձեռնարկած կռիվները։ Նա գտնում էր, որ հայերը ցրված են երկրով մեկ, անկազմակերպ են և անկարող կատարելու հեղափոխություն։ Կոտորածներից հետո նրանց այդ կացությունն ավելի շեշտվեց։ Նման պայմաններում «հեղափոխություն գործելու որևէ ձեռնարկ հոռնգույն է, քան սխալ մը, ինքնասպանություն է»[4]։ Կուսակցությունների նման ձեռնարկումները «կրերեն նորանոր զարհուրանք ու արյունահեղություններ արդեն ուժասպառ գավառներուն մեջ»[5]։ Հեղինակը գովում էր հայդուկների հայրենասիրությունը, սխրագործությունները, բայց ողբալի էր համարում նրանց գործունեության հետևանքները։ Դատապարտելով դաշնակցականների ու հնչակյանների ելույթները, նա սխալաբար գտնում էր, որ նրանք էին մեղավորը 1904 թ. Սասունի ջարդերի, ջարդ, երբ հազարավոր անմեղ հայերի արյուն հոսեց։ Այնուհետև եղրափակում էր. «Թեպետ դաշնակցականները շատ ավելի ծայրահեղ և խոլ բնթացքի մը կհետևին, քան հնչակյանք, երկու բնկերություններն ալ վիթխարի մոլորության մը կծառային՝ ճգնելով ազգին հարկադրել հեղափոխություն մը, որ անոր ներկա պայմաններուն մեջ անկարելի է»[6]։

Ս. Գաբրիելյանը դատապարտում էր նրանց, ովքեր հայերին

1 Մ. Սմբատ Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 63։
2 Նույն տեղը, էջ 52։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 54։
4 Նույն տեղը, էջ 65։
5 Տե՛ս նույն տեղը։
6 Նույն տեղը, էջ 95։

ապստամբության կոչ էին անում, հավատացնելով, թե Եվրոպան կօգնի։ Այն ժողովուրդը, որն «իր անբավական ուժերով հեղափոխություն ընելու կելլե, ակնկալելով, որ օտարները վաղընդփույթ իրեն օգնության հասնին, ինքզինքը չարաշար հուսախաբության և մեծամեծ վտանգներու նշավակ կընե, ինչպես ըրավ դժբախտաբար՝ այլոց դառն փորձություններե անխրատ՝ մեր ազգը»[1]։ Հեղինակը նշում էր, որ հայերը ուղղակի մոլորության մեջ էին, երբ կարծում էին, թե «Եվրոպա պիտի աղաւե զՀայաստան, թե Արևմուտքեն պիտի դա մեզի մեր կորուսած ինքնուրույնության թագը»[2]։ Նա քննադատում էր առանձին տերությունների, հատկապես ցարական Ռուսաստանի քաղաքականությունը Հայկական հարցում, գտնելով, որ եթե Անգլիան նրա լուծման գործում «ոճիր մը գործած եղավ», ապա Ռուսաստանը իրեն դրսևորեց որպես «մեծագույն ոճրագործ»։ Հեղինակը նաև այն թյուր կարծիքն էր հայտնում, որ Անգլիան իբր հայերի համար Թուրքիայի դեմ ռազմական գործողություններ կսկսեր, «եթե իրեն դեմ չի գտներ զՌուսիա»[3]։ Սակայն իրավացի էր, երբ մեղադրում էր Եվրոպային հայկական կոտորածների գործում, նշելով, որ այն հայերին հույս տվեց, թուրքերին՝ դայրույթ, իսկ հետո «ասպարեզեն քաշվեցավ՝ լքանելով իր պաշտպանյալ օսմանյան շղթայազերծ ցասումին զոհը»[4]։ Նա հանդում է այն եզրակացության, որ այսուհետև «հայ արյան կաթիլ մը չպիտի վատնենք եվրոպական միջամտության մը դրգռելու հաշվով»[5]։ Սակայն «պիտի շարունակենք մեր արդար դատը եվրոպական մեթոդներով, խաղաղ միջոցներով քաղաքակիրթ աշխարհին դատարանին առաջ պահել»[6]։

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպես պետք է վարվել այսուհետև, ինչպես պիտի բարելավվել արևմտահայության կացությունը, Ս. Գաբրիելյանը գրում էր. «Մեր պահանջը լուրջ և չափավոր կերպով պետք է բանաձևել. մենք անկախություն չենք խնդրեր և ոչ Օսմանյան կայսրութենեն անջատում, այլ իրական և վստահելի բարեկարգություններ, որոնք մարդկային տարրա-

1 Տե՛ս Մ. Սմբատ Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 149։
2 Նույն տեղը, էջ 157—158։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 145։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 166։
5 Տե՛ս նույն տեղը, էջ 171։
6 Տե՛ս նույն տեղը, էջ 164։

կան իրավունքներն ապահովվեն մեզ համար և այնպիսի վարչություն մը, որ մեր տնտեսական ու կրթական գործունեությունները քաջալերե՝ փոխանակ խոչընդոտելուս[1]։ «... մեր դատը, մեր իրավունքը խաղաղական միջոցներով ձեռք բերել աշխատենք»[2]։

Հեղինակը հայտնում էր նաև այն անհեթեթ միտքը, թե արևմտահայերի վիճակի բարելավման համար պետք է դիմել մահմեդական հոգևորականներին, որոնք, ելնելով Ղուրանի դոգմաներից, իբր պրոպագանդում են մարդասիրություն, քարոզում են «բարեկամական հարաբերություններ մշակել բոլոր ազգերուն հետ»[3]։ Նրա կարծիքով, այդ հոգևորականները կարող են հաշտեցնել թուրք կառավարիչներին ու հայերին, հանգամանք, որը երկու կողմերի համար էլ օգտակար կլիներ։ «Օսմանյան կառավարության համար պատվավոր պիտի ըլլա այս հաշտությունը անոր համար, որ խելացի և ճշմարիտ քաղաքագիտության գործ մը կատարած պիտի ըլլա իր վիրավորած հայ հպատակ ազգը իրեն բարեկամ և ուժ մը ընելով, փոխանակ տկարության և տաղնապի աղբյուր մը վերածելու գալն։ Հայոց համար ալ պատվաբեր պիտի ըլլա այն ու, որ հայ ազգը փոխանակ օտարներեն սպասելու իր վիճակին բարվոքումը, ինքն իր ճակատագրին տերը կդառնա, դժվարությունները ինքը կվերցնե մեջտեղեն և կմտնի խաղաղ առաջադիմության ուղին։ Այս հաշտությունը դժվար բան մը չէ և կրնա անհապաղ իրականանալ, եթե երկու կողմեն ալ անկեղծության ապացույց տրվի»[4]։ Իբրև հաշտության առաջին քայլ հայերը պետք է դադրեցնեն ելույթները և կուսակցություններին վռնդեն Թուրքիայից, զբաղվեն իրենց խաղաղ տնտեսական ու կրթական գործերով, իսկ իշխանություններն էլ պետք է վերադարձնեն պատրիարքի իրավունքները և առաջվա պես նրա միջոցով առնչվեն հայերի հետ, հայաբնակ վայրերում նշանակեն բարի պաշտոնյաներ և վերացնեն ազատ երթևեկությունն արգելակող օրենքները։

Ինչ խոսք, որ Ս. Գաբրիելյանը քարոզում էր ռուսամտու-

1 Մ. Սմբատ Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 165։
2 Նույն տեղը, էջ 171։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 182։
4 Նույն տեղը, էջ 187։

թյուն, անիրագործելի ու ռեակցիոն թեզեր, գերազանցելով համարյա իր բոլոր գաղափարակիցներին։ Պատահական չէ, որ նրա հայացքները սուր քննադատության ենթարկվեցին դեմոկրատական ու բուրժուական շրջանների կողմից և, ընդհակառակը, բարձր գնահատվեցին հայ պահպանողական պարբերականների («Հովիվ», «Լումա», «Կոչնակ» և այլն) և երիտթուրքերի, մասնավորապես Ահմեդ Ռիզա բեյի կողմից։

Ազգային-պահպանողականներ

Ազգային-պահպանողականները ընդհանրություններ ունեին կղերաազգայական հոսանքի ներկայացուցիչների հետ։ Երկուսն էլ առանձնակի նշանակություն էին տալիս հայ լուսավորչական եկեղեցուն, ձգտում էին պահպանել նրա հիմքերն ու հեղինակությունը։ Այդուհանդերձ նրանք որոշակիորեն տարբերվում էին միմյանցից։ Կղերաազգայականների համար եկեղեցին համապարփակ հեղինակություն էր, որից դուրս չկար ազգ ու հայրենիք, իսկ ազգային պահպանողականների համար այն ազգի միավորման, համախմբման և ինքնապահպանության մարմին էր[1]։ Մյուս կողմից, ազգային պահպանողականները տարբերվում էին լիբերալներից։ Ա. Հովհաննիսյանը, խոսելով այդ տարբերության մասին, իրավամբ գրում է. «Եթե սխալ չէր լինի 50—60-ական թթ. արևելահայ ազգային պահպանողական հոսանքը բնութագրել որպես արևելահայ բուրժուազիայի աջ թևը, ճիշտ կլիներ նաև արևելահայ ազգային լիբերալներին համարել նրա ձախ թևը»[2]։

Կղերաազգայական հոսանքի ներկայացուցիչներն արտահայտում էին ֆեոդալական վերնաշերտերի շահերը, համերաշխվում էին տիրող սոցիալական հարաբերություններին, սպասարկում էին իշխող քաղաքական կարգերին և դեմ էին

1 Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք II, Եր., 1956, էջ 33։ Ի դեպ՝ մասնագետներից ոմանք ազգային պահպանողական գաղափարախոսությունը համարում են ոչ թե ինքնուրույն հասարակական հոսանք, այլ միջանկյալ ուղղություն (տե՛ս Վ. Ա. Պետրոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Եր., 1967, էջ 216)։ Մեր նպատակից դուրս է այդ խնդրի քննարկումը, այն ենթակա է հատուկ լուսաբանման։

2 Ա. Հովհաննիսյան, Ուրվագծեր XIX դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական-քաղաքական մտքի պատմության, Եր., 1970, էջ 51 (ձեռագիր)։

եկեղեցական բարենորոգումներին։ Մինչդեռ ազգային-պահպանողականներն արտահայտում էին կովկասահայ առևտրաարդյունաբերական բուրժուազիայի շահերը, նրանք կողմնակից էին ազգային կյանքի մասնակի բարեշրջումների, համակրում էին ազգային-ազատագրական շարժումները, բայց ազգի փրկությունը սպասում էին ոչ թե ապստամբ զանգվածներից, այլ նրանց օգնություն խոստացող անգլո-ֆրանսիական դիվանագիտությունից։ Ազգային-պահպանողականները զինակիցներ էին որոնում համքարությունների ու գյուղական համայնքների մեջ, բայց նրանց վրա նայում էին իբրև ժամանակավոր ուղեկիցների[1]։

XIX դ. 80-ական թվականների ազգային-պահպանողական օրգաններից էր «Մեղու Հայաստանի» թերթը։ Զգալով ազգի ավանդարդում կանգնեցնել հոգևորականությանը, այն հայտարարում էր, թե կան ազգեր, որոնց «պահպանության համար եկեղեցին գլխավոր նեցուկն է, նոցա մեջ եկեղեցու հիմքը փորելը կնշանակե ազգությունը թաղել ջանալ։ Այդպիսի ազգերից է հայ ազգը»[2]։

Պարբերականը նշում էր, որ հայ ազգի հասարակական-քաղաքական կյանքում միակ կազմակերպված ու կատարելագործված ուժը նրա հոգևորականությունն է։ Այն ոչ միայն պահում ու պահպանում է աշխարհով մեկ ցրված հայության ամբողջականությունն ու համախմբումը, այլև զեկավար դեր է խաղում նրա տնտեսական, քաղաքական ու մշակութային գործերում։ Փորձելով բարձրացնել հայ հոգևորականության նշանակությունը, թերթը գրում էր. «Ազգային եկեղեցին հայոց ազգի ամենաթշվառ ժամանակներում, պատմական ամենածանր պարագաներում պահպանել է ազգային ամբողջականությունը, անհատականությունը, ազգային բարք ու վարքը, մայրենի բանկագին բարբառը, ընտանիքը, արյունի պարզությունը, տիպը, միով բանիվ այն ամենը, որով մի ազգություն ջոկվում է մյուսից։ Հենց որ հայը թողել հեռացել է յուր ազգային եկեղեցու հրկից, նա օտարացել է և յուր ազգությունից»[3]։

Պարբերականը ազգի դավաճան էր համարում նրան, ով ուրա-

1 Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը..., էջ 33, 35, 36։

2 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1881, հունվարի 20, № 2։

3 Նույն տեղը, 1883, մարտի 11, № 25։

նում էր լուսավորչական եկեղեցին։ Այն մերժում էր հայոց եկեղեցու վերաբերյալ դրսից առաջարկված բարեկարգումները և նշում էր, թե նա այնքան կենսունակ է, որ ինքը կարող է բարեկարգել իրեն։ Ուստի կոչ էր անում, որ պետք է հակահարված հասցնել լուսավորչական եկեղեցու դեմ ծառացող ուժերին։

«Մեղու Հայաստանին» Հայկական հարցի լուծումը, արևմտահայության դրության բարեկարգումն ու հայկական ինքնավարության ստեղծումը կապում էր հիմնականում եվրոպական տերությունների հետ։ Դեռ 1878 թ. փետրվարի 4-ին, այսինքն՝ ռուս-թուրքական պատերազմի ավարտին, նա գրում էր. «Արևելյան քրիստոնեայք, թե հայք և թե այլք, իրանց վիճակի փոփոխությունն ու ազատությունը պետք է հուսան Եվրոպայի մեծ տերությանց մարդասիրությունից և պաշտպանությունից. իրանք իրանց ուժով գործ տեսնել անկարող են դեռևս։ Այս է մեր անձնական կարծիքը»[1]։

Պարբերականը կողմնորոշվում էր գերազանցապես դեպի Անգլիան։ Նա ուղղակի խաբվում էր բրիտանական զեկավարների կեղծ հայասիրական ելույթներից և չէր հասկանում, որ տերություններից ոչ մեկն այնպիսի քաղաքականություն չի վարում արևմտահայության հանդեպ, ինչպես Անգլիան։ 1880 թ. դարնանը, երբ բրիտանական աղատամիտները ընտրություններում հաղթելով պահպանողականներին անցան իշխանության գլուխ, պարբերականը ոգևորված բացականչում էր. «Այսուհետև ավելի ազդու կերպով կգարթի տաճկահայոց խնդիրը և մի վերջնական լուծում կատանա, որով այդ նահատակված ազգն և նորա հայրենիքը... մի խաղաղ և ապահով ապագա կունենան և համեմատ յուր բնակիչների ընդունակությանց կզարգանա քաղաքականության ասպարեզում։ Հուսանք միշտ և երբեք չվհատինք»[2]։

Թերթը միաժամանակ նշում էր, որ Անգլիան չի կարող իրագործել իր հայանպաստ առավելությունը, առանց եվրոպական մյուս տերությունների աջակցության։

Պարբերականը սին հույսեր էր տածում նաև այն մասին, որ Հայկական հարցի լուծմամբ շահագրգռված է նույնիսկ... Օսմանյան կառավարությունը։ Ամփոփելով իր պատրանքները, նա

1 «Մեղու Հայաստանի», 1878, փետրվարի 4, № 5։

2 Նույն տեղը, 1880, ապրիլի 30, № 31։

գրում էր. «Մի՞թե կարելի է կասկածել հայոց խնդրի զարթնելուն և արդյունավոր ելք ունենալու մասին, երբ այդ պահանջում է Տաճկաստանի շահը և մեծ տերությանց քաղաքականությունը»[1]։

Պարբերականը գտնում էր, որ հայկական ինքնավարության ստեղծումը օգտավետ կլինի թե Թուրքիայի և թե Ռուսաստանի համար։ Այն կծառայի Թուրքիայի համար որպես պատնեշ Ռուսաստանի առաջխաղացման դեմ, իսկ Ռուսաստանի համար ապահովություն կստեղծի նրա հարավում[2]։

Հրապարակելով, որ Խրիմյանի պատվիրակությունը ընդունելության է արժանանում եվրոպական տերությունների կողմից, 1878 թ. Բեռլինի կոնգրեսի օրերին թերթը վճռականապես հայտարարում էր, որ հարցը վճռված է «ի նպաստ տաճկահայերի», քանի որ տերությունները սիրով ընդունել են հայ պատվիրակությանը և տվել հաստատ խոստումներ։ «Մենք չենք կարող,— գրում էր թերթն իր առաջնորդողներից մեկում,— և չունենք իրավունք կասկածելու որևէ մեծ տերության խարդախության և խաբեբայության մեջ։ Մեր կողմից անպաղնվություն և անվստահություն կլիներ կարծել, թե Գերմանիո թագաժառանգի խոստումը, Ռուսաստանի արքունիքի, Անգլիայի և այլ տերությանց խոստումները լոկ խոսքեր են և նոքա կարող են չհամակրել և չկարեկցել բազմաշարշար հայ ազգին, լսել նորա հինգհարյուրամյա հառաչանաց ձայները, որոնք առաջին անգամ հասնում են նոցա ականջներին։ Մի՞թե կարելի է մրթքով անգամ անցնել, որ հզոր մեծ տերությունք կարող են խաբել թշվառ և անզոր մի ազգի, որ կարոտ է պաշտպանության. և ինչու պետք է խաբե. ո՞ւստի է երկյուղը։ Մենք ոչ միայն համոզված ենք, թե հայոց խնդիրը ընդունված է, այլև արած են նորա մեջ գուցե և փոփոխություններ ի նպաստ տաճկահայերի, որովհետև սոցա պահանջը շատ համեստ էր և չափավոր»[3]։

Սակայն իմանալով Բեռլինի կոնգրեսի ոչ հայանպաստ արդյունքների մասին, պարբերականը չէր ուզում հուսաթաթար լինել և հայտարարելով, թե արևմտահայության վարչությունը դեռ չի ստացել իր վերջնական կերպարանքը, կոչ էր անում արևմտահայերին՝ աշխատել արդյունավետ, որ կարողանանք ձեռք

1 «Մեղու Հայաստանի», 1881, ապրիլի 18, № 63։
2 Տե՛ս նույն տեղը, 1878, ապրիլի 15, № 15։
3 Նույն տեղը, հուլիսի 8, № 26։

բերել որքան հնարավոր է լայն իրավունքներ։ Նա փորձում էր նույնիսկ հավաստել, որ վեհաժողովը Հայկական հարցի վերջնական ձևակերպումն ու իրագործումը թողել է հենց իրենց՝ հայերին, ուստի նրանք պետք է մշակեն իրենց տեսակետը և ներկայացնեն Բ. Դռան ու տերությունների հաստատմանը։ Ապա հորդորում էր հայերին՝ չարտագաղթել հայրենիքից, իսկ տարագրվածներին առաջարկում էր վերադառնալ հայրենիք, զորացնել ազգությունը։ Թող բոլորը գործեն համատեղ։ Դրանում է ազգի ապագան[1]։

Պարբերականը հավատ էր ներշնչում, թե Եվրոպայի շնորհիվ արևմտահայերի գործը բնական ընթացքով առաջ է գնում և, անկասկած, կհասնի իր նպատակին։ «Թող մենք չտեսնենք, այլ մեր որդիքը կամ թոռները տեսնեն տաճկահայի ազատությունը, վնաս չունի, միայն, որ այդ ամենը լինի բնական ընթացքով, որո դեմ ոչինչ չի կարող դիմանալ, մեզ հարկ չկա իսկ անելու»[2]։

«Մեղու Հայաստանին» դատապարտում էր այն գործիչներին, որոնք արևմտահայերին հակակառավարական ապստամբության կոչեր էին հղում։ Թերթը դա համարում էր դոնքիշոտություն, հավաստելով, որ այդ քայլը ոչ միայն օգուտ չի բերի հայերին, այլև մեծագույն վնաս կպատճառի։

Պարբերականի կարծիքով, հայը չպետք է հետևի հույնին և ըմբոստանա, քանզի «ինչից հույնին կարող է օգուտ առաջանալ, հային միայն վնաս կարող է հասնել»[3]։ Թերթը հլնում էր այն բանից, որ արևմտահայերի ու հույների կացությունը, դիրքը բոլորովին տարբեր են։ Եթե «հույնը ունի յուր ծանրության կենտրոնը՝ ազատ Հունաստանը, ատ ուր նա ձգտում է և ուր նորա ապաստարանն է», ապա հայը չունի այդպիսի կենտրոն[4]։

«Մեղու Հայաստանին» նշում էր, որ արևմտահայերի բախտն այժմ պետք է իրենց ձեռքը վերցնեն Կ. Պոլսի պատրիարքարանն ու Ազգային ժողովը։ Նրանք պետք է ծրագիր կազմեն, ներկայացնեն սուլթանի հաստատմանը, որից հետո միայն հանձնեին տերությունների դեսպանաժողովի անդամներին։ Կա-

1 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1878, օգոստոսի 19, № 32, օգոստոսի 26, № 33։
2 Նույն տեղը, հոկտեմբերի 28, № 42։
3 Տե՛ս նույն տեղը, № 3։
4 Տե՛ս նույն տեղը։

ռավարությունը դրանից կհանգի այն եզրակացության, որ հայերը գործում են օրինականության սահմաններում, հաշվի կառնի նրանց պահանջները և կբավարարի։ Թերթը գտնում էր, որ նման դեպքերում հայանպաստ դիրք կբռնեն նաև սուլթանական տերությունները, մանավանդ, երբ նրանք իրենց «գլխավոր նպատակ արել են Տաճկաստանի քրիստոնեից ազատության հարցը»[1]։ Այնուհետև նա եզրափակում էր. «Ներկայումս, ըստ մեր կարծեաց, այս է տաճկահայոց բռնելիք ընթացքն և այլ ճանապարհ չկա նրանց իրանց վիճակն ապագայում բարելավելու համար»[2]։

Սակայն «Մեղու Հայաստանին», երբ իմացավ, որ պատրիարքարանը նախատեսում է բարելավել արևմտահայության վիճակը Թուրքական վարչակարգի միջոցով, հանդես եկավ այդ մտադրության դեմ։ Նրա վկայությամբ, սուլթանական վարչակարգը արևմտահայերի դրությունը բարելավելու է Թուրք ու քուրդ փաշաների, աղաների, ցեղապետերի ու բեգերի միջոցով, որոնք իրենց դաստիարակությամբ, սովորությամբ, արտոնությամբ և կրոնական մոլեռանդությամբ ոչ միայն չեն ընդունում, այլև ուղղակի մերժում են «հավասարություն սուրկի ու տիրոջի մեջ, ուղղափառի և դյավուրի մեջ, հարկատվի և հարկահանի մեջ... տեր եղողի և իրավազուրկի մեջ»[3]։

Պարբերականը հարցի լուծումը փոքր-ինչ այլ կերպ էր պատկերացնում։ «Մեր կարծիքով,— գրում էր այն,— Տաճկահայաստանի վարչությունը բոլորովին բաժանելու է ընդհանուր Տաճկաստանի վարչությունից և նրան ինքնավարության կերպարանք տալու է, ընդ հովանավորությամբ պաշտպանք քրիստոնյա տերության, մանավանդ սահմանակից Ռուսաստանի, որո զորաց մի մասը, ինչպես և Տաճկաց, կարող էին մնալ այնտեղ մինչև տեղական պահապան զորք կկազմվեր և վարչությունը կկազմակերպվեր հայ տարրից»[4]։

Թերթն ապա շարունակում էր, որ Արևմտյան Հայաստանը բաժանվելով Թուրքիայից վարչապես և ունենալով իր վարչությունն ու ոստիկանությունը, կհամարվի, սակայն, Թուրքիայի

1 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1878, № 5։
2 Նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, մարտի 11, № 10։
4 Նույն տեղը։

մի մասը և իբրև այդպիսին հարկ կվճարի նրան, թեև ավելի, քան առաջ, որովհետև հայերը, ունենալով այժմ անձի ու գույքի ապահովություն, կաշխատեն ավելի եռանդով և կստանան ավելի եկամուտներ։ Այդ կերպ հայերը կարող են իրենց հետևից տանել օսմանյան տերության մնացած նահանգներն ու ժողովուրդներին և ծառայել որպես Ասիայի կիսաբարբարոս ցեղերի քաղաքակրթության կենտրոն։ «Այլ ելք մենք չենք տեսնում»[1]։

1881 թ. պարբերականը հանդես եկավ ավելի ընդարձակ ծրագրով՝ արևմտահայության դրության վերակառուցման ու բարելավման մասին։ Այն գտնում էր, որ Բ. Դուռը, ելնելով հայերի բացառիկ կացությունից, պետք է հաստատի Արևմտյան Հայաստանում անձի և գույքի ապահովություն, խոսքի, խղճի, կրոնի, դաստիարակության, կրթության ու մամուլի ազատություն և այնպիսի ինքնավարություն, ուր ամեն ինչ լինի «հայերի համար, հայերի ձեռքով»[2], այսինքն՝ հայերը իրենք պետք է ղեկավարեն իրենց երկիրը, ունենալով ազգային ժանդարմերիա ու ոստիկանություն։ Նրանց լեզվով պետք է հրատարակվեն օրենքները և կատարվեն դատավարությունները։

Ծրագրում նշվում էր, որ հայկական ինքնավարության գլուխ պետք է կանգնի ընդհանուր նահանգապետը։ Դրականորեն բնութագրելով Ն. Վարժապետյանի կողմից առաջադրված նուբար փաշային, Թերթը, սակայն, նրա նշանակումը այդ պաշտոնում գտնում էր աննպատակահարմար։ Եվ դա այն պատճառով, որ Նուբար փաշան, լինելով ստրկացված ժողովրդի ներկայացուցիչ և երկար տարիներ ծառայելով Բ. Դռանը, չի կարող ինքնուրույնություն կամ անկախություն ցույց տալ նրա հետ ունեցած հարաբերություններում։ Պարբերականը գտնում էր, որ ավելի լավ կլինի, եթե «ընդհանուր նահանգապետ նշանակվեր մի եվրոպացի, անկախ բնավորության տեր անձ և միևնույն ժամանակ դիվանագետ, որին կարող էին խորհրդատու նշանակել կամ ինքը կնշանակեր հասկացող և բանիմաց հայկ-

1 «Մեղու Հայաստանի», 1878, մարտի 11, № 10։
2 Տե՛ս նույն տեղը, 1881, սեպտեմբերի 22, № 191։

րից»[1]։ Համենայն դեպս Թերթը դեմ չէր, որ ընդհանուր նահանգապետ նշանակվեր նաև Նուբար փաշան, մանավանդ, եթե նրա թեկնածությունը պաշտպանի Անգլիան։

«Մեղու Հայաստանին» չէր անտեսում նաև Արևմտյան Հայաստանում բնակվող այլ ազգությունների շահերը, սակայն գտնում էր, որ ստեղծվելիք ինքնավար Հայաստանում գեկավարությունը պետք է տալ հայերին, եթե անգամ քրդերը կըրկնակի ու ավելի շատ լինեն, որովհետև հայերը զարգացած են, կարող են առաջատար դեր խաղալ, իսկ քրդերը հետամնաց են, կարող են կաշկանդել երկրի զարգացումը, վերածել այն ավարի ու ավերի, ճնշման ու թալանի։ Եվրոպան չպետք է առարկի դրա դեմ[2]։

Թերթը գտնում էր, որ եթե ապագա Հայաստանում քրդերը առաջադիմեն, լուսավորվեն, քաղաքակրթվեն և զարգացնեն իրենց բարեկրթությունը, կարող են իրենց ընդունակություններին համեմատ մասնակցել պետական կյանքին, «վայելել այն ամեն բարիքը, որը մի կանոնավոր և խաղաղ զարգացող երկիր կարող է շնորհել յուր բնակիչներին»[3]։ Ինքնավար Հայաստանի բարգավաճմանը պետք է մասնակցեն նրա բոլոր բնակիչները, քանզի «հայրենիքը պատկանում է նրա բոլոր զավակներին»[4]։

Անդրադառնալով հողային հարցին, «Մեղու Հայաստանին» բաժանում էր «Մասիսի» հայացքները։ Նա արտատպում և պրոպագանդում էր «Մասիսի» թղթակից Պ. Ք.-ի հոդվածաշարը, ուր հեղինակը, ինչպես արդեն ասվեց, խնդիր էր դնում, որ հայ գյուղացին պետք է հող ունենա և պահպանի այն իբրև հայրենական թանկագին ժառանգություն, իսկ հայ դրամատերերը պետք է իրենց միջոցներով հող գնեն, մատչելի գներով այն վերավաճառեն չքավորներին կամ օգտագործեն կապիտալիստական եղանակներով[5]։

Համերաշխվելով Պ. Ք.-ի մտքերին, «Մեղու Հայաստանին» ավելացնում էր, որ այն երկիրն է հեռու ներքին ու արտաքին

1 «Մեղու Հայաստանի», 1881, սեպտեմբերի 23, № 192։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, նոյեմբերի 10, № 233։
5 Տե՛ս նույն տեղը, 1880, փետրվարի 16, № 12։

վտանգներից, որը շատ մանր հողատեր-սեփականատերեր ունի։ «Այն ազգն է ամուր կապված յուր երկրի հետ, որու անդամներից շատերը հողատեր են»։ Մանր հողատիրությունը նպաստում է երկրի տնտեսական զարգացմանը, իսկ «անհատին տալիս է անկախ և ինքնուրույն վիճակ»։ Ապա նշում էր. «... որքան հայ հողատերեր շատ լինեն բուն Հայաստանում, այնքան հայ ազգի պահպանությունը Հայաստանում ավելի ապահովված է, որովհետև սա և արգելք կլինի գաղթականության»[1]։

«Մեղու Հայաստանին» այնուհետև գտնում էր, որ հայ դրամատերերը պետք է հող ձեռք բերեն և կազմակերպեն ձեռնարկուական տնտեսություն։ Դրանով նրանք վերջ կտան արտագաղթին և սկիզբ կդնեն տարագիրների ներգաղթին։ Ազգային հարուստները միայն այդ կերպ կարող են արտահայտել իրենց սերն ու նվիրվածությունը հայրենիքին։ «Ուրեմն թող մեր հարուստները,— եզրափակում էր Թերթը,— մտածեն այժմ իսկ այնտեղ որքան կարելի է հողեր ձեռք բերելու, մանավանդ որ ժամանակն էլ հարմար է այժմ և ձեռնտու հող գնելու համար»[2]։

Հիմնականում կիսելով «Մասիսի» թղթակցի հայացքները, «Մեղու Հայաստանին» շրջանցում էր, սակայն, նրա կարևոր դրույթներից մեկը՝ հողային հարցը, նաև զինված միջոցներով կամ կռվով լուծելու խնդիրը։ Դա պարզապես խորթ էր պարբերականի ոգուն։ Այդուհանդերձ, երկու Թերթերն էլ կամենում էին հողային հարցը լուծել լիբերալ եղանակներով, այսինքն՝ անձեռնմխելի թողնելով աղայական-կալվածատիրական ընդարձակ տիրույթները, գյուղացիներին հողակտորների տեր դարձնել գնումների ճանապարհով կամ լբռնագրավելով այդ տիրույթները, Արևմտյան Հայաստանում ստեղծել կապիտալիստական երկրագործական տնտեսություններ։

Հատկանշական է, որ «Մեղու Հայաստանին» հնարավոր էր համարում կապիտալիստական խոշոր ու գյուղացիական մանր տնտեսությունների ստեղծումն Արևմտյան Հայաստանում անդամ պնձի ու գույքի անապահովության պայմաններում։ Պարբերականը թույլեր ու ծույլեր էր համարում նրանց, ովքեր պատճառաբանելով երկրում գոյություն ունեցող անապահով

1 «Մեղու Հայաստանի», 1880, փետրվարի 27, № 15։
2 Նույն տեղը։

վիճակը, հրաժարվում էին կապիտալիստական ու անձնական ձեռնարկումներից։ Թերթը հայտարարում էր, որ գողություններ ու ավազակություններ կան ու կատարվում են բոլոր երկրներում։ Դրանցից չպետք է վախենալ։ Ցանկացողները «թող գործեն, եթե ունեն այրական պատիվ և հայության զգացմունք»[1]։

1882 թ. «Մեղու Հայաստանին» անդրադարձավ արտագաղթին և հայտնեց այն կարծիքը, թե Արևելյան Հայաստանից հայերը մեկնում են դատումների հարստություն դիզելու համար, իսկ Արևմտյան Հայաստանից՝ կյանքի ապահովության, ապրելու և աշխատելու պայմանների բացակայության պատճառներով։ Եթե պարբերականի առաջին թեզը սխալ էր, ապա երկրորդը, անշուշտ, ճիշտ էր։ Հոդվածագիր Ս. Սպանդարյանը գտնում էր, որ արևմտահայ գյուղացիության համար քիչ թե շատ բարեկարգ պայմաններ ստեղծելու և նրա արտագաղթը դադարեցնելու համար անհրաժեշտ է արդար բաշխել հարկերն ու տուրքերը և կանոնավորություն մտցնել նրանց հավաքման գործում, գյուղացուն իրրև սեփականություն տալ իր մշակած հողը, ստեղծել բարեխիղճ ու կազմակերպված տեղական վարչություն ու ոստիկանություն և բարեկարգել ճանապարհները։ Ապա նա եզրափակում էր, որ եթե այդ պահանջներից գոնե մի մասը չիրագործվի, Արևմտյան Հայաստանը «երբեք չի կարող տնտեսապես վերականգնել և քաղաքականապես առաջ գնալ, բարձրանալ»[2], երբեք չի կարելի այնտեղ հիմնել գործարաններ ու ֆաբրիկաներ և մրցել Եվրոպայի հետ։

Հոդվածագիրը գտնում էր, որ այդ միջոցառումներն ամենից առաջ պետք է նախաձեռնեն ու կենսագործեն ոչ թե Բ. Դուռը կամ Եվրոպան, ոչ թե ամեն մի հայ երկրագործ ու արհեստավոր, այլ «այն հայը, որ հայ մարդ է, որ հայության նվիրված է, որ հայ քաղաքացի է», որ կարող է իր ազգի համար «մեջք» լինել։ Նա կոչ էր անում՝ «պատրաստեցեք Հայաստանցի հայերին ինքնաճանաչության մեջ, պատրաստեցեք նրանց այնպես, որ նրանք «մեջք» ունենան, այդ ամենից ապահով ճանապարհն

1 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1878, սեպտեմբերի 9, № 35։
2 Տե՛ս նույն տեղը, 1882, հունիսի 25, № 66։

է Տաճկահայաստանի տնտեսական, բարոյական վերածնության»[1]։

Ինչ խոսք, այդ դատողություններն ու առաջարկությունները որքան էլ լավ էին, բայց թուրքական պայմաններում չէին կարող իրագործվել։

Աստիճանաբար պարբերականը համոզվում էր, որ արևմտահայերի դրության բարելավման համար գործնական որևէ քայլ չեն կատարում ո՛չ տերությունները, ո՛չ թուրքական կառավարությունը և ո՛չ էլ ազգային վերնաշերտերը։ 1882 թ. «Մեղու Հայաստանին» արդեն հարկադրված էր արձանագրել այդ փաստերը և գոնորեն հայտարարել. «Ողորմություն խնդրելով, հայցելով ստրկության լուծի տակ գտնվող ոչ մեկ ժողովուրդ յուր իրավունքները չէր ստացել, յուր նպատակին չէ հասել։ Իրավունքներ չեն ստանում, իրավունքներ ձեռք են բերում»[2]։ Նա գտնում էր, որ հայն իր ազատագրման հույսը չպետք է կապի խարդախ Եվրոպայի, դավաճան ներսես պատրիարքի, սրիկաներից բաղկացած Ազգային ժողովի, ծախված մամուլի աշխատակիցների, իրենց փողերն ավազակությամբ ձեռք բերած հայ հարուստների, տիրացուներից կազմված մտավորականների, շողոքորթ Անգլիայի («ի սեր աստծո, հեռու դրանից») խարուսիկ հայկական ինքնավարության, փտած եկեղեցու հետ[3]։

Թվում է, այս ամենից հետո թերթը պետք է զենքի կոչեր ժողովրդին։ Բայց ոչ։ Նա գտնում էր, որ տաճկահայերը պետք է իրենց բախտը վճռեն իրենց ղարգացմամբ, իրենց առաջընթացով, իրենց համբերատարությամբ, սպասեն, որ եվրոպական տերությունների քաղաքականությունն իրենց համար բարենպաստ հնարավորություններ ստեղծի, և իրենք այնքան խելոք ու ձեռներեց գտնվեն, որ կարողանան օգտվել հանդամանքներից[4]։ Այլ խոսքով, պարբերականը կրկնում էր չորս տարի առաջ մշակած իր այն թեզը, որ արևմտահայերը իրենց հարցերը պետք է լուծեն ոչ թե ապստամբությամբ, այլ խաղաղ ճանապարհներով... «Գիրք և դպրոց— ահա տաճկահայերի զենքը։ Դպրոցը պետք է որոշե նոցա ապագան և ոչ զենքը»[5]։

1 «Մեղու Հայաստանի», 1882, հունիսի 25, № 66։
2 Նույն տեղը, հունվարի 24, № 5։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, դեկտեմբերի 3, № 132։
5 Նույն տեղը, 1878, սեպտեմբերի 9, № 35։

Ըստ էության, թերթը հանդես էր գալիս հայ արմատական, հեղափոխական-դեմոկրատական թևի դեմ, որն այդ օրերին պահանջում էր թողնել աղաչանքն ու խնդրանքը, հետևել եվրոպական ժողովուրդների օրինակին և ազգային խնդիրները լուծել զենքի ուժով։

1882 թվականից սկսած «Մեղու Հայաստանիի» էջերում գրեթե չեն հրապարակվում արևմտահայության ազատագրմանը վերաբերող հոդվածներ, իսկ 1883 թվականից հետո՝ համարյա չեն երևում։ Ըստ երևույթին, դա պայմանավորված էր գերազանցապես ցարիզմի քաղաքականությամբ, որն արդեն արգելում էր նման նյութերի հրապարակումը։ 1886 թ. պարբերականի լույս ընծայումը դադարում է։

Արևմտահայության ազատագրության հարցերում ազգային-պահպանողական դիրքերում էին կանգնած նաև Թիֆլիսում հրատարակվող «Փորձ» ու «Արձագանք» պարբերականները, որոնց տեսակետներն հանգամանորեն վերլուծված են Մ. Հ. Մխիթարյանի աշխատության մեջ[1]։ Ուստի հարկ չկա այստեղ կանգ առնել դրանց վրա։

XX դ. սկզբին ազգային-պահպանողական հոսանքը կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով կազմալուծվեց և հեռացավ հայ հասարակական-քաղաքական ասպարեզից։

Բուրժուական գաղափարախոսներ

Հայ բուրժուական գաղափարախոսները արևմտահայ ազատագրության հարցում հանդես էին գալիս լիբերալ, երբեմն էլ հեղափոխական տեսանկյուններից։

Լիբերալները, ինչպես հայտնի է, ձգտում էին միապետության առկայության պայմաններում, առանց մեծ ցնցումների, բարենորոգություններ մտցնել արևմտահայերի դրության մեջ, դիրքեր նվաճել նրանց հասարակական-քաղաքական կյանքում և առաջ մղել ազգային մշակույթը։ Սակայն, հավատ չունենալով թուրքական բռնապետության հանդեպ, նրանք կա-

1 Տե՛ս Մ. Հ. Մխիթարյան, XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Եր., 1976։

մենում էին իրենց երազանքներն իրագործել մեծ պետությունների միջամտությամբ։

Հեղափոխականները գտնում էին, որ արևմտահայերի դրությունը հնարավոր է բարելավել սուլթանական միապետության տապալման և հանրապետական կարգերի հաստատման ճանապարհով, ընդ որում, ամենք ուզում էին հասնել այդ բանին ազգային, մյուսները՝ համաօսմանական հեղափոխության միջոցով։ Բայց նրանց զգալի մասի տեսակետը համընկնում էր լիբերալների դիրքին, քանի որ իրենց նպատակների իրագործումը նույնպես կապում էին մեծ տերությունների արտաքին քաղաքականության հետ։

Հատկանշական է, որ թե՛ լիբերալները, և թե՛ հեղափոխականները հռչակում էին իրենց դասակարգերից վեր կանգնած, համազգային շահերի արտահայտիչներ ու պաշտպաններ։ Դա բնորոշ էր ինչպես բոլոր ժողովուրդներին, այնպես էլ հայ բուրժուական գաղափարախոսներին։ Վ. Ի. Լենինը գրել է. «Բուրժուական դեմոկրատը... իր բոլոր քաղաքական պահանջներն առաջադրում է վերացականորեն, հախուռն, «անպայմանորեն», «ամբողջ ժողովրդի» շահերի տեսակետից կամ նույնիսկ հավիտենական բարոյական սկզբունքի՝ բացարձակի տեսակետից»[1]։ Իրականում ինչպես լիբերալ, այնպես էլ հեղափոխական-բուրժուական գաղափարախոսներն արտահայտում ու պաշտպանում էին նոր բարձրացող ու զարգացող առևտրաարդյունաբերական բուրժուազիայի, բուրժուականացող կալվածատիրության և նրանց հետ կապված մտավորականության շահերը։ Անշուշտ, բուրժուական գաղափարախոսների հայացքները բովանդակում էին նաև դեմոկրատական տարրեր, բայց գերիշխողը բուրժուականն էին։

Արևելահայ լիբերալիզմի պարագլուխ Գր. Արծրունին, որ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին և դրանից անմիջապես հետո խնդիր էր դնում, թե արևմտահայության հարցը պետք է լուծել զինված ապստամբության միջոցով, թուրքական բռնապետության դեմ ծավալած ահեղ պայքարի ճանապարհով, պատերազմից հետո ցարական կառավարության ռեակցիոն քաղաքականության ճնշման տակ հրաժարվեց այդ դրույթներից և սկսեց պրոպագանդել լիբերալ գաղափարներ։

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 7, էջ 296—297։

Նրա «Մշակը»[1] Հայկական հարցի լուծումն արդեն կապում էր մեծ տերությունների քաղաքականության հետ։ 1889 թ. այն նշում էր, որ Եվրոպան լուծեց Ջեհնոգորիայի հարցը, իսկ այժմ պատրաստվում է վճռել նաև հունաց ու հայոց խնդիրները։ Ենթադրում էր, որ հայոց խնդիրը կլուծի հույներից հետո. «Բայց երբ կլինի դա, մի քանի ամսից, կամ մի քանի տարուց հետո,— այդ դժվար է նախագուշակել»[2]։ Թերքը գտնում էր, որ մինչ այդ հայ մամուլը պետք է փաստեր հրապարակի և հող նախապատրաստի հարցի դյուրին լուծման համար։ Անհրաժեշտ է ներկայացնել արևմտահայերի կարիքները, պարզել Արևմտյան Հայաստանի սահմանները, բնութագրել հայերի հարևաններին, նրանց ոգին, որոշել թվաքանակը և այլն[3]։

Ջիլ ուշ «Մշակը» գտնում էր, որ երբ Եվրոպան վճռի Հունաստանի խնդիրը, հայերը պետք է ձգտեն, որ նա հույների հետ միասին լուծի նաև իրենց հարցը։ Եթե նրանք չհասնեն դրան, «կարող են համոզված լինել, որ իրենց խնդիրը կբնի հավիտենական քնով և Թուրքիան այնուհետև ամեն ջանք գործ կդնի Թուրքաց Հայաստանի հայերին երկրի երեսից կատարելապես ջնջելու»[4]։

«Մշակը» Հայկական հարցի լուծման հնարավոր տարբերակը համարում էր ինքնավարությունը և ի տարբերություն «Մեղու Հայաստանի», որը պահանջում էր ինքնավարություն հայերի դերիշխանությամբ, նշում էր, որ Արևմտյան Հայաստանին «տրվելիք ինքնավարությունը բոլորին էլ անխտիր կերպով անհրաժեշտ է, այդ նահանգի բոլոր բնակիչներն էլ միևնույն իրավունքը ունեն այդ ինքնավարության վրա, բոլոր հայաստանցիների էլ, թե քրիստոնյաների և թե մահմեդականների շահերը այդ հարցի մեջ ընդհանուր են»[5]։ «Մշակին» կարծիքով, հայը պիտի «աշխատի համերաշխ լինել ոչ թե միայն այլակրոն հայերի հետ, բայց և Հայաստանի մեջ բնակվող այլ ցեղերի և ազգությունների հետ»[6]։ Նա պետք է գիտակցի, որ իր հարևանները ևս ճնշվում են տիրապետող վարչակարգից, որ «եթե հայաստանցի հային անհրաժեշտ է ինքնավարություն, այդ ինքնավարությունը նույնքան անհրաժեշտ է և հայաստանցի մյուս ազգությունների համար»[1]։

Պարբերականը գտնում էր, որ արևմտահայերը պետք է կազմակերպեն ինչպես երկրի բոլոր ժողովուրդների համերաշխությունը, այնպես էլ նրանց համատեղ պայքարը օսմանյան բռնապետության դեմ։ Նրանք պետք է համոզեն իրենց հարևաններին՝ «եկեք միանանք... բոլորս էլ միակերպ տանջվում ենք, համերաշխ լինենք, միասին գործենք, խնդիրը տանք, աղերսագիր միասին ստորագրենք, զանգատվենք, մենք մի երկրի մարդիկ ենք, մի հաց ենք ուտում, մի օդ ենք ծծում, մի ... ենք ծնվում, ապրում ու մեռնում, մի երկրի որդիք ենք, բոլորս էլ եղբայրներ ենք»[2]։ Թերքն այնուհետև նշում էր, որ միայն այդպես պետք է սկսել գործը, քանզի հայը «... այդ ճանապարհով ավելի շուտ կվճռել տա հայոց խնդիրը, քան թե զանազան դիվանագիտական ճանապարհով»[3]։

«Մշակի» քարոզած այդ գաղափարները արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը բարելավելու խնդրում ունեին դեմոկրատական բովանդակություն, քանի որ դրանց իրականացումը կբարելավեր թե հայերի, և թե նրանց հարևանների դրությունը, կնպաստեր բոլոր ժողովուրդների զարգացմանը։

Հայկական հարցի լուծումը կապելով եվրոպական տերությունների հետ, «Մշակը», սակայն, միաժամանակ քննադատում էր նրանց գաղութային քաղաքականությունը։ Նա մատնանշում էր, որ այդ տերությունները «պահանջում են Թուրքիայից ինքնավարություն կամ ազատություն տալ թուրքահպատակ այս կամ այն ազգին, իսկ իրենք հալածում և ճնշում են իրանց հպատակ ազգերին»[4]։

Որպեսզի լուսավորված եվրոպան ազատագրի օսմանյան տիրապետության տակ տառապող ժողովուրդներին, պետք է նախապես բարոյական հեղինակություն ունենա Թուրքիայի ա-

1 «Մշակից» բերված քաղվածքները մինչև 1892 թ. պահպանում են Գր. Արծրունուն։

2 «Մշակ», 1881, հունվարի 15 (№ 5)։

3 Տե՛ս նույն տեղը։

4 Տե՛ս նույն տեղը, փետրվարի 18 (№ 23)։

5 Տե՛ս նույն տեղը, փետրվարի 6 (№ 31)։

6 Տե՛ս նույն տեղը, փետրվարի 25 (№ 34)։

1 Տե՛ս «Մշակ», 1881, փետրվարի 25 (№ 34)։

2 Նույն տեղը։

3 Տե՛ս նույն տեղը։

4 Տե՛ս նույն տեղը, մարտի 5 (№ 40)։

քում։ Սակայն նա «այնտեղ է հասցրել իրան, որ այլևս ոչինչ բարոյական ներգործություն չունի Թուրքիայի պես մի փտած պետության վրա և սա հանդգնաբար կարող է Եվրոպային պատասխանել. «Դուք ինքներդ էլ ճնշում եք ձեր հպատակ ազգերին»»[1]։ Առաջադեմ Եվրոպան որպեսզի կարողանա ներգործել հետամնաց Ասիայի վրա, պետք է բարոյական հեղափոխություն կատարի և վերանորոգի իրեն, եզրափակում էր լրագիրը։

«Մշակը» խարազանում էր տերությունների այն խարդավանքները, երբ հայկական բարենորոգումները չկենսագործելու նպատակով հայտարարում էին, թե հայերը Արևմտյան Հայաստանում, իբր, սակավաթիվ են։ Թերթի կարծիքով, անգամ այդ դեպքում էլ նրանք պետք է հայերի վիճակը բարելավեն, տան ինքնավարություն, քանզի Թուրքիան արդեն ապացուցել է, որ ինքն ընդունակ չէ առաջադիմության ու զարգացման, դատապարտել է իր իշխանության տակ ընկած ժողովուրդներին հետամնացության ու թշվառության, բնաջնջում է հայերին[2]։ Պարբերականը գտնում էր, որ Եվրոպան ինքն էլ կշահի, եթե հայերին ինքնավարություն տա, բարձրացնի նրանց դերը երկրի հասարակական, քաղաքական ու տնտեսական կյանքում, որովհետև հայերը իրենց ընդունակությունների ու ձեռներեցության շնորհիվ կարող են «ասիական այլ ցեղերի մեջ ներկայացուցիչ լինել եվրոպական լուսավորության, եվրոպացի ու Ասիայի մեջ միջնորդ լինել ընդհանուր մարդկության քաղաքակրթության»[3]։

«Մշակը» մերկացնում էր հատկապես Անգլիայի փարիսեցիական, հակահայկական քաղաքականությունը, ցույց էր տալիս, որ նրա ղեկավարների հայասիրական հայտարարությունները ու կարեկցանքները կեղծ են, անարժան ուշադրության։ Հրապարակելով այն լուրը, թե իբր բրիտանական կառավարությունը պահանջել է Բ. Դռնից՝ «անհապաղ մտցնի Բեռլինի դաշնագրով պահանջված վերանորոգությունները թուրքաց Հայաստանում», թերթը հեգնում էր. «Արդյոք կարելի՞ է հավատալ

1 Տե՛ս «Մշակ», 1881, մարտի 5 (№ 10)։
2 Տե՛ս նույն տեղը, նոյեմբերի 20 (№ 216)։
3 Տե՛ս նույն տեղը, հոկտեմբերի 30 (№ 202)։

անգլիական պահպանողական կուսակցության անկեղծությանը»[1]։

Անդրադառնալով հողային հարցին, լրագիրը ցույց էր տալիս, որ օսմանյան կառավարության վարած հայահալած քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում հայ գյուղացիների հողերը հափշտակվում են մահմեդականների, առավելապես քուրդ ցեղապետերի ու աղանների կողմից։ Այդ քաղաքականությունը «մեծ վտանգ է սպառնում հայ ժողովրդին Թուրքահայաստանում»[2]։

«Մշակը» գտնում էր, որ Արևմտյան Հայաստանում հողային հարցը «չէ կարող լուծվել հարստահարված գյուղացիների միմիայն հասարակ պաշտպանությամբ՝ բարվոքված պոլիցիայի կամ ժանդարմերիայի հաստատման միջնորդությամբ, այլ պետք է լուծվի արմատական ներքին վերանորոգություններով»[3]։ Բայց, դժբախտաբար, չէր բացատրում, թե ինչ էր հասկանում արմատական լուծում կամ վերանորոգում ասելով։

«Մշակը» խստորեն քննադատում էր հայ հոգևորականներին, ցույց էր տալիս, որ նրանք իրենց գաղափարներով ու հայացքներով կաշկանդում են ազգի զարգացումը, մասնատում նրա ուժերը։ Թերթը մերկացնում էր Կ. Պոլսի պատրիարքարանի ու «ազգային ջոջերի» վարքագիծը, որոնք, պահելով արևմտահայության ղեկավարությունն իրենց ձեռքերում, չէին արտահայտում նրանց շահերը։ Պարբերականը խնդիր էր դնում՝ մտցնել ազգային սահմանադրության մեջ փոփոխություն այն հաշվով, որպեսզի բարձրանա ժողովրդի դերը։ Այդ փոփոխությունը «ձեվական չպետք է լինի, փոփոխության նպատակը պետք է լինի ներքին՝ ինքնավարչական ուժը ժողովրդի ձեռքը տալը, զորացնել բուն Հայաստանի ժողովրդական երեսփոխանների թիվը և իրավունքները, և եթե ներկա հանգամանքներում դժվար է Հայաստանի հողի վրա հաստատել Կ. Պոլսի ազգային ժողովի իրավունքները, պետք է գեթ զորացնել այն ձայնը, որ կա սահմանադրության և ժողովրդի մեջ...»[4]։

«Մշակը» 1895 թ. Մայիսյան ռեֆորմների մասին հանդես

1 «Մշակ», 1886, օգոստոսի 21, № 93։
2 Տե՛ս նույն տեղը, հոկտեմբերի 16, № 116։
3 Տե՛ս նույն տեղը, 1889, սեպտեմբերի 5, № 100։
4 Նույն տեղը, 1886, հուլիսի 24, № 82։

եկավ իր որոշակի տեսակետով։ Նախագծի հրապարակումից մի քանի օր անց հայտարարեց, որ «ծրագիրը... այնքան սահմանափակ է և այնքան համեստ, որ թուրքաց սուլթանը երկու ձեռքով պետք է ստորագրե նրան...»[1]։ Իսկ երբ տերությունները (Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան) ներկայացրին այն սուլթանին՝ կենսագործման համար, պարբերականը հայտարարեց, որ առանց եվրոպական կոնտրոլի, առանց սուլթանից անկախ եվրոպական հսկողի այն չի իրագործվի։ Անհրաժեշտ է, ասվում էր թերթի առաջնորդողներից մեկում, որ «ռեֆորմների գործադրման վրա հսկողը, բարձրագույն քոմիսերը լինի ոչ թե սուլթանից կախված, այլ բոլորովին անկախ մի եվրոպացի, պատասխանատու միմիայն երեք պետությունների առաջ, միանդամայն ազատ թուրքաց հրամաններից»[2]։

«Մշակի» համոզմամբ, Հայոց հարցի լուծման համար անհրաժեշտ է, որ երեք տերություններին միանան նաև Իտալիան ու Ավստրո-Հունգարիան։ Պետությունները այդ խնդրում պետք է ցուցաբերեն համերաշխություն ու միասնություն և թույլ չտան, որ Թուրքիան օգտվի նրանց հակասություններից։ Նրանք պետք է իրենց ձեռքը վերցնեն բարենորոգումների կենսագործման հարցը և առաջ տանեն, մի կողմ թողնելով սուլթանական իշխանություններին, փաշաներին ու մոլլաներին։ Նրանք պետք է ռազմանավեր մտցնեն Կ. Պոլսի ջրերը և սպառնան, որ կոմբակոծեն կայսրության մայրաքաղաքը, եթե հայկական բարենորոգումները չկենսագործվեն։ «Թուրքը միայն ուժի, զենքի, թնդանոթի առաջ կարող է խոնարհվել։ Ուրիշ միջոց չկա»[3]։

Բայց տեսնելով, որ հայկական բարենորոգումների հարցը վերստին անուշադրության է մատնվում, «Մշակը» հայտարարում էր, որ հայերը պահանջում են ոչ թե անկախություն կամ թագավորություն, այլ կյանքի, պատվի և գույքի ապահովություն։ «Տվեք այդ երեք բանը, և հայոց հարցը ինքն իրան կլուծվի»[4]։ Պարբերականը, այդպիսով, նահանջում էր անգամ հայկական ինքնավարության գաղափարից և սահմանափակվում շատ համեստ պահանջներով։

1 «Մշակ», 1895, մայիսի 16, (№ 55)։
2 Նույն տեղը, մայիսի 18 (№ 56)։
3 Նույն տեղը, օգոստոսի 5, (№ 88)։
4 Նույն տեղը, օգոստոսի 8 (№ 89)։

1890-ական թվականների զանգվածային կոտորածների օրերին մի խումբ լիբերալ գործիչներ՝ Ա. Արասխանյանցը, Ն. Յաուրյանը, Հ. Առաքելյանը, Մ. Հովհաննիսյանը, Հ. Թադևոսյանը, Լ. Մելիքյանը, Վ. Արծրունին և ուրիշներ, նամակ գրեցին կաթողիկոսին, խնդրելով նրա միջամտությունը Եվրոպայի օգնությամբ հայկական ջարդերը կանխելու համար։ «Մեր համառոտ կարծիքն է,— գրում էին նրանք,— որ քաղաքակրթված քրիստոնյա Եվրոպան ավելի ուշադիր կլիներ Հայաստանի խղճալի դրության, օգնության ձեռք կմեկներ բազմաչարչար քրիստոնյա ժողովրդին», որ կաթողիկոսը լսելի դարձներ նրան «այդ թշվառ աշխարհի լացի և ողբի ձայները, պատկերացներ անլուր անիրավությունների և կոտորածների սրտակտոր տեսարանը, բախեր Ռուսիայի մեծազոր կայսեր և եվրոպական պետությանց դռները և արդարություն և կարեկցություն հայցեր Հայաստանի ընդունակ, աշխատասեր, բայց թշվառ ժողովրդի վրա»[1]։

1890-ական թվականների վերջերին և 1900-ական թվականների սկզբներին, երբ ցարական կառավարությունը արգելեց դրել կամ խոսել Հայկական հարցի և արևմտահայ ազգային ազատագրական շարժումների մասին, «Մշակը» հարմարվեց իրավիճակին և սկսեց հրապարակել ռուսական, արևմտաեվրոպական ու թուրքական պարբերականների այն տողերը, որոնք Անդրանիկին ու նրա զինակիցներին անվանում էին ավազակներ և բանն այնպես էին ներկայացնում, որ իբր նրանք կոտորում են թուրք ու քուրդ գյուղացիներին, իսկ թուրքական իշխանությունները, հալածելով ու ոչնչացնելով դրանց, օգտակար, մարդասիրական գործ են կատարում[2]։

Պարբերականը քննադատում էր դաշնակցության վարքագիծը, նշելով, որ «գրեթե ամեն տեղ դաշնակցականները անձնական խլրտումներ են առաջացնում, հասարակական հանդիստը ամեն տեղ վրդովում այն միամիտ, նույնիսկ մեծամիտ հավակնությամբ, թե իբր հասարակությունը «հեղափոխականացնում» են»[3]։

1 ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 299, թ. 4։
2 Տե՛ս «Մշակ», 1901, դեկտեմբերի 19 (№ 281), 1904, ապրիլի 16 (№ 76)։
3 Նույն տեղը, 1906, հոկտեմբերի 8 (№ 219)։

Մերժելով արևմտահայերի ազատագրական ելույթները, «Մշակը» ելքը տեսնում էր այն բանում, որ սուլթանական կառավարությունը Արևմտյան Հայաստանում ստեղծի քիչ թե շատ բարենպաստ պայմաններ, զարգացնի հատկապես արդյունաբերությունը, «բանալով աշխատանքի նորանոր աղբյուրներ ազգաբնակչության համար»[1], որ հայ մարդը չհեռանա իր երկրից, չբռնի ավերիչ արտագաղթի ճամփան, չենացնի իր հայրենիքը, բարձրացնելով նրա նյութական ու հոգևոր կարողությունները։

Ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության տարիներին, երբ տրվել էր խոսքի ու մամուլի քիչ թե շատ ազատություն, «Մշակը» սկսեց հրապարակել իր կարծիքները Հայկական հարցի մասին։ 1905 թ. աշնանը նրա աշխատակից Հ. Առաքելյանը, նշելով, որ Հաագայում գումարվելու է խաղաղության միջպետական երկրորդ կոնֆերանս, բաղձանք էր հայտնում, որ «Թուրքիայի բազմաչարչար հայ ժողովրդին մարդկային իրավունքներ տալու և Թուրքական Հայաստանում ռեֆորմներ մտցնելու հարցը ևս մտցվի կոնֆերենցիայի ծրագրի մեջ, որպեսզի եվրոպական պետությունները կարողանան խաղաղ ճանապարհով լուծել այդ հարցը և վերջ տալ հայ ժողովրդի տանջանքներին»[2]։ Նա գտնում էր, որ եթե Ռուսաստանը ասպարեզ քաշի Հայկական հարցը, ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտը կաջակցի նրա լուծմանը. դրանում «մենք անպայման հավատացած ենք»[3]։

Սակայն, երբ ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխությունը բռնակալության դեմ ոտքի հանեց նաև հարևան երկրների ժողովուրդներին, Հ. Առաքելյանը սկսեց Հայկական հարցի լուծման բանալին փնտրել Թուրքիայում։ Նա այն կարծիքին էր, որ արևմտահայերն իրենց հարցը կարող են լուծել երիտթուրքերի հետ համագործակցելով, քանի որ դժգոհությունն արդեն համընդհանուր է։ «Հայերը իբրև ամենից հեղափոխականացած տարր, պետք է աշխատեն միանալ թուրք դրժգոհ տարրերի հետ և միահամուռ ուժերով աշխատեն ամբողջ երկրի մեջ ընդհանուր ռեֆորմներ մտցնել։ Մի անգամ, որ կը

1 Տե՛ս «Մշակ», 1902, սեպտեմբերի 12 (№ 201)։
2 Նույն տեղը, 1905, սեպտեմբերի 24 (№ 193)։
3 Տե՛ս նույն տեղը

վերակազմվի ամբողջ երկրի դրությունը, հայոց հարցը ևս իր շուտափույթ և արդար լուծումը կստանա»։ Ապա շարունակում էր, որ հայերը միացնելով իրենց ջանքերը երիտթուրքերի հետ, կվերացնեն նրանց այն կարծիքը, թե իբր իրենք սեպարատիստներ են, մտածում են միայն Հայկական հարցի մասին և կնպաստեն ամբողջ Թուրքիայի վերակառուցմանը, իսկ երիտթուրքերն էլ պետք է դրական վերաբերվեն Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածին, քանի որ նրա իրագործումը «ամենևին ոչ մի հարված չէ կարող հասցնել Օսմանյան կայսրության ամբողջությանը»[1]։

Հ. Առաքելյանը ավելի էր խորանում, երբ սուլթանական բռնապետության դեմ պայքարելու համար առաջ էր քաշում Թուրքիայի բոլոր ժողովուրդների համերաշխության և համագործակցության կարևորությունը։ «Ժամանակն է,— գրում էր նա,— որ Օսմանյան կայսրության տարբեր ազգերի մեջ համերաշխություն և համաձայնություն հաստատելու ջանքեր լինեն և բոլոր ազգերը և ցեղերը միահամուռ ուժերով աշխատեն երկրի ընդհանուր ազատության համար և միատեղ թոթափեն Աբդուլ Համիդի բռնակալական լուծը և ապա ամեն մի ազգ ստանա իր ներքին ինքնավարական կազմակերպությունը։ Ուրեմն, համաձայնություն և համերաշխ գործակցություն հայ և օսման բարեկարգիչ խավերի հետ— դա է ներկայիս միակ հնարավոր միջոցը։ Ընդհանուր օսմանյան հեղափոխություն— ահա ելքը»[2]։

Սակայն, երբ Ռուսաստանում հեղափոխությունը պարտություն կրեց և հաղթեց ինքնակալությունը, երբ Անգլիան ու Ռուսաստանը 1907 թ. «լուծեցին» Մակեդոնական խնդիրը, Հ. Առաքելյանը թողեց Հայկական հարցի լուծման համաթուրքական շարժման ուղին և վերստին առաջ քաշեց Եվրոպայի օգնության գաղափարը։ 1908 թ. մարտին նա գրում էր, որ այդ հարցը «մեր խորին համոզմունքով, դարձյալ պետք է կարգավորվի, լուծվի եվրոպական միջամտությամբ»[3], ավելի կոնկրետ՝ Ռուսաստանի ու Անգլիայի օգնությամբ։ Եվ ապա՝ «Հայոց հարցը իր լուծումը կարող է գտնել միայն եվրոպայի միջամտության և նախաձեռնության շնորհիվ։ Դառն շատ դառն փորձերը, պատմության

1 Տե՛ս «Մշակ», 1906, հունիսի 28 (№ 138)։
2 Նույն տեղը
3 Տե՛ս նույն տեղը, 1908, մարտի 4 (№ 49)։

մնջ մեր տված անօրինակ զոհերը և թափված արյունը մեզ բերել են այդ միակ եղրակացությանը»[1]։

Հոդվածագիրն այժմ արդեն մերժում է այն թեզը, թե Հայկական հարցը կարող է լուծվել Թուրքիայի վերածննդի հետ միասին։ Նա այլևս չէր հավատում այդ վերածննդին և ցնորք էր համարում, թե «երբևիցե թուրքական կառավարությունը կարող է փոխել իր կառավարական ձևը կամ թուրք ժողովուրդը կարող է մոտիկ ապագայում այնքան հասունանալ, որ ընտրե իր համար կառավարության ավելի բարձր քաղաքական ձև»[2]։

Իսկ ինչպե՞ս էր պատկերացնում Հ. Առաքելյանը Հայկական հարցի լուծումը։ Նա Հայաստանի անկախություն չէր պահանջում, ըստ երևույթին, դանելով, որ դա անհնարին է։ «...Հայերիս նպատակը,— գրում էր նա,— ոչ թե մի ինքնուրույն երկիր ստեղծելն է, այլ մարդավայել ու քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելը»[3]։ Բայց նա ցանկանում էր Հայաստանի ինքնավարություն Թուրքիայի սահմաններում մոտավորապես այնպես, ինչպես ուզում էին արևմտահայ որոշ շրջաններ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո։ Եթե եվրոպական տերությունները, նշում էր նա, կամենան կենսագործել Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը, «մենք պետք է մեր բոլոր ջանքերով նպաստենք այդ առաջարկի իրագործմանը»[4]։

Հ. Առաքելյանի տեսակետն էր պաշտպանում նաև նրա գաղափարակից Ա. Քալանթարը։ Նրա կարծիքով, Հայկական հարցը կարելի էր լուծել երկու եղանակով՝ կամ հային տալ այն պայմանները, ինչ ունեն եվրոպայի քաղաքացիները, այսինքն՝ ստեղծել այնպիսի վիճակ, որ նրա «անձը, գույքը, լեզուն, խիղճը, աղատությունը վտանգված չլինի», կամ շնորհել ինքնավարություն, որից հավասարապես կարող են օգտվել նաև նրա հարևանները՝ թուրքը, քուրդը, և ուրիշը։ Բայց գերապատվությունը հեղինակը տալիս էր ինքնավարությանը։ «Հայկական ինքնավարությունը Թուրքական Ասիայում,— գրում էր նա,— հիմնական բարենորոգությունների պահանջ է, առանց որոնց անկարելի է երազել փոքր ի շատե բավարար քաղաքացիական կյանք և ապահովել հասարակական և ժողովրդական առաջադիմությունը»։ Ապա եղրափակում էր. «...մարդկությունը կամաց-կամաց ամեն տեղ իրագործում է մի խոշոր սկզբունք, այն է՝ տեղական ինքնավարության սկզբունքը»[1]։

Ա. Քալանթարը անհնարին էր համարում հայոց դատի լուծումը դասակարգային պայքարի եղանակով, նշելով, որ Թուրքիան կազմված է ոչ թե միապաղաղ դասակարգերից, այլ ազգերի խայտաբղետ զանգվածներից։ Նախքան դասակարգային կռիվ պրոպագանդելը, պետք է Օսմանյան կայսրությունը բարեկարգել, դարձնել սահմանադրական կարգեր։ Նրա կարծիքով, «դասակարգային կռվի վրա հիմնված ազատագրական շարժումը Թուրքիայում դատապարտված է կատարյալ անհաջողության և սպառնական է իր հետևանքներով»։ Այն կարող է վերածվել ազգամիջյան ջարդերի, ծառայել «կեղեքող, ճնշող և հարստահարող խավերի հաղթանակին» և իր ամբողջ ծանրությամբ շուռ գալ հայ ժողովրդի գլխին[2]։

Ինչպես XIX դ. վերջին, այնպես էլ XX դ. սկզբին «Մշակը» արևմտահայության ազատագրության հարցը կապում էր մեծ տերությունների միջամտության հետ, նրա լուծումը տեսնելով ինքնավարության մեջ։ Բայց ի տարբերություն XIX դ. վերջի, երբ «Մշակը» քննադատում էր տերությունների դաղութային քաղաքականությունը, նրանց կողմից այլ ժողովուրդների ստրկացման փաստը, դարասկզբին այն շրջանցում էր այդ կարևոր հանգամանքը։ Եթե անցյալ հարյուրամյակի վերջին «Մշակն» անդրադառնում էր Արևմտյան Հայաստանի ազգարալին խնդրին և նրա լուծման համար պահանջում անհրաժեշտ արմատական վերափոխումներ (կրկնում ենք, թեև չէր մեկնաբանում, թե ինչ էր հասկանում դրա տակ), ապա XX դ. սկզբին այն լռության էր մատնում արևմտահայության ճնշող մեծամասնության համար առաջնակարգ նշանակություն ունեցող այդ պրոբլեմը։ Բ. Կենեյանցը, քննադատելով XX դ. սկզբի «Մշակը» ցույց էր տալիս, որ այն հետ էր մնում XIX դ. վերջի, այսինքն՝ Արծրունու ժամանակաշրջանի «Մշակից»՝ հայ մարդկանց հուզող հասարակական-քաղաքական ամենակարևորագույն խնդիրներում[3]։

1 «Մշակ», 1908, մայիսի 15 (№ 105)։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը։

1 «Մշակ», 1906, հունվարի 14 (№ 8)։
2 Տե՛ս նույն տեղը, 1908, ապրիլի 27 (№ 90)։
3 Տե՛ս Տե՛ս Բ. Կենեյանց, Ընտիր երկեր, եր., 1978, էջ 33—35։

* * *

Արևելահայ լիբերալ բուրժուական մի այլ օրգան՝ «Մուրճը», 1890-ական թվականներին Հայկական հարցի լուծումը կապում էր եվրոպական տերությունների, հատկապես Անգլիայի հետ։ Նրա խմբագիր Ա. Արասխանյանցը 1895 թ. միամտորեն կարծում էր, որ հայկական խնդիրը այժմ «դառել է անգլիական խնդիր։ Անգլիան այդ գործի բավարար լուծման համար դրել է արդեն յուր, իբրև հզոր պետության պատիվը»[1]։ Սակայն նրա հույսերը բրիտանական կառավարող շրջանների երկդիմի քաղաքականության հետ միասին անցան գնացին։ 1890-ական թվականների վերջերին և 1900-ական թվականների սկզբներին Հայկական հարցը համարյա չի արծարծվում «Մուրճի» էջերում[2]։

1905 թ. ռուսական հեղափոխության ազդեցության տակ ամսագիրը վերանայեց իր հայացքները։ Նրա խմբագիր Լ. Սարգսյանը սկզբում այն կարծիքն էր հայտնում, որ Հայկական հարցի լուծումը պետք է կապել ոչ թե եվրոպական շահամոլ տերությունների, այլ անշահախնդիր դեմոկրատիայի հետ։ «Մենում է,— գրում էր նա,— բոլոր հույսերը դնել Եվրոպայում դեմոկրատական հոսանքի ուժեղացնելու վրա։ Իսկ այդ հույսն ուտոպիա չէ»[3]։ Նա գտնում էր, որ այդ դեմոկրատիան Թուրքիայի բոլոր ժողովուրդներին ու դավառներին կտա արդար օրինակարգ և կպահի երկիրն իր տիրապետության տակ այնքան ժամանակ, «մինչև որ գերիշխող մուսուլման տարրը սովորի ապրել այդ նոր կյանքով»[4]։ Ընդ որում չէր նշում, թե ինչպես պետք է եվրոպական դեմոկրատիան պահեր Թուրքիան իր տիրապետության տակ և ինչպես պետք է ընտելացներ մահմեդականներին նոր կյանքին։

Սակայն Լ. Սարգսյանը Ռուսաստանի իրադարձությունների ազդեցության տակ շուտով թողնում է եվրոպական դեմոկրատիան, և հայկական խնդրի լուծումը ամբողջապես կապում

1 Տե՛ս «Մուրճ», 1895, № 3—4, էջ 476։

2 «Մուրճի» դիրքորոշումը Հայկական հարցում հանգամանորեն տե՛ս Լ. Գևորգյան, «Մուրճ» ամսագիրը, Եր., 1982, էջ 101—115։

3 «Մուրճ», 1906, № 1, էջ 182—183։

4 Տե՛ս նույն տեղը, էջ 185։

Թուրքիայի ներքին ուժերի հետ։ Նա գրում էր. «Ռուսաստանի մեծ հեղափոխությունը մասամբ ցույց տվեց նոր ճանապարհը։ Այդ հեղափոխությունը ապացուցեց, որ խառն ազգաբնակչություն ունեցող պետություններում միայն ամբողջության վերանորոգումից է կախված բաղկացուցիչ ազգությունների կյանքի բարվոքումը, եթե այդ բաղկացուցիչ մասերը հնարավորություն չունեն անջատվելու և անկախ գոյություն պահպանելու։ Հայը ոչ մի երկրում այդպիսի հնարավորություն չունի»։ Եվրոպան խոստացավ նրան ինքնավարություն, բայց խաբեց։ Բավական է հույս դնել նրա վրա, «Սթափվենք և մեր աննելիքը աննենք»[1]։

«Մուրճի» խմբագրի կարծիքով, հարկավոր է վճռականապես հրաժարվել Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածից, քանի որ ժամանակներն արդեն փոխվել են։

Այժմ անհրաժեշտ է փոխել նաև գործողության եղանակը։ Պետք է մոտենալ Թուրքերին, համախմբել սուլթանիզմի դեմ մարտնչող «բոլոր Թուրքահպատակ կովողները», պետք է «շպրտել եվրոպական դիպլոմատիայի երեսին նրա արյունաշաղախ 61-րդ հոդվածը և մերձենալ Թուրք ժողովրդին և նրա առաջադեմ ինտելիգենցիային, հասկացնելով մեր ձգտումները, որ նույնն են, ինչ պետք է լինի տաճիկ աշխատավոր մասի և նրա շահերը պաշտպանող ինտելիգենցիայի նպատակը։ Մենք պետք է վերջ դնենք մեր ժողովուրդների կյանքը պղտորող ղոչիական տիպի «գործիչների» գոյությանը և թե Կովկասում, թե Թուրքիայում և թե եվրոպայում, միանանք համաթուրքական վերանորոգության մի ծրագրով և գործենք համերաշխ»[2]։

Լ. Սարգսյանն ավելի առաջ էր գնում, երբ նշում էր. «Ոչ մի աշխարհայեցողություն այնքան գորեղ չի բաժանում մարդկանց հոդուց քրոնիկական ցավ դառած նացիոնալիզմը, որքան սոցիալիստականը», որ «Թուրքիայի կյանքի մեջ այդ նոր ուղղության իրագործումը պետք է սկսեն Թուրք և Հայ սոցիալիստները»[3]։

1 «Մուրճ», 1906, № 3, էջ 119։

2 «Մուրճ», 1906, № 7, էջ 122—123։ Ի դեպ՝ Լ. Սարգսյանը հետագայում կշտամբում էր Տիգրան Զավենին, որ պրոպագանդելով իր թեզերը և անգամ նրանց ոգով հրատարակելով «երկրի ձայն» վերնագրով հատուկ թերթ, չի նշում, որ այդ թեզերը առաջին անգամ մշակվել են իր կողմից՝ «Մուրճի» խմբագրությունում (տե՛ս «Մուրճ», 1907, № 3)։

3 Նույն տեղը։

Հեղինակը գտնում էր, որ Թուրքիայում ազատագրական շարժումները պետք է զնկավարեն մտավորական-բուրժուական խավերը, որովհետև երկրի տնտեսական զարգացումը դեռ այնքան առաջադիմած չէ, «որ պրոլետարիատը որևէ դեր կատարի»[1]։

Երբ համեմատում ենք «Մշակի» և «Մուրճի» հայացքները արևմտահայության ազատագրման ուղիների մասին, տեսնում ենք որոշակի ընդհանրություններ։ Նրանք երկուսն էլ կամենում էին բարելավել արևմտահայերի դրությունը, գատապարտում էին բուրժուական կուսակցությունների, հատկապես դաշնակցության, ցուցադրական-խմբակային կռիվները, տեռորիստական գործողությունները։ Բայց այդ երկու պարբերականների դիրքորոշումներում կային նաև սկզբունքային տարբերություններ։ «Մշակը», չնայած որոշ տատանումների, արևմտահայերի ազատագրման հարցը կապում էր հիմնականում մեծ տերությունների միջամտության, մինչդեռ «Մուրճը»՝ համաթուրքական հեղափոխական շարժման հետ։ «Մշակը» մտահոգված էր գլխավորապես արևմտահայերի, իսկ «Մուրճը»՝ Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի բոլոր ժողովուրդների ճակատագրով, նրանց սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների վերակառուցումով։ Իր գաղափարական համոզմունքներով «Մուրճն» ավելի ձախ էր, քան «Մշակը»։ Եվ պատահական չէ, որ հայ մարքսիստները այդ երկու պարբերականները բնութագրելով որպես արևելահայ լիբերալ-բուրժուական օրգաններ, միաժամանակ նշում էին նաև նրանց միջև եղած տարբերությունները։ Բ. Կնունյանցը «Մշակի» բովանդակությունը համարում էր ազգատ ու մակերեսային[2], իսկ Ստ. Շահումյանը «Մուրճի» բովանդակությունը բնութագրում էր. «միշտ հետաքրքիր», որն աչքի է ընկել «իր շիտակությամբ ու աղնվությամբ»[3]։

* * *

Անդրադառնանք այժմ արևմտահայ բուրժուական գաղափարախոսների հայացքներին։

1 Տե՛ս «Մուրճ», 1907, № 3։

2 Տե՛ս Բ. Կնունյանց, նշվ. աշխ., էջ 34։

3 Տե՛ս Ստ. Շահումյան, Երկ, հ. 1, էջ 418։

Արևմտահայության ազատագրության նշանավոր հրապարակախոս և գործիչ Մկրտիչ Փորթուգալյանը, որ սկսած 1885 թ. Մարսելում հրատարակում էր «Արմենիա» թերթը, գտնում էր, որ պետք է թոթափել օսմանյան լուծը և հռչակել Հայաստանի անկախություն։ Բայց դրա համար անհրաժեշտ է հեղափոխություն կատարել։ Լրագրում կարդում ենք. «...հեղափոխությունը, ընդհանուր ժողովրդական ապստամբությունը միայն կարող է Հայաստանին ազատություն տալ»[1]։

Հրապարակախոսը նշում էր, որ հեղափոխությունը պետք է կատարեն ոչ թե այս կամ այն խավերը, այլ բոլորը, ամբողջ արևմտահայությունը։ Նա տեսնում էր, որ արևմտահայությունը բաժանված է սոցիալական տարբեր խմբերի՝ հարուստների, միջակների և աղքատների, բայց կարևոր էր համարում շեշտել ոչ թե նրանց միջև եղած ներհակությունները, այլ համերաշխությունը, հավատալով, որ «անդադար և անվհատ աշխատությունը կբնա ծնունդ տալ մի օր այնպիսի հանգամանքների, այնպիսի դեպքերի, որ երեք դասակարգերի մեկ-մեկ մաս մոտեցնեն իրար և միացնեն հայրենիքի վերաշինության սուրբ գործի համար»[2]։ Ապա նշում էր, որ պետք է լավ նախապատրաստել հեղափոխությունը, կանխապես տեսնել բոլոր բարդությունները և մշակել դրանց հաղթահարման գործնական միջոցները։ Կարևորը ոչ այնքան հեղափոխություն կատարելն է, որքան ինչ-որ հաղթելը, ազատության հասնելը[3]։

Մ. Փորթուգալյանը ուշադրություն էր դարձնում այն փաստի վրա, որ Արևմտյան Հայաստանում հայերից բացի ապրում են նաև այլ ժողովուրդներ, որոնք նույնպես ճնշվում ու հարստահարվում են թուրքական իշխանությունների կողմից։ Գտնում էր, որ նրանց հետ պետք է համագործակցել։ Բայց դա նույնպես կապում էր իրադարձությունների հաստատման հետ։

«Արմենիան» վճռականապես մերժում էր այն տեսակետը, որը արևմտահայության ազատագրման գործում առաջնակարգ նշանակություն էր տալիս Եվրոպայի օգնությանը։ Թերթի կարծիքով, տերությունները կհետաքրքրվեն հայերի հարցով և

1 «Արմենիա», 1886, հունիսի 16։

2 Ջ. Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Եր., 1980, էջ 282։

3 Տե՛ս «Արմենիա», 1886, հունիսի 19։

կօժանդակեն նրանց հարցի լուծմանը միայն այն ժամանակ, երբ դա կթելադրի իրենց շահերը։ «Ժամանակն է թողնել այն հույսը,— կարդում ենք նրա էջերում,— թե եվրոպական դիպլոմատիան, դրդված միայն արդարասիրության զգացմունքներից, որևիցե բան կանի Հայաստանի համար»։ Այն «զեկավարվում է ամենից առաջ յուր իրական շահերով»։ «Եվրոպան միայն այն ժամանակ որևէ բան կանի, երբ ստիպված կլինի հանուն իր շահերի, երբ կտեսնի, որ Հայաստանը ոտքի է կանգնել, ապստամբվել է, որ պատերազմող ուժ է ներկայացնում նա»[1]։ Ուստի և դարձյալ ու դարձյալ կոչ էր անում նախապատրաստվել և ապստամբվել. առանց հեղափոխության չի կարելի ձեռք բերել ազատություն և անկախություն։

Անդրադառնալով այն հարցին, թե ինչ հասարակարգ պետք է ստեղծել Արևմտյան Հայաստանի ազատագրումից հետո, Մ. Փորթուգալյանը բաց էր թողնում այն, հայտարարելով, որ դա ապագայի գործ է. «Արմենիայի նպատակը չէ այժմեն որոշել թե Հայաստանի վարչական դրությունը սահմանադրական-միապետակա՞ն պիտի լինի, հանրապետակա՞ն, թե ընկերվարական։ Մեր նպատակն է ամենեն առաջ, որ տաճկական Հայաստանի ժողովուրդն ազատվի զինք հարստահարող քրքական լծեն և իրավունք ունենա անկախաբար ինքզինք կառավարելու և իրեն համար օրենքներ դնելու։ «Արմենիայի» խմբագրությունն իր պաշտոն, իր դեր չհամարիր այժմեն իջնել այդ օրենքների մանրամասնություններին մեջ, դեռ անկախություն չունեցող մի երկրի համար այժմեն կառավարական մի օրենսգիրք պատրաստել և իբրև վճռական մի բան ներկայացնելով ժողովրդին՝ ըսել թե այս օրենքներով պետք է կառավարվիք»[2]։ ««Արմենիայի» գլխավոր պաշտոնն է դրդել ժողովուրդը և առաջնորդել անկախության և ինքնօրինության իրավունքը ձեռք բերելու, թեև գիտե, որ այդ տեղ չվերջանար ամեն բան»[3]։

1889 թ. Մ. Փորթուգալյանի պարբերականի տպարանը լույս ընծայեց Հայաստանի ազատության Վարդապետարանը կամ, ինչպես այն վերնագրված էր, «Վարդապետարան Հայաստանի ազատության»[1]։ Այդտեղ հարց ու պատասխանի ձևով տրվում էին Հայաստանի ազատության ուղիները։ Ավելորդ չենք համարում բերել նրա համառոտ բովանդակությունը։

Այն հարցին, թե ո՞վ պիտի ազատի Հայաստանը օտարների ձեռքից, տրվում էր հետևյալ պատասխանը՝ «ինքը, հայ ազգը»։

Ի՞նչ հնարներով։

Տարբեր՝ երբեմն զենքով, երբեմն փողով, երբեմն էլ օտարների օգնությամբ։

Կարո՞ղ է Հայաստանը երբևէ դառնալ հայերի սեփականություն։

Այո՛, կարող է, եթե բոլոր հայերը՝ հարուստ ու աղքատ, այր ու կին, ծեր ու պատանի միասնաբար ու սրտանց ձգտեն Հայաստանի ազատությանը։

Ո՞ր երկիրն է կոչվում Հայաստան։

Այն երկիրը, որը շրջապատված է Սևանա, Վանա և Ուրմիայի ծովակներով։

Ո՞վ է հայի թշնամին ու բարեկամը։

Թշնամին նա է, ով աշխատում է հային հեռացնել Հայաստանից, իսկ բարեկամը նա է, ով նպաստում է նրա վերադարձին Հայաստան կամ այստեղ հաստատուն մնալուն։

Ո՞վ է իսկական հայը։

Նա՝ ով ցանկանում է Հայաստանի անկախությունը և նպաստում է դրան, իսկ ովքեր հեռու են դրանցից՝ անպիտան են։

Ո՞ր երկրում հայը կարող է լինել երջանիկ։

Միայն Հայաստանում, քանզի այլ տեղերում նա հալածված ու արհամարհված է։

Ի՞նչ վիճակում կլինեն հայերը, եթե չազատեն Հայաստանը։

Կբնաջնջվեն։

Ապագա Հայաստանում կլինե՞ն ազնվականներ կամ արտոնյալ դասեր։

Կհաստատվի քաղաքացիների հավասարություն, բայց որոշ պատիվ կտրվեն նրանց, ովքեր առաջինը սուր կքարձրացնեն Հայաստանի ազատության համար, կամ նրանց զավակներին, ովքեր կզոհվեն հայրենիքի ազատության պայքարում։

---

1 «Արմենիա», 1886, հունիսի 9։

2 Նույն տեղը, 1889, մարտի 27։

3 Նույն տեղը։

1 Գաղափարական մեջ կարծիք կա, որ «Վարդապետարանը» Մ. Փորթուգալյանի խնդրանքով գրել է Ռ. Պատկանյանը։

Ո՞րն է հայերի նշանաբանը։

Ազատություն կամ մահ։

Ո՞ր վիճակն է գերադասելի՝ թշնամու դեմ պատերազմելը, թե նրա մոտ ստրուկ մնալը։

Պատերազմելը։

Ո՞վ պիտի բարձրացնի ազատության գրոշակը և սուրը։

Դրոշակը պիտի բարձրացնի վարդապետը, իսկ սուրը՝ պատանիները, երիտասարդները և բոլոր տղամարդիկ։

Ի՞նչ փողով պետք է ձեռք բերել զենք ու հանդերձանք։

Ժողովրդից հավաքած գումարներով։

Ո՞վ պիտի լինի Հայաստանի կառավարիչը։

Նա, ով կլինի ամենաքաջը, ամենաազնիվը, ով կստանա «Հայաստանի ժողովրդեն ընտրված Ազգային ժողովի մեծամասնության քվեն»[1]։

Ո՞րն է հայ ազգի կրոնը։

Այն հաստատուն հավատը, թե «Հայաստանը պիտի ազատվի օտարի լծեն», իսկ լուսավորչականը, կաթոլիկը կամ լյութերականը «մարդկային կրքերի և տգիտության ստեղծած և այժմ հնացած գաղափարներ են», որոնք վնասել ու վնասում են հայ ազգին։

Ե՞րբ պետք է ոտքի բարձրանան հայերը։

Երբ մեծ ազգերի մեջ կսկսվի կենաց ու մահու պատերազմ։ Իսկ մինչ այդ նրանք պետք է ուսումնասիրեն սույն վարդապետարանը և «ուժ տան» «Հայոց հայրենասիրական միության»[2]։

Այս վարդապետարանը, փաստորեն, քաղաքական գործունեության որոշակի ծրագիր էր, որ հրամցվում էր հայ ժողովրդին։ Նրանում պարզ ու հստակ ասվում էր, որ հայ ազգը ի՛նքը պիտի ազատագրի Հայաստանը՝ զենքով, փողով կամ օտարի օգնությամբ։ Գլխավոր շեշտը դրվում էր Հայաստանի ազատագրության ու անկախության հռչակման վրա և քիչ էր խոսվում նրա ապագա հասարակական կառուցվածքի մասին։ Համենայն դեպս, ակնարկվում էր, որ պետք է ստեղծվեն հանրապետական կարգեր։

1890-ական թվականների կոտորածներից հետո Մ. Փորթուգալյանը Հայաստանի ազատագրության ելքը վերստին տեսնում էր համարյա բացառապես հեղափոխության մեջ, լռում էր փողի մասին և երկրորդական նշանակություն էր տալիս մեծ տերությունների օգնությանը, այսինքն՝ քարոզում էր ըստ էության այն, ինչ 1880-ական թվականներին։ Ահա որոշ փաստեր. 1897 թ. նա գրում էր, որ լուրեր են պտտվում, թե իբր «Արմենիան» փոխել է իր ուղղությունը, «թե ինքը որ առաջ հեղափոխություն կքարոզեր անդադար, այժմ ոչ միայն չքաջալերեր հեղափոխական շարժումները, այլև մինչև իսկ արգելք կլինի եղեր Հայաստանի մեջ հեղափոխական շարժմանը»։ Մ. Փորթուգալյանը հերքում էր այդ լուրերը, համարելով դրանք «սուտ ու սխալ լուրեր»[1] և հայտարարում, որ ինչպես 12 տարի սրանից առաջ, այնպես էլ հիմա քարոզում ենք, թե հայ ժողովուրդը հեղափոխության միջոցով կարող է ազատել իրեն[2]։

1904 թ. նա ավելացնում էր, որ հեղափոխություն բարձրացնելու համար պարտադիր չէ, որ մինչև վերջին մարդը զինակոչի նրա անհրաժեշտությունը։ «Հաստատ հեղափոխություն ունենալու համար պետք է գեթ ժողովրդեն բավական մեծ մասը պատրաստված լինի գործի համար, ուսումնասիրած լինի հեղափոխության հասնելու միջոցները»[3]։

Մ. Փորթուգալյանը գտնում էր, որ հեղափոխությունը չի կարելի կատարել ամեն պարագայում, այն պետք է նախապատրաստել և իրագործել բարենպաստ պայմանների դեպքում, որ հեղափոխություն կարելի է անել հեղափոխական գաղափարների տարածումով, ազգային համերաշխության ստեղծումով, հայրենիքի ազատագրության նպատակի ամրապնդումով և այլն։ «Ուրեմն մեր գլխավոր գործը պիտի լինի,— գրում էր նա,— հայրենիքի ազատության գաղափարը տարածել ժողովրդի մեջ, առաջնորդել անոր ուղիղ ճանապարհով դեպի այդ նպատակը»[4]։ Այդ բոլորը, շարունակում էր նա, կարող են կատարել «Արմենիան» և «Արմենիայի» «օժանդակները»[5]։

---

1 *Տե՛ս* Տիգրան Մկուեդ. *Ամիտայի արձագանքներու վերակոչումն*, հ. բ., Նյու Յորք, 1953, էջ 256։

2 *Տե՛ս նույն տեղը։*

1 *Տե՛ս «Արմենիա», 1897, նոյեմբերի 13։*

2 *Տե՛ս նույն տեղը։*

3 *Նույն տեղը, 1901, հոկտեմբերի 27։*

4 *Նույն տեղը, 1897, հոկտեմբերի 2։*

5 *«Արմենիայի» «օժանդակների» ստակ նկատի ուներ ոչ թե կուսակցությունները կամ կազմակերպությունները, այլ նրան համակրողներին, աջակցողներին ու տարածողներին։ «Արմենիայի» «օժանդակները»,— գրում էր Մ. Փոր-*

Անդրադառնալով այն հարցին, թե ինչու «Արմենիան» չի հրապարակում հեղափոխության մասին կանոնադրություն, Մ. Փորթուգալյանը պատասխանում էր. «Մեր պաշտոնն է գաղափարներ տարածել, իսկ հեղափոխությունը պիտի անեն առհասարակ հայ անունով կոչվողները... Թղթի վրա հեղափոխական կանոններ գրելով միայն գործը չի կատարվիր, երբ ինքը ժողովուրդը դեռ հասկացողություն չունի... Ընկերություններ կազմելն առաջ ընկերներ պետք է կազմել. հեղափոխական կանոնագիր շինելն առաջ հեղափոխության վրա գաղափար ունեցող, անոր ի՞նչ լինելը և ինչպե՞ս լինելը հասկցող մարդեր պետք են»[1]։

Մ. Փորթուգալյանը պահանջում էր չնույնացնել հեղափոխությունը ցույցերի հետ, քանի որ դրանք տարբեր բաներ են. «Ցույցեր շուտ կպատրաստվին և շուտ ալ կցրվին. հեղափոխությունը ուշ կպատրաստվի և իր արդյունքը երկար կտևե»[2]։ Ապա նշում էր, որ «մեր մեջ հեղափոխական կազմակերպություն չկա այժմ և հայ ժողովուրդն ալ պատրաստ չէ այդպիսի հեղափոխական շարժման։ Եղածները լոկ ցուցարարական կազմակերպություններ են»[3]։

Ելնելով այդ դիրքերից, Մ. Փորթուգալյանը քննադատում էր հայ բուրժուական կուսակցություններին։ 1897 թ. նա գրում էր, որ «մենք սկզբնե ի վեր քննադատած ենք «Հնչակի» թե հայտ-

---

Բուգալյանը,— ոչ հեղափոխական ընկերություն է, ոչ ալ այդպիսի կազմակերպություն մը, այլ պարզապես «Արմենիայի» համակրողներին ներկայացուցած մի կանոնագիր է, որպեսզի այդ լրագրի տարածելուն և ղորանալուն համար իրենց օժանդակություն, եթե կհաճին, կանոնավորության և հարատևության տակ դնել հանձնառու լինելու։ Ուրեմն «Արմենիայի օժանդակ» մը ուրիշ բան չունի բնավ, այլ «Արմենիայի» տարածելուն ու ղորանալուն աջակից նյութապես և բարոյապես, ինչն ալ փոխադարձապես օգտվելով անկե» («Արմենիա», 1898, հունիսի 29)։ Միաժամանակ հարկ էր համարում նշել, որ դա դեռ գործի սկիզբն է, իսկ «երբ ավելի մեծ ուժ ունենանք, ավելի մեծ բաներ կրնանք կձեռնարկենք» (նույն տեղը)։ Թե ինչ էր հասկանում «ավելի մեծ բաներ» տակ, չէր մեկնաբանում։ Այնուհետև վերահրատարակում էր «Արմենիայի «օժանդակների» կանոնադրությունը՝ «կանոնագիր «Արմենիայի» «օժանդակների» վերաբերությամբ, որի մեջ հանգամանորեն շարադրվում էին նրանց իրավունքներն ու պարտականությունները (Տե՛ս «Ամենիա», 1905, մայիսի 24)։

1 «Արմենիա», 1897, սեպտեմբերի 18։
2 Նույն տեղը, 1898, մարտի 23։
3 Նույն տեղը։

նած գաղափարները և թե գործունեությունը և զայն վնասակար գտած ենք հայ ազգին համար»[1]։ Նա նշում էր, որ ինքն ու Ա. Նազարբեկյանը բաժանվել են միմյանցից հայացքների տարբերության պատճառով. ինքը հեղափոխության հարցում առաջնակարգ նշանակություն է տվել նրա նախապատրաստմանը, իսկ Ա. Նազարբեկյանը՝ ցուցարարական շարժումներին, ինքը ավելորդ է համարել հայ իրականության մեջ քարոզել դասակարգային գաղափարներ կամ ընկերվարություն, իսկ «Հնչակի» խմբագիրը դեմ է եղել դրան։ Ա. Նազարբեկյանի համար Հայկական հարցը կամուրջ էր միջազգային ընկերվարությանն անցնելու համար, «մինչդեռ «Արմենիայի» համար հայկական խնդիրը նպատակ մ'էր ուղղակի և ոչ միջոց, մեր ապագա թռուներին թողնելով ընկերվարական խնդիրների կարգադրությունը և հետևապես մեր հեղափոխական շարժումներ պիտի սահմանափակվեին հայկական խնդրի շուրջը, այդ խնդրի սահմանները գծված լինելով արդեն մեր նախորդներե, թե մեր ազգային իշխանությունների կողմեն և թե եվրոպական տերությունների կողմեն»[2]։ Ա. Նազարբեկյանը և նրա գաղափարակիցները նույնացնելով ցույցը հեղափոխության հետ, ուղում էին հեղափոխություն կատարել Կ. Պոլսում, հույս ունենալով, թե տերությունները կտեսնեն և կմիջամտեն Թուրքիայի ներքին գործերին, կլուծեն Հայկական հարցը, մինչդեռ «Արմենիայի» կողմնակիցները պահանջում էին հեղափոխությունը իրագործել հենց Արևմտյան Հայաստանում, հայտարարելով, որ տերությունները ցանկության դեպքում այնտեղ էլ կարող են տեսնել փաստը և դրսևորել իրենց վերաբերմունքը[3]։

Պարբերականը պայքարում էր նաև դաշնակցության դեմ։ Նրա թղթակիցներից մեկը գրում էր, թե այդ կուսակցության մեջ «հազար ու մեկ գաղափարի տեր մարդիկ կգտնես. մին ընկերվարական է, մյուսը հայրենասեր, ուրիշ մը ժեռն Թյուրքական, չորրորդը միութենական, հինգերորդն ուրիշական մը. մին մյուսի ըսածեն չհասկնար. կատարյալ Բաբելոն մը, ուրկե օգտակար ոչինչ դուրս չգար»[4]։

1 «Արմենիա», 1897, մայիսի 5։
2 Նույն տեղը, 1907, ապրիլի 3։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Նույն տեղը, 1897, սեպտեմբերի 11։

Մ. Փորթուգալյանն անդրադառնում էր այն հարցին, որ հնչակյաններից ոմանք թողնում են իրենց կուսակցությունը և, հրապուրվելով դաշնակցականների պրոպագանդայով, մտնում նրանց շարքերը։ Սակայն դրանով նրանք չեն բախտավորվում, քանի որ «դաշնակցականներն ալ հնչակյաններեն շատ տարբեր կրթություն և դաղափարներ ունեցող մարդիկ չեն»[1]։

«Արմենիան» հայտարարում էր, որ այդ երկու կուսակցություններն էլ հայ ժողովրդին գժբախտություններից բացի ուրիշ ոչինչ չեն պատճառել։ Տարվելով միակողմանի քննադատությամբ, թերթը հաճախ անտեսում էր հիմնական ոճրագործներին՝ սուլթանական իշխանություններին և արևմտահայության ողբերգության պատճառը համարում դաշնակցականների ու հնչակյանների գործունեությունը, նրանց ցուցարարական կռիվներն ու ելույթները։ Խոսելով այդ կուսակցությունների Ռուսաստանից Թուրքիա կամ Արևմտյան Հայաստան ուղարկված հայդուկային խմբերի մասին, «Արմենիան» գրում էր. «Այս մարդոց այս տեսակի գործունեությունը մեզ միշտ վնասակար է, զի այդպես մեկ քանի անձերե բաղկացած խեղճուկրակ խումբերեն ոչ Թուրքը կվախնա, գոհացում կուտա և ոչ ալ քուրտ կվախնա հայեր սպանելե, այլ ընդհակառակը՝ ղիրենք իրենց չարագործությունների մեջ ավելի կմղե, տեսնելով հաճախ մեր ուժերի տկարությունը»[2]։

Մի այլ առիթով պարբերականը շարունակում էր. «Ի՞նչ պիտի անեն մի քանի անձնվեր, կարիճ անձնավորություններ, մեր այս բազմապահանջ և մեծածավալ գործին մեջ, երբ ժողովրդի մեծամասնությունը դեռ պետք եղած գաղափարը չունի հեղափոխական դերին վրա»[3]։

Թերթը դեմ չէր կուսակցությունների գոյությանը, նրանց տարբեր հայացքներին և ուղղություններին, բայց գտնում էր, որ նրանց գործունեությունը պետք է ծավալվի ոչ թե իրար դեմ, հառաչի ոչ թե միմյանց շարքից հանելու նպատակին, այլ ժողովրդի ազատագրության գաղափարին։ «Հայրենիքի և ազգի առաջ,— գրում էր Մեն-Սեն ծածկանունով Բղթակիցը,— բոլոր կուսակցություններն ալ իրենցը մոռացած, գլուխ ծռելու են»[1]։

Մ. Փորթուգալյանը մերժում էր կուսակցությունների ընկերվարական թեզերը, գտնելով, որ նթե դրանք անհրաժեշտ են արդյունաբերական զարգացած երկրների համար, ուր առաջացել են բանվորական մեծ բանակներ, ապա ավելորդ են դեռ հետամնաց Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի համար, որտեղ «ոչ գործարան կա և ոչ ալ գործավոր»[2]։ Վերլուծելով կապիտալիստական բարձր մակարդակի հասած տերությունների և Արևմտյան Հայաստանի աշխատավորների դրությունը, նա գրում էր. «Թուրքահայաստանի և զարգացած երկրների ժողովուրդների վիճակն ու ցավերը այնչափ իրարմե տարբեր բաներ են, որ Թուրքահայաստանի հայն Եվրոպայի ու Ամերիկայի գործավորներին գանգատած գառն վիճակը իր համար մեծ բախտավորություն մը կհամարի»[3]։ Այդ վիճակին արժանանալու համար նա իր տունն ու տեղը, արտերն ու դաշտերը երեսի վրա թողնելով մեկնում է Ամերիկա կամ Եվրոպա։ Այդպիսի պայմաններում, եղրափակում է հրապարակախոսը, ընկերվարական քարոզներն Արևմտյան Հայաստանում անտեղի են ու անիրագործելի[4]։

Մ. Փորթուգալյանը քննադատում էր նաև կուսակցությունների տեսորիստական վարքագիծը։ Նրա կարծիքով, ոճրագործություն է փողի համար կատարած մարդասպանությունը և գտնում էր, որ դա «երբեք ներելի չէ ազատության անունով գործողներին»[5]։ Հրապարակախոսը դատապարտում էր դաշնակցականներին, որոնք սպանեցին կապիտալիստ Ժամհարյանին։ Ցույց էր տալիս, որ դա վնաս հասցրեց մեր ազգայնական գործին, քանի որ նրա միջոցներով կրթվում էին հայ երեխաները, պահվում էին Մարաշի որբերը, բուժվում էին Շուշու հիվանդները[6]։ Նա չէր արդարացնում Մ. Օրմանյանի դեմ կազ-

1 «Արմենիա», 1897, նոյեմբերի 3։
2 Նույն տեղը, 1899, նոյեմբերի 15։
3 Նույն տեղը, 1901, փետրվարի 20։

1 «Արմենիա», 1906, փետրվարի 17։
2 Տե՛ս նույն տեղը, 1907, ապրիլի 10։
3 Նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը։
5 Տե՛ս նույն տեղը, 1902, նոյեմբերի 5։
6 Տե՛ս նույն տեղ։

մակերպած մահափորձը, նշելով, որ «հայկական դատի հաղթանակն այս կամ այն անձնավորության սպանելու մեջ չէ, այլ Հայաստանի արդի վարչական դրությունը փոխել կարենալու մեջ...»[1]։ Հրապարակախոսը զայրույթ էր հայտնում Ա. Արփիարյանի դեմ գործադրած տեռորի առթիվ, գրելով, որ նա գրչի մարդ էր, հակառակորդները կարող էին նրան գրչով պատասխանել, գրչով «կռվել անոր դեմ»[2]։ Ցավալի էր համարում հին և վերակազմյալ հնչակյանների փոխադարձ սպանությունները, գտնում, որ «այդ վարմունքը թուրքի հացին եղ քսելն է»[3]։ Չէր արդարացնում անգամ Աբդուլ Համիդի դեմ 1905 թ. հուլիսի 21-ին կազմակերպած մահափորձը։ «Շատ հույս չկա,— գրում էր նա,— թե սուլթանի փոխվելովը Հայաստանի վարչական դրությունն ալ պիտի կրնա փոխվիլ»[4]։

Մ. Փորթուգալյանը մերժում էր հայ հոգևորականության ղեկավար դերը հասարակական-քաղաքական կյանքում և ցույց էր տալիս, որ ժողովուրդը ինքը պետք է տնօրինի իր բախտը։ «Մենք հայերս ենք միայն,— գրում էր նա,— որ կուզենք և կսպասենք, որ ամեն բանի մեջ տերտերը մեզ առաջնորդեն, պատրիարքը թաֆթիր գրելով Հայաստանի բարենորոգումները գործադրել տա և կամ կաթողիկոսը ամենառողրմած ցարին դիմում անելով Հայաստանին ինքնավարություն տրվի։

... Անոնք թող անեն ինչ որ կրնան, բայց գլխավոր գործը ժողովուրդին ձեռքն է և ժողովրդի ուժով պիտի լինի։ Ժողովուրդն է ազգային մեծ իշխանությունը, նա ինչ որ ուզե և ինչպես որ ուզե, այնպես կլինի, բավական է, որ գիտնա իր ուզելիքը, իրեն օգտակարը»[5]։

Միևնույն ժամանակ պարբերականի տնօրենը գնահատում էր լուսավորչական եկեղեցու դերը հայ ժողովրդի պահպանման, համախմբման և զարգացման գործում։ Խոսելով եկեղեցին պետությունից անջատելու մասին, նա գրում էր, որ եթե պետականություն ունեցող ժողովուրդների համար դա դրական է, ապա պետականությունից զուրկ հայերի համար՝ բացասական։

1 «Արմենիա», 1903, փետրվարի 4։
2 Տե՛ս նույն տեղը, փետրվարի 25։
3 Տե՛ս նույն տեղը, օգոստոսի 6։
4 Նույն տեղը, 1905, դեկտեմբերի 20։
5 Նույն տեղը, 1898, հունվարի 1։

Նրանք, ցրված լինելով աշխարհով մեկ, առնչվում ու կապվում են իրար հետ եկեղեցու միջոցով։ «Ֆրանսիացիների համար,— գրում էր նա,— ինչ որ է տերության և եկեղեցիի բաժանումը, մեզի համար ալ նույն բան մը չէ մեր ազգի և եկեղեցիի բաժանումը. մեր վիճակ, մեր դիրք, մեր պահանջները բոլորովին տարբեր են, այնպես որ մենք չենք կրնար պարզապես հետեվել անոնց, ոգևորվիլ անոնց բացականչությունների շնչով»[1]։ Ապա շարունակում էր, որ եթե ուրիշ ազգեր պահպանվում են իրենց պետականությամբ և այլ ուժերով, ապա հայերի գոյության կռվանը իրենց լեզուն ու կրոնն է։ Ուստի դրանք «պետք է պինդ բռնենք մեր հայ ազգություն չկորցնելու համար»[2]։ Հոգևորականությունը պետք է վառ պահի ազգային լեզուն, գրականությունը և ընդհանրապես մշակույթը, քարոզի դրանք ժողովրդին, բայց բոլորից առավել բորբոքի հայրենասիրություն, քանի որ հայրենիքի սերն ավելի զորավոր է և ավելի է նպաստում հայապահպանման գործին, քան եկեղեցին։ «Թեև կրնանք ամեն տեղ ալ եկեղեցիներ կանգնեցնել, բայց չենք կրնար ամեն տեղ մեր ազգային հայրենիք կանգնեցնել։ Ազգային հայրենիքը մեկն է ու անշարժ»[3]։

Ազգապահպանման գործում կարևոր նշանակություն տալով եկեղեցուն, հրապարակախոսը, սակայն, նշում էր, որ նրա վարչության մեջ պետք է կատարել բարենորոգումներ՝ հեռացնել թերուս և անուս քահանաներին ասպարեզից և նրանց փոխարինել գիտակ ու բարեկիրթ մարդկանցով[4]։

Մ. Փորթուգալյանը պաշտպանության տակ էր վերցնում Մ. Օրմանյանին և, առարկելով դաշնակցականներին, նշում, որ սուլթանական վարչակարգի պայմաններում նա չի կարող ավելին անել։ Ապա ենթադրում էր, որ եթե Մ. Օրմանյանի փոխարեն պատրիարքի աթոռին բազմած լիներ մեկ ուրիշը, կարող էր վարել ավելի անցանկալի վարքագիծ[5]։

«Արմենիան» անդրադառնում էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժումներին և հաճախ ճիշտ էր մեկնաբա-

1 «Արմենիա», 1906, հոկտեմբերի 3։
2 Տե՛ս նույն տեղը, հոկտեմբերի 17։
3 Նույն տեղը, հոկտեմբերի 24։
4 Տե՛ս նույն տեղը, 1899, մարտի 18։
5 Տե՛ս նույն տեղը, 1899, օգոստոսի 30, հոկտեմբերի 4։

նում դրանց առաջացման պատճառները։ Խոսելով, օրինակ, 1904 թ. Սասունի դեպքերի մասին, մերժում էր սուլթանական իշխանությունների այն անհիմն հայտարարությունը, որ իբր Սասնա կոտորածների պատճառը եղել են հայերի ցուցարարական կոիվները։ Թերթը նշում էր, որ այդ կոիվները նախ՝ կարող էին առաջանալ միայն տիրապետող վարչակարգի դաժանությունների հետևանքով, և ապա՝ իշխանությունները եթե պատժում էլ էին, պետք է պատժեին մեղավորներին, բայց ոչ երբեք անմեղներին։ «Ինչո՞ւ կոտորել անմեղ անգեն ժողովուրդը,— գրում էր Բղեշկից Մաքսը,— իրավաբանական ո՞ր սկզբունքն է, որ պիտի արդարացնե մարդասպանը, որ կոտորած է անմեղները»։ Ապա եզրափակում էր. «Պատասխանատուն սուլթանն է...[1]»։

Հատկանշական է, որ սկսած 1904 թ. գարնանից մինչև դեկտեմբեր, Մ. Փորթուգալյանը «Արմենիայում» լուրեր էր հրապարակում Սասունի իրադարձությունների մասին, իսկ 1905 թ. հունվարին, ամփոփելով դրանք, գրում էր. «Սասունն իր հերոսական շարժումներով ու նահատակություններով կրցավ միայն ցնցել իր շղթաները, բայց անկարող էր զանոնք խորտակել»[2]։

Պարբերականը դրվատանքով էր խոսում հայդուկների մասին, գովաբանում Անդրանիկի ու Ազբյուր Սերոբի սխրագործությունները, ափսոսում Գևորգ Չաուշի ողբերգական մահը։ «Ցավով կիմանանք,— կարդում ենք նրա հաղորդումներից մեկում,— թե Մուշ պատահած ընդհարումներուն մեջ սպանվեր է խմբապետ Գևորգ Չաուշը (Սահրատ)»։ Ապա ծանոթագրում էր, թե նա երկար ժամանակ պայքարում էր թուրքական բռնությունների դեմ և չէր ուզում հեռանալ հարազատ երկրից։ Հողվածն ավարտվում էր «Հարգանք՝ իր ազգի սիրուն համար անձնազոհության զգացման»[3] խոսքերով։

«Արմենիան» վերլուծում էր նաև Ռուսաստանի դիրքորոշումը հայերի հանդեպ։ 1890-ական թվականների կոտորածներից անմիջապես հետո լրագիրը նեգատիվ էր բնութագրում այն, հայտարարելով, թե «Ռուսիան իր անտարբերությամբ քաջալերեց հայկական ջարդերը»։ Թուրքիան պետք է բարելավվի հայերի կացությունը, այլապես նրանք ուղղափառություն կընդունեն և աոիթ կտան Ռուսաստանին ավելի հաճախ միջամտելու նրա ներքին գործերին[1]։ Խարազանում էր ինքնակալության վարքագիծը, որն առաջարկում էր Անդրկովկասում հանդրվանած արևմտահայ փախստականներին՝ կամ հետ վերադառնալ Թուրքիա, կամ ընդունել ռուսահպատակություն[2]։ Լրագիրը ցարական կառավարությանը համարում էր «հայ ազգի ամենասոսկալի, ամենաահարկու թշնամին»[3]։

Բայց «Արմենիան» միաժամանակ գտնում էր, որ ցարին դիմելով ու բողոքելով կարելի է մեղմել և փոխել նրա քաղաքականությունը։ Այդ թեզով հանդես եկավ Մ. Փորթուգալյանը հատկապես 1903 թ.՝ հայ եկեղեցական գույքի բռնագրավման օրերին։ Նա գտնում էր, որ աշխարհի բոլոր մասերից հայերը պետք է «աղերսագիրներով դիմեն նորին մեծություն համայն Ռուսիայի թագավոր կայսերին, խնդրելով, որ հայ եկեղեցիի կալվածքների մասին նախարարական խորհրդի տված որոշումը չգործադրվի...»[4]։

Եվ հետո. «Նույնիսկ եթե մեր բողոքներն անմիջական արդյունք մը չունենան, արդ պետք չէ հուսահատեցնել մեզ պետք է կրկնել մեր բողոքները մինչև որ հասնի վերջապես ցարի ականջին ու խղճին»[5]։

Մ. Փորթուգալյանը դեմ էր այն կարծիքին, թե եթե ցարական կառավարությունը չվերադարձնի հայոց եկեղեցու գույքը, պետք է մայր աթոռը էջմիածնից տեղափոխել Կիպրոս։ Նա նշում էր, որ հայերի հոգևոր կենտրոնը պետք է գտնվի Հայաստանում և ոչ որևէ այլ տեղում։ Թերևս կարելի էր այդ աթոռը տեղափոխել Աղթամար, Տարոն, Կարին, «բայց Թուրքին արդեն վստահություն չկիներ և ավելորդ է հոս երկարաբանել այդ մասին»։ Մայր աթոռը պետք է թողնել իր տեղում և «շարունակել մեր բողոքները... մինչև որ մեր ձայնը լսելի լինի»[6]։

Հրապարակախոսը գտնում էր, որ հայերը հանցանք գործած կլինեն, եթե ապստամբեն ռուսական կառավարության դեմ,

1 «Արմենիա», 1904, դեկտեմբերի 21։
2 Նույն տեղը, 1905, հունվարի 18։
3 Նույն տեղը, 1907, օգոստոսի 24։

1 Տե՛ս «Արմենիա», 1900, ապրիլի 4։
2 Տե՛ս նույն տեղը, 1902, հունվարի 22։
3 Տե՛ս նույն տեղը, 1904, ապրիլի 23։
4 Տե՛ս նույն տեղը, 1903, սեպտեմբերի 23։
5 Նույն տեղը, հոկտեմբերի 7։
6 Տե՛ս նույն տեղը, 1904, ապրիլի 9։

բայց միևնույն ժամանակ նշում էր, որ եթե այդ կառավարությունը խստացնի իր բռնությունները և դարձնի անտանելի, այն «ժամանակ ապստամբությունն ալ ոչ թե հանցանք, այլ սրբազան պարտք մը կդառնա»[1]։

Այդուհանդերձ «Արմենիան» ուներ ռուսական կողմնորոշում, և նրա համակրանքը Ռուսաստանի հանդեպ մեծացավ ռուս-ճապոնական պատերազմի տարիներին, հասնելով այն աստիճանի, որ արդեն ցանկանում էր Ռուսաստանի հաղթանակը Ճապոնիայի նկատմամբ։ Պարբերականը ելնում էր այն բանից, որ հայերը բազմաթիվ թելերով կապված են Ռուսաստանի հետ և նրա հաղթանակից կարող են շահել, մինչդեռ Ճապոնիայից հեռու են հազարավոր կիլոմետրերով, չունեն նրա հետ առնչություն և, հետևաբար, նրա հաղթանակից որևէ օգուտ չեն կարող ստանալ[2]։ «Խոսք չկա,— գրում էր թերթը,— այսօրվա ռուս կառավարությունը հետադիմական է և մեզ թշնամի. սակայն ռուս ազգը մեծ ապագա ունի, հսկա ձգտումներով օժտված ժողովուրդ է, տիեզերական դեր է խաղալու, մեծ քանքարներ ունի թաքցրած յուր ծոցում և եվրոպական կիրթ ազգերի մեջ սկսեր է գրավել յուր պատվավոր տեղը։ Այդպիսի մեծ ազգի հետ, որքան կարելի է, պետք է աշխատենք չթշնամանալ, չգրգռել նրա հասարակաց կարծիքը»[3]։

Ապա շարունակում էր. «... Ռուսիային վիճակված է մեծ կոչում, մեծ դեր արդի մարդկության ապագա կյանքում։ Հատկապես հայ ազգը և ռուսահայերը շատ բան են պարտական ռուսաց մեծ ազգին, և ապագայում էլ շատ կօգտվին նրանից... Ռուս ազգի լեզուն ու գրականությունը, նրա ուսումն ու գիտությունը ունեցել են մինչև օրս և այսուհետև էլ կունենան մեծ ազդեցություն հայկականի վրա։ Որքան էլ բնական լինի այդ ազգը յուր ներկա խավարասեր կառավարությունով, բայց և այնպես նա յուր քաղաքակրթությամբ բարձր է թուրքից էլ, պարսիկից էլ»[4]։

«Արմենիան» խանդավառությամբ դիմավորեց ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության լուրը և

1 Տե՛ս «Արմենիա», 1904, հունիսի 4։
2 Տե՛ս նույն տեղը, ապրիլի 23։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը, ապրիլի 30։

դատապարտեց ցարին՝ Պետերբուրգում ժողովրդի խաղաղ ցույցը գնդակոծելու համար։ 1905 թ. հունվարի 25-ի առաջնորդողում թերթը գրում էր. «Վերջապես հեղափոխությունը պայթեցավ Ռուսիայի մայրաքաղաքին Բեղերսպուրկի մեջ, ցարի պալատին դրեթե առջև։ Ձյունով ծածկված սպիտակ փողոցները կարմիր ներկվեցան ռուս ժողովրդի արյունով... Պատիվ ու պարծանք 1905 թ. հունվարի 22-ի կիրակի օրը մեռնող ռուսներին, ամոթ ու նախատինք բռնապետության պաշտպաններին»[1]։

«Արմենիան» գտնում էր, որ Ռուսաստանը արդեն դարձել է սահմանադրական միապետություն և հույս էր տածում, որ հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, բարեփոխելով Ռուսաստանը, «իր օգտակար ազդեցությունը պիտի ունենա Ռուսիայի հայերի վիճակի վրա և փոխադարձապես Թուրքիայի հայերին։ Սահմանադրական դրությամբ օժտված ազատական նորածին Ռուսիան անշուշտ ավելի օգտակար պիտի լինի..., քան թե նախկին Ռուսիան, որ խավարի մեջ խարխափելով կգործե նույնիսկ իր շահերի դեմ»[2]։ Բայց պարբերականը շուտով հիասթափվեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստից, քանի որ ցարական կառավարությունը չորս ամիս անց արգելեց «Արմենիայի» մուտքը Ռուսաստան։

Կառավարության այդ վարքագծից զարմացած թերթը հարցնում էր. «Բայց Արմենիան Ռուսիայի դեմ թշնամական վարմունք բնավ ունեցած չլինելով... այս նոր արգելքն ալ մեզ անհասկանալի կմնա, ինչպես էր և սկզբնական արգելքը. բայց գոնե այն կարելի էր մեկնել ռուսական նախկին բռնապետական կառավարության մեկ քմահաճույքը համարելով, իսկ ա՛յժմ...»[3]։ Մ. Փորթուգալյանը կարծում էր, թե ռուսական իշխանությունները Թուրքիային դուր գալու համար են արգելել «Արմենիայի» մուտքը Ռուսաստան, չհասկանալով, որ դա կառավարության ռեակցիոն քաղաքականության նոր դրսևորումներից մեկն էր։ Ինքնակալական դրաքննությունը միայն 1907 թ. մարտին թուլացրեց, որպեսզի «Արմենիան» վերսին մուտք գործի Ռուսաստան[4]։

1 «Արմենիա», 1905, հունվարի 25։
2 Տե՛ս նույն տեղը, 1906, հունվարի 17։
3 Նույն տեղը, հունիսի 27։
4 Տե՛ս նույն տեղը, 1907, մարտի 6։

Այնուամենայնիվ, Մ. Փորթուգալյանի ռուսական կողմնորոշումը կայուն էր ու որոշակի։ Անգամ ռեակցիայի տարիներին, համեմատելով արևելահայերի ու արևմտահայերի դրությունը, նշում էր, որ Ռուսաստանում հայերի կացությունն անհամեմատ լավ է, քան Թուրքիայում։ Ռուսաստանում նրանք աճում են, իսկ Թուրքիայում՝ նվազում։ «Մեկ կողմը (իմա՝ Թուրքիայում— Ա. Հ.) գտնվողները իրենց ունեցած կտոր մը հողն ալ չեն կրնար մշակել և կձգեն կիրթան, իրենց անապահով և հարստահարված վիճակի մեջ լինելու պատճառով, իսկ մյուս կողմը (իմա՝ Ռուսաստանում— Ա. Հ.) գտնվողները իրենց ունեցած հողը քիչ կգտնեն իրենց պետքերի համար և ավելին կպահանջեն»[1]։

Հրապարակախոսը ավելի հանգամանորեն էր խոսում արևմտահայերի դժնդակ կացության մասին։ Նշում էր, որ Վանում ու Վասպուրականում հայերը սովի են մատնված, տարափոխիկ հիվանդությունները մոլեգնում են ամենուր։ «Ամեն մեկ եկեղեցի օրական 4—5 մեռել կունենա»[2]։ Դրությունը անտանելի է նաև Տարոնում։ Մշո դաշտում ու Բուլանըխում, «հայ երկրագործը ոչ արոր ունի, ոչ անասուն և ոչ սերմնացու»[3]։ Ունեցողներն էլ իշխանությունների կեղեքումների պատճառով չեն վարում ու ցանում։ «Բաղեշի և շրջակայից մեջ թշվառությունը սահման չունի... մոտակա գյուղերում վերջին օրերս անոթութենէ մեռնողներու թիվը կավելանա»[4]։ Ապա եզրափակում էր. «... այս դժոխային կացության ամբողջ պատասխանատվությունը թուրք կառավարության վրա կծանրանա»[5]։

«Արմենիան» ցույց էր տալիս, որ հայերը չդիմանալով գործադրվող բռնություններին ու կեղեքումներին, թողնում են իրենց հարազատ օջախները և արտագաղթում։ Մեկնում են «տնաշեն այրեր և քաջակազմ երիտասարդներ խմբերով... Ճանապարհորդության հազար ու մի դժվարություններուն դեմ մաքառելով, նյութական ու ֆիզիկական զոհողություններուն տակ կքած, նիհարած կհասնին արտասահման, վհատած սրտով ու թորշոմած հակատով»[1]։ Արտագաղթողների թիվը տարեցտարի մեծանում է[2]։ Թերթը գտնում էր, որ պետք է կանխել այդ երեվույթը, այլապես երկիրը հայազրկվելով, ձեռքից կգնա։

Պարբերականն անդրադառնում էր նաև թուրք գյուղացիների դրությանը և նշում, որ նրանք նույնպես տառապում են աղքատությունից ու խեղճությունից։ Թղթակից Մեն-Սեն գրում էր. «Մենք չենք ուրանում, որ թուրքական սաոր ռեժիմից կնեղվին նույնպես և հպատակ թուրքերը»։ Դոնիայում, Էնկյուրում, Կեսարիայում և երկրի այլ շրջաններում կառավարության «ստորին պաշտոնյաները տղրուկի պես կծծեն անոնց արյունը, տուրքերի անունով անոնց տակի փալասն անգամ կտանեն», բռնագրավում ու վաճառում են նաև անասունը, իսկ տերերին մատնում են սովի, ծեծում են և փտեցնում բանտերի մեջ։ Այդուհանդերձ, նշում էր թղթակիցը, թուրք գյուղացիները «Հայաստանի հայերի նման քրդերի գաղանություններին չեն ենթարկվում»[3]։

Մ. Փորթուգալյանը ցույց էր տալիս, որ թեև Ռուսաստանում քրիստոնյաների ու մահմեդականների տնտեսական դրությունը համեմատաբար բարվոք է, բայց այստեղ նրանք տուժում են հայ-թաթարական կոտորածներից։ Մերժելով պաշտոնական այն հայտարարությունը, թե այդ գործում մեղավոր են հեղափոխականները, նա նշում էր, որ իսկական հանցագործները ցարական իշխանություններն են։ Ապա, ի հայտ բերելով նոր տեղեկություններ, գտնում էր, որ Կովկասի հայ-թաթարական կոտորածները «սուլթան Համիդի ծրագրած համիսլամական շարժման խաղերն են... եղելությունները ու փաստերը այս համոզման բերած են այժմ նույնիսկ ռուս մամուլի մեծ մասը, մանավանդ աղատախոհ, լայնամիտ ու անկողմնակալ մասը»[4]։ Հրապարակախոսը հերքում էր պանիսլամականների այն հայտարարությունը, թե իբր մահմեդականները կոտորում են հայերին այն պատճառով, որ նրանք հանդես են գալիս Կովկասում ռուսական վարչակարգի տապալման ելույթներով։ Նա հարց էր տալիս՝ չէ՞ որ Ռուսաստանում հակացարական շար-

1 «Արմենիա», 1907, ապրիլի 10։
2 Նույն տեղը, 1906, դեկտեմբերի 5։
3 Նույն տեղը, հուլիսի 6։
4 Նույն տեղը, 1907, հուլիսի 6։
5 Նույն տեղը, ապրիլի 3։

1 «Արմենիա», 1906, նոյեմբերի 7։
2 Տե՛ս նույն տեղը, 1907, հունվարի 9։
3 Տե՛ս նույն տեղը, 1900, նոյեմբերի 14։
4 Նույն տեղը, 1905, նոյեմբերի 15։

ժումները կատարում են հիմնականում ռուսները, իսկ հայերը կազմում են այդ շարժումների մասնակիցների «ամենափոքրիկ, մաս մը միայն»։ Եթե մահմեդականները ինքնակալական վարչակարգի պաշտպաններ են, թող կոտորեին հենց ռուսներին։ Ապա եզրափակում էր, թե իրողությունն այն է, որ կովկասահայերի ջարդերի «ծրագիրը կազմված է Կ. Պոլսի Ելդըզի պալատին մեջ»։ Այդ ծրագրով պանիսլամականները պետք է նախ բնաջնջեն ռուսական կողմնորոշում ունեցող հայերին, «հետո ռուսների դեմ սկսեն իրենց շարժումները»[1]։

Այսպիսով, Մ. Փորթուգալյանի «Արմենիան» խնդիր էր դնում ազատագրել Արևմտյան Հայաստանը և հռչակել նրա անկախությունը հեղափոխության միջոցով։ Սակայն նրա քարոզած հեղափոխական գաղափարները վերացական, անիրական ու անհեռանկար էին։

* * *

Արևմտահայ ազատագրության մեկ այլ նշանավոր գաղափարախոս՝ Արփիար Արփիարյանը անցավ որոնումների ու եզրահանգումների բարդ ու կնճռոտ ուղի, կանգնելով մերթ դեմոկրատական, մերթ բուրժուական, բայց ավելի շատ բուրժուական, քան դեմոկրատական դիրքերում։ Դեռ 1870-ական թվականներից նա թղթակցում էր «Մշակին» Հայկակ ծածկանունով և հրապարակում այդ պարբերականում արժեքավոր նյութեր արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքից։ 1890-ական թվականների սկզբներից նա խանդավառվեց հնչակյաններով, իսկ 1895 թ. մտավ նրանց կուսակցության մեջ։

Ինչպե՞ս էր Ա. Արփիարյանը պատկերացնում Հայաստանի ազատագրության և հայ ժողովրդի վերակառուցման խնդիրները։ Նա գտնում էր, որ հայ ժողովրդի ճակատագիրը որոշողը տերություններն են։ Մինչև հայկական կոտորածները հրապարակախոսը մեծ համակրանք էր տածում Ռուսաստանի հանդեպ։ Նա տեսնում էր երկու Ռուսաստան. բռնապետական, հետադիմական և դեմոկրատական, առաջադիմական։ Առաջինին դատափետում էր, իսկ երկրորդին՝ գովաբանում։ 1886 թ. «Մասիսի» առաջնորդողում («Հայք և Ռուսք») նա գրում էր. «Ռուս ժողո-

1 Տե՛ս «Արմենիա», 1905, նոյեմբերի 15։

վուրդը հավան չէ յուր ինովնիկներու հայատյաց քաղաքականությանը։ Թեպետև կատկովներ, մալչանովներ և ուրիշ խավարամիտներ մերթ ընդ մերթ իրենց հարվածները կտեղան հայոց դեմ, բայց ողջամիտ, լուսավորյալ մասը բոլորովին տարբեր կմտածե։ Ռուս ժողովուրդը բարի ժողովուրդ մ՝ է»[1]։

1890-ական թվականների կոտորածներից հետո Ա. Արփիարյանը տեսնելով ցարիզմի թշնամական վերաբերմունքը հայկական շարժումների, հայ ժողովրդի հանդեպ, սկսեց խարազանել Ռուսաստանին, հայտարարելով, որ նրա տիրապետությունը Հայաստանում ավերիչ կլինի հայության համար։ 1898 թ. նա գրում էր. «Երբ Ռուսիա Հայաստանը գրավե, մեղի դեմ հալածումը պիտի սկսի թե տնտեսապես և թե բարոյապես»[2]։ Նա ցիրուցան կանի հայերին և կռուսացնի։ Ռուսները միայն «իսլամներուն է, որ բարեկամական ձեռք պիտի կարկառեն, անոնց վրա է, որ իրենց հովանին պիտի տարածեն, իսկ մեղի դեմ հալածանք միայն»[3]։ Ա. Արփիարյանը նշում էր, որ ռուսներն այդպես վարվեցին դեռ այն ժամանակ, երբ տիրացան Արևելյան Հայաստանին։ Նրանք «մեղի ոտնակոխ ընելով իսլամը առաջ քաշելու աշխատեցան»[4]։ Այժմ կովկասահայերին հալածում են, փակում են նրանց ազգային դպրոցները, կուլտուրկրթական հաստատությունները, իսկ «Թուրքիո հայերուն կոտորածի կքաջալերեն»[5]։ Հեղինակը հայտարարում էր. «Հայության արևը ան իրիկուն վերջնապես մարը պիտի մտնե, որ առտուն, որ ռուսը իր ոտքը Թուրքահպատակ Հայաստան դնե»[6]։

Բայց 1905 թ. ռուսական հեղափոխությունը սթափեցրեց Ա. Արփիարյանին։ Նա հրաժարվեց այդ հայացքներից և հայության փրկությունը կապեց համարյա բացառապես Ռուսաստանի՝ վերակառուցված, դեմոկրատական Ռուսաստանի հետ։ Տեսնելով Կ. Մարքսի գաղափարների կենսարար ուժը Ռուսաստանում, ռուսական հեղափոխության հենց առաջին տարում նա հայտա-

1 «Մասիս», 1886, № 3870, տե՛ս նաև Գ. Խ. Սեթեփանյան, Արփիար Արփիարյան, Եր., 1955, էջ 98։
2 «Նոր կյանք», 1898, № 12, էջ 178։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, № 3, էջ 208։
5 Տե՛ս նույն տեղը։
6 Նույն տեղը։

րարեց, որ պետք է ճանաչել Կ. Մարքսին[1]։ Ինքը, իհարկե, չուսումնասիրեց Կ. Մարքսի ժառանգությունը, առավել ևս լդարձավ մարքսիստ, բայց այդ հայտարարությունն արդեն վկայում էր նրա հայացքների ընդարձակման մասին։

Համենայն դեպս, Ա. Արփիարյանը տեսնում էր Ռուսաստանում դասակարգային հակամարտությունները, ատելությամբ էր խոսում ցարիզմի և համակրանքով՝ բանվորների մասին, հավատում պրոլետարիատի հաղթանակին։ «Թեև բնդանոթը,— գրում էր նա,— բյուրավոր բանվորների ջարդ ու փշուր կրնե, բայց ընկերվարական գաղափարը գործնականապես կհաղթանակե ու տիեզերքի բոլոր կալվածատերերը, դրամատերերը կսարսափահարե... Նորատեսիլ հեղափոխություն մըն է, որ կծագի. անոր դեմ թնդանոթը, հրացանը, սուրը անզոր պիտի գտնվին»[2]։ Ռուսաստանում «մարտնչումը ցեղային չէ, այլ ընկերային, դասակարգային»[3]։

Հրապարակախոսը մերժում էր այն հոռետես կարծիքները, որոնք, հենվելով ցարիզմի ժամանակավոր հաջողություններից, հեղափոխությունը համարում էին տապալված, անիմաստ ու վնասակար գործ։ «Ոտ չկարծվի,— գրում էր նա,— թե ռուսական շարժումը ջախջախվեցավ լմնցավ։ Ահեղ պատերազմ մըն է, որ կմղվի միահեծանության և ժողովրդական իրավունքին միջև. հեղափոխություններ կրնա քանի մը ճակատամարտ կորցնել, բայց վերջնական հաղթանակը իրեն պիտի մնա, երկարատև կռվե մը հետո»[4]։

Ապա շարունակում էր, որ ռուսական հեղափոխությունը «ապահովաբար պիտի հաղթանակե, և միահեծան կայսրության ավերակներուն վրա, թերևս ոչ թե սահմանադրական միապետությունը, այլ՝ նիզակակցական հանրապետությունը բարձրանա»[5]։

Ա. Արփիարյանի կարծիքով, ռուսական հեղափոխությունը խախտելու է Օսմանյան կայսրության հիմքերը, ոտքի հանելով թուրքերին բռնակալության դեմ։ «Հիմակ գրեթե ստույգ է,— գրում է նա,— որ թուրքերն ալ կսկսին շարժիլ Ռուսիո հեղափոխության ազդեցությամբ»[1]։ Կատարվող հեղաբեկումը կործանելու է ոչ միայն միապետին, այլև նրա ամբողջ վարչակարգը, տիրապետող հասարակական-քաղաքական սիստեմը։ «...պայթած հեղափոխությունը,— գրում էր նա,— միահեծան իշխանություն մը չէ, որ պիտի տապալե, այլ նաև՝ տնտեսական դրություն մը, ուստի և տարակույս չկա, թե իր հաղթանակն օր մը չէ օր մը պիտի սարսե ոչ միայն թագավորություններ, այլև հանրապետություններ ալ»[2]։ Կգա մի օր, երբ հեղափոխությունը Թուրքիայում քարը քարի վրա չի թողնի։ Եվ այն ժամանակ սուլթանական դարշապարի տակ ընկած «ժողովուրդները, ազգաբնակչությունները պիտի ապրեն առանց մահմեդական վհատպետի մը իրենց գլխուն վրա ունենալու»[3]։

Ա. Արփիարյանն այնուհետև անցնում էր իրեն առավել հետաքրքրող հարցին՝ հայության ճակատագրին։ Նա հույս էր տածում, որ ռուսական հեղափոխությունը փրկարար նշանակություն կունենա նախ արևելահայության համար։ Դրա շնորհիվ Կովկասում «հայ ժողովուրդը իր արցունքին փոխարինությունը պիտի ստանա»[4], որի հետևանքով «նոր հայություն մը կստեղծվի հուրին ու սուրին մեջ»[5]։ Ապա ենթադրում էր, որ ռուսական հեղափոխության հաղթանակը կարող է ազատություն բերել նաև արևմտահայերին։ «Կովկասի հայոց առաքինությունը պիտի փրկե նաև Թուրքիո հայությունն ալ»[6], կամ՝ «Թուրքահայաստանը փրկության համար պետք ունի ռուսական օդնության»[7]։ Հրապարակախոսը գտնում էր, որ արևմտահայության ինչպես ներկան, այնպես էլ ապագան սերտորեն կապված է Ռուսաստանի հետ։ Նրա ներքին կյանքի փոփոխություններն ու իրադարձությունները «մեղի մտքով ու սրտով դեպի այդ կայսրությունը կրաշեն»[8]։

---

1 Տե՛ս «Շիրակ», 1905, հոկտեմբեր-նոյեմբեր (№ 10—11), էջ 341։
2 «Լուսաբեր», 1906, հունվարի 11 (№ 169)։
3 Նույն տեղը, հունվարի 18 (№ 172)։
4 Նույն տեղը, հունվարի 16 (№ 171)։
5 Տե՛ս նույն տեղը, հունվարի 18 (№ 172)։

1 «Լուսաբեր», 1906, հունվարի 11 (№ 169)։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, 1907, փետրվարի 2 (№ 325)։
4 Տե՛ս նույն տեղը, 1906, հունվարի 18 (№ 172)։
5 Տե՛ս նույն տեղը, հունվարի 27 (№ 175)։
6 Նույն տեղը։
7 Նույն տեղը, ապրիլի 3 (№ 203)։
8 Տե՛ս նույն տեղը, 1907, հունիսի 15 (№ 380)։

Ա. Արփիարյանի ռուսական կողմնորոշումը ամրապնդվում էր նաև նրանով, որ, քաջատեղյակ լինելով Անդրկովկասի ու Արևմտյան Հայաստանի վիճակին, հանգել էր այն ճիշտ եզրակացության, թե Ռուսաստանի տիրապետության տակ ընկած Անդրկովկասը գտնվում է զարգացման ավելի բարձր մակարդակի վրա, քան Թուրքիայի ճիրաններում տառապող Արևմտյան Հայաստանը[1]։

Ուշագրավ է, որ Ա. Արփիարյանը եթե երբևէ անջատում էր հայ ազգային ազատագրական պայքարը հարևան ժողովուրդների շարժումներից, ապա 1905 թ. ռուսական հեղափոխության ազդեցության տակ վերանայում է այդ տեսակետը և առաջ քաշում ժողովուրդների համերաշխության, համատեղ ելույթների, համատեղ պայքարի դաղափարը[2]։ Ռուսական հեղափոխության տարիներին հրապարակած իր հոդվածներում արդեն նա շեշտում էր տիրակալների և ժողովուրդների միջև եղած հակասությունները, ցույց էր տալիս, որ բռնակալներն են գրգռում ժողովուրդներին միմյանց դեմ, որ ժողովուրդներն իրար հետ կարող են հաշտ ապրել։ Նա գրում էր. «Հայն ալ մարդ է, մահմեդականն ալ մարդ է, ան ալ մարը բերեր է, ան ալ։ Բռնապետներն են, որ ձեռքերնին կշփշփեն»[3]։ Հրապարակախոսը գտնում էր, որ հայերը պետք է համերաշխ լինեն իրենց հարևանների հետ, քանի որ հասարակական ինչպիսի վերակառուցումներ էլ կատարվեն, նրանք մնալու են իրար բնակակիցներ, «իբրև մեկ երկրի հայրենակիցներ»[4]։

Սակայն հեղինակը չէր պատկերում, թե ռուսական հեղափոխության հաղթանակի դեպքում ինչպես էին հայերն ու նրանց հարևանները վերակառուցելու իրենց կյանքը, իրենց փոխհարաբերությունները։

Ա. Արփիարյանը թեև հրապուրված էր ռուսական հեղափոխությամբ, այնուամենայնիվ այդ հեղափոխության տարիներին էլ Հայկական հարցի լուծումը կապում էր տերությունների հետ։ 1905 թ. նոյեմբերին գրում էր, թե նրանք կարող են

1 Տե՛ս «Լուսաբեր», 1906, նոյեմբերի 13 (№ 291)։
2 Տե՛ս Գ. Ս. Սահինյան, նշվ. աշխ., էջ 258։
3 «Լուսաբեր», 1905, դեկտեմբերի 30, № 164։
4 Տե՛ս նույն տեղը, 1906, հուլիսի 7, № 240։

լուծել այդ հարցը 1895 թ. Մալիսյան նախագծով, մտցնելով նրա մեջ «պղտիկ բարեփոխություն մը», այն է՝ Շաքիր աղայի փոխարեն կոմիսար նշանակեն մի եվրոպացի, ավելի կոնկրետ՝ իշխան Լուի Նապոլեոն Բոնապարտին, որ կորովի մարդ է, ճանաչված պետությունների կողմից, քաջատեղյակ Կովկասին ու Արևմտյան Հայաստանին։ Անհրաժեշտ է նրա տրամադրության տակ դնել մի զորախումբ, որ կարողանա իրագործել նախատեսված բարենորոգումները[1]։

Հրապարակախոսը Հայկական հարցի լուծումը կապում էր հատկապես Ռուսաստանի ու Անգլիայի հետ, ելնելով այն բանից, որ նրանք լուծել են Կրետեի խնդիրը, վճռում են Մակեդոնիայի պրոբլեմը, «կարելի է, որ մեր երկիրն ալ օժդեն վարչական այն դրությամբ, որով սկսվեցավ Մակեդոնիայի բարենորոգումը»[2]։ Նա այնքան հավատում էր այդ տերությունների զորությանը, որ հայտարարում էր, թե նրանք ինչպես ուզենան, այնպես էլ կարող են լուծել Հայկական դատը, «սուլթանը ի՞նչ կրնա ընել»[3]։

1905 թ. ռուսական հեղափոխության պարտությունից հետո էլ Ա. Արփիարյանը Հայկական հարցի լուծումը կապում էր պետությունների, հատկապես Ռուսաստանի հետ։ 1907 թ. հոկտեմբերին նա գրում էր. «Ով չի տեսնար, թե Հայաստանի կյանքը կամ մահը, հայ ազգի ազատագրությունը կամ երկարատև ստրկացումը կախում ունի հիմնական այս կամ այն պետության կամքեն։ Մենք մեզի համար բան մը չենք կրնար ընել։ Մեզի իբրև ոչխար կրնան սպանդանոց ալ տանիլ, կրնան դալարավետ մարգագետիններն ալ տանիլ։ Կամքը իրենցն է»[4]։ Տերությունները եթե կամենան, կվաճառեն մեզ, եթե ուզեն կոտորել, կկոտորեն, «ինչ ուզեն, նե ալ կընեն»[5]։

1907 թ. նոյեմբերին նա գրեց. «Հայաստանի մեջ միջամտության ձեռնահասությունը Ռուսաստանն ունի միայն», պիտի հուսանք, որ նա բարեկարգի Թուրքահպատակ իր սահմա-

1 Տե՛ս «Լուսաբեր», 1905, նոյեմբերի 9 (№ 143)։
2 Տե՛ս նույն տեղը, 1907, հուլիսի 18 (№ 394)։
3 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 20 (№ 395)։
4 Նույն տեղը, սեպտեմբերի 5 (№ 415)։
5 Տե՛ս նույն տեղը, հոկտեմբերի 8 (№ 429)։

նակից շրջանները, որ խեղճ ժողովուրդներին «հնարավորություն ընձեռի աշխատիլ ու ապրիլ»[1]։

Անդրադառնալով արևմտահայության ներքին կյանքին, Ա. Արփիարյանը մերժում էր նրա դասակարգերի բաժանման վնասը։ Նա գտնում էր, որ հայության այդ հատվածի բոլոր շերտերը հարստահարվում ու ճնշվում են թուրքական վերնախավերի կողմից։ 1906 թ. բանավիճելով «Ազատ բեմի» հետ, «Լուսաբերի» առաջնորդողներից մեկում նա գրում էր, որ այդ պարբերականի մարդիկ «չեն ուզեր հասկնալ, թե մեր մեջ ընկերական ուրույն դասակարգեր չկան, թե մեր հարուստն ու աղքատը էապես միևնույն նկարագիրն ունին, թե անոնց խմորն ու արյունը իրարմե չեն զանազանիր»[2]։

Սակայն Ա. Արփիարյանը արևմտահայության մեջ տեսնում էր նաև տարբեր խավեր և խոսում նրանց մասին։ Հոգևորականությանը, մասնավորապես Կ. Պոլսի պատրիարքությանը, նա դիտում էր իբրև հայ ազգի իրավունքների պահապան, օրենքների գործադիր, միջնորդ՝ նրա և սուլթանական կառավարության միջև։ Ուստի գտնում էր, որ այն պետք է հարգանքի ու ուշադրության արժանանա։ «Չհարգել այն ազգային իշխանությունը,— գրում էր նա,— որ մեր սեփական օրենքներուն գործադիրն ու մեր իրավունքներուն պահապանն է, չճանաչել այն բարոյական հեղինակությունը, որ ազգային պարտաճանաչության վրա հիմնված է՝ կնշանակե, որ մենք դեռ շատ հեռու ենք ճշմարիտ ազատության աստիճանեն և դեռ օտար տիրապետություններու երկաթե ձեռքերուվը կառավարվելու արժանի»[3]։

Նա կոչ էր անում կռվել հակահոգևորականական ու հակապատրիարքական տրամադրությունների դեմ և սովորել «հնազանդվիլ ազգային օրինավոր իշխանության»[4]։ Ավելին՝ նա պահանջում էր ընդարձակել հոգևորականության իրավունքները և այնպես բարելավել նրա նյութական դրությունը, որ «մեր հոգևորականությունը աշխարհականին ափի մեջ նայելե բոլորովին արգելվի, հարուստը փայփայելու և աղքատը մոռնալու փորձություններեն ազատվի և իր բարոյական դիրքին արժանի անկախությունը վայելե, որպեսզի միևնույն չափով ալ պատասխանատու ըլլա հանրության»[1]։

Գալով դրամատերերին, Ա. Արփիարյանը գտնում էր, որ նրանք Թուրքիայում տնտեսական գործունեություն պետք է ծավալեն, հիմնելով արտադրական ու առևտրական ձեռնարկություններ, գնելով հողատարածքներ և մշակելով շահաբեր կուլտուրաներ։ Այդ ձեռնարկումները հաջողությամբ առաջ տանելու համար առաջարկում էր հիմնել ընկերություններ՝ ողջունելով հայ կապիտալիստների կողմից բանկերի ու առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների հիմնումը Անգլիայում (Մանչեստր), Եգիպտոսում ու այլ երկրներում, հրապարակախոսը ցանկանում էր, որ նրանք նման գործունեություն ծավալեին հատկապես Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում, որպեսզի «կամաց-կամաց մեր երկրին տերը տնտեսապես մենք ըլլանք»[2]։ Մեր հայրենիքը «սքանչելի ապագա ունի, ջանանք անոր տերը մնալ»[3]։

Ա. Արփիարյանն այն կարծիքին էր, որ հայերը Թուրքիայում չեն կարող մրցել եվրոպական դրամատերերի հետ, թուրքերը՝ նույնպես։ Ուստի նրանց համախմբվելու և օտարներին դիմադրավելու կոչ էր անում։ «Ամենուս շահը կպահանջե,— գրում էր նա,— համերաշխ ըլլալ տնտեսական ինքնապաշտպանության համար, վասն զի քրիստոնեին պես մահմեդականն ալ եվրոպացիին պիտի հալածվի»[4]։ Հեղինակը նշում էր, որ Թուրքիայում հայերը մահմեդականների հետ տնտեսական հողի վրա թերևս կարող են ավելի հեշտ համագործակցել, քան քաղաքական և հույս էր հայտնում, որ օսմանյան կառավարիչները գուցե մի օր կհասկանան, որ ավելի լավ է երկրի նյութական ռեսուրսները մնան իրենց հպատակների ձեռքում, քան անցնեն օտարներին[5]։

Հրապարակախոսը չէր արծարծում կամ համարյա չէր արծարծում արևմտահայ գյուղացիության կենսական խնդիրները։

1 Տե՛ս «Լուսաբեր», 1907, նոյեմբերի 2 (№ 440)։
2 Տե՛ս նույն տեղը, 1906, դեկտեմբերի 6 (№ 301)։
3 Նույն տեղը, 1905, հունիսի 6 № 76)։
4 Տե՛ս նույն տեղը։

1 Տե՛ս «Լուսաբեր», 1905, հունվարի 5 (№ 15)։
2 Տե՛ս նույն տեղը, 1906, դեկտեմբերի 13 (№ 304)։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Նույն տեղը, 1907, փետրվարի 14 (№ 330)։
5 Տե՛ս նույն տեղը, 1906, դեկտեմբերի 13 (№ 304)։

Սակայն արտագաղթի մասին հաճախ էր խոսում և գտնում էր, որ պետք է կանխել այն, ամեն կերպ համոզել, որ արևմտահայերը չհեռանան իրենց հայրենիքից, հասկացնելով, որ «առանց հայու Հայաստան չըլլար»[1]։ Նա ցավ էր հայտնում, որ սուլթանական բռնությունների հետևանքով մոտ 300.000 հայեր որոշել են հեռանալ Սասունից մինչև Վան ընկած տարածքներից։ Եթե դա իրագործվի և պարբերաբար շարունակվի, «երկիրը ձեռքներե կերթա։ Երբ Հայաստանը հայոցմե դատարկվի, հայն ալ աշխարքիս երեսեն ուշ կամ կանուխ կվերանա»[2]։ Հրապարակախոսը բաղմիցս հայտարարում էր. «Հայը իր հողին գերի ընելով է, որ հայություն մը պիտի պահպանվի, պիտի զարգանա։ Հայ հողին վրա թող հայը խեղճ ըլլա, թող թշվառ ըլլա, թող հալածվի և իր կյանքը ստրկաբար քաշկռտե, բայց թող ապրի հողին վրա։ «Նախ ապրիլ և ապա փիլիսոփայել» ըսած են. «նախ ապրիլ և ապա աղատիլ» ըսենք մենք ալ»[3]։

Անցնելով կուսակցություններին և նրանց գործունեությանը, Ա. Արփիարյանը գտնում էր, որ «անարդարություն է հեղափոխության շլինքը փաթթել մեր դժբախտության ամբողջ պատասխանատվությունը»[4]։ Եվ դա նա հայտարարում էր 1906 թ., երբ արդեն ոչ միայն չէր հարում որևէ կուսակցության, այլև պայքարում էր կուսակցությունների դեմ։ Հրապարակախոսը իրավամբ նշում էր, որ նախահարձակ եղել է սուլթանական կառավարությունը։ Արդուլ Համիդը ասելով, թե «այս երկրին մեջ հայերը շատ հարուստ են, իսկ իսլամները շատ աղքատ»[5], ուզեց հայերին էլ աղքատացնել և «դեպի այվազություն քշել»[6], այսինքն՝ ծառա դարձնել[7]։ Սուլթանի գիշատիչ քաղաքականությունից հայերին պաշտպանելու, նրանց փրկելու համար էր, որ առաջացան հայ կուսակցությունները՝ արմենականները,

1 Տե՛ս «Լուսաբեր», 1905, ապրիլի 11 (№ 54)։
2 Նույն տեղը, 1907, հունիսի 22 (№ 383)։
3 «Արաքս», 1907, № 1, էջ 39—40։
4 Ազատագրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820—1920 թթ.)։ Տեքստը պատրաստեցին, առաջաբանը և ծանոթագրությունները գրեցին Ա. Զաքարյանը, Գ. Հովհաննիսյանը, Եր., 1982, էջ 291։
5 Տե՛ս նույն տեղը։
6 Տե՛ս նույն տեղը, էջ 292։
7 Տե՛ս նույն տեղը, էջ 531։

հնչակյանները և ուրիշները։ Ցավոք, նրանց «հայապաշտությունն ալ՝ «հեղափոխությունն» հոշակվեցավ»[1]։

Այնուհետև հրապարակախոսը արձանագրում էր, որ արևմտահայությունն այժմ բաժանված է երկու մասի. մեկը պահանջում է խաղաղություն, «առանց սակայն նկատողության առնելու Թշնամու տրամադրությունները»[2], մյուսը՝ կռվի հրապատևություն՝ «առանց սակայն նկատողության առնելու իր ուժերուն անբավականությունը»[3]։

Ինչպե՞ս վարվել։ Պետք է դադարեցնել մեկուսի, ցուցադրական ելույթները և ասպարեզից հեռացնել նրանց կազմակերպիչներին ու ղեկավարներին, քանի որ մինչև այժմ հայկական այդպիսի շարժումները ոչ միայն չեն հասել իրենց նպատակին, այլև ավելի են վատթարացրել ազգի վիճակը[4]։ Նա քննադատում էր դաշնակցականներին, նշելով, որ «մեր անդրդվելի համոզումն է, թե դաշնակցականները Հայաստանը ավելի պիտի Թշվառացնեն իրենց գործունեության եղանակներով»[5]։ Հեգնում էր նրանց, հայտարարելով՝ «Աստված ողորմի հայոց ազգին, որ ասանկ խղճալի առաջնորդներ ունի»[6]։ Նա մերժում էր հնչակյաններին, մերկացնում մասնավորապես վերակազմյալներին։ Դատապարտելով չեզոքներին նշում էր, թե նրանք իրենց պասիվությամբ, «իրենց սպասողական երկչոտ ու տարտամ մեկուսացումով» սպանում են ազատագրական ձեռնարկումները։ «... ամեն ազնիվ հայ պետք է որ իրեն համար նախատինք նկատե չեզոք մակդիրը»[7]։

Ա. Արփիարյանը կոչ էր անում վերջ տալ ներազգային Թշնամություններին, իրար չեզոքացնելու, մերկացնելու մրցակցություններին կամ գերիշխելու ձգտումներին։ Անհրաժեշտ է համախմբել ազգային ուժերը և հավաքական ու միասնական կերպով հանդես գալ Թշնամու դեմ։ «Մեզի սպառնացող վտանգը ոչ թե հիմակվան կացության դժվարություններուն մեջ կտես-

1 Տե՛ս Ազատագրական գաղափարները..., էջ 292։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 293։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս «Լուսաբեր», 1905, ապրիլի 25 (№ 60)։
5 «Արաքս», 1907, № 1, էջ 20։
6 Նույն տեղը, էջ 23։
7 «Լուսաբեր», 1905, հոկտեմբերի 14 (№ 132)։

ննենք, այլ՝ իրար չեզոքացնելու մրցակցության մեջ»[1]։ Եվ հետո. «Ուժերու բաժան-բաժան անջատումն ինչ բարիք ակնկալելի պաշտպանություն Հայաստանի շահերուն։ Շատ չարիք կրնանք վախնալ, բայց անհնարին է բարիք հուսալ»[2]։

Ա. Արփիարյանի կարծիքով, հեղափոխական ելույթները ոչ թե պետք է դադարեցնել, այլ նախապատրաստել և գործի դնել այն ժամանակ, երբ դրա համար նպաստավոր պայմաններ կլինեն։ Անհրաժեշտ է ամենուրեք և միշտ առաջ մղել հայկական դատը, սակայն իմանալով, թե «ինչպես, որտեղ և երբ...»[3]։ Նա քարոզում էր, որ ժողովուրդը հեղուբյամբ չտանի ստրկական լուծը, այլ թոթափի այն։ Եթե պայմանները ներեն, ժողովուրդը կարող է թոթափել այդ լուծը խաղաղ ճանապարհով, «անուշ լեզվով»[4], իսկ եթե ոչ՝ ըմբոստությամբ, ապըստամբությամբ։ «Ամեն անհատ իր մեջը կրած ըմբոստացման զգացումովն է, որ բան մը կարժե, ըսած են։ Նմանապես ժողովուրդներն ալ...»[5]։

Մի խոսքով, Ա. Արփիարյանը գտնում էր, որ արևմտահայությունը իր ազատագրման համար պետք է գործի և՛ անուշ լեզվով, և՛ մահակով։ «Անգլիացիները կրսեն,— գրում էր նա,— թե «անուշ լեզու եղիր և ձեռքդ բիր մը բռնե, հեռուները կերթաս»։ Հին անցյալի մը մեջ թուրքերուն հետ շատ անուշ լեզու եղանք, բայց որևէ հաջողություն ձեռք չբերինք, վասնզի ձեռքերնիս բիր մը չկար։ Ետքեն, բիր մը ունեցանք, սակայն այն ատեն ալ անուշ լեզու չեղանք»[6]։ Այժմ հարկավոր է գործել այնպես, որ լինի «լեզուն անուշ բիրն ամուր»։ Այդ դեպքում արևմտահայությունը «իր վիճակը քիչ շատ բարվոքելու վստահություն կրնա ունենալ...»[7]։

Այդպիսով, Ա. Արփիարյանի հասարակական-քաղաքական հայացքներում՝ թե՛ անկուսակցական, թե՛ կուսակցական տարիներին կային ընդհանրություններ. երկու շրջաններում էլ արևմտահայության ազատագրումը կապում էր տերությունների հետ,

1 «Ազատագրական գաղափարները..., էջ 293։
2 Նույն տեղը։
3 Տե՛ս «Լուսաբեր», 1905, ապրիլի 25 (№ 60)։
4 Տե՛ս Ազատագրական գաղափարները..., էջ 296։
5 Նույն տեղը, էջ 295։
6 Նույն տեղը, էջ 296։
7 Տե՛ս նույն տեղը։

Հայկական հարցի լուծումը տեսնում էր Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի, ավելի ճիշտ՝ 1895 թ. Մայիսյան ռեֆորմների կենսագործման մեջ, մտցնելով, իհարկե, որոշ բարեփոխումներ։ Երկու շրջաններում էլ չէր ընդունում արևմտահայության բաժանումը դասակարգերի, մերժում էր ցուցարարական, մասնակի ելույթները, քարոզում էր համազգային ուժերի համախմբում, համազգային հեղափոխության նախապատրաստում։

Բայց հրապարակախոսի հասարակական-քաղաքական հայացքներում կային նաև տարբերություններ. եթե կուսակցական շրջանում Հայկական հարցի լուծումն ու արևմտահայության ազատագրումը կապում էր արևմտաեվրոպական տերությունների օգնության, ապա անկուսակցական շրջանում՝ Անգլիայի ու Ռուսաստանի, գլխավորապես Ռուսաստանի, հեղափոխական Ռուսաստանի աջակցության հետ։ Դա, անշուշտ, խիստ կարևոր շրջադարձ էր, քանի որ այդ վերակառուցման հետ միասին փոխվում էին նաև հեղինակի մի շարք այլ հայացքները։ Եթե նա մերժում էր սոցիալ-դեմոկրատական կամ, ինչպես ինքն էր ասում, ընկերվարական թեզերը, ապա այժմ համակրանքով էր խոսում դրանց մասին, ընդհուպ մինչև հայտարարելով, որ պետք է ուսումնասիրել Կ. Մարքսին։

Կուսակցական շրջանում հրապարակախոսը գտնում էր, որ արևելահայերը չպետք է միջամտեն արևմտահայերի ազատագրման հարցերին, բայց 1905 թ. հեղափոխության տարիներին արդեն անհնար էր համարում նրանց ազատագրումը, առանց արևելահայերի ակտիվ աջակցության։

Եթե կուսակցական շրջանում նա մերժում էր հողևորականության դերն ու նշանակությունն արևմտահայ կյանքում, ապա անկուսակցական շրջանում գնահատում էր նրան, նշելով, որ այն կարևոր դեր է խաղում ազգապահպանման գործում։

Ա. Արփիարյանը քաջալերում էր հայ գրամատերերի առևտրաարդյունաբերական ձեռնարկումները Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում, մատնանշում էր արհեստավորների ու բանվորների ճնշումը կապիտալիստների կողմից, ցույց էր տալիս, որ նրանց կարելի է ազատագրել միայն կապիտալիստների հախեն գալով[1], բայց լռում էր կամ համարյա լռում էր այն-

1 Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 4, եր., 1972, էջ 404։

պիսի կենսական հարցի մասին, ինչպիսին արևմտահայության ճնշող մեծամասնությանը հուզող հողային հարցն էր։

* * *

Արևմտահայության ազատագրական պայքարի անխոնջ քաջագովներից էր նաև Արշակ Չոպանյանը[1]։ Իր բուրժուադեմոկրատական հրապարակախոսական ստեղծագործություններում նա հաճախ անդրադառնում էր արևմտահայության կացությանը և նշում, որ այն 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից առաջ համեմատաբար տանելի էր։ Կ. Պոլսում հայերը կառուցում էին պալատներ, կուլտուր-կրթական հաստատություններ, թարգմանում էին եվրոպական դասականներին, ստեղծում էին ազգային գործեր, գավառներում բացում էին դպրոցներ, տարածում գիր ու գրականություն։ Գյուղացիներն ունեին հողա-

1 Գրականության մեջ վկայություն կա այն մասին, որ նա եղել է վերակազմյալ հնչակյան կուսակցության անդամ (Տե՛ս «Արմենիա», 1902, մարտի 12, «Մշակ», 1906, դեկտեմբերի 30 (№ 286), «Լուսաբեր», 1907, նոյեմբերի 5 (№ 441), 1908, հունվարի 16 (№ 472), հունվարի 25 (№ 475)։ Սակայն ինքը համառորեն հերքում էր դա և համարում իրեն անկուսակցական։ 1900 թ. նա գրում էր. «Տասն անգամ հայտարարած եմ, թե ոչ անցյալին մեջ, ոչ ներկայիս մեջ որևէ կուսակցության չեմ պատկանած ու չեմ պատկանիր ու ասոր հակառակը ոչ ոք կրնա փաստով հաստատել» («Անահիտ», 1900, № 3, էջ 95)։ Ապա շարունակում էր, որ վերակազմյալների օրգաններում, իրավ է, հրատարակել է հոդվածներ, բայց ոչ որպես կուսակցական, այլ որպես գրող։

Մեկ տարի անց Ա. Չոպանյանը նորից է անդրադառնում այդ հարցին և գրում, թե ինքը չի դատապարտում կուսակցություններին և նրանց անդամագրվելը, «միայն թե պարզ իրողություն մըն է, որ ոչ դրոշակյան և ոչ հնչակյան անդամ չեմ եղած երբեք...» («Անահիտ», 1901, № 2, էջ 34)։

Դեռ 90-ական թվականներին Ա. Արփիարյանը նրան առաջարկել է մտնել վերակազմյալների շարքերը, սակայն նա հրաժարվել էր։ Ընդհակառակը՝ ինքն է խորհուրդ տվել Ա. Արփիարյանին հեռանալ կուսակցությունից և գործել որպես անկուսակցական, բայց նա չի ունկնդրել այդ խորհուրդը (նույն տեղը, էջ 42)։

Ա. Չոպանյանն անկուսակցական էր համարում նաև իր «Անահիտ» ամսաթերթը, որի հրատարակմանը ձեռնամուխ եղավ Փարիզում 1898 թ. նոյեմբերից։ Նա հայտարարում էր, որ իր պարբերականը չի հետևում ոչ «Արմենիային», և ոչ էլ «Մարտին», այլ «բացարձակապես անկախ, անհատական օրգան մըն է,— կուզեմ, որ ասի վերջնապես հասկցվի» («Անահիտ», 1900, № 3, էջ 95)։

յին տարածքներ, մի շարք տեղերում, հատկապես Մեծ Հայքում, նրանց «կացությունը գոհացուցիչ կողմեր ուներ և չափազանց լավագույնն էր հիմիկվանենն»[1]։ Միաժամանակ ավելացնում էր, թե չպետք է կարծել, որ այդ շրջանում հայն ապրում էր երջանկության մեջ, ընդհակառակը՝ «թուրքին գարշապարը միշտ անոր գլխուն վրա էր», նա ստրկացված էր տիրակալների կողմից, կաշկանդված ու ճնշված զանազան բռնություններով[2]։

Ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ Ներսես Վարժապետյանը սկսեց բողոքել թուրքական հալածանքների դեմ և հանավ Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածի ստեղծմանը, հիմք դրվեց հայկական կոտորածներին։ Հետագայում հայ ներկայացուցիչները ավելի վատթարացրին վիճակը, երբ, թողնելով միայն Ռուսաստանին ապավինելը, դիմեցին բոլոր տերություններին, որոնք Բեռլինի կոնգրեսում ձևակերպեցին աղետաբեր 61-րդ հոդվածը։ Նրանք կարծում էին, թե իրենք կհասնեն այն բանին, որ արևմտաեվրոպական տերությունները հայերին կշնորհեն «թագավորություն մը, Ռուսին առջև պատնեշ կանգնելու համար»[3], բայց ոչինչ չստացան, իսկ սուլթանը միջոցներ մշակեց վերջնականապես «հային ջախջախելու համար»[4]։ Սկսվեցին պարբերական ջարդերը։

Ա. Չոպանյանն այնուհետև նշում էր, թե հայ գործիչները փոխանակ ողջամտություն ցուցաբերելու և սխալ ուղուց հետ կանգնելու, կատարեցին նորանոր անխոհեմ քայլեր և դրանով ավելի բարդացրին իրավիճակը։ Պրուսալին ու Սրվազլին ձեռնամուխ եղան Լոնդոնում «Հայաստան», իսկ Մ. Չերազը՝ Փարիզում «Լա Արմենիա» պարբերականների հրատարակմանը, կամենալով տերություններին հիշեցնել հայկական բարենորոգումների կենսագործումը։ Րաֆֆին սկսեց պրոպագանդել գործնական հիմք չունեցող ընդհանուր հեղափոխություն, երիտասարդության ուշադրությունը հրավիրելով մեծ Հայաստան ստեղծելու վրա։ Նա պահանջում էր հարվածին պատասխանել հարվածով, «բայց չէր հասկցած կացությունը, չէր հասկցած, թե ահարկու թշնամիի մը դիմաց տկարը ստիպված է ինք զին-

1 Տե՛ս «Անահիտ», 1899, № 3, էջ 87։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 88։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 90։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 93։

քը խորամանկությամբ պահպանել, քե ատիկա կյանքի տարբրական մեկ օրենքն է»[1]։

Այնուհետև երևան եկան հնչակյանները, որոնք, կապելով հայոց ազատությունն ընդհանուր մարդկության ազատության հետ, կամեցան նախապես թոթափել թուրքական, ապա պարզկական և, վերջապես, ցարական լուծը։ Դրանով նրանք կատաղեցրին քե սուլթանին, և քե ցարին հայերի դեմ։

Հնչակյաններին հաջորդեցին դաշնակցականները, որոնք իրենց գործելակերպով ավելի շիկացրին մթնոլորտը[2]։ Արդյունքում՝ արևմտահայերի պարբերական ջարդերը վերածվեցին զանգվածային կոտորածների և կործանվեցին տասնյակ ու հարյուր հազարավոր մարդիկ։

Հրապարակախոսը նշում է, քե հայկական շարժման գեկավարները այդ սարսափների տարիներին մի գիշեր անգամ չանգկացրին անքուն։ Ընդհակառակը, նրանք հրճվեցին, բացականչելով, քե «հայ ժողովուրդը, վերջապես, արթնացավ», «սուլթանը զգաց հայուն ուժը» և այլն։ Ովքեր ցավ էին ապրում կոտորածներով, համարվում էին «լալկաններ», «ներքինիներ», «պառավներ», իսկ ովքեր քնադատում էին գեկավարների վարքագիծը, անվանվում էին «ազգի դավաճաններ»։ Մատնանշվում էր, քե ուրիշ ժողովուրդներ իրենց ազատության համար ավելի շատ զոհեր են տվել[3]։

Սակայն մյուս կողմից Ա. Չոպանյանը նշում էր, որ հայկական ջարդերի պատճառը եղել են ոչ քե հայկական ընդվզումները, ազատագրական ելույթները, այլ սուլթանական կառավարության քաղաքականությունը։ «Ես երբեք չեմ ըսած,— գրում էր նա,— որ հայ հեղափոխական շարժումները եղան հայկական ջարդերուն «հիմնական պատճառը». Թուրք կառավարությունը վերջին ռուս-թուրքական պատերազմեն ի վեր ծրագրած է հայ ժողովուրդը տկարացնելու և անոր «ազատության տարրերը» ջնջելու ծրագիրը։ Բայց Թուրք կառավարությունը երբեք պիտի չհամարձակեր մեծաքանակ կոտորածներուն հրամանը տալու, եթե Սասունի, Պոլսո և Վանի «կազմակերպված» ցույցերը տեղի ունեցած չըլլային, այնպես, որ այդ ցույցերը ատիք ավին, «պատրվակ եղան» ջարդերուն իրագործմանը»[1]։

Հեղինակը հայտարարում է, որ ինքն այն կարծիքին չէ, քե հայ ժողովուրդը պետք է մնար ստրկացված, խոնարհ ու հնազանդ տաներ ամեն մի բռնություն ու կեղեքում։ Բայց գտնում է, որ նա, որքան էլ թուրքական պայմաններն անտանելի էին, «կրնար դեռ սպասել, պատրաստվիլ, զորանալ, կազմակերպվիլ և քաղաքական հարմար վայրկյանի մը՝ մեջտեղ նետվիլ իր ազատագրումը ձեռք ձգելու համար»[2]։

Ա. Չոպանյանը կանգ էր առնում նաև հայ կուսակցությունների ծրագրային ու պրակտիկ գործունեության վրա 1890-ական թվականների կոտորածներից հետո ընկած ժամանակաշրջանում։ Նա մերժում էր «Հնչակի» քարոզած սոցիալիզմը կամ, ինչպես ինքն էր ասում, ընկերվարությունը, համարելով այն անհամատեղելի ու վնասակար արևմտահայության համար։ Սոցիալիզմը համամարդկային «հարց մըն է», իսկ հայկական խընդիրը «հայ ժողովրդի համար բաղձանք է ունենալ աշխարհիս մեջ անկյուն մը, ուր հայ ցեղը իբրև ազատ և ինքնուրույն ցեղ կարենա ապրիլ ու զարգանալ, «հայկական խնդիրը» հայ ժողովրդին համար իսկականապես «ազգայնական» խնդիր մըն է»[3]։

Նա գտնում էր, որ հայը պետք է «նախ իր ճիգը կենտրոնացնե իր «ազգությունը» փրկելու և հետո՝ ազատ ազգ մը ձևանալեն ետքը՝ կրնա ընկերական պայքարին անցնիլ»[4]։

Այդ ձևակերպման մեջ Ա. Չոպանյանը, թվում է, քե չէր հրաժարվում ընկերվարության գաղափարից։ Սակայն հետագայում նա ոչ միայն հրաժարվում էր, այլև խնդիր էր դնում, որ պետք է պայքարել նրա դեմ, կանխել, որ այն չտարածվի հայ իրականության մեջ։ 1906 թ. գրում էր, որ «եթե ընկերվարական հոսանքը տարածվի հայոց մեջ, մեր ազգային դատը կո-

1 Տե՛ս «Անահիտ», 1899, № 3, էջ 95։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 98։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 85։

1 «Անահիտ», 1899, № 2, էջ 393—394։ Մի այլ առիթով Ա. Չոպանյանն ասում էր. «Այսօր ամեն մարդ համոզված է..., քե ջարդերը կանոնավորապես կազմակերպված էին՝ դեռ հայերը բողոքի շարժում մը չհարուցած, և քե նույնիսկ սուլթանին հրամանով կատարվեցան» (Ազատագրական գաղափարները..., էջ 333)։

2 Տե՛ս նույն տեղը, № 12, էջ 393—394։

3 Նույն տեղը, էջ 395։

4 Տե՛ս նույն տեղը։

րած է»[1]։ «Անհրաժեշտ է, սակայն, որ ընկերվարությունը տիրապետող տարրը չըլլա մեր հեղափոխական կուսակցությանց ծրագրին, ձգտումներուն և գործադրության մեջ»[2], որովհետև «ընկերվարականությունը պիտի չիրագործե մարդկային «բացարձակ» հավասարությունը, ուրեմն և ընկերվարական բեժիմն ալ պիտի շարունակե ըլլալ «մարմնացած անարդարություն»։ Ընկերվարությունը թեև ուզում է վերացնել աղքատությունը, բայց նրա «գործնականությունը վարկածային է»[3]։

Ա. Զոպանյանը վերլուծում էր հին ու վերակազմյալ հընչակյանների տարաձայնությունները և վեր հանում նրանց միջև եղած սկզբունքային տարբերությունները։ Ցույց էր տալիս, որ հին հնչակյանները քարոզում են ընկերվարություն և դրանով հեռացնում հեղափոխությունից ոչ ընկերվարականներին, պառակտում ազգի միասնությունը, մինչդեռ վերակազմյալները հրաժարվում են ընկերվարությունից և միավորում են ազգային ուժերը։ Առաջիններն իրենց ընկերվարական քարոզներով խրտնեցնում են եվրոպային հայկական դատից, մինչդեռ երկրորդները, հանելով իրենց ծրագրից ընկերվարությունը, մոտեցնում են տերություններին այդ դատին։ Հին հնչակյանները ընկերվարական թեզերով հայկական դատից վանում են նաև Ռուսաստանին։ Ցարիզմը, ունկնդրելով նրանց գաղափարներին, նայում է հայոց վրա իբրև «իր շահերուն ոխերիմ թշնամի», մինչդեռ վերակազմյալ հնչակյանները իրենց վարքագծով համենայն դեպս չեզոքացնում են այդ թշնամությունը։ Այդ վերլուծություններից հետո հեղինակը մերժում էր հին հնչակյաններին և պաշտպանում վերակազմյալների դիրքորոշումը[4]։

Ա. Զոպանյանը ճիշտ չէր համարում արևմտահայության դասակարգերի բաժանման ընդգծումը և դատապարտում էր նրանց, ովքեր հասարակության մի մասին բորբոքում էին մյուսի դեմ։ «Մեզի պես ամեն բան կորսնցուցած ու ազգային գոյության մը հիմունքը հաստատել ճգնող ազգի մը մեջ,— գրում էր նա,— հրապարակագիրը պետք է, որ դասակարգերու միջև բուռն անջատումներ չփորե»[5]։ Նա այդ բանն անելու իրավունք

1 «Անահիտ», 1906, № 8—9, էջ 190։
2 Նույն տեղը, № 10—12, էջ 230։
3 Տե՛ս նույն տեղը, 1907, № 1—2, էջ 44։
4 Տե՛ս նույն տեղը, 1903, № 8, էջ 8։
5 Նույն տեղը, 1901, № 2, էջ 47։

չունի, քանի որ «տաճկահայ հասարակությունը իր «բոլոր» դասակարգերովը կտառապի կամայական, անկայուն, բարբարոս բեժիմի մը ներքև, «ստրկական» գոյության մը դատապարտված...»[1]։ Ընդհակառակը՝ մտավորականները պարտավոր են ներդաշնակություն քարոզել ազգի տարբեր խավերի միջև, ձգտելով հասնել նրանց համախմբմանը, համաձայնմանը և թշնամու դեմ միասնական ճակատի ստեղծմանը։ Միաժամանակ նրանք պետք է ցույց տան, թե հասարակության որ խավը ինչ ֆունկցիա է իրագործելու այդ դժվարին ճանապարհին։

Ա. Զոպանյանը քննադատում էր նաև դաշնակցականներին, գտնելով, որ նրանք աղետաբեր եղան ազգի համար։ Դեռ 1897 թ. նոյեմբերի 8-ին Փարիզից Ապահ Պետրոսյանին[2] ուղարկած նամակում գրում էր, որ դաշնակցականները իրենց ցուցադրական կռիվներով մեծ չարիք պատճառեցին ժողովրդին։ Այժմ «ամենուս ալ պարտքն է ուրեմն ամեն կրցածնիս ընել, որ դաշնակյանները անկարող դառնան նորեն չարիք հասցնելու... պետք է զրոշակյաններուն մեջեն անկեղծ ու միամիտ աղնիվ տղաքը, խաբվածները համոզել և ուղիղ ճամփու դարձնել, իսկ շահագործողներուն, զուտ սրիկաներուն դեմ մաքառիլ, մեղք է ժողովուրդը»[3]։

Երկու տարի անց՝ 1899 թ. նա նշում էր, որ դաշնակցականները դաս չքաղեցին հնչակյանների գործելակերպից և շարունակեցին նրանց սխալները։ «Ներանց բանք Օտտոմանի ցույցը քաղաքական սխալ մըն էր և անօգուտ զոհողություն մը»։ Դաշնակցության ժնևի ու Թիֆլիսի պարագլուխները պետք է գիտենային, որ «այդ ցույցը հաղարավոր հայերու մահվան պատճառ պիտի ըլլար»[4]։ Ապա խնդիր էր դնում, որ պետք է դադարեցնել ցուցարարական կռիվները։ «Եթե մենք,— գրում էր նա,— շարունակենք այն ճամբան, որով քալեցինք մինչ այսօր, մեր ցեղին բացարձակ ջախջախումը ձեռք պիտի ձգենք... եթե մեր ժողովուրդը այս պարղ ճշմարտությունը չըմբռնե, մենք դատապարտված ենք ջնջվելու սուրով ու ձուլումով»[5]։

1 «Անահիտ», 1903, № 8, էջ 8։
2 Ապահ Պետրոսյան (Ավետիս Գմգմյան) (1872—1928)— Հնչակյան գործիչ, Չեյթունի ապստամբության կազմակերպիչներից ու ղեկավարներից։
3 Ա. Զոպանյան, Նամականի, Եր., 1980, էջ 52։
4 Տե՛ս «Անահիտ», 1899, № 12, էջ 396։
5 Նույն տեղը, № 7, էջ 226։

Ա. Չոպանյանի կարծիքով, գաղնակցությունը չի կարող լինել և ազգային, և բանվորական, քանի որ, պաշտպանելով ազգի շահերը, պիտի պաշտպանի նաև կապիտալիստների շահերը, իսկ պաշտպանելով բանվորների շահերը, պիտի պայքարի ազգային բուրժուազիայի դեմ։ Եթե կուսակցությունը քայլի ազգային ու բանվորական համատեղ ճանապարհով, ինքն իրեն կդնի «շփոթ ու անճիշտ դիրքի մը մեջ» և մինչև վերջ կդատապարտվի պառակտման։ Իսկ որպեսզի դա տեղի չունենա, դաշնակցությունը պարտավոր է լինել միայն ազգային, համախմբելով իր շուրջը թե՛ բանվորին ու գյուղացուն, թե՛ կապիտալիստին ու կղերին։ Արտահայտելով բոլորի շահերը, նա պետք է զարկ տա ազգային լեզվի, մշակույթի զարգացմանը, պաշտպանի արևելահայերի իրավունքներն ու արևմտահայերի դատը։ «Ազգային կուսակցություն մը ասկե դուրս բան չունի բնելու»[1]։

Մերժելով կուսակցությունների վարքագիծը, Ա. Չոպանյանը, սակայն, գնահատում էր նրանց ղեկավարությամբ կամ մասնակցությամբ տեղի ունեցած ժողովրդական ելույթները, նրանց կուսակից կամ ոչ անդամակից անհատների սխրագործությունները։ Այսպես, Սասունի, Զեյթունի, Գում-Գափուի, Պարլը-Ալիի դեպքերը նա բնութագրում էր «իբրև նվիրական օրեր, իբրև այն օրերը, ուր հայկական ցեղը՝ դարավոր անդամալուծութենեն հետո՝ վերադարձումի առաջին խելահեղ ցրեցումներն ունեցավ»[2]։ Անհրաժեշտ է հիշել բոլոր նրանց, ովքեր «մեղի համար մեռան»[3]։ Ժիրայրին բնութագրում է որպես «հոմերական տիպար»[4]։ Աղբյուր Սերոբն արժանի է «ոչ միայն հարգանքի, այլև հիացման։ Այդ բաղեշցի հայը նկարագիր մըն էր, ապստամբ ու անվախ հոգի մը, Բաֆֆի Սահրատը իրականացնող տիպար մը»[5]։ Մ. Ավետիսյանին (Թերլեմեզյան) ու նրա զինակիցներին համարում էր ցեղի պատիվն ու գեղեցկությունը, որոնք «գաղափարի մը հաղթանակի համար դիտցան մահը արհամարհել»[6]։ Բոլոր նրանք, ովքեր «կյանքերնին վտանգելով սահմանագլուխը կանցնին և Տաճկական Հայաստանի իրենց եղբայրներուն օգնելու կերթան, ուրիշ բան չեն կրնար ներշնչել, բայց եթե հարգանք և հիացում»[1]։

Ա. Չոպանյանը պատեհ առիթով քննադատում էր լուսավորչական եկեղեցուն, բայց և գտնում էր, որ այն ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում օգտակար գործ է կատարում։ Նա բնութագրում էր եկեղեցուն «իբրև ազգապահպան ուժ մը...», ազգային «գրականության կազմակերպիչը, զարգացուցիչը... մտավոր կյանքի մեծագույն վառարանը...»[2]։ Հրապարակախոսը ցանկանում էր, որ Ամենայն հայոց կաթողիկոսը հետու մնա կուսակցություններից, լինի «ազգի մարդ», հաշտեցնի հայ հասարակության տարբեր խավերին, ներդաշնակի ու համախմբի բոլոր հայերին[3]։

«Անահիտի» խմբագիրն անդրադառնում էր նաև հարևան ժողովուրդներին և դրսևորում իր վերաբերմունքը նրանց նկատմամբ։ Նա մերժում էր երիտթուրքերի հակահայկական թեզերը։ Դեռ 1900 թ. հակահարված տվեց Ահմեդ Ռիզա բեյի այն հայտարարությանը, որ իբր Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդները հավասարապես տառապում են համիդյան բռնություններից ու ճնշումներից և նշեց, որ հայերը «կտառապին կրկնապես»[4]։ Ապա բողոքեց երիտթուրքական պարագլխի այն պնդման դեմ, որ կարիք չկա զբաղվել հատուկ հայերով, քանզի Հայաստան գոյություն չունի, որ նրանք ցրված են կայսրությունով մեկ, որ նրանց վիճակը կբարելավվի, եթե երկրի բոլոր ժողովուրդների համար բարենորոգումներ անցկացվեն։

Հրապարակախոսը ցույց էր տալիս, թե սխալ է ասել Հայաստան չկա։ Թեև այն զրկված է ինքնուրույնությունից և բնակած սուլթանական բռնակալների տիրապետության տակ, բայց և այնպես կա բարոյական Հայաստան, որը բարենպաստ պայմաններում կդառնա «իրական Հայաստան»։ Ապա նշում էր, որ հայերն ուզում են ոչ միայն կյանքի ու գույքի ապահովություն, այլև այնպիսի պայմաններ, որոնցով իրենք իրենց իսկ «ձեռքով կարող ըլլան իրենց զավակներուն կյանքն ու ինչքը պաշտպա-

1 «Անահիտ», 1906, № 8—9, էջ 179։
2 Տե՛ս նույն տեղը 1901, № 3, էջ 86։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 83։
4 Տե՛ս նույն տեղը։
5 Տե՛ս նույն տեղը, 1899, № 1—2, էջ 45։
6 Տե՛ս նույն տեղը, № 12, էջ 397։

1 Տե՛ս «Անահիտ», 1900, № 5—8, էջ 88։
2 Տե՛ս նույն տեղը, 1910, № 11—12, էջ 241։
3 Տե՛ս նույն տեղը, 1909, № 1—2, էջ 8։
4 Տե՛ս նույն տեղը, 1900, № 9—11, էջ 235։

նել»։ Ավելին՝ հայերն արժանի են «իբրև ինքնուրույն ժողովուրդ ապրելու իրավունք ունենալու»[1]։

Ա. Չոպանյանը հավանություն տվեց երիտթուրքական ներկայացուցիչ Իսմայիլ Քեմալ բեյի այն դրույթին, որ «Բեռլինի դաշնագրին պայմաններուն անդործադրությունը օրինազանցություն մը կկազմե», որ Օսմանյան կայսրությունը պետք է այնպես վերակառուցել, որ ամեն մի ազգություն կարողանա «հանգիստ ապրիլ և իր աշխատության արդյունքը վայելել»[2]։ Հրապարակախոսը գտնում էր, որ եթե երիտթուրքական շարժումը ընթանա այդ ոգով, ապա Իսմայիլ Քեմալ բեյի «այս հայտարարությունը թվական մը կբանա երիտթուրքերու գործունեության մեջ»[3]։

Ա. Չոպանյանը տարբերում էր կառավարություններին ժողովուրդներից և, դատափետելով տիրակալների բռնակալական քաղաքականությունը, կարեկցանքով էր խոսում նրանց իշխանության տակ ընկած զանգվածների, այդ թվում նաև թուրքերի մասին։ 1906 թ. նա գրում էր, որ ինքը ատելություն չունի թուրք ժողովրդի դեմ. «Ոչ մեկ ցեղ ատելու չէ մարդ։ Թուրքն ալ օր մը պիտի ըլլա քաղաքակիրթ ազգ մը... երբ պիտի գա այդ օրը։ Չեմ գիտեր... կմտածեմ սակայն, թե այսօր այդ ցեղը հետամնաց է դեռ և բարբարոս, իմ ցեղս անոր գարշապարներուն տակ կգալարվի, և եթե մեր առաջին գործն է մեր ցեղը ճողպրել այդ կոխոտումեն, հետո, երբ ազատած ըլլանք, մենք իսկ պիտի օգնենք թուրքին մտավոր ու բարոյական վերականգնման... մեր պատմական պաշտոնն է ատիկա. մեր... շահը կպահանջե արդեն, որ մեր դրացի բոլոր ցեղերը քաղաքակրթվին»[4]։ Մենք պետք է նպաստենք արաբների ու այլ մահմեդականների ազատագրության գործին, «պետք է ջանանք պարսիկներուն հետ ալ բարեկամություն հաստատել»[5], պետք է ձգտենք վրացիներին էլ «մեզի բարեկամ դարձնել»[6]։

Ա. Չոպանյանը հատուկ նշանակություն էր տալիս հայ-քրդական բարեկամության ու դաշնակցության հարցին։ Նա մերժում էր այն կարծիքը, թե բոլոր քրդերը ոճրագործներ են, ցույց էր տալիս, որ հայերի իսկական թշնամին սուլթանական կառավարությունն է, որը քրդերին հանելով հայերի դեմ, երկուսին էլ ստրկացրել է։ Այժմ նրանց շահերը պահանջում են, որ դաշնակցեն իրար հետ և համատեղ ուժերով դուրս գան Համիդյան ռեժիմի դեմ։ Այդ նպատակին հասնելու համար հրապարակախոսը կապեր հաստատեց Կահիրեի «Քուրդիստան» թերթի խմբագիր Աբդյուրրահման բեյի հետ։ Վերջինս ողջունելով Ա. Չոպանյանի այդ քայլը, ինքն էլ սկսեց ձեռնամուխ լինել երկու ժողովուրդների մերձեցման և դաշնակցության ամրապնդման գործին։ 1900 թ. դեկտեմբերի 14-ին նա տեղեկություններ հաղորդելով «Անահիտի» խմբագրությանը իր պարբերականի մասին, միաժամանակ ավելացնում էր. «Գիտեմ թե քյուրդերուն և թե հայերուն շահը միևնույնն է և ասոր համար էլ, որ ես միշտ ուզած եմ լրագրիս միջոցով ջնջել այն ատելությունը, որ գոյացած է այս երկու ժողովուրդներուն մեջ... «Քուրդիստանի» մեջ քրդերեն լեզվով հրատարակված հոդվածները ատոր վկա են... ամեն տեսակ զոհողություն պիտի ընեմ ջնջելու համար այն ատելությունը, զոր Աբդուլ Համիդ այս երկու ժողովուրդներուն միջև դրած է»[1]։ Այդպես հիմք դնելով համագործակցությանը, Ա. Չոպանյանը «Անահիտում» հրատարակում էր քրդամետ, իսկ Աբդյուրրահմանը իր «Քուրդիստանում»՝ հայամետ նյութեր։

Ուշագրավ է, որ Ա. Արփիարյանը, ծանոթանալով այդ նյութերին, հանդես եկավ Ա. Չոպանյանի դեմ, հայտարարելով, որ անհնար է որևէ համաձայնություն քրդերի հետ, քանզի նրանք բոլորը արյունարբու ավազակներ են։ Ուստի Եվրոպայում կամ հայկական աշխարհում քրդերի նկատմամբ համակրանք առաջացնելը «միմիայն վնաս կրնա բերել հայկական դատին»[2]։ Ա. Չոպանյանը խստորեն առարկեց Ա. Արփիարյանին և ավելացրեց, որ նա, խուսափելով քրդերի հետ համագործակցելուց, «չքեղ ապացույց մը կուտա անդուգական թեթևամտության...»[3]։

Ա. Չոպանյանը զոհունակություն հայտնեց, երբ դաշնակ-

1 Տե՛ս «Անահիտ», 1900, № 9—11, էջ 233։
2 Տե՛ս նույն տեղը, 1901, № 10—11, էջ 273։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 272։
4 Նույն տեղը, 1906, № 3—5, էջ 73։
5 Տե՛ս նույն տեղը, էջ 71։
6 Տե՛ս նույն տեղը, էջ 78։

1 «Անահիտ», 1900, № 4—5, էջ 132։
2 Տե՛ս նույն տեղը, 1901, № 2, էջ 33։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 34։

ցության «Դրոշակը» նույնպես սկսեց նյութեր հրապարակել հայ-քրդական համագործակցության մասին։ «Ես շատ ուրախ եմ,— գրում էր նա,— որ հայ հեղափոխական դաշնակցությունը այդքան լրջորեն կսկսէ զբաղվիլ այդ շատ կարևոր խնդրով»[1]։

Հրապարակախոսը իր պարբերականում տեղեկություններ էր հրապարակում նաև հայերի մյուս հարևանների՝ թաթերի, լազերի, չերքեզների, չեչենների ու այլոց մասին, կամենալով նրանց միջև նույնպես հաստատել բարիդրացիական հարաբերություններ[2]։

Ա. Չոպանյանը այնուհետև ծանրանում էր արևմտահայության ազատագրության հարցի վրա։ Նա գտնում էր, որ կատարածներից արնաքամ եղած ժողովուրդը այսօր անկարող է կրկին ապստամբվել և սեփական ուժերով հասնել իր նպատակին։ Նրա փրկության հույսը կապում էր առաջին հերթին արտաքին ուժերի, գլխավորապես Ռուսաստանի հետ։ Դեռ 1900 թ. հրապարակախոսը գրում էր, որ «... մեր ապագային վճռումին մեջ Ռուսիան ճակատագրականապես սահմանված է ամենամեծ դեր մը կատարելու»[3]։ 1903 թ. նա շարունակում էր, թե «... հակառակ Ռուսիո անկարելի է Թրքական Հայաստանի մեջ 1895-ի մեմուրանտումը գործադրել տալ»[4]։

Ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության տարիներին Ա. Չոպանյանն ավելի համոզվեց, որ հայերն իրենց գոյապահպանումը, իրենց խնդրի լուծումը պիտի կապեն Ռուսաստանի հետ։ Ընդ որում ռուս ասելով հասկանում էր ոչ միայն, և ոչ այնքան, ցարական վայրագ պաշտոնյաներին, որքան առաջադեմ, լուսավորված մտավորականներին։ «Ապուշություն է «ռուս» բսելով,— գրում էր հրապարակախոսը 1906 թ.,— չինովնիկները, քնութը, սեպիրյան կախաղանը և բանտերը միայն տեսնել. ատոնք բոլորը ռուս բեժիմին բացասական կողմն են... «ռուս» բսելով ես կհասկնամ ամեն ինչ, որ ռուս է, Կոկոլը, Տոսթոևսկին, Թուրկենևիը, Թոլսթոյը, Կորքին, որոնք մտավորական բարեկամներ են ամբողջ մարդկության համար... կհասկնամ ռուս գործության կատարած անուրանալիորեն դեղեցիկ ու մարդօգուտ դերը... կհասկնամ ռուս գիտությունը, գեղարվեստը, կհասկնամ ռուս ազատագրական շարժման բոլոր հանդուգն ու հոյակապ ճիգերը, բոլոր այն անբաղդատելի հերոսները, զոր տված է ռուս ազգը՝ ազատության դատին համար»[1]։

Անդրադառնալով այն հարցին, թե հայերը ո՞ր հոսանքի հետ պետք է կապեն իրենց ազատագրության հույսերը՝ ցարական-բյուրոկրատական, թե առաջադիմական-դեմոկրատական, Ա. Չոպանյանը նշում էր. «Անշուշտ՝ հայոց համար, աշխարհիս համար, նույն ինքն Ռուսիայի համար, նախընտրելի է տեսնել սահմանադրական ազատական բեժիմ մը Ռուսիո մեջ՝ փոխանակ պյուրոքրատական բեժիմին, բայց տղայություն պիտի ըլլա հայոց կողմն՝ իրենց դատը անհրաժեշտորեն կապել ռուսական բեժիմին վերջնական ու լիակատար բարենորոգման հետ։ Ցարական բացարձակ ինքնակալության օրերուն իսկ ռուսը մեզ՝ հայոցս համար, օգտակար եղած է, փրկարար դեր է կատարած, պետք չէ մոռանանք ասիկա»[2]։ Ուստի գտնում էր, որ քանի դեռ վերափոխված Ռուսաստան չկա, հայերը իրենց փրկության հույսը պիտի կապեն դեռ գոյատևող միապետական Ռուսաստանի հետ։ Որքան էլ այդ Ռուսաստանը հետամնաց է Եվրոպայի զարգացած երկրների համեմատ, այնուամենայնիվ «քաղաքակրթիչ տարր մը եղած է Ասիո մեկ ստվար մասին համար»[3]։

Ա. Չոպանյանը փորձում էր ավելի կոնկրետ նշել արևմտահայության փրկության ուղին Ռուսաստանի միջոցով։ Նա գրում էր, որ Կովկասի հայությունը պետք է ունենա իր ազգային կուսակցությունը, որը պաշտպանի միայն հայ ժողովրդի ազգային շահերը և «ոչ մեկ խորհրդյուն չղնե հարուստի ու աղքատի, բանվորի ու քաղիքթալիստի միջև, ձգտի ընդհակառակը միացնել բոլոր հայերը ազգային գործունեության մեջ»[4]։ Այդ կուսակցությունը պետք է կապվի ցարական կառավարության հետ և նրա համաձայնությամբ ու հովանավորությամբ կազմակերպի արևմտահայության ինքնապաշտպանությունը՝ զենքով կամ պրոպագանդայով։ Նրա գործակալները պետք է հաստատվեն յուրաքանչյուր քաղաքում ու գյուղում՝ իբրև քահանա,

1 «Անահիտ», 1901, № 6—7, էջ 172։
2 Տե՛ս նույն տեղը, 1902, № 2, էջ 30։
3 Նույն տեղը, 1900, № 3, էջ 95։
4 Նույն տեղը, 1903, № 8, էջ 12։

1 «Անահիտ», 1906, № 3—5, էջ 70։
2 Նույն տեղը, էջ 65։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 68։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 73, 74։

բժիշկ, ուսուցիչ կամ արհեստավոր և հիմնավոր ու լրջորեն նախապատրաստական աշխատանքներ տանեն։ Միաժամանակ կուսակցությունը զանազան աղբյուրներից պետք է դրամ հավաքի և ուղարկի արևմտահայերին՝ նրանց տնտեսության վերականգնման ու ամրապնդման համար։ «Ու երբ Ռուսիան վիրսկսի լրջորեն իր պաշտպանությունը տարածել Թուրքիո հայոց վրա, ինքնապաշտպանությունը ատով իսկ ավելի կդյուրանա, ինքզինքին անօգնական զգացող հայերը թև կառնեն, խրտուսյս կտանան. և արդեն այն ատեն՝ Թուրքին ու քյուրտին հարձակում գործելու ախորժակներն ալ կչքնան»[1]։

Նշելով, որ արևմտահայության փրկության համար «ռուսին դիմելե ուրիշ ճար չկա»[2], հայտարարելով, որ ցարից է կախված «հայ ժողովրդին կյանքին ու մահվան խնդիրը»[3], Ա. Չոպանյանը պահանջում էր, թե պետք է զգույշ լինել միապետի հետ, չհրապարակել նրան վիրավորող հոդվածներ, բայց միաժամանակ ավելացնում էր. «Չեմ պահանջեր, որ բոլոր հայերը ցարին ներբողը ընելու սկսին»[4]։ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին նա համարում էր հայասեր (ընկնելով, իհարկե, հայ լիբերալ որոշ շրջանների կողմից այն ժամանակ տարածած կարծիքի ազդեցության տակ) և գտնում, որ հայերը նրա միջոցով կարող են հաղորդակցվել ինքնակալի հետ, օգնություն և օժանդակություն ստանալ[5]։

Առարկելով նրանց, ովքեր նշում էին, թե ցարական կառավարությունը հալածում է հայերին, աշխատում է ձուլել նրանց, Ա. Չոպանյանը գրում էր. «Վարչական միջոցներով ազգ մը ձուլելու դեմ կարելի է մարտնչել և հաղթել..., բայց «գլուխ կտրող» քաղաքականության դեմ կարելի չէ հավիտենական մարտնչել տկար ազգի մը համար, որովհետև օր կուգա վերջապես, ուր գլուխները կհատնին»[6]։

Նրա կարծիքով, ռուսացման քաղաքականությունը կարող է հայերի շրջանում առաջ բերել ռեակցիա և ինչ-որ չափով նույնիսկ նպաստել նրանց ազգային լեզվի ու մշակույթի պահպանմանը՝ հաստատումն այդ թեզի, երբում էր օրինակ՝ թե Կովկասի գլխավոր կառավարչապետ Գոլիցինի կառավարման հայտնի տարիներին հայ վերնախավը դադարեց ռուսերենի գործածումից և խոսեց մայրենի լեզվով։

Հրապարակախոսը խնդիր էր դնում, որպեսզի ռուսական մամուլում հրապարակվեն հայանպաստ հոդվածներ, ռուս հասարակայնությանը ծանոթացնեն հայ ժողովրդի պատմական անցյալին ու ներկային, «բացատրենք շահերը, զոր ունի ռուսը՝ հայը պաշտպանելու մեջ»[1], համոզենք ռուս կառավարող շրջաններին, այդ թվում նաև ինքնակալին, որ «հայը թշնամի չէ ռուսական տերությանը, այլ իր անկեղծ դաշնակիցն է»[2], հասնենք այն բանին, որ նրանք իրենց ձեռքը վերցնեն հայոց դատը։ «Այդ ձևով է միայն, որ 61-րդ հոդվածը լուրջ լուծում պիտի կրնա ստանալ։ Այդ ճամբով է միայն, որ Թուրքական Հայաստանի մեջ եվրոպական բնույթի մը պիտի կրնա մտնել ու Լորիս Մելիքովի առաջարկած ծրագրին իրականացման ճամբան պիտի հարթվի»[3]։

Հրապարակախոսը հաստատ համոզված էր, որ Ռուսաստանը պիտի որոշի Հայաստանի ու հայերի ճակատագիրը, վերցնելով նրան իր հովանու տակ։ «Մեզի համար, ինչ որ ճակատագիրը որոշած է, Հայաստանին օր մը չէ օր մը անցնիլն է ռուսական հովանավորության տակ, կամ Թրքո-ռուսական պատերազմի մը հետևանքով և կամ Ռուսիոյ նախաձեռնությամբ հաստատված բարենորոգմանց բնույթի մը փոխանցական շրջանեն հետո, բոլոր քոնկրեսները այդ անխուսափելի իրողության կատարումը պիտի չարգիլեն»[4]։

Անդրադառնալով եվրոպական կամ արևմտաեվրոպական տերություններին, Ա. Չոպանյանը սկզբում զայրույթով էր խոսում նրանց մասին։ 1898 թ. նա գրում էր. «... Եվրոպան, որ հակառակ իր խոստումներուն և իր դաշնագրերուն Հայաստանի քստմնելի ջարդերը ամենայն հանդարտությամբ կդիտե... ին-

1 «Անահիտ», 1906, № 3—5, էջ 75։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 76։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 77։
4 Նույն տեղը։
5 Տե՛ս նույն տեղը, № 3—4, էջ 80։
6 Նույն տեղը։

1 Տե՛ս «Անահիտ», 1906, № 3—4, էջ 83։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը, 1908, № 1—4, էջ 46։

ծի անհատականալի կերևա»[1]։ Ելնելով իր հաշիվներից սուլթանի «առջև կխոնարհի Եվրոպա ըսված խոշոր քաջը»[2]։

Սակայն քիչ անց հրապարակախոսը փորձում է որոշ հույսեր կապել Եվրոպայի հետ։ 1903 թ. նա գրում էր, որ արևմտահայության փրկության գործում «Արևմտյան Եվրոպան կրնա՝ և հզորապես՝ օգնել մեզի...»[3]։

Շարունակելով իր դեղերումները, Ա. Չոպանյանը աջակցություն է ակնկալում նաև ԱՄՆ-ից։ 1904 թ. օգոստոսի 18-ին նա Փարիզից նամակ հղեց պրեզիդենտ Ռուզվելտին, որի մեջ, պատմելով արևմտահայության ծանր կացության մասին, գրում էր. «Թագավորության մը վերահաստատումը չէ, որ կպահանջեն այսօր հայերը, այլ հաստատումը ազատ րնժիմի մը, որմե ամենքը կարենան օգտվիլ»[4]։ Ապա հույս էր հայտնում, որ Ամերիկան «իր գլուխն ունենալով Ձեր վսեմության պես լուսամիտ ու կորովի պետ մը, պիտի կարենա և պիտի կամենա զայն իրագործել»[5]։ Սակայն այդ մեծարումները, շոյանքներն ու փաղաքշանքները չշարժեցին պրեզիդենտի գութը։

Դառնանալով տերությունների վարքագծից, Ա. Չոպանյանը 1906 թ. արդեն գրում էր. «Ինձի համար բնավ զարմանալի չէ, որ Եվրոպացի հայասերները հուսահատած ըլլան Արևմտյան Եվրոպայի կառավարություններեն։ Զարմանալին հայ գործիչներուն դեռ անոնց վրա «ծայրահեղ» հույսը դնելն է»[6]։ Ապա նշում էր, որ Եվրոպան եթե կամենար լուծել հայկական դատը, կլուծեր դեռ 1890-ական թվականների կոտորածների ժամանակ, երբ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու լավագույն առիթներ կային։ Իսկ այսօր «ցնորք է այդպիսի վճռական ճիգ մը հուսալ Արևմտյան Եվրոպայեն»[7]։

Չնայած դրան Ա. Չոպանյանը շարունակում էր հուսալ, թե Եվրոպան կարող է օգնել արևմտահայության հարցի լուծմանը։ Նա գտնում էր, որ այդ խնդիրը բոլոր դեպքերում միջազգային է և, որպես այդպիսին, ենթակա է տերությունների իրավա-

1 Ազատագրական գաղափարները..., էջ 334։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս «Անահիտ», 1903, № 8, էջ 14։
4 Նույն տեղը, 1905, № 2, էջ 46։
5 Նույն տեղը, էջ 47։
6 Նույն տեղը, 1906, № 3—5, էջ 75։
7 Տե՛ս նույն տեղը։

սության[1]։ Հայ մտավորականությունը պետք է միշտ վառ պահի Հայկական հարցը և պրոպագանդի այն Եվրոպայում։ Ընդորում, անհրաժեշտ է գործն այնպես առաջ տանել, որ «եվրոպական ազգերու մոտ մեր ընելիք դիմումները հակառուսական չունենան, ինչպես ունեցած են ցարդ ընդհանրապես, ընդհակառակը, ամեն ճիգ թափելու ենք, որ Ֆրանսիա և Անգլիա մղեն ռուս կառավարությունը՝ տաճկահայոց դատին լուծման նախաձեռնությունն առնելու»[2]։

Հրապարակախոսը նշում էր, որ այժմ միջազգային շրջաններում կատարվում է ուժերի վերադասավորում։ Անգլիան ու Ռուսաստանը մերձենում են Գերմանիայի ու Թուրքիայի դեմ։ Գերմանիան Թուրքիայից հետո Հայկական հարցի լուծման «մեծագույն խոչընդոտն է»[3]։ Հայ մտավորականությունը պետք է կարողանա օգտվել միջազգային նոր հարաբերություններից, Ռուսաստանի գլխավորությամբ առաջ քաշի Հայկական հարցը և հասնի այն բանին, «որպեսզի ընդհանուր համաձայնությամբ վերջ դրվի զարհուրելի մարտիրոսության, որով կատապի հայ ժողովուրդը տաճկական Հայաստանի մեջ»[4]։

Որոշակի հույսեր կապելով արտաքին ուժերի հետ, Ա. Չոպանյանը, սակայն, գտնում էր, որ արևմտահայությունը հիմնականում ինքը պետք է ազատագրեր իրեն։ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին, խոսելով Ռուսաստանի ազատագրական դերի մասին, նա միաժամանակ հարկ էր համարում նշել. «Երբեք ըսել չեմ ուզեր, որ մեր ազգը իր ամբողջ հույսը Ռուսիո վրա դնելու է։ Ազգ մը, ինչպես մարդ մը, միշտ իր հույսը էն առաջ իր վրա դնելու է»[5]։ Մի այլ առիթով շարունակելով այդ միտքը, գրում էր. «Հայկական հարցը մենք հայերս է, որ պետք է լուծենք»[6]։

Ուստի հրապարակախոսը կոչ էր անում արևմտահայությանը՝ համախմբվել, մի կողմ դնել ներազգային, ներկուսակցական տարաձայնությունները և ընդհանուր ուժերով պատրաստվել ահեղ գոտեմարտերի, բայց անտեղի, անօգուտ զոհերից խու-

1 Տե՛ս «Անահիտ», 1906, № 3—5, էջ 82։
2 Նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 83։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 88։
5 Նույն տեղը, էջ 81։
6 Նույն տեղը, № 10—12, էջ 228։

սափելու համար սպասել պատեհ առիթի և գործի անցնել միայն այն ժամանակ, երբ վրա կհասնի այդ պահը։ Անհրաժեշտ է, գրում էր նա, «պատրաստել ժողովուրդը ինքնապաշտպանության և առանց նոր ջարդերու պատրվակ տալու, սպասել դեպքերուն, ջանալով, որ կարելի եղածին չափ ուժ վերագտնենք ու խտացնենք, որպեսզի կատարենք ճիգ մը փորձել, երբ պատեհ առիթ մը ներկայանա— ահա ինչ որ պարտք ունի ընել հեղափոխական կուսակցություն մը»[1]։

Ընդհանրապես պետք է նշել, որ Ա. Ջոպանյանը երկար պրոպագանդեց համազգային ուժերի միավորման գաղափարը, ջանկանում էր համահավաքել կուսակցություններն ու կազմակերպությունները և ստեղծել ազգային մեկ ղեկավարություն։ Բայց նրա այդ ձգտումներն ի դերև ելան։ Հետագայում նա ստիպված էր խոստովանվել. «Ութը տարի է, որ կպայքարիմ հեղափոխական կուսակցությանց միության համար. իրականությունը ցույց կուտա, որ ջուր ծեծած եմ միայն»[2]։

Այդուհանդերձ Ա. Ջոպանյանը չէր կորցնում իր լավատեսությունը։ Նա շարունակում էր հուսալ, որ «մեր դատը պիտի լուծվի», եթե ոչ ազգային, գոնե դրսի ուժերով՝ այնպես, ինչպես լուծվեցին Հունաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, Սերբիայի, Կրետեի, Եգիպտոսի և այլ երկրների հարցերը[3]։

Ինչպես էր հասկանում Ա. Ջոպանյանը Հայկական հարցի լուծումը։ Նա նշում էր, որ հայերը չեն ձգտում կործանել Օսմանյան պետությունը, ընդհակառակը՝ նրանք ցանկանում են վերանորոգել այն, դարձնելով ժողովուրդների դաշնակցություն, ուր ամեն մի ազգություն կստանա ինքնուրույն զարգացման հնարավորություններ։ Հայերն ուզում են ոչ թե անկախություն, այլ «վարչական ինքնուրույնություն մը»[4], այսինքն՝ ինքնավարություն, «ուր հայ ցեղը իբրև ազատ և ինքնուրույն ցեղ կարենա ապրիլ ու զարգանալ»[5]։

Ա. Ջոպանյանը դիմագրավում էր ժամանակի առաջավոր սոցիալ-դեմոկրատական գաղափարների ներթափանցմանը հայ

1 «Անահիտ», 1900, № 3, էջ 95։
2 Նույն տեղը, 1908, № 1—4, էջ 47։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, 1900, № 3, էջ 90։
5 Տե՛ս նույն տեղը, 1899, № 12, էջ 395։

իրականություն, քննադատում էր սոցիալ-դեմոկրատներին կամ, ինչպես ինքն էր ասում, ծայրահեղականներին, ծայրահեղ հեղափոխականներին։ 1906 թ. նա գրում էր, որ մենք չենք կարող միանալ ոուս ծայրահեղականներին, քանզի «անոնց ծրագիրը այժմ անգործադրելի է, իսկ մեր ազգային ցավերն անմիջական դարման կհայցեն»[1]։

Հեղինակը չէր ընդունում հայ սոցիալիստների դրույթները, հայտարարելով, որ նրանք հերքում են ազգայինը և, հետևաբար, վնասում են հայկական դատին, անվանում էր նրանց անգիտակից դավաճաններ և գրում. «Եթե այդ պարոնները չեն ուզեր իրենց ցեղին ցավերովը զբաղվիլ, ստիպող չկա զիրենք, թող երթան ընկերվարականությամբ, անիշխանականությամբ զբաղին, բայց հանգիստ ձգեն հայոց դատը, բնավ չզբաղվին անով»[2]։ Այնուհետև ավելացնում էր, որ եթե կան մարդիկ, որոնք ամաչում են ազգայնական հայկական դատով զբաղվելու համար, ապա ինքը չի ամաչում դրանից, որովհետև իր նպատակը հայ ազգի ազատագրումն է։ Նա ուղղակի հայտարարում է, որ «պետք է վերջապես ըմբռնել, թե ընկերվարական իտեալը ոչ միայն հարակից չէ հայոց ազգայնական իտեալին, այլև անոր կհակասի, քանի որ մեր ազգային գործունեության մեջ հարուստ և աղքատ կրնան ևս պարտին գործակցիլ, իսկ ընկերվարական իտեալին համեմատ այդ տարրերը հակառակորդներ են»[3]։

Ա. Ջոպանյանը բնավ չէր ուզում լսել պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման մասին։ Նա հայտարարում էր, որ թերևս ոչ ոք այնքան չի կամենում բանվորների, ինչպես և բոլոր աշխատավորների կացության բարելավում, որքան ինքը, բայց միաժամանակ նշում էր. «Բոլոր ուժովս կբողոքեմ բանվորը իբրև գերագույն մարդը նկատելու ոամկամոլական սնապաշտության դեմ. մարդկությունը ոտքերը վեր ու գլուխը վար չի կրնար քալել։ Հատընտիր աղնվական ուղեղներու փոքրամասնությունն է, որ վարած է ու պիտի վարե մարդկությունը. այդ փոքրամասնությունը կբազկանա ամեն դասակարգե բխած ու մեծության բնածին դրոշմը կրող անհատներե, ամբոխը նպաստե իր տարերային ուժով իրականացնելու այդ փոք-

1 Տե՛ս «Անահիտ», 1906, № 3—5, էջ 66։
2 Նույն տեղը, էջ 67։
3 Նույն տեղը, էջ 74։

բամասնության հղացած իտեալները (և այն ալ հաճախ խաթարելով զանոնք)»[1]։

Հրապարակախոսը գտնում էր, որ հայ իշխանն ու կղերը ավելի շատ օգնել են ժողովրդին, քան վնասել։ Մի՞թե կարելի է սոցիալիստ լինելու համար մոռանալ այն, ինչ արել են Մեսրոպն ու Սահակը, Ներսեսն ու Եղիշեն, Եղնիկն ու Խորենացին, Նարեկացին ու Շնորհալին։ Նա ազգավնաս գործ էր համարում կղերականներին ու հարուստներին հեռացնելը և ազգի իշխանությունը բանվորին հանձնելը[2]։

Ա. Չոպանյանի քաղաքական իդեալը կադետների գաղափարախոսությունն էր։ Նա գրում էր. «Մեր ազգային շահերու տեսակետով «քատե»-ները շատ ավելի հուսատու են, քան ընկերվարականները, այս վերջինները ազգերու, ցեղերու ուրույն իրավունքներով շատ չեն սիրեր զբաղվիլ, համամարդկային իտեալներու հետամուտ են, և եթե երբեք կառավարության գլուխ անցնին, րոպե մը անգամ պիտի չզոհին մեր հասկցած «Հայկական հարցին համար»[3]։

Ա. Չոպանյանի ազգային-ազատագրական գաղափարները շատ բաներով համընկնում էին վերակազմյալ հնչակյանների գաղափարներին։ Նրանք երկուսն էլ մերժում էին սոցիալիզմը, գտնելով, որ այն անհամատեղելի է հայկական դատին, չէին ընդունում արևմտահայության դասակարգերի բաժանման և միմյանց հակադրման գրույթը, քարոզում էին համազգային կազմակերպված հեղափոխություն, դեմ էին կուսակցությունների կողմից հրահրվող ցուցարարական ելույթներին, քննադատում էին նրանց տեսական ու պրակտիկ գործունեությունը, պահանջում էին Արևմտյան Հայաստանի ինքնավարություն տերությունների օգնությամբ, համարյա շրջանցում էին սոցիալական խնդիրները, հատկապես ագրարային հարցը, գտնում էին, որ հոգևորականությունը կարևոր դեր է խաղում ազգապահպանման գործում և այլն։

Սակայն միևնույն ժամանակ Ա. Չոպանյանի հայացքները տարբերվում էին վերակազմյալ հնչակյանների հայացքներից։ Եթե վերջիններս արևմտահայության փրկությունը կապում էին

[1] «Անահիտ», № 8—9, էջ 182։

[2] Տե՛ս նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 180։

եվրոպական տերությունների, ապա Ա. Չոպանյանը՝ գերազանցապես Ռուսաստանի հետ։ Եթե վերակազմյալները պահանջում էին Արևմտյան Հայաստանի անկախություն կամ ինքնավարություն Թուրքիայի կազմում՝ եվրոպական կոնտրոլով, ապա Ս. Չոպանյանը՝ ինքնավարություն Թուրքիայի կազմում կամ Ռուսաստանի հովանավորությամբ։ Կապելով Հայաստանի բախտը Ռուսաստանի հետ, Ա. Չոպանյանը, սակայն, հարցի լուծմանն ավելի իրական էր մոտենում, քան Ռուսաստանից խույս տվող, նրանից առավելապես վտանգ սպասող և հեռավոր արևմուտքում փրկություն որոնող վերակազմյալները։ Սրանք իրական չէին համարում Օսմանյան Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի ժողովուրդների դաշնակցությունը և անիմաստ էին գտնում խոսել այդ մասին, մինչդեռ Ա. Չոպանյանը հնարավոր էր համարում այն, հատկապես հայ-քրդական համագործակցությունը։

Ա. Չոպանյանի սրտին բոլոր քաղաքական կուսակցություններից մոտ էր ռուսական կադետների կուսակցությունը, որը արտահայտելով լիբերալ բուրժուազիայի շահերը, պաշտպանում էր ցարիզմի նվաճողական քաղաքականությունը Արևելքում, հռչակում էր իրեն որպես ապադասակարգային և հանդես էր գալիս ոչ ռուս ժողովուրդների ազգային լեզվի ու մշակույթի զարգացման օգտին։

Ա. Չոպանյանը հայ գրականության, արվեստի ու մշակույթի նշանավոր գործիչ էր։ Գրականագետներն իրավամբ գրում են, որ նա «մեր դարի առաջին կեսի հայ գրականության և մշակույթի խոշորագույն գործիչներից մեկն է, որի ժառանգությունը շատ կողմերով պահպանել է իր գրական-պատմական նշանակությունը»[1]։

Այդպիսով, հայ բուրժուազիայի գաղափարախոսները, բողոքելով սուլթանական կառավարության բռնությունների, հայահալած ու հայակուլ քաղաքականության դեմ, ցանկանում էին բարելավել արևմտահայերի դրությունը՝ կամ նրանց համար անձի ու գույքի ապահովության ստեղծումով կամ ինքնավարության ու անկախության հռչակումով։ Այդ նպատակների

[1] Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Եր., 1979, էջ 141—142։ Ա. Չոպանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը հանգամանորեն վերլուծված և արժանավորապես գնահատված է Կառլեն Դալլաբյանի «Աբշակ Չոպանյան» աշխատության մեջ (Եր., 1987)։

իրագործումը ոմանք տեսնում էին հայ ժողովրդի հավաքական հեղափոխական ուժի, մյուսները՝ եվրոպական տերությունների (իսկ 1905 թ. հեղափոխության տարիներին դերազանցապես Ռուսաստանի) օգնության, երրորդները՝ Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների համատեղ պայքարի հաղթանակի մեջ։

Հայ բուրժուական գաղափարախոսները սահմանափակ էին իրենց սոցիալ-տնտեսական պահանջներում։ Նրանք պրոպագանդում էին առևտրի ու արդյունաբերության զարգացում, արտագաղթի դադարում և տարագիրների վերադարձ դեպի հայրենիք։ Բայց շրջանցում էին այնպիսի առաջնակարգ, կենսական նշանակություն ունեցող հարց, ինչպիսին էր հողային հարցը, գյուղացիության խնդիրը։ Նրանց մեծ մասը ոչինչ չէր ասում այն մասին, թե ինչպես պետք էր վարվել աղայական-ֆեոդալական հողատիրության հետ, ինչպես պետք էր բավարարել բազմահազար հողազուրկ ու սակավահող գյուղացիներին հողով։ Իսկ ազգային ճնշումը, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, «չի կարելի վերացնել առանց տնտեսական հեղաշրջման»[1]։

Այդ գաղափարախոսները ձգտում էին արևմտահայության մեջ ձեռք բերել գերիշխանություն։ Իրենց նպատակին հասնելու համար նրանք, մի կողմից, աշխատում էին նսեմացնել մրրցակից ուժերին, իսկ մյուս կողմից՝ պրոպագանդում էին դեմոկրատական գաղափարներ։ Նրանք քննադատում էին հոգևորականներին, բայց միաժամանակ աշխատում էին համերաշխվել ու համագործակցել նրանց հետ, հայտարարելով, որ նրանք դրական դեր են խաղում ազգապահպանման, ազգի բարեկրթման գործում։

Բուրժուական գաղափարախոսները մերժում էին կուսակցությունների ծայրահեղությունները, մասնավորապես ցուցաբարական ելույթները, համարելով դրանք վնասակար արևմտահայության համար, ժխտում էին սոցիալ-դեմոկրատական գաղափարները արևմտահայ իրականության մեջ, քարոզում էին ազգի բոլոր խավերի համախմբում ու ներդաշնակություն. երբեմն նաև՝ արևմտահայության համընդհանուր ապստամբություն կամ հեղափոխություն, դրվատանքով էին խոսում հայդուկների սխրագործությունների ու ժողովրդի ազատագրական

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, հՀԺ, հ. 30, էջ 160։

ելույթների մասին, պահանջում էին ազգային լեզվի, դպրոցների, մշակույթի զարգացում և այլն։

Համենայն դեպս, հայ բուրժուական գործիչները, որպես ճնշված ժողովրդի գաղափարախոսներ, պատմական տվյալ ժամանակաշրջանում դրական դեր էին կատարում, որքանով պայքարում էին սուլթանական բռնապետության դեմ, պայքարում արևմտահայության գոյության պահպանման, նրա դրության բարելավման, ազգային գիտակցության բարձրացման ու կուլտուր-կրթական զարգացման համար։ Շատ հաճախ նրանք հանդես էին գալիս ազգայնական դիրքերից, որը տվյալ ժամանակաշրջանում նույնպես ուներ առաջադիմական նշանակություն։ Վ. Ի. Լենինը, խոսելով բուրժուական նացիոնալիզմի մասին, նշում էր, որ պետք է պաշտպանել ճնշվող ազգի բուրժուական նացիոնալիզմը ընդդեմ ճնշող ազգի բուրժուական նացիոնալիզմի։ 1914 թ. իր «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» աշխատության մեջ նա գրում էր. «Ճնշված ազգի յուրաքանչյուր բուրժուական նացիոնալիզմի մեջ կա համադեմոկրատական բովանդակություն ընդդեմ ճնշման, և հենց այդ բովանդակությունն է, որ մենք անպայման պաշտպանում ենք...»[1]։

ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐ

Հետռեֆորմյան Ռուսաստանում ինքնակալության դեմ մղվող ազատագրական պայքարի ավանգարդում կանգնեցին տարաստիճան մտավորականները, որոնք սերվում էին հասարակական ամենատարբեր խավերից և իրենց հասարակական-քաղաքական հայացքներով բաժանվում էին հեղափոխական դեմոկրատների ու լիբերալների։ Վ. Ի. Լենինը նրանց անվանում էր լիբերալ և դեմոկրատական բուրժուազիայի կրթված ներկայացուցիչներ[2]։

Հեղափոխական դեմոկրատները գյուղացիական դեմոկրատիայի գաղափարախոսներն էին, գյուղացիության շահերի արտահայտիչներն ու պաշտպանները։ Նրանք կրքոտ կերպով ատում էին ճորտատիրական-ֆեոդալական կարգերը, գյուղացիությանը համարում էին հեղափոխության գլխավոր ուժը, գըտ-

1 Վ. Ի. Լենին, հՀԺ, հ. 25, էջ 332։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 114։

նում էին, որ նրա հեղափոխականությամբ կարելի է ոչնչացնել այդ կարգերը և, շրջանցելով կապիտալիզմը, գյուղական համայնքի միջոցով անցում կատարել դեպի սոցիալիզմ։

Հեղափոխական դեմոկրատների գործը շարունակեցին հեղափոխական նարոդնիկները, որոնք իրենց նախորդների համեմատությամբ, ինչպես ցույց է տալիս Վ. Ի. Լենինը, թեև մեծ քայլ կատարեցին դեպի առաջ, երբ հարց դրեցին կապիտալիզմի մասին, բայց այն սխալ լուծեցին[1]։

Հայ իրականության մեջ տարաստիճան մտավորականությունը նույնպես մեծ դեր խաղաց։ Եվ դա հասկանալի է. Արևելյան Հայաստանը ռուսական կայսրության բազկացուցիչ մասն էր և, որպես այդպիսին, ապրում էր համարյա նույն հասարակական-քաղաքական կյանքով, ինչ Ռուսաստանը։

XIX դ. 80-ական թթ. հայ լիբերալ բուրժուական հոսանքը գլխավորում էր Գր. Արծրունին, իսկ դեմոկրատականը՝ Րաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան)։ Շրջագայելով Արևմտյան Հայաստանում, Րաֆֆին մոտիկից ուսումնասիրեց արևմտահայերի սոցիալ-տնտեսական կյանքը, հատկապես գյուղացիության դրությունը և տեսավ, թե ինչպես էին հայ շինականները հարբստահարվում ու կեղեքվում, ճնշվում ու հալածվում թուրք, հատկապես քուրդ աղաների ու ցեղապետերի կողմից, և իր ամբողջ էությամբ նվիրվեց նրանց ազատագրության դաղափարին։

Րաֆֆու կարծիքով, «հողային կամ կալվածատիրական խնդիրը Ասիական Տաճկաստանի հայոց հարստահարությունների մեջ ամենագլխավոր (ընդգծումը՝ հեղ.) խնդիրն է»[2]։ Նա կշտամբում է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին այն բանի համար, որ 1876 թ. Բ. Դուռը ներկայացրած իր «Տեղեկագրում» այդ հարցի վրա «շատ փոքր ուշադրություն է դարձրել»[3]։ Ապա շարունակում է, որ այդպես չի կարելի վարվել մի խնդրի հետ, որը «հայու կյանքի ու մահու խնդիրն է», նրա «գլխավոր կենսական հարցն է»։ Միթե դժվար է պատկերացնել, որ հողային հարցի չլուծման հետևանքով «մի ամբողջ հասարակություն թե՛ նյութապես և թե՛ բարոյապես մահանում է, և

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ, հ. 2, էջ 674։
2 Րաֆֆի, Երկերի ժողովածու, Եր., 1964, հ. 9, էջ 255։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 256։

ամբողջից սերունդ զրկվում է հացից և հետևապես կյանքից»[1]։

Հրապարակախոսը իրավամբ նշում էր, որ հայոց հողերը զավթում են ոչ միայն և ոչ այնքան շարքային քրդերը, որքան «բնգերը, հոգևոր շեյխերն ու մուֆթիները և թուրք աղաները»[2]։ Նրանք բռնագրավում են նաև հայոց վանքերի տարածքները, շատ անգամ քար ու քանդ անելով և բոլորովին բնաջնջելով «նրանց հիշատակը»[3]։

Րաֆֆին ցույց է տալիս, որ հողային բռնագրավումների հետևանքով հայ գյուղացիները ենթարկվում են կրկնակի հարբստահարման՝ իշխանությունների ու աղաների։ Պետական պաշտոնյաները, չարաշահելով իրենց ֆունկցիաները, զանց են առնում օրենքները և գյուղացիներից հավաքում են սահմանված չափերից ավելի տուրքեր, անարդար են բաշխում հարկերը, քրիստոնյաներից ավելի շատ են գանձում, քան մահմեդականներից, հարկահանության ամբողջ ժամանակամիջոցին ապրում են բնակիչների հաշվին և այլն։ Ավելի դաժանությամբ են հավաքվում կալվածատիրական տուրքերը։ Եթե պետական գյուղում ինչ-որ տեղ, ինչ-որ չափով սահմանափակվում էին պաշտոնյաների չարագործությունները, ապա աղայական գյուղում ամեն ինչ ենթակա էր տիրոջ քմահաճույքին։ Աղաներն ու ցեղապետերը բանեցնում էին իրենց իշխանության տակ ընկած գյուղացիներին այնքան, ինչքան ցանկանում էին և հավաքում նրանցից այն, ինչ ուզում էին։ Նրանք այնքան քիչ էին թողնում գյուղացիներին, որ տարաբախտները չէին կարողանում իրենց կենսական ամենաանհրաժեշտ պիտույքներին անգամ բավականություն տալ։

Րաֆֆին ցույց էր տալիս, որ աղաները ու ցեղապետերը երկրի մի շարք շրջաններում հայերին իրենց «ձեռքում նորա» էին դարձրել[4] և վաճառում էին թե տղամարդկանց, թե կանանց[5], ընդ որում վաճառում են շատ էժան՝ «մի աղջիկը մի արծաթ մեջիդայով (1 ռուբլի 20 կոպեկ) կարելի է առնել»[6]։

1 Րաֆֆի, հ. 9, էջ 256։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 253։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 246։
5 Տե՛ս նույն տեղը։
6 Տե՛ս նույն տեղը, հ. 3, էջ 62։

Նա գալիս է այն եզրակացության, որ կառավարության ու ազանների դաժան հարստահարումների հետևանքով հայ գյուղացիությունն ընկել է անասելի աղքատության ու թշվառության մեջ։ Դրությունից դուրս գալու համար շատերը բռնում են արտագաղթի ճամփան։ Օտարության մեջ ոմանք բնաջնջվում են, թողնելով իրենց ընտանիքներն անտեր ու անտիրական, իսկ մյուսները՝ ենթարկվում են զրկանքների ու տառապանքների։ Գրողը դեմ էր արտագաղթին, գտնելով, որ այն կազմալուծում է արևմտահայությանը[1]։

Րաֆֆին չի սահմանափակվում միայն օտարի քննադատությամբ։ Նա խստորեն մերկացնում ու խարազանում է նաև ազգային հարստահարիչներին։ Հրապարակախոսը դատափետում էր հայ հոգևոր հայրերի ընչաքաղցությունը, ցույց տալիս, որ նրանցից շատերը գործարքի մեջ են մտնում թուրք պաշտոնյաների ու քուրդ ցեղապետերի հետ և «բավականին արծաթ էին քամում ժողովրդի աղքատ քսակից»[2]։

Րաֆֆին այնուհետև քննադատում է հայ դրամատերերին, որոնք տարբեր եղանակներով խաբում ու կողոպտում են գյուղացիներին, կանխավճարներ են տալիս նրանց և քամում քրտինքն ու արյունը։ Համախ սրանք ևս կապվում են քուրդ բեկերի հետ, նպաստում են նրանց ոճրագործություններին կամ գողացած ապրանքների իրացմանը։ Իր հերոսներից մեկի՝ Ասլանի բերանով հեղինակն ասում է. «Քեռի պետրոսները մի տեսակ ավազակներ են, միայն վաճառականի կերպարանքով», իսկ մի այլ հերոսի՝ Մարոյի բերանով հայտարարում. «Պետք է ոչընչացնել այս բոլոր քեռի պետրոսներին»[3]։ Առևտրավաշխառուական բուրժուազիային նա անվանում է «մռայլ դասակարգ»[4]։

Կանգնելով աշխատավոր ժողովրդի, հատկապես գյուղացիության շահերի պաշտպանության դիրքերում, Րաֆֆին պահանջում էր դեն շպրտել ֆեոդալական-ճորտատիրական լուծը, միջնադարյան բարբարոսական բռնություններն ու սանձարձակությունները և ազատել նրան։ Իր «Ջալալեդդին», «Կայծեր», «Խնամք» և այլ վեպերում ու հրապարակախոսական աշխատություններում նա մշակում է արևմտահայության ազատագրության գաղափարախոսությունը։

Րաֆֆին բարձր է գնահատում ժողովրդի ուժը և անսահման հավատ ու վստահություն է տածում նրա նկատմամբ։ «Կայծեր» վեպում Ասլանի բերանով նա ասում է, որ ժողովուրդը մեծ զորություն է։ «Նա երկար չէ կարող համբերել իրան ճնշող և ստրկացնող կոպիտ ձեռքին։ Նա վերջապես պիտի խլրտի, պիտի խորտակե իր շղթաները և պիտի թոթափե բռնակալի լուծը։ Րոպեն հասել է... այս դրության մեջ է այժմ մեր ժողովուրդը»[1]։

«Դավիթ Բեկ» վեպում Րաֆֆին իր հերոսի բերանով ասում է. «Ժողովուրդը սեփական կամք ունի, այդ ուրիշ բան է, որ նա երբեմն ճնշված, երբեմն կաշկանդված է լինում և իր կամքը արտահայտել չէ կարողանում։ Բայց երբ նա կտրեց իր կապանքները, այլևս նրա թափին ընդդիմադրել անկարելի է։ Նա դառնում է մի հսկայական հեղեղ և փոթորկի նման որոտում է, ալեկոծվում է, առաջ է վազում խորտակելով, ոչնչացնելով իր առջևից ամեն տեսակ խոչընդոտները։ Ո՞ր մահկանացուն կարող է ժողովրդի կատաղի հոսանքի առաջը կտրել։ Դժվար է միայն շարժել նրան, երբ մի անգամ շարժվեցավ, այլևս այնուհետև կանգ չի առնի, որպես մի ահագին ժայռ, որ բեկվում է լեռան բարձրությունից, գլորվում է դեպի ցած և առաջ ընթանալով, հետզհետե ավելի և ավելի սաստկացնում է իր թափը...»[2]։

Րաֆֆին գտնում էր, որ ժողովրդին կարող է ազատագրել ոչ այլ ոք, քան հենց ինքը՝ ժողովուրդը։ Նշելով, որ դարավոր բռնությունները մշակել են նրա մեջ ստրկամտություն, դարձրել են նրան հլու հնազանդ, տիրակալների կամակատար, նա ժողովրդից պահանջում էր դեն գցել այդ ամենը, բռնել ըմբոստության ուղին, գործել «ակն ընդ ական» սկզբունքով և ազատությունը ձեռք բերել սեփական ուժերով։

Ազատության գաղափարախոսը նզովում էր հայոց մեծերի այն դաստիարակությունը, որը քարոզում էր հեռու մնալ սրից ու հրացանից, զբաղվել միայն գութանով ու արորով, խաղաղ երկրագործությամբ, միշտ լինել բարի և չարին պատասխանել միայն բարությամբ. «Մենք հայեր ենք, մեր գլուխը պետք է

1 Տե՛ս Րաֆֆի, հ. 9, էջ 89—92։
2 Տե՛ս նույն տեղը, հ. 4, էջ 384։
3 Նույն տեղը, էջ 464։
4 Տե՛ս նույն տեղը, հ. 3, էջ 512։

1 Րաֆֆի, հ. 4, էջ 463։
2 Ս. Սարինյան, Րաֆֆի, Եր., 1957, էջ 235—236։

միշտ ցած ծռած լինի, մեր լեզուն միշտ մունջ պետք է լինի և մեր ձեռքը պետք չէ, որ բարձրանա օտար գլխի վրա...»[1]։ Նա ցույց էր տալիս, որ քրիստոնեության այդ դոգմաները ոչ միայն չեն օգնել մեր ժողովրդին, այլ վնասել են։

Բաֆֆին ծաղրում էր վախկոտությունն ու սարկամտությունը, «հենթում» նկարագրելով այն զարհուրելի տեսարանը, երբ Բուրքերն ու քրդերը կոտորում էին անմեղ ու անպաշտպան հայերին, նա նշում էր, որ հայ կամավորները սոսկ դիտում էին այդ տեսարանը և հառաչում. «Ա՜խ, ինչպես մորթում են»[2]։ Միայն մեկի՝ Վարդանի սիրտն էր այդ բոպեին լցված դառն ատելությամբ, բայց «չ դեպի այն զազանները, որ այրում էին, որ մորթում էին, այլ դեպի այն վախկոտները, որ ոչխարի նման թույլ էին տալիս իրանց մորթել։

— Նայիցե՛ք, նայեցե՛ք,— ասաց նա,— այսքան բազմության մեջ մի մարդ էլ չեք տեսնի, որ ձեռք բարձրացներ իր սպանողի վրա... էլ դրանից ավելի ինչ կարող է լինել, որ շարժեր մարդու կատաղությունը, որ բորբոքեր մարդու վրեժխնդրությունը։ Տունը աչքի առջև այրում են, զավակները կրակի մեջ խորովում են, կինը, աղջիկը քաշում տանում են... Տղամարդը տեսնում է այդ բոլորը և ինքը ամենայն խոնարհությամբ պարանոցը դեմ է անում թշնամու սրին... Տո, անիծյա՛լ, դու էլ մարդ ես, դու էլ սպանիր, հետո մեռիր...»[3]։

Բաֆֆին քարոզում էր չխեղճանալ, չխոնարհվել, չսրտկանալ, չփախչել թշնամու առաջ, այլ ընդհակառակը, նրա դեմ պետք է ծառանալ, հանդես գալ և պատշաճ հակահարված հասցնել։

«Ով չէ հասկացել,— դրում էր նա,— կամ չէ ուզում հասկանալ ապրելու պայմանները, կյանքի իրավունք չունի։ Այդ պայմանները այնքան փոխվում են, որքան փոխվում են նրանց պահանջները, երբ հարկավոր է խելք բանեցնել, խելքին զոռ տալու է, իսկ երբ պետք է սուր, մարդ պիտի պատրաստ ունենա նրան իր ձեռքում։ Մարդկային կյանքը ներկայացնում է մի սարսափելի կռվի հանդիսարան, ով որ ընդդիմադրության շնորհք չունի, նա պիտի ընկնի, անհետանա, ոչնչանա...»[4]։

1 Բաֆֆի, հ. 3, էջ 25։
2 Նույն տեղը, էջ 74։
3 Նույն տեղը, էջ 75։
4 Նույն տեղը, էջ 19—20։

«Զարի հետ պետք է շար լինել, բարու հետ բարի, այս է պահանջում անարդար մարդկությունը»[1]։

Բաֆֆին գտնում էր, որ անհրաժեշտ է շահագործվող ու ճնշվող զանգվածներին կոչել ակտիվ պայքարի, ոտքի հանել նրանց ընդդեմ իրենց բռնակալների, կազմակերպել նրանց ազատագրական կռիվը։ Բայց ո՞վ պետք է անի այդ ամենը, ո՞վ պետք է զանգվածների շրջանում պրոպագանդի ազատագրական գաղափարներ, ո՞վ պետք է ներարկի նրանց մեջ ակտիվություն, խիզախություն և ըմբոստություն։ Նա նշում էր, որ հոգևորականները չեն կարող կատարել այդ դերը, ընդհակառակը՝ նրանք բւրթղում են ժողովրդին սարկամտություն ու հնազանդություն, աղոթում են տիրակալների փառքի համար և, ելնելով իրենց շահերից, գործարքի մեջ են մտնում նրանց հետ՝ ընդդեմ ազգի։ Հայ դրամատերերը նույնպես չեն կարող կանգնել արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի ավանգարդում։ Նա հայ վաճառականներին ու կապալառուներին անվանում էր հրեշներ և գտնում էր, որ նրանք միայն անունով են հայ։ Նրանք ոչ միայն չեն կազմակերպի սուլթանական բռնապետության դեմ ժողովրդի պայքարը, այլև «իրանց անձնական շահերը պահպանելու համար... կցանկանային միշտ կանգուն տեսնել Թուրքիան իր կառավարության անկարգ այլանդակության մեջ»[2]։

Վաճառականը «միշտ թափառում է յուր շահերի ետևից, նա այնտեղ է, ուր նրա շահերն են գտնվում։ Վաճառականը հայրենիք չունի, նրա հայրենիքն այնտեղ է, ուր արծաթ կա։ Վաճառականը հասարակաց շահերի համար չէ մտածում. նա եսական է»[3]։ Ինչ վերաբերում է ազնվականներին, ապա Բաֆֆին նշում էր, որ «մենք ազնվապետական դաս չունենք...»[4]։

Բազմակողմանի վերլուծությունից հետո հրապարակախոսը գալիս է այն եզրակացության, որ արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները կարող են ղեկավարել երիտասարդները, կրթված ու առաջադեմ մտավորականները[5]։

1 Բաֆֆի, հ. 3, էջ 28։
2 Տե՛ս նույն տեղը, հ. 9, էջ 301։
3 Նույն տեղը, էջ 255։
4 Տե՛ս նույն տեղը, հ. 4, էջ 74։
5 Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Եր., 1955, էջ 238։ Ս. Սարինյան, նշվ. աշխ., էջ 141։

Րաֆֆու կարծիքով, մտավորականությունը ժողովրդի մեջ պետք է տանի համառ ու քրտնաջան աշխատանք, պատվաստի նրանում ազատասիրական գաղափարներ և ոտքի հանի միայն այն ժամանակ, երբ այդ գաղափարները գոնե նրա մի մասի մեջ արդեն արմատացած կլիննեն, այլապես նրա քարոզները կանցնեն ապարդյուն։ «Խենթի» հերոսներից մեկն ասում է. «Երբ որևիցե ժողովրդական շարժման գաղափարը մի քանի անհատների երևակայության ցնորք է միայն և տակավին չէ ընդհանրացել, չէ տարրացել ամբոխի գոնե մի մասի մեջ— մի հարվածով կարելի է ոչնչացնել բոլորը, երբ առաջնորդող անձինքը ոչնչացրած կլինեն։ Բայց ամբոխը ուրիշ բան է. ամբոխի մեջ միտքը սպանել անհնարին է»[1]։

Րաֆֆին ազատագրական պայքարի ընթացքը պատկերացնում էր երկու ճանապարհով. մեկը վերևից, երբ զանգվածները դեռ անպատրաստ են և նրանց փոխարեն հանդես են գալիս ժողովրդի զարգացած ու գործունյա շերտերը պահանջագրերով կամ բողոքներով, մյուսը՝ ներքևից, երբ զանգվածներն արդեն այնքան են պատրաստ ու հասունացած, որ իրենք են ներկայացնում իրենց պահանջները, գործադրելով ոչ միայն խոսք, այլև գործ։ Առաջին դեպքում արդյունքը սովորաբար լինում է քիչ ու մակերեսային, իսկ երկրորդ դեպքում՝ արմատական ու հսկայական[2]։

Առաջ քաշելով ակտիվ պայքարի տեսությունը, Րաֆֆին, սակայն, գտնում էր, որ այն պետք է ձեռնարկել միայն բարենպաստ պայմանների դեպքում։ Բարենպատեհ պայման էր, օրինակ, 1878 թ., երբ հրապարակ էր եկել Հայկական հարցը։ Տերություններն արդեն զբաղվում էին նրանով։ Անհրաժեշտ էր ոտքի կանգնել և ստիպել, որ ինչպես նրանք, այնպես էլ սուլթանական կառավարությունը խոսքից անցնեին գործի և լուծեին այն։ Այդ օրերին հրապարակախոսը գրեց «Դատարկ հույսերով ենք խաբվում» հոդվածը, որի բնաբանը վերցնելով՝ «Մինչև երեխան լաց չէ լինում, մայրը ծիծ չէ տալիս», դատապարտում էր արևմտահայերի պասսիվությունն ու անտարբերությունը։ Նա գտնում էր, որ հայը նույնպես կարող է «զենք բարձրացնել», այլապես նա իրավունք չունի պահանջել որևէ բան, «որովհետև ազատությունը տրվում է այն ազգերին, որոնք իրանց ազատությունը սրով պաշտպանել գիտեն։ Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց զոհերի փրկություն»[1]։

Րաֆֆին քննադատում էր պահպանողականների ու լիբերալների այն տեսակետը, թե Հայկական հարցը տերությունները կլուծեն նաև առանց ակտիվ պայքարի։ «Մեզանից շատերը,— գրում էր նա,— այդ հույսը ունեն։ Բայց թե ինչ հիմքի վրա է կազմված նա, հայտնի չէ»։ Նրանք ուրախանում են, երբ եվրոպական որևէ լրագիր թյուր ու սխալ մի բան է հայտնում հայերի մասին, մխիթարվում են, երբ եվրոպական որևէ քաղաքում Հայկական հարց է բարձրացվում, ուրախանում են, երբ սուլթանը հայոց պատրիարքի հետ խոսում է ողորմածությամբ կամ արժանացնում նրան պարգևի։ Նրանք ասում են, թե տեսեք, «մեզ վրա ուշադրություն են դարձնում, մեր բանը պրծած է... Թուրքիայի հայը այսուհետև ազատ է...»։ Նրանք այդպիսի հույսեր են տածում։ Բայց ամիկները նման դեպքում ասում են. «Հույսը ցանեցին ու տեղումը ոչինչ բուսավ»[2]։

Հրապարակախոսը գտնում էր, որ հայերն իրենց ազատության համար դեռ որևէ լուրջ քայլ չեն արել։ Նրանք պետք է հետևեն սլավոնական ժողովուրդներին և փորձեն իրենց ազատությունը ձեռք բերել սեփական ուժերով։ Եվ եթե պատահի այնպես, որ հաջողության չհասնեն, համենայն դեպս իրենց սխրագործությամբ կմնան պատմության մեջ, օրինակ կծառայեն սերունդներին։ Նա գրում էր, որ եթե ըմբոստացումից հետո «Թուրքիայի հայի դաժանական դրությունը չի բարվոքվի ևս, գոնյա պատմության դատապարտությունից ազատվելու համար, գոնյա ապագա սերունդի մոտ սևերես չմնալու համար մենք պետք է թափենք մեր բոլոր ճիգը ներկա հանգամանքներից օգուտ քաղելու, և եթե չհաջողվի ևս, մեր որդիքը կասեն, թե մեր հայրերը՝ աշխատեցին...»[3]։

Շուտով Րաֆֆին հանդես եկավ մի նոր հոդվածով՝ «Դեռևս ուշ չէ», որի մեջ ցույց տալով, որ Թուրքիայի տիրապետության

1 Րաֆֆի, հ. 3, էջ 266։

2 Տե՛ս նույն տեղը, հ. 9, էջ 297—298։

1 Րաֆֆի, հ. 9, էջ 268։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, էջ 272։

տակ ընկած քրիստոնյաները ռուս-թուրքական պատերազմի հետևանքով հասան արդյունքի, իսկ հայերը՝ ոչ, նշում էր, թե դա այդպես էլ պիտի լիներ, «քանի որ իրանք հայերը անշարժ մնացին և իրանց համար չմտածեցին։

Գերեզմանների վրա ոչ ոք ուշադրություն չէ դարձնում, որովհետև նրանք լուռ են, գոհ են իրանց վիճակից։ Այնպես էլ մեկը պարտական չէ ուրիշի փորի համար հոգալ, քանի որ նա չէ հայտնում, թե ինքը քաղցած է...»[1]։

Հրապարակախոսը վերլուծում էր նաև միջազգային հարաբերությունները և գալիս այն եզրակացության, որ դեռևս կարելի է պայքարել արևմտահայության բախտի համար, որ այդ գործում պետք է ակտիվ դեր խաղան թե ժողովրդական զանգվածները և թե պատրիարքը։ «Ուրեմն ժամանակն է, որ Կ. Պոլսի ազգային ժողովը իր պատրիարքի հետ գործե մի վճռական քայլ, տարտամ երկմտությունը այսպիսի հանգամանքներում ոչինչ օգուտ չէ կարող բերել։ Կոնֆերենցիան (խոսքը Բեռլինի կոնգրեսի մասին է— Ա. Հ.) այսօր թե վաղը կկազմվի, եթե այս անգամ էլ չհաջողվեցավ բարձրացնել մի Հայկական հարց, այնուհետև Տաճկաստանի հայերի ապագան պետք է կորած համարել։

Դեռևս ուշ չէ»[2]։

Ապա, ցանկանալով ոտքի հանել նաև կաթողիկոսին, ավելացնում էր. «Մի՞թե ընդհանուր հայոց վեհ. կաթողիկոսը պետք է անտարբեր մնա»[3]։

Այն բանից հետո, երբ Բեռլինի կոնգրեսը անդամալուծեց Հայկական հարցը, Րաֆֆին երես դարձրեց նրա որոշումներից, դառնալով դրանք անիրագործելի և սկսեց ավելի մեծ նշանակություն տալ ազգային ուժերի համախմբման գաղափարին։ Նա հանդես եկավ «Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ» հոդվածով, որի մեջ նախ ցույց էր տալիս, որ հայության երկու հատվածները մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը համարյա կտրված են եղել իրարից։ Ապա նշելով, որ պատերազմը, մանավանդ Հայկական հարցի անհաջողությունը շատ բան սովորեցրին հայերին, խնդիր էր դնում, որ նրանց

1 Տե՛ս Րաֆֆի, հ. 9, էջ 296։

2 Նույն տեղը, էջ 305։

3 Նույն տեղը։

երկու հատվածները աշխատեն մերձենալ ու համախմբվել, քանի որ արդի պայմաններում այդ են պահանջում համազգային շահերը։ Անհրաժեշտ է նախապատրաստվել, որովհետև «Տաճկաստանի հայոց խնդիրը պետք է կայանա այսուհետև անդադար և աճընդհատ նախապատրաստության գործի մեջ, որպեսզի նրանք կազմ և պատրաստ հանդիպեն այն մեծ օրվան, երբ կրկին անգամ կզարկե ազատության ժամը։ Իսկ այդ օրը կկրկնվի... գուցե շատ հեռու չէ մեզանից...»[1]։

Ազգային ուժերը համախմբելու և գալիքին նախապատրաստվելու համար Րաֆֆին անհրաժեշտ էր համարում կանգ առնել հայերի մեջ արդեն առաջացած կրոնական դավանափոխության վրա։ Նա ցույց էր տալիս, որ դրա գլխավոր պատճառը հայերի անտանելի հարստահարություններն են տիրապետող վերնաշերտերի կողմից։ Նրանք հարկադրված ընդունում են կաթոլիկություն կամ բողոքականություն, կարծելով, որ կանցնեն այս կամ այն տերության հովանավորության տակ և կթեթևացնեն իրենց վիճակը։ Իսկ թուրքական կառավարությունը նպաստում է դրան, նպատակ ունենալով հայերի մեջ գցել երկպառակություն, սերմանել ատելություն և թուլացնել նրանց։ Նա շատ լավ է հասկացել «բաժանիր, զի տիրեսցես» պատվիրանը։ Սակայն հայերը դավանափոխվելով ոչ միայն չեն բարելավում իրենց կացությունը, այլև ավելի են վատթարացնում այն։

Հայնախոհ դեմոկրատը գտնում էր, որ թերևս չխոսեինք խղճի ազատության դեմ, եթե «կրոնական հերձվածները Թուրքիայի հայերի մեջ չվնասեին ազգային միությանը և չբաժանեին նրա ամբողջությունը»[2]։ Բայց բանն էլ հենց այն է, որ այդ հերձվածները կույր գործիք են դառնում այս կամ այն տերության ձեռքին և ծառայում նրանց շահերի կենսագործմանը, որը ոչ մի ընդհանուր բան չունի խղճի կամ կրոնի ազատության հետ։ Բողոքականը «բաժանվելով իր մայրենի եկեղեցուց, դառնում է բոլորովին ուրիշ մարդ. նրա բոլոր կապերը կտրվում են իր ազգի հետ, և նայում է իր ազգայինների վրա այնպես, որպես մի ժամանակ հրեաները նայում էին սամարացիների վրա։ Կա-

1 Րաֆֆի, հ. 9, էջ 490—491։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 476։

Թուրքիայի մասին ավելորդ է խոսել անգամ, նրանք ավելի վատ են։ Մեկն իրան ինգլիզ է կոչում, մյուսը ֆրանգ։ Եթե սրանք այսպես են, լուսավորչականները նույնպես հետ չեն մնում իրանց աննեղողամտությամբ դեպի իրանց անջատված եղբայրները, և ավելի նրանց առիթ են տալիս հեռանալու»[1]։

Րաֆֆին գտնում էր, որ խնդիրն այժմ ոչ թե բաժանման վիհն ավելի խորացնելն է, այլ հեռացածներին մերձեցնելը, իրենց ժողովրդի հետ միավորելը։ Իսկ դա պիտի կատարել արևմտահայության բոլոր զանգվածների ու աղանդավորների մեջ ազգայնության գաղափարը պրոպագանդելու, արմատավորելու և զարգացնելու ճանապարհով։ «Թուրքիայի հայերի մեջ,— գրում էր հրապարակախոսը,— միության միակ հնարն այժմ այն է, որ ոչ թե հայրենի եկեղեցուց բաժանված եղբայրներին կրկին դարձնել դեպի լուսավորչի փարախը, այլ աշխատել նրանց մեջ տարածելու ազգայնության գաղափարը, թե մի ազգի անդամները կարող էին այս և այն եկեղեցուն պատկանել, բայց դարձյալ մի ազգային ամբողջական մարմին կազմել, և ցրված ուժերը մի տեղ հավաքելով, միասին գործել բանության և հարստահարության դեմ, և միասին ոտքափել այն անտանելի լուծը, որ ամենի վրա միևնույն չափով ծանրացած է»[2]։

Հետագայում Րաֆֆին վերստին անդրադարձավ դավանափոխության հարցերին և քննադատելով հետագիմ այն գաղափարախոսներին, որոնք իրենց անհեթեթ քարոզներով նպաստում էին ազգային ուժերի տարանջատմանը, ցույց էր տալիս, որ լուսավորչական եկեղեցուց անջատվածները իրենց լեզվով, հայրենիքով և ազգային բարքերով մնում են հայեր։ Երբեք չպետք է մոռանանք, որ «մենք մեկ ազգի որդիներ ենք, մենք միևնույն ընտանիքի զավակներն ենք։ Կրոնը, որ մի ժամանակ բաժանել էր մեզ, այժմ ազգի և հայրենիքի սերը պետք է միացնե։ Կաթոլիկությունը, բողոքականությունը և մինչև անգամ մահմեդականությունը չեն զրկում հային հայ լինելուց, և ոչ էլ լուսավորչականությունը մեզ իրավունք է տալիս հայ կոչվել։ Մենք հայ էինք, երբ հեթանոս էինք և հայ կմնանք, երբ հազար անգամ կփոխենք մեր կրոնը։ Մեր ազգությունը չի կորչի,—

[1] Րաֆֆի, հ. 9, էջ 476։
[2] Նույն տեղը, էջ 481—482։

երբ պահպանված կլինեն այդ բոլոր պայմանները, ինչ որ պետք են, ինչ որ անհրաժեշտ են մի ազգի գոյության համար»[1]։

Այնուամենայնիվ, Րաֆֆին գտնում էր, որ ազգի հիմքը, նրա հենարանը ոչ թե կրոնն է կամ դավանանքը, այլ լեզուն։ Նա է ժողովրդի տարբեր հատվածները կապում միմյանց, ամբողջացնում ու դարձնում հավաքական զանգված։ Առանց եկեղեցու հայը կարող է պահել իր ազգային գոյությունը, բայց առանց լեզվի անկարող է։

«Մենք միշտ ասել ենք և դարձյալ կկրկնենք,— գրում էր նա,— որ ազգության գաղափարը պայմանավորված է ոչ թե կրոնով, այլ նրա ցեղական հատկություններով, որոնց մեջ առաջին տեղը բռնում է լեզուն, որ է և միշտ կլինի ազգի պահպանության հիմքը։ Դա է, որ մշտական է, դա էլ անբաժանելի է մարդկությունից։ Լեզուն թեև փոփոխվում է, բայց իր փոփոխության մեջ ավելի կյանք է ստանում, զարգանում է և կատարելագործվում։ Մի մարդ կարող է ոչ մի եկեղեցու չպատկանել և մինչև անգամ անկրոն լինել, բայց չէ կարող օրևիցե լեզվով չխոսել։ Խոսքը միշտ կմնա, որքան ապրում է մարդկությունը. նա հավիտենական է»[2]։

Ռուս-թուրքական պատերազմից հետո, մասնավորապես 1880-ական թվականներին, Րաֆֆին էլ ավելի հաճախ էր հանդես գալիս հայ ազգի պաշտպանության և նրա համախմբման հարցերով, ավելի եռանդով էր պրոպագանդում ազգային լեզուն, պատմությունը, գրականությունը, բանահյուսությունը, ավանդություններ։ Եվ դա պատահական չէր։ Դարավերջին թե՛ ցարական կառավարությունը և թե՛ սուլթանական Թուրքիան սաստկացրին հայկական հալածանքները. փակվում էին հայոց դպրոցները, կուլտուր-կրթական հաստատությունները, արգելվում էին մայրենի լեզվի, գրականության, պատմության, աշխարհագրության և նման հայրենասիրական զգացմունքներ արթնացնող առարկաների դասավանդումը։ Անհրաժեշտ էր դիմագրավել այդ քաղաքականությանը։ Եվ միպասանը ստեղծեց հայրենասիրական մի շարք գործեր, որոնց թվում «Սամվելը», «Պարույր Հայկազնը», «Խամսայի մելիքությունները», «Դավիթ Բեկը» և այլն։

[1] Րաֆֆի, հ. 10, էջ 34։
[2] Նույն տեղը, հ. 9, էջ 501։

Մյուս կողմից, հայ ժողովուրդը նշված ժամանակաշրջանում արդեն դուրս էր եկել ազատագրական պայքարի բամահարթակ։ Անհրաժեշտ էր գոտեպնդել նրան, ոգևորել անցյալի հերոսական դրվագներով և ցույց տալ, որ միայն միասնական, համառ, տևական ու անձնուրաց կռվով կարելի է նվաճել կորցրած ազատությունը, փրկել հայրենիքը օտարի սարկացումից։ Րաֆֆին մեծ վարպետությամբ կատարեց այդ առաքելությունը։

* * *

Արևմտահայ ազգային-ազատագրական ելույթների ծավալմանը նպաստելու համար Րաֆֆին պրոպագանդում ու քաջալերում էր հայդուկային շարժումը։ Նա ցույց էր տալիս, որ հայդուկը գող կամ ավազակ չէ, այլ բռնակալության դեմ տանջված ու հարստահարված ժողովրդի բողոքի ու պայքարի արտահայտիչն է։ «Հայդուկը» սարուկի բողոքն է իշխողի բարբարոսության դեմ»[1]։ Նա ժողովրդական վրիժառու է և տառապողների վրեժն առնելու համար թողնում է ընտանիքն ու տունը, բարձրանում է լեռները, թաքնվում կիրճերում ու անտառներում և «իր որջից մահ և սարսափ է սպառնում իր շրջակայքի վրա»[2]։ Նա մորթում է, կողոպտում, այրում, բայց ոչ հարստահարվող ու տառապող զանգվածներին, այլ նրանց թշնամիներին, ճնշող ու կեղեքող վերնաշերտերին։

Րաֆֆին հայդուկի մեջ տեսնում էր ոչ միայն ժողովրդական վրիժառուին, այլև հեղափոխականին, հայրենիքի ազատության զինվորին։ Հայդուկը ցանկանում է «իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից... սրանց հասնելու համար նա չէ խնայում ամեն սարսափելի միջոցներ»[3]։

Գրողի կարծիքով հայ հեղինակները հայդուկներին դեռ չեն դարձրել իրենց վեպերի կամ բանական գրվածքների հերոսներ։ Միայն մեկը՝ «Աբովյանը, իր գրքի մեջ դուրս բերեց այդ կենդանի ժողովրդական տարրը— նրա Ազասին իր խմբով ուրիշ

1 Րաֆֆի, հ. 9, էջ 316։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը։

ոչինչ չէ եթե ոչ հայդուկների մի հրոսակ»[1]։ Մինչդեռ ոչ հեռավոր անցյալում և այժմ եղել են ու կան հայդուկներ, որոնց անհատական ու խմբակային գործերը գեղարվեստական ստեղծագործության համար անգնահատելի առաջնակարգ կարող են հանդիսանալ։ Պատահական չէ, որ Րաֆֆին կամենում էր իր «Կայծեր» վեպը վերամշակել և հրատարակել «Հայդուկներ» վերնագրով, գրում է նույնիսկ նրա առաջաբանը։ Սակայն առաջացած քաղաքական անբարենպաստ մթնոլորտի պատճառով, երբ ցարական կառավարությունը Հայկական հարցով զբաղվող մտավորականության հանդեպ կիրառում էր խստություններ, նրա ձեռնարկումն ապարդյուն է անցնում[2]։

* * *

Տոգորված արևմտահայության ազատագրության հարցով, Րաֆֆին տենդագին հետաքրքրվում էր, թե տերություններն ինչ քաղաքականություն են վարում այդ հարցի հանդեպ։ Նա եզրակացնում է, որ Ռուսաստանի վարքագիծը հայանպաստ է։ 1878 թ. փետրվար-մարտ ամիսներին գրած ու «Մշակում» հրապարակած իր «Դեռևս ուշ չէ» ծավալուն հոդվածում, վերլուծելով Կ. Պոլսում խմորվող արևմտահայ հասարակական ուժերի տրամադրությունները կամ, ինչպես ինքն էր ասում, կուսակցությունների քաղաքական կողմնորոշումները, գրում էր.

«Դառնանք դեպի մեր կուսակցությունները։

Կ. Պոլսում կա և մի ռուսական կուսակցություն, որը մեր նկարագրած կուսակցության (իմա՝ Թուրքամետ ամիրաների— Ա. Հ.) հակակշիռն է կազմում։ Այս կուսակցությունը ավելի զորություն ստացավ Իգնատիևի դեսպանության օրերում։ Նրանք մտածում էին, թե հայերը կարող են ազատվել Թուրքիայի հարբսատահարություններից,— դա կարող է լինել միայն ռուսների պաշտպանությամբ, և իրանց փրկությունը որոնում են միայն ռուսաց դրոշի տակ, ցանկանալով, կամ տաճկական Հայաստանը Կովկասի հետ միացած տեսնել, և կամ Թուրքիայի հպատակ մնալով, Ռուսաստանի հովանավորությունը վայելել։

1 Րաֆֆի, հ. 9, էջ 317։
2 Նույն տեղը, հ. 5, էջ 522։

Թե մինչև ո՛ր աստիճան ճիշտ են այս կուսակցության ակընկալությունները, մենք ավելորդ ենք համարում քննել...»[1]։

Նույն թվի դեկտեմբերին հրապարակած «Ինչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ» հոդվածում հրապարակախոսը գրում էր. «Տաճկաստանի հայերի վերականգնումը միշտ կարծիքական պետք է համարել, երբ հույս կդրվի միմիայն Կ. Պոլսի վրա։ Պետք է ամեն տեղից, ուր որ կան հայեր, օգնության ձեռք մեկնեն նրանց, և այդ պարտավորությունն առավելապես հասնում է մեզ՝ ռուսաստանցիներիս։ Մեր բարեսիրտ կառավարությունը մեզ չէ արգելում օգնել նրանց. նա կցանկանա, որ մենք պատրաստեինք Փոքր Ասիայում մի ժողովուրդ, որպես վահան անգլիական ազդեցության դեմ. նա կցանկանա, որ մի քրիստոնյա ժողովուրդ ազատված լինի Թուրքիայի բռնությունից, որոնց համար թափեց իր զինվորների այնքան շատ արյունը»[2]։

Անշուշտ, Բաֆֆին հանգամանքների թելադրանքով ստիպված էր այլ բնութագիր տալ ցարիզմի քաղաքականությանը։ Բայց ավյալ դեպքում կարևորը դա չէր, այլ այն, որ նա այդ քաղաքականության մեջ ուզում էր տեսնել հայանպաստ գործունեություն։

Սակայն հետագայում, մասնավորապես 1880-ական թվականների սկզբներին, երբ ինքնակալությունը Ալեքսանդր II-ի սպանությունից հետո անցավ հարձակման հեղափոխական ուժերի դեմ և խստացրեց Ռուսաստանում ազգային հալածանքները, հրապարակախոսն արդեն նկատում էր նրա բացասական վերաբերմունքը նաև Հայկական հարցի հանդեպ։ 1883 թ. մայիսի 17-ին Մելքոն Փանյանին հղած նամակում, պատմելով ոստիկանության կողմից իր տան կատարած խուզարկումների մասին, նա գրում էր. «... կառավարության տրամադրությունը Հայկական հարցի վերաբերությամբ, ինչպես երևում է, փոխվել է»[3]։

Անդրադառնալով արևմտաեվրոպական տերությունների քաղաքականությանը, Բաֆֆին 1877—1878 թթ. հակված էր կարծելու, թե նրանք ինչպես լուծեցին Բալկանյան մի շարք ժողովուրդների ազգային խնդիրները, այնպես էլ կվճռեն Հայկական խնդիրը։ Ուստի իր համախոհների հետ աշխատում է «տաճկահայերի ցավալի դրության բարվոքման, ... Բեռլինի 61-րդ հոդվածի իրագործման մասին...»[1]։ Նա նույնիսկ ենթադրում էր, որ եթե հայերը ըմբոստանան, ապա թուրքերը չեն համարձակվի կոտորել հայերին, քանի որ «Անգլիայի նավատորմը կանգնած է Կ. Պոլսի պարիսպների տակ քրիստոնյաներին մահմեդականների բարբարոսությունից ղերծ պահելու անունով»[2]։

Բայց շուտով հիասթափվեց այդ պատրանքներից և սկսեց մերկացնել ու խարազանել եվրոպական տերությունների տմարդի քաղաքականությունը հայերի հանդեպ։ Համեմատելով արևմտահայերի տարտամ ելույթները օսմանյան իշխանությունների դեմ ճանճի բզզոցների հետ, հրապարակախոսը 1878 թ. սկզբներին գրում էր. «Եվ ի՞նչ նշանակություն կարող են ունենալ մեր բզզոցները եվրոպական ընդհանուր մարդասիրությունից զուրկ, եսական քաղաքականության առջև, քանի որ սլավոնական ցեղերի թնդանոթների որոտմունքը, և նրանց թափած արյան մրրմունջը ազդեցություն չեն գործում»[3]։

Քիչ անց նա գրեց. «Ներկա պատերազմի սկզբից մեղանից շատերը հույս ունեին, թե տաճկական Հայաստանը զուրկ չի մնա այն արտոնություններից և այն իրավունքներից մեկից, որոնց համար պատերազմը հրատարակվեցավ, և որոնք պետք է տրվեին Թուրքիայի լծի տակ ճնշված քրիստոնյաներին։ Իսկ այժմ գործից երևում է, թե հայերի վիճակը ոչինչ փոփոխություն չէ կրելու.— շատ-շատ տաճկական Հայաստանի ռուսաց զորքերով գրավված մասը կմիանա Կովկասի հետ, բայց մնացած մեծ մասը դարձյալ կմնա թուրքերի ձեռքում, գուցե մի քանի խոստումներով, որպես միշտ եղել են մինչև այսօր և միշտ մնացել են որպես մեռյալ տառ...»[4]։

Երկու տարի անց՝ 1880 թ. հոկտեմբերին Բաֆֆին գրում էր. «Թուրքիայի հայերը մինչև այսօր իրենց բոլոր հույսը դրել էին դիվանագիտական բանակցությունների վրա, ամեն ինչ սպասում էին Եվրոպայից և իրենց փրկությունը միայն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մեջ էին որոնում։ Բայց Անգլիայի

1 Բաֆֆի, հ. 9, էջ 301։
2 Նույն տեղը, էջ 474։
3 Նույն տեղը, հ. 10, էջ 572։

1 Տե՛ս Բաֆֆի, հ. 10, էջ 572։
2 Տե՛ս նույն տեղը, հ. 9, էջ 305։
3 Նույն տեղը, էջ 272։
4 Նույն տեղը, էջ 295։

պետական մարդիկներից մեկը, մինիստր Բրայսը, այս օրերում խիստ ճիշտ կերպով նկատեց Կ. Պոլսի հայերին. «Աշխատեցեք չձանձրացնել Եվրոպային»[1]։

Դառնանալով անգլիական մինիստրի խոսքերից, Րաֆֆին ավելի ու ավելի է համոզվում, որ եվրոպական օգնությունը սոսկ պատրանք է, չունի գործնական նշանակություն և կոչ է անում արևմտահայերին՝ իրենց ձեռքը վերցնել իրենց բախտը, քանզի նրանց փրկության համար մնացել է միայն այդ ճանապարհը։

Ինչ վերաբերում է Թուրքական կառավարությանը, ապա Րաֆֆին, ի տարբերություն պահպանողականների ու լիբերալների, որոնք նրանից սպասում էին հայանպաստ բարենորոգումներ, ոչ միայն չուներ այդ ակնկալությունը, այլև խստագույնս քննադատում էր, նպատակ ունենալով զգաստ պահել արևմտահայությանը նրա գլխին կանգնած արհավիրքի հանդեպ։ 1880 թ. հոկտեմբերին նա հանդես եկավ «Փախուստի ճանապարհը» հրապարակախոսական հոդվածով, որի մեջ նշում էր, թե Բ. Դուռը խոստացել է լուծել Հայկական հարցը չորս ամսվա ընթացքում, բայց իրականում ձգտում է ժամանակ շահել և ընդմիշտ թաղել այն։

Րաֆֆին նշում էր, որ Եվրոպային խաբելու համար Թուրքիան Հայաստան է ուղարկում կոմիսարներ, զանազան բարեկարգիչներ, ձևացնում է, որ մտահոգված է Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարցերով, բայց միաժամանակ մահմեդականներին գրգռում է հայերի դեմ և «փոխանակ բարեկարգությունների, արյուն, կոտորած, ավերմունք կտարածեն Հայաստանում...

Եվ երբ Հայաստանը կծխի արյան և կրակի մեջ, նա կպատասխանի Եվրոպային. իմ ժողովուրդը դեռ պատրաստ չէ. ես ամեն միջոցներ գործ դրեցի։

Խոստանալ և չկատարել— այդ Թուրքիայի վաղեմի սովորությունն է։ Իսկ բարիք խոստանալ և չարը գործադրել— այդ

1 Րաֆֆի, հ. 10, էջ 39։

պահանջում է նրա այժմյան ամենախարդախ քաղաքականությունը»[1]։

Ապա նա ցույց է տալիս, որ Բ. Դուռը խաբեբայությունից անցնում է բացահայտ ռեակցիոն քաղաքականության. Կ. Պոլսի հայոց պատրիարքին նա ասել է, որ իր կայսրության մեջ Հայաստան անունով երկիր չի ճանաչում, իսկ Կ. Պոլսի եվրոպական դեսպաններին հայտարարել է, որ կամենում է բարենորոգումներ մտցնել ոչ միայն Հայաստանում, այլ ամբողջ Փոքր Ասիայում։ Այդ խոսքերից Րաֆֆին եզրակացնում էր, որ «Բ. Դուռը չէ ցանկանում Հայաստանը դարձնել մի արտոնական երկիր, որպեսզի այդ երկիրը, իբրև մի որոշ մարմին չառանձնանա և չանջատվի իր պետությունից»[2]։

Ավելին, նա «աշխատում է հայկական խնդիրը խեղդելու նպատակով ոչնչացնել հայ տարրը։ Աշխատում է լցնել Հայաստանը քրդերով, չերքեզներով, լազերով, աջարացիներով և այդ բոլոր վայրենի ցեղերի բարբարոսությունը գրգռել հայերի դեմ»[3]։ Վասպուրականում քրդերն արդեն այրում են հայկական գյուղերը, Տարոնում արյուն է հոսում, Ատրպատականում վտանգ է սպասում հայերին, Հեքյարիի կողմերում քուրդ ցեղապետերը մորթոտում են քրիստոնյաներին, Հին Բայազետում նրանք կողոպտում են հայերին։ «Ամեն տեղ նկատվում են միևնույն չարագործությունները, որոնց կեղևի տակ թաքնված է Թուրք կառավարության պաշտոնատարների նենգավոր ձեռքը»[4]։

Րաֆֆին նշում է, որ Թուրքիան խոստացել էր Հայոց հարցը վճռել չորս ամսվա ընթացքում։ Եվ նա կատարում է իր խոսքը, բայց հակառակ տեսակետից։ Եթե իրադրություններն այդպես ընթանան, ապա հնարավոր է, որ «չորս ամսից հետո էլ Հայաստանում հայ չի մնա»[5]։

Գրողը անողոք քննադատում էր նրանց, ովքեր կարծում էին, թե հայի ապագան Տաճկաստանում է, թե նրա գոյությունը կապված է Թուրքական կառավարության հետ, թե Արևմտյան Հայաստանում բարբարոսություններն ու հարստահարություն-

1 Րաֆֆի, հ. 10, էջ 37։
2 Նույն տեղը, էջ 38։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը։
5 Տե՛ս նույն տեղը, էջ 39։

ները կվերանան, երբ թուրքերը քաղաքակրթվեն։ Հրապարակախոսն այդ ամենը համրում էր ցնորք։ Նրա կարծիքով, թուրքերը քաղաքակրթվելուց հետո կդառնան կրթյալ ավազակներ և էլ ավելի վտանգավոր։ Նրանք կկողոպտեն հայերին ավելի խորամանկ ու դաժան եղանակներով։ Թուրքական պետությունը մի վիրաբուժի վիշապ է, որ, հիմնված լինելով գինվորական ուժի վրա, կլանում ու լափում է իր հպատակ ազգերի աշխատանքի արդյունքները։ Ավելին՝ «այդ վիշապը կուլ է տալիս ամբողջ ազգեր ու ժողովուրդներ իր մարմինը պարարտացնելու համար»[1]։ Դա հաստատվում է հայ ժողովրդի անցյալի պատմությամբ։ «Մի՞թե երեկվա գազանը կարող է այսօր հրեշտակ դառնալ։ Մինչև նրա հրեշտակ դառնալը, Թուրքիայում հայի անունը միայն մնացած կլինի»[2]։

Րաֆֆին Արևմտյան Հայաստանի բոլոր ճնշված ժողովուրդների բարեկամն էր ու նրանց եղբայրության ջատագովը։ Նա պրոպագանդում էր հատկապես հայ-քրդական համերաշխությունը, փոխադարձ օգնությունն ու օժանդակությունը։ Նկարագրելով, թե ինչպես շեյխ Ջալալեդդինը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին իր հրոսակներով կոտորում էր հայերին, նա ցույց է տալիս, որ ոչ բոլոր քրդերն էին մասնակցում նրա ոճրագործություններին։ Ընդհակառակը, կային քրդեր, որոնք ոչ միայն դեմ էին հայերի ջարդերին, այլ պաշտպանում էին նրանց։ Վիպասանը գրում է. «Բայց չէր կարելի միանգամայն ուրանալ քրդերի մեջ ազնիվ մարդիկ, նրանց մեջ կային և այնպիսիները, որոնք զուրկ չէին բարի զգացմունքներից, որոնք չէին մասնակցում վատ գործերին։ Այս տեսակ մարդկից մեկն էր Օմար աղան, իր հոտերով և երամակներով հարուստ քուրդը, որը մի փոքրիկ ցեղի պետավորն էր։ Նա չմասնակցեց Ջալալեդդինի արշավանքին»[3]։ Ավելին՝ խոստացավ միանալ վանահայր վարդապետ Եղիազարին և նրա հետ միասին դիմադրավել շեյխին և «իր խոստումները կատարեց»[4]։

Քրդերից ոմանք էլ օգնում էին ռազմի դաշտում վիրավորված իրենց հայ բարեկամներին, բուժում էին նրանց վերքերը

1 Տե՛ս Րաֆֆի, հ. 9, էջ 272։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, հ. 3, էջ 45—46։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 46։

և երդվում վրեժխնդիր լինել նրանց համար։ Այսպես, երբ իր հերոսներից մեկը՝ Սահրատը, վիրավորվում է Ջալալեդդինի դեմ մղած կռվում և մեռնում, նրա քուրդ բարեկամ Մատոն ասում է. «Դու իմ վրանիս տակ ես մեռնում, ո՛վ քաջ, և իմ վրա ես թողնում վրեժխնդիր լինել քո մահվան համար— Մատոն կկատարե այդ»...— ասաց նա հառաչելով և գրկեց մեռնողի գլուխը»[1]։

Րաֆֆին ատում էր բռնակալներին, աղաներին ու բեգերին, բայց աշխատավոր զանգվածներին, անկախ նրանց ազգային պատկանելությունից, կարեկցում ու սիրում էր։ Նա ցանկանում էր բոլոր ժողովուրդների աղատությունն ու անկախությունը, եղբայրությունն ու համերաշխությունը, «մի համոզված աշխարհայացք, որ նա անց է կացրել իր ամբողջ ստեղծագործության միջով, սկսած «Սալբի» վեպից։ Մի՞թե դրա ցայտուն արտահայտությունը չէ նաև այն մեծ ոգևորությունը, որով Րաֆֆին մեծարում է «համաշխարհային հասարակապետության» ձգտող այն առաջավոր մարդկանց, որոնք «երազում են ազգերի եղբայրություն և չքավորության վախճան»[2]։

Հումանիստ գրողը մեծ հարգանքով էր լցված եղբայրական վրաց ժողովրդի նկատմամբ։ Նա խարազանում էր Վրաստանում գոյություն ունեցող ֆեոդալական-ճորտատիրական կարգերն ու բարքերը, որոնք կաշկանդում էին երկրի արտադրողական ուժերի զարգացումը, իսկ աշխատավոր գյուղացիությանը ենթարկում սանձարձակ բռնություններին, կամայականություններին ու նվաստացումների[3]։ Վիպասանը ցանկանում էր, որպեսզի վրաց ժողովուրդը որքան հնարավոր է շուտ ազատվի միջնադարյան այդ վայրագ հարաբերություններից ու հասնի իր ազատությանն ու բարօրությանը։

* * *

Ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ Հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա, հայ պահպանողական ու լիբերալ ներկայացուցիչնե-

1 Րաֆֆի, հ. 3, էջ 68։
2 Ս. Սարինյան, նշվ. աշխ., էջ 165։
3 Տե՛ս Րաֆֆի, հ. 6, էջ 187, 195։

րը բավարարվում էին սոսկ այն բարենորոգումներով, ինչ ասված էր տերությունների Բեռլինի նախագծում։ Ի տարբերություն նրանց, Րաֆֆին պահանջում էր ձեռնարկել ավելի արմատական վերակառուցումներ։ 1878 թ. «Մշակում» հրապարակած «Ի՞նչ վերանորոգություններ պետք են տաճկական Հայաստանին» հոդվածում նախ՝ խնդիր էր դնում ոչնչացնել Ղուրանի դոգմաները հողատիրության ասպարեզում, վերացնել թափուի կարգը և հային «իրավունք տալ ազատ կալվածատեր լինելու, որ նա, որպես սեփականություն իր հողն ունենա և նրանից ամեն կերպով օգտվելու իրավունք ունենա։ Դրանով կարելի է միայն հնար տալ գյուղացուն իր աշխատությամբ իր ապրուստը հայթայթելու։ Նա չպիտի լինի վարձկալ, այլ հողը պիտի լինի մի հաստատուն ժառանգություն, որ անցնում է սերունդից սերունդ, որը նա կարող էր գնել, վաճառել, գրավ դնել, մի խոսքով, վարվել նրա հետ որպես իրան պատկանող սեփականության հետ»[1]։

Երկրորդ՝ անհրաժեշտ է հային իրավունք տալ կատարելու ոչ միայն զինվորական ծառայություն, այլև զենք կրելու, քանի որ ով «ծանոթ է Թուրքիայի կազմակերպությանը, մեզ հետ կհամաձայնվի, որ այդ երկրում անկարելի է ապրել և իր գոյությունը պահպանել առանց զենքի։ Թուրքիան բնակեցրած է այնպիսի ցեղերով, որոնք իրանց մեջ մշտապես կռվում են, որոնք միմյանց հետ մրցում են սրով միայն։ Ինչո՞վ կարող է ընդդիմադրել նրանց անզեն հայը»[2]։ Հրապարակախոսը նշում էր, որ կարելի էր այդ հարցը չդարձրացնել, եթե թուրքական կառավարությունը կարողանար զինաթափել բոլորին, կամ «պահպանել անզեն հայերին զինյալ մահմեդականների բարբարոսություններից»[3]։ Բայց քանի որ նա այդ չի անում, ուստի հայի համար զենք ունենալը կենսական անհրաժեշտություն է։

Ելնելով այն բանից, որ Թուրքիայում բնակվող քրդերը, չերքեզները, արաբները և այլոք չեն մասնակցում երկրի զինվորագրմանը, չեն մտնում նրա կանոնավոր զորքերի մեջ, «այլ կազմում են առանձին միլիցիաներ, որոնք պատերազմից հետո դառնում են իրենց տները», որ երկրում տիրող կրոնական դոգ-

1 Րաֆֆի, հ. 9, էջ 307։

2 Նույն տեղը, էջ 308։

3 Տե՛ս նույն տեղը։

մաները թույլ չեն տալիս հայերին բանակում խառնվելու մահմեդականներին, ունենալու նրանց հետ սերտ հարաբերություն, Րաֆֆին առաջարկում էր զորակոչված հայերից ստեղծել ազգային միլիցիա։ Եթե երկրում առաջանա այնպիսի իրավիճակ, որ «հայերից պահանջվեն կանոնավոր զինվորներ և ոչ միլիցիա, այն ժամանակ ևս հայոց զինվորները պետք է առանձին գունդեր կազմեն թուրքաց բանակի մեջ իրանց հայ զորապետներով և զորավարներով»[1]։ Մի խոսքով, հայ ազգային միլիցիայում հավաքագրվածները խաղաղ ժամանակ պետք է պաշտպանեն հայերին «ներքին հարձակումներից, իսկ պատերազմի ժամանակ օգնեն պետությանը»[2]։

Երրորդ՝ անհրաժեշտ է լուրջ փոփոխությունների ենթարկել շարիաթը, քանի որ նրա «հնացած ու մաշված օրենքներն անբավարար և անհամապատասխան են ոչ միայն ոչ մահմեդականների համար, այլ նույնիսկ մահմեդականների վերաբերությամբ, որոնց կյանքի նահապետական պարզ ձևերը շատ և շատ փոխվել են սկսյալ այն օրից, երբ այդ օրենքները հրատարակվեցան իսլամի մարգարեի բերանով և ամփոփվեցան Ղուրանի մեջ։ Անփոփոխ և մշտական օրենքները, որ տրվում են աստվածապետական ժողովուրդներին, ուրիշ ոչինչ չեն, եթե ոչ մի ծանր կապանք, որ կաշկանդում է, քարացնում է ազգերը հավիտենական անշարժության մեջ»[3]։

Համոզվելով, որ թուրքական կառավարությունը փոփոխությունների չի ենթարկի շարիաթը, չի վերանայի մահմեդականության դոգմաները, Րաֆֆին առաջարկում էր, որ այն դոնն ընդլայնի հայոց ազգային սահմանադրությունը, տարածի նաև դավառների վրա, դուրս բերի կրոնական շրջանակներից և հանդրդի աշխարհիկ բովանդակություն, ազատի դավառական մեջլիսները շարիաթի ազդեցությունից ու կապանքներից և դնի ինքնուրույն գործունեության հունի մեջ։ Նա գրում էր. «Ընդարձակելով հայոց ազգային սահմանադրության սահմանափակ շրջանը նոր իրավունքներով և տարածվելով բոլոր հայաբնակ գավառներում, այդ բավական կլիներ հայերին հնար տալ իրանց գործերը իրանց ձեռքով վճռելու, իսկ վերանորոգվելով

1 Րաֆֆի, հ. 9, էջ 309։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 309—310։

3 Նույն տեղը, էջ 310։

գավառական մեջլիսները, կդյուրացնեին նրան դատաստանական հարաբերություններն օտարազգիների հետ»[1]։

Չորրորդ՝ հաշվի առնելով այն իրական փաստը, որ Թուրքական կառավարությունը արևմտահայության հանդեպ վարում է ձուլման քաղաքականություն, նպաստում է արևմտաևրոպական կրոնական քարոզիչներին ըղկտելու նրան, դարձնելով կաթոլիկ, բողոքական և այլն, հրապարակախոսը գտնում էր, որ Թուրքիայի հայը իր դոյությունն ու ամբողջականությունը պահպանելու համար պետք է համոզվի, որ անհրաժեշտ է «բողնել եկեղեցին, թողնել կրոնն անհատների խղճի վրա և ձեռք մեկնել հայ կաթոլիկին, հայ բողոքականին ու հայ մահմեդականին, ասել նրանց՝ «մենք եղբայրներ ենք, մենք միասին պետք է բաժանենք մեր ներկան և ապագան, թող եկեղեցին բաժանեն մեզ, միացնենք մեր ուժերը և միասին գործենք»[2]։

Ահա այն հիմնական ուղիները, որոնցով, ըստ Րաֆֆու, պետք էր լուծել արևմտահայության հողային հարցը, վերակառուցել ու առաջ մղել նրա հասարակական-քաղաքական կյանքը։ Դրանք, ըստ էության, հեղափոխական բնույթի պահանջներ էին, որոնց իրագործումը կվերաիոխեր համիդյան բռնապետությունը և կտաներ այն դեպի դեմոկրատական հաստատություններ։

Առաջ քաշելով այդ պահանջները, հրապարակախոսը, իհարկե, չէր հավատում, թե դրանք կարող են լուծվել սուլթանական կառավարության կողմից։ Ընդհակառակը՝ նա գտնում էր, որ այդ կառավարությունը, վարելով հայահալած քաղաքականություն, ձգտում է ավելի վատթարացնել հայերի դրությունը։ Ուստի նա ավելորդ էր համարում դիմել Թուրքական իշխանություններին և արևմտահայության կացության բարելավման ու վերակառուցման գործը կապում էր հարստահարվող զանգվածների ազատագրական պայքարի հետ։ Հրապարակախոսը գրում էր. «Սուլթանի Դռան բարձրագույն ֆերմանները նույն նշանակությունն ունեն հարստահարված ժողովրդի բարօրության համար, ինչ նշանակություն որ ունի սեր-բարաչի գրած թալիսմանը մի հիվանդ երեխայի առողջության մասին, որը

1 Րաֆֆի, հ. 9, էջ 312։
2 Նույն տեղը, էջ 315։

խորին ջերմեռանդությամբ առնում է մայրն ու խնամքով դնում է որդու բարձի տակին, որ նա չմոնի...

Տաճկաստանի գործերի այսպիսի անկարգ և այլանդակ դրությունը մեզ բնավ չէ զարմացնում, որովհետև նա շատ հատկանիշ է և ծագում է իրերի բնական կարգից։ Որքան էլ աշխատեր, որքան էլ ճգներ Դուրը, և որքան էլ հաճախ իր ֆերմաններով ազատ իրավունք և արդարություն տեղար ժողովրդի վրա,— բոլորն անօգուտ էն Որովհետև մենք համոզված ենք, թե վերևից միայն հրաշքներ կարող են գործվիլ, բայց մի երկրի բարեկարգությունը պետք է սկսվի ատմատից»[1]։

* * *

Րաֆֆին արևմտահայության փրկությունը, նրա ազատագրումը տեսնում էր սուլթանական լծի թոթափման և անկախության հռչակման մեջ։ Նա հայ ժողովրդի ապագան պատկերեց «Խենթ» վեպում՝ Վարդանի հանրահայտ երազում։ Հոգնատանջ երիտասարդը ընկնելով իր սիրած աղջկա գիրկը, երազում տեսնում է, որ ավերակ ու անապատ դարձած Հայաստանը 200 տարի հետո բոլորովին կերպարանափոխվել ու վերանորոգվել է։ Այդ երկրում այժմ տիրում է գիտակցությունն ու զարգացած քաղաքակրթությունը, մարդիկ ապրում են իրենց աշխատանքով ու քրտինքով։ Նրանք բանում են իրենց համար, իրենց բարօրության համար։ Նրանց աշխատանքը ոչ ոք չի հափշտակում կամ թալանում։

Վարդանն ընկել է Ալաշկերտի գյուղերից մեկը, որն իր բնությամբ, լեռներով ու գետերով, դաշտերով ու մարգագետիններով մնացել է անփոփոխ, բայց հեղաբեկվել է իր հասարակական կյանքով, մարդկային հարաբերություններով։ Չկան այլևս այն ողորմելի գետնափոր խրճիթները, որոնք ավելի գազանների որջերի էին նման, քան մարդկանց բնակարանների[2]։ Տները քարաշեն են, շրջապատված գեղեցիկ պարտեզներով, փողոցները լայն և ուղիղ են, հովանավորված մշտադալար ծառերով։ Նրանց մոտով հոսում են պարզահոսուն առվակները։

1 Րաֆֆի, հ. 9, էջ 237—238։
2 Նույն տեղը, հ. 3, էջ 353։

Տներից դուրս են գալիս մաքուր հագնված, ուրախ ու զվարթ երեխաները և շտապում դպրոց։ Վարդանը զարմանում է՝ մի՞թե դրանք իր գիտեցած «կիսամերկ ու հիվանդոտ երեխաներն էին»։ Նա հիանում է, մտածելով՝ «երևի դպրոցը և վարժապետը չեն վախեցնում նրանց»[1]։

Ապա լսում է զանգի ձայնը և գնում եկեղեցի։ Տեսնում է, որ այն ևս վերափոխված է. չկային ոչ բեմ, ոչ սեղան, ոչ զարդարած տաճար, ոչ ոսկեզօծ պատկերներ, ոչ արծաթյա խաչեր, ոչ թանկագին զգեստներ, անգամ դպիրներ, սարկավագներ և տիրացուներ։ Կային միայն երկու պատկերներ՝ մեկը Քրիստոսի, մյուսը՝ Գրիգոր Լուսավորչի։ Ժողովուրդը նստած էր նստարանների վրա, ամեն մեկն ուներ մի-մի երգարան, իսկ քահանան ամբիոնից կարդում էր բոլորին պարզ ու հասկանալի և մատչելի քարոզ։ Նրա քարոզի մեջ ազդեցիկ էր այն, որ «քո ճակատի քրտինքով պետք է վաստակես քո հացը»[2]։ Մարդիկ խնդրում էին աստծուց, որ «շնորհե իրանց առողջություն, խելք և զորություն, որ կարողանան գործել, աշխատել և արդյունավորել նրա ստեղծած երկիրը, որ բովանդակում է իր մեջ անսահման բարիքներ»[3]։ Ապա աստծուն հայտնում էին իրենց գոհունակությունը, որ լիացրել է իրենց ցորենի, գինու և այլ մթերքների առատություններով։

Վարդանը զարմանում է, որ մարդիկ խնդրում են միայն իրական կյանքի համար, իսկ հոգու համար ոչինչ չեն խնդրում, զարմանում է, թե ինչպես են մարդիկ հարմարեցրել «կրոնի վերացականությունը իրական կենցաղավարության պահանջների և պայմանների հետ»[4]։

Նա տեսնում է, որ ժողովրդի դուրս գալուց հետո եկեղեցում նրա տեղը նստում են երեխաները ու լսում վարժապետի դասերը։ Եվ նորից է զարմանում՝ մի՞թե մարդիկ եկեղեցին միացրել են դպրոցին և խնայելու նպատակով «չեն կամեցել դպրոցի համար առանձին շենք կառուցել»[5]։

Այնուհետև գյուղացիներից մեկը Վարդանին հյուր է հրա-

1 Տե՛ս Բաֆֆի, հ. 3, էջ 353։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 354։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 355։
5 Տե՛ս նույն տեղը։

վիրում իր մոտ։ Նա ընդունում է այդ հրավերը և տուն մտնելով ապշում է շինականի հարստությամբ։ Նրա տունն ուներ «մի քանի սենյակներ, որ հարմարեցրած էին կյանքի զանազան պահանջներին, բոլորը պարզ, մաքուր և իրանց պատշաճավոր կարասիներով զարդարված»[1]։ Գյուղացին բավարարված էր նաև ուտելիքով ու հանդերձանքով։ Վարդանը սկզբում կարծում էր, թե գյուղացիներն աշխատում են անընդհատ, բայց հետո տեսնում է, որ նրանք ունեն իրենց հանգստի օրերն ու ժամերը, ուրախության ու զվարճության առիթները։ Տանտերը նրան բացատրում է, որ շինականի երջանկությունը ոչ այնքան անդուլ աշխատանքի մեջ է, որքան գործը գիտենալու և այն հեշտացնելու հնարների մեջ։ Բնությունը շատ ուժեր ունի, «միայն պետք է ծանոթանալ նրանց հետ և գիտենալ թե ի՞նչ միջոցներով կարելի է նրանցից օգուտ քաղել»[2]։

Վարդանի այն հարցադրմանը, թե գյուղացին միշտ էլ բախտավոր կլինի, եթե գրքերը թողնեն, որ նա իր վաստակի տերը մնա, զրուցակիցը պատասխանում է, որ այդ բարբարոսներն այլևս չկան։ «Դեռ անցյալ դարու սկզբներում նրանք ընդունեցին մեր կրոնը, սկսեցին սովորել մեր դպրոցներում և հետզհետե խառնվելով մեզ հետ, անհետացան»[3]։

Զրուցակիցն այնուհետև շարունակում է, որ գրքերի անհետանալուց հետո շատ բան փոխվեց, ավերակ անապատները, քանդված տներն ու գյուղերը վերակառուցվեցին ու վերածվեցին ծաղկաստանի, ճանապարհները բարեկարգվեցին և նրանցով ընթացող կառքերը սլանում են ոչ թե «անասունների ուժով, այլ շոգու զորությամբ։ Մեր երկրի արդյունաբերությունները մենք վաճառահանում ենք հազարավոր մղոններ հեռու և փոխարենը ստանում ենք՝ ինչ որ մեզ պետք է»[4]։

Տանտերն ապա պատմում է, որ իր աղջիկն արդեն ավարտել է Նոր Վաղարշապատի ճեմարանը, իսկ այժմ պատրաստվում է մտնել համալսարանի բժշկության բաժինը, տղաներից մեկը անտառապահ է, մյուսը՝ Կարինի համալսարանի պրոֆեսոր, երրորդը՝ Վանի զորամասի գնդապետ, չորրորդը սովորում

1 Բաֆֆի, հ. 3, էջ 356։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 357։
3 Նույն տեղը, էջ 357—358։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 359։

է Նոր Բագրևանդի գյուղատնտեսական ուսումնարանում և այլն։ Վարդանի զարմանքին, թե ինքը չի հիշում այդ անուններով քաղաքներ, զրուցակիցը պատասխանում է. «Մեր քաղաքներից, գյուղերից և գավառներից շատերը փոխել են իրանց անունները, մի քանիսը իրանց վաղեմի պատմական անուններն են ստացել, իսկ մի քանիսը նոր անուններ են ստացել»[1]։

Տանտերն այնուհետև անցնում է բնակչության քաղաքական կյանքին, նշում է, որ ինքը գավառի գյուղացիների կողմից ընտրված է երեսփոխան և իբրև այդպիսին մասնակցում է քաղաքի երեսփոխանական ընդհանուր ժողովին, սպասում է, որ այդ ժողովում կլինեն վիճաբանություններ, քանի որ «կուսակցությունները սաստիկ հուզված են երևում»։

Հետո նա ու Վարդանը դուրս են գալիս տանից, քայլում են փողոցներով։ Վարդանը հուզվում է, երբ տեսնում է, թե ինչքան ինքը հետ է մնացել կյանքից, ինչքան մարդիկ զարգացել են, ինչքան վայելուչ կերպարանք են ստացել։ «Առաջվա գոնհական կոշտությունները այլևս չէին երևում, ամեն տեղ շնչում էր կրթության ոգին իր ջերմ, կենսագործող զորությամբ։ Մի բան որ մնացել էր անփոփոխ, դա էր հայկական խոսքը, լեզուն։ Բայց որքա՜ն մշակվել, որքա՜ն կոկվել էր այդ լեզուն, և որքա՜ն գեղեցիկ դարձվածքներով այժմ հնչում էր նա հայ մարդու բերանում»[2]։

Հյուրընկալն ու հյուրը դուրս են գալիս գյուղից, անցնում են մի գործարանի մոտով, ուր շոգու և մեքենաների օգնությամբ տախտակներ էին սղոցում և մատակարարում մերձակա քաղաքին ու գյուղերին։ Վարդանի այն հարցին, թե ում է պատկանում գործարանը, հյուրընկալը պատասխանում է.

— Մեր գյուղում ինչ գործարան որ տեսնելու լինեք, առանձին մարդու սեփականություն չէ, գործարանները այստեղ պատկանում են գյուղական համայնքին, ամեն մի գյուղացի մասն ունի նրանց մեջ։ Գերանները ստացվում են մերձակա անտառներից, որոնք նույնպես գյուղացիների սեփականությունն են»[3]։

Ապա նա շարունակում է.

1 Բաֆֆի, հ. 3, էջ 360։
2 Նույն տեղը, էջ 361։
3 Նույն տեղը, էջ 361—362։

— «Ահա այդ ահագին շինվածքը... դա պանրագործության գործարան է, այստեղ պատրաստվում է մեր գավառի ամենաընտիր պանիրը. դա նույնպես պատկանում է գյուղական համայնքին։ Յուրաքանչյուր գյուղացի ներկայացնում է այստեղ իր անասուններից ստացած կաթը, և ընդհանուր արդյունքի բաժանման ժամանակ, նրա համեմատ ստանում է կամ պանիր, կամ արծաթ»[1]։

Ահա զրուցակիցները դաշտում են. գյուղացիները հասունացած հունձքը հնձում են ոչ թե գերանդիով ու մանգաղով, այլ մեքենաներով, որոնցից յուրաքանչյուրը հարյուրավոր մարդկանց գործ է կատարում։ Նրանք տեսնում են հսկայական ջրաղաց, որը նույնպես պատկանում էր գյուղական համայնքին և, բանելով շոգու ուժով, աղում բազմաթիվ գյուղացիների ցորենը։ Նրանց այլուրն արտահանվում է վաճառքի օտար երկրներ։

«Բայց մի բան, որ ավելի զարմացնում էր Վարդանին, այդ այն էր, որ բոլոր գյուղացի բանվորները որտեղ և հանդիպում էին նրան, աչքի էին ընկնում իրենց համարձակությամբ, անձնավստահությամբ և այրական անվեհերությամբ։ Կարծես դրանք սնվել և մեծացել էին կատարյալ ազատության մեջ, կարծես դրանք երբեք թուրքի ապտակ չէին կերել կամ քրդի նիզակը մի անգամ գոնե չէր վախեցրել նրանց։ Նա տեսնում էր, որ այդ աշխատող բազմությունը ընդունակ է հարկը պահանջած ժամանակ, թողնել բահը և արորը, և նրանց փոխարեն զենք կրել, և նույնպես հմուտ, նույնպես հաջողակ կերպով գործ անել»[2]։

Վերադառնալով գյուղ, նրանք մոտենում են գյուղատնտեսական դպրոցին, որի առջև փռված էր ընդարձակ ագարակը իր զանազան բաժանմունքներով։ Այն մշակվում էր աշակերտների և աշակերտուհիների ձեռքերով։ Նրանք աճեցնում էին աշխարհի համաթյա բոլոր բույսերի, տունկերի ու ծաղիկների տեսակները։ Միաժամանակ նրանք զբաղվում էին մարմնամարզությամբ ու գինավարժությամբ, դառնալով թե՛ լավ երկրագործներ և թե՛ լավ զինվորներ։

Բաժանվելով հյուրասեր տանտիրոջից, Վարդանը մեկնում է

1 Բաֆֆի, հ. 3, էջ 362։
2 Նույն տեղը։

երկաթուղու կայարան և հանդիպում իր վաղեմի ծանոթներից մեկին՝ Սալմանին, որն էլ նրան հիշեցնում է իր երբեմնի ասածները Հայաստանի անցյալի ու ապագայի մասին և ավելացնում. «Այժմ բոլորը կատարվեցավ։ Այժմ հայ մարդու ապրուստը խիստ ապահով, ուրախ և խաղաղ է հայրենի հողի վրա։ Բայց նթե գիտենայիր, թե որքա՜ն աշխատեցինք մենք, մինչև նրան այս վիճակին կարողացանք հասցնել... շա՜տ աշխատեցինք... այս երկու հարյուր տարվա ընթացքում հազարավոր փորձանքների միջից անցանք... բազմաթիվ արյան և առատ քրտինքի գնով գնեցինք մեր հանգստությունը»[1]։

Նստելով գնացք, նրանք մեկնում են քաղաք, ուր Սալմանը Վարդանին ցույց է տալիս նշանավոր կառույցները, բացատրելով, թե այս մեկը համալսարանն է, մյուսը՝ գիտությունների ակադեմիան, երրորդը՝ թանգարանն է, որ երբևէ եղել է թագավորական պալատ, չորրորդը՝ քաղաքի նշանավոր թատրոններից մեկն է, հինգերորդը՝ հիվանդանոց է, վեցերորդը՝ խմբագրատուն, որ օրական բաց է թողնում 150.000 օրինակ լրագիր։ Ահա այն հերոսների արձանները, որոնք «նշանավոր եղան վերջին հեղափոխության ժամանակ»։ Ինչ վերաբերում է զորանոցին, ապա այն չկա, քանի որ «ամեն քաղաքացի զինվոր է»[2]։

Իսկ «Նոյա Աղավնու» հյուրանոցում նրանք հանդիպում են Թոմաս էֆենդուն, որը, երկու հարյուր տարի շարունակ մաքրվելով, ստոր արարածից դարձել է կատարյալ մարդ, «ներկա ամենդի լավ ներկայացուցիչներից մեկը»[3]։

Ի վերջո հեղինակը գրում է. «Վարդանը աչքերը բաց արավ, զգաց, որ իր տեսածը բոլորը երազ էր»[4]։

Մենք դիտմամբ ընդարձակ վերաշարադրեցինք «Խենթի» երազը, որ ավելի հիմնավոր պատկերացնենք, թե ինչպես էր Րաֆֆին ցանկանում լուծել արևմտահայության ազատագրության հարցը, ինչպես էր կամենում լիներ նրա ապագան։

Անշուշտ, այդ ամենը Րաֆֆու ուտոպիան էր։ Սակայն այն իր ժամանակին հայ հասարակական-քաղաքական մտքի զար-

1 Րաֆֆի, հ. 3, էջ 364։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 366։
4 Նույն տեղը։

գացման մեջ առաջադիմական մեծ քայլ էր, քանի որ դեմոկրատական սկզբունքներով էր լուծում թե ազգային և թե սոցիալական կարևոր նշանակություն ունեցող հարցերը։ Ճիշտ են նկատում գրականագետները, երբ գրում են, որ «Րաֆֆու սոցիալական ուտոպիան ըստ էության պատկանում է նախամարքսյան ուտոպիստական սոցիալիզմի տարատեսակներին...»[1]։ Նա մերժում էր ներկան ոչ թե հետադեմ անցյալի փառաբանման, այլ առաջադեմ ապագայի հաստատման համար։

Րաֆֆին պատկերել էր Վարդանի երազը Ն. Գ. Չեռնիշևսկու գաղափարական ազդեցության տակ և այդպիսով պրոպագանդել Ռուսաստանի առաջադեմ գաղափարները հայ իրականության մեջ։ Ինչպես Ն. Գ. Չեռնիշևսկին «Ինչ անելում»՝ վերա Պավլովնայի երեք երազներում նկարագրում էր Ռուսաստանի ապագան, այնպես էլ Րաֆֆին Վարդանի երազում կերտում էր Հայաստանի գալիքը։ Նրանք երկուսն էլ քարոզում էին բռնության վերացում, շահագործման անհետացում, անձի ազատության ու հավասարության հաստատում, նյութական կացության բարելավում, համայնական սկզբունքների ստեղծում և այլն։

Եվ պատահական չէ, որ հայ հետադեմ գրչակները, մասնավորապես մոլի ռեակցիոներ Հայկունին (Եղիշե Գեղամյան), կատաղորեն հարձակվեցին Րաֆֆու վրա, ժխտական քննադատության ենթարկեցին «Խենթը», մատնելով նրա հեղինակին ցարական ոստիկանությանը։

Ինքնակալության սատրապները չհապաղեցին, խուզարկեցին գրողի բնակարանը և խստացրին նրա նկատմամբ հսկողությունը։ 1883 թ. մայիսի 17-ին Մելքոն Փանյանին հղած իր նամակում Րաֆֆին, գրելով այդ խուզարկումների մասին, հարկ էր համարում նշել. «Վատ ժամանակների մեջ ենք ապրում. «լուից ուղտ են շինում» և մարդկանց չարչարում են։ Խնդրեմ Ձեզ նամակներում զգույշ լինեք, շատ հավանական է, որ իմ անունով եկած նամակները կրաց անեն»[2]։

Նույն թվի հունիսի 2-ին Մ. Փանյանին ուղարկած նամակում Րաֆֆին շարունակում էր. «Դրությունս սաստիկ հուսահատական է։ Ժամեժամ սպասում ենք նորանոր անախորժությունների. աշ-

1 Ս. Սարինյան, նշվ. աշխ., էջ 168։
2 Րաֆֆի, հ. 10, էջ 573։

խաւելու և գործելու սիրտ չի մնացել։ Անորոշ դրությունը սպանում է մեզ։ Ցավում եմ, որ մի այնպիսի ժամանակ, երբ երկու նշանավոր ազգային հարցեր ունենք վճռելու (կաթողիկոսական և հայկական հարցը), մենք ստիպված ենք առժամանակ լռել։ Մեր հակառակորդները խոսում են, գրում են, իսկ մենք պատասխանել չենք կարող։

Ես այժմ ժանդարմերիայի հսկողության ներքո եմ գտնվում։ Ինձ արգելում են Թիֆլիսից հեռանալ. երբ կազատեն ինձ, դիտավորություն ունեմ առժամանակ թողնել Թիֆլիսը։ Բայց ո՞ւր գնալիքս և ինչո՞վ գնալիքս չգիտեմ»[1]։

Րաֆֆին մեղադրվում էր հակակառավարական գործունեության և ռուս նիհիլիստների, այսինքն՝ նարոդնիկների հետ կապ ունենալու մեջ։ Մերժելով այդ մեղադրանքը, նա գրում էր. «Թե ես, թե իմ համախոհները մինչև այսօր ռուսաց կառավարության դեմ ոչինչ հանցավոր նպատակներ չենք ունեցել և երբեք ռուս նիհիլիստների հետ հարաբերություններ չենք ունեցել։ Մեր գործունեության նպատակը, մեր ցանկությունները խիստ համեստ են եղել և մեր ազգային պետքերի սահմանից այն կողմ չեն անցել։ Հայկական հարցը ծագելուց հետո մենք, իրավ է, աշխատել ենք տաճկահայերի ցավալի դրության բարվոքման մասին, աշխատել ենք Բեռլինի 61-րդ հոդվածի իրագործման մասին,— բայց մեր աշխատությունները կատարվել են հրապարակաբար, մենք գաղտնի ոչինչ չենք ունեցել»[2]։

Աշոտ Հովհաննիսյանը գտնում է, որ «ժանդարմների քթի տակ գրված իր նամակներում Րաֆֆին, իհարկե, չէր կարող խոստովանել հայ ազգային «նիհիլիստների» գոյությունը կամ նրանց հետ ունեցած իր կապերը։ Սակայն, 80-ական թվականների Րաֆֆու գրվածքներում իսկ անուղղակի ակնյայտներ կան նրա «նիհիլիստական» մտաբեկման մասին, ինչպես նաև կողմնակի վկայություններ «նիհիլիստների» հետ նրա ունեցած հանդիպումների ու մտափոխումների վերաբերյալ»[3]։ Այնուհետև

1 Րաֆֆի, հ. 10, էջ 574։

2 Նույն տեղը, էջ 572։

3 Ա. Հովհաննիսյան, Արծրունու և Րաֆֆու գաղափարական ներհակության ակունքները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 1, էջ 24—25։

նա բերում է այդ ամենը հաստատող ուղղակի և անուղղակի փաստեր[1]։

Րաֆֆին, անշուշտ, ուներ սխալներ։ Նա երբեմն գերագնահատում էր անհատի դերը ազատագրական պայքարում[2], կարծում էր, թե «տիրող ռեժիմը մեռցրել է արևմտահայերի մեջ ազատասիրության ու պայքարի ոգին»[3], երբեմն հավատում էր, որ տերությունները կօգնեն արևմտահայության ազատագրության գործին[4]։ Բուրժուադեմոկրատական ազատությունների իրականացման ուղիների որոնման մեջ որոշ դեպքերում «դուրս չէր գալիս լիբերալ մտայնությունից»[5]։ Րաֆֆին թույլ էր տալիս նաև փաստական անճշտություններ։ Նշում էր, օրինակ, որ Արևմտյան Հայաստանում հողային խնդիրը «երևան է գալիս 1872 թվականից հետո»[6], երբ աստանդական քրդերը կառավարության թելադրանքով ու հովանավորությամբ սկսեցին անցնել նստակեցության և բռնագրավել հայերի սեփականություն եղած հողերը[7]։ Մինչդեռ հանրահայտ է, որ այդ խնդիրը երևան է եկել 1872 թ. առաջ։

Բայց Րաֆֆու կողմից թույլ տված պատմության իդեալիստական մեկնաբանումները, լիբերալ տատանումները և փաստական անճշտությունները մասնակի երևույթներ էին, իսկ ընդհանուր առմամբ նա իր առաջ քաշած գաղափարներով, հրապարակախոսական աշխատություններով ու գեղարվեստական ստեղծագործություններով կանգնած էր ժողովրդի կողմը, արտահայտում ու պաշտպանում էր նրա շահերը։

Րաֆֆին փառաբանում էր ազատությունը։ Գտնում էր, որ այն աշխարհ է եկել մարդու հետ միասին, ապրում է նրանից անբաժան, անհրաժեշտ կենսապայմանն է նրա գոյության, ստեղծագործության, կատարելագործման ու զարգացման համար։ Իսկ ստրկությունը միայն ժամանակավոր, մարդուն կաշկանդող անբնական երևույթ է, որը կոնկրետ հանգամանքներում

1 Ա. Հովհաննիսյան, Արծրունու և Րաֆֆու գաղափարական...

2 Տե՛ս Րաֆֆի, հ. 6, էջ 558։

3 Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 236։

4 Տե՛ս նույն տեղը, էջ 243։

5 Տե՛ս Ս. Սարինյան, նշվ. աշխ., էջ 121։

6 Տե՛ս Րաֆֆի, հ. 9, էջ 252։

7 Տե՛ս նույն տեղը, էջ 252—253։

ու պայմաններում դատապարտված է անհետացման։ Նա բոլոր ժողովուրդների սրբազան պարտքն ու առաջնակարգ խընդիրն էր համարում բռնության ու ստրկության թոթափումը և իրենց ազատության հետ նվաճումը։

Րաֆֆին արևմտահայ ազգային-ազատագրական շարժման գլխավոր ուժը տեսնում էր դեմոկրատական խավերի, գերազանցապես գյուղացիության մեջ։ Նա կոչ էր անում, որ արևմտահայերը պետք է զինված ապստամբության միջոցով թոթափեն սուլթանական բռնակալական լուծը և հռչակեն իրենց ազատությունն ու անկախությունը, իսկ արևելահայերը, գրանվելով բարենպաստ վիճակում, պարտավոր են օգնել նրանց։ Հրապարակախոսը մեծ հույսեր էր կապում Ռուսաստանի հետ, գտնելով, որ այն կօժանդակի արևմտահայերին՝ նրանց ազատագրական պայքարում։ Նրա հերոս Դուդուկչյանը, «Խենթում» ասում էր. «Ռուսները պիտի պատերազմեն թուրքերի հետ, թող հայերն էլ մի կողմից գլուխ բարձրացնեն։ Ես հավատացած եմ, որ ռուսները ամեն կերպով կօգնեն մեզ»[1]։

Րաֆֆին միաժամանակ նշում էր, որ ազատություն ձեռք բերելու համար հայերը պիտի թոթափեն նաև սեփական կեղեքիչների լուծը։ Նա մեծ նշանակություն էր տալիս Հարևան՝ քուրդ, եզդի, ասորի և այլ ժողովուրդների օժանդակությանը, այդ ընդհանուր ապստամբության մեջ, նշմարելով նաև նրանց ազատության հնարավորությունը։ Գրողը քաջատեղյակ էր արևմտահայ ներքին կյանքին, հիանալի պատկերացնում էր հողային հարաբերությունները և առաջինն էր, որ «արևմտահայ ազատագրական շարժման հիմնական հարցը համարեց արևմտահայ մշակ դասին շահագրգռող հողային հարցը»[2], Նրա առաջարկությունը նողր մասնավոր սեփականություն դարձնելու մասին ոչ մի ընդհանուր բան չուներ կապիտալիզմի հետ, բանի որ հեղինակի պատկերմամբ, այն մշակվելու էր ոչ թե վարձու աշխատանքով, այլ սեփական բռանիով։

Րաֆֆին կրում էր Մ. Նալբանդյանի ազդեցությունը և իր աշխատություններում պրոպագանդում էր նրա գաղափարները[3]։ Հիրավի, մեծ հեղափոխական-դեմոկրատի մահից հետո նա էր, որ հանդես եկավ հարատահարվող զանգվածների շահերի կըրքոտ պաշտպանությամբ և կոնկրետ ուղիներ մշակեց արևմտահայության ազատագրության համար։ Մ. Նալբանդյանի գործի շարունակումը Րաֆֆու կողմից երևում է ոչ միայն «Խենթում»՝ Վարդանի երազից կամ «Կայծերում»՝ Ավոյի համայնավարական վարքագծից, այլև «նիհիլիստների» (այսինքն՝ հեղափոխական նարոդնիկների) հետ ունեցած նրա գաղափարական ու գործնական կապերից։

Կանգնելով դեմոկրատիայի ավանգարդում, Րաֆֆին, մի կողմից, պայքարում էր պահպանողականների, իսկ մյուս կողմից՝ լիբերալների դեմ։ Եվ չնայած ստեղծված քաղաքական պայմանները նրա համար խիստ անբարենպաստ էին, իսկ ուժերը բոլորովին անհավասար, այնուամենայնիվ «հակառակորդների քննադատությունը չփոխեց մեծ գրողի դիրքավորումը»[1]։

Անվանի գրողն ու հրապարակախոսը տեսնում էր Հայաստանի անկախությունը։ «Կայծերում» իր հերոսներից մեկի բերանով նա ասում է, որ եթե «հայը ազատված լինի օտարի լծից», որ եթե «նա իր տունը, իր երկիրը ինքը կառավարե, դրա մեջ ես մի վատ բան չեմ տեսնում»[2]։ Նա լի էր լավատեսությամբ։ Արձանագրելով գյուղացու չարքաշ կյանքը, գտնում էր, որ կգա մի օր, «երբ կտիրեն իրավունքը և արդարությունը, երբ կազատվի աղաների հարստահարությունից։ Այն ժամանակ կգա մշակ մարդու արքայությունը, այն մարդու, որ գործ ունի արդար և հավատարիմ բնության հետ, որ չէ մտածում իր նման մարդերի քրտինքից իր համար ապրուստ քամելու...»[3]։

Րաֆֆու գաղափարները մեծ ազդեցություն թողեցին նրա հետնորդների վրա։ Նրանք գտեխնդում ու ոգևորում էին հայ մարդկանց թուրքական բռնապետության դեմ մղվող պայքարում, հայրենիքի ազատության ու փրկության գործում։ Րաֆֆու այդ գաղափարները մեծ հնչեղություն ունեն նաև մեր օրերում։

Արևմտահայ դեմոկրատիայի շահերի պաշտպանության դիրքերում էին կանգնած նաև Հ. Պարոնյանը, Սիամանթոն (Ատոմ Յարճանյանը), Դ. Վարուժանը (Դանիել Չպուկքյարյանը) և

---

1 Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Արծրունու և Րաֆֆու գաղափարական..., էջ 154։

2 Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Արծրունու և Րաֆֆու գաղափարական..., էջ 27—28։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 22—23։

1 Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Արծրունու և Րաֆֆու գաղափարական..., էջ 30։

2 Տե՛ս Րաֆֆի, հ. 4, էջ 454։

3 Նույն տեղը, էջ 336—337։

ուրիշներ։ Իրենց ստեղծագործություններում նրանք խարազանում էին Թուրքական բռնապետական կարգերը, քրդական վայրագությունները, մերկացնում էին ազգային ջոջերին, հոգևոր ու աշխարհիկ պորտաբույծներին, եվրոպական խարդախ գիվանագետներին, գովում էին համաշխարհային առաջադեմ, հումանիստ մտածողներին ու գրողներին և երազում էին արևմտահայության ազատագրման ու անկախության մասին։ Այդ գրողներն ու բանաստեղծները արևմտահայերի փրկությունը տեսնում էին նրանց աննկուն պայքարի ու ազատագրական մարտադումների մեջ, կապում էին այն Ռուսաստանի հաղթական հեղափոխության հետ[1]։

1 Տեղի սղության պատճառով չենք կարող բիլ թե շատ հանգամանորեն չարադրել արևմտահայ դեմոկրատիայի հայացքներն արևմտահայության ազատագրության մասին։ Բավարարվենք խորհրդահայ գրականագետների արժեքավոր ուսումնասիրություններից մի քանիսի հիշատակումով. Հայ նոր գրականության պատմություն, հ. V, էջ 471—502, 525—563, Գ. Խ. Սահինյան, Հակոբ Պարոնյան, Եր., 1964, Ա. Մանուկյան, Հակոբ Պարոնյան, Եր., 1964, Հ. Ոշտունի, Դանիել Վարուժան, Եր., 1961, Հր. Թամրազյան, Սիամանթո, Եր., 1969, Վ. Գաբրիելյան, Դանիել Վարուժան, Եր., 1978 և այլն։

Գլուխ երկրորդ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔԻ

Արմենականները

Արևմտահայության ազատագրության վերաբերյալ իրենց որոշակի հայացքներն ունեին նաև հայ քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները։ Քննենք նրանց տեսակետներն առանձին-առանձին, համառոտակի տալով բնութագրումները[1]։

Արմենականները արևմտահայ բուրժուազիայի, գլխավորապես գավառահայ բուրժուազիայի իղձերի արտահայտիչներն էին։ Նրանց կուսակցությունն առաջացավ Վանում՝ 1885 թ. Մկրտիչ Թերլեմեզյանի (Մ. Ավետիսյանի) գլխավորությամբ և Գալուստ Ասլանյանի (դոկտոր)— Գարեգին Բաղնշցյանի (Մանուկյան), Եղիշե Գոնդաքճյանի, Ղևոնդ Խանջյանի, Գաբրիել Նաթանյանի, Արիստակես Ախինյանի, Գրիգոր Պեռոզիկյանի (Շիկահեր, Ներսես) և ուրիշների աջակցությամբ[2]։

1 Հայ կուսակցությունների ու կազմակերպությունների քաղաքական ու գաղափարական բնութագիրը տվել են Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Բ. Կնունյանցը, Ալ. Մյասնիկյանը և ուրիշներ։ Խորհրդահայ պատմաբաններ Ա. Հովհաննիսյանը, Մ. Արղումանյանը, Լ. Խուրշուդյանը, Խ. Բարսեղյանը, Վ. Ավետիսյանը և այլոք ստեղծել են նրանց մասին մասնագիտական ուսումնասիրություններ։ Այդ կուսակցությունների գործունեությանը իրենց աշխատություններում ավելի կամ պակաս չափերով անդրադարձել են Մ. Ներսիսյանը, Ս. Աղայանը, Վ. Պարսամյանը, Ա. Մնացականյանը, Գ. Զարիբջանյանը, Գ. Գալոյանը, Դ. Մուրադյանը, Հ. Կարապետյանը, Զ. Կիրակոսյանը, Հ. Մելիքյանը և այլոք։ Նրանց մասին մի շարք աշխատություններ են լույս տեսել նաև Սիլոզքում։ Անհրաժեշտաբար տալով կուսակցությունների ստեղծման համառոտ պատմությունը, մենք հիմնականում կանգ կենք առանձին այն հարցի վրա, թե ինչպես էին նրանք ծրագրում արևմտահայության ազատագրումը։

2 Տե՛ս ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 427, ց. 1, գ. 5, թ. 5, գ. 27, թ. 1, Ա. Գաբրիելյան, Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1947, էջ 19, 33, «Արձվի Վասպուրականա», 1956, № 2, էջ 346։

Արմենականները իրենց կուսակցությունը «Արմենական» էին անվանում Մ. Փորթուգալյանի «Արմենիա» թերթի ուղղությունը հետևելու և գաղափարները պրոպագանդելու համար[1]։ Նրանց գործունեության հիմնական վայրը Վասպուրականն էր։ Տարոնում, Տրապիզոնում, Կ. Պոլսում, Պարսկաստանում, Կովկասում, Ամերիկայում և այլ վայրերում արմենականները փորձեցին ստեղծել իրենց մասնաճյուղերը, բայց, նեղվելով դաշնակցական ու հնչակյան կուսակցությունների կողմից, չհաջողացան հասնել էական հաջողությունների[2]։

Սկզբնական շրջանում արմենականները սակավաթիվ էին, սակայն հետագայում նկատելիորեն ստվարացան։ Անուշավան Տեր-Մկրտչյանի վկայությամբ, 90-ական թվականների կոտորածներից առաջ Վանի վիլայեթում նրանք ունեին 150-ից ավելի խմբեր՝ յուրաքանչյուրը բաղկացած 12 մարդուց։ Կուսակցությունն ուներ նաև նյութական ու բարոյական օժանդակողներ, որոնց թիվը հասնում էր 178-ի[3]։

Արմենականները նախապես գործում էին առանց ծրագրի (պրոպագանդում էին «Արմենիայի» գաղափարները, նպաստում էին հայ բնակչության կուլտուր-կրթական գործին, հանդես էին գալիս իշխանությունների բռնությունների ու հալածանքների դեմ և այլն)։ Բայց 1890-ական թվականների կեսերին նրանք ստեղծեցին իրենց ծրագիրը՝ Մ. Թերլեմեզյանի գլխավորությամբ, որն առաջին անգամ հրատարակվեց 1907 թ. «Երկրի ձայնում»[4], իսկ հետագայում՝ տարբեր հուշագրություններում ու պարբերականներում[5]։

---

1 Արմենականների առաջացումը կապված էր Մ. Փորթուգալյանի հետ, որը դեռ 1870—1880-ական թվականներին կուլտուր-կրթական գործունեություն էր ծավալել Վան-Վասպուրականում և իր սաներին դաստիարակում էր հայրենասիրության ու ազատության ոգով։ Թուրքական իշխանությունները նկատելով այդ ամենը, 1885 թ. փակում են նրա հիմնադրած «Կեդրոնական» վարժապետանոցը և իրեն արտաքսում երկրից։ Մ. Փորթուգալյանը մեկնում է Մարսել, ձեռնամուխ լինում «Արմենիայի» հրատարակմանը։ Նա կապեր է հաստատում իր սաների հետ և շարունակում գործունեությունը։ Սակայն

2 Տե՛ս Ա. Դաբրիեյան, նշվ. աշխ., էջ 125։

3 Տե՛ս ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 427, ց. 1, գ. 26, թ. 1—7, գ. 28, թ. 1։

4 Տե՛ս «Երկրի ձայն», 1907, դեկտեմբերի 29 (№ 28)։

5 Տե՛ս ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 427, ց. 1, գ. 66, Հուշեր Արմենակ Եկարյանի, Գահիրե, 1947, էջ 81—86, «Ջարթոնք», 1960, դեկտեմբերի 25։

Նրանց ծրագրում ասվում էր, որ հարկավոր էր ոտքի հանել ժողովրդին թուրքական բռնապետության դեմ, հեղափոխությամբ տապալել այն և «իրավունք ձեռք բերել ինքնիշխան ազատորեն կառավարելու»։ Կազմակերպությունը կամ կուսակցությունը (ի դեպ՝ ծրագրում գործածվում էր մերթ մեկը, մերթ

ուսուցչի և աշակերտների միջև հարաբերությունները սրվում են, հենց որ վերջիններս հիմնում են իրենց կուսակցությունը։

Բանն այն է, որ Մ. Փորթուգալյանը, քարոզելով արևմտահայ բոլոր խավերի ու դասակարգերի մասնակցությամբ հեղափոխական ընդհ. դեմ էր առանձին կուսակցությունների կազմավորումներին, այդ թվում նաև արմենականների գոյությանը։ Արմենականները մի քանի անգամ փորձեցին համոզել նրան, որ լինի իրենց թե՛ գաղափարական և թե՛ գործնական ղեկավարը, գործեն համատեղ, բայց ապարդյուն։ 1951 թ. արմենական Սահակ Ջիլյանը հուշագրում էր, որ դեռ 80-ական թվականներին «Փորթուգալյանը հեղափոխական շարժումներ ղեկավարող մի որևիցե հայկական կազմակերպության հակառակ էր եղել սկզբից և հակառակ էլ մնում էր» նրա աշակերտները, հատկապես Մ. Ավետիսյանը, ստեղծելով արմենական կուսակցությունը, 1888, 1890, 1892 թվերին, նաև հետո մի քանի անգամ դիմեցին Մ. Փորթուգալյանին, խնդրելով ղեկավարել իրենց, բայց «Արմենիայի» հիմնադիրը հետևողականորեն մերժում էր, «համարելով դա վնասակար և խիստ վտանգավոր տաճկահայոց շահերին» [ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 427, ց. 1, գ. 4, թ. 13, տե՛ս նաև «Պայքար», 1951, մարտի 17 (№ 63)]։

1896 թ. արմենականների ղեկավարներից մեկը՝ Գ. Պեռդիկյանը, Բուլղարիայում հիմնադրում է «Արմենական կազմակերպություն» և հրապարակելով թուրքիկներ, զենքի կոչում հայ ժողովրդին։ Նա մի շրջաբերական է ուղարկում Մ. Փորթուգալյանին, խնդրելով ավելի ուժեղացնել նրա բովանդակությունը և հրապարակել այն «Արմենիայում»։ Պատասխան չստանալով, շուտով ինքն է մեկնում Մարսել և բանակցում «Արմենիայի» անօրինի հետ, բայց այդ բանակցությունները ավելի են չիկացնում մթնոլորտը։

1897 թ. Մ. Փորթուգալյանը «Արմենիայում» հրատարակում է «Ձգուշություն» վերնագրով մի հոդված, որի մեջ բացահայտորեն դրսևորում էր իր հակակրանքը արմենականների նկատմամբ։ Նա գրում էր, որ իրեն է հասել «Շրջաբերական Արմենական կազմակերպության ե շրջանակի» վերաառեալությամբ անատրագիր, բայց կնքված մի փաստաթուղթ, ուր նշվում է, որ իբր այդ կազմակերպությունը հիմնել է «Արմենիան» դեռ 12 տարի առաջ։ Նշելով, թե ոչխափալի է, որ «Արմենիան» ունի հետևորդներ, Մ. Փորթուգալյանը, սակայն, հայտարարում էր, որ «Արմենիան» մինչև այժմ իր անունով օրևէ կուսակցություն կազմակերպած չէ դեռ», որ իրենց արմենական հռչակող մարդիկ ոչ միայն «Արմենիայի» բարեկամները չեն, այլև թշնամիներն են, քանի վերագրում են թերթին նրան ոչ յուրահատուկ բաներ «Այդպիսիներին ինչ անուն պետք է տալ, արմենական, թե ուրիշ մի բան»։ Այնուհետև Մ. Փորթուգալյանը նկատում էր. «Ոտատ հարկ կհամարենք զգուշացնել ժո-

մյուսը) իր գործունեությունը սահմանափակում է միայն արևմտահայերով, խտրականություն չդնելով դասերի կամ դասակարգերի մեջ, խուսափում է հարևան ժողովուրդներից, գըտնելով, որ նրանց հետ, կցրի իր ուժերը

վուրդը... Արմենական անունով կազմակերպված կուսակցություն մը չկա գոնե և նման այդպիսի բան մը լինի, իհարկե այդ պետք է հայտարարվի հատկապես «Արմենիա» լրագրի մեջ» [«Արմենիա», 1897, մայիսի 26 (№ 84)]։

Այնուամենայնիվ, արմենականները շարունակում էին «Արմենիան» համարել իրենց գաղափարական օրգանը և չէին հեռանում նրանից։

1906 թ. Ամերիկայի արմենականները Մ. Փորթուգալյանին հրավիրեցին Բոստոն, նպատակ ունենալով նրան գտնել նրա հետ Բայց «Արմենիայի» խմբագիրը մնաց անդրդվելի [Տե՛ս ՀԽՍՀ ԿՊՊԱ, ֆ. 427, ց. 1, գ. 4, թ. 13, տե՛ս նաև «Պայքար», 1951, մարտի 7 (№ 63)]։ Ավելին, նա հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, շեշտելով՝ «Արմենական անունով հեղափոխական կուսակցություն մ'ալ երբեք չենք կազմակերպած, որովհետև մեր կուսակցությունն է արդեն հայ ժողովուրդի հեղափոխական կուսակցությունը։ Անոնք, որ կբան, թե իրենք հեղափոխական կուսակցություն մ'են արմենական անունով, այդ իսկ կցուցնեն, թե իրենք դեռ անկարող կգտնվին ըմբռնելու Արմենիայի սկզբունքները, որ, իբր լրագրական բնքլամ, իր անունով առանձին հեղափոխական շարժում մը գոյացնելու ծրագիր ունեցած չէ երբեք։ Այն միակ կազմակերպությունը, որի կազմության մասնակցած է Արմենիայի խմբագիր-տնօրենը, կկոչվեր Հայոց հայրենասիրական միություն։ Կազմակերպության մը անունը պետք է ուղղակի որոշե իր նպատակը, այդ կազմակերպության անունը հայրենասիրական էր, բան մը, որ կներկայացնե նաև Արմենիայի գաղափարն ու նպատակը» [«Արմենիա», 1906, օգոստոսի 29 (№ 44)]։

Մեզ անհայտ է, թե ինչ դիրք բռնեցին արմենականները Ս. Փորթուգալյանի այս հայտարարությունից հետո Բայց գիտենք, որ 1908 թ. հունվարին Մ. Փորթուգալյանը արմենականների դեմ հրապարակեց նոր հոդված, ուր կրկնում էր իր նախկին հայտարարությունը՝ «Մենք երբեք կազմած չենք Արմենական անունով բնկերություն մը, թե Արմենիա խմբագրությունն այդ անունով կազմակերպության մը հետ երբեմ պաշտոնական որևէ հարաբերություն ունեցած չէ և թե ոչ ոք բնավ իրավունք ունի Արմենիայի անունով գործող կազմակերպություն մը ներկայացնելու։ Ապա շարունակում է, որ չնայած իր առարկություններին, արմենականները «կշարունակեն տակավին իրենք զիրենք Արմենական անվանել, փոխանակ «Պեզոյեւյան» (աղավաղում էր արմենականների ղեկավարներից մեկի՝ Պեզոյիկյանի ազգանունը— Ա. Հ.) կամ այսինչյան անվանելուս» [«Արմենիա», 1908, հունվարի 11 (№ 38)]։

Այնուամենայնիվ Մ. Փորթուգալյանի այդ վարքագիծը, 1908 թ. մարտի 6-ին «Գաղափարակցական միության» եգիպտոսի մասնաճյուղը, որ կազմված էր գերազանցապես արմենականներից, «Ազգ» թերթում հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, ուր ասվում էր. «Արմենական» կազմակերպու-

և կրթադաշնի գործը։ «Հայ ազգի և մյուս ցեղերի մեջ աշխարհայեցողության, պահանջների և զարգացման մեծ տարբերություններ կան, որով հայ ազգի հեղափոխական շարժումը կարող է դանդաղել և կնճռոտել»։

Հեղափոխությունը անհրաժեշտ է կազմակերպել նախապես, տարածել գրականություն, ժողովրդի մեջ պրոպագանդելով կուսակցության նպատակները, արթնացնել նրա մեջ ազգային գիտակցությունը, ստեղծել զինախմբեր և այլն։ Այդ աշխատանքների ավարտից հետո պետք է հաշվի առնել նաև արտաքին հանգամանքները և հեղափոխությունը սկսել միայն այն ժա-

---

ջությունը թեև ներշնշված ի միջի այլոց և «Արմենիա» թերթի գաղափարներն, սակայն ինքնուրույն, անկախ, երկրի իսկական պահանջներեն ծնունդ առած և արտասահման ելուզակված հեղափոխական մարմին մը եղած է և յուր գոյության փայլուն ապացույցն ալ զանազան առիթներով ընծայած։ Բավական է միայն հիշել Վանի ինքնապաշտպանության կռվի մեջ կատարված յուր առաջնակարգ և պատվաբեր դերը։

«Արմենիայի» խմբագրությունը վարչական և ելմտական ոչ մի կապակցություն ունեցած չէ «Արմենականց» կազմակերպության հետ...» («Ազգ», 1908, մայիսի 2)։ Հայտարարությունը «Գաղափարական միության» վարչության անունից ստորագրում էր Արսեն Գնունին։

Այդ հայտարարությունը, անշուշտ, ճիշտ էր։ Արմենականները «Արմենիայի» հետ կապված էին միայն գաղափարապես, իսկ վարչական, պրակտիկ գործունեության և ֆինանսական հարցերում բոլորովին անկախ էին, գործում էին ինքնուրույն։

Քիչ անց «Մ.» ստորագրությամբ մի արմենական «Իրավունք» թերթում ավելի խիստ ոճով պատասխանեց Մ. Փորթուգալյանին։ Նա նշում էր, որ «արմենական» բառը «Արմենիայի» սեփականությունը չէ, որի օգտագործման համար խնդրել նրա թույլտվությունը։ Դա կարող են գործածել բոլորը։ Ապա ցույց էր տալիս, որ Մ. Փորթուգալյանը մերձենալով դաշնակցականներին, անհանգստանում է, որ արմենականները միավորվում են վերակազմյալ հնչակյանների հետ։ Այնուհետև եղրափակում էր, որ «Արմենիայի» խմբագիրը հաճոյանում է դաշնակցությանը (Տե՛ս «Իրավունք», 1908, ապրիլի 9)։

Այդպիսով, տասնամյակներ շարունակ իրենց «Արմենիային» հետևորդներ համարող արմենականները, Մ. Փորթուգալյանի բռնած դիրքի հետևանքով, ի վերջո նրա դարձրին երեսները և սկսեցին մերձենալ հասարակական-քաղաքական այլ ուղղության։ Անդրադառնալով նրանց հարաբերությունների այդ փոփոխությանը, Համբարձում Երամյանը հետագայում գրում էր, որ արմենականները իրենց կուսակցությունը կոչում էին «Արմենիայի» անունով, «սակայն Փորթուգալյան այդ կուսակցության բարոյականն զատ ուրիշ կապակցություն մը չունեցավը հայտարարելով՝ պաղությունն մը ինկավ վարպետին և երբեմն իր անունով երդվող աշակերտներուն միջև» (Համբարձում Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա., Ալեքսանդրիա, 1929, էջ 355)։

մանակ, երբ պետությունների քաղաքականությունն ու հարևան ժողովուրդների տրամադրությունները նպաստավոր կլինեն։

Ծրագիրը մերժում էր մասնակի ցույցերն ու ելույթները, համարելով դրանք վնասակար ընդհանուր գործի համար, քանի որ մի կողմից ջլատում էին հեղափոխական ուժերը, իսկ մյուս կողմից, պարտություն կրելով, կարող էին հոռետեսություն առաջացնել ժողովրդի մեջ։ Սակայն առանձին դեպքերում ընդունում էր դրանք։ Այդպիսի տեսակետ էր հռչակվում նաև անհատական ահաբեկումների ու տեռորի նկատմամբ, որոնք «ստիպողական պարագաների մեջ ներելի են»։

Այնուհետև սահմանվում էր, որ կազմակերպությունը պիտք է ունենա գործող և քաջալերող անդամներ։ Առաջինները մուծում են անդամավճար, ենթարկվում են որոշումներին և կենսագործում դրանք, իսկ երկրորդները նյութապես և բարոյապես օժանդակում են կազմակերպությանը, առանց նրա որոշումներին ենթարկվելու։ Դրանք համարվում են կազմակերպության համակրողներ, նրա անդամներին քաջալերողներ։

Անդրադառնալով կազմակերպության կառուցվածքին, ծրագիրը նշում էր, որ այն պետք է ունենա իր ղեկավարությունը կամ կենտրոնը՝ բաղկացած շրջանների կամ շրջանակների մասնաժողովների ներկայացուցիչներից։ Այդ կենտրոնը կազմակերպում ու ղեկավարում է հեղափոխական գործը, մասնաժողովների աշխատանքները, բանակցում է զանազան կազմակերպությունների հետ. որոշում է ընդհանուր շարժումների ժամանակը և եղանակը, հրապարակում է իր թերթը, որի միջոցով պրոպագանդում է իր հայացքներն ու դաղափարները և այլն։ Կենտրոնը իր գործող անդամներին բաժանում է շրջանակների կամ շրջանների, որոնցից յուրաքանչյուրը կունենա իր մասնաժողովը։ Այդ մասնաժողովը կվարի տեղական գործերը և հարաբերությունների մեջ կմտնի կենտրոնի ու շրջանների հետ։ Այն կարող է բանակցություններ վարել նաև հեղափոխական այլ ուժերի հետ, բայց միայն կենտրոնի թույլտվությամբ։ Յուրաքանչյուր շրջան կամ շրջանակ պետք է ունենա տեղական պայմաններից ու պահանջներից ելնող իր կանոնադրությունը, սակայն այն «հակառակելու չէ ծրագրի որևէ մեկ կետին»։

Կուսակցության անդամները կարող են հարց հարուցել ծրագրի մեջ փոփոխություններ մտցնելու մասին։ Բայց նրանք

առաջարկությունները պետք է ներկայացնեն իրենց մասնաժողովին կամ կենտրոնին։ Փոփոխությունների հարցը կլուծվի քվեարկությամբ և ձայների մեծամասնությամբ։

Կազմակերպությունը հայտարարում էր, որ իր թերթը, իր դաղափարական օրգանը ներկայումս կլինի «Արմենիան»[1]։

Ինչպես տեսնում ենք, արմենական կուսակցությունը հիմնականում կառուցվում էր «Արմենիայի» սկզբունքների վրա։ Թե պարբերականի, թե այդ կուսակցության նպատակն էր ազատագրել Արևմտյան Հայաստանը օսմանյան լծից և հռչակել նրա անկախությունը։ Նրանք ցանկանում էին այդ նպատակին հասնել հեղափոխության միջոցով, մասնակից դարձնելով արևմտահայ բոլոր դասակարգերին։ Հիմնական շեշտը դնելով ազգային ուժերի վրա, նրանք երկուսն էլ երկրորդական նշանակություն էին տալիս եվրոպական միջամտությանը կամ հարևան ժողովուրդների օժանդակությանը։ Թե «Արմենիան» և թե արմենականները մերժում էին ցուցադրարական կռիվները, համարելով դրանք վնասակար արևմտահայության համար։ Նրանք երկուսն էլ ձեռնպահ էին մնում ազատագրված Հայաստանի հասարակական-քաղաքական կարգերի հարցում, համարելով դա ապագայի գործ։ Ինչպես «Արմենիան», այնպես էլ արմենականները ոչ իրական, վերացական պատկերացում ունեին արևմտահայ հեղափոխության մասին, հավատալով, թե երբևէ կարող են ստեղծվել իրենց ցանկացած պայմանները նրա կատարման համար։ Բոլորովին պատահական չէ, որ արմենականները հայտարարում էին, թե իրենց պաշտոնական օրգանը «Արմենիան» է։

* * *

Դարասկզբին Վասպուրականի արմենականների աշխատանքները ղեկավարում էր երվանդ Քեոսյանը (Սեպուհ)[2]։ Ա. Դարբինյանի վկայությամբ, ռուսական առաջին բուրժուադեմոկրա-

1 Արմենականների ծրագիրը տե՛ս «Երկրի ձայն», 1907, դեկտեմբերի 29, № 28, Հուշեր Արմենակ Եկարյանի, էջ 81—86։

2 Ե. Քեոսյանը ծնվել էր Արաբկիրում, ականատես եղել քուրքական դահիճների սրբագործություններին, որոնք ի թիվս բազմաթիվ անմեղ արաբկիրցիների, 90-ական թվականներին սպանում են նրա հորը։ 1896 թ. Սեպուհը մտնում է էջմիածնի Գևորգյան հեմարանը և ավարտելով այն, 1901 թ. մեկնում

տական հեղափոխության տարիներին նա կուսակցության կենտկոմի անունից գրեց մի թուղթ շրջաբերական, որը քննարկվեց և խմբագրվեց արմենականների պատգամավորական ժողովում և կցվեց նրանց ծրագրին իբրև հավելված։ Հավանական է, որ «Երկրի ձայնը» այդ հավելվածը կամ շրջաբերականը նկատի ուներ, երբ 1907 թ. գրում էր. «Լսել ենք, որ արմենականները ունեն մի նոր ծրագիր»[1]։ Ցավոք, Ա. Դարբինյանը հավելվածից բերում է միայն քաղվածքներ, իսկ փաստաթղթի ամբողջական տեքստը մեզ չհաջողվեց գտնել։ Համենայն դեպս Ա. Դարբինյանի բերած կտորները հնարավորություն տալիս են կազմելու այդ փաստաթղթի մասին որոշ պատկերացում։

Հավելվածում նշվում էր, որ Հայկական հարցն առաջացել է պատմականորեն։ Արևմտահայությունը երկար ու համբերատար սպասեց նրա լուծմանը, բայց սուլթանական կառավարությունը զանց առավ այն։ Այժմ հայը «ամեն իրավունք ունի ապստամբվելու»[2]։ Գործը հաջողությամբ գլուխ բերելու համար նա պետք է ունենա ուժ և արտաքին պաշտպանություն, որոնք «դժբախտաբար չէ ունեցել և չունի հայ ժողովուրդը»[3]։ Ուստի դեռ պետք է սպասել ու նախապատրաստվել։ Ապստամբության համար անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր իրական պայմանները, քանի որ «գաղափարական շենքը իրական հողի վրա պետք է կառուցել և ոչ թե օդի մեջ»[1]։

Հավելվածում հատուկ ուշադրություն էր դարձվում Ռուսաստանի իրագարձություններին և նշվում էր, որ այն կարևոր նշանակություն ունի արևմտահայության համար։ Ավելին՝ ցույց էր տրվում, որ Ռուսաստանում սպասվելիք սոցիալիստական հեղափոխությունը պետք է լինի արևմտահայության հեռավոր նպատակը։ «Ընկերային, սոցիալիստական հեղափոխությունը,— կարդում ենք փաստաթղթի հատվածում,— մեր իրականության հետ կապ ունեցող հեռավոր գաղափարն է, որին պետք է ձգտինք ապագային, երբ որ քաղաքական կարգերի և տնտեսական պայմանների շնորհիվ առաջ կուգա մեր մեջ նոր հասարակություն՝ նման եվրոպական հասարակության, այսինքն՝ երբ սկսի աշխատանքի և կապիտալի պայքարը մեր մեջ»[2]։

Հայ մտավորականությունը պետք է իմանա սոցիալ-դեմոկրատիայի գարափարախոսությունը կամ, ինչպես նշվում է տեքստում, վարդապետությունը, տիրապետի այն որպես հասարակական-տնտեսական գիտություն, որպես ներքին ոգևորող ու առաջ մղող ուժ, և «առաջնորդվի եղբայրության, արդարության և հավասարության բարձր իդեալներով»[3]։

Հավելվածում ասվում էր, որ Օսմանյան կայսրության մեջ կեղեքվում ու հարստահարվում են թե՛ մահմեդականները և թե՛ քրիստոնյաները։ Այդ հանգամանքը «գլխավոր շարժառիթն է իրենց ազատագրական ձգտումներուն»[4]։ Բայց մինչ մահմեդականները կսթափվեն իրենց վիճակից, ոտքի կրարձրանան, հայ ժողովուրդը իր բոլոր միջոցներով պետք է փարվի ինքնապաշտպանության գաղափարին, ապահովի իր ֆիզիկական գոյությունը։ Իսկ «ինքնապաշտպանության գաղափարը գործնականացնելու համար անհրաժեշտ է ոչ միայն հայի ձեռքը զենք դնել, այլև կրթել նրա ստրկացած բնավորությունը, զարգաց-

Վան։ Այնուհետև նա շրջում է Վասպուրականի գավառները, լինում է Մոկսում, Դավաշում, Արճեշում և այլ տեղերում, իսկ հետո գնում է Պարսկաստան և երեք տարի Ուրմիայում գրաղվում ուսուցչությամբ։ 1906 թ. վերադառնում է Վան, ծավալում կուսակցական գործունեություն, հավաքելով և միավորելով արմենականների ցաք ու ցրիվ ուժերը, կազմակերպելով ժողովրդի ինքնապաշտպանությունը, գլխավորելով իր գինակիցների պայքարը դաշնակցականների դեմ։ Սեպուհը իր նուանդուն և ժողովրդանպաստ գործունեության շնորհիվ շուտով վայելում է շատերի սերն ու հարգանքը։ Զոհվեց 28 տարեկան հասակում Վանում 1908 թ. մարտին թուրքական գինվորների կողմից՝ Դավոյի դավաճանության հետևանքով առաջացած դեպքերի ժամանակ։ Ականատեսներից մեկը գրում էր, որ Սեպուհի սպանության պատճառով «Ամբողջ Վասպուրականը սրտագին լաց ու կոծի մեջ էր» («Ազգ», 1908, մայիսի 2)։

Երևանի Քեոսեյանին հանձնաժողովը նրա մասին թողել են բազմաթիվ ջերմ տողեր։ Արմենակ Եկարյանը, օրինակ, գրում էր, որ Սեպուհը «թեև երիտասարդ, բայց ուշիմ և հեղափոխական լավ խմորի տեր անձնավորություն էր։ Նա իրավամբ նկատեց, որ դաշնակցության կողմից «արմատացած չարիքի մը դեմ կանոնավոր կազմակերպությամբ մը միայն հնարավոր պիտի ըլլար մաքառիլ։ Ահա թե ինչ բանի կձգտեր արմենական ղեկավար Սեպուհը» (Հուշեր Արմենակ Եկարյանէ, էջ 144)։

[1] «Երկրի ձայնը», 1907, դեկտեմբերի 9, № 28, էջ 12—13։
[2] Տե՛ս Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 170։
[3] Տե՛ս նույն տեղը։

[1] Տե՛ս Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 171։
[2] Նույն տեղը։
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 171—172։
[4] Նույն տեղը, էջ 172։

նել անոր մեջ մարդկային արժանապատվության զգացումը։ Առանց սրան, փութկոտորեն, բռնի միջոցներով և սարսափներով ժողովուրդը զինելու պարտավորեցնելը, բացասական հետևանքներ միայն կարող է ունենալ»[1]։

Փաստաթղթում, ի վերջո, նշվում էր, որ երբ հարևան ժողովուրդները՝ թուրքերը, քրդերը և այլոք հասունանա և առաջարկեն արևմտահայերին աջակցել համաօսմանական հեղափոխությանը, նրանք իրրև նույն երկրի զավակները պետք է ընդառաջեն։ Բայց արևմտահայերը կդիմեն այդ քայլին միայն այն ժամանակ, երբ մահմեդականները երաշխավորեն, որ իրենք նրանց հետ միասին կլինեն երկրի իրավահավասար քաղաքացիներ։ «Այն ժամանակ անջատ Հայկական հարցը իրականության մեջ լուծված կհամարվի և թուրքահայ ժողովուրդը ուրախությամբ կաջակցի ընդհանուր ազատագրական գործին՝ համակվարական սկզբունքների հեռանկարով»[2]։

Արմենականների ծրագրի համեմատությամբ, Սեպուհի հավելվածում նորն այն է, որ կուսակցության հեռավոր նպատակը համարվում էր սոցիալիստական հեղափոխությունը և արևմտահայության ազատագրական հարցը հնարավոր էր դառնում լուծել համաօսմանական հեղափոխության միջոցով։

Բայց այդ դրույթները Ռուսաստանի առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության ազդեցության արդյունք էին, որը զարկ տվեց սոցիալիստական գաղափարների տարածմանը, և մի շարք բուրժուական կուսակցություններ, հաշվի առնելով զանգվածների համակրանքը նրանց հանդեպ, սկսեցին իրենց նպատակները ևս հռչակել սոցիալիստական։ Այդ հեղափոխությունը ցույց տվեց, որ ճնշված ժողովուրդներն իրենց համախմբման շնորհիվ կարող են ձեռք բերել ազատություն ու անկախություն։ Իրականում արմենականները, ինչպես ճիշտ են բնութագրում սովետահայ պատմաբանները, ոչ արմատական, առաջադիմական-բուրժուական կուսակցություն էին։

Անդրադառնալով հոգևորականության հարցին, արմենականները նշում էին, որ այն դեռ կարևոր դեր է խաղում հայ հասարակական-քաղաքական կյանքում։ Նրանց գործիչներից մեկը՝ Միք. Նաթանյանը մատնանշում էր. որքան էլ ասեն, թե կրոնական գաղափարի դերը անցել է, հայ եկեղեցին դադարել է մեր ազգային կյանքի վրա ազդեցություն ունենալուց, «այդուհանդերձ մենք կխորհինք, որ ընդհակառակը, այժմ ավելի քան անոր դերը և հետևաբար օգտակարությունը շեշտված կմնա»։ Ապա ավելացնում, որ նրա դերն ու նշանակությունը պիտի շարունակի պահպանվել այնքան ժամանակ, «մինչև որ հայուն ճակատագիրը քաղաքական ուրիշ նպաստավոր լուծման մը չի հանգի, այսինքն՝ հայ ազգը իր աշխարհիկ ներկայացուցիչներուն ձեռքով չի ներկայացվի»[1]։

Միք. Նաթանյանը հայտարարում էր, որ Ամենայն հայոց կաթողիկոսը ոչ միայն հոգևոր ղեկավար է, այլ «նաև քաղաքական իրավասություններով օժտված իշխանություն մը եղած է և է»[2]։ Նա պահանջում էր ամբողջ ազգի համախմբում կաթողիկոսի շուրջ, գտնելով, որ սա կարող է իր «հայրապետական հեղինակությամբ բարձր ազդեցություն մը և ներգործություն մը ընել ազգին կյանքը ջլատող ներքին հակընդդեմ տարերուն վրա և մղել զանոնք հօգուտ հայրենիքի հարկավոր զոհողության և ջիղողության,— բան մը, որ... մեծապես պիտի օգնե հայությանը և անոր վերանորոգությունը ապահովե»[3]։

Գ. Պեռոզիկյանը նույնպես մեծ ակնածանքով էր խոսում կաթողիկոսի, մասնավորապես Մկրտիչ Խրիմյանի մասին, անվանելով նրան «Հայոց Հայրիկ», «հայ եկեղեցվո քաջ և անձնուրաց հովվապետ», «գթառատ և պաշտելի Հայրիկ»։ Մ. Խրիմյանի մահը համարում էր «համազգային սուգ» և առաջարկում էր վառ պահել նրա հիշատակը, պահպանել ստեղծած արժեքները, հատկապես վանում հիմնադրած դպրոցը[4]։ Արմենականները խնդիր էին դնում՝ արտամղել անուս և թերուս քահանաներին և բոլոր գյուղերը բավարարել բարեկիրթ հոգևորականներով[5]։

Այդպիսով, ինչպես Մ. Փորթուգալյանը, այնպես էլ արմենականները կարևոր նշանակություն էին տալիս հայ հոգևորա-

1 Ա. Գարրինյան, նշվ. աշխ., էջ 172—173։

2 Նույն տեղը։

1 Տե՛ս «Վոսփոր», 1908, մայիսի 16, № 521։

2 Տե՛ս նույն տեղը, մայիսի 30 (№ 527)։

3 Նույն տեղը, 1905, հոկտեմբերի 14 (№ 26)։

4 Տե՛ս նույն տեղը, 1907, դեկտեմբերի 10 (№ 456)։

5 Տե՛ս նույն տեղը։

կանությանը, բայց ի տարբերություն Մ. Փորթուգալյանի, որը մերժում էր հոգևորականության ղեկավար դերը հայ հասարակական-քաղաքական կյանքում, արմենականները պաշտպանում էին այն գոնե մինչև ազգի անկախության հռչակումը։

* * *

Արմենականների գաղափարական հարցերն արծարծվում էին նաև նրանց ամերիկյան մասնաճյուղի օրգան «Արաքս» պարբերականում, որը հրատարակում էր Հովհաննես Հակոբյանը[1]

1 Հովհաննես Հակոբի Հակոբյանը ծնվել է Վանում, 1876 թ., տարրական կրթությունն ստացել է տեղի Հայսկուլների դպրոցում, իսկ միջնակարգը՝ էջմիածնի ճեմարանում։ Ապա մեկնել է Ամերիկա, սովորել Վիսկանսոնի համալսարանում (Նյու Յորք) և 1904 թ. ավարտել նրա պատմության ֆակուլտետը։ 1905 թ. ստացել է պրոֆեսորի կոչում։ 1906 թ. ընտրվել է Կահիրեի Հայկական բարեգործական ընդհանուր միության վարչության անդամ։ 1908 թ. հեղաշրջումից հետո գալիս է Կ. Պոլիս և քղթակցում «Վերջին լուր», «Ժողովրդի ձայն» օրաթերթերին։ 1911—1912 թթ. եղել է Էրզրումի Սանասարյան վարժարանի տեսուչը։ 1915 թ. մեկնում է Ռումինիա, ապա Ռուսաստան և Հյուսիսային Կովկասում զբաղվում հայ գաղթականների տեղավորման ու խնամքի գործերով։ Այնուհետև տեղափոխվում է Թիֆլիս։ 1918—1921 թթ. ապրում է Կ. Պոլսում և աշխատակցում «Բյուզանդիոն» և այլ պարբերականներին, ապա մեկնում է Կահիրե և հրատարակում «Արև» թերթը։ 1927 թ. սովետական կառավարության հրավերով գալիս է Երևան և ակտիվորեն մասնակցում հայրենիքի վերակառուցման աշխատանքներին։ Դասախոսում է Երևանի պետական համալսարանում և միաժամանակ աշխատում «Մելքոնյան Ֆոնդի» պատասխանատու քարտուղար։ 1937 թ. կարվում է նրա կյանքի թելը։ Թողել է մի շարք մենագրություններ՝ «Հայերի ու ֆրանկների հարաբերությունները Լևոն II-ի իշխանության օրոք 1186—1219 թթ.» (1905), «Ազգերի պատմություն» երեք հատորով (1912), «Գերման դավը Կովկասի մեջ» (1917), «Թուրքիան գերման ճանկերուն մեջ» (1918) և այլն։ 1930-ական թվականներին լույս տեսավ նրա կազմած «Ուղեգրություններ (փաստաթղթերի ժողովածու)» երկու հատորը, որը նախատեսվել էր հրատարակել 10 հատորով, մյուսները, ցավոք, չստեղծվեցին կազմողի ձերբակալության պատճառով։ Հովհաննես Հակոբյանը անձնապես մոտ էր հայ մշակույթի մի շարք անվանի գործիչների հետ (Ա. Զոպանյան, Ե. Օտյան, Վ. Թեքեյան, Հ. Աճառյան, Ավ. Իսահակյան, Թ. Թորամանյան, Փ. Թերլեմեզյան, Կոմիտաս և այլն)։

Հ. Հակոբյանի մասին այս տեղեկությունները մենք տրամադրել է նրա որդին՝ արվեստի վաստ. գործիչ Շահեն Հակոբյանը, որի համար հայտնում ենք խորին շնորհակալություն։ Նրա կենսագրության վերաբերյալ հոդվածներ են հրատարակել Գ. Ստեփանյանը («Հայրենիքի ձայն», 1977, հունվարի 26), Մ. Մելիքյանը («Երևանի համալսարան», 1976, № 1), Երվանդ Տեր-Մկրտչյանը («Գանձեր Վասպուրականի». չեն նշվում թիվն ու համարը) և ուրիշներ։

սկզբում Բոստոնում (1905—1906) որպես շաբաթաթերթ, իսկ հետո՝ Նյու Յորքում (1907) որպես ամսաթերթ։ Հովհաննես Հակոբյանը (Վարդ Շահենն կամ Վարդ Շահենի)[1] նախապես քրղթակցում էր «Արմենիային» և իբրև արմենական[2] պրոպագանդում նրա գաղափարները[3]։ Հետո համագործակցում է վերակազմյալ հնչակյան Դարեգին Չիթչյանի հետ և 1899 թ. միասին հրատարակում «Ձայն հայրենյաց» պարբերականը[4]։ Ա. Արփիարյանն այդ առթիվ գրում էր. «Ուրախ ենք տեսնելով, որ երբեմն իրարու թշնամի հնչակյանները և արմենականները այսօր միևնույն զգացումներով ոգևորված, միևնույն գաղափարներով տոգորված միասին կաշխատակցին»[5]։

Սակայն շուտով Վարդ Շահենին թողեց թերթը, շարունակե-

1 Հովհաննես Հակոբյանը ստորագրում էր Շահեն կամ Շահենի ծածկանունով՝ նահատակված եղբոր հիշատակը հավերժացնելու համար։ 1892 թ. նրա եղբայր Շահենը Փանոս Թերլեմեզյանի հետ միասին, իբրև հայդուկներ, որոշում են վրեժխնդիր լինել Շատախը սարսափի ու ավերի ենթարկող տերահռչակ Շաքիր աղայից։ Նրա դեմ մահափորձ են կազմակերպում, սակայն ապահով Շաքիր աղայից նրա զինակիցներից մեկին իշխանությունները հետապնդում են նրանց, ձերբակալում են Շահենին և մահապատժի ենթարկում, իսկ Փանոսը փախչում է արտասահման և ազատվում։

2 Վարդ Շահենի արմենական կուսակցության պատկանելու փաստը Ա. Արփիարյանից բացի հաստատում էր նաև Անուշավան Տեր-Մկրտչյանը, որն իր հուշագրություններում մատնանշում էր, թե պրոֆ. Հ. Հակոբյանը իրենց կազմակերպության ներկայացուցիչն էր Ամերիկայում (տե՛ս ՀԱՄՀ ԿՊՊԱ, ֆ. 427, ց. 1, գ. 21, թ. 6)։

3 Ահա մի քանի փաստեր այդ առթիվ. 1898 թ. Վարդ Շահենին գրում էր, որ «գաղափարական գործը գաղափարակիցների անկեղծ գործակցությամբ միայն կծավալվի ու կզարգանա», որ միայն գործիչը չի կարող առաջ տանել իր գաղափարները, եթե նրան չօժանդակեն համակիրներն ու գործակիցները։ Ապա շարունակում էր, որ «Արմենիայի քարոզած գաղափարներն արդեն արմատ են բռնել... պետք է ուրեմն այդ արմատացած գաղափարները հյուծեր արձակեն... պետք է գաղափարակիցների միության և կարգապահության ոգին արմատացնել մեր մեջ և Արմենիայի դրոշին տակ հավաքված դիմել դեպի նպատակը» («Արմենիա», 1898, օգոստոսի 25)։

1899 թ. «Արմենիայի» առաջնորդողում Վարդ Շահենին կոչ էր անում. «Սիրափիլիր, հուսահատության այդ մահահոտ քամին դեն շպրտիր, ուրիշներեն օրինակ առ և հաստատ հավատա, որ քո ազգի փրկության միակ միջոցը քո ձեռքին է, քո պատրաստվիլ գիտնալուն մեջ է»։ Այնուհետև շարունակում էր. «Քո փրկությունը, քո ազատությունը քո ձեռքին է միայն, ամեն բան դու կարող ես բնել և դու պետք է բնես» («Արմենիա», 1899, մարտի 1)։

4 Տե՛ս «Մշակ», 1907, փետրվարի 2 (№ 24)։

5 «Մարտ», 1899, № 19։

լով ուսումը համալսարանում, իսկ Գարեգին Չիթչյանը սպանվեց Օգեսայում (1902 թ.)։ «Զայն հայրենյացը» ամբողջապես անցավ վերակազմյալ հնչակյաններին, դառնալով նրանց կուսակցության պաշտոնական օրգանը[1]։

Համալսարանն ավարտելուց հետո, Վարդ Շահենին ձեռնամուխ է լինում նոր պարբերականի՝ «Արաքսի» հրատարակմանը և քարոզում ու պրոպագանդում է «Արմենիայի» և արմենականների գաղափարները։ Թերթի առաջին իսկ համարներից մեկում նա գրում էր. «Հայաստանը գերի է, և հայ ազգն՝ ինքն իր ձեռքով, իր անհավատ ջանքով պիտի փշրե իր գերության շղթաները»։ Բայց այդ բանին հասնելու համար անհրաժեշտ է նախապես ստեղծել գաղափարական համերաշխություն։ Իսկ դա պիտի կատարել ոչ թե բռնությամբ, այլ ազատությամբ, անկաշկանդ ընտրությամբ։ «Գաղափարի ազատություն տվեք ամենին, ատով միայն պիտի կրնանք իրար միանալ»[2]։

Հեղինակն անդրադառնում էր հայ ժողովրդի հեղափոխության հարցերին և նշում, թե այդ գաղափարը կառաջանա և համազգային բնույթ կընդունի միայն այն ժամանակ, «երբ ամբողջ ժողովուրդ մը կհասկնա իր վիճակին իրականությունը, գիտակից կըլլա իր վզին ծանրացող լծի ծանրությունը, և դժդոհության ոգին այնքան կզարգանա, որ մահը կնախընտրե գերութենէ, ան ատեն ալ հրդեհը չի մարիր»[3]։

Վարդ Շահենին նշում էր, որ XIX դ. վերջին, կոտորածներից առաջ, այդպիսի վիճակ դեռ չէր առաջացել, «ոգևորություն մը կար միայն և այդ ոգևորությունը երիտասարդության մեջ այնքան էր աճել, որ 1892 թ. Թիֆլիսում դաշնակցականները Վանից եկածներին հարցնում էին. «Քանի հարյուր հոգի և քանի հրացան է հարկավոր՝ մի գիշեր Վանի բերդը գրավելու համար...»[4]։

Այնուհետև հրապարակախոսը նշում է, որ կոտորածներից հետո ժողովուրդն ապրեց ընդհանուր հիասթափություն։ Շատերը նզովեցին հեղափոխությունը, ոմանք էլ բռնեցին արտագաղթի ճամփան։ Մերժելով այդ տրամադրությունները, Վարդ

1 Տե՛ս «Մշակ», 1907, փետրվարի 2 (№ 24)։
2 «Արաքս», 1905, № 2, էջ 10։
3 Նույն տեղը, № 6, էջ 43։
4 Նույն տեղը։

Շահենին գտնում էր, որ կոտորածներից հետո «մեր ազգային հեղափոխությունը ոչ թե դադարեցնելու էինք, այլ սկսելու էինք»[1]։ Անհատը քանի դեռ կենդանի է, պետք է պայքարի իր գոյության համար, հուսահատվելիս նա կարող է ինքնասպան լինել։ Բայց ազգը չի կարող դիմել այդ քայլին, նա պետք է շարունակի պայքարը, ընտրելով, իհարկե, պայմաններին համապատասխան ձևեր ու եղանակներ։ Իբրև այդպիսին նա առաջարկում էր ինքնապաշտպանության կազմակերպում կամ թշնամուն կազմակերպված դիմադրավում։ «Մեր միակ պատասխանությունն, միակ գործն է պատրաստվել ինքնապաշտպանության ու գործել ինքնապաշտպանություն»[2]։ Այդ գործին պետք է մասնակից դառնա նաև արտասահմանցի հայը, որի ուղարկած դրամով հայրենիքի նրա եղբայրը կարող է ձեռք բերել կամ որը, ծանոթացնելով օտարին իր եղբոր դժնդակ կացությանը, կարող է նրանից «հույս մը ակնկալել»[3]։

Անդրադառնալով այն հարցին, թե ինչ է պահանջում արևմտահայությունը, հրապարակախոսը գրում էր. «Հայու պահանջն է կյանքի և ինչքի ապահովության իրավունքը ձեռք բերել իր բնակավայրին մեջ»[4]։

Դա, անշուշտ, սահմանափակ պահանջ էր։ Բայց ի տարբերություն «Արմենիայի» կամ արմենականների, որոնք Հայաստանի ազատագրությունը հնարավոր էին համարում հեղափոխության միջոցով, Վարդ Շահենը գտնում էր, որ այն կարելի է ձեռք բերել նաև խաղաղ ճանապարհով։ Նա նշում էր, որ արևմտահայության փրկության հարցում «թե հեղափոխական և թե ոչ. հեղափոխական անվան տակ եղած ձեռնարկներուն համակիր հանդիսացանք»[5]։

Հրապարակախոսը հայտարարում էր, որ հայ ժողովրդի ազատագրության գործում արտաքին օժանդակությունն անհրաժեշտ է, քանի որ նա ի վիճակի չէ իր «համար միս մինակ ազատություն ձեռք բերել»[6], բայց միաժամանակ նշում էր, որ

1 Տե՛ս «Արաքս», 1905, № 9, էջ 66։
1 Նույն տեղը, 1906, № 11, էջ 82։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Նույն տեղը, № 46, էջ 362։
5 Տե՛ս նույն տեղը։
6 Տե՛ս նույն տեղը։

տերությունները կաջակցեն հայերի փրկությանը միայն այն ժամանակ, եթե դրանից օգուտներ ունենան։

Կանգ առնելով այն փաստի վրա, որ հայության զանազան ներկայացուցիչներ դիմում էին ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռուզվելտին, խնդրելով օգնություն, նա նշում էր, թե պրեզիդենտը չի ընդառաջի նրանց, քանզի իր երկրի շահերը նրա առջև այդպիսի խնդիր չեն դնում։ ԱՄՆ-ը միայն այն ժամանակ կկարկառի իր աջակցության ձեռքը, «երբ հայ ժողովուրդը որոշ ու ուղղամիտ դեր մը կատանձնէ առաջնորդելու յանկի դրամատերերը դեպի Փորթ Սաիտ և հոն ցուցնելու անոր շահու աղբյուրները»[1]։ Բայց հեղինակը չէր նկատում, որ յանկիները, հաստատվելով Թուրքիայում և սիրաշահելով նրա բարիքներին, հագիվ թե հրաժարվեին մեծ զանգվածից և հանուն մարդասիրության մտահոգվելու սոսկ պատառի (Արևմտյան Հայաստանի) փրկության խնդրով։

Վարդ Շահենին մեծագույն համակրանքով էր խոսում Ռուսաստանի մասին։ Նա տարբերում էր երկու Ռուսաստան՝ միապետական և դեմոկրատական։ Խստորեն քննադատում էր միապետական կարգերը և դրվատում դեմոկրատիայի պայքարը։ Հրապարակախոսը գտնում էր, որ ցարական «բեժիմը երկար տևել չի կրնար. ան փտած է ու իր քայքայումին մոտեցած, ու անոր խորտակումեն բոլոր տառապյալ ցեղերը պիտի բարձրանան ու ձեռք մեկնեն ազատ քաղաքացու արդար իրավունքներ»[2]։

Անդրադառնալով 1905 թ. ռուսական հեղափոխությանը, նա գրում էր, թե դա «աշխարհիս ամենամեծ և ամենալավ կազմակերպված հեղափոխությունն է, որ կկատարվի մեր աչքին առաջ և օրեօր իր հոլովումները կրնե դեպի նոր վիճակը»[3]։ Վարդ Շահենին այն կարծիքի էր, որ ռուսական հեղափոխությունը «պիտի վճռի ոչ միայն ռուսահայուն բաղդը, այլև թուրքահայուն խնդիրն ալ...»[4]։ Նա քննադատում էր այն հեղինակներին, որոնք բացասաբար էին արտահայտվում Ռուսաստանի մասին և ցույց էր տալիս, որ «Ազատ Ռուսիան, եթե Հայաստանն ալ (իմա՝ Արևմտյան Հայաստանը— Ա. Հ.) իր մեջ առնե, մենք բան մը չենք կորցներ. ընդհակառակը, շնորհիվ այն իրականության, որ ռուսահայ եղբայրներ մեզմե կուլտուրապես շատ բարձր մակարդակի մը վրա կգտնվին, անոնց մեր մեջ ու մեզ հետ խառնվիլը սքանչելապես պիտի նպաստե թուրքահայ ժողովրդի զարգացման ու բարոյապես բարձրացման»[1]։

Վարդ Շահենին խնդիր էր դնում, որ արևմտահայերին ազատագրելիս պետք է լուծել նաև նրանց հարևան ժողովուրդների հարցերը, այլապես հայերը չեն կարող ապրել հանգիստ ու խաղաղ։ Բայց չէր նշում, թե ինչպես պետք էր լուծել դրանք։ Հրապարակախոսը պատրաստվում էր հոդվածաշար հրատարակել Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում բնակվող ժողովուրդների մասին կամ, ինչպես ինքն էր ասում, գրել «լուրջ տեսություններ»[2], սակայն «Արաքսի» հրատարակության դադարեցման պատճառով նա չկարողացավ դա անել։

Արևմտահայության ազատագրության հարցերը քննարկելիս, Վարդ Շահենին անդրադառնում էր կուսակցություններին և արդարացնում նրանց գոյությունը, «Մենք հակառակ չենք կուսակցությանց գոյությանը,— գրում էր նա,— կուսակցությունները պետք է որ ապրին, քանի որ գաղափարի ու մտածումի միօրինակություն անկարելի է, և չէ եղած պատմական շրջան մը ու չի կրնա ըլլալ օր մը, որ մարդիկ մեկ տեսակ մտածենն»[3]։

Սակայն նա դեմ էր, որ կուսակցությունները շատ հաճախ թողած ժողովրդի փրկության խնդիրները, զբաղվում են գրգվրոտոցներով, ձգտելով որքան հնարավոր է վարկաբեկել միմյանց, արտամղել իրար ասպարեզից։ Դիմելով դաշնակցության, հին ու վերակազմյալ հնչակյանների պարագլուխներին, հրապարակախոսը նշում էր. «Բավ է, պարոննե՛ր, ժամանակն է, որ ձեր այդ դեմագոգային հովերը մի կողմ դնեք, բավ է, որ ժողովրդի զգացումները շահագործեք և երկպառակության ու ատելության որոմը սերմանեք ամեն տեղ»[4]։

Նա պահանջում էր այդ պարագլուխներից կազմել պատվո

1 «Արաքս», 1906, № 34, էջ 266։
2 Նույն տեղը, № 12, էջ 90։
3 Նույն տեղը, № 41, էջ 321։
4 Տե՛ս նույն տեղը, № 15, էջ 113։

1 «Արաքս», 1905, № 8, էջ 58։
2 Տե՛ս նույն տեղը, 1907, № 3, էջ 138։
3 Նույն տեղը, 1905, № 4, էջ 25։
4 Նույն տեղը, № 5, էջ 34։

ատյան, ներկայացնել իրենց դրույթներն ու փաստերը ժողովրդին և լսել նրա արդար վճիռը։ «Ժող... ժողովուրդն իր աչքերը բանա ու տեսնի, թե ով է իր բարեկամն ու ով թշնամին»[1]։ Այնուհետև նշում էր. «Հայ ժողովուրդ, կուսակցական և ոչ կուսակցական, դու պետք է, որ քու դատողությանդ արդար վճիռն արձակես։ Այս ճգնաժամային օրերուն, երբ մենք մեր բոլոր ճիգերը կենտրոնացնելու ենք փրկելու հայի գոյությունը մոտալուտ վտանգեն, այս արտասահմանյան՝ հեղափոխության անունով խոսող քանի մը անհատները իրենց ծանր ամբաստանություններով ու զրպարտություններով պառակտումի խրամը կլայնացնեն, այլասերումը կթաթախեն և ազգային ինքնապաշտպանության գործը կվտանգեն։ Դու պետք է, որ խոսես, դու պետք է որ որոտաս և ցուցնես շիտակ ճամբան»[2]։

Հեղինակը գտնում էր, որ հայ ժողովրդի ինքնապաշտպանության ու ազատագրության հարցերի լուծումը կհեշտանա այն ժամանակ, երբ կուսակցությունները կթողնեն իրար դեմ մղվող պայքարը և միասնաբար կլծվեն ընդհանուրի գործին։ Ընդհանրապես պետք է նկատել, որ Վարդ Շահենը, պաշտպանելով «Արմենիայի» ու արմենականների թեզերը, մեծ համակրանքով էր խոսում Մ. Փորթուգալյանի մասին։ 1905 թ. հոկտեմբերին, երբ Մ. Փորթուգալյանը մեկնեց Ամերիկա և հանդիպում ունեցավ Նյու Յորքի, Բոստոնի ու այլ քաղաքների հայ հասարակայնության հետ, «Արաքսը» այդ մասին հրապարակեց մի շարք նյութեր, որոնցում նա բնութագրվում էր, որպես «ազգային նշանավոր գործիչ», «մեր ազատագրության նախակարապետ», Վարդ, որը հայ ազատագրության խնդիրները ներկայացրեց չվերլուծող մտքով», «դատապարտեց ծայրագույն անտարբերությունը և անխորհուրդ ու անհիմն լավատեսությունը», «հույսի և հավատքի պետքը շեշտեց», «անդիմադրելի տրամաբանությամբ ազգային վերածնության հույս ներշնչող հեռանկարները պարզեց», «զմայլելի հատկությամբ մը բացատրեց ճըշմարիտ դաստիարակության դերը ազգային վերածնության շարժումին մեջ»։

Պարբերականը ապա նշում էր, որ Մ. Փորթուգալյանի «հրատակ ու կշռված խոսքերը ծայր ի ծայր գերազանց ուշադրությամբ մը ունկնդրած էին», նրա «ամեն մի խոսքը և յուրաքանչյուր նախադասությունը ակներև ճշմարտություններ էին, որ կհոսեին ունկնդիրներու լարված միտքերուն մեջ», նրա «բանախոսությունն ավարտվեց բուռն ծափերու մեջ»։ Թղթակիցներից մեկը գրում էր. «Ափսոս, որ ոտար գրիչս, կարող չէ ամբողջովին արձանագրել այդ մեծ հայրենասերի արտահայտած գաղափարներուն ամբողջությունը, սակայն Նյու Յորքի հայ գաղութը երբեք պիտի չմոռանա այս արիասիրտ և անվհատ հեղափոխական ոահվիրայի վերջին խոսքերը»[1], այն է՝ տարածել և արմատավորել ազատության գաղափարը։

Մի շարք հարցերում կանգնելով «Արմենիայի» դիրքերում, Վարդ Շահենը, սակայն, դեմ դուրս եկավ նրա հակաընկերվարական դրույթներին և սկսեց պրոպագանդել կոմունիստական գաղափարներ։ Ընդ որում նա ծանոթացել էր այդ գաղափարներին ոչ թե Մարքսի և Էնգելսի աշխատությունների, այլ Համալսարանում ամերիկացի նշանավոր տնտեսագետ պրոֆ. Իլիի դասախոսություններն ունկնդրելու միջոցով։

Վարդ Շահենը նախապես անդրադառնում էր կոմունիստական կամ, ինչպես ինքն էր ասում, ընկերվարական գաղափարի առաջացման ու զարգացման պատմությանը, նշում, որ այն իր սաղմնային վիճակով երևան է եկել դեռ վաղ անցյալում՝ հին հունական մտածողների մոտ, որոշակիորեն զարգացել ուտոպիստ սոցիալիստների կողմից (Թոմաս Մոր, Սեն Սիմոն, Ռոբերտ Օուեն և այլն) և լիակատար կատարելության հասել Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ստեղծագործություններում։ «Քարլ Մարքսը,— գրում էր նա,— կճանաչվի գիտական և հեղափոխական ընկերվարության դպրոցի գլուխ»[2] Ապա շարունակում էր, որ Կ. Մարքսը առաջարկում էր բոլոր երկրների գործավորներին, այսինքն՝ բանվորներին միանալ որպես դասակարգ, պայքարել դրամատերերի, այսինքն՝ կապիտալիստների դասակարգի դեմ և նվաճել իրենց իրավունքները։

Հրապարակախոսն այնուհետև բնութագրում էր ընկերվարական հասարակության էությունը, ցույց տալիս, որ ընկերվարական գաղափարը ձգտում է «վերջ դնել մարդու անիրավությանը մարդու դեմ»[3], վտարել թշվառությունը «տառապող

1 «Արաքս», 1905, № 5, էջ 34։
2 Նույն տեղը։

1 «Արաքս», 1905, № 1, էջ 5, № 3, էջ 21։
2 Նույն տեղը, № 2, էջ 12։
3 Տե՛ս նույն տեղը, № 4, էջ 27։

մարդու օջախեն, անազնիվ ու մաշիչ մրցումը ջնջել տնտեսական աշխարհեն և, վերջապես, աղնվացնել ու բարձրացնել մարդը, հանելով զինքն իր ներկա բարոյական անկումեն»[1]։ Միևնույն ժամանակ ընկերվարությունը կվերացնի ազգային ճնշումներն ու բռնություններ, մարդկանց ու ազգերի միջև կահմանի իրավահավասարություն, աղնվություն ու համերաշխություն։ Շնորհիվ այդ վեհ գաղափարների, ընկերվարության ուսմունքը գնալով ավելի ու ավելի տարածվում է քաղաքակիրթ աշխարհում, ներառելով իր մեջ գիտակից ու քիչ գիտակից զանգվածների, բանվորների ու այլ խավերի։

Հրապարակախոսը քննադատում էր բոլոր նրանց, ովքեր մերժում էին կոմունիզմը, համարում էին այն «գողերու և ավազակներու սկզբունք»։ Նա ցույց էր տալիս, որ այն «խորհող ու մտացի մարդոց առաջարկած ծրագիր է...», որը գալիս է «բարեկարգելու տնտեսական կազմակերպությունը», ստեղծելու մի հասարակարգ, ուր «գողերն ու ավազակները պիտի դադրին գոյություն ունենալե»[2]։ Հեղինակը քննադատում էր նաև նրանց, ովքեր կոմունիզմը նույնացնում էին քրիստոնեությանը, հայտարարում էին, թե կոմունիզմը վերջ կդնի ամուսնությանն ու ընտանիքին, կտարածի սանձարձակություն ու այլասերություն։ Նա ցույց էր տալիս, որ ընկերվարության ժամանակ, ընդհակառակը, «ընտանեկան կյանքը ավելի մաքուր, ավելի բարձր ու ավելի համերաշխ պիտի ըլլա, ճշմարիտ սերը պիտի տիրապետե...»[3]։

Վարդ Շահենին մերժում էր այն սխալ պակերացումները, թե ընկերվարությունը կարող է հաստատվել բոլորովին անսպասելի։ Նա նշում էր, որ այն կգա աստիճանաբար, տևական գործընթացների հաղթահարումների ճանապարհով, հեղափոխությամբ կամ առանց հեղափոխության։ Նրա կարծիքով, հեղափոխական ուղի չի լինի հատկապես Ամերիկայում, քանզի այնտեղ կա դեմոկրատիա[4]։

Ամփոփելով իր պատկերացումները կոմունիզմի մասին, հեղինակը գրում էր. «Ընկերվարությունը կպահանջե, որ արտադրությունը կենտրոնանա ժողովրդի քվեով ընտրված կառավարության մը ձեռք, որով մրցումը բոլորովին պիտի վերանա, աննպատակ ու անգործածական արտադրությունը պիտի դադրի ու մարդկային ընկերությունը ընդհանրապես պիտի կարողանա արդարությամբ օգտվիլ արտադրելի այն ամեն բարիքներեն, ինչ որ բնությունը առատորեն շնորհած է ընկերությանը»[1]։

Դժվար է ասել՝ Վարդ Շահենը «Արաքսում» արծարծում էր կոմունիստական գաղափարները իր սեփական համոզմունքներից ելնելով, թե՞ ղեկավարվելով Սեպուհի կողմից արմենականների ծրագրի համար գրված հավելվածով։ Համենայն դեպս նա կոմունիստ չէր, հաճախ սխալ էր պատկերացնում ու մեկնաբանում կոմունիստական գաղափարները։ Այդուհանդերձ, «Արաքսը», հրավիրելով հայ ընթերցողի ուշադրությունը մարքսիստական ուսմունքի վրա, այսպես թե այնպես նպաստում էր նրա տարածմանը հայ իրականության մեջ։

Այդպիսով, արմենականները կանգնելով «Արմենիայի» դիրքերում, արևմտահայության ազատագրության հարցը կամենում էին լուծել համարյա այնպես ինչպես Մ. Փորթուգալյանը, բայց հետագայում, մասնավորապես XX դ. սկզբին, որոշ հարցերում շեղվում էին նրա դրույթներից։ Ի տարբերություն Մ. Փորթուգալյանի, արմենականները արևմտահայության ազատագրումն այժմ հնարավոր էին համարում համաօսմանական ապստամբության միջոցով, ոմանք համերաշխվում էին ընկերվարության գաղափարներին և նրանց իրագործումը համարում արևմտահայերի հեռավոր նպատակ։ Այնպես որ արմենականները ինչպես XIX դ. վերջին, այնպես էլ դարասկզբին պաշտպանում էին արևմտահայ բուրժուազիայի, գավառահայ բուրժուազիայի շահերը, որոնք զգալիորեն համընկնում էին թուրքական լծի տակ գտնվող արևմտահայ աշխատավոր զանգվածների շահերին։

Հեղակյաններ և վերակազմյալ հնչակյան

1887 թ. Ժնևում կովկասահայ մի խումբ ուսանողներ՝ Ա. Նազարբեկյանը (Լեռենց), Մ. Վարդանյանը (Նազարբեկյան), Ռ. Խանազատը (Խան, Խան Ազատ, Խանազատյան), Գաբրիել Կաֆ-

1 «Արաքս», 1905, № 2, էջ 10։
2 Տե՛ս նույն տեղը, № 5, էջ 35։
3 Նույն տեղը, էջ 36։
4 Տե՛ս նույն տեղը, № 6, էջ 51։

1 «Արաքս», 1905, № 9, էջ 69։

յանը (Շմավոն) և ուրիշներ հիմնադրեցին «Հնչակ» թերթը և նրա անունով հնչակյան կուսակցությունը[1]։

Մեկ տարի անց՝ 1888 թ., կուսակցությունը «Հնչակում» հրապարակեց իր ծրագիրը[2], ուր նշվում էր, որ մարդկային հասարակությունը բաժանված է դասակարգերի։ Կապիտալիստների մի փոքր խումբ իր ձեռքն է կենտրոնացրել արտադրության միջոցները, իսկ բազմաքանակ պրոլետարիատը զուրկ է դրանցից, շահագործվում է նրանց կողմից։ Անհրաժեշտ է հեղափոխություն կատարել, հանրայնացնել արտադրության միջոցները և վերացնել մարդու շահագործումը մարդու կողմից։

Ծրագրում ասվում էր, որ հայ ժողովուրդը գտնվում է երեք միապետների (թուրքական սուլթանի, պարսկական շահի և ռուսական ցարի) տիրապետության տակ։ Կուսակցության մոտակա նպատակն է ազատել հայ ժողովրդին այդ վիճակից, իսկ հեռավոր նպատակը՝ սոցիալիզմի կառուցումը։ Մոտակա նպատակի իրագործումից հետո պետք է ձեռնարկել մի շարք միջոցներ, որոնք հնարավորություն կտան գնալ դեպի հեռավոր նպատակը, այսինքն՝ անհրաժեշտ է ստեղծել մշտական ժողովրդական ներկայացուցչություն, որը պետք է ընտրվի ժողովրդի կողմից, քննի երկրի տնտեսական, հասարակական-քաղաքական հարցերը և ունենա օրենսդրական ֆունկցիաներ։ Միաժամանակ պետք է հիմնել նահանգական ու համայնական ինքնավարություն։ Սահմանել բոլոր քաղաքացիների իրավահավասարություն օրենքի առաջ։ Բոլոր չափահասները իրավունք ունեն ընտրելու և ընտրվելու, առանց ցեղի, կրոնի ու սեռի խտրության։ Հոլակել մամուլի, խոսքի և խղճի ազատություն, անձի և գույքի անձեռնմխելիություն, եկեղեցու անջատում պետությունից, ընդհանուր զինվորագրություն, պարտադիր կրթություն և այլն։

Տնտեսական բնագավառում ծրագիրը նախատեսում էր. հարկային ներկա համակարգի վերացում և պրոգրեսիվ հարկի

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 188—192, Մ. Վ. Առզումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թվականներին, Եր., 1959, էջ 212—214, Լ. Ա. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Եր., 1964, էջ 201—212, Խ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 166—169, Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 168—171։

2 Տե՛ս Հնչակյան կուսակցության ծրագիրը, 1887։

սահմանում, անուղղակի հարկերի վերացում, ապառքների բնաջնջում, մեքենաների ներմուծում հողի մշակման համար և դրանց համայնացում, հողագործական ընկերությունների ստեղծում, որը պետք է զբաղվի սերմի ու պարարտանյութի գնումով և գյուղատնտեսական մթերքների վաճառքով, ուրիշի աշխատանքի շահագործման վերացում և այլն։

Ծրագրում այնուհետև նշվում էր, որ կուսակցությունն ամենից առաջ պետք է զբաղվի հայերի ազատագրության հարցով Թուրքիայում, ուր նրանց վիճակը ավելի ծանր ու անտանելի է, քան Պարսկաստանում ու Ռուսաստանում։ Նա պետք է ապրստամբության միջոցով անջատի Արևմտյան Հայաստանը Թուրքիայից, ստեղծի այնտեղ «հայ ազգային անկախություն, որն էլ այդպիսով կազմում է մոտակա նպատակի մի հիմնական մասն ու առաջին պայմանը»[1]։

Ծրագրում խոսվում էր կուսակցության մոտակա նպատակին հասնելու մասին, որի համար «պետք է բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել ներկա հասարակական կազմակերպությունը Թուրքաց Հայաստանում, կռիվ մղելով բուրժուազիայի դեմ՝ ժողովրդական ընդհանուր ապստամբության միջոցով»[2]։

Իսկ մինչ այդ անհրաժեշտ է պրոպագանդել հնչակյան գաղափարները, ստեղծել հեղափոխական կազմակերպություններ, ծավալել ահաբեկչական գործողություններ, սպանելով պաշտոնյաներին, աղաներին ու ազգային դավաճաններին, ստեղծել ապստամբական զնդեր, որոնք խաղաղ պայմաններում պաշտպանելու են հայ բնակչության գույքն ու անձը, իսկ հեղափոխական պահին մարտնչելու են բռնապետության դեմ։

Շեշտվում էր, որ համաժողովրդական ապստամբություն կամ հեղափոխություն կարելի է բարձրացնել միայն այն ժամանակ, երբ Թուրքիան պատերազմի մեջ կմտնի որևէ պետության հետ։ Ահա այդ պահն էլ «պետք է համարել հարմար բոլոր մոտակա նպատակի իրագործման համար»[3]։

Ծրագրում, վերջապես, խոսվում էր Թուրքիայի տիրապետության տակ ընկած ժողովուրդների համագործակցության

1 Տե՛ս Հնչակյան կուսակցության ծրագիրը, էջ 15—16։

2 Նույն տեղը, էջ 16։

3 Տե՛ս նույն տեղը։

մասին։ Նշվում էր, որ արևմտահայերը իրենց ազատագրական պայքարում պետք է ջանան ստանալ հարևան քրդերի ու ասորիների աջակցությունը, ձգտեն, «եթե հանգամանքները ներեն, միատեղ ապստամբվել ընդհանուր թշնամու, թուրք կառավարության դեմ»[1]։ Հնչակյանները գտնում էին, որ արևմտահայերի փրկությունը կարող է ազատագրում բերել նաև նրանց հարևաններին, որ իրենց իղձն է ստեղծել թուրքական լծից ազատագրված բոլոր փոքր ազգերի «ընդհանուր անկախ դաշնակցություն, նման Շվեյցարիայի դրության»[2]։

Սկզբնական շրջանում հնչակյանների գաղափարախոսությունը, ինչպես իրավամբ նշում է Աշոտ Հովհաննիսյանը, կրում էր ռուս նարոդնիկության ազդեցությունը[3]։ Նրանք նույնպես շեշտում էին կապիտալիզմի կործանարար, ավերիչ դերը հայ ժողովրդի, մասնավորապես գյուղացիության համար։ Ա. Նազարբեկյանը 1889 թ. գրում էր, որ կապիտալիզմը Եվրոպայի երկրներին բերել է աղքատություն ու թշվառություն։ «Աչք խփել եվրոպական ժողովուրդների ներկա թշվառությունների առջև, որ առաջացրել է կապիտալիզմը... մեզ ներելի չէ։ Աջակցել այդ կապիտալիզմի մուտք գործելուն մեր ժողովրդի մեջ... հանցանք է»[4]։

Հնչակյանները նույնպես սոցիալիզմի սաղմը տեսնում էին գյուղական համայնքի մեջ։ Նույն հեղինակը շարունակում էր. «Սոցիալիզմն իր իրականացման համար ունի և ուրիշ դրական հիմք հայ ժողովրդի մեջ։ Հայտնի են հայ գյուղական համայնական, կոմունիստական կարգերը, հողատիրության կոմունիստական կերպերը։ Հին ժամանակներից ժառանգած այդ մեծ հարստությունը՝ գյուղական համայնքը կոչված է ապագայում մեծ դեր խաղալու հայ ժողովրդի բարօրության գործում... հայ գյուղական համայնքները ստանում են առավել լայն ու ընդարձակ ծավալ և դրանով նմանապես ավելի ընդարձակ կերպով բանում հայ ժողովրդի կարգերը սոցիալիզմի հանդեպ»[5]։

Ա. Նազարբեկյանը գտնում էր, որ հայ ժողովուրդը ֆեոդալիզմից կարող է գնալ դեպի սոցիալիզմ, շրջանցելով կապիտալիզմը։ Այդ թեզը նա փորձում էր հիմնավորել Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի տեսական ցուցումներով։ Սակայն նա անտեսում էր մարքսիզմի դասականների ավելի կարևոր ցուցումն այն մասին, որ ոչ մի ազգ իր ուժերով «չի կարող ցատկել զարգացման բնական փուլերի վրայից, ոչ էլ վերացնել վերջիններս դեկրետներով»[1]։

Բայց կարճ ժամանակից հետո հնչակյանները հրաժարվեցին իրենց նարոդնիկական պատրանքներից և ստիպված եղան ընդունել բուրժուական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը հայ իրականության մեջ։ Արդեն 1891 թ. նրանք գտնում էին, որ Թուրքիան և նրա հետ միասին Արևմտյան Հայաստանը թևակոխել են կապիտալիզմի ոլորտը, որի հետևանքով քայքայվում են համքարություններն ու գյուղական համայնքը, որ գյուղացիությունը իր հետամնացությամբ ընդունակ չէ յուրացնելու սոցիալիզմի գաղափարները, որ հայ ժողովուրդը միայն կապիտալիզմի զարգացման մեջ կարող է գտնել իր տնտեսական ու քաղաքական ուժը[2]։

Հնչակյաններն իրենց համարում էին սոցիալիստներ։ Բայց նրանց սոցիալիզմը «ըստ էության նարոդնիկական ուտոպիստական սոցիալիզմի մակարդակից չէր բարձրանում»[3]։ Նրանք իրենց անվանում էին մարքսիզմի կողմնակիցներ, մերձենում էին եվրոպայի սոցիալիստական կուսակցություններին, սակայն իրականում ցանկանում էին օգտագործել Եվրոպայում արդեն հեղինակություն վայելող մարքսիզմը և զգալի ուժ ներկայացնող սոցիալիստական կուսակցությունները Հայկական հարցի լուծման համար։

Ստ. Շահումյանը հնչակյանների կուսակցությունը բնութագրում էր որպես մանր բուրժուական կուսակցություն և ավելացնում, որ այն «չնայած իր հնուց սոցիալիստական «պիտակին», և իր գրական առաջնորդների բարի կամքին, եղել է և

1 Տե՛ս Հնչակյան կուսակցության ծրագիրը, էջ 19։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 190—191։
4 «Հնչակ», 1889, № 1, էջ 5։
5 Նույն տեղը, էջ 6։

1 Տե՛ս Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, Եր., 1954, էջ 5։
2 Տե՛ս «Հնչակ», 1891, № 14, էջ 1—2, Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 191։
3 Տե՛ս Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքսլենինյան փուլի սկզբնավորումը, Եր., 1976, էջ 171։

մնում է մինչև այժմ ընդհանուր առմամբ նացիոնալիստական կուսակցություն...»[1]։ Սա չափազանցություն է։

Հնչակյանները քննադատում էին եվրոպական պետությունների գաղութատիրական իմպերիալիստական քաղաքականությունը, թուրքամետ և հակահայկական վարքագիծը, բայց և նրանց հետ էին կապում արևմտահայության ազատագրության հարցը։

Հնչակյան կուսակցության սոցիալական կազմը խառնիճաղանջ էր։ Սրանում ընդգրկված էին բանվորներ, արհեստավորներ, գյուղացիներ, մտավորականներ, առևտրականներ, հոգևորականներ, անգամ պաշտոնյաներ։ «Մի կուսակցության մեջ համախմբվում էին թե սոցիալիզմին համակիր, նրան անկեղծորեն ձգտող և թե սոցիալիզմին անգիտակ, նույնիսկ հակասոցիալիստական տարրեր...»[2]։ Հնչակյան կուսակցությանն անդամագրվեցին արևմտահայ հասարակության այնպիսի երևելի անձինք, ինչպիսիք էին Համբարձում Պոյաճյանը (Մուրատ), Միհրան Տամատյանը, Արփիար Արփիարյանը, Հարություն Ճանկյուլյանը (Ղարիպ), Գրիգոր Գըլըճյանը (Պոլսեցի), Հակոբ Գազանճյանը (Տիվրիկցի) և ուրիշներ։ Հնչակյան պարագլուխներից մեկը՝ Խանազատը, շատ ջանքեր թափեց, որպեսզի Խրիմյան Հայրիկին նույնպես ներգրավի կուսակցության մեջ, ելնելով այն բանից, որ դա կարող էր բարձրացնել իրենց հեղինակությունը։ Սակայն Խրիմյանը նրան պատասխանեց, որ ինքը «ժանգոտած մեքենա մըն է»[3]։

Հնչակյան կուսակցությունը լուրջ գործունեություն ծավալեց 1880-ական թվականների վերջերին և հատկապես 1890-ական թվականների առաջին կեսերին։ Այն ստեղծեց իր մասնաճյուղերը Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի տարբեր շրջաններում և մասնավորապես Մեծ ու Փոքր Հայքում ու Կիլիկիայում[4]։

Սակայն 90-ական թվականների կոտորածներից հետո հընչակյան կուսակցությունն ուղղակի ճգնաժամ էր ապրում. թուր-

1 Ստ. Շաուրյան, երկ, հ. 1, էջ 60։

2 Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 181։

3 Տե՛ս Պատմություն սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության, 1887—1962, հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 79։

4 Տե՛ս «Վերածնություն», 1904, № 33, Խ. Հ. Թաշեղյան, նշվ. աշխ., էջ 170։

քական կառավարությունը համարյա ամենուրեք ջախջախել էր նրա կազմակերպությունները։ Գոյություն ունեցող խմբակները ծխում էին ավերակների վրա, իսկ ժողովուրդն արդեն երես էր թեքել նրանցից։ Ստեղծված կացությունը վերլուծելու և ճգնաժամից դուրս գալու նպատակով, հնչակյանները 1896 թ. հունվարին Լոնդոնում հավաքվեցին համագումարի։ Այն ընթացավ սուր վիճաբանություններով։ Պատգամավորների մի մասը (Միհրան Տամատյան, Արփիար Արփիարյան, Անտոն Ռշտունի, Միհրան Սվազյան, Հրաչյա Մարալ, Վ. Թեքեյան, Վ. Արզումանյան, Լ. Մկրտչյան և ուրիշներ) գտնում էր, որ այսուհետև պետք է հրաժարվել մասնակի կռիվներից ու ցույցերից, քանի որ դրանք չեն կարող «օգտակար ըլլալ ապստամբական գործին»[1], որ ցուցարարական կռիվները միայն վնասում են ժողովրդին. անհրաժեշտ է դադարեցնել դրանք և պատրաստվել ընդհանուր ապստամբության[2]։ Նրանք պահանջում էին նաև ծրագրից հանել «սոցիալիզմ» արտահայտությունը, Հնչակը կոչել «Հայկական ազգայնական կուսակցություն» պատճառաբանելով, որ նախ՝ եվրոպական կառավարությունները թշնամաբար վերաբերվելով սոցիալիստական կուսակցություններին, չեն օգնի հայերին, և երկրորդ՝ հնչակն իր բախտը կապելով սոցիալիզմի հետ, լիովին վերացնում է «Հայկական հարցը»[3]։ Այս պատգամավորների կարծիքով, պետք է հրաժարվել հայ հասարակությունը դասակարգերի բաժանելու թեզից, քանի որ այն ջլատում է ազգային ուժերը և խանգարում ազատագրական պայքարին։ Դրա փոխարեն առաջարկում էին պրոպագանդել ազգային ներդաշնակություն, ազգային համերաշխություն և ուժերի միավորում։ Այնուհետև նրանք պահանջում էին, որ հայկական դատը ղեկավարեն միայն արևմտահայերը, քանի որ այն վերաբերում է բացառապես արևմտահայության ազատագրությանը։ Իսկ հայության մնացած զանգվածները կարող են հանդես գալ օժանդակողի դերում։ Ի վերջո նրանք խնդիր էին դնում վտարել կուսակցությունից Ավ. Նազարբեկյանին։

Պատգամավորների մյուս մասը՝ Ավետիս և Մարո Նազար-

1 Տե՛ս Պատմություն սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության, հ. Ա, էջ 268—269։

2 Տե՛ս նույն տեղը։

3 Տե՛ս Խ. Հ. Թաշեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, Եր., 1967, էջ 172։

բեկյանները, Ռուբեն Խանազատը, Ռուբեն Բերբերյանը, Սաղաթել Գևորգյանը (Սագուն), Արամ Դրիգորյանը (Համո), Տիգրան Իզմիրլյանը (Որսորդ), Գաբրիել Կաֆյանը (Շմավոն), Ռ. Մովսիսյանը[1] պնդում էին պահպանել կուսակցության նախկին ծրագիրը, չհրաժարվել «սոցիալիզմ» արտահայտությունից, քանի որ նրա վերջնական նպատակը սոցիալիզմի կառուցումն է, ընդունել հայ հասարակության դասակարգերի բաժանման փաստը, արևմտահայությանը չհակադրել հայության մյուս հատվածներին և, վերջապես, կուսակցությունից վտարել Արփ. Արփիարյանին։

Տարաձայնություններն այն աստիճան սրվեցին, որ Միհրան Տամատյանը, Արփիար Արփիարյանը, Հարություն Ճանկյուլյանը, Անտոն Ռշտունին, Լ. Մկրտչյանն ու սրանց կողմնակիցները անջատվեցին հին հնչակյաններից և ստեղծեցին իրենց կուսակցությունը և 1898 թ. անվանեցին այն «Վերակազմյալ հնչակյաններ»։ Հնչակյանների այս թևը ընտրեց իր կենտրոնը, որի մեջ մտան Արփ. Արփիարյանը, Վ. Թևքելյանը, Վ. Արզումանյանը, Լ. Մկրտչյանը, Մ. Տամատյանը, Մ. Սվաղյանը և ուրիշներ։ Վերակազմյալ հնչակյանները կոչվում էին նաև արփիարականներ։ Նրանք ստեղծեցին իրենց կազմակերպությունները Փոքր Հայքում, Կիլիկիայում, Կ. Պոլսում և հրատարակեցին «Նոր կյանք», «Մարտ», «Ձայն հայրենյաց», «Աղատ բեմ», «Պահակ» և այլ թերթեր։ Վերակազմյալները փորձեցին իրենց ձեռքը գցել նաև կուսակցության օրգանը՝ «Հնչակը», նույնիսկ հրատարակեցին մի քանի համար։ Սակայն Ավետիս Նազարբեկյանը Լոնդոնի դատարանի միջոցով կարողացավ պահպանել իր իրավունքը այդ թերթի նկատմամբ։

Վերակազմյալներն հետևյալ կերպ էին պատկերացնում արևմտահայության ազատագրման հարցերը։

«Մարտ»[2] թերթում նրանք քարոզում էին, որ հայ ժողովուրդն իր ազատության հարցը կարող է լուծել միայն նախապատրաստված համազգային հեղափոխության միջոցով։ Նրանք գրտնում էին, որ «Անհատական քաջասրտություններ, սակավաթիվ

1 Տե՛ս Պատմություն սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության, հ. Ա, էջ 268։

2 «Մարտը» հրատարակվում էր Լոնդոնում 1897—1901 թթ., խմբագրական կոլեգիա ստորագրությամբ, սակայն գլխավոր դերը խաղում էր Արփիար Արփիարյանը։

խումբերու ձեռնարկները հեղափոխություն չեն»։ Դրանք կարող են «մեծամեծ չարիքներ պատճառել ազգին...»[1]։

Պարբերականը նշում էր, որ միայն դիվանագիտությունը, որքան էլ այն լինի խելացի ու խորաթափանց, չի կարող պահպանել ու փրկել ժողովրդին։ Անհրաժեշտ է նաև նյութական ուժ. «Անկախ ազգերու համար այդ ուժը բանակ մը կը կոչվի, դերության մեջ տառապողներուն համար՝ հեղափոխություն»։ Ուստի անհրաժեշտ է «սիրել այդ բանակը, զորացնել զայն և անոր կրթնիլ, անոր աջակցությամբը Եվրոպան մեզի համար նպաստավորել, ահա ինչ որ ազգին մեծությանը գլխավոր նպատակակետը պետք է ըլլա»[2]։

Պարզելով իր հայացքները հեղափոխության, նրա շարժիչ ու դիակավար ուժերի մասին, թերթը շարունակում էր. «Մեր հեղափոխությունը ոչ թե ընկերական, այլ ազգային է։ Ամենքս ալ, որովհետև հայ ենք, հավասարապես կը հալածվինք առանց որևէ խտրության։ Կուսակալներն ու խուժանը նույնպես կը կողոպտեն հարուստ հայը, ինչպես հարկահանները հազիվ հացի մը ստակ ունեցող հայը»[3]։ Ապա նշում էր, որ կուսակցությունը իր ծրագիրը բարեփոխել է, նրանից հանել դասակարգերի մասին թեզը, «ընկերվարական դավանանքը» և թողել «զուտ ազգային ազատության դատը»։ «Հեղափոխությունը ամեն հայու բարեկամ, ամեն հայ հեղափոխության բարեկամ։ Այս է Ազգային հեղափոխության նշանաբանը»[4]։

Պարբերականի կարծիքով, կուսակցության ծրագրերից պետք է հանել այն ամենը, ինչ կարող է մասնատել ազգը, բաժան-բաժան անել։ «Մեր ձգտումն է մեկ հայրենիքի մը համար իր բոլոր զավակներեն մեկ բանակ կազմել մեկ դրոշակով, որուն վրա արյունազարդ տառերով գրված ըլլա. «Թշնամին՝ թուրք վարչությունն է»։ Ու ամեն հայ՝ հարուստ թե աղքատ, գործավոր թե վաճառական, տգետ թե զարգացյալ, աշխարհական թե հոգևոր, բարի թե չար, ամեն հայ այդ թշնամիին դեմ կռվելու կոչվի»[5]։

Պարբերականը հայտարարում էր՝ հայ ազգն ունի ամեն ինչ՝

1 «Մարտ», 1897, № 6։

2 Նույն տեղը, 1899, № 18։

3 Նույն տեղը, № 19։

4 Նույն տեղը։

5 Նույն տեղը, 1901, № 28։

թե՛ խելք, թե՛ ուժ, թե՛ զգացում, թե՛ դրամ, թե՛ հայրենասիրություն և թե այլ կարողություններ։ Անհրաժեշտ է ունենալ մի կենտրոն, որ ղեկավարի դրանք, համախմբի, գրոհի տանի թշնամու դեմ ու հասնի հաղթանակի։ Իսկ այդ կենտրոնը հեղափոխությունը պետք է ստեղծի բնական ճանապարհով, արհեստականը դատապարտված է կործանման։ Նորաստեղծ կենտրոնը կամ համազգային իշխանությունը «հզորապես պիտի կազմակերպե ազգին բոլոր ուժերը, ու թե կովի դաշտին վրա, թե դիվանագիտության առաջ պիտի պաշտպանե հայ ազգը և անոր ազատագրությունը պիտի ապահովե»[1]։

Թերթը գտնում էր, որ պատմությունը դաժան է դրել հարցը. «ոչ հայ հեղափոխականին սուրը այլևս իր պատյանը կը դառնա, ոչ ալ թուրք իշխանությանը։ Պատերազմը անդուլ, անդադար հարատևությամբ պիտի շարունակվի, մինչև որ կովողներեն մեկը տեղի տալու պարտավորվի»։ Եթե մենք տեղի տանք, այդ օրը «հայության բնաջնջումին ղողանջը պիտի լսվի»[2]։

Անհրաժեշտ է նշել, որ «Մարտը» պրոպագանդելով համազգային ուժերի համախմբման գաղափարը, նկատի ուներ միայն արևմտահայությանը, իսկ արևելահայերի միջամտությունը համարում էր վնասակար։ «Եթե Թուրքիո հայերը ընդունակ չեն իրենք իրենց մեջ ուժ գոյացնելով ղեկավարել իրենց գործերը, անօգուտ է, և մինչև իսկ վնասակար, բնական ճամբեն դուրս գործելու մղել զիրենք Ռուսիո հայերուն միջոցով։ Իսկ եթե Թուրքիո հայերը հասած են այն զգացումին, որով կարող են խորհիլ ինչ որ իրենց պետք է և գործել անոր համեմատ, ան ատեն պետք չունին ոչ թուրքահայերու վերին տեսչությանը»[3]։

Պատմական էքսկուրս կատարելով, Թերթը նշում էր, որ Գր. Արծրունին անցյալում աջակցում էր արևմտահայերին, բայց առանց միջամտելու նրանց գործերին։ Նա գտնում էր, որ արևմտահայերը իրենք ավելի լավ գիտեն, ավելի պարզ են պատկերացնում իրենց անելիքները։ Այդպես չեն վարվում ժնևցի կովկասահայերը։ Նրանք ոչ միայն միջամտում են արևմտահայերի գործերին, այլև ձգտում են ղեկավարել շարժումները, առանց գիտենալու կամ ճանաչելու Արևմտյան Հայաստանը։

1 Տե՛ս «Մարտ», 1900, № 26։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը, 1897, № 3։

Նրանք կամենում են մոռացության տալ հայրենասիրությունը և այն փոխարինել ընկերվարությամբ, ձգտում են ոչ թե համախմբել ազգը, այլ պառակտել այն։ Նրանց գործունեությունը աղետաբեր եղավ շատ արևմտահայերի, հատկապես վաստակավորականցինների համար։ Արևմտահայերի «բոլոր դժբախտությունները կովկասի հայոց ձեռներեցության հետևանք են»[1]։

Պարբերականը գտնում էր, որ եվրոպական տերություններ ի օգնությունն անհրաժեշտ է արևմտահայության ազատագրության համար։ Բայց միայն այդ հույսով չպետք է ապրել։ Հարկավոր է ծավալել նաև ազգային ակտիվ գործունեություն։ «Հայկական դատը կորսված պետք է համարենք, եթե հայ ազգը իր ամբողջ գործունեությունը դիվանագիտական և օրագրական աշխատությանց նվիրե»[2]։ Թերթը պատմական փաստերով ցույց էր տալիս, որ Թուրքիայի տիրապետության տակ ընկած ժողովուրդները իրենք են ձեռնարկել իրենց ազատագրության գործը, իսկ եվրոպան աջակցության է հասել «միշտ վերջին պահուն»[3]։

Պատասխանելով այն առարկություններին, թե Թուրքիան օգտվում է տերությունների հակասություններից և պահպանում իր ամբողջականությունը և, հետևաբար, արևմտահայության ազատագրումը անհնարին է, Թերթը նշում էր. «Եվրոպացիները ատեն մը իրարու հետ կ'իյնան, բայց օր մըն ալ համաձայնության մը կը հանգին Թուրքիո մորթին վրա»[4]։ «Մարտը» հավատացած էր, որ Անգլիան, Գերմանիան և Ֆրանսիան վերջին հաշվով պետք է Թուրքիան մասնատեն կամ մտցնեն նրանում վարչական բարելավումներ։ Ուստի «մեզի, հայերուս, կր մնա բավական արթուն և խելացի գտնվիլ, որպեսզի ոչ միայն վատթար վարչության մը լուծեն ազատինք, այլև օտարազգի դրամատերերուն ստրուկներն ալ չը դառնանք»[5]։

Անդրադառնալով Ռուսաստանին, պարբերականը գրում էր, որ նրա քաղաքականությունը հայերի համար եղել է մերթ նպաստավոր, մերթ աննպաստ[6]։ Ալեքսանդր II-ի ժամանակ

1 Տե՛ս «Մարտ», 1898, № 14։
2 Նույն տեղը, 1901, № 28։
3 Տե՛ս նույն տեղը, 1899, № 16։
4 Նույն տեղը։
5 Նույն տեղը, № 17։
6 Տե՛ս նույն տեղը, 1898, № 9։

այն նպաստավոր էր, բայց Ալեքսանդր III-ի ժամանակ՝ անպատ, 1894 թ. Սասունի ապստամբությունից անմիջապես հետո նպաստավոր էր, այնուհետև՝ աննպաստ։

Թերթը գտնում էր, որ Ռուսաստանը ուզում է զավթել Թուրքիան, իսկ վերջինս իր պաշտպանության համար պետք է բարեկամները և այդպիսով իր ու Ռուսաստանի միջև ամուր պատնեշ ստեղծի։ Իսկ եթե Թուրքիան շարունակի հակահայկական քաղաքականությունը, «տարակույս չի կա, թե ամբողջ հայությունը գիտակցորեն զորեղ գործիք մը պիտի ըլլա Ռուսիո ձեռքերուն մեջ Թուրքիո քայքայման նպատակին վաղընդփուլը հաջողման համար»[1]։

Վերակաղմյալ հնչակյանների «Նոր կյանք» ամսագիրը, որը լույս էր տեսնում Լոնդոնում Արփ. Արփիարյանի խմբագրությամբ, իր առաջին համարներից մեկում արևմտահայ ազատագրությունը տեսնում էր Թուրքիայի կազմում հայկական ինքնավարության ստեղծման մեջ։ Բայց այդ նպատակին հասնելու համար հայերը պետք է համախմբվեն, միավորվեն, միաձուլվեն առանց դասակարգային տարբերության կամ խտրականության։ Ազգի փրկությունը «ազգային մեկ ծրագրե և միասիրտ աշխատութենե կախում ունի»[2]։ Նկարագրելով կոտորածներից հետո հայության դժնդակ կացությունը, ամսագիրը գրում էր. «Ամենքս ալ հիմակ ըմբռնած ենք, թե կրթությամբ չէ միայն, որ ազգությունիս պիտի պահպանենք, բարոյացմամբ չէ միայն, որ ապագանիս պիտի ապահովենք, քաղաքականությամբ չէ միայն, որ մեր իրավունքներուն պիտի տիրանանք, նյութական զորությամբ չէ միայն, որ պիտի հաղթանակենք։ Փրկության գրավականը ազգային ամեն ուժերուն միաբան գործակցությամբ պիտի ապահովի»[3]։

Ապա ամսագիրը շարունակում էր. հայը պետք է իմանա, որ «իր փրկությունը իրեմեն միայն կախում ունի», որ նա «ամենե բանե առաջ, ամենե բանե ավելի... պետք է ինք իր վրա վստահեր, իր սեփական ուժին կրթներ»։ Հոգևորականները չպետք է քարոզեն հնազանդություն, հարուստները պարտավոր են բա-

1 Տե՛ս «Մարտ», 1900, № 23։
2 Տե՛ս «Նոր կյանք», 1899, № 1, էջ 2։
3 Նույն տեղը, 1901, № 5, էջ 50։

ցել իրենց քսակը ազատության գործի համար, չպետք է լինեն անտարբերներ ու չեզոքներ ընդհանուր գործի հանդեպ, փախուստի բոլոր դռները անհրաժեշտ է փակել, չպետք է ճանաչել դասակարգային խտրականություն, քանզի մենք բոլորս ստրուկներ ենք. «Պանքիր Մկրտիչը այնքան ստրուկ է, որքան բեռնակիր Մրտոն»[1]։

Ընդամին որոշել է մեզ բնաջնջել, ամոթ է ոչխարի պես կոտորվելը։ Եթե հայը ներկա օրերում ևս շարունակի իրարախույս, իրարակեր վարքագիծը, ուրեմն արժանի է ոչնչացման։ Պատմությունը թող նրա շիրիմի վրա գրի. «Հոս կը հանգչի ստրուկ հայությունը... չարդվելու արժանի ցեղ մըն էր»[2]։ Ազատությունը միշտ և ամենուր ձեռք է բերվել արյան գնով «Հայ հեղափոխությունը բացառություն մը չի պիտի կրնար անշուշտ ստեղծել պատմության մեջ»[3]։

«Նոր կյանքը» գտնում էր, որ հայ-թուրքական պատերազմը միայն այն ժամանակ կվերջանա, երբ սուլթանական իշխանությունները հրաժարվեն հայության բնաջնջման իրենց քաղաքականությունից և նրա համար հաստատեն նպաստավոր վարչակարգ, այլապես «մեր ազգային կռիվը կը շարունակվի, ու պետք չէ տարակուսել, թե վերջնական հաղթանակը Թուրքիո իշխանության չի մնա»[4]։

Ամսագրի կարծիքով, արևմտահայության ազատագրման գործում եվրոպական տերությունների օգնությունը անհրաժեշտ է, բայց դրա համար հայերը պետք է իրենց ազգային պահանջները հարմարեցնեն նրանց շահերին։ Վերլուծելով անցյալի դեպքերը, «Նոր կյանքը» սխալ չէր համարում եվրոպացից օգնություն ստանալու գաղափարը. սխալ էր այն, որ հայերը, հույսը դնելով Արևմուտքում նստող հայ «հեղափոխական վարիչներու վրա... և անոնց ապավինելով, պետք չտեսան գոնե առժամյա ընդդիմադրության մը նախապատրաստություններ ընել»[5]։ Ուստի կոչ էր անում՝ չկրկնել անցյալի սխալները։ Ամսագիրը գտնում էր, որ հայը այլևս չի հավատում, թե եվրոպացի միջամտությամբ շուտով ձեռք է բերելու ինքնավարու-

1 «Նոր կյանք», 1901, № 18, էջ 243։
2 Նույն տեղը, № 19, էջ 276։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Նույն տեղը, 1898, № 14, էջ 212։
5 Տե՛ս նույն տեղը, 1900, № 2, էջ 18։

Բյուն, սակայն չի էլ հուսահատված, թե այսքան ազնուներից հետո Հայաստանի բարվոքումն այլևս անկարելի է[1]։ Նա պետք է շարունակի մաքառել իր ազատության համար։

«Նոր կյանքը» արևմտահայության ազատագրության գործում կանգ էր առնում Ռուսաստանի դերի վրա և այն կարծիքն էր հայտնում, որ եթե Ռուսաստանը նվաճի Արևմտյան Հայաստանը, արևմտահայերը կորուստ չեն ունենա։ Բայց Թուրքիան կարող է շատ բան կորցնել։ Եվ որպեսզի նա անկորուստ մնա, պետք է բարեփոխվի, ապակենտրոնացնելով բոլոր ժողովուրդներին և տալով յուրաքանչյուրին ինքնավարություն[2]։

«Նոր կյանքը» անդրադառնում էր նաև կրոնի հարցերին և գրում, որ «իրենց ազգային ազատությունը կորսնցնող ժողովուրդները ազգային կրոնքի մեջ կը փնտռեն իրենց ինքնապահպանության ապահովություններեն մեկը, և թերևս ղեխավորը»[3]։ Արձանագրելով, որ հայության մեջ լուսավորչականների կողքին երևան են եկել կաթոլիկներ, ուղղափառներ և ուրիշներ, այն նշում էր, որ դրա հետևանքով ներազգային հակասություններն ավելի են սրվում։ Ամսագիրը գտնում էր, որ հայության համախմբման համար առաջին պլանի վրա պետք է դնել համազգային գիտակցությունը։ Համենայն դեպս, նրա վիճակն այնպիսին է, որ չի կարելի զբաղվել կրոնական բզկտոցներով։ «Մեր ազգի զարգացումը, մեր տոհմային նկարագիրը, ընդհանուր հայության շահերը չեն ներեր,— գրում է նա,— որ կրոնական առելությամբ լցված սրտերով ղիրար բզկտենք։ Համոզումներն ինչ որ ալ ըլլան, հարկ է իրողություններուն համակերպիլ ու ցեղային արյունի և ազգայնության գաղափարին մեջ ղիրար ընդգրկել»[4]։

Ամսագիրը քննադատում էր Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանին, նշելով, որ նա պաշտպանում է սուլթանի քաղաքականությունը, հոգևորականությանը դուրս է բերում ազգի դեմ և դրանով իսկ ջլատում համազգային ուժերը[5]։ Այս պայմաններում հայ ժողովուրդը պետք է պահպանի իր ազգային-կրոնական ավանդույթները, մանավանդ, երբ դրանք ապահովված են թուրքական ներքին օրենքներով ու միջազգային դաշնագրերով, պետք է բողոքի Օրմանյանի վարքագծի դեմ[1]։

Վերակազմյալ հնչակյանների պարբերականներից էր նաև «Ձայն հայրենյացը», որը լույս էր տեսնում 1899—1900 թթ. Նյու Յորքում, 1900 թ.՝ Ուստրում, 1900—1908 թթ. Բոստոնում, իսկ 1908—1911 թթ.՝ Կ. Պոլսում։ Նրա խմբագիր-տնօրենն էր Գարեգին Ջիթճյանը, իսկ խմբագիրները՝ Սուրեն Պարթևյանը, Միսաք Սուրենյանը և Լևոն Լարենցը (Քիրիշճյան)։

«Ձայն հայրենյացի» առաջնորդողներից մեկը, նկարագրելով արևմտահայության անտանելի դրությունը, նշում էր, թե նրա փրկությունը կարող է կատարվել միայն հեղափոխության կամ ապստամբության միջոցով. «Համերաշխ ըմբոստացումին մեջ է, որ կը տեսնենք մեր դատին հաղթանակը»[2]։ Բայց դրա համար պետք է նախապատրաստվել։ Այդ ապստամբությունը հաջողությամբ չի պսակվի, եթե «չդիտենք պատրաստվիլ կովին առաջ»[3]։

Նույն միտքն էր պրոպագանդվում թերթի նաև մի այլ առաջնորդողում։ «Մենք մեզմե պետք է սպասենք մեր ազատությունը»[4]։ Անհրաժեշտ է նախապատրաստել, ինել և ոտքի հանել ամբողջ ազգը, նրա բոլոր ուժերը։ «Հավաքական ճիգն է, որ վերջ պիտի դնե «ազգային դժոխքին»։ Մինչև «ժողովուրդը զենքի չդիմե, անկարելի է որևէ արդյունավոր վախճանի մը հանգիլ»[5]։

Օրաթերթը համախմբության կոչով դիմում էր հայ հասարակության բոլոր խավերին։ Այն երիտասարդությանը հարցնում էր, թե նա «ե՞րբ պիտի սկսի սարսռալ ազգային ցավեն ու երկունքեն, ե՞րբ պիտի իր լանջքն ու հոգին պարզե ազգային իդեալին՝ զայն ընդունելու, ընդգրկելու, անոր ուխտելու համար»[6]։ Եկեղեցականներին էլ քննադատում էր նրա համար, որ նրանք քիչ են մասնակցել հայ «ազգային ազատագրության ճիգին», չեզոքությամբ «ինքզինքն հեռու պահած են անկե...», ազատագրական շարժման վերելքի օրերին ակտիվացել են»,

1 Տե՛ս «Նոր կյանք», 1900, № 9, էջ 130։
2 Տե՛ս նույն տեղը, 1898, № 4, էջ 50։
3 Նույն տեղը, 1899, № 20, էջ 310։
4 Նույն տեղը, № 22, էջ 347։
5 Տե՛ս նույն տեղը, 1901, № 3, էջ 18։

1 Տե՛ս «Նոր կյանք», 1899, № 12, էջ 177։
2 «Ձայն հայրենյաց», 1902, № 119։
3 Տե՛ս նույն տեղը, № 125։
4 Նույն տեղը, 1903, № 229։
5 Նույն տեղը։
6 Տե՛ս նույն տեղը, 1904, № 260։

իսկ վայրէջքի ժամանակ պասսիվացնել, թշնամու կողմն են անցել։ Իրավ է, «եղած են հայ եկեղեցականներ, որոնք խաչի հետ ուրը բռնած կամ քարոզած են, ու կան ալ այսօր այդպիսիներ... Բայց ասոնք մատի վրա հաշվվող բացառություններ են։ Հայ եկեղեցականությունը՝ գրեթե իր ամբողջությամբ՝ դեռ անշարժ ու անվրդով դիրք մը ունի հայ հեղափոխության հանդեպ»[1]։ Պարբերականը նշում էր, որ հայ եկեղեցականները ժողովրդի մեջ հեղափոխություն քարոզելին, դաշնակցեին հայ հեղափոխականների հետ, իսկ Երիմյան Հայրիկը կանգներ «հայ հեղափոխության գլուխ»[2]։

«Ձայն հայրենյացը» գտնում էր, որ արևմտահայ ազատագրական պայքարին պիտի մասնակցեն նաև արևելահայերը։ Նրանք կարող են այդ պայքարում «վճռական դեր ու արգավանդ բաժին»[3] ունենալ։

Անդրադառնալով զինատար խմբերին կամ Անդրկովկասից օգնության հասնող ուժերին, թերթը նշում էր. «Դուրսեն գացող խմբեր միայն այն ատեն կրնան օգտակար ըլլալ, երբ արդեն երկրի մեջ կռվի ամեն պատրաստություններ եղած են ու կռիվն սկսված է»։ «Այս է ահա մեր հավատամքը։ Ատկեն դուրս որևէ հույս, որևէ ճամբա չկա հայուն ազատության համար»[4]։

Պրոպագանդելով ազգային ուժերի համախմբման և համազգային ապստամբության գաղափարները, պարբերականը դատապարտում էր հին հնչակյանների դրույթը ընկերվարության կամ համայնավարության վերաբերյալ, նշելով, որ այն խանգարում է ժողովրդի միավորմանը և ազատագրական պայքարի հաղթանակին[5]։ Թերթը կոչ էր անում՝ «հայության բոլոր ուժերը համախմբել աշխատիլ՝ առանց կրոնական, հարևանական ու դասակարգային խորության...»[6]։

«Ձայն հայրենյացը» գտնում էր, որ նախապես պետք է լուծել անտանելի ու անհետաձգելի դարձած արևմտահայության հարցը և ապա մտածել պարսկահայության ու ռուսահայության

1 «Ձայն հայրենյաց», 1903, № 232։
2 Տե՛ս նույն տեղը, № 233։
3 Նույն տեղը, № 218։
4 Նույն տեղը, № 229։
5 Տե՛ս նույն տեղը, № 218։
6 Նույն տեղը, 1904, № 309։

մասին, քանի որ հայ ժողովուրդն ի վիճակի չէ միաժամանակ հանդես գալու երեք բռնապետությունների դեմ[1]։

Թերթը չէր դնում Արևմտյան Հայաստանը Թուրքիայից անջատելու խնդիրը։ Արևմտահայության հարցի լուծումը տեսնում էր այն բանում, որ նա կարողանա «ինքնավար իշխանություն մը ձեռք բերել»[2]։

1905 թ. «Ձայն հայրենյացի» թղթակիցը իշխան Սաբահեդինի հետ զրուցելիս, շարադրելով վերակազմյալ հնչակյանների տեսակետը Հայկական հարցի լուծման մասին, ասում էր. «Հայ հեղափոխական գործունեությունը երբեք ձգտած չէ անկախ Հայաստանի մը հաստատման... Հայ հեղափոխական կոմիտեները միշտ իրենց նպատակ ունեցած են համեստ ու հնարավոր ծրագրի մը իրագործումը,— Թրքահայաստանի համար եվրոպական պետություններու բռնապրոլին տակ վարչական ինքնավարության մը ստանձնումը»[3]։ Իսկ հայերը անկախության չեն ձգտում ոչ թե նրա համար, որ չեն սիրում այն, այլ նրա համար, որ դա ներկա պայմաններում անհնարին են համարում, շարունակում է թղթակիցը։

1907 թ. ապրիլի 20-ից Բոստոնում վերակազմյալները սկսեցին հրատարակել «Ազգ» շաբաթաթերթը, որի հենց առաջին առաջնորդողում հայտարարում էին, որ իրենց թերթը «պիտի ըլլա ազգի թերթը», քանզի արտահայտելու է ոչ թե հայ հասարակության առանձին խմբերի շահերը, այլ «ազգային բոլոր կարիքներն ու տենչանքները»։ Պարբերականի նպատակն է «ստեղծել հայ ազգային ավելի կուռ, ավելի խորունկ ու ավելի բեղմնավոր միություն մը և աշխատելու է ազգային հավաքական քաղաքականության մը որդեգրումին ու բյուրեղացումին»[4]։ Ապա շեշտում էր, որ իր դավանանքը հայ հեղափոխական ուժերի համախմբումն է, հայ համերաշխության ստեղծումը, «համերաշխություն՝ ոչ թե լոկ փոխադարձ հարգանքի և բարյացակամ վերաբերության քաղաքականության խմաստով, այլ ազգային հեղափոխական որոշ ու մշակված ծրագրի մը

1 Տե՛ս «Ձայն հայրենյաց», 1904, № 310։
2 Տե՛ս նույն տեղը, 1903, № 239։
3 Նույն տեղը, 1905, № 369։
4 «Ազգ», 1907, ապրիլի 20։

կամ ձեռնարկներու շուրջ ու մեջ համերաշխ գործակցության սուրբ ու անդրժելի դաշինքով»[1]։

Հայ հեղափոխություն ասելով շարաթաթերթը հասկանում է «տաճկահայ դատը և անոր լուծումին համար մղված կռիվը»[2]։ Այն բացատրում էր արևելահայ խնդիրը։ «Ազգը» նշում էր, որ հայ հեղափոխությունը ծնվեց «տաճկահայ տառապանքին մեջեն... ռուսահայ մտավորականության հզոր ու ստեղծագործ ազդեցության տակ»։ Տաճկահայը սկզբից ևեթ «ապիկար ու անընդունակ հանդիսացավ իր ճակատագիրը» տնօրինելու գործում։ Նրա բախտն իր ձեռքը վերցրեց ռուսահայը, որը որքան օգուտ տվեց, այնքան էլ վնաս։ Կովկասահայը չկարողացավ կատարել «այն էական դերը, որուն պատասխանատվությունն ու պարտականությունը կառներ իր վրա»[3]։

Չկամենալով հակադրել արևելահայը արևմտահային, «Ազգը» այնուամենայնիվ դռնում էր, որ արևմտահայը ինքը կարող է որոշել «իր դատն ու ճակատագիրը»։ Նա իր հարցը կարող է լուծել միայն այն ժամանակ, երբ «կիրթ ափեն կովկասահայ հեղափոխական-կուսակցական խավանիշ ու անդամալուծող խնամակալությունը»[4]։

Անդրադառնալով այն հարցին, թե որն է տաճկահայ դատի էությունը և նրա լուծման եղանակը, թերթը գրում էր. «Հայ հեղափոխական շարժումը՝ մեր հասկացողությամբ՝ ուրիշ նպատակ չի ձգտիր այսօր, բայց եթե մարդկային տարրական իրավունքներու պահանջին վրա հիմնված նվազագույն ծրագրի մը իրականացման, կամ՝ սովորական բացատրությամբ՝ Թուրքահայ կյանքի, ինչքի, պատվի ու խաղաղ զարգացումի ապահովման։ Իսկ այս մոտավոր նպատակին հասնելու համար, ազգային հեղափոխական շարժումը ուրիշ միջոց չի տեսներ՝ Թուրքիո ներկա իրականության մեջ՝ բայց եթե հարատահարվող հայության սոցիալ-տնտեսական կազմակերպումը և քաղաքական ձեռնհասության հանգամանքներուն օգտվիլ գիտցող ընդհանուր ապստամբական պոռթկումը, որ առաջ բերելով արտաքին միջամտություն մը՝ պիտի ապահովեր հայկական բարեկարգությանց գործադրումը, համաձայն 1895 մայիսի 11-ի մեմորանդումին կամ անոր այս կամ այն վարիանտին»[1]։

Ինչպես տեսնում ենք, ամերիկահայ վերակազմյալ հնչակյանների երազանքը մայիսյան խղճուկ ռեֆորմների կենսագործումն էր՝ «այս կամ այն վարիանտով»։ Քիչ ուշ նրանք պահանջում էին հայկական ինքնավարություն Օսմանյան կայսրության սահմաններում՝ եվրոպական հսկողության տակ, ապացարելով, թե իրենց նպատակն է «հայկական նահանգներու բարեկարգությունը։ Մենք այժմեն չենք կրնար գիտնալ, թե այդ բարեկարգությունը ինչ մասնավոր ձևի ու ծրագրի վրա պիտի իրականանա։ Բայց կրնանք սա չափ միայն ստուգ նկատել, թե եվրոպական քոնթրոլի տակ, ավելի կամ պակաս սահմանափակ, ինքնավարություն մը պիտի ըլլա անո»[2]։

Ամերիկահայ վերակազմյալները դեմ չէին անկախ Հայաստանի ստեղծմանը. «Մեր անմիջական նպատակը չի կրնար ըլլալ, ուրեմն, «Անկախ Հայաստանի» երազը։ Բայց եթե հայությունը ապագային, իր պատմական իրավունքների վրա կրթնած, ուղե և հաջողի այդ ազգային անկախությունը ձեռք բերել, մենք պիտի այժմեն մերժո՞ծ ըլլայինք զայն, որովհետև մեր ծրագրին մեջ ինքնավարություն դրված պիտի ըլլա եղեր. փոխանակ անկախության։ Ատիկա մեր այսօրվա մտածելու բանը չէ»[3]։

Առաջնակարգ կարևորություն տալով զինված ապստամբության նախապատրաստմանը, «Ազգը» արևմտահայության ազատագրման, կամ ավելի ճիշտ՝ ինքնավարության հաստատման համար այդպիսի նշանակություն էր տալիս նաև արտաքին միջամտությանը կամ տերությունների օգնությանը։ Այն գրում էր. «Արտաքին միջամտությենեն հրաժարվիլը Թուրքահայ ազատագրական շարժումին դերեզմանաքարը դնել կը նշանակի, ազգային ինքնասպանություն մը պարզապես... Առանց արտաքին միջամտության բան մը չի կա՝ արևուն տակ՝ որ կարենա բարեփոխել հայերուն անտանելի վիճակը Թուրքիո մեջ... եթե երբեք Թուրքիո հայերը սահմանված են օր մը հանգիստ շունչ առ-

1 «Ազգ», 1907, ապրիլի 20։
2 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 6։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 20։

1 «Ազգ», 1908, մայիսի 25։
2 Նույն տեղը, հուլիսի 4։
3 Նույն տեղը։

նել՝ ատիկա, անպատճառ ու անպայման, պիտի ըլլա որևէ ձևի տակ՝ արտաքին միջամտության մը հետևանքով»[1]։ Թերթը դա բացատրում էր նրանով, որ արևմտահայությունը իր սեփական ուժերով չի կարող ազատագրվել կամ հասնել վերևից տրվող բարելավումներին։ Շատ ազգեր այդ ամենը ձեռք են բերել արտաքին միջամտության շնորհիվ, հայերը ևս չեն կարող բացառություն կազմել, մանավանդ, երբ նրանց ազատագրման հարցը ավելի բարդ է։

Բայց ե՞րբ պետք է լինի այդ արտաքին միջամտությունը։ «Ազգը» գտնում էր, որ այն դեպքում, երբ կլինի ազգային կուռ, մտածված ու հետևողական ներքին ու արտաքին քաղաքականություն, երբ «կպայթի հղորապես կազմակերպված, տիրականորեն վարակված, ահեղ ապստամբությունը»[2]։

Ամերիկահայ վերակազմյալները համաձայն չէին այն մըտքին, թե ռուսական հաղթական հեղափոխությունը կարող է աղատություն բերել նաև արևմտահայությանը։ Նրանց օրգանը դրում էր. «Ռուսիա կրնա աշխարհիս ամենեն ազատական-ռամկավարական պետությունը դառնալ, առանց անպայմանորեն ճանապարհ բացելու Տաճկահայաստանի ազատագրությանը»[3]։ Ցարիզմը կարող է գոյատևել դեռ կես դար, գուցե և ավելի։ Բայց այդ ժամանակամիջոցում «տաճկահայությունը կրնա հիշատակ մը մնացած ըլլալ լոկ պատմության էջերուն մեջ։ Ուստի առնվազն տարօրինակ պիտի ըլլա, որ մենք առանք հեռավոր ու խնդրական հույսերով, մեր բախտը կապենք ռուս հեղափոխական արկածին, և մեր այնքան սուղ ուժերուն լավագույն ու մեծագույն մասը տրամադրենք այդ ուղղությամբ»[4]։

Անդրադառնալով սոցիալիզմին, ամերիկահայ վերակազմյալները մերժում էին այն, գտնելով, որ «1. Սոցիալիզմը որևէ բնական կապ ու առնչություն չունի տաճկահայ դատին և զայն շրջապատող ներկա իրականության հետ, և հետևաբար, ավելորդ, անիմաստ և անհարկի է անոր մեջ իր մխումը։ 2. Սոցիալիզմը տաճկահայ դատին խառնելով՝ անոր անմիջական օգուտ

1 «Ազգ», 1908, մայիսի 9։
2 Տե՛ս նույն տեղը, հունիսի 6։
3 Նույն տեղը, 1907, օգոստոսի 10։
4 Նույն տեղը։

մը չի բերելով զատ՝ կրնա մեծապես վնասակար ալ ըլլալ անոր», քանզի արևմտահայ իրականության մեջ «սոցիալիստ գործունեության համար հող չի կա տակավին, և հետևաբար, առնվազն անտեղի ու վաղաժամ է տաճկահայ դատը այժմեն խճողել սոցիալիզմով»[1]։

«Ազգը» անդրադառնում է վերակազմյալ հնչակյանների պատմությանը և նշում, որ անջատվելով հներից, նրանք ուզեցին իրենց ձեռքը վերցնել հայկական դատը։ Այդ նպատակով համախմբվեցին Արփ. Արփիարյանի շուրջը։ Բայց սա ոչ միայն չպաշտպանեց ու առաջ չտարավ վերակազմյալների ձեռնարկումը, այլև վիժեցրեց այն։ Եվ դա պատահական չէ. «Արփիարյանը ինքը չէր հավատար հեղափոխությանը»[2]։ Նա հեղափոխական գործը վեր է ածել հրատարակչական ընկերության։ Դրանով նա իրենից վանեց կուսակցության կարող ուժերին և մնաց մենակ։ Սկիզբ առան թայֆայական կռիվներ։ 1901 թ. Ա. Արփիարյանը հեռացավ վերակազմյալ հնչակյանների շարքերից, հեռացան նաև ուրիշ մարդիկ։ «Ազգը» դա համարում է ոչ թե կուսակցության պառակտում, այլ «հնչակեանության վերջնական մաքրագործում», դա ոչ թե թուլացնում, կազմալուծում է, այլ «կը սրտապնդե մեզ... անսահման հավատք մը կը ներշնչե մեզի վաղվան վերակազմյալ ճիգին ապահովության ու արդյունավորության մասին»[3]։

Այդպիսով, վերակազմյալները թեև խոսում էին համազգային հեղափոխության կամ ապստամբության մասին, բայց ըստ էության հեղափոխականներ չէին, այլ ռեֆորմատորներ, բուրժուական բարենորոգումների քարոզիչներ, որովհետև պահանջում էին Արևմտյան Հայաստանի ինքնավարություն Թուրքիայի սահմաններում՝ եվրոպական վերահսկումով։ Նրանք չունեին ազգրարային ծրագիր, չէին խոսում Արևմտյան Հայաստանում հողային բարդ ու կնճռոտ հարցի լուծման մասին։ Նրանք սքողում էին արևմտահայության դասակարգային բաժանումն ու դասակարգային ներհակությունները, աշխատում էին ներկայացնել այն որպես միատարր ամբողջություն։

1 «Ազգ», 1908, հունիսի 27։
2 Նույն տեղը, 1907, հուլիսի 6։
3 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 27։

* * *

Հին հնչակյանները կամ Նազարբեկյանները կուսակցության պառակտումից հետո, 1896 թ. սեպտեմբերի 28-ին Լոնդոնում հավաքվեցին համագումարի և ընտրեցին իրենց կենտրոնը, որի մեջ մտան Ավետիս և Մարո Նազարբեկյանները, Ղազարոս Աղայանը, Համայակ Խուշպուլյանը, Երվանդ Պալյանը, Ատրպետը (Սարդիս Մուբայաջյանը) և ուրիշներ։ Նրանք դատապարտեցին վերակազմյալ պառակտողական գործունեությունը և վտարեցին կուսակցությունից։

1897 թ. հին հնչակյանները վերահրատարակեցին իրենց 1887 թ. ծրագիրը, ընդարձակ մեկնաբանություններով ու բացատրություններով։ Նրանք վերստին պնդում էին իրենց նախկին դրույթները, նշում, որ միայն դրանց կենսագործումով կարելի է ազատագրել արևմտահայությունը։ Նազարբեկյանները ցույց էին տալիս, որ կապիտալիստական հարաբերությունները Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում գնալով զարգանում են, սոցիալական շերտավորումը խորանում է թե՛ քաղաքում և թե՛ գյուղում։ Այդ դրությունից դուրս գալու համար պետք է կատարել հեղափոխություն և կառուցել սոցիալիզմ։

Նրանք հարկ էին համարում վերստին նշել, որ Հայկական հարցի լուծումը «Թուրքահայերի քաղաքական ու ազգային զատումն է Թուրքիայից, նրանց ազգային անկախությունն է»[1], որ այդ նպատակին կարելի է հասնել միայն հեղափոխության կամ ապստամբության միջոցով, որը «պետք է լինի ընդհանուր ժողովրդային՝ այն ամեն կետերում, ուր ժողովուրդը ընդունակ ու կարող է ապստամբվել»[2]։

Արևմտյան Հայաստանում անհրաժեշտ է ստեղծել ապրատամբական գնդեր և դնել դրանք մի ընդհանուր ղեկավարության տակ։ Միաժամանակ նշում էին, որ պետք է հրաժարվել գործնականում իրենց չարդարացրած խմբակային կամ ցուցադրական ելույթներից[3]։ Վերահրատարակված ծրագրի վերջում Նազարբեկյանները դրել էին մի «Հավելված», ուր լուսաբանում էին «ազգասիրություն» և «հայրենասիրություն» հասկացությունները, պատասխանում էին իրենց քաղաքական հակառակորդներին[1]։

Հին հնչակյաններն իրենց այդ և այլ գաղափարները շարունակեցին պրոպագանդել կուսակցության օրգան «Հնչակ» թերթում։ 1897 թ. հոկտեմբերին, օրինակ, այն գրում էր. «Ամեն տեսակ մանր ցույցեր, ամեն տեսակ բռնկումներ, ամեն տեսակ մասնակի շարժումներ կապացուցեն դրանց հեղինակների ցուցամոլությունը, կամ թեթևամիտ վերաբերմունքը դեպի ազգային փրկության գործը, և վերջին հաշվով պատճառ կլինեն հեղափոխականների պարտության և թշնամու ավելի ու ավելի հաջողության։ ... Թող հեղափոխական բոլոր աղնիվ կամքերը և անկեղծ մտքերը իմանան, որ հեղափոխականներիս առաջ այսուհետև միայն մեկ ուղի կա, առանց շեղումների, առանց ուժերի մասնակի սպառումների— ապստամբություն, որ պետք է կատարվի առավել կամ նվազ ընդարձակ ծավալով, ներքին և մանավանդ արտաքին քաղաքական դրության որոշ բարեհաջող ժամանակին»[2]։

Հատկանշական է, որ հնչակյաններն իրենց գործնեության մեջ այդպիսի փոփոխություն մտցնելը հիմնավորում էին ոչ այնքան իմքնակային կռիվների անարդյունավետությամբ ու վնասակարությամբ, որքան եվրոպական պետությունների արտաքին քաղաքականության փոփոխումով։ «Հնչակյան կուսակցությունը,— կարդում ենք մի վավերագրում,— ի նկատի ունենալով պետությունների արևելյան նոր քաղաքականությունը (իսկ թե ո՞րն էր այդ քաղաքականությունը, չէր նշվում— Ա. Հ.), 1896-ին որոշեց մի անգամ ընդմիշտ վերջ տալ մասնակի ցույցերուն և պատրաստվիլ ընդհանուր ապստամբության»[3]։

Ռուսաստանում և Անդրկովկասում ծավալվող հեղափոխական շարժումների ազդեցության տակ հնչակյանները որոշեցին ընդլայնել իրենց գործունեությունը, դրազվելով ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ խնդիրներով։ 1903 թ. Բուլղարիայի Ռուշչուկ քաղաքում Ա. Նազարբեկյանի գլխավորությամբ հրատարակած իրենց «Վերածնություն» շարաթաթերթում նրանք հայ-

1 Տե՛ս Սրագիր հնչակյան կուսակցության, երրորդ հրատարակություն հանդերձ մեկնություններով, Լոնդոն, 1897, էջ 45։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 59։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 60։

1 Տե՛ս Սրագիր հնչակյան կուսակցության...։

2 «Հնչակ», 1897, № 10, էջ 75։

3 Հուշարձան նվիրված սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության քառասնամյակին, Փարիզ, 1930, էջ 17։

մից խաղաղասիրական ճառեր արտասանել աննպատակ կազմակերպվող կոնգրեսներում և կոնֆերանսներում, իսկ մյուս կողմից ջանք չխնայեց լուռ ու մունջ ուժեղացնել միլիտարիզմը, սպառազինվել, քառապատկել զորքերի թիվը։ Մի կողմից Եվրոպան մարդասիրաբար ձեռք մեկնեց ճնշվող տարրերին, ռեֆորմներ ծրագրեց անզեն խողխողվող ազգերի համար, իսկ մյուս կողմից աննկատելի ճարպիկությամբ շարունակեց իր քաղցրալիր բարեկամությունը աշխարհի ամենամեծ բռնակալի (իմա՝ Աբդուլ Համիդի— Ա. Հ.) հետ...»[1]։ Թերթն ապա եզրափակում էր՝ քանի դեռ Եվրոպան օգուտներ է ստանում Թուրքիայից, չի ստիպի սուլթանին իրագործելու հայկական բարենորոգումները։

Հնչակյանների Նազարբեկյան թևը ելնելով այն բանից, որ համարյա բոլոր սկզբունքային հարցերում իրենք համամիտ են Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ծրագրին, 1904 թ. դիմեցին նրա կենտկոմին, ցանկություն հայտնելով միանալ ՌՍԴԲԿ-ին։ Նրանց դիմումը քննության առնվեց նույն թվի հունիսի 13-ին (մայիսի 31-ին) ՌՍԴԲԿ խորհրդի նիստում, ուր ներկա էր նաև Վ. Ի. Լենինը։ Միաձայն ընդունվեց հետևյալ բանաձևը. «Խորհուրդը հանձնարարում է կենտկոմին համաձայնության գալ կուսակցության Կովկասյան միության հետ, իր կազմում ընդունելու «հնչակյանների» այն կազմակերպություններին, որոնք ցանկանում են մտնել կուսակցության մեջ։ Դրա հետ միասին խորհուրդը հանձնարարում է կենտկոմին առաջարկել Կովկասյան միությանը իր ձեռքը վերցնել, երբ «հնչակյան» կազմակերպությունն այդ առաջարկի, Բուլղարիայում հրատարակվող նրա օրգանը»[2]։

Չնայած դրան, Նազարբեկյանների միավորման ջանքերը ՌՍԴԲԿ-ի հետ ձգձգվում էին։ Պատճառը մի կողմից հնչակյան կենտկոմի առարկումն էր, մյուս կողմից՝ ՌՍԴԲԿ-ի պառակտումը բոլշևիկյան ու մենշևիկյան թևերի։ Երբ Նազարբեկը դիմեց մենշևիկների պարագլուխ Մարտովին ՌՍԴԲԿ-ի հետ միավորման մասին, Մարտովը խորհուրդ տվեց. «առայժմ չմիանալ ոչ մի կուսակցության, այլ ընդունելով ռուսաց սոցիալ-դեմո-

1 «Վերածնություն», 1903, № 6։
2 Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 479։

տարածում էին, որ նոր գործունեությամբ մեր «ծրագիրը փոխած չենք լինում»։ «Նոր դրությունները առաջ են բերել նոր պահանջներ և այդ նոր պահանջներին դիտակցող հեղափոխականը պետք է նույնպես փոխե յուր գործունեության եղանակը համապատասխան այդ պահանջներին»[1]։

Պատասխանելով այն հարցին, թե կովկասահայերը, մասնակցելով ռուսական հեղափոխական շարժումներին, կթուլացնեն Թուրքիայում հայկական ազատագրական ելույթները, շաբաթաթերթը գրում էր, որ հնչակյանները նախ՝ անկարող են նրանց հետ պահել այդ շարժումներից[2], երկրորդ՝ նրանց հակացարական, հեղափոխական շարժումները ոչ միայն չեն թուլացնի, այլև կուժեղացնեն արևմտահայ ազատագրական ելույթները և ավելի նպաստավոր պայմաններ կստեղծեն հաղթանակի համար, քանի որ հայակեր թուրքական սուլթանի մեջքին կանգնած է հայատյաց ռուսական ցարը, որի տապալումով կհեշտանա արևմտահայության ազատագրության գործը։ Կովկասահայերը մենակ չեն պայքարում ինքնակալության դեմ, նրանք հանդես են գալիս Ռուսաստանի ժողովուրդների հետ միասին։ Այդ ժողովուրդների լայնածավալ և հուժկու ելույթները «սկսել են մղրկահույզ ալիքներով զարնվել ռուսական բռնակալության արդեն խախուտ պատնեշներին և սրանք, անտարակույս, դատապարտված են իրանց վերջնական խորտակմանն։ Այդ խորտակումը կը լինի նաև լուծումը Թյուրքահայ դատի»[3]։

«Վերածնությունը» սուր քննադատության էր ենթարկում իմպերիալիստական տերությունների երկերեսանի ու շահամոլ քաղաքականությունը։ Խոսքով հանդես գալով ճնշված, հատկապես փոքր ժողովուրդների շահերի պաշտպանության դիրքերից, գործով նրանք համագործակցում էին բռնակալների հետ և ավելի ամրապնդում նրանց տերության շղթաները, հալածանքներն ու կեղեքումները։ Վերհիշելով Հայկական հարցի առաջացման պատմությունը և անդրադառնալով հայկական կոտորածներին, պարբերականը «25 տարի առաջ և այժմ» հոդվածում գրում էր. «Ցինիկ Եվրոպան սիրեց ամբողջ տասնյակ տարիներ մի կող-

1 «Վերածնություն», 1903, № 24։
2 Տե՛ս նույն տեղը, 1903, № 9։
3 Տե՛ս նույն տեղը։

կրատական բանվորական կուսակցության ծրագիրն ամբողջությամբ, մնալ ինքնուրույն, սպասելով, մինչև որ բոլշևիկների ու մենշևիկների միջև ծագած տարաձայնությունները հարթվեին»[1]։

Այդ սպասողական ու անորոշ վիճակը ավելի էր ուժեղացնում հնչակյանների միջև եղած խմորումներն ու տարաձայնությունները։ Դրությունից դուրս գալու համար 1905 թ. սեպտեմբերին Փարիզում Ա. Նազարբեկյանի ու Խանազատի ջանքերով հրավիրվեց հնչակյանների 5-րդ համագումարը։ Պատգամավորները չէին, որ կուսակցությունը պետք է բաժանել երկու մասի, իրենց ուրույն ծրագրերով. դրանցից մեկը պետք է լիներ զուտ սոցիալ-դեմոկրատական և գործի միայն Կովկասում, իսկ մյուսը՝ ազգային և գործի Թուրքիայում։ Այս պատգամավորներն առաջարկում էին, որ հնչակյան կուսակցությունները «ունենալու են իրենց հատուկ կենտրոնները և օրգանները, գործելու են միմյանցից անկախ և ինքնուրույն եղանակներով, պահպանելով իրար մեջ միմիայն նյութական փոխադարձ օժանդակության կապ»[2]։

Պատգամավորների մյուս մասը գտնում էր, որ հնչակյանները պետք է զբաղվեն միայն արևմտահայ դատով, գործեն Թուրքիայում և չխառնվեն Ռուսաստանի ու Կովկասի հեղափոխական շարժումներին։ Նրանք, ովքեր ցանկանում են մասնակցել ռուսական հեղափոխական շարժումներին, թող հեռանան հնչակյան կուսակցությունից և միանան ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությանը։

Համագումարը որոշեց, որ հնչակյանները այսուհետ գործեն իբրև ինքնուրույն ու միասնական կուսակցություն՝ մի ընդհանուր կենտրոնով և «Հնչակ» պաշտոնական օրգանով, որ կուսակցությունը ծավալի «Կովկասի մեջ միջազգային հեղափոխական գործունեություն, իսկ Թուրքահայաստանի մեջ քաղաքական դեմոկրատիայի համար պայքար՝ հիմնված մարքսիստական սկզբունքներով»[3]։

Համագումարը, այնուհետև, ընտրեց ընդհանուր կենտրոնական վարչություն՝ բաղկացած Արամ Աչըքպաշյանից, Մուրատից

1 *Հիսունամյակ (1887—1937) սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության, հ. Ա, Փրովիտենս, 1938, էջ 203։*

2 *Տե՛ս նույն տեղը։*

3 *Տե՛ս նույն տեղը։*

(որը աքսորում լինելու պատճառով ընտրվեց հեռակա կարգով), Մամիկոնյանից և Ս. Սապահ-Գյուլյանից։ «Հնչակի» խմբագիր հաստատվեց Ս. Սապահ-Գյուլյանը։

Հնչակյանների այս նոր դիրքորոշումը նրանց հակառակորդները համարեցին դուալիստական, գտնելով, որ այժմ նրանք Կովկասում սոցիալ-դեմոկրատներ են, իսկ Արևմտյան Հայաստանում՝ նացիոնալիստներ, որ նրանք չեն կարող գործել տարբեր ծրագրերով, ուստի պիտի ընդունեն իրենց կազմալուծումը։

Պատասխանելով այդ հակառակորդներին, Ս. Սապահ-Գյուլյանը նշում էր, որ հնչակյանների որոշման մեջ դուալիզմ կամ հակասություն չկա, որովհետև երկու դեպքում էլ նրանք սոցիալիստներ են, պաշտպանում են ոչ թե մասնավոր, այլ հանրային սեփականությունը, պայքարում են ազգայնականության դեմ, ոչ թե սքողում են դասակարգերի առկայությունը, այլ բացահայտում են այն, ոչ թե պաշտպանում են մի դասակարգի գերիշխանությունը մյուսի հանդեպ, այլ պահանջում են անհավասարության ու անարդարության վերացում՝ հեղափոխական պայքարի միջոցով։ Եվ ապա՝ իրենք, ինչպես և այլ երկրների սոցիալ-դեմոկրատները, արևմտահայության ազատագրումը տեսնում են Թուրքական բռնապետության տապալման մեջ, մի խոսքով՝ «մեր ծրագրի մեջ պաշտպանված հիմնական սկզբունքները նույնն են, ինչ բոլոր ազգերի մեջ գործող սոցիալ-դեմոկրատներինը»[1]։

Որքան էլ Ս. Սապահ-Գյուլյանը փորձում էր հիմնավորել իր թեզերը, այնուամենայնիվ համագումարի նոր կուրսը վերացական էր։

Շուտով Ա. Նազարբեկյանը, Ռ. Խանազատը, Գ. Վարդանյանը և ուրիշներ բողոքեցին համագումարի որոշման դեմ և հայտարարեցին, որ այսուհետև «մենք անկարող ենք համարում գործել հնչակյան կուսակցության շարքերում, ուստի և հրաժարվում ենք այդ կուսակցության անդամակցությունից»[2]։

Հեռանալով կուսակցությունից, Ա. Նազարբեկյանը, Ռ. Խանազատը և Գ. Վարդանյանը մնացին անկուսակցական, իսկ մյուս հնչակյաններից շատերը միացան Ռուսաստանի սոցիալ-

1 *«Հնչակ», 1907, № 2, էջ 16։*

2 *«Նորք», պիրք 2-րդ, 1922, էջ 313, տե՛ս նաև Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 484։*

դեմոկրատական բանվորական կուսակցության։ Այդպես վարվեցին, օրինակ, 1905 թ. նոյեմբերի 16-ին հնչակյանների Բաքվի, դեկտեմբերի 18-ին՝ Երևանի կոմիտեները և այլն։ Նրանց այդ կողմնորոշմանը նպաստեցին Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ս. Սպանդարյանը, Ա. Ջափարիձեն, Ա. Մռավյանը և ուրիշներ[1]։ Ստ. Շահումյանը այդ հնչակյաններին համարում էր «մեր բարեկամները», «մեր ընկերները» և գտնում էր, որ դրանց պետք է անջատել իրենց կուսակցությունից, տանել դեպի «կազմակերպական լիակատար միաձուլում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության հետ»[2], իսկ նրբ Բաքվի հնչակյան կոմիտեն հայտարարեց, որ ինքը անվերապահորեն միանում է ՌՍԴԲԿ-ին, Ստ. Շահումյանը գրեց. «Մենք հույս ունենք, որ Բաքվի կազմակերպության օրինակին կհետևեն «Հնչակի» որոշ այլ կազմակերպություններ ևս»[3]։

Պ. Ա. Ջափարիձեն նույնպես բարձր էր գնահատում այն հնչակյաններին, որոնք միանում էին ՌՍԴԲԿ-ին և համալրում նրա շարքերը։ Նա գրում էր, որ հնչակյանների այդ թևը «ընդունել է մեր ծրագիրը և իր աշխատանքը համաձայնեցնում է մերի հետ... հնչակյանների հետ մենք համաձայնություններ ունեցել ենք և այսուհետև էլ անհրաժեշտ է նրանց հետ համաձայնությունների մեջ մտնել»[4]։

Կովկասի հնչակյանները 1907—1908 թթ. Թիֆլիսում հրատարակեցին «Ապագա» օրաթերթը՝ Արզար Տեր-Աբրահամյանի ու Ատրպետի խմբագրությամբ։ Եթե «Հնչակում» նրանք նյութեր էին հրապարակում գերազանցապես Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի, արևմտահայ կյանքի, ապա այդ թերթում՝ Ռուսաստանի ու Կովկասի, արևելահայ կյանքի վերաբերյալ։

«Ապագան» չէր նշում, թե ով է ղեկավարելու Թուրքիայում հեղափոխական շարժումները։ Համենայն դեպս, հեռու էր այն մտքից, թե դրանք կարող են ղեկավարել երիտթուրքերը և, համամիտ լինելով «Հնչակին», արտատպում էր նրա կարծիքը երիտթուրքերի մասին, այն է՝ երիտթուրքերը չեն ձևավորված

1 Տե՛ս Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 486։

2 Տե՛ս Ստ. Շահումյան, երկ, հ. 1, էջ 60—61։

3 Նույն տեղը, էջ 117։

4 Պ. Ա. Ջափարիձե, Ընտիր հոդվածներ, ճառեր և նամակներ, Եր., 1970, էջ 25—26։

իրրև քաղաքական կուսակցություն, օտար են ժողովրդին, ոչինչ չեն արել նրա համար։ «Երիտասարդ Թուրքիան» եղավ անվանական, խորթ, օտար թուրք կյանքին, մանավանդ ժողովրդական զանգվածներին, մինչև այսօր»։ Երիտթուրքերը ուզում էին խեղդել ժողովուրդների բողոքի ձայնը, ձուլել նրանց բոլորին, թուրքացնել։ «Այս է եղել սկզբնական ղեկավարիչ գաղափարը «երիտասարդ Թուրքիայի» հեղինակների»[1]։

Ստ. Շահումյանը 1905 թ. փետրվարի 21-ին գրում էր, որ «Ապագան» հնչակյանների օրգանն է և նպատակ ունի պրոպագանդել սոցիալ-դեմոկրատական գաղափարներ կովկասահայ բանվորների մեջ։ «Մենք ողջունում ենք «Ապագայի» Երևան գալը, որը բանվորական շարժման մի նոր հաղթանակն ու նոր նվաճումն է Կովկասում, և հաջողություն ենք ցանկանում նրան նշված խնդիրների ամենաարագ իրագործման մեջ»[2]։

Արտասահմանի հնչակյանները, Ս. Սապահ-Գյուլյանի և այլոց ղեկավարությամբ, շարունակեցին պրոպագանդել իրենց գաղափարները «Հնչակում»։ Նրանք քարոզում էին, որ սոցիալիստական հեղափոխությունը առաջանալու է կապիտալիզմի զարգացման հետևանքով, իսկ այդ ֆորմացիան առաջադիմում է ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Թուրքիայում։ 1907 թ. թերթը գրում էր. «... այն խաբուսիկ երևույթը, որ ծխնելույզի ծուխը Թուրքիայի մեջ չի բարձրանում, այլ Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի մեջ, այստեղից եզրակացնել, թե ուրեմն, Թուրքիայում կապիտալիզմի հետք չկա— դա իրականության հակառակ է»[3]։

Չափազանցելով իրականությունը, Ս. Սապահ-Գյուլյանը նույնիսկ գրում է. «Թուրքիան այնքան մի կապիտալիստական երկիր է, որքան Ռուսաստանը, որքան կապիտալիստական մի ուրիշ երկիր»[4] Այնուհետև նա նշում էր, որ հայ արհեստավորները թեպետև դեռ ունեն արտադրության գործիքներ, բայց արդեն «պրոլետարացած են այս բառի իսկական նշանակությամբ»[5]։ Պրոլետարացած է նաև հայ գյուղը, որի հետևանքով առաջացել է մարաբանների բազմություն։

1 «Ապագա», 1907, № 19։

2 Ստ. Շահումյան, երկ, հ. 1, էջ 61։

3 «Հնչակ», 1907, № 9—10, էջ 122։

4 Նույն տեղը, № 1, էջ 7։

5 Տե՛ս նույն տեղը։

Հնչակյանները գտնում էին, որ արևմտահայ հասարակության մեջ հեղափոխություն կատարողները, բռնապետության դեմ ապստամբվողները կարող են լինել միայն պրոլետարները և հակաբեական էին համարում այն պահանջը, որ բուրժուական դեսպոտիզմի դեմ անհրաժեշտ է ոտքի հանել հասարակական բոլոր խավերին։ Ս. Սապահ-Գյուլյանը գրում էր, որ հեղափոխության համար պետք է «կազմակերպել այն տարրերին, որոնք որ պատմականապես ընդունակ և կարող են այդ անելու։ Իսկ այդպիսի ուժը «աշխատավոր, պրոլետար դասակարգն է, անհատ բուրժուաները պոչ են, հաճախ իրենց կամքին հակառակ»[1]։

Հնչակյաններն անհնարին էին համարում Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի ճնշված ժողովուրդների համագործակցությունը նրանց ազատագրության համար և իրենց այդ թեզը հիմնավորում էին ոչ հեռավոր անցյալի փաստերով։ Նրանք նշում էին, որ 1895—1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ դիմել են երիտթուրքերի պարագլուխներին, առաջարկելով Կ. Պոլսում համատեղ ուժերով կազմակերպելու հակակառավարական ցույց, բայց մերժում են ստացել։ Ապա պահանջել են նրանցից՝ մտցնել իրենց ծրագրում Թուրքիայի ժողովուրդների համար Ավստրո-Հունգարիայի հասարակարգի նման մի կետ, բայց երիտթուրքերը, հավատարիմ մնալով Միջազգային սահմանադրությանը, նորից են մերժել։ 1906 թ. հնչակյաններն առաջարկել են երիտթուրքերին ճանաչել Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը Թուրքիայի կազմում։ Բայց նրանք այդ էլ չեն ընդունել[2]։

Հնչակյանները XIX դ. վերջին որոշ փորձեր են կատարել նաև քրդերի հետ համագործակցության ուղղությամբ, որոնք, սակայն, նույնպես ապարդյուն են անցել։ XX դ. սկզբին Ս. Սապահ-Գյուլյանն արդեն գրում էր, որ իրենք վաղուց են ուշադրություն դարձրել համագործակցության հարցին, բայց «տեսել են, որ դա գործնականապես անկարելիության սահմանի մեջ է», որովհետև քուրդ գյուղացին, գտնվելով իր ագայի ազդեցության տակ, չի կարող ըմբռնել հայերի հետ դաշնակցելու գաղափարը։ «Քրդից չի կարելի այսօր պահանջել այն՝ ինչ որ իրոք նա չունի։ Հետու այդ ինգից»[1]։

Հնչակյանների տեսաբանը գալիս է այն եզրակացության, որ անիմաստ են նաև հարևան մահմեդականների հետ համագործակցության փորձերը. «Մենք նրանց հետ որևէ գործ ունենալ չենք կարող, ժամանակն այլևս անցած է հասկացողության գալու։ Մեր ճակատագիրը, մեր բախտը նրանցից պիտի բաժանենք վճռականապես, առանց տատանվելու»[2]։

Հնչակյանները Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի ճնշված ժողովուրդների համագործակցության անհնարինությունը բացատրում էին նրանով, որ այդ ժողովուրդները գտնվում են հասարակական-քաղաքական զարգացման տարբեր աստիճանի վրա և որպես այդպիսին ունեն տարբեր նպատակներ։ Սակայն հնչակյանները մոռանում էին, որ նրանք առանձնահատուկից զատ ունեին նաև ընդհանուր շահեր, որոնք ավելի ուժեղ էին, քան մասնավորը։ Եվ հենց այդ ընդհանուրը պատմական բարենպաստ պայմանների դեպքում կարող էր ավելի որոշիչ լինել, քան մասնավորը։

Ելնելով իրենց այն դրույթներից, որ անհնար է ստեղծել Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի ժողովուրդների համագործակցություն, որ արևմտահայությունն էլ անկարող է սեփական ուժերով թոթափելու բռնակալության լուծը, հնչակյանները արևմտահայության ազատագրումը կապում էին մեծ տերությունների քաղաքականության հետ։ Նրանք գտնում էին, որ արևմտահայերը պետք է զինվեն, մարտական զնդեր ստեղծեն և սպասեն, որ եվրոպական պատերազմի մեջ մտնի Թուրքիայի դեմ։ Ահա այդ պահին նրանք պետք է պարզեն ապստամբության դրոշը, պոկվեն Օսմանյան կայսրությունից և հռչակեն իրենց անկախությունը։

Հնչակյան տեսաբանները հաշվի էին առնում նաև հարցի հակառակ կողմը, այն է՝ եվրոպան կարող է չուզենա Թուրքիայի անդամահատումն ու բզկտումը, կարող է բավարարվել status quo-ով և Թուրքիայի նկատմամբ սահմանած իր կիսագաղութային ռեժիմով։ Այդպիսի դեպքում, նշում էին հնչակ-

1 «Հնչակ», 1907, № 9—10, էջ 122։
2 Տե՛ս նույն տեղը, 1908, № 6—7, էջ 54։

1 Ս. Սապահ-Գյուլյան, Ինքնավար Հայաստան, Գահիրե, էջ 84—85։
2 Նույն տեղը, էջ 86։

յանները, արևմտահայերը պետք է դիմեն համընդհանուր ապստամբության, դրանով խփեն Եվրոպայի շահերին և ստիպեն նրան ղբաղվելու Հայկական հարցով։ 1906 թ. օգոստոսին «Հնչակը» իր առաջնորդողում գրում էր. «Մենք մեր հեղափոխական գործը բոլորովին չենք կարող հարմարեցնել այս ու այն պետության շահին։ Պետք է ստեղծել, առաջ բերել իրողություններ և այդ պետություններն են, որ ստիպված են իրենց շահերի հարմարեցումը փնտրել մերինի մեջ։ Մենք հայ հեղափոխության մահազանգը հնչեցրած կլինենք հենց այն րոպեից, երբ կը մտածենք շարժվիլ այս կամ այն պետության շահերի բնագրանքին և իղձերին համեմատ— դա չի լինի հեղափոխություն, այլ մի արտաքին ուժի գործակալություն»[1]։

Մեկ տարի անց Բերբը շարունակում էր, որ Եվրոպան ստիպված կլինի միջամտել Հայկական հարցին «միայն այն ժամանակ, երբ հայ հեղափոխական ուժը այդ ստիպողականության պայմաններն առաջացնի»։ Իսկ դա չի լինի «բողոքներով, միտինգներով, պրոպագանդայով, լրագրական հոդվածներով»։ «Եվրոպայի շահագրգիռ պետություններին Հայաստան պիտի քաշենք... երկաթյա կարթով, զենքով, հեղափոխական գործունեությամբ»[2]։

Պարբերականում ապա կարդում ենք. «Մենք՝ հնչակյաններս, հայկական դատի լուծման համար որոշել ենք ոչ թե մասնակի ցույցեր, ոչ թե մասնակի կռիվներ և փոքրիկ ընդհարումներ, ոչ թե դիվանագիտական աղերսարկու դիմումներ, այլ ապստամբություն՝ ապստամբություն ընդհանուր, ապստամբություն ժողովրդական, ապստամբություն զանգվածային, ապստամբություն երկարատև, եվրոպական պետության շահերը խորապես խանգարելու և ազատագրված Հայաստանը եվրոպական հավասարակշռության անհրաժեշտ մի աղդակ նկատել տալու պայմանով։ Վատահ մեր տակտիկայի դիտականությանը, վատահ մեր ընդգրկած գործի արդարությանը և նրա հնարավոր գործադրության վրա, մենք այդ ուղեգծով է, որ պիտի ընթանանք»[3]։

Այդպիսով, հնչակյանների ուտոպիստական գաղափարները ի՛րագործվեցին կյանքում։ 1890-ական թվականների հայկական կոտորածներից հետո նրանք պառակտվեցին երկու մասի՝ հին և վերակազմյալների կամ նազարբեկյանների ու արփիարականների։ Նրանց միջև, անշուշտ, դեռ կային ընդհանրություններ, այն է՝ արևմտահայությունը պետք է ազատագրի իրեն թուրքական լծից ապստամբության միջոցով՝ եվրոպական տերությունների օգնությամբ, պետք է հրաժարվի ցուցարարական կամ մասնակի ելույթներից, հարևան ժողովուրդների հետ համագործակցելուց և այլն։

Բայց նրանց միջև կային նաև լուրջ տարբերություններ։ Ի տարբերություն հների, վերակազմյալները արդեն չէին ընդունում արևմտահայության բաժանումը դասակարգերի, պահանջում էին ներազգային ուժերի ոչ թե հակադրում, այլ համախմբում, մերժում էին սոցիալիզմի գաղափարը, հայտարարելով, որ այն հող չունի արևմտահայության մեջ և վնասակար է նրա համար, առաջարկում էին Արևմտյան Հայաստանի ոչ թե անկախություն, այլ ինքնավարություն՝ Թուրքիայի կազմում, դանում էին, որ արևմտահայերի դատը պետք է դեկավարեն իրենք՝ արևմտահայերը, լռում էին արևմտահայության համար առաջնակարգ նշանակություն ունեցող հողային հարցի մասին և այլն։

Դարասկզբին հնչակյանները գնալով ավելի ու ավելի կազմալուծվեցին։ Հին հնչակյանների մի մասը համալրեց բոլշևիկյան կուսակցության շարքերը, արևմտահայության ազատագրման հարցում կանգնելով բոլշևիկյան դիրքերում, իսկ վերակազմյալներն անցան լիբերալ մտավորականության կողմը, արևմտահայության ազատագրման հարցում կանգնելով լիբերալ բուրժուազիայի դիրքերում։

Այնուամենայնիվ հնչակյան կուսակցությունը շարունակում էր հարատևել, նպաստելով հայ ժողովրդի քաղաքական զարթոնքին ու ազգային ինքնագիտակցության զարդացմանը։ Գնահատելով հնչակյանների գործունեությունը, Վ. Ա. Ավետիսյանն իրավամբ գրում է, որ նրանց «կուսակցությունը, նրա շարքերին պատկանող որոշ անհատներ դրական դեր են խաղացել Մարքսի և Էնգելսի առանձին երկերի հայերեն թարգմանության և տարածման, մարքսիզմի մի շարք դրույթների հետ հայ հասարակությանը ծանոթացնելու իմաստով։ Հայ հասարակական մտքի պատմության մեջ Մարքսի դասակարգային պայքարի ան-

[1] «Հնչակ», 1906, № 8, էջ 75։
[2] Նույն տեղը, 1907, № 8, էջ 92։
[3] Նույն տեղը, էջ 94։

ության, հատկապես պրոլետարիատի պատմական դերի արժարժումը նորություն էր»։ Այդ ժամանակվա պայմաններում, նա «շարժում էր հասարակական միտքը, նրա ուշադրությունն էր բևեռում մարքսիստական թեորիայի վրա, զարկ էր տալիս այդ տեսությունը հայ իրականության ու պատմության նկատմամբ կիրառելու փորձերին»[1]։

XX դ. սկզբին հնչակյանների մի մասը նպաստում էր բոլշևիկների գործունեությանը, տարածում էր բնակչության մեջ նրանց գրականությունը, պրոպագանդում գաղափարները։ 1904 թ. Սա. Շահումյանը գրում էր. «Հնչակի» մի քանի կազմակերպություններ համակրանք են տածում դեպի մեզ, սոցիալ-դեմոկրատներս, և տեղ-տեղ, ուր նրանք չեն վախենում բնակչության մեջ դրանով իրենց վարկը կորցնելուց, տարածում են մեր գրականությունը (մեր թերթիկներն ու բրոշյուրները)»[2]։

Մեր օրերում հնչակյանները, ճիշտ կողմնորոշվելով, պրոպագանդում են Խորհրդային Հայաստանի նվաճումները սփյուռքահայության շրջանում ու արտասահմանում։

«Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը

«Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը առաջացավ Թիֆլիսում 1890 թ. ամռանը՝ զանազան ազգային ազատագրական խմբակների միավորման հետևանքով։ Նրա հիմնադիրները սոցիալական տարբեր խավերից դուրս եկած կովկասահայ մտավորականներ էին՝ մշակականներ (Խ. Մալումյան (Է. Ակնունի), Լ. Սարգսյան), նախկին նարոդնիկներ (Քր. Միքայելյան, Սա. Զորյան (Ռոստոմ), Ս. Զավարյան, Հ. Լոռիս-Մելիքյան), հնչակյաններ (Ռ. Խանազատ, Հ. Մեղավորյան) և ուրիշներ։ Սկզբնական շրջանում նորաստեղծ կուսակցությունը ղեկավարում էր Լ. Սարգսյանը, բայց երբ 1892 թ. դաշնակցությունը Թիֆլիսում կայացած իր անդրանիկ ժողովում ընտրեց նոր վարչություն, կուսակցության ղեկավարությունն անցավ Քր. Միքայելյանի ու Ս. Զավարյանի ձեռքը։ Լ. Սարգսյանը թեև ընտրվեց վարչության կազմում, սակայն հետագայում իր քաղաքական հայացքների պատճառով

1 Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 185։

2 Սա. Շահումյան, երկ, հ. 1, էջ 54։

աստիճանաբար մեկուսացվեց և հեռացվեց ապագործից։ Դաշնակցությունից հեռացան նաև հնչակյանները, քանի որ նրա ծրագրում չկարողացան մտցնել իրենց դրույթները, հատկապես սոցիալիզմի վերաբերյալ կետը[1]։

Դաշնակցությունն իրեն համարում էր համազգային կուսակցություն, հայտարարելով, թե նպատակ ունի իր շուրջը համախմբել ամբողջ հայ ժողովրդին, առանց դասակարգային խտրականության։ Քր. Միքայելյանն առաջարկում էր այնպես մշակել կուսակցության սկզբունքները, որ նրա մեջ համախմբվեն հայ ժողովրդի բոլոր շերտերի ներկայացուցիչները, նշելով, որ նրանք ընդհանուրի գործին կարող են ծառայել տարբեր կերպ. ոմանք գաղափարներով, ոմանք զենքով, իսկ մյուսները փողով[2]։

Դա աշխատավորական զանգվածներին իր հետևից տանելու բուրժուազիայի սովորական ձևերից մեկն էր։ Իրականում դաշնակցությունը դասակարգային կուսակցություն էր, արտահայտում ու պաշտպանում էր բուրժուական որոշակի խավերի շահերը։

Վ. Ի. Լենինը և նրա հայ զինակիցները տարբեր առիթներով անդրադարձել են դաշնակցությանը և ավել նրա դասակարգային բնութագիրը։ Այսպես, բոլշևիկների առաջնորդը 1907 թ. նշում էր, որ դաշնակցությունը «շատ մտիկ է էսէռներին, իսկ «երիտասարդները» նույնիսկ մանում են ս-հ. կուսակցության մեջ»[3]։

Սա. Շահումյանը դաշնակցականներին ու մշակականներին համարում էր հայ բուրժուազիայի հարազատ զավակները։ 1906 թ. նա գրում էր. «Մշակական և դրոշակական—դրանք չնայած իրանց փոխադարձ հայհոյանքներին, միևնույն մեղալի երկու կողմերն են, միևնույն բուրժուազիայի հարազատ զավակները, այն միակ տարբերությամբ թեև, որ նրանց մի մասը սիրահար է քնքուշ ժպիտների, մյուսը՝ բռունցքի ու վառոդի։ 10—15 տարիների ընթացքում «Դրոշակը» եղել է «Մշա-

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 194—199, Մ. Վ. Ազուրմանյան, նշվ.աշխ., էջ 154—158, Խ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 176—180, Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 188—192։

2 Տե՛ս Մ. Վարանդյան, Հայ հեղափոխական դաշնակցության պատմություն, հ. Ա, Փարիզ, 1932, էջ 63—64։

3 Տե՛ս Վ. Ի. Լենին, երկ, հ. 16, էջ 471։

կի» արտասահմանյան հրատարակությունը։ Առանց խանգարելու միմյանց, նրանք ծառայել են միևնույն բուրժուական գործին...»[1]։

Շուրջ 10 տարի անց Ստ. Շահումյանը դաշնակցությունը բնութագրում էր որպես մանր բուրժուական կուսակցություն։ 1917 թ. նոյեմբերի 18-ին իր «Նոր իշխանության կազմակերպումը Կովկասում» հոդվածում գրում էր. «Կովկասը մանրբուրժուական երկիր է։ Մենշևիկները, դաշնակցականները և մյուս մանրբուրժուական կուսակցությունները մեզանում միշտ գերակշռող դեր են խաղացել»[2]։

Դաշնակցությունը լիբերալ ու մանր բուրժուական կուսակցություն է համարել նաև Ալ. Մյասնիկյանը։ 1924 թ. «Կուսակցությունները գաղութահայության մեջ» աշխատությունում նա գրում էր, որ դաշնակցությունը «կազմել է հայկական կապիտալի ձախ թևը։ Դաշնակցությունը դուրս է եկել և եղել է հայ լիբերալիզմի, մշակականության ձախ ֆրակցիան։ Այդ է պատճառը, որ հայ խոշոր կապիտալիստներն իսկ և նրանց պաշտպանները— Մելիքյան, Խատիսյան և այլն,— մտել են դաշնակցության մեջ։ Ճիշտ է, մշակականության և դաշնակցականության միջև պայքար է եղել, բայց նա կրել է ըստ էության բարեկամական բնույթ, որովհետև դա եղել է երկու ֆրակցիաների կռիվ. դրա համար էլ նա ժամանակ առ ժամանակ կրքուտ կերպարանք է ունեցել»[3]։ Այդ նույն աշխատության մեջ Ալ. Մյասնիկյանը նշում էր. «Մենք դաշնակցությունը միշտ էլ հաշվել ենք որոշ իմաստով մանրբուրժուական»[4]։

Հայ լենինյանները դաշնակցությունը համարում էին կովկասահայ բուրժուազիայի կուսակցություն, նրա շահերի լավագույն արտահայտիչ ու պաշտպան[5]։ Նրանք նշում էին, որ կովկասահայ բուրժուազիան «բոլոր ուժերով, նյութապես ու բարոյապես, աջակցում էր այդ կուսակցությանը»[6], տալիս էր միջոց-

1 Ստ. Շահումյան, երկ, հ. 1, էջ 303—304։

2 Նույն տեղը, հ. 4, էջ 41։

3 Ալ. Մարտունի (Ալ. Մյասնիկյան), Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 94։

4 Նույն տեղը։

5 Տե՛ս Ստ. Շահումյան, հ. 1, էջ 369։

6 Տե՛ս նույն տեղը։

ներ՝ նրա «արկածախնդիր քաղաքական ձեռնարկումների համար»[1]։

Հայ հեղափոխական գործիչները վերլուծում էին նաև դաշնակցության սոցիալական կազմը ու ցույց տալիս նրա խայտաբղետությունը։ Ստ. Շահումյանը 1907 թ. փետրվարին իր «Երիտասարդ դաշնակցականների պրոկլամացիան» հոդվածում գրում էր, որ այդ կուսակցությունը կազմված է «խայտաբղետ տարրերից», որ նրանում տեղ են գտել թե բուրժուանացիոնալիստներ, և թե բանվորական հեղափոխական երիտասարդներ[2]։

Ս. Սպանդարյանը նշում էր, որ դաշնակցությունը «ներկայացնում է որպես մի մեխանիկական ագրեգատ, մի անասելի խառնուրդ բուրժուաների և բանվորների, գյուղացիների ու ճորտերի և կալվածատերերի, շահագործողների ու շահագործվողների»[3]։

Խորհրդային պատմաբաններից ոմանք գտնում են, որ դաշնակցությունը իր սոցիալական կազմով «մեծ մասամբ մանրբուրժուական էր»[4], իսկ այլոք նշում են, որ մանրբուրժուական էր ոչ միայն դաշնակցության սոցիալական կազմը, այլև նրա ծրագրային շատ դրույթները, գործունեության ձևերն ու եղանակները, քաղաքական տատանումները, դաշտափարական հեղհեղուկ դեգերումները և այլն[5]։

Դաշնակցությունը իր քաղաքական օրգանում՝ «Դրոշակում», որը սկսեց լույս տեսնել 1890 թ., սկզբում Լ. Սարգսյանի, ապա (1892 թ.) Ստ. Զորյանի, այնուհետև Հ. Դավթյանի, Գ. Խաժա-

1 Ստ. Շահումյան, հ. 3, էջ 49։

2 Տե՛ս նույն տեղը, երկ, հ. 1, էջ 397։

3 Ս. Սպանդարյան, Ընտիր երկեր, եր., 1982, էջ 40։

4 Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, եր., 1976, էջ 194։

5 Լ. Ա. Խուրշուդյանը և Կ. Ս. Խուդավերդյանը հանգամանորեն ուսումնասիրելով Վ. Ի. Լենինի և նրա գործակիցների Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Մ. Ձիակայայի, Ալ. Մյասնիկյանի, Ս. Կասյանի, Ա. Մռավյանի, Ս. Խանոյանի և այլոց դրույթները դաշնակցության մասին, ինչպես նաև այլ նյութեր, հանգել են այն եզրակացության, որ այդ կուսակցությունը իր հիմնադրման առաջին իսկ օրից մինչև 1917 թ. եղել է մանրբուրժուական կուսակցություն։ Տե՛ս Л. А. Хуршудян, К. С. Худавердян. Освещение политики и идеологии партии дашнакцутюн в советской историографии (Великий Октябрь и непролетарские партии. Материалы конфедерации, М., 1982, էջ 242—253)։

կի, Հ. Յուսուֆյանի և Քր. Միքայելյանի խմբագրությամբ՝ նախապես Թիֆլիսում, հետո՝ Ժնևում, հրապարակեց իր մանիֆեստը, որը վերնագրված էր «Մանիֆեստ հայ հեղափոխականների դաշնակցության»։ Այդ մանիֆեստում նշվում էր, որ Օսմանյան բռնապետության լուծը դարեր շարունակ կրող հայը հույս ուներ, թե ազատություն ձեռք կբերի խաղաղ ճանապարհով՝ Եվրոպայի օգնությամբ։ Սակայն Եվրոպան չօգնեց, որի հետևանքով նրա դրությունը գնալով ավելի ու ավելի վատթարացավ։ Այսօր հայոց հարցը թևակոխում է նոր շրջան։ Հայը «համոզվելով, որ օտարի վրա դրած հույսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրավունքները, իր կայքը, պատիվը, ընտանիքը»։ «Այսօր նա վճռել է կամ մեռնել կամ ազատվել»։ Նա այլևս ազատություն չի խնդրում, այլ պահանջում է, «և պահանջում է զենքը ձեռքին»[1]։

«Մանիֆեստում» այնուհետև ազդարարվում էր, որ բոլոր նրանք, ում համար թանկ է հայրենիքն ու ազատությունը, պետք է միավորվեն ու համախմբվեն և կանգնեն նորաստեղծ «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցության դրոշի տակ, որն ուխտել է «մինչև արյան վերջին կաթիլը կրռվել հայրենիքի ազատության համար», ձեռք բերել «Թուրքաց Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատությունը»[2]։ Թե ինչ էր հասկանում կուսակցությունն այդ ազատության տակ, չէր բացատրում։

1891 թ. դաշնակցականները «Դրոշակում» բերելով Կ. Պոլսի պատրիարք Ն. Վարժապետյանի Բեռլինի վեհաժողովին ներկայացրած արևմտահայության դրության բարելավման ծրագիրը, հայտարարում էին. «Մեր այժմյան պահանջների գլխավոր կետերը մնում են մոտավորապես միևնույնը»[3]։ Դա նշանակում է, որ նրանք նահանջում են Արևմտյան Հայաստանի ազատության հռչակման իրենց գաղափարից և ընդունում պատրիարքարանի ծրագիրը, որը նախատեսում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարություն Թուրքիայի կազմում։

Կուսակցությունը կայուն չէր նաև Եվրոպայի աջակցության հարցում. մի կողմից պահանջելով Ն. Վարժապետյանի ծրագրի

1 Տե՛ս «Դրոշակ», 1890, № 1, էջ 2։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը։

իրագործում, որը կարող էր կատարվել միայն տերությունների միջամտությամբ ու հսկողությամբ, մյուս կողմից, մերժում էր նրանց, ովքեր ուզում էին դիվանագիտությամբ բարելավել արևմտահայության դրությունը։ «Մեր նյութապաշտ դարում,— ըրում էր «Դրոշակը»,— դիպլոմատները ղեկավարվում են սեփական շահերով և ավելի ուժեղի իրավունքներով»[1]։

Ապա հայտարարում էր, որ Հայկական հարցի լուծման համար «... միանգամայն անօգուտ և մինչև անգամ վտանգավոր է հույս դնել օտարի վրա և սպասել, թե Թուրքաց կառավարությունը ինքը իր կամքով բարենորոգումներ կշնորհի հայերին։ Յանկացած վիճակը ձեռք բերելու համար մեզ մնում է միայն դիմել այն միջոցին, որին դիմել են մեզանից առաջ միևնույն հանգամանքների մեջ գտնվող ուրիշ մեզ նման քրիստոնյա ազգերը։ Այդ միջոցը ժողովրդական ապստամբությունն է։ Ուրիշ ելք չկա»[2]։

Բայց քիչ անց դաշնակցությունը հրաժարվում է այդ մտքից և առաջ մղում պարտիզանական կամ հայդուկային կռվի եղանակները, հայտարարելով, որ համաժողովրդական ապստամբությունը անհնարին է արևմտահայության համար։ 1891 թ. «Դրոշակի» № 2-ի առաջնորդողում ասվում էր. «Հայ ժողովրդի կռիվը պետք է պարտիզանական կռիվ լինի. մենք մեր այժմյան դրության մեջ ուրիշ կերպ կռվել չենք կարող. կանոնավոր պատերազմ, իսկական ճակատամարտեր անհնարին են մեզ համար։ Այդ է... սովորեցնում մեզ... ուրիշ ազգերի՝ բուլղարների, իտալացիների, հույների պատմական օրինակը...»

Անդրադառնալով այն հարցին, թե ովքեր պետք է կազմակերպեն ու վարեն այդ կռիվները, պարբերականը դնում էր, որ կազմակերպողները կլինեն «հեղափոխական ինտելիգենցիայի ներկայացուցիչները», իսկ վարողները՝ «ժողովրդից դուրս եկած մարտնչող մարդիկ...»[3]։ Նրանց խմբերը կպայքարեն Թուրքական աստիճանավորների, քրդական աղաների ու ավազակների դեմ, հանդես կգան ճնշողների շահերի պաշտպանության դիրքերից, «կելևկտրականացնեն ժողովրդի միտքն ու զգացմունքը, կովի կենդանի օրինակներ կտան ժողովրդին և

1 «Դրոշակ», 1891, № 1, էջ 1։
2 Նույն տեղը, էջ 4։
3 Տե՛ս նույն տեղը, № 2, էջ 2։

այդպես մասամբ գաղափարական կերպով, մասամբ իրականապես կժողովեն իրանց շուրջը և կկազմակերպեն կռվելու փոքր ի շատե ընդունակ բոլոր տարրերը»[1]։

* * *

1892 թ. ամռանը դաշնակցականները կազմեցին իրենց կուսակցության առաջին ծրագիրը և, հաստատելով այն ընդհանուր ժողովում, 1894 թ. օգոստոսին հրապարակեցին «Դրոշակում»[2]։ Ծրագրում, ցույց տալով արևմտահայության տառապանքները, ասվում էր. «Այս բոլորին վերջ կարող է տալ միմիայն բռնի հեղափոխությունը և մենք դիմում ենք նրան։ Պետք է թոթափել այդ խայտառակ լուծը, ոչնչացնել ներկա միապետական բռնակալական ռեժիմը, ձեռք բերել ազգերի համերաշխություն, աշխատանքի ապահովություն, խղճի, խոսքի ու համողմունքի ազատություն»[3]։

Բայց միևնույն ժամանակ «այդ արտաքին բռնակալ լուծը հեռացնելը, ինքնավարություն ստանալը, վերոհիշյալ քաղաքական իրավունքներ ձեռք բերելը մենք մեր նպատակին հասնել դեռ չենք համարում։ Դա միայն գործի մի մասն է»[4]։ Հարկավոր է վերացնել նաև ներքին տնտեսական անհավասարությունը։ Նկատի էր առնվում այն հանգամանքը, որ բնակչության կեղեքում ու հարստահարում են ոչ այնքան սակավաթիվ ձեռնարկատերերը, որքան ստվարաթիվ առևտրականներն ու վաշխառուները։ Ուստի կոչ էր արվում պայքարել դրանց դեմ։

Մի խոսքով, դաշնակցությունը հայտարարում էր, որ իր նպատակն է հանդես գալ արտաքին ու ներքին ճնշողների դեմ

1 Տե՛ս «Դրոշակ», 1891, № 2, էջ 2։

2 Ծրագրի մշակմանը մասնակցեցին Ռոստոմը, Ս. Զավարյանը և Քր. Միքայելյանը։ Գլխավոր աշխատանքը կատարեց Ռոստոմը, դրելով ներածությունն ու հիմնական բովանդակությունը, իսկ Զավարյանն ու Քր. Միքայելյանը կատարեցին լրացումներ, ուղղումներ ու ճշտումներ։ Դաշնակցականները հուշագրում էին, որ իրենց առաջին ծրագիրը «անշուշտ, հավաքական մտածման արդյունք է Ռոստոմի, Քրիստափորի և Զավարյանի ընդհանուր հեղինակությամբ։ Ռոստոմի անունը դրինք առաջին տեղը և այդ աննպատակ չէր. կասկած չկա, որ նրան է պատկանում աշխատանքի գլխավոր բաժինը» (Տիվան Հ. Հ. դաշնակցության, հ. I, Բոստոն, 1934, էջ 88)։

3 «Դրոշակ», 1894, հ. 10, էջ 3։

4 Նույն տեղը։

և «ապստամբության միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական ու տնտեսական ազատություն»[1]։ Քաղաքական ազատություն ասելով հասկանում էր բնակչության կողմից հավասար սկզբունքներով ընտրված ժողովրդական կառավարություն, կյանքի ու աշխատանքի ապահովում, տարբեր ազգությունների ու դավանանքի հավասարություն, խոսքի, մամուլի, ժողովների ազատություն։

Իսկ տնտեսական ազատություն ասելով հասկանում էր գերազանցապես ագրարային մի շարք միջոցառումների անցկացում, այն էր՝ «հող չունեցողին հող տալ և ապահովել մշակողին հողն օգտվելու հնարավորությունը», հարկերն ու տուրքերը բաշխել ըստ ունևորության՝ «համքայական սկզբունքով, որ դարերն ի վեր խոր արմատ ձգած է մեր ժողովրդին մեջ»[2], ոչնչացնել շահագործման ֆեոդալական ձևերը՝ կոռը, բեգարը, անգարիան, օլամը, ինչպես և պինվորական տուրքը (բեդելի ասկերեն, փոխարինելով այս բոլորի համար պարտադիր պինվորական ծառայությամբ։ Միաժամանակ «ուժ տալ գյուղացու արհեստավորի համայնական սկզբունքներուն», զարգացնելով այն ձևերն ու եղանակները, որոնք Հայաստանում հիմնվել ու հարատևել են պատմականորեն։ Համայնքի ամեն մի անդամին ապահովել «բնության ու ընթացիկ կյանքի պատահական հարվածներուն դեմ»[3]։

Միջոցառումներ էին նախատեսվում նաև արդյունաբերության բնագավառում, նշելով, թե պետք է «զարգացնել ժողովրդի արդյունաբերությունը, մտցնելով նրա մեջ նոր ձևեր համայնական սկզբունքներով և լայնացնել արտահանման միջոցները»[4]։

Ծրագիրն անընդունելի էր համարում միջազգային սոցիալ-դեմոկրատական գաղափարների կենսագործումը Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում, գտնելով, որ «Տաճկաստանը չունի բոլորովին գործարանական արդյունաբերություն և խոշոր ինդուստրիայի զարգացում՝ անբնական է այդ տեսակ խնդիրներ յուրացնելը։ Այն երկրում, ուր գերակշռում է երկրագոր-

1 Տե՛ս «Դրոշակ», 1894, № 11, էջ 2։

2 Տե՛ս նույն տեղը։

3 Տե՛ս նույն տեղը։

4 Տե՛ս նույն տեղը։

ծուքյունը և նահապետական կուլտուրան, խոսք չի կարող լինել Արևմտյան Եվրոպայի սոցիալիզմի մասին, ուր կուլտուրան անհամեմատ ավելի բարձր է և տիրապետում են որոշ սոցիալական պայմաններ»[1]։

Սակայն հույս էր ներշնչում, թե սոցիալիզմի գաղափարները կարող են երբևէ տարածում ու իրականացում գտնել նաև Հայաստանում։ Ծրագրում հայտարարվում էր, որ «մենք կաշխատենք ստեղծել համայնական սեփականություններ, համայնական աշխատանքը, որպեսզի ավելի պատրաստ գտնվենք անցնելու այն հասարակական կազմակերպությանը, որն այսօրէգուց կհաստատվի տնտեսապես ավելի զարգացած երկրներում պրոլետարիատի հեղափոխությամբ»[2]։

Ծրագիրը նախատեսում էր նաև բնակչության կուլտուրակրթական գործի մի շարք բարելավումներ, նշելով, որ ուսումը պետք է դարձնել պարտադիր։ Ըստ ծրագրի կուսակցությունը կառուցվում է ապակենտրոնացման սկզբունքներով. ամեն մի տեղական կոմիտե գործում է ինքնուրույն, ելնելով տեղից ու հանգամանքներից, բայց հաշվետու է իր վարքագծի համար կուսակցության ընդհանուր ժողովին, որի որոշումները պարտադիր են բոլորի համար[3]։

Կուսակցության հիմնական օրգանը հռչակվում էր «Դրոշակը»։ Ծրագիրը ուշադրություն էր դարձնում նաև հարևան ժողովուրդների՝ քրդերի, ասորիների, թուրքերի և այլոց հետ համագործակցության հարցին և գտնում, որ եթե հնարավոր է, կարելի է օգտագործել նրանց բռնապետության դեմ, իսկ եթե ոչ՝ պետք է աշխատել «դոնն չեզոքացնել օտար տարրերի ընդդիմադրական ուժը»[4]։

Ինչ վերաբերում է եվրոպական տերությունների օգնության հարցին, ապա ծրագրում ոչինչ չէր ասվում այդ մասին։

Այդպիսով, կուսակցության ծրագիրը կրկնում էր իր «Մանիֆեստի» հիմնական դրույթները, հայտարարելով, որ հեղափոխությամբ պետք է տապալել կառավարությունը, ձեռք բերել քաղաքական ու տնտեսական ազատություն, հասատել ժողովուրդների հավասարություն և այլն։

1 «Դրոշակ», 1891, № 1, էջ 1։
2 Նույն տեղը, 1894, № 10, էջ 2։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 3—4։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 2։

Բայց ծրագիրը միաժամանակ ավելացնում էր, որ հեղափոխության նախապատրաստման համար պետք է պրոպագանդել կուսակցության գաղափարները, կազմակերպել մարտական խմբեր, ստեղծել կոմիտեներ, վարել ահաբեկումներ (տեռոր), բարձրացնել ժողովրդի ապստամբական ոգին։ Իսկ հեղափոխության հաղթանակից հետո անհրաժեշտ է ստեղծել «համայնական սեփականություն», «համայնական աշխատանք», լուծել նաև ազգարային հարցը «համայնական սկզբունքներով» և այլն։ Դրանք բոլորը դաշնակցության երբեմնի նարոդնիկ ղեկավարների հայացքներից բխող նարոդնիկական թեզեր էին։

Կուսակցության ծրագիրը ոչ միայն հանդուրժում էր սոցիալ-դեմոկրատական գաղափարները, այլև հայտարարում էր, որ դրանք երբևէ կիրագործվեն Հայաստանում։ Դրանով դաշնակցականները ժողովրդական զանգվածների մեջ ձեռք էին բերում համակրանք ու հեղինակություն։

Ծրագրում անորոշ էր դրվում ազգային հարցի լուծումը. մի տեղ հայտարարվում էր, թե կուսակցությունը կամենում է ստեղծել Արևմտյան Հայաստանում քաղաքական ու տնտեսական ազատություն։ Կարելի է ենթադրել, թե դրա տակ հասկանում էր անկախություն։ Բայց մի այլ տեղ ակնարկում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարություն։ Անորոշ ու վերացական էր տրվում նաև ագրարային հարցի լուծումը։ Դաշնակցությունը հայտարարում էր, որ «...հողային հարցը մեր ամենազգալի հարցն է»[1], նշելով, թե գյուղացուն պետք է բավարարել հողով, այնուամենայնիվ ծրագրում խոսք չկար ֆեոդալական (պետական, աղայական, վանական) հողատիրության վերացման մասին։ Արդյունքում մնում էր անհասկանալի, թե ում հաշվին կամ ինչ եղանակով պետք էր բավարարել հողազուրկ ու սակավահող գյուղացիներին հողով։

Մի խոսքով՝ դաշնակցության ծրագիրը հատկանշվում էր գաղափարական տատանումներով, սահմանափակվում էր բուրժուական պահանջներով, հեռու էր ազգային ու ազրարային հարցերի արմատական լուծումից։

Երբ համեմատում ենք դաշնակցության այս ծրագիրը պատրիարք Ներսես Վարժապետյանի կանոնագրի հետ, տեսնում

1 «Դրոշակ», 1891, № 1, էջ 1։

ենք, որ երկուսն էլ անհրաժեշտ էին համարում բարեկարգել Արևմտյան Հայաստանի բնակչության վիճակը, ստեղծել անձի և գույքի ապահովություն, վերացնել ազգային ու կրոնական հալածանքները, բարելավել ճանապարհներն ու դպրոցները, նպաստել ժողովուրդների տնտեսական զարգացմանը։ Երկուսն էլ գտնում էին, որ Արևմտյան Հայաստանի կառավարման համար պետք է ստեղծել ընտրովի իշխանություն, հարգելով յուրաքանչյուր ժողովրդի ազգային իրավունքները և այլն։

Սակայն այդ երկու փաստաթղթերի մեջ կային նաև լուրջ տարբերություններ. Ներսես Վարժապետյանի կանոնագիրը արևմտահայության վիճակի բարելավումը հնարավոր էր համարում Թուրքական բռնապետության պայմաններում, դաշնակցության 1892 թ. ծրագիրը գտնում էր, որ այդ բարելավմանը կարելի է հասնել միայն Թուրքական բռնապետության տապալման ճանապարհով։

Պատրիարքի կանոնագիրը չէր խոսում դյուղացիության ֆեոդալական շահագործման վերացման մասին։ Դաշնակցության 1892 թ. ծրագիրը առաջարկում էր վերացնել կոռը, բնդարը, օլամը և այլն։ Ծրագիրը միաժամանակ նախատեսում էր հող տրամադրել կարիքավորներին և ապահովել նրանց այդ հողից օգտվելու պայմաններով։ Ապա հարց էր դնում բեդելի ակերի հարկի վերացման և քրիստոնյաներին զորակոչելու մասին։

Ի տարբերություն Ներսես Վարժապետյանի կանոնագրի, որը Արևմտյան Հայաստանի կառավարման համար նախատեսում էր գեներալ-նահանգապետ և բնակչության կողմից ընտրված ընդհանուր խորհուրդ, դաշնակցության ծրագիրը առաջարկում էր ժողովրդական կառավարության ստեղծում։ Ծրագիրը նշում էր, որ երկրի կառավարման ապարատում պետք է ընտրել թե քրիստոնյաներին, և թե մահմեդականներին։

Ներսես Վարժապետյանի կանոնագիրը գտնում էր, թե ընտրություններին պետք է մասնակցեն միայն սեփականատերերը և հարկատուները, ծրագիրը վերացնում էր այդ սահմանափակումները և հայտարարում, որ բոլորն իրավահավասար են օրենքի առաջ։

Մի խոսքով՝ դաշնակցության ծրագիրն ավելի ձախ էր, քան Ներսես Վարժապետյանի կանոնագիրը։ Բայց այդուհանդերձ,

նրանք երկուսն էլ պարփակվում էին բուրժուական ժամանակի համար առաջադեմ պահանջներով։

* * *

1890-ական թվականների կոտորածների ժամանակ տերությունները մշակեցին արևմտահայության դրության բարելավման վերաբերյալ նախագիծ, որը պատմության մեջ հայտնի դարձավ Մայիսյան բարենորոգումների նախագիծ անունով[1]։

---

1 Այդ նախագիծը մշակվեց Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի Կ. Պոլսի դեսպանների կողմից 1895 թ. գարնանը և մայիսի 11-ին հանձնվեց Բ. Դռանը։ Այդ պատճառով էլ կոչվում է Մայիսյան բարենորոգումների նախագիծ։ Անհրաժեշտ ենք համարում բերել նրա համառոտ բովանդակությունը։ Բարենորոգումները պետք է կենսագործվեն կայսրության արևելյան նահանգներում՝ Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սվազի, Մամուրեթ-ուլ-Ազիզի և Դիարբեքիրի վիլայեթներում։ Վալիները պետք է նշանակվեն սուլթանի կողմից հինգ տարով պետության բարձրաստիճան պաշտոնյաներից, որոնք լինեն բարեկիրթ ու արդարադատ և, հետևաբար, իրենց վարքագծով բնակչության մեջ չառաջացնեն դժգոհություն։ Նրանք պետք է ունենան օգնականներ (մուավին), որոնք, նույնպես նշանակվելով սուլթանի կողմից, տարբեր հանգամանքներում աջակցում են վալիներին։ Կուսակալներին կից պետք է գործեն նաև նահանգական խորհուրդներ՝ խորհրդակցական իրավունքներով՝ «հասարակաց շահերի վերաբերյալ խնդիրների մասին»։

Սանջակները կառավարում են մութեսարիֆները, որոնք նույնպես նշանակվում են սուլթանի կողմից։ Այնտեղ, որտեղ բնակչության մեծամասնությունը կազմում են քրիստոնյաները մութեսարիֆները պետք է նշանակվեն քրիստոնյաներից, իսկ որտեղ նրանք փոքրամասնություն են՝ մահմեդականներից։ Վերջիններիս օգնականները պետք է լինեն քրիստոնյաներ։

Կայմակամները ևս նշանակվում են սուլթանի կողմից, բայց վալիի առաջարկությամբ։ Նրանք պետք է առաջ քաշվեն այնպիսի անձանցից, որոնք վայելում են ազգաբնակչության վստահությունը։ Այնտեղ, որտեղ քրիստոնյաները կազմում են մեծամասնություն, կայմակամները նշանակվում են քրիստոնյաներից, իսկ որտեղ նրանք փոքրամասնություն են, քրիստոնյաները նշանակվում են կայմակամների օգնականներ։

Նախագիծը պահանջում էր, որ քրիստոնյա մութեսարիֆների ու կայմակամների թիվը պակաս չլինի վիլայեթի կայմակամների ու մութեսարիֆների ընդհանուր թվի մեկ երրորդից։

Ինչպես վալիների, այնպես էլ այդ պաշտոնյաներին կից պետք է լինեն խորհուրդներ և կատարեն այն ֆունկցիաները, ինչ՝ վիլայեթներում կազայի խորհուրդն ընտրվում է նահիների խորհուրդների կողմից, սանջակի խոր-

Դաշնակցականները սկզբում բացասաբար ընդունեցին այդ նախագիծը, հայտարարելով, որ տերությունները ոչ թե հայ ժողովրդի, այլ իրենց շահերով էին նրանք նշում, որ տերությունների բարենորոգումները «հալածվող, տանջվող, բռնաբարվող ժողովրդի շահերը պաշտպանե-

---

Հուրդը՝ կազաների խորհրդի կողմից, իսկ նահանգական ընդհանուր խորհուրդը՝ սանջակների խորհուրդների կողմից։ Այդ խորհուրդներից յուրաքանչյուրը պետք է բաղկացած լինի 4-ական մարդուց (չհաշված նրանց նախագահներին, այսինքն՝ վալիներին, մութեսարիֆներին և կայմակամներին)՝ երկուսը մահմեդական և երկուսը քրիստոնյա։

Կազաները բաժանվում են նահիեների, որոնցից յուրաքանչյուրն բնդգրկում է մեկ կամ մի քանի գյուղ՝ 2000—10000 բնակչությամբ։ Նահիեն կառավարվում է բնակչությունից ընտրված մյուդիրի և նրա օգնական խորհրդի կողմից։ Եթե նահիեում գերակշռում է քրիստոնյա բնակչությունը, մյուդիրը պետք է ընտրել քրիստոնյաներից, իսկ օգնականները՝ մահմեդականներից և ընդհակառակը։ Խորհրդի կողմից ընտրված մյուդիրը հաստատվում է վալիի կողմից։ Ընտրվողները պետք է լինեն 30 տարեկանից ոչ պակաս և պետությանը վճարեն առնվազն 100 դուրուշ հարկ։ Մյուդիրն ու խորհրդի անդամները ստանում են ռոճիկ՝ նահիեի բյուջեի հաշվին։

Յուրաքանչյուր գյուղ իր կառավարման համար ունենում է մի մուխթար, բայց եթե այն բաղկացած է երկու գյուղանոքի բնակիչներից՝ երկու մուխթար։

Ոստիկանության պաշտոնյաները նշանակվում են նահիեի բնակչության միջից, առանց կրոնի խտրության և դրվում են մյուդիրի հրամանի տակ։ Նրանք նույնպես ստանում են իրենց ռոճիկը նահիեի բյուջեից։ Քրիստոնյաները ևս կարող են կոչվել ոստիկանական ծառայության և քանի դեռ զբաղեցվում են այդ ծառայության մեջ, կազատվեն բեդելի ասկերի հարկից։

Ժանդարմերիան կատեղծվի ամեն մի նահանգում՝ բնակչության բոլոր շերտերից, առանց ցեղի կամ կրոնի խտրության։ Այն գտնվելու է վիլայեթի զորական մինիստրության իշխանության տակ և պահվելու է վիլայեթի բյուջեի հաշվին։

Վիլայեթների ու սանջակների գլխավոր քաղաքներում վալիները պետք է հաստատեն սկզբնական քննիչ մասնաժողովներ, որոնք կարող են նաև որոշել մեղադրյալի հարցը։ Սակայն բանտերում, եթե ձերբակալվածի հանցանքը դեռ չի ապացուցված, չի կարելի նրան խառնել մեղավորների հետ։ Բանտերում պետք է պահպանվեն առողջապահության տարրական նորմերը։

Յուրաքանչյուր վիլայեթում վալին իր ձեռքի տակ պետք է ունենա մեկ աշխրեթ-մեմուրի, որի միջոցով հսկի ու կառավարի թափառական քրդերին։ Նա կարող է ձերբակալել լարագործներին և հանձնել դատարանին։ Թափառական քրդերը պետք է ունենան որոշակի հողատարածքներ, որ վնաս չհասցնեն նստակյաց բնակիչներին։ Պետք է խրախուսել քոչվորների անցումը նստակենցաղության և հետևել, որ դա լինասի նստակյացներին։

լու համար չեն խմբագրված, այլ պահպանելու այդ երկրում քաղաքական ներկա պայմանները status quo, ինչպես էլ պահանջում էին իրենց պետական շահերը»[1]։ Դիվանագետները աշխատել են որքան հնարավոր է չդիպչել սուլթանական միապետության իրավունքներին, ծանրացել են գերազանցապես կրոնի վրա, «կարծեք թե հայկական խնդրի էությունը կայանում է կրոնի մեջ»[2]։

Բայց հետո դաշնակցականները ոչ միայն ընդունեցին Մալխյան բարենորոգումները, այլև, ինչպես ցույց կտրվի ստորև, սկսեցին պայքարել նրանց իրագործման համար։ Միաժամանակ նրանք հրաժարվեցին տերությունների հանդեպ իրենց բացասական եղրակացություններից և Հայկական հարցի լուծումը վերստին կապեցին նրանց քաղաքականության հետ։ 1896 թ. կուսակցությունը հայտարարում էր, որ առանց դիվանագիտության միջամտության «Հայկական հարցը չի կարող որոշակի ելք ստանալ գործի բուն առպարեզում՝ Տաճկահայաստանում»[3]։

---

1 «Դրոշակ», 1895, №8, էջ 3։

2 Տե՛ս նույն տեղը, № 10, էջ 2։

3 Դիվան Հ. Հ. դաշնակցության, էջ 258։

Համիդին հեծելագնդերը սովորական ժամանակներում չպետք է կրեն ոչ նշանագրեր և ոչ էլ զենք։ Սակայն երբ իշխանություններն անհրաժեշտ են նրանց ուժի հանեն, պետք է կրեն այդ ամենը, գործելով կանոնավոր զորամասերի հետ միասին։

Անհրաժեշտ է ստեղծել նախապահից ու չորս անդամներից (երկուսը մահմեդական, երկուսը քրիստոնյա) բաղկացած հատուկ հանձնաժողով, որ քննի ու պարզի անփականության, հատկապես կալվածագրերի վերաբերյալ հարցերը։

Բոլոր հարկերը պետք է հավաքվեն մյուդիրի իշխանության տակ գտնվող հարկահանների ձեռքով։ Վերացվում են տաճառորդական տուրքի կապալով տալը, ինչպես և տարապարհակները, այդ թվում նաև զինվորներին ու պաշտոնյաներին ձրի կերակրելը։ Հարկահանության ժամանակ պետք է աշխատել, որ ժողովուրդը չկրկնի առաջին կարևորության առարկաներից և այն գործիքներից, որ նա բանեցնում է»։

Նախագիծը անդրադառնում է նաև արդարադատության հարցերին և սահմանում յուրաքանչյուր պաշտոնյայի ֆունկցիաները։ Միաժամանակ նշում էր, որ «ամեն տեսակ դատարանների դատավարությունը պետք է կատարվի բուրքերեն լեզվով» (Նախագծի տեքստը տե՛ս Կոն. Ալո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 213—234, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—

1899—1900 թթ. դաշնակցության առաջնորդներից մեկը՝ Քր. Միքայելյանը, հանդես եկավ «Ամբոխային տրամաբանություն» աշխատությամբ, որի մեջ, ամփոփելով իր կուսակցության անցյալի գործունեությունը, նշում էր նաև ներկայի անելիքները. «Հայկական կյանքը վաղուց եկել կանգ է առել մի խաշոր դիլեմայի առաջ— կամ անպայման ջնջում իբր մի ամբողջություն, իբր մի ազգություն, իբր մի հայրենիքի տեր ժողովուրդ, կամ դիմադրություն, կյանք, պատիվ, ստացվածք, տուն, հայրենիք, ամեն ինչ բռնաբարող ուժի դեմ»[1]։

Քր. Միքայելյանը նրբը տեսնում էր արևմտահայության ընդհանուր ապստամբության մեջ։ Բայց միաժամանակ նշում էր, որ այդ ապստամբությունը կառաջանա ոչ թե հանդիսատ ապատելով կամ իշխանությունների բռնությունները հանդուրժելով, նրանց հարմարվելով, այլ ակտիվ գործողություններով, ցույցեր, արշավանքներ կազմակերպելով, խմբակային կռիվներ վարելով. «Ցույցերը, արշավանքները և հրոսակային խմբերը կազմակերպում են կռվող ուժերը, ժողովրդականացնում են բողոքի ճանապարհները, կրթում են ժամանակակից սերունդը, վառ են պահում ժողովրդի դիմադրական տրամադրությունը, հարվածում են թշնամու հեղինակությանը թե ներսը՝ սեփական հպատակների աչքում, և թե դուրսը՝ օտարների առաջ, վնասում են կառավարչական շահերին, զբաղեցնում են եվրոպական հասարակական կարծիքը և կաբինետները, այսինքն՝ առաջ են մղում միջամտության գործը, առնվազն թույլ չեն տալիս հարցը մոռացության մատնվի թե իբրև միջազգային քաղաքական խնդիր և թե իբրև աշխարհիս բոլոր ծայրերում ցրված հայերիս համար ընդհանուր ազգային դատ»[2]։

Քր. Միքայելյանը մեծ նշանակություն էր տալիս հատկապես սուլթաններին մայրաքաղաքում՝ Կ. Պոլսում կազմակերպած ցույցերին ու կռիվներին, նշելով, որ «մի ատրճանակի պայթում այստեղ ավելի է լսելի աշխարհին, քան տասնյակ հրա-

1923)», Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 130—147)։ Սուլթանը, մասնակի դիտողություններով, ընդունեց այդ նախագիծը և հարմար գտավ կիրառել այն ոչ միայն կայսրության արևելյան նահանգներում, այլ բոլոր նահանգներում։

1 «Դրոշակ», 1899, № 8, էջ 117։

2 Նույն տեղը, 1900, № 2, էջ 17։

ցանների որոտը երկրի խորքում»[1], քանի որ Կ. Պոլսում նրստած օտարերկրյա դեսպանները ականատես կլինեն իրողություններին, կհաղորդեն իրենց տերություններին, որոնք և կոնկրետ միջոցառումներ կձեռնարկեն։

Դաշնակցության ղեկավարը նշում էր, որ չպետք է ընկրճվել անհաջողություններից, չպետք է սարսափել զոհերից, ընդհակառակը, անհրաժեշտ է գործել նոր եռանդով, նոր լիցքով, քանզի ազատագրության հարցը պահանջում է վարել համառ ու տևական կռիվներ։ Նա բերում էր Թուրքական լծից ազատագրված ժողովուրդների օրինակը և նշում, որ Բուլղարիան իր ազատության պայքարը սկսեց 1828 թ., ավարտեց 1878 թ., իսկ հույները սկսեցին 1770 թ., վերջացրեցին 1829 թ.։ Այդպիսի համառ ու տևական կռիվներով իրենց բռնակալներից ազատվեցին նաև սերբերը, կրետացիները, բոսնիացիները, հերցեգովցինները, իռլանդացիները, իտալացիները, կուբացիները և ուրիշներ։ Նրանք բոլորը մեծամեծ կորուստներ տվեցին (միայն Կուբան իր ազատության համար զոհեց 200.000 մարդ)[2]։ Նման բախտ է վիճակված նաև հայերին։ Վախենալ սարսափներից և խուսափել կռիվներից, ազատատենչ պայքարից, նշանակում է ժողովրդին դատապարտել հավերժ ստրկության։

Դաշնակցության ղեկավարը արևմտահայության ազատագրության գործում մեծ նշանակություն էր տալիս տերությունների միջամտությանը։ Նա գրում էր, որ անհրաժեշտ է վարել տևական կռիվներ, ստեղծել հեղափոխական կացություն, «միշտ ունենալով աչքի առաջ երրորդ ազդակի միջամտությունը... Եվրոպական ազդակի»[3] նրա կարծիքով Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում ծագած հայկական կռիվները կամ ելույթները իրենց վրա կհրավիրեն Եվրոպայի ուշադրությունը, կստիպեն նրան միջամտելու Թուրքիայի ներքին գործերին և լուծելու հայկական դատը։ Եվ միայն այն օրը, երբ տերությունները կհամոզվեն, որ հայկական վերքի բուժման համար պետք է դիմել գործնական քայլերի, «մեր դատը ապահովված կլինի։ Այդ օրը կլինի մեր հաջողության օրը»[4]։

Բայց Քր. Միքայելյանի նախագիծը չէր արդարացնում իրեն։

1 «Դրոշակ», 1900, № 2, էջ 18։

2 Նույն տեղը, № 4, էջ 52։

3 Նույն տեղը, № 2, էջ 17։

4 Նույն տեղը, № 4, էջ 52։

Բանն այն է, որ Թուրքիայում արևմտահայության ցրվածության, մահմեդական ոչ բարեկամական զանգվածների հետ շերտընդմեջ ապրելու պայմաններում ցուցարարական կռիվները չէին կարող վերածվել համազգային ապստամբության։ Ընդհակառակը, նրանք ուժի կտային նորանոր աղետների։ Այդ բանը հետագայում ստիպված էր խոստովանվել անգամ դաշնակցության պատմագիր Մ. Վարանդյանը։ Նա գրում էր, թե հայդուկային խմբերի ստեղծումը, նրանց վարած կռիվները «բնդհանուր առմամբ չարդարացրին կազմակերպության հույսերը...»[1]։ «... Զոհողությունները հսկայական էին, արդյունքը՝ չնչին»[2]։ «... Մեր յուրաքանչյուր կռվողի դեմ թուրք կառավարությունը և մահմեդական խուժանը կբերին տասնյակ ու հարյուրավոր կռվողներ։ Եվ ամենից հերոսական թռիչքները հաճախ կկաշկանդվեին տեղն ու տեղը, կխորտակվեին մեր անձնվեր հայդուկներու արյունին մեջ»[3]։

Եվրոպայի միջամտության և աջակցության վրա հույս դնելը միամտություն էր, ինքնախաբեություն, քանզի տերությունները, կանգնած լինելով սուլթանի մեջքին, ոչ միայն չէին պաշտպանում հայկական շարժումները, այլև ընդհամարը էին վերաբերվում նրանց հանդեպ կամ օգտագործում էին իրենց նպատակների համար։

Դաշնակցության ղեկավարը սխալվում էր նաև այն ժամանակ, երբ ուրիշ ժողովուրդների ազատագրության օրինակները փորձում էր կիրառել արևմտահայության վրա։ Նա անտեսում էր, որ այդ ժողովուրդների և արևմտահայերի ազատագրումը բռնակալական լծից կատարվել է ու կատարվում է պատմական այլ ժամանակներում ու պայմաններում։

* * *

Համոզվելով, որ սեփական ուժերով անկարելի են ազատագրել արևմտահայությանը, դաշնակցականները շարունակեցին ավելի ու ավելի հակվել դեպի եվրոպական տերությունների աջակցությունը։ 1901 թ. սեպտեմբերի 13-ին Պիեռ Քիյառի[4] միջոցով նրանք Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասեին հանձնեցին Արևմտյան Հայաստանի բարեկարգման հետևյալ նախագիծը։

Արևմտյան Հայաստանի վիլայեթների կառավարումը հակելու համար մեծ տերությունների երաշխավորությամբ նշանակել Եվրոպայի չեզոք կառավարիչ՝ 5 տարի ժամանակով և օժտել նրան գործադիր իշխանության իրավունքներով։ Այդ կառավարիչը պիտի կարգ ու կանոն պահպանի, հսկի հանրային ապահովությունը, կազմակերպի հարկերի ու տուրքերի հավաքումը, նշանակի պաշտոնյաներ, հաստատի դատավորներ, հոգ տանի երկրի արդյունաբերության ու երկրագործության զարգացման մասին և այլն։ Կառավարչին կից պիտի գործի ընդհանուր ժողով, բաղկացած կազմների մահմեդական ու քրիստոնյա բնակիչների կողմից ընտրված մեկական ներկայացուցիչներից։ Այն գումարվելու է տարին մեկ անգամ և քննելու է հանրային աշխատանքների, հաղորդակցական միջոցների զարգացման, վարկերի, կրթության, հարկերի ու պարհակների, տեղական բյուջեների վերաբերյալ հարցերը։

Արևմտյան Հայաստանը բաժանվում է սանջակների ու կազանների, որոնք կառավարվում են մութեսարիֆների ու կայմակամների կողմից։ Նրանք նույնպես պետք է գործեն բնակչության կողմից ընտրված խորհուրդների օգնությամբ։

Տերությունները Արևմտյան Հայաստանում պետք է ստեղծեն մի մշտական հանձնաժողով, որ զբաղվի բարենորոգումների կատարման հարցերով։ Հանձնաժողովը ծառայելու է որպես միջնորդ ժողովրդի ու կառավարության միջև։

Սուլթանը ներում է շնորհում քաղաքական բանտարկյալներին, թույլատրում է, որ տարագիրները վերադառնան իրենց հայրենիքը, հատուցում է տալիս տնտեսապես քայքայվածներին, հրաժարվում է ապառքների գանձումից, 10 տարի շարունակ հավաքած հարկերը հատկացնում է տեղական կարիքներին։ Բ. Դուրը հսկում է, որ կրոնափոխվողները լինեն չափահասներ և նրանց տրվի մեկ շաբաթ ժամանակ, որպեսզի կարողանան վերջնականապես ընտրել իրենց որոշումը։ Այն պետք է նաև հսկի, որ հայ կղերին չոտնձգի որևէ մեկը։

Դաշնակցության նախագծում այնուհետև ասվում էր, որ վալիների կողքին պետք է նշանակել մեկական տեղակալ, որ սբազվի հայոց շահերով։ Կարգ ու կանոնը պաշտպանում են

1 Տե՛ս Մ. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 223։

2 Նույն տեղը, էջ 224։

3 Նույն տեղը, էջ 225։

4 Պիեռ Քիյառ (1864—1912), ֆրանսիացի բանաստեղծ, «Պրո Արմենիա» պարբերականի հրատարակիչ։

ռաբկաններն ու զինվորները, որոնք նշանակվում են առանց կրոնի ու ազգության խորության և գործում են եվրոպական սպաների հրամանատարությամբ։ Ձենք կրելը կամ չկրելը, բանակում ծառայելը կամ չծառայելը պետք է ընդհանուր լինի բոլոր ժողովուրդների համար, իսկ բեդելի ասկերի կոչված զինվորական տուրքը պետք է վերացնել։ Համիդիե զորագնդերը անհրաժեշտ է ցրել և նրանցում ցուցակագրված քրդերին օսմանյան մյուս բնակիչների հետ հավասար զորակոչել բանակ։

Նախագծում նաև նշվում էր, որ դատական բարենորոգումները պետք է կիրառել այնպես, ինչպես նախատեսվում էր երեք տերությունների 1895 թ. Մայիսյան ռեֆորմներում, այսինքն՝ յուրաքանչյուր նահիճում մուխտարի նախագահությամբ գործում է ծերերի խորհուրդ և լուծում բնակիչների մեջ ծագած վեճերը։ Դատական մինիստրությունը յուրաքանչյուր կազայում նշանակում է հաշտարար դատավորներ, որոնց 1/3-ը՝ քրիստոնյաներից։ Նրանք պետք է օրինազանցներին պատժեն դրամական տույժով և մինչև 3 ամսվա բանտարկությամբ։ Ավելի ծանր հանցագործությունների հարցերը քննվում և վճռվում են համապատասխան բարձր ատյաններում։ Դատարանների որոշումները գրվում են թուրքերեն և նրանց կցվում հայերեն թարգմանություններ։

Ի վերջո, նախագծում ասվում էր, որ ազատություն պետք է տալ հասարակական հավաքներին ու կրթություններ[1]։

Դաշնակցականների այս նախագիծը հեռու էր նրանց ծրագրից, սվաղում էր ազգային հարցը, լռում էր հողային հարցի մասին, արևմտահայության բախտը հանձնում էր եվրոպական տերություններին ու սուլթանին և այդպիսով հարատևում նրա ստրկությունը։

Այդ նախագիծը բխում էր երեք տերությունների Մայիսյան նախագծից, այն նախագծից, որը դաշնակցությունը վեց տարի առաջ մերժում էր, հայտարարելով, թե չի արտահայտում հայ ժողովրդի կամքը, ընդհակառակը, ոտնահարում է նրա շահերը։ Այդպիսի իրարամերժ դիրքորոշումը բնորոշ էր դաշնակցությանը։

Հենց այդ է հաստատում նաև այն փաստը, որ դաշնակցականները քիչ անց կրկին հիասթափվեցին պաշտոնական Եվրոպայից և սկսեցին քննադատության կրակ թափել նրա վրա։ 1902 թ. «Դրոշակի» առաջնորդողում նրանք գրում էին, որ մենք գուրգուրեցինք Եվրոպային, «երկրպագեցինք, բայց նա մեզ դավաճանեց»[1]։

Դաշնակցականները արևմտահայության փրկության հույսերն այժմ կապում են միջազգային հայասերների շարժման հետ։ Իրենց պարբերականի նույն առաջնորդողում նրանք շարունակում էին. «Այժմ մի երկրորդ կուռք ստեղծելու վրա ենք... կովի և արյան դաշտից դուրս գտնվող մեր հասարակությունը այժմ, կարծեք, տրամադիր է հավատալ, որ միջազգային հայասեր շարժումը մի պանացեյա է, մի «համադարման» հայի վերքին, մի նոր պաշտամունք... մի երկրորդ կուռք, որ անհունապես ավելի մաքուր է, քան առաջինը...»[2]։

Կուսակցությունը գտնում էր, որ փրկության հույսեր կապելով միջազգային հայասերների շարժման հետ, անհրաժեշտ է շարունակել նաև զինված ելույթներն Արևմտյան Հայաստանում, քանի որ «սուլթանի վրա ազդելու համար... պետք է ուժ գործադրել», «խրախուսենք եվրոպական պրոպագանդը, բայց ավելի ևս խրախուսենք բուն գործի պրոպագանդը հայրենիքում, առանց որի՝ չիք հայկական դատ»[3]։

1902 թ. դաշնակցականներն ու հնչակյանները դիմեցին Բրյուսելում հրավիրված միջազգային հայասերների կոնգրեսին և հայտարարեցին, թե իրենց պահանջը մի համեստ բան է, «ինքնավար մի Հայաստան՝ եվրոպական հսկողության տակ»[4]։ Դա, իհարկե, հնչակյանների պահանջն էր, որին միանում էին դաշնակցականները։

* * *

XIX դ. վերջին և XX դ. սկզբին դաշնակցությունը գնալով գերիշխող դիրք էր գրավում հայ քաղաքական կյանքում։ Ձգտելով հասնել մենաշնորհ կացության, այն աշխատում էր կամ կլանել ու ձուլել իր մեջ հնչակյաններին ու արմենականներին,

1 Տե՛ս «Դրոշակ», 1912, № 11—12, էջ 277—278։

1 Տե՛ս «Դրոշակ», 1902, № 7, էջ 97։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 111։

կամ թուլացնելով վտարել նրանց ասպարեզից։ Մի շարք տեղերում, թույլտրելի ու անթույլատրելի միջոցներով, դաշնակցականները կարողացան հասնել իրենց նպատակին, բայց այլ տեղերում նրանց ջանքերն ապարդյուն անցան։

Դաշնակցությունը անզիջում պայքար էր վարում նաև Կ. Պոլսի պատրիարքի և նրա համախոհների դեմ, նպատակ ունենալով նրանց ևս արտամղել ասպարեզից։ Զգտելով նրանց նկատմամբ առաջացնել համազգային ատելություն և այդպիսով հեղինակազրկել, «Դրոշակը» Մ. Օրմանյանին, Տատյաններին ու այլոց համարում էր սուլթանական սատրաքարշներ, ազգի դավաճաններ և անվանարկում այլ պիտակներով[1]։

Դարասկզբին, մասնավորապես 1904 թ. Սասունի գոյամարտից հետո դաշնակցությունը որոշեց փոխել Արևմտյան Հայաստանում իր գործողության տակտիկան, այն է՝ դադարեցնել մասնակի, անջատ ելույթները, դուրս բերել զինված խմբերը՝ կառավարությանը չգրգռելու և նոր կոտորածների առիթ չտալու համար, պահել Արևմտյան Հայաստանում ֆիդայական փոքր խմբեր, զինված ջոկատները փոխարինել զինված ժողովրդով, զենքերը ներմուծել ոչ թե արտասահմանից, այլ պատրաստել տեղում։ Այնուհետև կուսակցությունը գտնում էր, որ զանգվածային շարժումներ կարելի է ձեռնարկել այն ժամանակ, երբ Թուրքիան պատերազմի մեջ կմտնի որևէ պետության դեմ կամ երբ ոտքի կկանգնեն նաև օսմանյան տիրապետության տակ ընկած մյուս ժողովուրդները[2]։

Այդ ժամանակաշրջանում դաշնակցականները երազում էին Մակեդոնիայի օրինակով բարենորոգումներ անցկացնել նաև Արևմտյան Հայաստանում, կամ իրագործել Մայիսյան բարենորոգումները՝ զանազան խմբագրումներով։ Արամ Մանուկյանը գրում էր, որ այդ տարիներին «Հայաստանի անկախության հարց չկար դրված, այլ Մակեդոնիայի ձևով բարենորոգումներ Եվրոպայի քննիչների հովանավորության տակ։ Կարճ՝ Մայիսյան ծրագրի իրագործումը մի քանի սրբագրություններով»[3]

1 *Տե՛ս «Դրոշակ», 1898, № 4, էջ 33, 1899, № 9, էջ 129։*
2 *Տե՛ս «Հայրենիք», 1923, № 11, էջ 134։*
3 *Նույն տեղը, էջ 133։*

* * *

Արևմտահայության կացության բարեփոխման համար դաշնակցությունը փորձեց համագործակցել հարևան ժողովուրդների հետ։ Նա որոշակի քայլեր կատարեց քուրդ հասարակության համարյա բոլոր խավերի հետ մերձեցման ուղղությամբ։ Կուսակցությունը դիմեց քուրդ մտավորականության այն շրջաններին, որոնք կողմնակից էին հայ-քրդական բարեկամական կապերի ամրապնդմանը և ցանկանում էին իրենց հայրենակիցներին հաղորդակից դարձնել համաշխարհային քաղաքակրթություններ։

Ստանալով դրական պատասխան, 1898—1900 թթ. «Դրոշակը» բարդմանաբար հրապարակեց քուրդ մտավորականների կողմից գրված և իրենց հայրենակիցներին ուղղված երկու կոչ։ Այդ կոչերից մեկը խորհուրդ էր տալիս քրդերին՝ մերժել սուլթանի հակահայկական քաղաքականությունը և իրենց ազատության համար դաշնակցել հայերի հետ։ «Եթե երկուքնիդ մեկ ըլլաք,— նշվում էր կոչում,— կառավարությունը ձեր դեմ չի կրնար ելլել, ան կը հաղթվի ու դուք հանգիստ կրնեք... (հայերը) ձեր բարեկամներն ու դրացիներն են... միացեք, ձեր միակ փրկությունը զենքի ուժով միայն պիտի ըլլա, այսինքն՝ ապստամբությունով»[1]։

Կոչերից մյուսում ավելի էր շեշտվում սուլթանական կարգերի անտանելի էությունը և ընդգծվում հայ-քրդական համատեղ գործողության անհրաժեշտությունը։ Յույց տալով երկու հարևանների անցյալում ունեցած բարեկամական դրվագները և դրա շնորհիվ ձեռք բերած հաջողությունները, կոչի հեղինակը վերջում նշում էր, որ հայ-քրդական համերաշխության ծիլերը «այսօր դեռ թույլ են և նորաբողբոջ, բայց պիտի հուսանք, որ ատոնք իրենց պտուղները կունենան և անշուշտ կարող կըլլան ստեղծել երկրի մեջ զգալի հակասուլթանական ուժ մը»[2]։

1901 թ. «Դրոշակը» հրապարակեց նաև երկու խմբագրական հոդվածներ, որոնցով անդրադառնում էր հայ-քրդական բարեկամական կապերին պատմական ոչ հեռավոր անցյալում, մասնավորապես XIX դարի երկրորդ կեսին։ Վեր հանելով այդ

1 *«Դրոշակ», 1898, № 6, էջ 52։*
2 *Տե՛ս նույն տեղը, 1900, № 1, էջ 6։*

կապերի դրական արդյունքները, պարբերականը կոչ էր անում՝ այսուհետև նույնպես շարունակել համագործակցությունը, մանավանդ, երբ դաշնակցության ամրապնդման և համատեղ պայքարի համար իրական հող կա[1]։

Անշուշտ, «Դրոշակի» այդ նյութերը ժննից անլեգալ ճանապարհներով ուղարկվում էին Թուրքիա և տարածվում Արևմտյան Հայաստանում, սակայն շոշափելի արդյունքներ չտվեցին։

Դաշնակցականները հայ-քրդական համագործակցության ուղղությամբ կատարեցին նաև գործնական քայլեր։ Բայց դարձյալ արդյունքի չհասան։ Այդ ձեռնարկումների տապալումը հետագայում ստիպված էր խոստովանվել անգամ նրանց պատմագիր Մ. Վարանդյանը։ Նա գրում էր. «Մեր անխոնջ գործիչներու քարոզչությունը քյուրդերու մեջ մնաց ձայն բարբառո հանապատի։ Հ. Հ. դաշնակցությունը անբավ եռանդ ու ջոհեր տված երկու դարավոր հարևաններու համերաշխության գործին, բայց չկարողացավ իրագործել քիչ շատ լուրջ և տևական գործունեություն, նա չկարողացավ անգամ չեզոքացնել այդ զորավոր դրացիի հարձակողական բնազդները, չհաջողեցավ զայն համոզել, որ չդառնար կույր գործիք բռնակալության ձեռքին՝ հայ դատը խոշտանգելու, հայությունը բնաջնջելու նպատակով»[2]։

Դաշնակցականները փորձեցին համագործակցել նաև թուրքերի հետ, բայց կարողացան ընդհանուր համաձայնության գալ միայն երիտթուրքերի հետ, հրապարակելով 1907 թ. Փարիզի դեկլարացիան։ Մեր նպատակից դուրս է այդ դեկլարացիայի բովանդակության վերլուծումը, նշենք միայն, որ այն չէր արտահայտում թուրք, մանավանդ հայ աշխատավորության շահերը։

* * *

1905 թ. ռուսական հեղափոխությունը մեծ իրադարձություն էր համաշխարհային պատմության մեջ։ Դրա ազդեցության տակ քաղաքական շատ կուսակցություններ ու կազմակերպություն-

1 Տե՛ս «Դրոշակ», 1901, № 4, էջ 115, № 5, էջ 116։ Տե՛ս նաև Կ. Սասունի, Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները, Փարիզ, 1969, էջ 181—185։

2 Մ. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 258։

ներ վերանայեցին իրենց գործողությունները և մտցրեցին փոփոխություններ։

«Հայ հեղափոխական դաշնակցությունը» 1907 թ. մշակեց իր երկրորդ ծրագիրը և հաստատեց այն Վիեննայում նույն թվի մայիսին տեղի ունեցած իր չորրորդ ընդհանուր ժողովում։ Ծրագրի ընդհանուր բաժնում արձանագրվում էր, որ մարդկությունը անհիշելի ժամանակներից բաժանված է եղել դասակարգերի՝ իշխողների և իշխվողների, կեղեքողների և կեղեքվողների։ Առաջին դասակարգերը եղել են տերկատերերն ու տերուկները, ապա ճորտատերերն ու ճորտերը, վերջապես՝ կապիտալիստներն ու բանվորները։ Բոլոր այդ ֆորմացիաների ժամանակ պահպանվել է մարդու շահագործումը մարդու կողմից։ Այդ շահագործումը վերացնելու և սոցիալիզմ կառուցելու համար պետք է «վերացնել կապիտալիստական մասնավոր սեփականությունը և նրա հետ կապված անարխիստական արդյունագործության սիստեմը, հասարակական ընդհանուր սեփականություն դարձնել աշխատանքի, արդյունագործության միջոցները, հողը, հանքերը, գործարանները, հաղորդակցության և փոխադրական միջոցները և այլն— և բովանդակ տնտեսությունը կազմակերպել ու ղեկավարել հավասարաչափ»[1]։

Ծրագրում նշվում էր, որ կապիտալիզմի վերացումն ու սոցիալիզմի հաստատումը պետք է կատարվի պրոլետարիատի, գյուղացիության և մտավորականության համատեղ պայքարով։ Բոլոր երկրների աշխատավորները պետք է միանան և տապալեն բուրժուական կարգերը։ «Սոցիալիստական շարժումն,— ասվում էր ծրագրում,— իր էությամբ միջազգային է։ Բոլոր երկրների աշխատավոր տարրերը իրրև միևնույն տնտեսական սիստեմի զոհեր պիտի միանան և արդեն միանում են համաշխարհային մի հզոր եղբայրակցության մեջ, ու գիտակ իրենց բարձր առաքելության, վստահ իրենց հաղթանակի վրա, դիմում են կազմակերպված կռվի ճանապարհով դեպի նոր սոցիալիստական կարգեր»[2]։

Ծրագրում հատուկ ուշադրություն էր դարձվում գյուղական համայնքի և արտադրության համայնական եղանակով կազմակերպման հարցերին։ Նշվում էր, որ գյուղում «չի նկատվում

1 Հ. Հ. դաշնակցության ծրագիրը, Կ. Պոլիս, 1908, էջ 12։

2 Նույն տեղը, էջ 14։

հողի կենտրոնացում»[1]։ Այդուհանդերձ, խնդիր էր դրվում՝ համայնացնել հողը, վերացնել նրա վաճառքն ու առքը, ինչպես արքունական, այնպես էլ կալվածատիրական ու վանական-եկեղեցական տարածությունները դարձնել ամբողջ ժողովրդի սեփականություններ, տրամադրել հողն աշխատավորին և իրավունք վերապահել նրան մշակելու այնքան հող, որ «կարողանա, առանց ուրիշի աշխատանքը շահագործելու, բավարարություն տալ իր և իր ընտանիքի սպառողական պահանջներին»[2]։

Հողի տնօրինման իրավունքը վերապահել «գյուղական ու քաղաքային համայնքներին»։ Կենտրոնական ու շրջանային վարչություններն պարբերաբար անց են կացնելու հողերի վերաբաժանում և «միջշրջանային ու միջհամայնական հավասարեցում»[3]։ Հանձնարարվում է համայնքներից ընտրված մարմիններին կազմակերպել արոտավայրերի, անտառների ու ջրերի օգտագործումը և ստացած եկամուտները հատկացնել համայնքի կուլտուրական ձեռնարկումներին։ Վերացվում են ուղղակի հարկերը, բեգարը, օլամն ու այլ աշխատավճարները և սահմանվում է պրոգրեսիվ հարկ։ Ընչազուրկներն ազատվում են տուրքերից։ Անհրաժեշտ է համայնական կարգով վարել ճանապարհաշինություն, լուսավորություն, հիվանդանոցների, հյուրանոցների կառուցման և օգտագործման աշխատանքները։

Պահանջվում էր զարկ տալ կոոպերացիաների զարգացմանը, քանի նրանք «ոչ միայն միջոց են որոշ չափով ապահովելու աշխատավորների առօրյա շահերը, այլև ճանապարհ՝ գործնականապես համայնական ոգով դաստիարակելու աշխատավորներին, պատրաստելու նրանց ապագա սոցիալական կազմակերպության համար»[4]։

Ծրագրում խնդիր էր դրվում՝ սահմանել ութժամյա բանվորական օր, վերացնել դիշերային աշխատանքը, բացառությամբ այն օբյեկտների, որտեղ չի կարելի, արգելել կանանց ու անչափահասների գիշերային աշխատանքը, սահմանել բանվորների համար կիրակնօրյա հանգիստ, ապահովագրել նրանց դժբախտ դեպքերից, հիմնել աշխատանքային բյուրոներ, բու-

1 Տե՛ս Հ. Հ. դաշնակցության ծրագիրը, էջ 10։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 20։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 21։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 17։

ժումը դարձնել ձրի և այլն։ Պահանջվում էր որոշակի միջոցառումներ անցկացնել նաև բնակչության կուլտուր-կրթական զարգացման համար։

Ծրագիրը հատուկ պահանջներ էր առաջադրում Արևմտյան Հայաստանի համար։ Այն ենթադրում էր, որ Թուրքիան պետք է դառնա սահմանադրական պետություն, իսկ Արևմտյան Հայաստանը կազմի նրա անբաժան մի մասը, «հիմնված տեղական լայն ինքնավարության վրա»[1]։ Սամանյան կենտրոնական կառավարությունը պետք է վարի պետության բոլոր ընդհանուր գործերը (արտաքին քաղաքականություն, պատերազմի, խաղաղության, զինվորական ծառայության, դրամի, մաքսի, փոստ-հեռագրատան և այլն), իսկ տեղական գործերը պետք է մնան ինքնավար օրգանների տնօրինմանը։

Արևմտյան Հայաստանը ինքնուրույնություն պիտի վայելի իր ներքին գործերում։ Իսկ «նրա բոլոր շրջաններն ու համայնքները իրենց ներքին գործերի մեջ նույնպես պիտի վայելեն տեղական ինքնավարություն»[2]։ Արևմտյան Հայաստանի բոլոր ինքնավար օրգանները պետք է ընտրվեն ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկությամբ, առանց բնակիչների սեռի, ցեղի ու կրոնի խտրության։

Ծրագիրը ենթադրում էր, որ այդպիսի վերափոխման պետք է ենթարկվի նաև Անդրկովկասը։

Հայաստանի երկու հատվածներում էլ բնակչությանը տրվում է խոսքի, մամուլի, խղճի, միությունների և գործադուլների ազատություն։ Եկեղեցին բաժանվում էր պետությունից, իսկ կրոնը հայտարարվում էր անհատական խղճի գործ։ Բոլոր ազգերը հայտարարվում են հավասար օրենքի առաջ, ոչնչացվում են դասերի ու դասակարգերի առանձնաշնորհները, սահմանվում է անձի ու գույքի ապահովություն, տեղափոխումների ազատություն, ընդհանուր պարտադիր ու ձրի ուսուցում, մայրենի լեզվով դասավանդում, բյուջեի բաժանում առանձին ազգություններին միջև։ Ենթադրվում էր, որ պետական լեզուն պետք է լինի պարտադիր բոլոր ազգությունների համար, իսկ պաշտոնյանները դրա հետ միասին պարտավոր են գիտենալ նաև տեղական լեզուն ՝և լեզուները։ Ջորքը փոխարինվում է միլի-

1 Տե՛ս Հ. Հ. դաշնակցության ծրագիրը, էջ 21։
2 Տե՛ս նույն տեղը։

ցիայով, յուրաքանչյուր առողջ քաղաքացի պետք է ծառայի միլիցիայում, իսկ պատերազմի դեպքում՝ բանակում[1]։

Ծրագրում ոչինչ չէր ասվում եվրոպական տերությունների աջակցության մասին։ Ենթադրվում էր, որ ինչպես Թուրքիայի ու Ռուսաստանի ներքին խնդիրները, այնպես էլ հայկական հարցերը պետք է լուծվեն նրանց սեփական ուժերով, առանց դրսի միջամտության։

Համառոտակի այդպիսին էր դաշնակցության նոր ծրագրի բովանդակությունը հայ ժողովրդի ազատագրման մասին ընդհանրապես, արևմտահայության փրկության մասին մասնավորապես։

Երբ համեմատում ենք կուսակցության 1892 թ. և 1907 թ. ծրագրերը, տեսնում ենք, որ նրանցում կային ընդհանրություններ։ Երկուսն էլ արձանագրում էին հասարակական դասակարգերի պատմականությունը, նրանց մեջ ծավալվող կռիվը, շահագործման վերացման անհրաժեշտությունը և այլն։ Երկուսն էլ նշում էին, որ կուսակցության նպատակն է ստեղծել համայնական սեփականություն, տալով հողը գյուղական համայնքներին, իսկ գործարանը՝ բանվորական կոլեկտիվներին, որ կուսակցությունը կամենում է ստեղծել դեմոկրատական կարգեր, սահմանելով քաղաքացիների ու ազգերի հավասարություն, տալով նրանց խոսքի, մամուլի, խղճի ու միությունների ազատություն։ Երկուսն էլ ունեին ավելի շատ դեկլարատիվ, քան գործնական նշանակություն։

Բայց, այդուհանդերձ, դաշնակցության 1892 թ. և 1907 թ. ծրագրերի միջև կային նաև էական տարբերություններ։ 1907 թ. ծրագիրը որոշակիորեն նշում էր, որ Արևմտյան Հայաստանը չպետք է անջատել Օսմանյան կայսրությունից։ Այն «պիտի կազմի Օսմանյան սահմանադրական պետության անբաժան մասը» և օգտվի ինքնավարությունից[2]։ Սա ավելի իրական մոտեցում էր։

1907 թ. ծրագրում հատուկ կետ էր մտցվում նաև Արևելյան Հայաստանի, ավելի ճիշտ՝ Անդրկովկասի մասին, ուր ասվում էր. «Անդրկովկասյան ռամկավար ֆեդերատիվ հանրապետությունը պիտի կազմի Ռուսաստանի դաշնակցական հանրապետության անբաժան մասը, կապված նրա հետ պետական ինքնավարության, դրամական սիստեմի, մաքսի և արտաքին քաղաքականության խնդիրներով»[1]։

Ի տարբերություն 1892 թ. ծրագրի, 1907 թ. ծրագրում խոսվում էր թե՛ Թուրքիայի և թե՛ Ռուսաստանի դեմոկրատական վերակառուցումների մասին, ենթադրելով, որ այդ երկրներում պետք է ստեղծել ազգությունների իրավահավասարություն, վերացնել դասային արտոնությունները, տեղաշարժերի արգելակումները, սահմանել պարտադիր կրթություն և այլն։

1907 թ. ծրագրում ավելի որոշակի էր դրվում կապիտալիզմի տապալման և սոցիալիզմի կառուցման հարցը, ավելի հանդամանորեն էր խոսվում բանվորների ու գյուղացիների դրության բարելավման, արդյունաբերության ու հողային խնդիրների լուծման մասին։ Մի խոսքով, դաշնակցության 1907 թ. ծրագիրը անհամեմատ ավելի ձախ էր։

Այդուհանդերձ այդ կուսակցության նոր ծրագիրն էլ չէր անցնում բուրժուական պահանջների սահմաններից։ Դաշնակցությունը թևպետ իրեն համարում էր հեղափոխական կուսակցություն, բայց իր էությամբ ռեֆորմիստական էր, քանի որ պահանջում էր ոչ թե արևմտահայության ազգային ինքնորոշում, լիակատար անջատում, այլ ինքնավարություն։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ «ինքնավարություն իբրև ռեֆորմ սկզբունքորեն տարբեր է անջատման ազատությունից, իբրև հեղափոխական միջոցառումից»[2]։

Դաշնակցականների ագրարային ծրագիրը մոտ էր ռուսական էսէռների ագրարային ծրագրին և կրում էր նարոդնիկական ազդեցություն։ Հանրահայտ է, որ Վ. Ի. Լենինը սուր քննադատության ենթարկեց էսէռների, նրանց հետ միասին նաև դաշնակցականների ագրարային ծրագիրը։ Նա դաշնակցական հռետոր Սաղաթելյանին անվաննց նախիլ այն բանի համար, որ նա պաշտպանում էր համայնքը, պահանջում էր՝ «պետք է ինչ էլ լինի փրկել համայնքը», քանի որ այն «... կարող է ծավալվել-վերածվել համաշխարհային շարժման, որն ի վիճակի է մատնանշելու բոլոր տնտեսական հարցերի լուծումը»[3]։

1 Տե՛ս Հ. Հ. դաշնակցության ծրագիրը, էջ 25։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 22։

1 Հ. Հ. դաշնակցության ծրագիրը, էջ 26։
2 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 30, էջ 52։
3 Նույն տեղը, հ. 16, էջ 472։

Վ. Ի. Լենինը ինչպես Սաղաթելյանի, այնպես էլ դաշնակցության մյուս ներկայացուցիչ Տեր-Ավետիքյանցի պահանջները համարեց ռեակցիոն։ Միաժամանակ նա նշեց, որ էսէռներն ու դաշնակցականները չեն հասկանում, որ եթե վերացվի հողի մասնավոր սեփականությունը և հաստատվի համայնականը, ապա այն ժամանակ «... ստեղծվում է հողի ամենալայն մոբիլիզացիան, նրա առավել ազատ ու հեշտ անցում մի տնտեսատիրոջից մյուսին, կապիտալի առավել ազատ և հեշտ ներթափանցումը հողագործության մեջ»[1]։

Դա արդեն ռեակցիոն չէր, ընդհակառակը՝ գյուղում արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների զարգացման տեսանկյունից առաջադիմական էր, քանզի արագացնում էր հասարակական հին կարգերի արտամղումը և նորի առաջացումն ու զարգացումը։

Անշուշտ, դաշնակցության ծրագրերը կրում էին միջազգային սոցիալ-դեմոկրատիայի գաղափարների ազդեցությունը։ Դա պատահական չէր։ Այդ գաղափարները գնալով ավելի ու ավելի էին տարածվում աշխարհում և արժանանում ճնշված դասակարգերի համակրանքին։ Դաշնակցությունը ձգտում էր դրանք իր ծրագրերում դասակարգերի մեջ հեղինակություն ձեռք բերելու, նրանց իր ազդեցության տակ պահելու համար։ Դաշնակցության ծրագրերում քիչ չէին նաև նարոդնիկական գաղափարները, որոնք թեև արդեն ջախջախված էին ու կյանքի կողմից մերժված, բայց դեռ պահպանվում էին դաշնակցականների կողմից։

Ընդհանրապես պետք է նշել, որ դաշնակցականների ծրագրային փաստաթղթերը արևմտահայության ազատագրության վերաբերյալ տատանում էին իրարամերժ դրույթներով։ Նրանք մերթ հայտարարում էին, թե ուզում են ստեղծել «քաղաքական ու տնտեսական ազատ Հայաստան», մերթ պահանջում էին այդպիսի Հայաստանի հետ առնչություն չունեցող Ն. Վարժապետյանի կանոնագրի կենսագործում, մերթ խարազանում էին երեք տերությունների Մայիսյան բարենորոգումները որպես հայ ժողովրդի կենսական շահերի հետ ընդհանուր ոչինչ չունեցող միջոցառումներ, մերթ պահանջում էին դրանց իրագործում։

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, երկ, հ. 10, էջ 472։

Դաշնակցականները մի կողմից նղովում էին պալատնական եվրոպային, համարելով հայ ժողովրդի թշնամի, մյուս կողմից պիտում էին նրան, խնդրելով աջակցություն, մերթ հայտարարում էին, թե կամենում են ստեղծել ազդերի հավասարություն, մերթ պահանջում էին իշխող ազգի արտոնությունները պահպանող և, հետևաբար, այդ հավասարության հետ առնչություն չունեցող ինքնավարություն։ Նրանք մի կողմից նշում էին, թե ցուցաբարական կռիվներով պետք է առաջացնել ընդհանուր ապստամբություն և տապալել համիդյան բռնակալությունը, մյուս կողմից ասում էին, թե այդ կռիվներով անհրաժեշտ է ճնշում գործադրել սուլթանի վրա և բարելավել արևմտահայության դրությունը, իրագործելով Ն. Վարժապետյանի կանոնագիրը կամ Մայիսյան բարենորոգումները։ Մերթ հայտարարում էին, թե միջազգային սոցիալ-դեմոկրատիայի գաղափարների իրագործման համար հող չկա Արևմտյան Հայաստանում, մերթ մտցնում էին դրանք իրենց ծրագրային փաստաթղթերում։

Դաշնակցությունը թեև հայտարարում էր, որ ինքը դասեր է քաղում պրակտիկայից, հրաժարվում է հակառակորդի ուժի թերագնահատումից, խուսափում է հեղափոխական ցասկոտ ու հախուռն գործունեությունից, «ավելի է հարմարեցնում իր տակտիկան անողոք իրականությանը, ներդաշնակություն ու հավասարակշռություն է հաստատում ուժերի ու ընդունակությունների միջև և զգաստ աչքով է նայում իրականության վրա...»[1], բայց գործնականում շարունակում էր իր հակասական քաղաքականությունը, պայքարի հախուռն ու հեղհեղուկ եղանակները և ավելի էր թաղվում հասարակական հակամարտությունների բավիղներում։

Երբ համեմատում ենք հայ բուրժուազիայի անկուսակցական ու կուսակցական շրջանների պահանջներն ու գործունեությունը, տեսնում ենք մի շարք ընդհանրություններ։ Նրանք երկուսն էլ հանդես էին գալիս սուլթանական բռնությունների դեմ, անկեղծորեն կամենում էին բարելավել արևմտահայության դրությունը, ուզում էին ստեղծել Արևմտյան Հայաստանի ինքնավարություն Թուրքիայի կազմում կամ հռչակել նրա անկախությունը, ձգտում էին հասնել այդ նպատակին եվրոպական տերություն-

1 Տե՛ս «Դրոշակ», 1893, № 7, էջ 62։

ների կամ Թուրքիայի ներքին ուժերի օգնությամբ, քարոզում էին հայ բոլոր խավերի համագործակցություն, նույնիսկ համընդհանուր ապստամբություն, պահանջում էին ազգային մշակույթի զարգացում և այլն։

Բայց հայ բուրժուազիայի նշված շրջանների պահանջների ու գործունեության միջև կային նաև որոշակի տարբերություններ։ Անկուսակցականները շրջանցում էին հողային հարցը, մինչդեռ կուսակցականները դնում էին այն։ Առաջինները մերժում էին ցուցարարական հռիվները, համարելով կորստաբեր, վնասակար արևմտահայության համար, մինչդեռ երկրորդները շատ հաճախ պրոպագանդում էին դրանք, գտնելով, որ միայն այդ եղանակով կարելի է նախապատրաստել ընդհանուր ապստամբություն, ներգործել սուլթանի վրա և հրավիրել Եվրոպայի ուշադրությունը հայկական դատի վրա։ Անկուսակցականներն անհամաստեղելի էին համարում միջազգային սոցիալ-դեմոկրատական գաղափարների կիրառումը արևմտահայ իրականության մեջ, մինչդեռ կուսակցականները իրենց ծրագրերում հայտարարում էին, թե հնարավոր է, որ երբևէ դրանք իրագործվեն Հայաստանում։

Սոցիալ-դեմոկրատներ

Մարքսիզմի դասականները, մշակելով մարդկության ազատագրության իրենց տեսությունը, տարբեր առիթներով անդրադարձել են առանձին ժողովուրդներին ու ազգություններին ու մատնանշել նրանց սոցիալական ու ազգային խնդիրների լուծման ուղիները։ Նրանք խոսել են նաև հայ ժողովրդի, հատկապես արևմտահայության մասին և ցույց տվել նրա փրկության ելքը։

Կ. Մարքսը բազմիցս անդրադարձել է Թուրքիայի տիրապետության տակ ընկած քրիստոնյաներին, այդ թվում նաև հայերին և բնութագրել նրանց դժնդակ կացությունը։ Ֆ. Էնգելսը կոնկրետ նշեց հայության երկու հատվածների ազատագրման ճանապարհը։ 1894 թ. նոյեմբերի 20-ին, պատասխանելով Հովսեփ Աբաբեկյանի հայտնի նամակին, նա գրում էր, թե հայ ժողովուրդը «դժբախտություն ունի գտնվելու թուրքական Սցիլլայի և ռուսական բռնակալության Խարիբդայի արանքում, ընդ

որում ռուսական ցարիզմը չարաշահում է ազատագրողի դերը, իսկ ստորաքարշ ռուսական մամուլը առիթը բաց չի թողնում օգտագործելու հայերի ազատագրության համար ասված ամեն մի համակրական խոսք հօգուտ նվաճողական ցարիզմի։

Սակայն... իմ անձնական կարծիքն այն է, որ Հայաստանի ազատագրությունը թուրքերի ինչպես և ռուսների ձեռքից հնարավոր կլինի միայն այն օրը, երբ կտապալվի ռուսական ցարիզմը»[1]։

Վ. Ի. Լենինը, ի թիվս ազգային-առաջադիմական այլ ելույթների, որոնք ուղղված էին ֆեոդալական բռնապետության կարգերի դեմ, նշում էր նաև 1890-ական թվականների արևմտահայկական շարժումները։ Նա գրում էր. «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870, այլև 1877 թվականի (ռուս-թուրքական) և 1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ Թուրքիայի պատերազմի և հայկական հուզումների) ժամանակ, պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունը եղել են ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»»[2]։

Արևմտահայության ազատագրման մասին կարծիք հայտնեցին նաև միջազգային բանվորական շարժման մի շարք ակնառու գործիչներ։ Այսպես, Վիլհելմ Լիբկնեխտը խստորեն քննադատելով համիդյան ռեժիմը և կարեկցելով նրա ճիրաններում տառապող ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին, կողմնակից չէր արևմտահայերի «ապստամբական շարժումներին թուրքական կառավարության դեմ, համարելով այն ցարիզմի մնքենայությունների արդյունք, որի հետևանքով Ռուսաստանը կուժեղանար և որպես Եվրոպայի ժանդարմ, ավելի կընդլայներ իր հարձակումները հեղափոխական ուժերի դեմ»[3]։ Անշուշտ, Լիբկնեխտն այդ հարցում իրավացի չէր. հայկական շարժումները Թուրքիայում ոչ թե ցարական խարդավանքների արդասիքներ էին, այլ առաջացել էին ինքնաբուխ, թուրքական վայրագ բարքերի ու հալածանքների հետևանքով։

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 39, с. 271, М., 1966.

[2] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 26, էջ 172։

[3] Գ. Բ. Զաքիրջանյան, Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, Եր., 1971, էջ 14։

Ավգուստ Բեբելը գտնում էր, որ արևմտահայերի ճակատագիրը կապված է Թուրքիայի բոլոր ժողովուրդների բախտի հետ։ «Միապետական ռեժիմի պայմանները միանման սոսկալի են ողջ Թուրքիայի համար, ուստի և հայերի դրությունը կբարելավվի այն ժամանակ, երբ կբարելավվի ամբողջ Թուրքիայի ժողովուրդների բախտը... Երբ կտապալվի սուլթանական ռեժիմը», «երբ որ Թուրքիայում նույնանման պայմանների տակ ապրող բոլոր ազգությունները և մանավանդ նրանց ամենից շատ տանջված տարրերը կմիանան փշրելու գոյություն ունեցող կարգերը»։ Այն առարկմանը, թե մահմեդականները, ելնելով իրենց կրոնական դոգմաներից, չեն միանա քրիստոնյաներին, Ա. Բեբելը պատասխանում էր. «Հալածվածներն ու ճնշվածները կրոն ու ազգություն չեն ճանաչում»։ Եթե հայերը գործեն թուրքերի հետ և երբեք չբարձրացնեն առանձին Հայկական հարց, կհասնեն իրենց նպատակին։ Հակառակ դեպքում նրանք կհեռացնեն իրենցից «բողոքող մուսուլման տարրին և հարստահարվածների դատը», կդարձնեն «ազգային ու հայկական դատ, մի բան, որը բնականաբար գրգռում է մուսուլման ժողովրդին»[1]։

Ռոզա Լյուքսեմբուրգը 1896 թ. «Զեքսիշե արբայտերցայտունգ» («Սաքսոնական բանվորական լրագիր») թերթում հանդես եկավ «Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածաշարով, որի մեջ հերքեց այն տարածված կարծիքը, թե, իբր, Թուրքիայում ծավալվող ազգային ազատագրական շարժումները ռուսական ցարիզմի բանսարկության հետևանքներ են։ Դա նույնն էր «ինչ բուրժուազիայի այն պրնդումները, թե ժամանակակից բանվորական ողջ շարժումը սոցիալ-դեմոկրատական մի քանի խառնակիչների գործն է»[2]։

Ռ. Լյուքսեմբուրգը բնական էր համարում, երբ բուրժուազիան էր դիտում Թուրքիայում տեղի ունեցող ազգային շարժումները Ռուսաստանի մեքենայության հետևանք, բայց զարմանում էր, որ նույն կարծիքն են պաշտպանում նաև որոշ սոցիալ-դեմոկրատներ։ Նա մերկացնում էր գերմանական բուրժուական և պաշտոնական գործիչների այն անհեթեթությունը, թե, իբր, Թուրքիան հեքիաթային մի աշխարհ է, ուր տարբեր

1 Տե՛ս «Երկերի ժող.», 1907, № 25, էջ 7։

2 Տե՛ս Գ. Բ. Զարիբջանյան, նշվ. աշխ., էջ 56—57։

ազգություններ դարերով ապրում են կողք կողքի, խաղաղ, վայելում կատարյալ ինքնավարություն և, իբր, միայն Եվրոպայի դիվանագիտությունն է մտցրել այնտեղ արհեստական զժգոհություն, խանգարել անմեղ զառ սուլթանին իրականացնելու «քանիցս հավանության արժանացած ռեֆորմները»[1]։

Ռ. Լյուքսեմբուրգը նշում էր, որ Թուրքիայի տիրապետության տակ ընկած ժողովուրդները իրենց անկախությունը կորցնելու առաջին իսկ օրից ենթարկվել են ազգային հալածանքների ու ճնշումների, որոնք պատմական հանգամանքների բերումով ավելի են սաստկացել XIX դարում։ Մահակի ուժով հպատակության մեջ պահած, բայց իրարից անջատ ու մեկուսացված ոչ թուրք ժողովուրդները փրկության ելք են որոնում։ Նրանք ուզում են պոկվել ամբողջությունից և սեփական ձեռքերով կռել իրենց բախտը։ Անջատողական ձգտումներն ավելի ուժեղ են դրսևորվում քրիստոնյաների մոտ, քանի որ նրանք ենթարկվում են ազգային ու կրոնական ամենաբիրտ հալածանքների։ Այդ բոլորը ցույց են տալիս, որ «Թուրք բռնապետության հիմքը խարխլվում է... նա պետք է խորտակվի ոչ որպես կառավարական ձև, այլ որպես պետություն, ոչ թե դասակարգային պայքարի հետևանքով, այլ ազգային կռիվների պատճառով։ Իսկ ինչ կստեղծվի. դա վերածնված Թուրքիա չի լինի, այլ մի շարք նոր պետություններ՝ կտրված Թուրքիայի մարմնից»[2]։

Ռ. Լյուքսեմբուրգի կարծիքով, սոցիալ-դեմոկրատիան պետք է պաշտպանի և աջակցի Թուրքահպատակ ժողովուրդների ձգտումները։ «Քրիստոնյա ազգերը, ժվյալ դեպքում հայերը ուզում են ազատագրվել թուրքական տիրապետության լծից, և սոցիալ-դեմոկրատիան անվերապահորեն պետք է ճանաչի այդ»[3]։ Նա դեմ էր ազգային հարցի լուծման շաբլոնին, գտնելով, որ չի կարելի ամենուրեք և միշտ այն վճռել միևնույն մեթոդներով ու եղանակներով։ Անհրաժեշտ է ելնել պատմական կոնկրետ պայմաններից։ Եթե Էլզաս-Լոթարինգիայում, Բոհեմիայում կամ Լեհաստանում անջատողական ձգտումները կարող են թուլացնել և կազմալուծել ազատագրական շարժում-

1 Տե՛ս Գ. Բ. Զարիբջանյան, նշվ. աշխ., էջ 48։

2 Նույն տեղը, էջ 57—58։

3 Նույն տեղը, էջ 48։

ները, քանի որ այդ երկրներում կա ազատագրական շարժումները գլխավորող պրոլետարիատ, ապա Թուրքիայում «պայմաններն այլ են— քրիստոնյա երկրները միմիայն բռնի ուժի միջոցով են կապված Թուրքիային, նրանք չունեն բանվորական շարժում, նրանք կպոկվեն սոցիալական բնական զարգացման կամ, ավելի շուտ, քայքայման հետևանքով. ազատագրական ձգտումներն այստեղ կարող են ազգային պայքարի ձևով միայն հանդես գալ»[1]։ Սոցիալ-դեմոկրատիան պետք է հանդես գա «հօգուտ ապստամբների և ոչ թե նրանց դեմ»[2]։

Ռ. Լյուքսեմբուրգը գտնում էր, որ քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ազատագրումը թուրքական լծից կարող է լինել միայն առաջադիմական երևույթ։ Նախ՝ անջատվելով Թուրքիայից, նրանք կբռնեն կապիտալիստական զարգացման ուղին, կներքաշվեն բանվորական շարժումների հորձանուտի մեջ և դրա հետևանքով սոցիալական շարժումը կհամակի նաև այդ երկրներին[3]։ Երկրորդ՝ քրիստոնյա ժողովուրդների անջատումը Թուրքիայից լուրջ ապտակ կհասցնի ցարական Ռուսաստանի նվաճողական ձգտումներին։ Նրանք չեն ցանկանա փոխարինել թուրքական լուծը ռուսականով և բալկանյան մի շարք ժողովուրդների նման կծառանան ցարիզմի նվաճողական քաղաքականության դեմ։ «Եթե Թուրքիայի կողմից սարկացված ժողովուրդները Ռուսաստանի դաշնակիցներն են, ապա թուրք լծից ազատագրված ժողովուրդները դառնում են Ռուսաստանի բնական թշնամիները»[4]։ Երրորդ՝ քրիստոնյաների ազատագրումը թուրքական լծից իր հերթին կազատագրի Թուրքիան նրա քրիստոնյա հպատակներից։ Դաղտնիք չէ, որ այդ քրիստոնյաները առիթ են տալիս եվրոպական երկրներին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին և պատերազմի դեպքում հանդես են գալու Թուրքիայի դեմ՝ հօգուտ նրա հակառակորդների։ «Այդ պատճառով էլ Թուրքիայի համար ամեն մի արտաքին պատերազմ միշտ մի երկրորդ պատերազմ է սեփական տանը»[5]։

1 Տե՛ս Գ. Բ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 59։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 61։
4 Նույն տեղը, էջ 63։
5 Նույն տեղը։

Ամփոփելով իր հայացքները, Ռ. Լյուքսեմբուրգը գրում էր. «1. Թուրքիայի կազմալուծման պրոցեսը պետք է ընդունել որպես հաստատ իրողություն և չմտածել, թե այն կարելի է կամ պետք է կասեցնել։

2. Քրիստոնյա ազգերի ինքնուրույնության ձգտումներին վերաբերվել լիակատար համակրանքով։

3. Դրանք (այդ ձգտումները) սակայն ամենից առաջ ողջունել որպես ցարական Ռուսաստանի դեմ ուղղված պայքարի միջոց և հաստատակամորեն հանդես գալ հօգուտ նրանց անկախության՝ ինչպես ընդդեմ Ռուսաստանի, նույնպես և ընդդեմ Թուրքիայի»[1]։

Բացի համաշխարհային բանվորական շարժման առանձին գործիչներից, արևմտահայության բախտով զբաղվում էր նաև միջազգային սոցիալ-դեմոկրատիան։ Այն բազմիցս բողոքեց սուլթանական կառավարության հայակեր քաղաքականության դեմ և կոչ արեց՝ կանխել նրա արնախում ձեռնարկումները։ 1900 թ. II Ինտերնացիոնալի Փարիզի միջազգային կոնգրեսի ընդունած բանաձևում Հայկական հարցի մասին ասվում էր. «Փարիզի սոցիալիստական միջազգային համաժողովը, վերստին շեշտելով եղբայրական համակրության զգացմունքները, որոնք պիտի միացնեն բոլոր ժողովուրդներին, ցայրույթով բողոքում է Հայաստանում կատարված բռնաբարությունների, խժդժությունների ու ջարդերի դեմ, և մատնացույց անելով երկու աշխարհների բանվորներին զանազան կապիտալիստ պետությունների ոճրագործ մեղսակցությունը,— հրավիրում է պառլամենտական սոցիալիստ խմբերին ամեն մի դեպքում միջամտել հօգուտ անարգաբար հարստահարված հայ ժողովրդի, որին համաժողովը ուղղում է իր ջերմ ու սերտ համերաշխության հավաստիքը»[2]։

«Միջազգային սոցիալիստական բյուրոն» 1901 թ. հոկտեմբերի 15-ին դիմեց բոլոր երկրների բանվորական կուսակցություններին, առաջարկելով ցուցաբերել պրոլետարական համերաշխություն՝ հանուն հայ ժողովրդի պաշտպանության և ընդդեմ սուլթանի կողմից նրա նկատմամբ նյութվող նոր ոճրագործության։ Նրա դիմումում ասվում էր, որ բանվորական կու-

1 Գ. Բ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 65։
2 «Դրոշակ», 1901, № 7, Հավելված, էջ 2, տե՛ս նաև Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 403։

սակցությունները պետք է «ի լույս հանեն» Արդուլ Համիդի հայաջինջ գործերը և տերությունների հանցագործ անտարբերությունը դրանց հանդեպ։ Ապա պահանջվում էր, որ այդ կուսակցություններն իրենց համակրանքի ու քաջալերության խոսքերն ուղղեն նրանց, «որոնք ատոպում և կռվում են ապրելու իրավունքը նվաճելու համար»[1]։

«Միջազգային սոցիալիստական բյուրոյի» այդ կոչին արձագանքեցին մի շարք երկրների բանվորական կուսակցություններ[2]։

Արևմտահայության բախտով, նրանց ազատագրության հարցով հանդես եկան այնուհետև հայ սոցիալ-դեմոկրատները։ Նրանց օրգան «Պրոլետարիատի կոիվը» 1903 թ. գրում էր. «Ոչ մի մարգասեր, ոչ մի իսկական սոցիալիստ երբեք չի կարող անտարբերությամբ տանել այն բոլոր գազանությունները, որոնք սոսկալի թափով տեղի են ունենում այն երկրում, որը Թուրքաց Հայաստան է կոչվում»[3]։ Մերժելով այն անհիմն հայտարարությունները, թե իբր մարքսիստները պայքարում են արևմտահայության ազատության համար մարտնչողների դեմ և իբր նրանք չեն հետաքրքրվում արևմտահայերի բախտով, «Պրոլետարիատի կոիվը» գրում էր. «...Մենք, սոցիալ-դեմոկրատներս, որ ձգտում ենք ազատել մարդկությունը ամեն տեսակ ճնշումներից... մի՞թե սկզբունքով կարող ենք այդպիսի մի հրեշավոր միտք արտահայտել»[4]։ Թերթը որոշակիորեն դրսևորում էր իր վերաբերմունքն արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ, գրելով՝ «ուղարկելով Տաճկաստանում կռվող եղբայրներին մեր սոցիալիստական ողջույնը՝ մենք բացարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաշարշար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ...»[5]։

1 Տե՛ս «Դրոշակ», 1901, № 7, Հավելված, էջ 2, տե՛ս նաև Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 404։

2 Տե՛ս Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 404։

3 «Պրոլետարիատի կոիվը», 1903, № 2—3, էջ 18, տե՛ս նաև Խ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., գիրք առաջին, էջ 331։

4 «Պրոլետարիատի կոիվը», 1903, № 2—3, էջ 18։

5 Նույն տեղը, էջ 19, տե՛ս նաև Խ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 332, Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 400։

Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և Բ. Կնունյանցը, պաշտպանելով արևմտահայերի արդար պայքարը թուրքական բռնապետության դեմ, քննադատում էին հայ ազգային կուսակցությունների գործունեությունը Թուրքիայում և մերկացնում իմպերիալիստական տերությունների խարդավանքները Հայկական հարցում։ Նրանք ցույց էին տալիս, որ դաշնակցականներն ու հնչակյանները, կազմակերպելով Արևմտյան Հայաստանում պարտիզանական կռիվներ, առիթ են տալիս սուլթանական իշխանություններին կոտորելու հայերին։ Այդ կուսակցությունները իրենց գլուխներով փորձում են հրավիրել պաշտոնական Եվրոպայի ուշադրությունը Հայկական հարցի վրա, որ օգնեն նրա արդար լուծմանը, սակայն սխալվում են, որովհետև եվրոպական պետությունները սուլթանի բարեկամներն են, բայց ոչ բնավ աշխատավոր զանգվածների, այդ թվում նաև հայերի։

Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և Բ. Կնունյանցը քննադատում էին հայ ազգային կուսակցություններին նաև այն բանի համար, որ նրանք քարոզում էին, թե հայերը չպետք է մասնակցեն Ռուսաստանում, հատկապես Անդրկովկասում ցարիզմի դեմ մղվող պայքարին, թե «հայ ժողովրդի միակ «մտահոգության առարկան» պետք է լինի տաճկահայ դատը»[1]։ Դրանով նրանք ջլատում էին ինքնակալության դեմ ծառացող ուժերը։

Ա. Ամիրյանը (Մռավյան) 1906 թ. հեռանալով դաշնակցությունից թեև դեռ չէր մտել բոլշևիկյան կուսակցության շարքերը, բայց արդեն կանգնել էր սոցիալ-դեմոկրատական դիրքերում։ Նա գտնում էր, որ արևմտահայության ազատագրումը կարող է կատարվել մի կողմից ցարիզմի տապալման հետևանքով, մյուս կողմից՝ Թուրքիայում ճնշված ժողովուրդների համատեղ պայքարի հաղթանակի շնորհիվ։ Նա նշում էր, որ բացի թուրք ժողովրդի սթափումից, կա նաև մի ուրիշ հանգամանք, որը «անհամեմատ ավելի մեծ նշանակություն ունի տաճկահայերի ազատագրման համար և որը պետք է ստիպե դեռատիից տաճկահայերին թողնել իրենց նախկին արկածախնդիր քաղաքականությունը։ Դա Ռուսաստանի մեծ հեղափոխությունն է, որ գալիս է

1 Ստ. Շահումյան, նշվ. հ. 1, էջ 225։

իր խոսքն ասելու և Տաճկաստանի վերաբերմամբ»[1]։ «Այդ հեղաշրջությունը,— շարունակում էր նա,— ճակատագրորեն նույն ազդեցությունը պիտի ունենա հարևան պետությունների վրա (որոնց թվում Թուրքիայի և Պարսկաստանի), ինչ որ ունեցավ իր ժամանակին ֆրանսիական մեծ հեղափոխությունը Արևմտյան Եվրոպայի պետությունների վրա։ Ահա թե ինչու Ռուսաստանի ազատագրումը նշանակում է և Տաճկահայաստանի ազատագրումը»[2]։

Դատապարտելով դաշնակցականների ու հնչակյանների գործելակերպը Արևմտյան Հայաստանում, Ա. Ամիրյանը ջերմությամբ էր խոսում արևմտահայ աշխատավորների ազգային-ազատագրական շարժումների մասին, բարձր գնահատում նրանց աննկուն գործիչներին ու խիզախ ղեկավարներին։ Անդրանիկին, օրինակ, նա համարում էր «տաճկահայ ժողովրդի տենչանքների մաքուր մարմնացում», «ազատության մի պարզ մարտիկ», որի «անկեղծության առաջ մենք կարող ենք միայն խոնարհվիլ»[3]։

Այդպիսով, հայ մարքսիստները, հենվելով Ֆ. Էնգելսի վերոհիշյալ դրույթից, արևմտահայության ազատագրությունը տեսնում էին ցարիզմի տապալման մեջ։ Սակայն, Ֆ. Էնգելսի այդ մարգարեությունը չիրագործվեց. ռուսական ցարը տապալվեց, իսկ արևմտահայերը բնաջնջվեցին, նրանց հայրենիքն անցավ Թուրքերի ձեռքը։ Ինչ վերաբերում է Արևելյան Հայաստանին, ապա այն բռկտվեց։ Նրա մի շարք տարածություններ բաժին դարձան հարևաններին, իսկ բնակիչները ընկան նրանց լծի տակ կամ հարկադրված եղան դեգերել օտար երկինքների տակ։

Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն («Սպեցիֆիկներ»)

«Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը» առաջացավ 1903 թ. սեպտեմբերին Ժնևում։ Նրա հիմնադիրը Ե. Պալյանն էր, որը համակրելով հրեական բունդին և դեմ լինելով ՌՍԴԲԿ-ի մեջ հայ սոցիալ-դեմոկրատների

1 Ա. Մռավյան, Դաշնակցության կրիզիսը, Վիեննա, 1907, էջ 39։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, էջ 32։

ձուլմանը, իր շուրջը համախմբեց մի քանի նախկին դաշնակցական ուսանողների և իր «Հանդես» խումբը վերակոչեց «Հայ սոցիալ-դեմոկրատիա»։ 1904 թ. նա հրատարակեց նորաստեղծ կազմակերպության օրգանը՝ «Բանվոր» ամսագիրը։ Շուտով այդ կազմակերպությանը միացան դաշնակցությունից հեռացած մի քանի բունդական տիպի սոցիալիստներ, որոնք 1903 թ. Բաքվում հռչակեցին իրենց «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը»։ Նրանք երկուսն էլ սկսեցին գործել համատեղ՝ «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն» անունով[1]։

Քիչ անց Ե. Պալյանը տարաձայնությունների պատճառով հեռացավ կազմակերպությունից, իսկ նրա հիմնադրած «Բանվոր» ամսագիրը դադարեց հրատարակվելուց։ Կազմակերպությունն անցավ Ալեքսանդր Ծատուրյանի (Ալ. Ռուբենի), Ղազար Տեր-Ղազարյանի, Նարիման Տեր-Ղազարյանի, Տիգրան Խաչանյանի, Բախշի Իշխանյանի, Միքայել Բաղդասարյանի, Գաբրիէլ Կուզիկյանի և Դավիթ Տեր-Դանիելյանի (Դավիթ Անանուն) ձեռքը, որոնք սկսեցին հրատարակել իրենց նոր օրգան «Սոցիալիստ» ամսագիրը[2]։ Այնուհետև «սպեցիֆիկների» կենտրոնը ժնևից տեղափոխվեց Բաքու, ունենալով իր համակիրները Թիֆլիսում, Շուշիում, Էջմիածնում, Բաթումում և այլ տեղերում։ Նրանց հետևից ընթացողները հիմնականում մտավորականներ, ուսանողներ և այլ տարրեր էին, իսկ «բանվորներ շատ քիչ էին»[3]։

Վ. Ի. Լենինի հայ զինակիցները տարբեր առիթներով անդրադարձել են «սպեցիֆիկներին» և տվել նրանց բնութագիրը։ Ստ. Շահումյանը ցույց էր տալիս, թե ինչու են հայ սոցիալ-դեմոկրատ ֆեդերալիստներին անվանում սպեցիֆիկներ. նրանք այնքան հաճախ էին շեշտում հայկական կյանքի յուրահատուկ, սպեցիֆիկ պայմանները, որ բոլշևիկների կողմից անվանվեցին «սպեցիֆիկներ»[4]։

Հայ լենինյանները քննադատելով «սպեցիֆիկների» հայացք-

1 Տե՛ս Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 488—489, 507, Մ. Վ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 203—212, Խ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 358—362։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 489։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 507։

4 Տե՛ս Ստ. Շահումյան, երկ, հ. 2, էջ 419։

ները, միաժամանակ բացահայտում էին նրանց սոցիալական բովանդակությունը և նշում, որ նրանց կազմակերպությունը մանրբուրժուական կազմակերպություն է, որ այն միայն անունով է բանվորական, իսկ իրականում հեռու է պրոլետարիատի նպատակներից։ Բոլշևիկները հետևողական պայքար էին տանում «սպեցիֆիկների» մենկուսացման դաղափարախոսության դեմ, ցույց տալիս, որ պրոլետարիատը կարող է կատարել իր պատմական առաքելությունը ոչ թե կոտորակվելով, անջատվելով ու տարանջատվելով, այլ համախմբվելով ու միավորվելով, երկրորդականը պլանի վրա դնելով ազգային առանձնահատկությունների հարցը։

Խորհրդահայ պատմաբանները հանդամանորեն վերլուծել են «սպեցիֆիկների» գործունեությունը, վեր հանել նրանց տեսական ու տակտիկական գործելակերպը, համարելով, որ այն օգտակար չի եղել բանվորական շարժման համար։ Սակայն համարյա չեն անդրադարձել այն հարցին, թե ինչպես էին պատկերում «սպեցիֆիկները» արևմտահայության ազատագրության խնդիրը։

«Սպեցիֆիկները» թեև հայտարարում էին, որ չեն զբաղվելու տաճկահայ դաշտով, բայց, այնուամենայնիվ, լրջորեն զբաղվում էին։ Նրանց ծրագրի նախագծի 13-րդ կետում ասվում էր. «Ինչպես միջազգային սոցիալ-դեմոկրատիան, այնպես էլ սոց. դեմ. բանվորական հայ կազմակերպությունը բողոքում է ինչպես սուլթանական բռնակալ ռեժիմի ճնշումների, դաշնությունների և հալածանքների դեմ, նույնպես էլ եվրոպական բուրժուական բյուրոկրատական պետությունների ցինիկ ու կծծի դիպլոմատիայի դեմ, որ տարիներ շարունակ արնաքամ արին մի բուռ ժողովրդի. նա հայտնում է իր խորին ցավակցությունն ու համակրանքը տանջվող հայ ժողովրդին և ցանկանում է նրա ազատագրության արագ վերահաստման ժամը»[1]։

Սպեցիֆիկներն ապա հայտարարում էին, որ Հայկական հարցը, լինելով միայն արևմտահայերի հարց, ներկա քաղաքական ու միջազգային պայմաններում անկարելի է լուծել։ «Ի նկատի առնելով, որ թուրքահայ խնդիրը մի առաջնակարգ քաղաքական խնդիր է, որը պիտի լուծվի միայն և բացառապես քաղաքական ճանապարհով, որ թուրքահայ դատը միայն դատ է թուրքահայերի համար, ի նկատի առնելով, որ ոչ թուրքիայի հեղափոխական ուժերն են բավարար և ոչ էլ թուրքիայով շահագրգռված եվրոպական մեծ պետությունների դիպլոմատական հարաբերությունները նպաստավոր, որպեսզի վճռվի «Արևվելյան խնդրի» այդ բարդ հատվածը,— խորհրդաժողովը գտնում է մինչև աննախատեսելի ապագա, անհավանական և անկարելի թուրքահայ խնդրի բարենպաստ լուծումը»[1]։

Այնուամենայնիվ «սպեցիֆիկները» ուղիներ էին որոնում Հայկական հարցի լուծման համար։ 1904 թ. Ե. Պալյանը հայտարարում էր, որ հայ պրոլետարիատը Թուրքիայում թեև դեռ հետամնաց է, անտարբեր է դասակարգային ու ազգային շահերի հանդեպ, «թուրքական աննորմալ բարբարոսության հանդեպ», բայց պիտի արթնանա, կազմակերպվի, «ունենա իր հայեցակետը բոլոր հասարակական խնդիրների և գործերի մասին, պիտի գիտակցե, պիտի պաշտպանե իր պատմական-դասակարգային շահերն ու դերը, պիտի որոշե իր տնտեսական-հասարակական և կուլտուրական հարաբերությունները դեպի մյուս դասակարգերն ու պետությունը, և իր երկրի պայմանների համաձայն պիտի կազմակերպվի իբրև տնտեսական հիմքերի վրա կեցած քաղաքական կուվի կուսակցություն, սահմանելով իր կազմակերպչական դիրքը թե երկրի մեջ այլալեզու պրոլետարիատի և թե երկրից դուրս այլ երկրների հայ պրոլետարիատի վերաբերմամբ»[2]։ Պրոլետարիատը պիտի «առաջանա իր հարատև կուվի մեջ մինչև հեղափոխության դաշտն, ուր և... պիտի սխրագործե հանուն մարդկային փրկության»[3]։ Այդպիսով, Ե. Պալյանը արևմտահայության փրկությունը կապում էր պրոլետարիատի հետ, չմոռանալով շեշտել առաջին հերթին նրա ազգային կեցվածքը, ազգային շահերն ու խնդիրները։

1906 թ. Եսայեմը (Դարեգին Կոզիկյան) հայտարարում էր. «Կամ տաճկահայերը պետք է հաշտվեին իրենց դրության հետ և մատնվեին հավիտենական թշվառության ու չքավորության, և կամ պիտի աշխատեին խորտակել նրանց սեղմող նեղ շրջա-

1 *Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ծրագրի նախագիծը, կազմակերպչական սխեման և կանոնադրությունը, 1905, էջ 31* (հրատարակման վայրը չի նշված)։

2 «Բանվոր», 1904, № 1—2, էջ 14։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 15։

նակը, ջարդ ու փշուր անել նրանց ոտքերի կաշկանդող շղթաները, և այդպիսով ձեռք բերել շարժվելու, գործելու կարելիություն»[1]։ Բայց միևնույն ժամանակ նա գտնում էր, որ արևմտահայերն իրենց սեփական ուժերով չեն կարող ձեռք բերել փրկություն։ Այդ պատճառով էլ նրանք «իրենց հույսը պետք է դնեին արտաքին օգնության վրա, գլխավորապես եվրոպական «քրիստոնյա» պետությունների միջամտության և... ռուսահայերի աջակցության վրա»[2]։

Ինչպես տեսնում ենք «սպեցիֆիկները» արևմտահայության ազատագրության հարցը նույնպես կապում էին արտաքին գործոնների հետ։

Բայց շուտով նրանք հրաժարվում են և այդ դաղափարից ու արևմտահայության փրկությունը հանձնում միայն արևմտահայերի ձեռքը։ Նրանք կոչ էին անում. «Տաճկահայեր, քանի ուշ չէ, առեք ձեր դատը ձեր ձեռքը. ապա թե ոչ կմնաք անպաշտպան տաճիկ բարբարոս կառավարության գազանությունների դիմաց»[3]։

1907 թ. Թիֆլիսում Բախշի Իշխանյանը լույս ընծայեց «Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան» խորագրով մի գրքույկ, որի մեջ փորձում էր ցույց տալ արևմտահայության ազատագրման ուղին։ Նա նշում էր, որ ինչպես հույների ու սլավոնների հարցը, այնպես էլ «Հայկական հարցը... ունի լուծման միևնույն, եզակի ու բացառիկ մեթոդը,— դա եվրոպական վեց մեծ պետությունների կամ նրանց մեծագույն մասի, կամ առնվազն նրանցից երեքի, սակայն ամենաազդեցիկների հավաքական միջամտությունն է դիվանագիտական միևնույն համերաշխ, անհակասական պլատֆորմի վրա»[4]։ Բ. Իշխանյանը գտնում էր, որ արևմտահայերի հարցը կարող են լուծել նրանք, ովքեր սուլթան Համիդի հետ համերաշխված պահում են բազմաթիվ ժողովուրդների, այդ թվում նաև արևմտահայերին սարկության ու թշվառության մեջ, նրանք, ովքեր պահում են այդ վիճակում նաև իրենց երկրների աշխատավորներին։

1 «Զայն», 1906, № 1, էջ 4։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, № 3, էջ 34։

4 Բ. Իշխանյան, Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907, էջ 14։

Իր հարցադրմանը, թե ե՞րբ կարող է տեղի ունենալ տերությունների միջամտությունը Հայկական հարցում, Բ. Իշխանյանն ինքն էլ պատասխանում էր. «Միայն այն դեպքում, եթե մեծ տերություններն ունենան տնտեսական և քաղաքական բեղ ինտերեսներ այն միջավայրում, ուր հարկադրական պահանջ կա սահմանելու մանր ազգերի քաղաքական ճակատագիրը»[1]։ Ապա զանազան վերլուծումներից հետո եզրափակում էր, որ տերություններից ոչ մեկը «չունի որևէ էական ինտերես՝ ձեռներեց լինելու Հայկական հարցի լուծման, նպաստելու առանձնապես խոստացված ռեֆորմների գործադրությունը։ Եվ եթե մի կամ մյուս պետությունը որոշ պայմաններում արտահայտել է ուժ ու ցանկություն առաջ ընթանալու հօգուտ հայերի, ապա այդ եղել է ոչ թե ի սեր հայերի, ոչ թե «անկեղծ» մոտիվներից դրդված, այլ... «նյութապաշտական մոտիվներից «ստամոքսի զուտիկ պահանջներից» շահադրդված»[2]։

Եվ այդպես, Բ. Իշխանյանը, հերքելով ինքն իրեն, հայկական դատի լուծման գործում հրաժարվում է տերությունների օգնության և աջակցության իր իսկ գաղափարից։

Սակայն «սպեցիֆիկների» տեսաբանը հարցը բաց չի թողնում, շարունակելով իր դեդերումները, նրա լուծումը ի վերջո, կապում է հակասուլթանական համաթուրքական շարժման հետ, մի դրույթ, որ բավական լայնորեն տարածված էր 1908 թ. հեղաշրջման նախօրյակին։ Բ. Իշխանյանը գրում էր. «Թյուրքահայ ժողովուրդը պետք է ինքն իրան կազմակերպի, պրոպագանդայով և ագիտացիայով հասունացնե ազատագրական գաղափարը մասսայական լայն խավերում, զարգացնելով իր մեջ համերաշխության խոր գիտակցություն շրջապատի ժողովրդի հետ... Այո, հասունանալ, ձեռք բերել գիտակցություն և պատրաստություն մինչև այն աստիճան, որ ապագա համաթյուրքական հուզումների և ապստամբության օրերին թյուրքահայ ժողովուրդը դառնա ազատագրության առաջնակարգ ուժերից մեկը...

Թյուրքահայ հարցը թյուրքահայերի համար, առանց աչք դնելու դրսի հայերի օժանդակության վրա, թյուրքահայ գործի ղեկավարությունը թյուրքահայերի ձեռքում, առանց ենթարկվելու կովկասյան ռոմանտիկ հեղափոխականների դիրեկտիվ-

1 Տե՛ս Բ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 17։

2 Նույն տեղը, էջ 82։

ներին, հրամաններին, Թուրքահայերի ապագան որոնել համաթուրքական ապագայի ծոցում, առանց խորվելու ուտոպիական ծրագրերից և անբովանդակ պատրանքներից։ Ահա մեր ասելիքը»[1]։

Բայց հեղինակը չէր նշում, թե ովքե՞ր, հասարակական ի՞նչ ուժեր պիտի ղեկավարեին արևմտահայ շարժումները։ Համենայն դեպս նա դեմ էր դաշնակցական ու հնչակյան կուսակցություններին, գտնելով, որ նրանց կողմից ղեկավարվող ելույթները ոչ միայն անօգտակար են, այլև իրենց հետ բերում են «խիստ բացասական հետևանքներ թյուրքահայ ժողովրդի գլխին»[2]։

«Սպեցիֆիկները» համաթուրքական շարժման հաղթանակի դեպքում չէին արտահայտվում Արևմտյան Հայաստանի անկախության օգտին։ Նրանք գտնում էին, թե հայկական անկախության գաղափարը նախ՝ բուրժուական գաղափար է, երկրորդ՝ այն «որքան իրականալի է՝ դա «ալլահը» միայն գիտե», երրորդ՝ «հայ ժողովուրդը ամբողջությամբ վերցրած, տաճկահայերի անկախությունից ոչ մի օգուտ չունի»[3]։

Անդրադառնալով արևմտահայ գյուղացիության հարցին, «սպեցիֆիկները» արձանագրում էին նրա ծանր վիճակը, բնակչության զանգվածային հողազրկման պրոցեսը և արտագաղթը։ Սակայն սխալաբար գտնում էին, որ այդ հողազրկման հետևանքով առաջանում է գյուղական պրոլետարիատ, որն ամենուրեք ստվարանում է «մարաբա անունով»[4]։ Զրկված հողից ու արտադրական գործիքներից, նշում էր Ե. Պալյանը, բնակչության այդ զանգվածը «վաճառում է իր աշխատանքի ուժը հողատերերին, վարձ ստանալով, ոչ թե հնչուն դրամ, այլ բնական բերքեր»[5]։ Այնուհետև «սպեցիֆիկները» գտնում էին, որ արևմտահայ պրոլետարիատը, համալրելով իր շարքերը մարաբաներով, դառնում է նկատելի ուժ և կարող է որոշակի խոսք ասել հասարակական-քաղաքական ասպարեզում։ Նրանք չէին հասկանում, որ մարաբաների ճնշող մեծամասնությունը ոչ թե գյուղական պրոլետարներ էին, այլ ֆեոդալական կախյալ գյուղացիներ, որոնք աղաների ու բեյերի կողմից վերստին ամրակցվում էին հողին և շահագործվում միջնադարյան վայրագ եղանակներով։ «Սպեցիֆիկները» ճիշտ չէին հասկանում արևմտահայ գյուղում կատարվող իրադարձությունները։

Այդպիսով, «սպեցիֆիկները» արևմտահայերի ազատագրումը նախ անկարելի էին համարում, ապա փորձում էին կապել նրանց ներքին ուժերի, այնուհետև իմպերիալիստական տերությունների նվաճողական քաղաքականության հետ, բայց համոզվելով, որ դրանք ապարդյուն են, կապում էին համաթուրքական ժողովրդական շարժման հետ։ Ընդ որում, նրանք գտնում էին, որ այդ շարժման հաղթանակի դեպքում հայությունը պետք է ձեռք բերի ոչ թե անկախություն, այլ օսմանյան երկրի կազմում կուլտուր-ազգային ինքնավարություն։ Բայց նրանց ցանկացած այդ ինքնավարությունը հարցի բուրժուական լուծում էր։

Ընդհանրապես պետք է նկատել, որ ինչպես հայ սոցիալ-դեմոկրատները՝ բոլշևիկները և մենշևիկները, այնպես էլ սպեցիֆիկները, կրկնելով իրենց ռուս և արևմտաեվրոպական ուսուցիչներին, հասարակական-քաղաքական հարցերին, ազգային-ազատագրական խնդիրներին մոտենում էին զուտ սոցիալական պայքարի, հատկապես դասակարգային կռվի տեսանկյունից, շատ հաճախ անտեսելով համամարդկային արժեքները։

---

1 «Երկրի ձայն», 1907, № 25, էջ 13։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս «Բանվոր», 1904, № 1—2, էջ 29։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 12։
5 Տե՛ս նույն տեղը, էջ 13։

Գլուխ երեսուներկուերորդ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1908 Թ. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

1908 թ. հուլիսի 3-ին երիտթուրքերը զորքի օգնությամբ ապստամբվեցին և ներխուժելով մայրաքաղաք, հարկադրեցին սուլթան Աբդուլ Համիդ II-ին վերահրապարակել ու գործադրել Միդհատի 1876 թ. սահմանադրությունը[1]։ Բռնակալը հարկադրված կատարեց նրանց կամքը և հուլիսի 24 (11)-ին ստորագրեց պառլամենտի գումարման հրամանագիրը։ Քաղաքական այդ իրադարձությունը ոմանք համարում են հեղափոխություն, ոմանք՝ հեղաշրջում, իսկ ոմանք էլ՝ տեղափոխություն։ Այդ բոլոր բնութագրումների մեջ կա ճշմարտություն. թուրքական բռնապետությունը, այնուամենայնիվ, դառնում էր սահմանադրական միապետություն, բայց փոփոխությունը կատարվում էր վերնաշերտում, փոխվում էին կառավարիչները, իսկ արտադրական հին հարաբերությունները մնում էին անխախտ։

Սահմանադրության հռչակումից անմիջապես հետո իրար հանդիպեցին տասնամյակներ շարունակ միմյանց դեմ պայքարած Աբդուլ Համիդն ու երիտթուրքերի պարագլուխները։ Բայց այժմ նրանց հոգսը ոչ թե այդ պայքարի շարունակումն էր, այլ իրար հետ մերձեցումը, բարեկամացումը, դաշնակցումն ու փոխադարձ օգնությունը։ Սուլթանն ուզում էր մնալ իր դիրքում, հնարավորության դեպքում նաև վերականգնել իր մենիշխանությունը, իսկ երիտթուրքերը դեռ չէին ցանկանում տապալել նրան, կամենալով օգտագործել նրան իրենց քաղաքական նպատակների համար։ Բայց որ ավելի կարևոր էր՝ երկու կողմերն էլ վախենում էին ժողովրդական շարժումների ծավալումից, երկուսն էլ ուզում էին պայքարել այդ շարժումների դեմ, զսպել ու խեղդել դրանք։

Սակայն ժողովրդի անունից երկար տարիներ խոսող և իրենց դիրքերը երկրում ամրապնդելու համար ժողովրդի պաշտպանության կարիքն զգացող երիտթուրքերը դեռ չէին կարող անհապաղ շուռ գալ նրա դեմ։ Ընդհակառակը՝ նրանք պիտի շարունակեին քաղաքական դեմագոգիան, նույնիսկ կատարեին որոշ քայլեր, որ հավատացնեին, թե վերակառուցելու են երկիրը, առաջ են տանելու հասարակական հարաբերությունները, բարելավելու են կյանքը։ Այդ իրավիճակում առաջացավ մի տնասակ երկիշխանություն. կառավարական ապարատը դեռ գրտնվում էր Աբդուլ Համիդի և նրա պաշտոնյաների ձեռքում, իսկ նրանց գործունեությունը հսկում ու «կարգավորում» էին երիտթուրքական կոմիտեները։

Բայց կեղծավորությունը կամ երկերեսանությունը, ինչպես

---

[1] *Մենք անհրաժեշտ ենք համարում վերլուծել այդ սահմանադրության հակիրճ բովանդակությունը, որի կենսագործման համար երիտթուրքերը պայքարում էին տասնամյակներ շարունակ։ Այն ազդարարում էր, որ Օսմանյան կայսրության որևէ մասը որևէ կերպ չի կարող անջատվել Օսմանցիների վեհապետը սուլթանն է, որը նաև մահմեդականների խալիֆն է և «պատասխանատվությունից ազատ է» («Ազգ», 1908, օգոստոսի 22, № 17)։ Դա նշանակում է, որ Օսմանյան բռնապետության տակ ընկած բոլոր ժողովուրդները պետք է հավերժ մնան այդ տիրապետության հպատակներ, իսկ բռնակալը անարգել շարունակի իշխել նրանց վրա։*

Սահմանադրությունը իրավունք էր վերապահում սուլթանին նշանակելու և պատելու մինիստրներին և քիչ թե շատ երևելի բոլոր պաշտոնյաներին, ընդհանուր երեսփոխանական ժողով գումարելու, հարկ եղած դեպքում ցրելու ու նորը հրավիրելու, մահապատիժ ստորագրելու կամ այլ որոշում կայացնելու։ Այն նաև իրավունք էր տալիս սուլթանին պայմանագրեր ստորագրելու տերությունների հետ, պատերազմ հայտարարելու նրանց դեմ կամ հաշտություն կնքելու. դա նշանակում է, որ երկրում պահպանվում էր բռնակալի մհանձնյա իշխանությունը։

Միդհատյան սահմանադրությունը կայսրության բոլոր բնակիչներին համարում էր օսմանցիներ, այսինքն՝ նա բոլորին կամենում էր ձուլել թուրքերի հետ, թուրքացնել։ Սահմանադրությունը հայտարարում էր. «Անհատական ազատությունը բացարձակապես անբռնաբարելի է» (նույն տեղը)։ Բայց ինչ անձնական ազատության մասին կարող էր խոսք լինել, երբ սուլթանին տրվում էր անսահման իրավունք։ Սահմանադրությունը թույլ էր տալիս կրոնների գոյություն, սակայն պետական կրոնը համարում էր մահմեդականությունը։ Դա նշանակում է, որ նա մահմեդականությունը գերազանցում էր, իսկ մյուսներին՝ ստորադասում։ Սահմանադրությունը հայտարարում էր, որ «համոզմունքն ազատ է», բայց անմիջապես ավելացնում՝ «օրինաց գծած սահման-

նշում է Ֆ. Էնգելսը, չի կարող երկար գոյատևել, քանի որ նրանում թաքնված հակասությունը պետք է երևան գա[1]։ Ժամանակ հանդուրժելով երիտթուրքերի հսկողությունը իր վարչակարգին, սուլթանը վերջապես որոշեց ազատվել նրանցից։ Եվ ահա 1909 թ. մարտի 31-ին կատարեց նոտաշրջում։ Համիդից ահաբեկված երիտթուրքերը փախան Կոստանդնուպոլսից։ Սակայն շուրջ երկու շաբաթ անց զորքով նորից վերադարձան մայրաքաղաք, տապալեցին բռնակալին ու աքսորեցին և նրա փոխարեն սուլթան նշանակեցին Թուլամիա ու կամազուրկ Մեհմեդ Ռեշադին։ Այժմ արդեն իշխանությունն անցավ երիտթուրքերի ձեռքը, որոնք, վերջ դնելով երկիշխանությանը, սկսեցին իրենք կառավարել երկիրը։ 1912 թ. հուլիսին «Հյուրիեթ վե Իթիլաֆ» կուսակցությունը, օգտագործելով արիպոլիտանական պատերազմում (1911—1912) երիտթուրքերի պարտությունները, կազմակերպեց հեղաշրջում և տապալեց նրանց։ Սակայն շուրջ վեց ամիս անց՝ 1913 թ. հունվարի 23-ին երիտթուրքերը, օգտվելով իթիլաֆիստների անհաջողություններից բալկանյան պատերազմում, կատարեցին նոր հեղաշրջում և իշխանությունը հետ վերցրին նրանցից։ 1914 թ. երիտթուրքական կամ «Իթթիհատ վե Թերաքի» կուսակցության պարագլուխները՝ Էնվեր, Թալեաթ և Ջեմալ փաշաները կազմեցին եռապետություն (տրիումվիրատ) և իշխանությունը կենտրոնացրին իրենց ձեռքը։ Օսմանյան պաղլամենտը փաստորեն կորցրեց իր նշանակությունը, իսկ 70-ամյա սուլթան Մեհմեդ V-ը վերածվեց խրտվիլակի։

Միհդատյան սահմանադրության հռչակումից հետո երիտ-

ներուն մեջ» (նույն տեղը)։ Ուրեմն այդ ազատությունը խիստ սահմանափակ էր։ Այն ազատ էր հռչակում նաև ուսումը, բայց դնում էր պետության հսկողության տակ։ Դա նշանակում էր, որ ուսումը պետք է տարվեր ըստ պետության ցանկությունների։

Սահմանադրությունը բոլոր օսմանցիներին հավասար էր համարում օրէնքի առաջ, բայց միաժամանակ նշում էր, որ պաշտոնները տրվում են թուրքերին իմացողներին։ Փաստորեն նրա հռչակած հավասարությունը ձևական էր։

Սահմանադրությունը հայտարարում էր, որ սեփականությունն անձեռնմխելի է։ Այդպիսով նա պահպանում էր տիրապետող դասակարգի ունեցվածքը, հավերժացնելով բնազուրկների աղքատությունն ու թշվառությունը։

Սահմանադրությունը արգելում էր ապօրինի ձանձումները, տարապար-

[1] Տե՛ս Маркс К. и Энгельс Ф., Соч., т. II, М-Л., 1929, էջ 394։

թուրքերը, ժողովրդի շրջանում հեղինակություն ձեռք բերելու և իրենց դիրքերն ամրապնդելու համար, անցկացրին որոշ բարեփոխություններ։ Նրանք այդ քաղաքականությունն առժամանակ

հայկները, տաճկահպատները։ Բայց չէր սահմանում որևէ պատիժ դրանց գործադրողների հանդեպ։ Այն նաև հայտարարում էր, որ տուրքերը սահմանվում են ըստ կարողության։ Բայց նկատի ուներ ոչ թե պրոգրեսիվ հարկը, այլ հարկաչափի տարբերակը («Ազգ», 1908, օգոստոսի 22, № 17)։ Միաժամանակ նշվում էր, որ պետությունը կարող է ցանկության դեպքում բարձրացնել ու իջեցնել հարկերը, այսինքն՝ հարկային գործը ենթարկում էր պետության կամայականությանը։

Սահմանադրությունը ստեղծում էր Օսմանյան պառլամենտ՝ բաղկացած երկու պալատներից՝ ծերակուտից ու երեսփոխանական ժողովից։ Նրանց 1/3-ը նշանակվում է սուլթանի, իսկ 2/3-ը ընտրվում է բնակչության կողմից։ Ընդորում, ընտրություններին չեն կարող մասնակցել օտարահպատակները, թուրքերեն չիմացողները, 30-ից ցածր տարիք ունեցողները, սպասավորները և ընչազուրկները։ Իսկ ընտրվողները պետք է ունենան քիչ քիչ շատ հասարակական ճանաչում և 40-ից ոչ պակաս տարիք։ Պառլամենտի որոշումները անպայման պետք է արժանանային սուլթանի հավանությանը։ Այդպիսով սահմանադրությունը ստեղծում էր խիստ սահմանափակ բուրժուական հաստատություն, դնելով այն ամբողջապես բռնակալի իշխանության տակ։

Սահմանադրությունը պահպանում էր կրոնական (շարիաթ) և օրինական (նիզամի) դատարանները, որոնք կարող էին լինել ինչպես բաց, այնպես էլ փակ նիստերով։ Սակայն չէր նշում, թե ինչ լեզվով պետք է կատարվեին նիստերը։ Միայն ասվում էր, որ ամեն մի անհատ կարող է պաշտպանել իր իրավունքները «որևէ միջոցով» («Ազգ», 1908, օգոստոսի 29, № 18)։ Այլ կերպ ասած՝ դատապարտյալը ամբողջապես մատնվում էր բախտի կամքին։

Սահմանադրությունը նախատեսում էր վարչական որոշ ապակենտրոնացում, այսինքն՝ նահանգներն ու գավառները ունենալու էին տեղական որոշ իրավունքներ՝ հանապարհաշինարարական, արդյունագործության, կուլտուրական և այլ հարցերում։ Ապա նշում էր, որ «ամեն ազգի հատարակություն իր ժողովը պիտի ունենա», որը կառաջարկի կամ կլուծի իր խնդիրները («Ազգ», 1908, սեպտեմբերի 12, № 20)։ Բայց երկչուղելով հետևանքներից, ավելացնում էր, որ նահանգների ու գավառների տեղական գործունեության համար պետք է մշակել լրացուցիչ կանոններ։

Վերջում նշվում էր, որ եթե կայսրության որևէ մասում խռովություն ծագի, կառավարությունը կարող է հայտարարել այն պաշարման մեջ ու ճնշել, մեղավորներին նույնիսկ արտաքսել երկրից (նույն տեղում)։

Ահա սա էր միհդատյան սահմանադրության էությունը։ Դժվար չէ եզրակացնել, որ այն պահպանում էր սուլթանական միապետությունը, Օսմանյան կայսրության ամբողջականությունը և թուրքական տիրակալների գերշապարի տակ բնված ժողովուրդների ստրկությունը։ Այդ սահմանադրության մեջ մատնանշված բուրժուական որոշ ձեռնարկումներ խիստ սահմանափակ ու պայման էին և չէին կարող փոխել թուրքական բռնապետության բնույթը։

շարունակեցին նաև Աբդուլ Համիդի տապալումից ու արտաքսումից հետո[1]։ Բայց շուտով իթթիհադականները հրաժարվեցին այդ ձեռնարկումներից և շարունակեցին ու ավելի սաստկացրին սուլթան Համիդի ազգային ու հողային քաղաքականությունը։ Արևմտյան Հայաստանում նրանք չստեղծեցին անձի ու գույքի ապահովություն, չթեթևացրին հարկային բեռը, չվերացրին գյուղացիների կախումը աղաներից ու բեգերից, չվերադարձրին նրանցից բռնագրավված հողերը, ընդհակառակը, հովանավորելով ֆեոդալական վերնաշերտերին, ավելի ամրապնդեցին նրանց տիրապետությունը գյուղում։ Երիտթուրքերը ռեակցիոն քաղաքականություն վարեցին նաև ազգային հարցում։ Նրանք ոչ միայն չչնորհեցին օսմանյան տիրապետության տակ ընկած ժողովուրդներին ինքնակառավարման իրավունքներ, այլև ավելի ոտնահարեցին նրանց շահերը, ձգտելով ձուլել ու թուրքացնել նրանց։ Իթթիհադի այդ քաղաքականությունը հանգամանորեն մենք վերլուծել ենք մեր աշխատություններից մեկում[2]։ Այժմ տեսնենք, թե ինչ դիրք գրավեցին հայ հասարակական-քաղաքական շրջանները երիտթուրքական հեղաշրջումից հետո, ինչպես էին նրանք կամենում լուծել արևմտահայության ազգային ու սոցիալական հարցերը։

Պահպանողականներ[3]

Կարդալով հրատարակված միդհատյան սահմանադրությունը, Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանը պատրաստում էր նրախտաձիտական ուղերձ հղել սուլթանին[1], սակայն բազմությունը ներխուժեց պատրիարքարան և ստիպեց նրան հրաժարվել աթոռից։ Դա տարիներ շարունակ հայ զանգվածների մեջ կուտակված ցասման արտահայտությունն էր հայկեր բռնակալի թևի տակ ավելի քան տասը տարի գործող պատրիարքի դեմ։ Եվ Մ.Օրմանյանը հարկադրված կատարեց հասարակության պահանջը, բռնելով իր տան ճամփան «զլխահակ ու խոժոռադեմ»[2]։

Շուտով պատրիարքի տեղապահ կարգվեց Իզմիրի հայոց հոգևոր առաջնորդ եղիշե եպիսկոպոս Դուրյանը (նշանավոր բանաստեղծ Պ. Դուրյանի փոքր եղբայրը)։ Հուլիսի 23 (օգոստոսի 5)-ին այսինքն՝ սահմանադրության հրատարակումից 12 օր անց, նա հանդես եկավ քարոզով, որի մեջ ասում էր, թե Օսմանյան կայսրությունում արդեն հռչակված է խոսքի, մամուլի ու խղճի ազատություն, պատվի, գույքի ու անձի ապահովություն և տուրք տալով օրերին, այդ ամենը վերագրում էր սուլթանին։ «Այս բարոյական սկզբունքները,— ասում էր նա,— ընդունենք իր երկրին ճշմարտապես բարերար հանդիսացող լուսամիտ սուլթան Համիդ կայսրը, որպեսզի միևնույն դրոշին ներքև հայ և տաճիկ եղբայրներ իրարու հետ աղջազուրվին»[3]։

Այնուհետև պատրիարքի տեղապահը հորդորում էր հայերին՝ չհիշել անցյալի դառնությունները և հատուցում չպահանջել, անհրաժեշտ է խուսափել «թևեթև ընթացքներե», քանզի «խաղաղության մեջ է մեր փրկությունը։ Մեր միության և սիրո մեջ է մեր առաջադիմությունը»։ Նա հարկ էր համարում նշել, որ մամուլին թևև ազատություն է տրված, բայց խմբագիրները չպետք է հրապարակեն ժողովրդին գրգռող նյութեր։ «Ազդին գավակները պետք է չափ մը դնեն իրենց զգացումներուն և շատ պոռթ-

---

1 Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914), Եր., 1979, էջ 20—23։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 11—106։

3 Պահպանողականների զինվոր ու առաջատար ուժը կղերականությունն էր։ XX դ. սկզբին Ռուսաստանում այն ոչ միայն դեռ պահպանվում էր, այլև ավելի կազմակերպվում ու ակտիվանում էր։ 1909 թ. Վ. Ի. Լենինը, վերլուծելով Պետական դումայի վիճալանությունները սինոդի նախահաշվի մասին, գրում էր. «Առաջին հետևությունը, որ առանձնապես ալքի է բնկնում դումայի վիճալանությունները քննության ենթարկելիս, այն է, որ մարտնչող կղերականությունը Ռուսաստանում ոչ միայն ատկա է, այլև բացահայտորեն ուժեղանում է և ավելի ու ավելի կազմակերպվում» (Վ. Ի. Լենին, երկ, հ. 17, էջ 517)։

Դարաւկղրին կղերականությունը լուրջ դեր էր խաղում նաև հայ իրակա-

վում էր նրախտաձիտական ուղերձ հղել սուլթանին[1], սակայն բազմությունը ներխուժեց պատրիարքարան և ստիպեց նրան հրաժարվել աթոռից։ Դա տարիներ շարունակ հայ զանգվածների մեջ կուտակված ցասման արտահայտությունն էր հայկեր բռնակալի թևի տակ ավելի քան տասը տարի գործող պատրիարքի դեմ։ Եվ Մ.Օրմանյանը հարկադրված կատարեց հասարակության պահանջը, բռնելով իր տան ճամփան «զլխահակ ու խոժոռադեմ»[2]։

Շուտով պատրիարքի տեղապահ կարգվեց Իզմիրի հայոց հոգևոր առաջնորդ եղիշե եպիսկոպոս Դուրյանը (նշանավոր բանաստեղծ Պ. Դուրյանի փոքր եղբայրը)։ Հուլիսի 23 (օգոստոսի 5)-ին այսինքն՝ սահմանադրության հրատարակումից 12 օր անց, նա հանդես եկավ քարոզով, որի մեջ ասում էր, թե Օսմանյան կայսրությունում արդեն հռչակված է խոսքի, մամուլի ու խղճի ազատություն, պատվի, գույքի ու անձի ապահովություն և տուրք տալով օրերին, այդ ամենը վերագրում էր սուլթանին։ «Այս բարոյական սկզբունքները,— ասում էր նա,— ընդունենք իր երկրին ճշմարտապես բարերար հանդիսացող լուսամիտ սուլթան Համիդ կայսրը, որպեսզի միևնույն դրոշին ներքև հայ և տաճիկ եղբայրներ իրարու հետ աղջազուրվին»[3]։

Այնուհետև պատրիարքի տեղապահը հորդորում էր հայերին՝ չհիշել անցյալի դառնությունները և հատուցում չպահանջել, անհրաժեշտ է խուսափել «թևեթև ընթացքներե», քանզի «խաղաղության մեջ է մեր փրկությունը։ Մեր միության և սիրո մեջ է մեր առաջադիմությունը»։ Նա հարկ էր համարում նշել, որ մամուլին թևև ազատություն է տրված, բայց խմբագիրները չպետք է հրապարակեն ժողովրդին գրգռող նյութեր։ «Ազդին գավակները պետք է չափ մը դնեն իրենց զգացումներուն և շատ պոռթ-

---

նության մեջ։ Ստ. Շահումյանը 1914 թ. գրել է. «Մեր ամբողջ հասարակական կյանքը կապած է տերտերների փարաջաներից, ամեն ինչ պատվում է էջմիածնի շուրջը» (Ստ. Շահումյան, երկ, հ. 2, էջ 412)։ Եվ ապա չափազանցելով շարունակում էր. «... չի կարելի ժխտել, որ հայերի հեղափոխության, ագիտացիայի և տիրացության մեջ մեծ դեր է խաղում էջմիածինը...» (նույն տեղը, էջ 413)։ Դարասկզբին հոգևորականությունը, իհարկե, ակտիվորեն գործում էր նաև արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում։

1 Տե՛ս «Արևելք», 1908, հուլիսի 14, № 6848։

2 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 16, № 6850։

3 Նույն տեղը, հուլիսի 23, № 6855։

կալնուն չափ ալ՝ զգան սրտի և մտքի հանդարտությունը պահելու առավելությունը»[1]։

Պատրիարքի տեղապահը նշում էր, որ երկրում հռչակված է հավասարություն, պետք է քայլել թուրք եղբայրների հետ միասին, դիտենալով, որ «երկրին օրենքը մեկ է. կայսրը մեկ է. երկրին շահերը մեկ են. երկրին ապագան անոնցմե և մեզմե կախում ունի։ Նյութական կողմը պետք չէ, որ փնտրենք, այլ հոգեկանը»[2]։ Վերջում նա կոչ էր անում աղոթել վեհափառ կայսեր համար։

Այդպիսով, եղիշե եպիսկոպոս Դուրյանը, պաշտպանելով հաստատված վարչակարգը, արևմտահայությունից պահանջում էր չծառանել նրա դեմ, ընդհակառակը՝ ընդունել այն ու ենթարկվել նրան։ Միաժամանակ նա չէր մոռանում իր հոգևոր դոգմանների պրոպագանդումը, հայտարարելով, որ ազգը պահված է եկեղեցու շնորհիվ, փրկված է նրա ուժով և, հետևաբար, պետք է շարունակի ենթարկվել նրան, լսի հոգևոր առաջնորդների խորհուրդները[3]։

Այդ նույն դիրքում կանգնեց դեռ 1890-ական թվականների կեսերին բռնակալի կողմից երուսաղեմ աքսորված, բայց հեղաշրջումից հետո մայրաքաղաք վերադարձած և 1908 թ. սեպտեմբերի 22-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք ընտրված, «երկաթե պատրիարք» անուն հանած Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանը։ Նոյեմբերի սկզբին մայրաքաղաքի մայր եկեղեցում արտասանած իր ճառում նա ասաց. «Հայոց ազգը՝ հավասարության, արդարության և ազատության վրա հիմնյալ Օսմ. սահմանադրական ազգին մեկ տարրը կազմելով՝ ամենքս պիտի աշխատինք մեր քաղաքացիական պարտականությունը կատարելու ընդհանուր երկրին սահմանադրական կազմակերպության համար։ Այն եղբայրակցությունն, որ այս սկզբանց վրա հաստատված է, ամենուս անխախտ սկզբունքը պիտի ըլլա և պիտի աշխատինք երկրին բարեկարգության և առաջադիմության, որովհետև այդ կերպով միայն կարելի է ձեռք բերել երկրին բարիքը, խաղաղությունը և անդորրությունը»[4]։

1 «Արևելք», 1908, հոկտեմբեր 23, № 6855։
2 Նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը։
4 «Ձայն հայրենյաց», 1908, նոյեմբերի 6, № 3։

Այդ հորդորն ավելի հիմնավորելու համար պատրիարքը հարկ համարեց անդրադառնալ պատմական անցյալին և հայությանը վերագրելով գոյություն չունեցող օսմանասիրություն, կոչ արեց շարունակել այն նաև նոր օրերում։ «Հայոց ազգը,— ասում էր նա,— 500 տարիե ի վեր պահած է իր հավատարմությունը առ կայսրությունն Օսմանյան։ Այսօր պարտավոր ենք հավատարիմ մնալու սահմանադրական կառավարությանը»։ Մենք «ամենքս մեր թուրք, հայ-հռոմեական, հայ-բողոքական և մյուս ամեն կարգի հայրենակիցներու հետ պիտի պահենք մեր համերաշխությունը երկրին մեջ»։ Ճառի վերջում պատրիարքը հայտարարեց, որ ինքն ուխտել է «հավատարիմ մնալ Օսմ. սահմանադրական պետությանը և ազգիս»[1]։

Նույն թվի նոյեմբերի 15-ին սուլթանի պալատում տեղի ունեցավ Աբդուլ Համիդի և Մ. Իզմիրլյանի հանդիպումը։ Նրանք, անշուշտ, վաղեմի ծանոթներ էին, դիտեին իրար և խորշում էին միմյանցից։ Բայց նոր օրերը պահանջում էին շողոքորթել իրար։ Պատրիարքը հավաստիացնում էր «իր վեհափառ տիրոջը», որ նրա օգնությամբ ինքը կպահպանի սահմանադրությունը, ազգերի եղբայրությունը, կնպաստի հայրենիքի առաջադիմությանը և ցանկանում էր, որ նախախնամությունը սուլթանի «կայսերական վեհափառությունը Օսմ. կայսրության գահույից վրա անսասան պահե»[2]։

Իսկ Աբդուլ Համիդը գոհունակությամբ ընդունելով Մ. Իզմիրլյանի ցանկությունները և շնորհավորելով նրա պատրիարքությունը, իրեն հատուկ կեղծավորությամբ ասաց. «Շատուն ի վեր հայ և թուրք ժողովրդյան միջև անհամաձայնության ոգի մը կտիրեր, ուրկե ես ինքս չափազանց ազդված էի. այժմ ինքզինքս բարեբախտ կզգամ, որ այդ ամեն վերացան, և եղբայրություն, արդարություն և հավասարություն կտիրեն մեր ժողովրդին ամեն տարրերուն մեջ՝ շնորհիվ սահմանադրության, որուն պահպանման համար մեր կողմեն ևս երդում եղած է հրապարակով»։ Նա նույնիսկ հայտարարեց, թե «ես ու մինիստրներս ոչ մեկ օժանդակություն չպիտի խնայենք հայոց եր-

1 «Ձայն հայրենյաց», 1908, նոյեմբերի 6, № 3։
2 Տե՛ս «Մշակ», 1908, նոյեմբերի 29, № 265։

ջանկութ յան համար, ասոր ապահով կրնաք ըլլալ։ Բարևներս հաղորդեցեք բովանդակ հայ ազգին»[1]։

Եվ իրոք, նա պարգևեց հայերին «երջանկություն». 1909 թ. մարտի 31-ին վերականգնելով իր իշխանությունը, շուրջ երկուերեք շաբաթվա ընթացքում երիտթուրքերի հետ միասին Կիլիկիայում կոտորեց շուրջ 30.000 հայ։ 1909 թ. մայիսի 22-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք ընտրված Եղիշե եպիսկոպոս Դուրյանը (Մ. Իզմիրլյանը նույն թվի փետրվարին արդեն թողել էր պատրիարքի աթոռը՝ Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելու պատճառով) բողոքագիր ներկայացրեց Բ. Դռանը, պահանջելով պատժել հանցագործներին և հատուցել հայոց վնասները։ Բայց արդյունքի չհասավ։ Դառնանալով կառավարության անտարբերությունից, նա հրաժարվեց պատրիարքությունից, սակայն հաշվի առնելով Բ. Դռան խոստումները և կաթողիկոսի հորդորները, նորից վերադարձավ իր պաշտոնին։

Այնուհետև Ե. Դուրյանը շարունակեց իր նախորդի պահպանողական քաղաքականությունը, քարոզելով արևմտահայերին չմրոստանալ կառավարության դեմ, պահել ու պահպանել իրենց դեղեցիկ ապագա նախատեսնող և դեպի երջանկություն տանող սահմանադրությունը։ 1910 թ. մայիսի 10-ին նա քարոզ կարդաց արևմտահայությանը, նշելով, որ եթե մեր ազգային սահմանադրությունը միավորում է հայ ազգը, ապա Օսմանյան սահմանադրությունը՝ կայսրության բոլոր ազգերը։ Հայրենիքի բոլոր զավակները, այդ թվում նաև հայերը, պետք է հավաքվեն «միևնույն դրոշի և միևնույն հովանավորության ներքև։ Ծառայելով ուրեմն ազգին՝ իբրև ազգային անհատներ, պիտի գիտենանք լավ ևս ծառայել Օսմանյան սահմանադրությանը՝ իբրև օսմանցիք՝ վասնզի լավ իմացած մեր շահերը չեն կրնար այլևս տարբերիլ պետության ստույգ շահերեն»[2]։

Պատրիարքն ապա շարունակում էր. «Մեծ է մեր հավատքը Օսմ. սահմանադրական կառավարության ապագայի մասին, որ խոստումնալից է արդեն լուսամիտ կայսեր և արդարասեր կառավարության շնորհիվ»[3]։ Նա հարկ էր համարում նշել, որ երկրում, իհարկե, ամեն ինչ բարեկարգ չի և չի էլ կարող ամեն ինչ

1 «Մշակ», 1908, նոյեմբերի 29, № 265։

2 «Արարատ», 1910, օգոստոս, էջ 693։

3 Նույն տեղը։

միանգամից լինել, բայց հույս էր տածում, որ երիտթուրքական կառավարությունը աստիճանաբար դրանք կկարգավորի։ Իբրև երաշխիք կարող է ծառայել այն, որ տարագիր հայերը արդեն տուն են վերադառնում։ Նրանք դեռ չեն տիրացել իրենց հողերին, բայց նոր իշխանությունների շնորհիվ կտիրանան։ Կլուծվի բռնապետության տարիներից սկիզբ առած հողային հարցը, կբարելավվի հայերի դրությունը։ Եվ «անոնք, որ արցունքով կցանեին՝ հնձեն ցնծությամբ և անոնք, որ լալով կտաննին իրենց սերմերը, ուրախությամբ բերեն իրենց օրանները երջանկության կալին վրա»[1]։ Հայը կապրի «պատվով ու վայելչությամբ», «և ոչ թե ստրկաբար խոնարհվելով այս կամ այն աշիրեթապետի կամքին», այլ կերպ ասած՝ կալվածատիրականաղայական լուծը կվերանա նրա վզից։

Ե. Դուրյանի կարծիքով, սահմանադրության շնորհիվ երկրում զարգանալու են արհեստները, երկրագործությունը, վաճառականությունը, կրթությունը, պիտի վերանան աղքատությունն ու խեղճությունը, ցեղային թշնամությունները, ազգամիջյան կռիվները, ազգային հալածանքները, մի խոսքով այն բոլոր բացասականը, ինչ կար բռնապետության տարիներին։

Ապա նա հորդորում էր հայերին, որ համախմբվեն լուսավորչական եկեղեցու շուրջը, արիաբար պաշտպանեն այն, ինչ իրենցն է, փոխադարձաբար օգնեն ու օժանդակեն իրար, չվհատվեն ու չհուսահան, «հակառակ պարագային՝ երբ տեղի տանք անմիտ երկպառակությանց և անհաճո ընդհարումներուն՝ որոնք աստկապես կցնդին ու կսպառեն մեր բովանդակ ուժերը, կեղծվի մեր հայրերի նկարագիրը, կվտանգվին մեր օրինավոր շահերը և, վերջապես, անողորմաբար կբզկտվին արդեն իսկ տկարացած մեր մարմնին բոլոր անդամները»[2]։

Բայց հակառակ պատրիարքի սպասումների, երիտթուրքական ղեկավարները ոչ միայն չէին բարելավում հայերի վիճակը, այլև ավելի էին վատթարացնում այն։ Եվ Ե. Դուրյանը ի նշան բողոքի այդ քաղաքականության հրաժարվեց պատրիարքությունից։

Պատրիարքական աթոռին բազմեց արքեպիսկոպոս Արշարունին, որը նույնպես վարեց խիստ չափավոր վարքագիծ։ Ազ-

1 «Արարատ», 1910, օգոստոս, էջ 696։

2 Նույն տեղը։

գային հարցում իր նախորդների նման մերժեց անջատողական, անգամ ինքնավարական գաղափարները և առաջարկեց հայ ժողովրդի համար ստեղծել միայն կյանքի ու գույքի ապահովում։ Իսկ հողային հարցում ներկայացրեց համեստ պահանջներ. վերադարձնել հայերին նրանցից հափշտակված հողերը և վճարել այն հողերի համար, որոնք բռնագրավված են պետական տուրքի, երկրագործական բանկի վարկի, մասնավոր պարտքի փոխարեն կամ խլված են կեղծ վկայություններով ու փաստաթղթերով։

Պատրիարքարանը գտնում էր, որ այդ ամենը պետք է կատարել ոչ թե դատարանով, ուր զանազան խարդավանքներով կարող են ոտնահարվել տուժածի իրավունքները, այլ վարչական կարգով։ «Պարտավորեցնել հայերին,— ասվում էր պատրիարքարանի 1911 թ. հուլիսի 7-ին թուրքական կառավարությանը ներկայացրած բողոքագրում,— դիմել դատարանին, տեղականից շրջանայինին և ապա վճռաբեկ ատյանին, ստիպել անանց 5000—6000 կտոր հողերու վերստացման համար մտնել բազմատեսակ դատական ու քաղաքային բարդություններու մեջ, կնշանակե դնգերել զանոնք տասնհինգ տարի շարունակ դատարաններու դռներուն առաջ և բռնադատել զանոնք հրաժարվել իրենց իրավունքներու նա պահանջմանեն»[1]։

Պատրիարքարանի կարծիքով, հայրենիք վերադարձողներին պիտի բաժանել երկու կարգի՝ օսմանյան հպատակությունից կամավոր ու բռնությամբ հրաժարվողների։ Վերջիններիս պետք է ճանաչել օսմանյան քաղաքացիներ և վերադարձնել նրանց կալվածքները։ Հողի դիմաց փող կարելի է առաջարկել միայն այն դեպքում, եթե զավթիչը հողի արժեքից բանկ շենքեր է կառուցել կամ այգիներ գցել։ Երբ հողն ու նրա վրա կառուցած շենքերն ունեն հավասար արժեք, հարցը պետք է լուծել կողմերի համաձայնությամբ, հակառակ դեպքում հողն ու շենքերը պետք է վաճառել և դրամը բաժանել երկուսի միջև[2]։

Պատրիարքարանը մտահոգվում էր նաև ընչազուրկ ու աղքատության մատնված հայերի հարցով և առաջարկում էր կառավարությանը, որ նրանց ապրելու համար մի տարածք տրվի

1 «Դրոշակ», 1913, № 2—3, էջ 36։

2 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, մարտի 18, № 4681։

«իրենց վաղեմի բնակավայրերուն ըստ կարելույն մոտ տեղ մը»[1]։ Նա կտրականորեն դեմ էր հողազրկված հայերին հողի դիմաց փող կամ այլ վայրերում նոր հողամաս տրամադրելուն, գտնելով, որ դա կնշանակի հափշտակիչներին օբյեկտիվորեն արդարացնել, ոտնահարել հայերի իրավունքները և գործնականորեն ապացուցել, որ «նույնիսկ սահմանադրության օրով արդարություն պիտի չըլլա զրկյալներուն... և հայերը պիտի վհատին և ալ քաջություն պիտի չունենան երկիր դառնալով աշխատելու, կամ հոն մնալու»[2]։

Այդպիսով, պատրիարքարանը հողային հարցը ձգտում էր լուծել թուրքական կառավարության միջոցով և նրա օրենքների սահմաններում, առարկելով նրան և հարվածելով աղաների շահերին միայն այնքան, որքան անհրաժեշտ էր դա հայ գյուղացիների հողերի մի մասը վերադարձնելու համար։

Սակայն Իթթիհադի կառավարությունը ոչ միայն չընդառաջեց պատրիարքին, այլև կշտամբեց, հայտարարելով, որ նա կարող է միայն կրոնական և կղերական գործերին խառնվել, իսկ քաղաքական խնդիրներին՝ երբեք։ Համենայն դեպս պատրիարքարանը չնահանջեց և թագրիր թագրիրի հետևից ուղարկելով, պահանջում էր Բ. Դռնից լուծել հայերի ապահովության և հողային հարցերը։ Միայն 1913 թ. նա 176 խնդրագիր ուղարկեց, բայց ոչ մեկին պատասխան չստացավ։

* * *

1908 թ. հետո արևմտահայ հարցի լուծման համար գործնական քայլեր կատարեց Ամենայն հայոց կաթողիկոսը։ 1912 թ. հոկտեմբերի 15-ին Մ. Իզմիրլյանին հաջորդած Գևորգ V-ը Կ. Պոլսի պատրիարքարանի և հատկապես Թիֆլիսի հայ լիբերալ շրջանների խնդրանքով դիմեց Կովկասի փոխարքային, որ նա միջնորդի ցարին «վերցնելու իր հովանու տակ Թուրքահայաստանում ապրող բազմաշարշար հայ ժողովրդին»[3]։ Կովկասի փոխարքան կաթողիկոսի այդ խնդրագիրը հանձնեց Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին, որը, ելնե-

1 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, մարտի 18, № 4681։

2 Տե՛ս նույն տեղը։

3 Տե՛ս «Геноцид армян...», էջ 208։

լով երկրի արտաքին քաղաքականությունից, բարյացակամությամբ վերաբերվեց Գևորգ V-ի խնդրագրին։ Նույն թվի դեկտեմբերին նա իր կառավարության հանձնարարությամբ Բ. Դռան ուշադրությունը հրավիրեց արևմտահայերի ծանր կացության վրա և առաջարկեց միջոցներ ձեռնարկել այն բնականոնելու համար։ Մինչ իթիլաֆիատները զանազան նախագծերով փորձում էին լարախաղել և հարցը քննցնել, Ամենայն Հայոց կաթողիկոսը 1912 թ. դեկտեմբերի 24-ին դիմեց ցարին, խնդրելով Լոնդոնի առաջիկա կոնֆերանսում, ուր քննվելու էր Բալկանյան խնդիրը, լուծել նաև Հայկական հարցը։ «Եթե հայերը հիմա էլ ըրջանցվեն,— գրում էր նա,— ապա դա հավասարազոր կլինի նրանց վերջնական բնաջնջման»[1]։

Դեկտեմբերի 29-ին կաթողիկոսը եգիպտահայ կապիտալիստ Պողոս Նուբար փաշայի ղեկավորությամբ պատվիրակություն ուղարկեց Փարիզ՝ հանձնարարելով ներկայացուցիչներից պահանջել 1878 թ. Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի իրագործումը[2]։

Մինչ կաթողիկոսը Հայկական հարցը տեղափոխում էր միջազգային ոլորտներ, Կ. Պոլսում 1912 թ. նոյեմբերին հայոց Ազգային ժողովին կից ստեղծվեց ութ հոգուց բաղկացած «Անվտանգության հանձնաժողով», որի նախագահ ընտրվեց պատրիարքը (Արշարունին), իսկ անդամներ՝ նախկին պատրիարք Եղիշե եպիսկոպոս Դուրյանը, Գրիգոր վարդապետ Բալակյանը, Գնել վարդապետ Կալեմքարյանը, Ազգային վարչության ներկայացուցիչ Ստեփան Կարայանը և նրա անդամներ Ոսկան Մարտիկյանը, Թուրքական ֆինանսների մինիստրության գլխավոր հրահանգիչ Վահան Փափազյանը և պրոֆ. Տեր-Հակոբյանը։

Հանձնաժողովը սկսեց մշակել հայկական բարենորոգումների նախագծեր և բանակցություններ վարել եվրոպական տերությունների կ. Պոլսի դեսպանների հետ։ 1912 թ. դեկտեմբերի 28-ին Ոսկան Մարտիկյանը հանդիպեց ռուսական դեսպանության առաջին դրագոման (թարգման) Ն. Մանդելշտամի հետ և նրանից իմացավ, որ Ռուսաստանն առայժմ չի կարող բարձրացնել Հայկական հարցը, որովհետև հույս չունի, թե կստանա եռյակ միության պաշտպանությունը։ Չնայած դրան

[1] «Геноцид армян...», с. 222.

[2] Տե՛ս «Մշակ», 1913, հունվարի 29, № 21։

Ն. Մանդելշտամը պահանջեց հայկական բարենորոգումների վերաբերյալ պատրիարքարանի կազմած նախագիծը։ Ոսկան Մարտիկյանը հիմնական գծերով ներկայացրեց այն[1]։

Դեկտեմբերի 24-ին պրոֆ. Տեր-Հակոբյանը այցելեց Կ. Պոլսի անգլիական դեսպանին և հայտնեց, որ հայերի պահանջը հայկական վիլայեթներում կյանքի, պատվի ու գույքի ապահովության ստեղծումն է։ Դեսպանը, սակայն, հեգնեց՝ «ինչպես Անգլիայո՞ւմ»։ Տեր-Հակոբյանը պատասխանեց. «Օ՛ ոչ, մենք դեռ հեռու ենք Անգլիայից, մենք լավագույն դեպքում ցանկանում ենք այն, ինչ ունի վերջին անգլիացին»։ Դեսպանը հայտարարեց. «Ցավոք, անգլիական նավերը չեն կարող լողալ դեպի Վան ու Մուշ»[2]։

«Անվտանգության հանձնաժողովի» անդամները հանդիպեցին նաև Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և այլ երկրների դեսպաններին, որոնք տվեցին վերացական և անհուսալի պատասխաններ[3]։

Ուշագրավ է, որ 1912 թ. վերջերին, երբ Հայկական հարցը վերստին բարձրացվում էր միջազգային ասպարեզ, Պետերբուրգի հայկական խմբակը երկու ներկայացուցիչներ ուղարկեց Կ. Պոլիս, հանձնարարությամբ՝ մոտիկից ուսումնասիրել իրադարձությունները։ Նրանք Հայկական հարցի մասին զրույցներ ունեցան նախկին պատրիարք Մ. Օրմանյանի և Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Գաբրիել Նորատունկյանի հետ։ Օրմանյանը նշեց, որ ամենից լավ կլինի, եթե հայկական վիլայեթներից ստեղծվեր Լիբանանի նման մի վարչական միավոր։ Ապա ավելացրեց, որ Ռուսաստանի միջամտությունը հայկական գործերին մեզ համար ցանկալի ու շահավետ է, նույնիսկ այն դեպքում, եթե նա օկուպացնի Արևմտյան Հայաստանը։ Ռուսաստանում արևելահայերը առաջադիմում ու զարգանում էին, մինչդեռ Թուրքիայում արևմտահայերը, շնորհիվ այն բանի, որ թուրք կառավարությունը չի մտցնում նրանց կյանքում բարելավումներ, զուրկ են այդ հնարավորություններից։ Վերջում նա ասաց, որ Թուրքիայում բարենորոգումներ կմտցվեն

[1] Տե՛ս ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 5։

[2] Նույն տեղը, թ. 6։

[3] Տե՛ս նույն տեղը, թ. 7—8։

ոչ թե Թուրք կառավրիշների նախաձեռնությամբ, այլ տերությունների ճնշման տակ[1]։

Գ. Նորատունկյանը հայտարարեց, որ հայկական վիլայեթներում բարենորոգումներ կանցկացվեն միայն այն դեպքում, երբ դրանք իրագործվեն ամբողջ երկրում։ Միաժամանակ նա կասկածեց՝ հաղիվ թե կատարվի այդպիսի բան[2]։

* * *

1913 թ. հունվարին վերսաին իշխանության գլուխ անցած երիտթուրքերը, փորձեցին պատրիարքարանի ու հայ քաղաքական զանազան շրջանների հետ բանակցություններ վարելու, կեղծ խոստումներ տալու և սպառնալիքներ կարդալու ճանապարհով Հայկական հարցը հանել միջազգային դիվանագիտության քննարկումից։ Սակայն հայ քաղաքական շրջանները մնացին անդրդվելի։ Ավելին, 1913 թ. ապրիլին նրանք կազմեցին հայկական բարենորոգումների նախագիծ, որը ստացավ Պատրիարքարանի նախագիծ անունը և ներկայացրին Կ. Պոլսի ռուսական դեսպանությանը։ Այդ նախագծով հայկական վեց վիլայեթներից կազմվում էր մի վարչական միավոր, որի կառավարման համար եվրոպական տերությունների կողմից նշանակվում էր կոմիսար։ Այդ միավորի վարչական բաժանումը կատարվելու էր ըստ բնակչության ազգային հատկանիշների։ Համիդիե գրնդերը միաձուլվելու էին կանոնավոր բանակին, իսկ մուհաջիրների կամ մահմեդական գաղթականների նոր բնակեցումը հայկական վիլայեթներում արգելվում էր։ Հողային հարցը լուծվելու էր վարչական կարգով, այսինքն՝ առանց դատարանի հայերին էր վերադարձվում նրանցից բռնագրավված տարածությունները։ Յուրաքանչյուր ազգություն ինքն էր վարելու իր կրթական ու մշակութային գործերը և ինքն էր նշանակելու այդ նպատակին ծառայող հարկերի չափերը։ Բոլոր օրենքներն ու կանոնագրերը հրատարակվելու են տեղական լեզուներով, իսկ գավառների վարչական, դատական և ելմտական ատյաններում գործածվելու են գերակշռող ժողովրդի լեզուն։ Այդպիսով Պատրիարքարանի նախագիծը գտնում էր, որ «Հայերու բնակված հողամասը, մնալով Հանդերձ Օսմանյան կայսրության ամբողջության մասը, պետք է ենթակա ըլլա սեփական վարչության, որ համապատասխանե տեղական պահանջներուն»[1]։

Այլ կերպ ասած՝ Պատրիարքարանի նախագծով ստեղծվում էր հայկական ինքնավարություն՝ Թուրքիայի կազմում։ Դա, իհարկե, Պատրիարքարանի ցանկությունը չէր, այլ կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության ներկայացուցիչների։ Պատրիարքարանը, ինչպես տեսանք, պահանջում էր ստեղծել անձի ու գույքի ապահովություն միայն հայաբնակ վիլայեթներում։ Ահա թե ինչ էր գրում իր օրագրում նախագծի մասնակից Գ. Զոհրապը այդ առթիվ 1914 թ. օգոստոսի 18-ին. «Ես սկզբեն մեր պատրաստած ծրագրին կուսակից չէի, զայն ստանալու հույս օր մը չունեցա, ես առեն ին ընդդիմացա՝ չափազանց հառաջացյալ պահանջներուն դեմ հարուցվելիք դժվարությունները ճաշակելով, այն առեն ալ կուսակցություններու հայրենասիրական պահանջներու մեջ զիրար գերազանցելու տենչը իր դերը խաղաց։ Իսկ խելքը գլուխը նստող կընդուներ, որ առիկա ավելի մշտական հայկական իշխ մը կներկայացնե, քան թե իրապես ու գործնապես ձեռք բերելիք բան»[2]։

Կ. Պոլսի ռուսական դեսպանությունը, ստանալով պատրիարքարանի այդ նախագիծը, մշակեց հայկական բարենորոգումների նախագիծ, որը հայտնի է «Մանդելշտամի նախագիծ» կամ «Ռուսական նախագիծ» անուններով և 1913 թ. հունիսին ներկայացրեց տերությունների դեսպանների քննությանը։ Այդ նույն ժամանակ Բ.Բ.Հ.Դ պարագլուխները ռուսական նախագիծը արտամղելու նպատակով դեսպանների քննությանը ներկայացրին իրենց կազմած նախագիծը, որը համարյա շրջանցում էր Հայաստանը և հիմնականում խոսում բովանդակ Թուրքիայի բարելավման մասին։ Այդ նախագծերի քննարկումից հետո 1913 թ. աշնանը տերությունների Կ. Պոլսի դեսպանները, ի վերջո, մշակեցին իրենց և ներկայացրեցին Թուրքական կառավարությանը[3]։

1 ՏԿ՛ս ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 12—13։

2 Տե՛ս նույն տեղը, թ. 14։

1 Վ. Փափազյան, Իմ հուշերը, հ. 2, Պեյրութ, 1952, էջ 583։

2 «Նայիրի», 1975, մայիս, № 46—50։

3 Այդ երկու նախագծերի մասին հանգամանորեն տե՛ս Ա. Ս. Համբարձյան, Երիթթուրքերի..., էջ 220—223։

* * *

Թուրքական կառավարությունը, ստանալով տերությունների Կ. Պոլսի դեսպանների հայկական բարենորոգումների մասին նախագիծը, երկար ժամանակ սակարկում ու դիմադրում էր, նպատակ ունենալով ի չիք դարձնել այն։ Ռուսական դեսպան Մ. Ն. Գիրսը 1913 թ. հոկտեմբերի 16-ին (29-ին) գրում էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին, որ «երիտասարդ Թուրքերը աշխատում են թաղել Հայկական հարցը, համարելով այն Թուրքիայի ներկա դրության համար ամենավտանգավոր հարցերից մեկը և երկյուղելով, որ հայերին արած ամեն մի զիջողություն կարող է առաջ բերել արաբների համապատասխան պահանջը»[1]։

Այնուամենայնիվ, տերությունների, հատկապես Ռուսաստանի ճնշման տակ Իթթիհադի պարագլուխները 1914 թ. հունվարի 26-ին ստորագրեցին բարենորոգումների նախագիծը։ Դրա բովանդակությունը հետևյալն էր. Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու սեկտորների. մեկը ընդգրկում էր Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի, իսկ մյուսը՝ Էրզրումի, Տրապիզոնի և Սվազի վիլայեթները։ Այդ սեկտորների կառավարման համար մեծ տերությունները Բ. Դռան համաձայնությամբ տալիս են ընդհանուր վերահսկուչներ կամ գեներալ ինսպեկտորներ, որոնք մնալով 10 տարի, հսկում են իրենց սեկտորների պաշտոնեությունը, դատարանների, ոստիկանության և ժանդարմերիայի գործունեությունը։ Նրանք իրավունք ունեն պաշտոնազրկել իրենց չարդարացնող անձանց, դատի տալ հանցագործներին, փոխել ստորին պաշտոնյաներին, հարց հարուցել կառավարության առաջ բարձրաստիճան պաշտոնյաներին փոխելու կամ ազատելու մասին և այլն։ Տեսուչների վերահսկողությամբ են վճռվում նաև հողային հարցերը։

Պետական օրենքներն ու հրահանգները ժողովրդականացվում են տեղական լեզուներով, քաղաքացիները վարչատներում ու դատարաններում հանդես են գալիս իրենց մայրենի լեզվով, դատարանների որոշումները կայացվում են Թուրքերեն և հնարավորության դեպքում թարգմանվում այլ լեզվով։ Յուրա-

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Եր., 1973, էջ 285։

քանչյուր ժողովրդի կրթության գործին հատկացվում է նրա վճարած հարկերին համապատասխան գումար։ Կառավարությունը չի արգելի ազգային դպրոցների բացումը։ Համիդիե գնդերը վերակառուցվում են պահեստային հեծելազորներու, նրանց զենքերը վերցվում են, պահվում պահեստներում և սրբվում են միայն զորավարժությունների ու զորակոչի դեպքերում։

Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներում ընդհանուր խորհուրդների (մեջլիսի— ումումի) և կոմիտեների անդամներն ընտրվում են մահմեդականներից և ոչ մահմեդականներից՝ հավասար թվով, իսկ Սվազի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթներում՝ նրանց թվաքանակի համաձայն։ Սեկտորների վարչական խորհուրդներում ընտրվում են մահմեդականներից և ոչ մահմեդականներից՝ հավասար թվով։ Այդ սկզբունքով են նշանակվում նաև ոստիկաններն ու ժանդարմները։ «Նույն հավասարության սկզբունքը հնար եղածին չափ գործադրվում է երկու սեկտորների բոլոր մնացած պաշտոնների դասավորման հարցում»[1]։

Այդպիսով, 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումներով չէին լուծվում արևմտահայերի ոչ ազգային, և ոչ էլ հողային խնդիրները։ Նրանք չէին ստանում անձի ու գույքի ապահովություն, ազգային ինքնավարություն, աղաների ու ցեղապետերի կամ մահմեդական զանազան տարրերի կողմից տարբեր ժամանակներում բռնագրաված իրենց հողերը, չէին ցրվում Համիդիե գնդերը, շրջանցվում էր Թուրքիայի այլ շրջանների հայերի դրության բարելավման հարցը և այլն։

Իրավ է, բարենորոգումների ծրագիրը իրավունք էր տալիս գեներալ ինսպեկտորներին հսկելու և պաշտոնազրկելու պաշտոնյաներին, հարց հարուցելու անգամ կուսակալի ազատման մասին, բայց Թուրքական իրականության մեջ ապահովված պաշտոնյաներից ո՞ր մեկին կարելի էր հսկել ու ազատել, կամ կա՞ր արդյոք երաշխիք, որ նոր նշանակվածները չէին շարունակելու հների գործունեությունը։ Չէ որ չարաշահումները, գոփումները, կաշառակերությունը և նման արատները բխում են ոչ այնքան անհատների հատկություններից, որքան տիրապետող կարգերից, հասարակական սիստեմից։

Բարենորոգումների ծրագիրը գեներալ ինսպեկտորներին

[1] Հայաստանը... փաստաթղթերում, էջ 342։

իրավունք էր տալիս վերահսկելու հարցերի լուծումը։ Բայց նրանք, որքան էլ լինեին բարեխիղճ ու արդարադատ, չէին կարող հասցնել հետևելու հնից նկող և ամեն օր առաջացող այդօրինակ բյուրավոր վեճերին, չէին կարող ազատել բազմահազար հայ գյուղացիներին աղայական-ֆեոդալական կախումից։ Նրանք անզոր էին հաղթահարել թուրքական շովինիզմով և մահմեդական մոլեռանդությամբ լցված վերնաշերտերի, հափշտակիչների ու կեղեքիչների դիմադրությունը, մանավանդ, երբ նրանց մեջքին կանգնած էր թուրքական հակաժողովրդական, հատկապես ոչ թուրք ժողովուրդների շահերը ոտնահարող կառավարությունը։

Ճիշտ է, բարենորոգումների ծրագիրը իրավունք էր տալիս գեներալ ինսպեկտորներին անհրաժեշտության դեպքում օգտագործել իրենց տարածքում գտնվող զորամասերը, բայց նրանք այդ քայլին կդիմեին ավելի շուտ հարստահարվող զանգվածների ազատագրական ելույթների ճնշման, քան կեղեքող վերնաշերտերի տապալման համար։

Մի խոսքով, բարենորոգումների ծրագիրը հիմնականում հագեցված էր գործնական նշանակություն չունեցող ֆրազներով, որոնք պետք էին իմպերիալիստական տերություններին և թուրք կառավարիչներին տասնամյակներ շարունակ իր ազատագրման համար պայքարող հայ ժողովրդին խաբելու և նրա ճակատագրով հետաքրքրվող համաշխարհային առաջադեմ հասարակայնությանը հանգստացնելու համար։ Առանց երկրում տիրապետող հասարակական-քաղաքական կարգերի արմատական վերափոխման անհնար էր բարելավել օսմանյան գերիշխանության տակ ընկած ժողովուրդների վիճակն ընդհանրապես և արևմտահայերինը՝ մասնավորապես։ Բարենորոգումները[1] լավագույն դեպքում կարող էին ինչ-որ տեղ որոշ չափով օժանդակել ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ազգային լեզվի ու մշակույթի առաջընթացին։

1 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումները որոշ հեղինակների կողմից անվանվում են հայկական։ Դա, իհարկե, սխալ է, քանի որ նրանք վերաբերում էին ոչ միայն հայերին, այլ հայկական հիշատակված 7 վիլայեթներում բնակվող բոլոր ժողովուրդներին։

* * *

Ամենայն հայոց կաթողիկոսը սկզբում ողջունեց բարենորոգումների ծրագիրը, գտնելով, որ այն կբարելավի արևմտահայ բնակչության կեցությունը։ 1914 թ. հունվարի 29-ին նա, պատասխանելով Պողոս Նուբար փաշայի շնորհավորանքներին բարենորոգումների տերությունների կողմից հաստատման առթիվ, գրում էր. «Իմ շնորհակալությունս Ձերդ վսեմափայլության Ձեր եռանդուն գործունեության համար Տաճկաստանում բարենորոգումներ մտցնելու առթիվ։ Բախտավոր եմ, որ մեր եղբայրների գործը հաջողությամբ է առաջ ընթանում»[1]։

Բայց հետագայում, տեսնելով երիտթուրքական կառավարիչների խարդավանքներն ու խարդախությունները, կաթողիկոսը հիասթափվեց և այլևս հույս չկապելով նրանց հետ, ինչպես ցույց կտրվի ստորև, առաջ քաշեց Ռուսաստանի հովանավորությամբ Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրը։

Կաթողիկոսության պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան ավելի հանգամանորեն գնահատեց բարենորոգումների ծրագիրը։ 1914 թ. փետրվարի 16-ին նա գրում էր, որ այն պիտի ուրախացնի Բ. Դուռը, որովհետև վերացնում է Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող վտանգը։ «Պետությունները տվել են Թուրքիային այն տեսակի բոլոր գոհացումներ, որ Դուռն արժանապատվությունը չվիրավորվի։ Որոնք են՝ եռ կենալով բոլոր վիլայեթների մի նահանգի վերածելուց, նրանք համաձայնել են նրանց խմբել երկու հատվածների մեջ, ինչպես խնդրում էր Բ. Դուռը, և մյուս կողմից եվրոպական հատուկ պաշտոնյաների գործադրելիք իսկական կոնտրոլը, որ մեր խնդրի հիմքն էր կազմում, թողնվեց մի կողմ։ Ուրեմն Դուռը լիակատար բավականություն ստացավ...»[2]։

Պողոս Նուբար փաշայի կարծիքով, բարենորոգումների ծրագիրը պիտի ուրախացնի նաև մեծ տերություններին, քանի որ վերացվում էր նրանց շահերին սպառնացող վտանգը, հեռանկարներ է բացում վիճելի հարցերը խաղաղությամբ լուծելու համար։ «Ուրեմն,— նշում էր նա,— տեղիք կա շնորհավորելու պետություններին, որոնք աներկբայելի համերաշխությամբ...

1 «Արարատ», 1914, փետրվար, էջ 121։

2 Նույն տեղը, մարտ, էջ 228։

հաջողեցրին ձեռք բերել մի գործնական արդյունք, որի կարևորությունը շեշտելով Եվրոպայի համար չափազանցություն չէր լինի։ Պետք է հուսալ, որ նրանք պիտի հետևեն բարենորոգումների գործադրմանը նույն ներդաշնակության և համերաշխության ոգով և պիտի ապահովվեն նրա հաջողությունը»[1]։

Պողոս Նուբար փաշան, ի վերջո, գտնում էր, որ բարենորոգումների ծրագիրը ուրախացնելու է նաև հայերին։ Նրանք պետք է երախտագիտություն հայտնեն տերություններին, որոնք Ռուսաստանի նախաձեռնությամբ հայոց գործն առան իրենց ձեռքը և հաջողությամբ լուծեցին այն։ Այսօրվանից «մի նոր գարաշրջան է բացվելու այս դժբախտ ժողովրդի համար»[2]։

Բայց հետագայում նա ևս հիասթափվեց։

1914 թ. մայիսին Պողոս Նուբար փաշան ստիպված էր նշել, որ թուրքական կառավարությունը դեռ չի դիմել գործնական քայլերի արևմտահայերի անձի ու գույքի ապահովության ստեղծման ուղղությամբ, առանց որի անհնարին է բարելավել նրանց դրությունը[3]։

* * *

Հայ պահպանողական մամուլը գոհունակությամբ ընդունեց 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման լուրը։ «Արարատը» նշելով, որ սուլթան Համիդի 32 տարվա կառավարությունը իսկական գազանային բռնության մարմնացումն էր, իր հուլիս-օգոստոսի համարում գրում էր, որ այդ դաժան աշխարհը «երիտասարդ թուրքերի կառավարության խելոք գործունեությամբ և մակեդոնական զորքի ապստամբությամբ սոսկմանադրական է դառնում»[4]։

Ամսագիրը շտապում էր զգուշացնել արևմտահայերին, որ նրանք ոգևորվելով հեղաշրջումից, չընկնեն չափազանցությունների մեջ, չանեն թեթևամտություններ և հավատարիմ մնալով իրենց «ազգային եկեղեցական շահերին», ձեռնամուխ լինեն շինարարական աշխատանքներին։ Նա գտնում էր պետ

1 «Արարատ», 1914, մարտ, էջ 228։
2 Տե՛ս նույն տեղը, հունիս, էջ 512։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Նույն տեղը, 1908, հուլիս-օգոստոս, էջ 709։

սահայերի վարքագիծը Մ. Օրմանյանի հանդեպ և գտնում էր, որ այս օրերին նախկին պատրիարքը «պետք է միայն դոհունակության արժանանար»։ Ապա ավելացնում էր. «Մենք չենք ուրանում, որ Օրմանյանը ուներ և պակասություններ, բայց շատ չնչին նորա առավելությունների համեմատությամբ»[1]։

Քիչ անց, 1908 թ. սեպտեմբերին, «Արարատը» հրապարակեց դեռ հեղաշրջումից առաջ լույս տեսած Ս. Սապահ-Գյուլյանի «Երիտասարդ Թուրքիա» աշխատության մասին համառոտ ինֆորմացիա և բառացի մեջբերում էր կատարում այն էջից, ուր ասվում էր, որ երիտթուրքերը անուշադրության են մատնում ազգային խնդիրը։ «Հայ, արաբ, մակեդոնական ազգերը չի կարելի միացնել օսմանյան կամ թուրք տարրերի հետ։ Սոքա ունին իրենց անցյալը, քաղաքակրթությունը, լեզուն, որ ոչնչացնել կարելի չէ։ Նույնիսկ միջազգային բնավորություն է ստացել եվրոպական պետությունների ձեռքով նրանց ինքնավարության հարցը։ Արևելյան խնդիրը լուծվել կարող է, երբ այս վերջին հանգամանքները ի նկատի առնվին։ Ընդհանուր բարեփոխություն ամբողջ պետության մեջ և ազգային ինքնավարություն այլասեռ, ոչ թուրք տարրերի համար։ Ահա արևելյան հարցի լուծման ուղիղ ճանապարհը ըստ հեղինակի»[2]։ Խմբագրությունը ապա եղրակացնում էր. «Միանգամայն համաձայն ենք հեղինակի այս վերջին մտքերի հետ»[3]։

Անշուշտ, չպետք է կարծել, որ «Արարատը» արդեն ընդունում էր հնչակյան գաղափարները։ Նա դրանով հայտարարում էր, որ ինքը մերժում է Իթթիհադի պանօսմանիզմը և պաշտպանում է ազգերի ինքնավարության գաղափարը։

Ամսագիրը առելությամբ էր խոսում 1909 թ. մարտի 31-ի դեպքերի մասին։ Նշում էր, որ սուլթանն առերես համաձայվելով երիտթուրքերի հետ, ներքուստ որոգայթներ էր լարում նրանց տապալելու համար։ «Դաղանը մեռած չէր, այլ քնած էր ձևանում»։ Հենց որ պատեհ առիթ եղավ, նա ոտքի կանգնեց ու գործի անցավ։ «Մի օրում ստեղծված սոսկմանագրությունը մի

1 «Արարատ», 1908, հուլիս-օգոստոս, էջ 721։
2 Նույն տեղը, սեպտեմբեր, էջ 833։
3 Նույն տեղը։

օրում էլ ի չիք դարձավ»[1]։ Պարբերականը, այնուհետև, շարունակում էր, որ բարեբախտաբար բռնակալի վերիշխումը կարճատև եղավ։ Երիտթուրքերը կարողացան հավաքել իրենց ուժերը և հակահարված հասցնել նրան։ Դրա շնորհիվ «Ապրիլի 14-ին առանց արյունի հաստատված սահմանադրությունը արյունով վերահաստատվեց»[2]։ Աբդուլ Համիդը պատժվեց՝ գահից արտաքսվեց։ Մայրաքաղաքում դեպքերն ավարտվեցին, բայց գավառներում շարունակվում են։ Թափվում է բազմաթիվ անմեղ հայերի արյունը։ Դժվար է ասել, թե ինչ չափերի կհասնեն հայկական կոտորածները։ Համենայն դեպս, գրում էր պարբերականը, Կ. Պոլսի հայոց պատրիարքի տեղապահ Արշարունին այդ մասին դիմեց Բաբիհադի պարագլուխներին։ Նրանք «խոստացան, թե պետք եղած հրամանները պիտի ուղղեն»[3]։

Հետագա տարիներին «Արարատը» ավելի ու ավելի էր հիասթափվում երիտթուրքական վարչակարգից և արևմտահայության ազատագրության հույսերը վերստին կապում մեծ տերությունների միջամտության հետ։ Հայկական հարցի վերաբացման օրերին այն գրում էր, որ երբ բռնակալությունը տապալվեց, հայ ժողովուրդը «բացարձակ ազատություն չէր, որ պահանջում էր, այլ ամենահասարակ և հասկանալի մի բան, անձի և ունեցվածքի անձեռնմխելիություն»[4]։ Սակայն նոր կառավարիչները նրան չբավարարեցին։ Այժմ միայն ուժը կարող է կարգ ստեղծել Արևմտյան Հայաստանում և հային ազատել քրդերի վայրագություններից։ «Երկուսից մեկը. կամ հայը ևս պետք է զինվի, որպեսզի... ապիկար կառավարության օրով յուր անձն ու ունեցվածքը պաշտպանել փորձի, կամ այդ մըշտական մղձավանջին վերջ դնելու համար պետք է արտաքին միջոցների դիմի, ազդու և ներգործական միջամտության»[5]։ Կ. Պոլսի պատրիարքները այժմ պետք է ոչ թե հրաժարվեն, այլ ծեծեն բոլոր դռները, դիմեն դրսի ուժերի օգնությանը և նրանց միջամտությամբ հասնեն արևմտահայերի դրության բարելավմանը։

1913 թ. սկզբներին, երբ Հայկական հարցը նորից դուրս էր եկել միջազգային ասպարեզ, ամսագիրը էլ ավելի վճռական էր խոսում արտաքին միջամտության մասին։ «Այսօր ամբողջ աշխարհի համար պարզ է,— գրում էր նա,— որ հայկական հարցը համենայն դեպս թուրքերի միջոցով չի կարող լուծվել, նույնքան և պարզ է, որ միայն հայերն իրանք անկարող են վերջ դնել իրանց քաղաքական տերերի և հարևանների անարդար ու սմարդի կառավարությանը։ Հայկական հարցն այսօր քաղաքակրթության նուրբ ու բազմածալ լաբիրինթի մեջ է և եթե որևէ լուծում կա— այդ դիպլոմատիայից ու քաղաքականությունից է, որ գալու է»[1]։

«Արարատի» դիրքերում էին կանգնած նաև մյուս պահպանողական թերթերն ու ամսագրերը։

Լիբերալներ

Արևմտահայ լիբերալներն ուրախությամբ ընդունեցին երիտթուրքական հեղաշրջման լուրը։ Նրանք կարծում էին, որ այն կթեթևացնի արևմտահայության դրությունը և կնպաստի նրա առաջընթացին։ Այդ հեղաշրջումը նրանց համար ողջունելի էր մանավանդ այն տեսակետից, որ կատարվում էր առանց հասարակական հարաբերությունների արմատական հեղաբեկումների։ Լիբերալների մի մասը հույս ուներ, որ սուլթանը, վերահրատարակելով իր իսկ կողմից ոտնահարած սահմանադրությունը, առաջ կտանի Օսմանյան կայսրության ժողովուրդների, այդ թվում նաև հայերի բարեկարգման գործը և այդ պատճառով ջերմությամբ էին արտահայտվում նրա մասին։

«Արևելքը», շարունակելով իր նախկին սուլթանագովումները, հեղաշրջումից անմիջապես հետո՝ 1908 թ. հուլիսի 13-ին գրում էր. «Մեր վեհափառ կայսրը մեկ օրվան մեջ իր միլիոնավոր հպատակները երջանկացուց... և օսմանցիներու պանծալի հայրենիքին զարգացման, ծաղկման և հառաջադիմության նոր դարագլուխ մը բացավ։ Վեհափառ կայսրը իր աշխարհածանոթ իմաստության ամենեն փայլուն ապացույցը տվավ սահմանադրություն շնորհելով իր հպատակներուն։ Կո-

1 «Արարատ», 1909, ապրիլ, էջ 374։
2 Նույն տեղը, էջ 375—376։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 378։
4 Տե՛ս նույն տեղը, 1912, սեպտեմբեր, էջ 795։
5 Նույն տեղը, էջ 797։

1 «Արարատ», 1913, փետրվար-մարտ, էջ 267—268։

չեցեք «կեցցե՛ վեհափառ կայսրը, կեցցե՛ օսմանյան սահմանադրությունը»[1]։

Թերթն իր սուլթանասիրությունն արտահայտում էր նաև հետագա համարներում։ Նրա սերը ատելության վերածվեց միայն 1909 թ. ապրիլից հետո, երբ բռնակալը իշխանությունը վերադրավելու նպատակով անհաջողության մատնվեց և արտաքսվեց պետական ապարատից։ 1910 թ. հունվարի 1-ին պարբերականն արդեն գրում էր. «Տարիներուն ամենեն քաղցր հիշատակը պիտի համարվեր անշուշտ 1909 տարին, քանի որ անոր մեջ էր, որ աշխարհի ամենաստոկալի բռնավորը հրեշ Աբդուլ Համիդ գահընկեց եղավ», «Հրեշներու հրեշ Համիդ գահեն գլորվեցավ»[2]։

«Արևելքը» հեղաշրջումից անմիջապես հետո ավելի ու ավելի էր ներքաշվում լիբերալ բուրժուական ասպարեզ։ Այդ ընթացքն արագացվեց հատկապես այն բանից հետո, երբ թարմացվեց խմբագրությունը, ուր այլ առաջադեմ գործիչների հետ միասին տեղ գրավեց նաև Երվանդ Սրմաքեշխանլյանը (Երուխան)։

«Արևելքը» փառաբանում էր ֆրանսիական բուրժուազիայի ազատություն, եղբայրություն, հավասարություն գաղափարները, գտնելով, որ դրանք միավորում են Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին, դոտեպնդում նրանց դեպի ստեղծագործություն և առաջադիմություն։ Թերթը նշում էր, որ միջհատյան սահմանադրության վերահռչակումը «նոր դարագլուխ մը պիտի կազմե Օսմ. կայսրության փառավոր պատմության մեջ...»[3]։ Այսուհետև՝ «բոլոր ազգերը և ցեղեր եղբայրության, հավասարության և ազատության վեհ գաղափարներով տոդորվելով ձեռք ձեռքի տված պիտի աշխատին օսմ. փառապանծ կայսրության մեծության և փառքին համար»[4]։

Պարբերականն ազդարարում էր, որ սահմանվելու է կայուն օրինականություն, որը թույլ չի տալու չարաշահումներ, ուրիշի իրավունքների ոտնահարում, բռնություններ ու անարդարություններ։ Յուրաքանչյուր անհատ «օրենքին բարձր հովանուն տակ պիտի պաշտպանվի և... իր արդարության ձայնը լսելի պիտի ընե»[5]։ Սահմանադրությունը նպաստելու է երկրի արդ-

1 «Արևելք», 1908, հուլիսի 13, բացառիկ։
2 Նույն տեղը, 1910, հունվարի 1, № 7221։
3 Տե՛ս նույն տեղը, 1908, հուլիսի 13, բացառիկ։
4 Նույն տեղը։
5 Տե՛ս նույն տեղը։

յունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և մշակութային կյանքի զարգացմանը։

«Արևելքը» բուրժուական ձեռնարկումների էր կոչում հատկապես հայերին, հայտարարելով, թե պետք է օգտվել ստեղծված հնարավորությունից և զարգացնել ազգային առաջադիմությունը։ «Այլևս սահմանափակում չունեք ձեր առևտրական գործառնությանց, ձեր կրթական գործերուն, ձեր բարեգործական ու մարդասիրական ջանքերուն մեջ»[1]։

Թերթը նշում էր, որ այսուհետև հաստատվելու է կյանքի ու գույքի ապահովություն, կարգավորվելու է հարկային գործը, վերջ է տրվելու չարաշահումներին, բանտարկյալներն ազատվելու են, իսկ տարագիրները վերադառնալու են հայրենիք, բացվելու են բոլոր ճանապարհները, գործելու է անկաշկանդ երթևեկություն, հաստատվելու է մամուլի ազատություն։ Պարբերականն այնուհետև հայտարարում էր, որ պետական պաշտոնները հասանելի են դառնում նաև ոչ թուրք կամ ոչ մահմեդական ժողովուրդների համար, քանի որ հաշվի են առնվելու մարդկանց ընդունակություններն ու արժանիքները, այնպես որ «Աշխատեցեք և առաջադիմեցեք»[2]։

«Արևելքը» արևմտահայության համար չէր պահանջում ոչ ինքնավարություն, ոչ էլ անկախություն, այլ առաջարկում էր անձի ու գույքի ապահովություն։ 1910 թ. իր առաջնորդողներից մեկում, բերելով երիտթուրքական գործիչ, օսմանլիզմի պրոպագանդիստ Ջելալ Նուրիի այն հայտարարությունը, թե բոլոր օսմանցիները լինելու են իրավահավասար, վայելելու են իրենց երկրում այնպիսի ազատություն, ինչպես Շվեյցարիայի բնակիչները, բացականչում էր. «Ի՜նչ քաղցր իդեալ։ Արդյոք պիտի գա օր մը, որ ատոր հասնինք։ Գուցե աստիճանաբար հասնենք այն բարձրության, որուն ծայրը երկնքին ամպերուն մեջ կորսվի։ Մեղ, հայերուս համար այդ աստիճաններուն առաջինն է... չզարդվիլ։ Եթե Ճելալ Նուրի պեյ և իր նմանները կըրնան վերջապես այս առաջին աստիճանը ապահովել մեզի, հայերը ամենեն առաջ պատրաստ են կատարել այդ երդումը, որին կախված կնկատե Ճելալ Նուրի պեյ այս երկրի փրկությունը»[3]։

1 «Արևելք», 1908, հուլիսի 13, բացառիկ։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը, 1910, հունվարի 2, № 7222։

«Արևելքը» չէր պահանջում ֆեոդալական հարաբերությունների վերացում, անգամ խնդիր չէր դնում հին վարչակարգի ժամանակ հայ գյուղացիներից բռնագրաված հողերի վերադարձում։ Նա առաջարկում էր վերջ տալ քրդերի կողմից կիրառվող հայերի հալածանքներին ու կեղեքումներին, դարձնել նրանց իրավահավասար քաղաքացիներ և ստեղծել «կյանքի, ինչքի և պատվո ապահովություն»[1]։ Այդ նպատակին հասնելու համար նա գտնում էր, որ պետք է նախ՝ սանձահարել քուրդ ժողովրդի վրա մեծ ազդեցություն ունեցող ցեղապետերին ու աղաներին[2], երկրորդ՝ փոխարինել հին, չարաշահումների սովոր պաշտոնյաներին նոր, արդարադատ ու բարեխիղճ մարդկանցով, իսկ ոմանց նաև պատժել՝ «հօրինակ այլոց»[3]։

«Արևելքը» կարծում էր, որ կայսրության ներքին կյանքը պետք է կարգավորի թուրքական պետությունը և վճռականապես դեմ էր ժողովրդի միջամտությանը կամ մասնակցությանը կառավարման գործերին։ Նրա առաջնորդողներից մեկում ասվում էր. «Յուրաքանչյուր անգամ, որ ժողովուրդը գործադիր իշխանության միջամտած է, երկրին աղետ մը միայն պատահած է թե բացարձակ իշխանության շրջաններուն և թե նույնիսկ սահմանադրության օրով»[4]։

Թերթը գտնում էր, որ պետությունը ղեկավարելով երկիրը, պետք է ոչ միայն պահանջի նրա բնակիչներից օրինականության պահպանում ու կենսագործում, այլև անհրաժեշտության դեպքում օգնի նրանց և դուրս բերի աղքատությունից ու խեղճությունից։ Նա քննադատում էր երիտթուրքական կառավարությանը այն բանի համար, որ չի օգնում հայկական նահանգներում սովից տառապող գյուղացիներին ու քաղաքացիներին[5]։

Պաշտպանելով կայսրության ժողովուրդների համատեղ ապրելու և երկիրը միասին բարեկարգելու միտքը, պարբերականը, սակայն, մերժում էր երիտթուրքերի օսմանացման կամ թուրքացման քաղաքականությունը։ Նա ցույց էր տալիս այդ քաղաքականության ռեակցիոն էությունը և նշում իրագործման անհնարությունը։ «Ամենեն փոքր տարրն իսկ,— կարդում ենք թերթի առաջնորդողներից մեկում,— չի զիջաներ ուրանալ իր ցեղային ինքնուրույնությունը և ձուլվել որևէ ուրիշ տարրի հետ»[1]։ Թերթը ծիծաղելի էր համարում այն ձգտումը, երբ նոր կառավարիչներն ուզում էին թուրքացնել թուրքերից անհամեմատ կուլտուրապես բարձր կանգնած արաբներին ու հայերին։ Ապա եզրափակում էր, որ նրանք փոխանակ ազգերի ու ժողովուրդների ձուլումով զբաղվելու, թող «երկրին ընդհանուր բարեկարգության խնդրով զբաղվին»[2]։

Անդրադառնալով արևմտահայ ազգային կյանքի ղեկավարման հարցին, «Արևելքը» յավում էր, որ չկան բանիմաց ու ձեռներեց մարդիկ, որոնք թուրքական պետության ու հայ ժողովրդի միջև որոշակի ու տանելի հարաբերություններ մշակեին։ Բայց գտնում էր, որ այդ բանը կարող է անել, և անում է ազգային վարչությունը։ Թերթը քննադատում էր նրանց, ովքեր խանգարում էին նրա գործունեությանը և պահանջում պայմաններ ստեղծել, որ վարչությունը «գործը իր գիտցած ու հասկըցած եղանակով գլուխ հանե»[3]։

Ինչ վերաբերում է եկեղեցուն, ապա պարբերականը երբեմն անցյալում այն համարում էր ազգի ղեկավարման ուժ, այժմ, սահմանադրության օրերին, մերժում էր դա։ Բայց ի տարբերություն այլ լիբերալ օրգանների, որոնք կամենում էին հոգեվորականությանը ընդհանրապես արտամղել քաղաքական ասպարեզից, «Արևելքը» գտնում էր, որ դեռ չի կարելի այդ անել, քանի որ ազգային կյանքի վերակառուցման գործում այն կարող է պիտանի լինել[4]։

Չնայած քաղաքական սահմանափակվածության, «Արևելքը» այնուամենայնիվ ինչպես XIX դ. վերջում, այնպես էլ XX դ. սկզբում լուրջ դեր էր խաղում հայ մշակույթի զարգացման գործում։ Նրանում հրապարակվում էին արևմտահայ նշանավոր գրողներ ու հրապարակախոսներ, գիտության ու կուլտուրայի գործիչներ։

---

1 Տե՛ս «Արևելք», 1908, սեպտեմբերի 8, № 6894։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, 1910, հունվարի 26, № 7239։
4 Նույն տեղը, 1909, դեկտեմբերի 20, № 7219։
5 Տե՛ս նույն տեղը, 1910, հունվարի 5, № 7223։

1 «Արևելք», 1910, հունվարի 22, № 7236։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, 1909, դեկտեմբերի 20, № 7211։
4 Տե՛ս նույն տեղը, դեկտեմբերի 27, № 7217։

* * *

«Բյուզանդիոնը» ողջունեց օսմանյան սահմանադրության հռչակումը, համարելով 1908 թ. հուլիսի 11-ը բարեբեր թվական Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների համար՝ անկախ նրանց լեզվից ու կրոնից։ Նա այդ սահմանադրության նշանակությունն այն էր համարում, որ ազգարարում էր ազատություն, արդարություն և հավասարություն, կոչ էր անում պաշտոնյաներին՝ պաշտպանել ոչ միայն պետության, այլև ժողովրդի շահերը՝ առանց չարաշահումների ու կեղեքումների։ Բերքը միաժամանակ փառաբանում էր Համիդ II-ին, համարելով նրան «մեծն սուլթան», «մեծագույն հայր օսմանցի ժողովրդի», հաճախ էլ բացականչում էր. «Կեցցե՛ վեհափառ կայսրը» և այլն[1]։ Պարբերականը ժողովրդին առաջարկում էր ուրախանալ «առանց ծայրահեղության, պատշաճության սահմանին մեջ»[2], այլապես սահմանադրությունը կարող է վերստին փականքի տակ դրվել։ Կառավարությունն ազատություն է տվել, բայց պիտի հարգել նրա օրենքները, առիթ չպիտի տալ, որ սև ուժերը գործի անցնեն ու տապալեն ձեռք բերած նվաճումը։

Բերքն այնուհետև դիմում էր արևմտահայերին, որ նրանք թողնեն ոխն ու մրմունը, սիրով վարվեն թուրքերի հետ, մանավանդ, երբ նրանց հայերի դեմ դրդող ուժերն արդեն խորտակվել են։ Անհրաժեշտ է «զգուշանալ ամեն արարքե, ամեն խոսքե, որ կրնա զանոնք դառնացնել մեզ դեմ... պետք է զգուշանալ «Հայաստան» պոռալե, կամ անկախ Հայաստանի մը կազմության խոսքեր զրուցելե։ Ազգին լրջամիտ սուվար մեծամասնությունն համամիտ է, որ Թուրքիո հայերուն վիճակին բարվոքումը կախում ունի բովանդակ Թուրքիո բարենորոգումենե»[3]։

Պարբերականը խնդիր էր դնում՝ պաշտոնազրկել հեղինակազրկված պատրիարքին և ընտրել նորին, իսկ հնացած ու կյանքից կտրված ազգային վարչությունը ցրել ու ստեղծել նորը և այդպիսով թարմություն ու աշխուժություն մտցնել ազգային գործերում[4]։

1 «Բյուզանդիոն», 1908, հուլիսի 16, № 3590։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը, հուլիսի 26, № 3598։
4 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 16, № 3590։

Մերժելով Հայաստանի անկախության գաղափարը և պաշտպանելով Թուրքիայի համընդհանուր վերակառուցման թեզը, «Բյուզանդիոնը» պրոպագանդում էր կայսրության ապակենտրոնացման սկզբունքը։ 1909 թ. փետրվարի 13-ի նրա առաջնորդողում ասվում էր. «Մենք հայերս... համոզված ջատագովներ ենք ապակենտրոնացման փրկարար սկզբունքին իբրև մեծագույն դյուրացուցիչ միջոցին երկրի ընդհանուր բարվոքման»[1]։

Դժվար է ասել, թե ինչ էր հասկանում պարբերականը ապակենտրոնացման տակ՝ արդյոք Մ. Սաբահեդդինի նահանգների ու գավառների տեղական իրավունքների ընդլայնման տեսակետը, թե՞ արևմտահայության ինքնավարության ստեղծումը։ Համենայն դեպս, նա գտնում էր, որ այն պետք է կատարել վերևից և խորհուրդ չէր տալիս սկսել ներքևից, համարելով դա հայության համար վտանգավոր։ Նա առաջարկում էր՝ չշտապել, համբերել և սպասել։ «Համբերությունը մեր կողմե և անկեղծ բարեհոժարությունն անոնց կողմե, ահա ինչ որ սրտանց մաղթելի է երկուստեք»[2]։

Այնուհետև պարբերականը անդրադառնում էր արևմտահայերի հողային հարցին։ Հայ լիբերալ օրգաններից ներևս ոչ մեկում այդ հարցն այնքան չի արծարծվել, որքան այս պարբերականում։ Թերթի խմբագիր Բ. Քեչյանը գտնում էր, որ հողային խնդիրը պետք է լուծել խաղաղ ճանապարհով՝ կառավարության կազմած հանձնաժողովի միջոցով։ Նա դեմ էր հողազուրկ հայերին նրանցից խլած հանդակների դիմաց փող տալու առաջարկին, գտնելով, որ հայ դյուղացիները չեն համաձայնվի այդ պայմանին և լքելով հայրենիքը, կհեռանան այլ երկրներ։ Բ. Քեչյանը նշում էր, որ նպատակահարմար կլինի փող տալ հայկական հողերը զավթողներին, որովհետև նրանք հող շատ ունեն։ «Իբրև ընդհանուր սկզբունք,— գրում էր նա,— հարկ է հաստատել, թե հայուն պետք է նե տալ իր հողը, որպեսզի օգտակար բլլա այս երկրին ու տերության գանձուն, իսկ դրամն առավելապես վերապահել պետք է գոհացնելու համար զանոնք, որ մեյ մեկ կերպով տիրեր են հայուն հողին»[3]։

Տեսնելով, որ այդ առաջարկությունը չի ընդունվում, Բ. Քեչ-

1 «Բյուզանդիոն», 1909, փետրվարի 13, № 3755։
2 Նույն տեղը, մարտի 13, № 3778։
3 «Ժամվիրա», 1912, փետրվարի 7, № 2։

յանը հրապարակ է բերում մեկ ուրիշը, այն է՝ հարուստներից հանգանակության կարգով դրամ հավաքել և չքավորների համար հող գնել։ Եթե այդ բանը կատարվեր հինգ տարի առաջ, շարունակում էր նա, ապա մինչև հիմա հայ գյուղացիները կունենային մեծ տարածություններ[1]։

Հրապարակախոսը նաև գտնում էր, որ արևմտահայերի հողային հարցը կարելի է լուծել գյուղատնտեսական ընկերություններ ու միություններ կազմելու ճանապարհով, բայց միաժամանակ նշում էր, որ նրանք դեռ չեն հասել այդ մակարդակին։

Օսմանյան պառլամենտում Սեբաստիայի բնակչության ներկայացուցիչ Ն. Տաղավարյանը առաջարկում էր հետևյալը. Հայերի հողային հարցի լուծման համար անհրաժեշտ է՝ 1) կոթրած համարել այն տարածքները, որոնք վաճառված են պետական տուրքի, երկրագործական բանկի ու մասնավոր մարդկանց պարտքերի փոխարեն, 2) հետ պահանջել այն հողերը, որոնք հափշտակված են հայերից բացահայտ կամ կեղծ թափուների միջոցով, 3) հետ պահանջել այն տարածությունները, որոնց թափուները դեռ գտնվում են հայերի ձեռքին կամ կորել են, 4) հետ պահանջել այն հողերը, որոնք յուրացված են այս կամ այն անձանց կողմից իբրև անատեր, վճարելով, իհարկե, կառույցների ու պարարտացման համար որոշ գումար և, վերջապես, 5) հետ պահանջել այն հողակտորները, որոնք համարվում են հայոց վանքերի ու եկեղեցիների սեփականությունը։ «Ահավասիկ հինգ արդար, տրամաբանական և օրինական որոշումներ,— եզրափակում էր հեղինակը,— որոնց գործադրությամբ լուծված կըլլա հայոց հողային և կալվածային հարցը, որ իրենց համար մահու և կենաց խնդիր մ՝ է»[2]։

Բանասեր Նշան Ճիվանյանը (Հորո) հայտարարում էր, որ արևմտահայերի հողային հարցը լուծելու համար անհրաժեշտ է ընդունել կառավարության պայմանները, հրաժարվել հին, կորցրած տարածություններից և հաստատվել նրա մատնանշած նոր վայրերում։ «Ես կկարծեմ,— գրում էր նա,— թե Կոլկասեն վերադարձող հայերը փոխանակ երկու-երեք տարիե ի վեր իրենց նախկին հողերուն տիրանալու հույսով պարապ

1 Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, սեպտեմբերի 9, № 5131։

2 «Բյուզանդիոն», 1912, փետրվարի 22, № 4660։

սպասելու և անոնց տիրացող իրենց հարևան քյուրդերուն քրշնամությունը գրգռելու այդպես, անոնց փոխարեն եթե նոր հողեր ստանալու ետամուտ ըլլային, և մշակեին, մինչև հիմա տեղավորված և արտի ու հունձքի տեր կըլլային... Էականը շրջակա ցեղերուն հետ խաղաղությամբ ապրելով և անցածը մոռանալով լավագույն հարաբերություններ հաստատելն է»[1]։

Դժվար չէ եզրակացնել, որ բոլոր այդ առաջարկությունները լիբերալ, նաև վերացական առաջարկություններ էին, որոնք չէին կարող լուծել հողային հարցը։

Քիչ թե շատ արմատական էր Երզնկայի հայոց թեմի առաջնորդ Երվանդ վարդապետ Փերտահճյանի առաջարկությունը, որը գտնում էր, թե հայ ու քուրդ գյուղացիների հողային խընդրի լուծման համար կառավարությունը պետք է հող տա նրանց, վտարելով «իրենց որջերեն նշանավոր հարստահարիչները, արյունաքամ տղրուկները»[2]։ Բայց երիտթուրքերն այդ չէին անի։

«Բյուզանդիոնը» իր որոշակի տեսակետներով հանդես եկավ նաև հայկական վիլայեթների բարենորոգումների քննարկման օրերին։ 1913 թ. հոկտեմբերի 26-ին նրա խմբագրականում ասվում էր, որ առանց եվրոպական վերահսկման բարենորոգումներ չեն իրագործվի, առանց քրդական կեղեքիչներին պատժելու անկարելի է թեթևացնել բնակիչների դրությունը։ Իսկ դա պիտի կատարվի կառավարության կողմից։ Բերվում էր մասնավորապես Ռուսաստանի օրինակը, ուր քրդերը, վախենալով իշխանություններից, չեն համարձակվում թալանել բնակիչներին։ Պարբերականը եզրափակում էր, որ «բարենորոգումների խնդիրն արևելյան գավառներուն մեջ կյանքի և գոյության խնդիր է...»[3]։

Բերթը քննադատում էր այն հեղինակներին, որոնք բարենորոգումների մասին խոսելիս վերլուծում էին բնակիչների թվաքանակի հարցերը։ Մերժելով նման մոտեցումը, նա իրավամբ գրում էր, որ բարենորոգումները պետք են բոլորին՝ թե հային, թե քրդին և թե ուրիշին։ Դա է գլխավոր խնդիրը[4]։ Որքան էլ զնահատելի են տերությունների ու պատրիարքարանի ձեռ-

1 «Բյուզանդիոն», 1912, հունվարի 16, № 4630։

2 Տե՛ս նույն տեղը, 1911, դեկտեմբերի 28, № 4625։

3 Նույն տեղը, 1913, նոյեմբերի 4, № 5189։

4 Տե՛ս նույն տեղը, նոյեմբերի 16, № 5200։

նարկումները, այնուամենայնիվ «մենք գարձյալ Դռան պիտի դիմենք մեր ցավերուն համար, մինչև որ հոն գտնենք մեր օրինավոր ակնկալությունները գոհացնող քաղաքական իմաստություն և երկրաշեն աշխարհավարություն մը»[1]։

Ղեկավարվելով այդ դրույթով, 1913 թ. դեկտեմբերի 30-ին «Բյուզանդիոնը» հրապարակեց պրոֆ. Կ. Թումայանի զգուշավոր հոդվածը, ուր նշվում էր, թե իրենց դրության բարենորոգումների հարցը թող բարձրացնեն ոչ թե արևմտահայերը, այլ կովկասահայերը կաթողիկոսի միջոցով։ Իսկ արևմտահայերը դրա հանդեպ թող այնպիսի դիրք բռնեն, ինչպես սովածը՝ իրեն հաց տվողին։ Արևմտահայերը իրենց ցավերի մասին պետք է պատմեն օսմանյան կառավարությանը, ինչպես որդին՝ հորը։ Բայց «հայրը» փոխանակ անձամբ լուծելու նրանց հարցը, այն պետք է լուծի տերությունների հետ միասին։ Ուստի հայերը պարտավոր են սպասել։

Հոդվածագիրը այնուհետև հարկ էր համարում շեշտել, որ «հայկական բարենորոգումներ» կոչվածը վերաբերվելու է ոչ միայն հայերին, այլև Արևմտյան Հայաստանի մյուս բնակիչներին։ Այնպես որ բարենորոգումների հետևանքով ստեղծվելիքը «ոչ հայոց համար ուրույն վարչություն մ'ըն է, ոչ նոր արտոնություն կամ առանձնաշնորհում, ոչ ուրիշ ազգերե տարբեր վիճակ»[2]։ Ուստի հայերը այդ ամենը չպետք է համարեն միայն իրենցը, գրգռեն շրջապատի մոլեռանդ բնակչության նախանձը և նոր կոտորածների առիթ տան։ Բարենորոգումներ պետք է մտցնել ամբողջ երկրում և եթե դրանք սկսվում են հայկական վիլայեթներից, պատճառն այն է, որ բնակչության կացությունը բոլորից ծանր այդ շրջաններում է։

Ապա հեղինակը գրում էր. «եզրափակելով կըսեմ, թե ներկա պարագայի մեջ չեզոք ու սպասող ենք, մեր վիճակին բարելավումը մեր սահմանադրական կառավարութենեն կակնկալենք։ Իսկ եթե օտար պետությունք ալ բարեխոսեն անկեղծորեն, առանց երկրին շահերը վտանգելու, ընդունել կամ մերժել մեղի չի վերաբերիր»[3]։

Ինչպես երևում է շարադրանքից, պրոֆ. Կ. Թումայանը չէր

1 «Բյուզանդիոն», 1913, դեկտեմբերի 30։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը։

ցանկանում բարենորոգումների շուրջը առաջացնել ազգայնոգևորություն, աղմուկ ու աղաղակ, որպեսզի հայերի դեմ չգրգռվեին թե կառավարիչները, և թե մոլեռանդ հարևանները։

Ինչպե՞ս գնահատեց «Բյուզանդիոնը» տերությունների կողմից հաստատված բարենորոգումների փաստաթուղթը։ 1914 թ. փետրվարի 1-ին նրա առաջնորդողում ասվում էր, որ այն նախ դեռ «բան մը չըսեր մեր մտքին, մինչև որ անոր գործադրումը չտեսնենք, մանավանդ որ փորձով գիտենք, թե բազում և բազմաթիվ շեղումներ, վրիպումներ կարելի են...»[1]։ Երկրորդ՝ հայերը չպետք է խանդավառվեն և ավելորդ ցույցերով չգրգռեն իրենց մահմեդական հարևաններին, որոնք կարծեն, «իբր թե հայերուն բան մը կտրվի կոր»[2]։ Ուրեմն, պարբերականը հրապուրված չէր բարենորոգումներով։

Բայց և այնպես նա շնորհավորում էր կայսրության արևելյան վիլայեթների բնակիչներին «կյանքի, պատվի, ինչքի ապահովության և աշխատության ազատության նոր դրավականներ վայելելու առթիվ»[3]։ Գտնելով, որ նրանք այսուհետև ապրելու են եվրոպացիների վերահսկողության տակ, թերթը խորհուրդ էր տալիս, որ իրենց լավ պահեն, որպեսզի չարժանանան եվրոպացիների վատ գնահատականին։ Բայց պարբերականը ավելի կարևոր էր համարում արևելյան վիլայեթների բնակիչների բարիդրացիական հարաբերությունների պահպանումն ու զարգացումը, նկատելով այն բանից, որ եվրոպացիները գալիս ու գնում են, իսկ տեղացիները մնում, եվրոպացիները քիչ են շփվում տեղացիների հետ, իսկ տեղացիները՝ շատ։

Առաջնորդողի վերջում ասվում էր. «Մենք գոհ կըլլանք, եթե այս հույժ չափավոր և համեստ ծրագիրն իսկ գործադրվելով, արևելյան գավառներուն մեջ կյանքի, պատվի, ինչքի ապահովություն և աշխատության ազատություն հաստատվին լրջորեն, հողային խնդիրը լուծվի, հայ գաղթականները վերադառնան իրենց հայրենիքը, և ժողովրդին աչքը դուրսը չըլլա այսուհետև»[4]։

Բայց «Բյուզանդիոնի» այդ երազանքները մնացին անիրագործելի։

1 «Բյուզանդիոն», 1914, փետրվարի 1, № 5265։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Նույն տեղը։

* * *

«Արմենիան», որ սուլթանի կառավարման տարիներին զրկված էր Թուրքիա մուտք գործելու իրավունքից, 1908 թ. հեղաշրջումից հետո ստանում է այդ իրավունքը և ողջունում սահմանադրության հռչակումը։ Նրա հրատարակիչ Մ. Փորթուգալյանը, վերհիշելով իր թերթի ներկայացուցչի մասնակցությունը 1907 թ. Փարիզի կոնգրեսին, գրում էր. «Արմենիայի» խմբագրությունը սխալած չէր, երբ Հ. Հ. դաշնակցության հետ համերաշխ գտնվեցավ Բարիզի համաժողովին մեջ համաձուլվելու համար երիտասարդ Թուրքերի կուսակցությունների հետ, Թուրքիայի մեջ սահմանադրական դրությամբ վարչություն մը հաստատելու համար»[1]։ Նա ապա ավելացնում էր, որ իր պարբերականը չէր միանա երիտթուրքերին, եթե նրանց վարքագիծը ոտնահարեր հայ ժողովրդի շահերը։ Բայց քանի որ նրանք եղբայրության ձեռք մեկնեցին հայ քաղաքական ու հասարակական գործիչներին, այն պետք էր ընդունել։ Թերթը ղեկավարվում էր նաև այն սկզբունքով, որ արևմտահայերը հայ լինելով հանդերձ նաև թուրքաբնակ են, ուստի պարտավոր են նպաստել «նաև Թուրքիայի ընդհանուր բարեկարգությանը»[2]։

Տասնամյակներ շարունակ հեղափոխություն քարոզող «Արմենիան» այժմ թողնում էր այդ պրոպագանդան և առաջարկում արևմտահայերին՝ լուծել իրենց հետաքրքրող խնդիրները խաղաղ ճանապարհով։ 1908 թ. սեպտեմբերի 9-ին «Դեպի գործ» առաջնորդողում կոչ էր անում նրանց՝ ակտիվացնել իրենց գործունեությունը թուրքական պառլամենտական և ազգային երեսփոխական ընտրություններում[3]։ Թերթը հայ պատգամավորներին խորհուրդ էր տալիս՝ Օսմանյան պառլամենտում միանալ իշխան Մ. Սաբահեդդինի կողմնակիցներին, քանի որ նրա «կուսակցության ծրագիրը ավելի ազատական և ավելի համապատասխան է Թուրքիայի ներքին գավառների ինքնօրինաբար բարգավաճման գաղափարին»[4]։

Քիչ անց՝ 1908 թ. հոկտեմբերին «Արմենիան» ավելի որոշակի էր ներկայացնում իր քաղաքական պահանջը, գրելով, թե

1 «Արմենիա», 1908, օգոստոսի 5։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, սեպտեմբերի 9։
4 Տե՛ս նույն տեղը, սեպտեմբերի 16։

«Թուրքիո ժողովուրդների և իրեն թուրք ազգի դերագույն շահը պահանջում է շնորհել այդ ժողովուրդներին կատարյալ ներքին ինքնավարություն՝ Օսմանյան տերության հետ անբաժան կապված։ Միայն այդպես կարող է Թուրքիան կատարել յուր վեհ կոչումը Ասիո պատմության մեջ և գրավել շրջակա փոքրիկ ազգերի ու տերությունների համակրությունը»[1]։

Թերթը կամենում էր, որ ինքնավար Հայաստանի կենտրոնը լինի էջմիածինը, բայց որովհետև դա անհնարին էր, առաջարկում էր Վանը։ Ապա եզրափակում էր, որ հայերը իրենց ներկա կացությամբ չեն կարող վերականգնել իրենց վաղեմի մեծ պետությունը, նրանք կարող են կազմել միայն փոքր ազգային միավորումներ, որոնցից մեկի կենտրոնը կլինի Վանը, իսկ մյուսինը՝ էջմիածինը[2]։

Պահանջելով արևմտահայության համար ինքնավարություն, «Արմենիան» մերժում էր անկախության գաղափարը։ Նա քննադատում էր հայ քաղաքական այն շրջաններին, որոնք քարոզում էին ազգային ինքնորոշում կամ սոցիալիզմ։ Թերթը գրտնում էր, որ դրանք արևմտահայության համար անիրագործելի ու վնասակար են։ Ուստի հարկ կա խաբել ժողովրդին «երեվակայական հույսերով»[3]։

Ապա թերթն անդրադառնում էր հողային հարցին և ցույց տալիս, որ աղաները տիրացել են գյուղացիների տարածքներին ու դարձրել նրանց իրենց մարաբաններ։ Նրանց իշխանությունն այդ տարաբախտների վրա դեռ այնքան հաստատ է ու ամուր, որ հեղկուլեսյան ուժ է պետք այն տապալելու համար[4]։

Պարբերականը բողոքում էր, որ թեև հեղաշրջումից անցել է արդեն մի քանի տարի, սակայն Իթթիհադի պարագլուխները չեն կատարում իրենց խոստումը հայ բնակչության դրության բարելավման ուղղությամբ։ Ընդհակառակը՝ նրանք սաստկացնում են հայկական բռնությունները և հայերի նվիրվածությանը իրենց հատուցում են «դժոխային պատիժներով»[5]։

Իրերի նման պայմաններում «Արմենիան» վերանայում էր իր դիրքորոշումը և գալիս այն եզրակացության, որ արևմտա-

1 «Արմենիա», 1908, հոկտեմբերի 14։
2 Տե՛ս նույն տեղը, հոկտեմբերի 28։
3 Տե՛ս նույն տեղը, նոյեմբերի 11։
4 Տե՛ս նույն տեղը, 1913, նոյեմբերի 26։
5 Տե՛ս նույն տեղը, հոկտեմբերի 15։

Հայերը չեն կարող լուծել իրենց սոցիալական ու ազգային խընդիրներն առանց դրսի օգնության։ 1913 թ. հոկտեմբերին նա գրում էր. «Ճիշտ է որ մենք կընդունենք, թե հայ ժողովուրդը ինքն իր բախտը տնօրինելու կարող պետք է դառնա, պետք է ներքին ուժ գոյացնե իր կանոնավոր զարգացման և իր կյանքի տևողության համար և ոչ թե իր հույսը դնե լոկ եվրոպական դիվանագիտության վրա... Բայց ամեն պարագայի մեջ մենք պարտավոր ենք նաև նկատի առնել եվրոպական դիվանագիտության ուղղությունն ու հայացքները, հասկանալ զինք և իրեն հասկըցնել մեզ, քանի որ արևելյան խնդիրն արդեն միջազգային բնույթ մը ունի, նույնիսկ մեր կամքե անկախ կերպով, և անոր կրնճիռները չեն կրնար լուծվել ու նոր կարգադրություններով կապվիլ, առանց եվրոպական դիվանագիտության միջամտության կամ թույլտվության»[1]։

Թերթը ենթադրում էր, որ Հայկական հարցը վաղ թե ուշ կլուծվի և կլուծվի ոչ թե հայոց աչքերի գեղեցկության, այլ տերությունների շահերի և Թուրքիայի փրկության համար։ Նա վառ գույներով էր նկարագրում Հայաստանի ապագան, նշելով, որ բարենորոգումների հետևանքով Հայաստանում կստեղծվի անձի և գույքի ապահովություն, որ նրա նահանգները իրար կկապվեն ֆրանսիական երկաթգծով։ Օտարերկրացիների միլիոնները կհոսեն Հայաստան, որոնք կզարգացնեն առևտուրը, արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը։ Կկառուցվեն գործարաններ և առաջ կմղվի երկրի տնտեսությունը։ Բյուրավոր ընչազուրկներ աշխատանք կգտնեն իրենց հայրենիքում, կդադարի արտագաղթը և ընդհակառակը՝ կսկսվի ներգաղթը։ Մարդիկ, որոնք տնտեսական պատճառներով լքել են Հայաստանը, հետ կվերադառնան և կշենացնեն իրենց երկիրը։ Կվերանան ավազակությունն ու բռնությունները, վայրենի ու կիսավայրենի ցեղերը հայերի ներգործության հետևանքով կքաղաքակրթվեն և կընտելանան կուլտուրական կյանքի։ Թրթակիցն այնքան իրական էր պատկերացնում բարենորոգումները, որ հայտարարում էր. «Մեզ հայերուս կմնա շնորհավորել ու ողջագուրել ջիրար մեր հայրենիքին ու մեր տանը մոտալուտ վերա-

1 «Արմենիա», 1913, հոկտեմբերի 29։

շինության համար՝ որը անդառնալիորեն որոշված, լմնցած գործ մըն է ալ ինչպես կերևի»[1]։

1914 թ. հունվարի 26-ին տերությունների կողմից հաստատված բարենորոգումները թեև երաշխիք չէին տալիս իրագործելու այդ վարդագույն երազանքները, այնուամենայնիվ պարբերականը չէր ուզում հուսախաբ լինել։ Նա հրապարակում էր եվրոպական ու հայկական շրջանների, մասնավորապես Պողոս Նուբար փաշայի մեկնաբանությունները բարենորոգումների մասին և հավաստիացնում, թե դրանք կիրագործվեն։ 1914 թ. ապրիլի 1-ին Թերթի թղթակից Կ. Հակոբյանը, բերելով Անգլիայի արտաքին գործերի մինիստր Էդուարդ Գրեի մարտի 8-ին անգլիական պալատում արտասանած ճառից քաղվածք բարենորոգումների մասին, գրում էր. «Հուսանք, որ բարենորոգումները հաջողելով արդյունավոր կլինին ու երկրին ամբողջությունը կպահպանվի ու հոն առաջադիմություն և ճշմարիտ քաղաքականությունը մուտք գտնելով, շուտով կծավալին հօգուտ հայոց, հօգուտ Հայաստանի, հօգուտ Օսմանյան պետության և հօգուտ եվրոպական խաղաղության»[2]։ Ըստ էության հոդվածագիրը կրկնում էր այն, ինչ ասում էր Պողոս Նուբար փաշան բարենորոգումների մասին։

Այնուհետև «Արմենիան» հրապարակում էր զանազան տեղեկություններ վերաքեսուչների Կ. Պոլիս ժամանման և դեպի Արևմտյան Հայաստան ուղևորման մասին։

Անդրադառնալով հոգևորականության հարցին, պարբերականը առաջվա նման նրան երկրորդական նշանակություն էր տալիս, բայց շարունակում էր ընդունել նրա առկայությունն ու անհրաժեշտությունը արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում։ Նա ուրախ էր, որ Կ. Պոլսի հայոց պատրիարք է ընտրվել Մ. Իզմիրլյանը, փառաբանում էր նրա անցյալը, բայց միաժամանակ զգուշացնում էր, որ ժողովուրդը շատ բաներ չպահանջի նորընտիր պատրիարքից, քանի որ նրա հասարակական դիրքն ու կարողությունները համեստ են[3]։

1 «Արմենիա», 1913, նոյեմբերի 5։
2 Նույն տեղը, 1914, ապրիլի 1։
3 Տե՛ս նույն տեղը, 1908, նոյեմբերի 11։

Այդպիսով «Արմենիան» արևմտահայության կացության բարելավումը սկզբում կապում էր երիտթուրքական վարչակարգի, իսկ հետո, տեսնելով նրա հայահալած քաղաքականությունը՝ եվրոպական տերությունների արտաքին քաղաքականության հետ։ Բերքի տնտեսական իդեալը բուրժուական ձեռնարկումներն էին Թուրքիայում ու հատկապես Արևմտյան Հայաստանում, իսկ քաղաքական բաղձանքները՝ հայկական ինքնավարությունը՝ Օսմանյան կայսրության սահմաններում։

* * *

1907 թ. Փարիզի կոնգրեսը արևմտահայության համար ողբերգություն համարող Ա. Չոպանյանը 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո փառաբանում էր այն, նշելով, որ այդ կոնգրեսը միավորեց հայ ու թուրք ազատականների ուժերը բռնապետության դեմ և հաղթանակի հասցրեց։ Այժմ արդեն «Օսմանյան պետության համար նոր դարագլուխ մը բացված է»[1]։

Սակայն Ադանայի հայոց կոտորածները Ա. Չոպանյանին նույնպես սթափեցրին, և նա սկսեց քննադատել Իթթիհադին։ Հրապարակախոսը նշում էր, որ երիտթուրքերը փոխանակ ընթանալու ուղիղ ճանապարհով, սկսեցին մագլցել կածաններով։ Նրանք սուլթանին պահեցին իր գահին, որ օգտագործեին իրենց նպատակների համար, բայց «իրանք եղան անոր խաղալիքը»[2]։ Իթթիհադի այդ քաղաքականությունից տուժեցին հայերը, տալով նոր վարչակարգի պայմաններում բազմաթիվ զոհեր։

Ա. Չոպանյանը Ադանայի կոտորածների գործում իրավամբ մեղադրում էր ոչ միայն Աբդուլ Համիդին, այլև երիտթուրքերին, նշելով, որ ազատության զինվորները «Ատանայի երկրորդ ջարդին կմասնակցին»։ Իսկ Իթթիհադի պարագլուխները հանցագործներին հայտնաբերելու և պատժելու փոխարեն, ջարդերի «պատասխանատվությունը հայոց վրա նետելու ջանքեր կընեն»[3]։ Նա ապա եզրակացնում էր, որ աշխարհը տեսավ «թե նոր բսված բեժիմին մեջ ինչքան մեծ չափով կենդանի կմնար

1 Տե՛ս «Անահիտ», 1909, № 5—6, էջ 141։
2 Տե՛ս նույն տեղը, № 1—2, էջ 44։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 46։

հին բեժիմը, հին բարբարոս մտայնությունը»[1]։ Այնուամենայնիվ հույս էր տածում, որ երիտթուրքերի կառավարությունը վերջ կդնի կոտորածներին, ելնելով, գոնե, իր շահերից[2]։

Դրական գնահատելով Իթթիհադին հայերի օգնությունը Աբդուլ Համիդի տապալման գործում, հրապարակախոսը, սակայն, գտնում էր, որ այժմ նրանք չպետք է մեծամտաբար հայտարարեն, թե սահմանադրությունն իրենք են բերել, քանի որ դա կդրգռի մոլեռանդ մահմեդականներին իրենց դեմ։ Հայերը պետք է մի կողմ դնեն կուսակցական գզվռտոցներն ու լրագրական պայքարը և համախմբվեն ու կերտեն իրենց ապագան։ Նա դեմ էր հատկապես ընկերվարական կամ սոցիալիստական-կոմունիստական ու հակակղերական գաղափարների տարածմանը հայ իրականության մեջ, գտնելով, որ «հայոց հարյուրեն իննսունինը ոչ հակակղերական է, ոչ մարքսյան»[3]։ Հեղինակը, սակայն, բոլորովին չէր մերժում ընկերվարական գաղափարները։ Նա գտնում էր, որ դրանց իրագործման համար հայ իրականության մեջ դեռ չկան պայմաններ, իսկ երբ լինեն, թող մեր հասարակության մեջ էլ նրանք քարոզվեն[4]։

Ա. Չոպանյանը այն կարծիքին էր, որ հեղաշրջումից հետո հայերը իրենց բախտը պետք է կապեն վերածնվող Թուրքիայի հետ և նրա հետ միասին կատարելագործվեն ու առաջ գնան։ Նրանք չպետք է պահանջեն ոչ ինքնավարություն, ոչ անկախություն և ոչ էլ հայկական թագավորություն, «որովհետև անկարելի է»[5]։ Նրանք այդպես պետք է մնան այնքան ժամանակ, մինչև որ մի օտար պետություն (իմա՝ Ռուսաստանը) կնվաճի Հայաստանը և կմիացնի իրեն։

Բայց հրապարակախոսը մերժում էր երիտթուրքերի օսմանիզմի գաղափարախոսությունը, հայտարարելով, որ մենք հայ

1 «Անահիտ», 1909, № 3—4, էջ 137։
2 Տե՛ս նույն տեղը, № 5—6, էջ 140։
3 Նույն տեղը, էջ 142։
4 Տե՛ս նույն տեղը։
5 Տե՛ս նույն տեղը, էջ 143։

ենք, հայ էլ կմնանք, օսմանցի կամ թուրք չենք դառնա։ Հայերը պետք է պահպանեն իրենց ազգային սահմանադրությունը՝ պատրիարքարանով ու երեսփոխանական ժողովներով հանդերձ և զարգացնեն ազգային մշակույթը։ Նրանք պետք է այնպես առաջ տանեն իրենց լեզուն, գրականությունը, արվեստը և ազգային այլ արժեքները, որ «մեր ապագա սերունդները՝ հայկական քաղաքակրթության մը անդիմադրելի փայլեն իսկ շլացած, գրավված, տիրապետված, ամեն օտարացման փորձության հակառակ հայ մնան»[1]։

Հայկական հարցի քննարկման օրերին Ա. Զոպանյանը նրա լուծման համար առաջարկում էր տարբեր միջոցներ։ 1912 թ. նոյեմբերի 12-ին պետական դումայի դեպուտատ Մ. Պարաջանյանին հղած նամակում գրում էր, որ կամ պետք է խնդրել բալկանյան պետություններին, մասնավորապես Բուլղարիային ու Հունաստանին, որ իրենց հարցը քննելիս տերությունների առջև բարձրացնեն նաև հայերինը, կամ հասնել այն բանին, որ Ռուսաստանն ինքը վերցնի հայոց բախտն իր ձեռքը, մղտցընելով անգամ իր զորամասերն Արևմտյան Հայաստան։

«Թրքահայաստանը ամբողջ,— գրում էր նա,— այժմ ռուսին գալստյանը կսպասե, ռուսեն կհուսա իր ազատումը։ Պետք է ջանանք, որ ռուսը շուշացնե Թրքահայաստանի մեջ իր մուտքը։ Այդ որոշված բան է. օր մը չէ օր մը պիտի կատարվի. եվրոպական տերություններն ալ սկզբեն համակերպած են այդ ծրագրին»։ Ռուսաստանը պիտի շտապի մտցնել իր զորամասերը Արևմտյան Հայաստան՝ «գոնե կոտորածի առաջն առնելու համար»[2]։

Ապա Ա. Զոպանյանը գտնում էր, որ հայերը պետք է վաստակեն նաև Անգլիայի ու Ֆրանսիայի համակրանքը, հասնեն այն բանին, որ նրանք «աջակցին ռուսին, և երեքը միասին ազատեն Թրքահայաստանը։ Հավանական է, որ արդյունքն ըլլա հայ-

1 «Անահիտ», 1910, № 11—12, էջ 252։

2 Ա. Զոպանյան, նշվ. աշխ., էջ 112։

կական Լիբանան[1] մը՝ Ռուսիո հովանավորության տակ,— ինչ որ լավագույն լուծումը պիտի ըլլա»[2]։

Այնուհետև հրապարակախոսն այն կարծիքն էր հայտնում, որ եթե հայկական վիլայեթները մնան Օսմանյան կայսրության կազմում, բարենորոգումները չեն կարող լուծել «թուրքահայ տարաբախտ հարցը», բայց նրանք կբարելավեն Թուրքիայի դրությունը, կհասցնեն այդ երկիրը ավելի բարձր տնտեսական, քաղաքական ու վարչական մակարդակի[3]։ Նա գտնում էր, որ Հայկական հարցը կշարունակի զբաղեցնել տերություններին ու Թուրքիային և դժվարանում էր ասել, թե ինչ լուծում կստանա, բայց անտարակուսելի էր համարում, որ «բան մը պիտի ըլլա»[4]։ Ապա ավելացնում էր. «Ինչ ալ պատահի, սակայն, հայերը հուսահատվելու տեղիք չունին», քանի որ «ապագան իրենցն է», միայն թե կարողանան գոյատևել մինչև վճռական պահը, այսինքն՝ Արևելքի բարեփոխումը[5]։

Ա. Զոպանյանը պնդում էր, որ արևմտահայերը, իրենց ներկա վիճակով, չեն կարող պահանջել անջատում կամ, նույնիսկ, ինքնավարություն։ Ապրելու և զարգանալու համար նրանց պետք է մի կանոնավոր, արդար, քաղաքակիրթ և անաչառ վարչակարգ։ Նրա համոզմամբ, այդ վարչակարգը կարող է ստեղծվել «կամ եվրոպական վերահսկողության տակ բարենորոգմանց լուրջ գործադրությամբ և կամ ռուսական գրավմամբ»[6]։

Ինչ խոսք, Ա. Զոպանյանը, տարվելով «ազատարար» տերությունների կեղծ ու պատիր հայտարարություններով, անրջում

1 Տևական պայքարից հետո Լիբանանը վերջապես հասավ այն բանին, որ Ֆրանսիան, Անգլիան, Ավստրիան, Պրուսիան ու Թուրքիան 1861 թ. մշակեցին նրա համար, այսպես կոչված, Օրգանական կանոնադրություն (ստատուս), ըստ որի Լիբանանը հայտարարվում էր ինքնավար մարզ (մութասարրիֆություն), որը կառավարվում էր Թուրքիայի կողմից նշանակվող և տերությունների հավանությունն ստացող քրիստոնյա գեներալ-նահանգապետի կողմից։ Թուրքական զորամասերի մուտքը Լիբանան արգելվում էր։ Լիբանանում կարգավորվում էին կառավարման ու հարկային գործերը, վերացվում էին ֆեոդալական արտոնությունները, բոլոր քաղաքացիները համարվում էին իրավահավասար։

2 Ա. Զոպանյան, նշվ. աշխ., էջ 114—115։

3 Տե՛ս «Մշակ», 1913, դեկտեմբերի 13, № 277։

4 Տե՛ս նույն տեղը, դեկտեմբերի 28, № 290։

5 Տե՛ս նույն տեղը։

6 Տե՛ս նույն տեղը։

էր արևմտահայերի գեղեցիկ ապագայի մասին, բայց անտեսում էր այն իրողությունը, որ նրանք այդ տերությունների քույլտվության պայմաններում կոտորվում ու մորթոտվում են, ապրում են իրենց գոյության վերջին օրերը։

***

Արևելահայ լիբերալները սառնասրտությամբ ընդունեցին երիտթուրքական հեղաշրջման լուրը։ Հեռու գտնվելով սուլթանական լծից և քաջատեղյակ թուրք տիրակալների նենգություններին, քաղաքական խարդավանքներին ու դիվանագիտական խուսանավումներին, նրանք սահմանադրության հռչակման առաջին օրերին ցուցաբերում էին համբերություն և զգաստություն։ 1908 թ. հուլիսի 13-ին «Մշակը» գրում էր. ասում են, որ Թուրքիայում զորքն ապստամբվել է, հեղափոխություն է եղել, սահմանադրություն է հռչակվել, երկիրը սահմանադրական է դառնում, բայց հայտնի չէ, թե ինչ հեղափոխություն է կատարվել, ինչ սահմանադրություն է հռչակվել, արդյոք դա իսկական սահմանադրություն է, թե ձևական մի բան։ «Մենք այնքան շատ ենք խաբված Թուրքիայի կողմից,— շարունակում էր թերթը,— որ չենք հավատում մեր կարդացած հեռագրին, բայց հուսանք, որ բազմամյա տառապանքներից հետո լույսի մի նշույլ է թափանցում դեպի նահատակների երկիրը»[1]։

Արևելահայ լիբերալները գտնում էին, որ սահմանադրության հարատևման ու կայունության համար անհրաժեշտ է, որ հանդես գա նաև ժողովուրդը, դրսևորի իր քաղաքական հասունությունը, սահմանադրական կարգով ապրելու անհողդողդ կամքը և թելադրի կառավարությանը իր պահանջները։ Այլապես ամեն ինչ կանցնի ապարդյուն, քանի որ «զորքի վրա դրված հույսերը խախուտ հույսեր են։ Զորքը միայն գործիք կարող է լինել ղեկավարների ձեռքին»[2]։ Այլ կերպ ասած՝ լիբերալները անհրաժեշտ էին համարում, որ բուրժուական հեղափոխությունը Թուրքիայում վերածվեր բուրժուադեմոկրատական հեղափոխության, ծավալվեր ավելի հեռու և կենսական հարցերը լուծեր համեմատաբար լայնորեն։

1 «Մշակ», 1908, հուլիսի 13, № 151։
2 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 17, № 154։

«Մշակի» խմբագիր Ա. Քալանթարը կարծում էր, որ սուլթանը դիվանագիտական նպատակներով է հռչակել սահմանադրությունը՝ ցանկանալով որոշ զիջումներ կատարել Անգլիային ու Ռուսաստանին և դրանով իսկ վերացնելու նրանց սպառնալիքները։ Այնուամենայնիվ Ա. Քալանթարը գտնում էր, որ ներկա պահին սխալվում են նրանք, ովքեր առաջարկում են՝ «տապալել Ելդըզը և վերջնականապես հրատարակել հանրապետական սահմանադրություն... հայտարարել դասակարգային կռիվ»[1]։ Նման դեպքում, շարունակում էր նա, սուլթանն ու իր համախոհները կդիմեն դաժան միջոցների և կոչնչացնեն ձեռք բերած նվաճումները։ Սահմանադրականները այժմ պետք է համախմբվեն և ամրապնդեն այդ նվաճումները և դրանից հետո միայն վարեն կուսակցական գործողություններ, դասակարգային կռիվներ։

Շարունակելով իր դրույթի զարգացումը, լրագրի տնօրենը նշում էր, որ թուրքական սահմանադրությունը այն ժամանակ կբավարարի օսմանյան ժողովուրդներին, երբ կվերակառուցվի վարչական ապակենտրոնացման սկզբունքներով։ «Միայն վարչական լայն աշխարհայացքը և տեղական ինքնավարության սկզբունքների խոր ըմբռնումը կարող են կանոնավոր և ամուր հիմքերի վրա դնել այնպիսի պետության քաղաքական և քաղաքացիական զարգացումը, ինչպես Թուրքիան է, որտեղ խմբված են միատեղ զանազան ազգագրական, պատմական և կուլտուրական տարրերը»[2]։

Պաշտպանելով այդ միտքը, Հ. Առաքելյանը գտնում էր, որ օսմանյան ժողովուրդները, որոնց թվում նաև հայերը, այժմ չպետք է պահանջեն ինքնավարություն։ Նման պահանջները «միայն ապագայի հարցեր են, երբ սահմանադրական բեժիմը վերջնականապես կհաստատվի»[3]։ Այժմ նրանք պետք է խնդիր դնեն վարչական ապակենտրոնացման մասին, այսինքն՝ հասնել նահանգների ու գավառների որոշ ինքնավարման։ Իսկ դրա համար անհրաժեշտ է վերակառուցել տեղական դատարանները, վարչությունները, ֆինանսական համակարգը և այլն։ Հոդվածագիրը 1908 թ. հեղաշրջումը համարում էր Թուրքիայի ազա-

1 Տե՛ս «Մշակ», 1908, հուլիսի 18, № 155։
2 Նույն տեղը, հուլիսի 27, № 162։
3 Տե՛ս նույն տեղը, օգոստոսի 15, № 178։

տության արշալույսը, պահանջում էր պաշտպանել երիտթուրքերի ծրագիրը, հույս ունենալով, որ այն օսմանյան ժողովուրդներին կտա կյանքի, գույքի ու պատվի ապահովություն, քաղաքական զարգացման հնարավորություն։ Նա գտնում էր, որ հայերը պետք է աշխատեն պահպանել իրենց ինքնավարական իրավունքները, այսինքն՝ ազգային սահմանադրությունը, և դրանից ավելին պահանջելը կխաթարի նրանց ազատագրության գործը։ Ուստի քննադատում էր հնչակյաններին, որոնք հայտարարում էին, թե պետք է ձեռք բերել «ամբողջական սահմանադրություն», ստեղծել «ինքնավար սոցիալիստ Հայաստան» և այլն։ «Պարոններ,— գրում էր նա,— զգուշացեք չափազանցություններից, խույս տվեք ուտոպիական, անիրագործելի պահանջներից, մի վտանգեք ազատության գործը, որովհետև ձեր չափազանց անիրագործելի պահանջները կարող են խրտնեցնել երիտասարդ թուրքերի կուսակցությունը և Թուրքիայի առաջադիմական տարրերը, բեակցիա առաջ բերել և ամբացնել Եվրոպայի մեջ այն կարծիքը, թե հայերը անհանգիստ և խաղաղ, կուլտուրական զարգացման անընդունակ տարրեր են»[1]։

Հանդես գալով երիտթուրքերի ծրագրի պաշտպանությամբ, Հ. Առաքելյանը, սակայն, դեմ էր նրանց օսմանիզմի գաղափարին։ Նա գտնում էր, որ հայերը այսուհետև էլ պետք է կոչվեն հայեր, բայց ոչ օսմանցիներ և չհակադրելով դրանք իրար, նշում, որ կարելի է լինել լավ օսմանյան քաղաքացիներ, առանց հայ ազգությունից հրաժարվելու, առանց ազգային բոլոր իրավունքները կորցնելու[2]։ Թող երիտթուրքերը կազմեն «Օսմանյան պետություն, որի բաղկացուցիչ մասերը և տարրերը կունենան իրենց սեփական ինքնավարությունը, սեփական կուլտուրան, բայց միևնույն ժամանակ կապված, զոդված կլինեն ընդհանուր պետության հետ, իբրև նրա քաղաքացիներ»[3]։

Հրապարակախոսի կարծիքով, արևմտահայությունը չունի անջատողական ձգտումներ. այն պահանջում է կյանքի, գույքի ու պատվի ապահովություն և փորձելով փոքր-ինչ ընդարձակել իր ցանկությունները, շարունակում էր. «Ամենաշատը նա

1 «Մշակ», 1908, օգոստոսի 24, № 185։
2 Տե՛ս «Մշակ», սեպտեմբերի 4, № 194։
3 Տե՛ս նույն տեղը, սեպտեմբերի 25, № 210։

ձգտում է ձեռք բերել կուլտուրական ավտոնոմիա, տեղական լայն ինքնավարություն»[1]։ Թող Հայաստանում հաստատվի կարգ ու կանոն, թող հայերը դիտվեն երկրի լիիրավ քաղաքացիներ, բայց ոչ՝ ռայաներ, թող քրդերը այլևս չկողոպտեն ու չհալածեն նրանց, թող նրանք կարողանան ազատ տնօրինել իրենց ազգային գործերը, անկաշկանդ զբաղվեն առևտրով, արդյունաբերությամբ, գյուղատնտեսությամբ, առաջ տանեն իրենց տնտեսական ու մշակութային զարգացումը, «նրանք կլինեն ամենալավ օսմանյան քաղաքացիներ, և նրանք այլևս չեն դիմի այս և այն եվրոպական պետության միջամտությանը։ Եվ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը ինքնըստինքյան կանհետանա»[2]։ Հակառակ պարագայում՝ հայերն ստիպված կլինեն դիմել այդ հոդվածին և նորից աչքերը հառել եվրոպական տերություններին։

Բայց 1912 թ. «Մշակի» խմբագիրը, տեսնելով, որ երիտթուրքերի վարչակարգը չի բավարարում հայերի տարրական պահանջները, առաջ է քաշում Եվրոպայի վերահսկողությամբ Թուրքիայում հայկական ինքնավարության ստեղծման գաղափարը։ «Տեղական ավտոնոմիա՝ եվրոպացիների հսկողության ներքո և զենք կրելու իրավունք՝ ինքնապաշտպանության համար— ահա ինչ պետք է պահանջենք բոլոր հայերս Թուրքիայի մեր հայ եղբայրների համար»[3]։

Հ. Առաքելյանը գտնում էր, որ արևմտահայերը ավելի են հասունացած ինքնավարության համար, քան օսմանյան մյուս ժողովուրդները, որովհետև ունեն ազգային սահմանադրություն, ազգային ընդհանուր վարչություն։ Սակայն նշելով, որ բռնակալի տիրապետության տարիներին դրանք խստորեն տուժել են և, ըստ էության, կաղմալուծվել, նա պահանջում էր, որ այն պետք է վերակառուցել՝ ընդ որում դեմոկրատական լայն հի-

1 «Մշակ», 1908, հոկտեմբերի 3, № 217։
2 Նույն տեղը։
3 «Մշակ», 1912, սեպտեմբերի 5, № 196։ Անհրաժեշտ է նշել, որ «տեղական ավտոնոմիա» ասելով հեղինակն արդեն իսկ հասկանում էր հայկական ինքնավարություն։ 1912 թ. նա գրում էր. «Ատոմիստական ապակենտրոնացումը նույնն է, ինչ որ, օրինակ, զեմստվային վարչությունը Ռուսաստանում, այն տարբերությամբ, որ այդ սիստեմը գործադրվում է ոչ թե որոշ նահանգների, այլ որոշ ազգությունների վերաբերմամբ, ինչ որ Թուրքիայի պես մի երկրում ամենից հարմարն էր» («Մշակ», 1912, սեպտեմբերի 6, № 197)։

մունքներով։ Հեղինակը գտնում էր, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքն ու ազգային ընդհանուր վարչությունը պետք է ղեկավարեն արևմտահայությանը, ներկայացնելով Բ. Դռանը նրա պահանջներն ու բողոքները[1]։

Անդրադառնալով հողային հարցին, «Մշակը» 1908 թ. հեղաշրջումից անմիջապես հետո գտնում էր, որ տարագիրները պետք է Կովկասից անհապաղ վերադառնան հայրենիք, վերակառուցեն իրենց ավերված օջախները, գանազան հափշտակիչներից հետո ստանալով իրենց հողերը[2]։

Հետագայում պարբերականն առաջարկում էր՝ Արևմտյան Հայաստանում հողային հարցի լուծման համար ստեղծել ռուսական հովանավորությունից օգտվող դրամատներ։ Դրանով, մի կողմից, կարելի է նպաստել Ռուսաստանի ազդեցության ուժեղացմանը Թուրքիայի այդ մասում, իսկ մյուս կողմից՝ փրկել հայկական հողերը մահմեդականների զավթումներից։ Թերթը մերժում էր արտադրական ընկերությունների կամ միությունների կազմակերպման գաղափարը, գտնելով, որ դրա իրագործումը անհնար է Արևմտյան Հայաստանում[3]։ Նա չէր դնում ֆեոդալական հողատիրության վերացման հարցը։

«Մշակը» լուրջ հույսեր էր կապում հայկական վիլայեթներում անցկացվելիք բարենորոգումների հետ։ Ենթադրում էր, որ դրանք վերջ կտան գոյություն ունեցող ալան-թալանին, ավազակությանը, կաշառակերությանը, ձրիակերությանը, չարաշահումներին, հալածանքներին ու ջարդերին, կստեղծեն կյանքի ու գույքի ապահովություն, տնտեսական, հասարակական ու կուլտուրական ազատություն։ Թերթը գտնում էր, որ այդ բարենորոգումները կարող են լինել միայն եվրոպական տերությունների միջամտությամբ և նրանց հսկողությամբ։ Այն կիրականացվի կամ հավաքական (բոլոր պետությունների) կամ առանձին, անհատական (խմբերից մեկի կամ մի տերության) ուժերով։ Ամենից լավը, թերևս, իրականացվի Ռուսաստանի կողմից, քանի որ Արևմտյան Հայաստանին բոլորից մոտ նա է դրտնվում[4]։

1 Տե՛ս «Մշակ», 1908, սեպտեմբերի 7, № 197։
2 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 23, № 158։
3 Տե՛ս նույն տեղը, 1911, սեպտեմբերի 6, № 194, 1914, մարտի 1, № 45։
4 Տե՛ս նույն տեղը, 1913, հուլիսի 14, № 153, հոկտեմբերի 4, № 219, հոկտեմբերի 20, № 233։

Պարբերականը գոհունակությամբ էր արտահայտվում պատրիարքարանի մասին, որը մերժել էր երիտթուրքերի առաջարկը բարենորոգումների վերաբերյալ սեպարատ բանակցություններ վարելու համար և, ընդհակառակը, քննադատում էր դաշնակցությանը, իբր թե նրանց այդ առաջարկն ընդունելու համար[1]։

Անդրադառնալով Պողոս Նուբար փաշայի, պատրիարքարանի և Մանդելշտամի բարենորոգումների նախագծերին, թերթը գտնում էր, թե դրանցից որն էլ ընդունվի ու իրագործվի, «Թուրքահայաստանում կստեղծվի կարգ ու կանոն, ապահովություն և որոշ չափով ինքնավարական ոգի»[2]։ Իսկ երբ տերությունները հաստատեցին ռուսական ու գերմանական նախագիծը, նա այդ համարեց խիստ համեստ նախագիծ, բայց և այնպես դրական գնահատեց, մանավանդ, երբ բարենորոգումների իրագործման համար վերահսկողություն էր նախատեսվում։ Այդ վերահսկողությունը կամ կոնտրոլը բնութագրում էր որպես ամենամեծ քայլ՝ Հայկական հարցի լուծման ճանապարհին։ Այնուհետև պարբերականը եզրակացնում էր, որ բարենորոգումներից կշահեն ոչ միայն հայերը, այլև մյուս ժողովուրդները, իսկ ամենից շատ «ինքը Թուրքիան»[3]։

«Մշակը» ողջունեց բարենորոգումների նախագծի հաստատումը տերությունների կողմից։ 1914 թ. փետրվարի 13-ին նրա թղթակիցներից մեկը գրում էր, որ թեև Գերմանիայի պատճառով ընդունված բարենորոգումները հեռու են ռուսական նախագծից, բայց «ողջունում ենք նույնիսկ այդ կրճատված ռեֆորմները, միայն թե նրանք չմնան թղթի վրա, այլ իրականանան կյանքի մեջ...»։ Ապա դիմելով արևմտահայերին, շարունակում էր. «Ձեր սիրած հայրենիքի, ձեր վաթանի արևն է ծագում։ Բավ է՝ որքան տանջվեցիք, որքան արյուն թափեցիք, այժմ դեպի խաղաղ, հանգիստ ստեղծագործական աշխատանք»[4]։

Բայց այդ ոգևորությունը շուտով տեղի տվեց հիասթափության, երբ երիտթուրքական խաբեբաները կամեցան իրագործել 1914 թ. հունվարի 26-ի նախագիծը։ Նույն թվի ապրիլի

1 Տե՛ս «Մշակ», 1913, դեկտեմբերի 6, № 272, դեկտեմբերի 8, № 274։
2 Տե՛ս նույն տեղը, դեկտեմբերի 7, № 273։
3 Տե՛ս նույն տեղը, դեկտեմբերի 15, № 279։
4 Նույն տեղը, 1914, փետրվարի 13, № 33։

13-ին Հ. Առաքելյանն արդեն գրում էր, որ Թուրքիայի իրավիճակը կասկածել է տալիս, թե գործադրվեն բարենորոգումները։ Երկյուղը, վտանգը և սարսափները դամոկլյան սրի պես կախված են արևմտահայերի գլխին։ Նրանց համար ստեղծվել է «զարձյալ մի անորոշ դրություն, մի սպառնալից վիճակ»[1]։

Այդուհանդերձ, չի կարելի սակայն անտեսել, որ «Մշակը» ինչպես բարենորոգումների հաստատումից առաջ, այնպես էլ հետո արևմտահայության ազատագրումը կապում էր ոչ այնքան բարենորոգումների, որքան Ռուսաստանի քաղաքականության հետ։ Նրա էջերում նյութեր էին հրապարակվում, որոնց հեղինակները բնակչության անունից հայտարարում էին, թե այն իր փրկությունը տեսնում է միայն հայկական նահանգները Ռուսաստանին միացնելու մեջ։

1913 թ. մայիսի 10-ին պարբերականի թղթակիցներից մեկը Էրզրումից գրում էր. «Ով հնարավորություն է ունեցել մոտիկից շփվելու հայկական նահանգների ու մասնավորապես Էրզրումի վիլայեթի ժողովրդական լայն մասսաների հետ, մրտնել գյուղացիների, արհեստավորների, առևտրականների, հարուստների ու բանվորների շրջանները, նա պարզ կերպով պիտի գիտենա, որ հայ ժողովուրդը չի հավատում ոչ հայկական ինքնավարության ցնորքին և ոչ էլ եվրոպական կոնտրոլի միջոցով երկիրը բարեկարգելու հույսերին։ Իսկ Ստամբոլ նստած թուրք փաշաների ծրագրած «բարեկարգությունները» նա առնվազն արհամարհում ու ծաղրում է։ Հայ ազգաբնակությունը ունի մի բեալ հույս. դա ռուսական գրավումն է. հայկական հարցի լուծման կարուկ ձևը»[2]։ Նման փաստեր շատ կարելի է բերել։

«Մշակը», հետևելով Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում դեպքերի ընթացքին, գալիս է, ի վերջո, այն եզրակացության, որ արևմտահայության ազատագրությունը տեղի կունենա այն ժամանակ, երբ նրա հայրենիքը ինքնավար սկզբունքով կանցնի Ռուսաստանի տիրապետության ու հովանավորության տակ։

Այդպիսով, ինչպես պահպանողականները, այնպես էլ լիբերալները ուրախությամբ ընդունեցին երիտթուրքական հեղաշրջման լուրը, ենթադրելով, որ նոր կառավարիչներն այժմ վերջ կդնեն բռնություններին և պայմաններ կստեղծեն արևմտահայության դրության բարելավման համար։ Նրանք կոչ էին անում հայերին՝ լինել չափավոր, չդիմել ծայրահեղությունների, այսինքն չպահանջել դեմոկրատական լայն միջոցառումներ։ Նրանք ուզում էին ստեղծել արևմտահայության համար միայն կյանքի ու գույքի ապահովություն։ Ուստի ոչ ինքնավարության և ոչ էլ ինքնորոշման կամ անջատման խնդիր չէին դնում։ Պահպանողականներն ու լիբերալները կամենում էին հետ վերադարձնել բռնապետության տարիներին հայերից հափրշտակած հողերը և հնարավորության սահմաններում հողակտոր հատկացնել հողազուրկներին։ Նրանք չէին պահանջում ֆեոդալական հարաբերությունների վերացում կամ արևմտահայ գյուղացիության միջնադարյան կապանքներից ազատագրում։

Սակայն պահպանողականներն ու լիբերալները երբ տեսան, որ երիտթուրքերը շարունակում են սուլթանի հայահալած ու հայաջինջ քաղաքականությունը և նույնիսկ խստացնում են այն, արևմտահայության հարցերի լուծումը վերստին կապեցին եվրոպական տերությունների, մասնավորապես Ռուսաստանի հետ։ Հատկանշական է, որ Հայկական հարցի վերաբացման օրերին արևմտահայ պահպանողականների ու լիբերալների մեծամասնությունը շարունակում էր երազել արևմտահայերի անձի ու գույքի ապահովության ստեղծման մասին, կրկին խուսափելով Արևմտյան Հայաստանի ինքնավարության կամ անկախության հարցերի արծարծումից, իսկ արևելահայ պահպանողականներն ու լիբերալները արդեն պահանջում էին Հայաստանի ինքնավարություն՝ Ռուսաստանի հովանավորության ներքո։

Ընդհանրապես պետք է նշել, որ XX դ. սկզբին, հատկապես 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո պահպանողականների ու լիբերալների տեսակետները արևմտահայության ազատագրության հարցում ավելի մերձեցան, կանգնելով հիմնականում միևնույն դիրքերում։

Անկուսակցական դեմոկրատներ

1908 թ. հեղաշրջումից հետո հայ դեմոկրատները հրաժարվեցին հեղափոխական պրոպագանդայից և խնդիր դրեցին մեր-

[1] Տե՛ս «Մշակ», 1914, ապրիլի 13, № 77։

[2] Նույն տեղը, 1913, մայիսի 17, № 106։

կացնել Համիդյան բռնապետական վարչակարգը, ցույց տալ նրա ավերիչ հետևանքները, պահանջել Իթթիհադից արմատախիլ անել այն և ձեռնամուխ լինել երկրի խաղաղ վերափոխման, դեմոկրատական լայն վերակառուցման գործին։ Քաջատեղյակ լինելով թուրքական իրականությանը, միաժամանակ նրանք անհրաժեշտ համարեցին համախմբել արևմտահայերի ուժերը և բարձրացնել նրանց մարտունակությունը՝ անսպասելիորեն բրնկվող արհավիրքներին դիմագրավելու համար։

Այդպիսի գործունեություն ծավալեց Գրիգոր Զոհրապը։ Ի տարբերություն պահպանողականների ու լիբերալների, որոնք սահմանադրության հռչակումից հետո գովում ու փառաբանում էին Աբդուլ Համիդին, նա 1908 թ. հուլիսի 31-ին Բերայի եկեղեցու հայ ու թուրք մասնակիցների միտինգում արտասանած իր ճառում խարազանեց սուլթանի արյունոտ վարչակարգը, ցույց տվեց, որ բռնակալը երեսուն տարի շարունակ վարում էր մոլի շովինիստական քաղաքականություն, պատերազմում էր ազգերի դեմ, հալածելով նրանց լեզուն, հավատը, ավանդույթները։ Նրա այդ քաղաքականության հետևանքով թագավորում էր «ամեն կողմ լռություն, ամեն կողմ մթություն»[1]։

Գր. Զոհրապը Համիդյան Թուրքիան համեմատում էր գերեզմանատան հետ ու նշում, որ բռնակալն էլ. իշխում այդ գերեզմանատան մեջ և «վախենալով, որ չեզյան օր մը մեռելները ողջանան, ամեն տեսակ զգուշական միջոցներ ձեռք առնելե ետ չէր մնար»։ Բայց, չնայած դրան, ազգերն ըմբոստացան, «մեծամեծ կորուստներ ունեցան», «փառք վաստակեցին»[2]։ Ջաղկելով սուլթանի շովինիստական քաղաքականությունը, նա առաջ էր քաշում ու պաշտպանում ազգերի եղբայրության, հավասարության ու ազատության գաղափարը, հայտարարելով՝ «դավանություններս տարբեր, բայց կրոնքնիս մեկ է, ամենուս ալ կրոնքն ազատություն է»[3]։ Նա բացում էր հայ ու թուրք խավարամիտ զանգվածների աչքերը և ցույց տալիս, որ նրանց մեջ ատելություն սերմանողը Համիդյան «խառնակիչ ու խարդախ կառավարությունն էր»[4]։

1 Տե՛ս «Բյուզանդիոն», 1908, օգոստոսի 1, № 3603։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը։

Ենթադրելով, որ կատարված իրազարձությունը վերջ էր դնելու հին հարաբերություններին, բացելու է երկրի զարգացման համար նոր ուղիներ, Գր. Զոհրապը 1908 թ. օգոստոսի 5-ին Ա. Չոպանյանին հղած նամակում գրում էր. «Այսուհետև պիտի քալենք թուրքաց հետ, փոխադարձ հարգանքով ու փոխադարձապես իրավունքներնիս, պարտքերնիս և արժանիքնիս ճանչնալու հիման վրա»[1]։

Սակայն Ադանայի դեպքերը սթափեցրին Զոհրապին։ Տեսնելով, որ նոր կառավարիչները շարունակում են հների հայահալած քաղաքականությունը, նա վերանայեց իր համոզմունքները։ Նախ՝ պահանջեց պատժել Ադանայի հանցագործներին և շնորհիվ իր հետևողականության հասավ արդյունքի։ Դա բացառիկ երևույթ էր, երբ Թուրքիայում մահմեդականները պատժվում էին քրիստոնյաներին կոտորելու համար։ Ապա համոզվելով, որ «Օսմանյան սահմանադրության հռչակումով երևան եկած հեղափոխությունը կատարյալ գործ մը ըլլալե հեռի է»[2], սկսեց քննադատել Իթթիհադի ազգային քաղաքականությունը։

Գր. Զոհրապը հեգնում էր երիտթուրքերի օսմանիզմի կամ ոչ թուրք ժողովուրդներին թուրքացնելու կուրսը. «Թուրք մտավորականները իրենց հատուկ հայացքը ունին. անոնք կկարծեն, թե ազգերը կրնան շինվիլ, ստեղծվիլ և իրենց այս ըմբռռնումով կուզեն օսմանյան ազգ մը կազմել, որուն կողմ ուղղված են իրենց ջանքերը»[3]։ Մերկացնելով Իթթիհադի շովինիստական քաղաքականությունը, հայտարարում էր, թե այն «կբաղկանա անոնց (ոչ թուրքերի— Ա. Հ.) նկատմամբ անվստահություն և խստություն ցույց տալե»[4]։ Կոնկրետ փաստերով բացահայտելով երիտթուրքերի հակաժողովրդական վարքագիծը, նա նշում էր, որ կառավարությունը սկզբում ճնշում է բուլղարների ու ալբանացիների ապստամբությունը և հետո խոսում նրանց երկրներում բարենորոգումներ անցկացնելու մասին։ Արդյոք չէ՞ր կա-

1 Արևմտահայ գրողների նամակներ, Եր., 1972, էջ 42։
2 Գր. Զոհրապ, Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, Կ. Պոլիս, 1910, էջ 27։
3 Առենագրություններ ազգային ժողովս, Կ. Պոլիս, 1909, էջ 336։
4 Տե՛ս Ա. Ալպոյաճեան, Անհետացող դեմքեր, Գրիգոր Զոհրապ (իր կյանքը և գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 222։

րելի այդ բարենորոգումները նախապես անցկացնել, որ ապըստամբություն տեղի չունենար[1]։

Գր. Զոհրապը քննադատում էր երկրում գոյություն ունեցող անձի ու գույքի անապահովությունը, շեշտում նրա տարածվածությունը հատկապես հայաբնակ ու ոչ թուրքասբնակ շրջաններում և նշում, որ դա պատահական չէ, այլ Իթթիհադի կողմից տարվող որոշակի ազգային քաղաքականության արդյունք, որը հետապնդում է ոչ թուրք տարրերին ասպարեզից արտամղելու և նրանց փոխարեն թուրքերի դիրքերն ամրապնդելու նպատակներ[2]։

Ապա նա ցույց էր տալիս երիտթուրքերի վարած քաղաքականության հետևանքով երկրում, օսմանյան խորհրդարանում կամ պառլամենտում նույնիսկ անհավասարության առկայությունը։ Քրիստոնյաները կազմում են կայսրության ազգաբնակչության 1/3-ը կամ 1/4-ը, մինչդեռ նրանց ներկայացուցիչները պառլամենտում՝ 1/7-ը։ Այնուհետև հրապարակախոսը եզրափակում էր. «Օսմանյան խորհուրդը ինքն առաջինը ըլլալու էր անկեղծ հավասարության մը օրինակ տալու ժողովուրդին»[3]։

Մարտնչելով Իթթիհադի ազգայնամոլ քաղաքականության դեմ, Գր. Զոհրապը պայքարում էր նաև արևմտահայության, մասնավորապես Կ. Պոլսի Ազգային ժողովի դեմոկրատացման համար։ 1911 թ. հունիսի 13-ին (26) նամակ հղեց այդ ժողովին և պահանջեց վերանայել ազգային սահմանադրությունը, մտցնելով նրա մեջ դեմոկրատական փոփոխություններ։ Նա գտնում էր, որ պետք է փոխել Ազգային ժողովի պատգամավորների ընտրության սկզբունքները և հարմարեցնել ազգի մեծամասնության շահերին։ Անարդար է, որ մոտ 100.000 հայ բնակչություն ունեցող Պոլիսը ընտրում է 80, իսկ շուրջ 1.900.000 գավառահայությունը՝ 40 պատգամավոր։ Մինչդեռ պետք է լիներ հակառակը, այսինքն՝ Ազգային ժողովի 120 պատգամավորներից մայրաքաղաքի հայությունն ընտրեր 6, իսկ գավառահայությունը՝ 114 պատգամավոր։ Եվ եթե դրությունը մնա անփոփոխ, ապա «գավառները անվիճելի կերպով իրավունք ունին բողոքելու այս անարդարության դեմ»։ Անհանդուրժելի է,

1 Տե՛ս Ա. Ալպոյաճեան, Անհետացող դեմքեր...

2 Տե՛ս Ատենագրություններ..., 1911, էջ 445։

3 Նույն տեղը, էջ 439։

երբ մայրաքաղաքի մի բուռ փոքրամասնություն «կիշխե այսօր մեր ազգին ճակատագրի վրա։ Ազգը կառավարելու իրավունքը՝ ազգեն միայն կրնա բխիլ։ Երկնային շնորհի մը droit divin-ի (աստվածային իրավունք— Ա. Հ.) վրա հիմնված աշխարհային իշխանություններուն ատենն անցած է»[1]։ Նա պահանջեց ստեղծել հատուկ հանձնաժողով և հանձնարարել նրան՝ կազմելու ու Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու ազգային սահմանադրության նոր նախագիծ։

Գր. Զոհրապը հանդես էր գալիս նաև արևմտահայության կրթական գործի վերակառուցման ու բարելավման համար[2]։ 1913 թ. հոկտեմբերի 4-ին Ազգային ժողովին ներկայացրած իր զեկուցագրում նա նշում էր, որ Ազգային ժողովը վերջին 5 տարում դեթ մի անգամ չի անդրադարձել կրթական գործին, պետությունից հայկական դպրոցների համար բաժին չի պահանջել, չի օգտագործել այն օրենքը, որով թույլ էր տրվում հայ պատանիներին ու երիտասարդներին եվրոպա ուղարկել ուսումնառության համար։ Այդ անհոգության պատճառով վատթարացել է ազգային դպրոցների վիճակը, ընկել է ուսման որակը, նվազել է գիտական կադրերի թվաքանակը։ Դրությունից դուրս գալու համար նա առաջարկում էր բարելավել ուսուցիչների վիճակը, բարձրացնել նրանց մակարդակը, աշակերտներ ուղարկել եվրոպա, հրապարակել ուսումնական գործին օգնող հանդես, ստեղծել պատրիարքարանում այդ բոլորը կազմակերպող հատուկ դիվան և այլն[3]։

Գր. Զոհրապը իր հայացքներն արևմտահայության մասին ավելի հանդամանորեն շարադրեց 1912—1913 թթ., երբ Թուրքիայում ու միջազգային ոլորտներում քննարկվում էր Հայկական հարցը, Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մրցընելու խնդիրը։ Դեռ սուլթան Համիդի կառավարման տարիներին լինելով Կ. Պոլսի ռուսական դեսպանատան խորհրդատու, 1908 թ. հեղաշրջումից հետո նա ավելի կապվեց նրա հետ։

Դատելով Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Ն. Գիրսի 1912 թ.

1 Ատենագրություններ..., 1911, էջ 252։

2 Գր. Զոհրապի գրականագիտական, հուշագրական և հայացքների վերլուծումը հանգամանորեն տե՛ս Մ. Հյուսյան, Գրիգոր Զոհրապ, Եր., 1957, նույնի՝ Գրիգորի Զոհրապի արվեստը, Եր., 1964։

3 Տե՛ս Ատենագրություններ..., 1913, էջ 226։

Նոյեմբերի 26-ին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին ուղղած դեկուցագրից, Գ. Զոհրապը պահանջում էր, որ Թուրքական կառավարությունը հայերի համար ապահովիր անձի ու գույքի անձեռնմխելիություն։ Տեսնելով, որ դա ապարդյուն է, նա հայտարարել էր դեսպանին՝ «Հայ ժողովուրդը այժմ չի տեսնում այլ ելք, բացի Ռուսաստանին դիմելուց, որը միայն կարող է փրկել նրան սարսափելի կացությունից», որ «Հայ ժողովուրդը իրականում կորցրել է իր հավատը թուրքական բարենորոգումների հանդեպ, անգամ եթե այն լինի եվրոպական վերահսկողության տակ», որ «հայ ժողովուրդը կարող է փրկվել ավելի արմատական միջոցառումով, այն է՝ հայկական նահանգների ռուսական օկուպացումով, ընդ որում ոչ թե ժամանակավոր, այլև մշտական օկուպացումով...»[1]։

Գր. Զոհրապի համանման կարծիքը արևմտահայության փրկության մասին գրի էին առել նաև Պետերբուրգի հայկական խմբի ներկայացուցիչները, որոնք 1912 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին լինելով Թուրքիայի մայրաքաղաքում, զրուցել էին նրա հետ։ Նախ՝ նրանք հարկ էին համարում բնութագրել Գր. Զոհրապին, նշելով, թե նա մասնագիտությամբ փաստաբան է, նշանավոր գրող, հասարակական գործիչ, թուրքական պառլամենտի պատգամավոր, որն իր վրա է հրավիրում ոչ միայն հայերի, այլև մյուս ժողովուրդների ուշադրությունը։ Ունի հումորի զգացում, դյուրին ու հաճելի է նրան լսելը։ «Նա շատ կրթված մարդ է,— շարունակում էին նրանք,— մեծ ու հստակ տրամաբանությամբ, ճկուն ու պերճախոս լեզվով, խոսում է մեծ տեմպերամենտով, համարյա պատանեկան կրակով։ Դատելով նրա շարժ ու ձևերից, չի կարելի ասել, թե հիսունն անց է և արդեն ունի չափահաս ամուսնացած տղա»[2]։

Ապա նրանք նշում էին, թե ըստ Զոհրապի, Հայկական հարցը քննելիս, պետք է հենվել գլխավորապես Ռուսաստանի վրա, հաշվի առնելով, որ հայերը նրան են համակրում ու վստահում, որ Հայաստանին ամենից մոտ նա է գտնվում, որ Հայկական հարցի լուծումով ամենից շատ նա է շահագրգռված։ «Վախենալով ռուսական իշխանության ճնշումից և նկատի ունենալով այդ երկյուղը, գերադասել Հայաստանի զերծ մնալը Ռուսաստանի ազդեցությունից, անհիմն է,— ասում էր Զոհրապը,— ինչպես էլ լինի, նույնիսկ ճնշող վարչակարգի դեպքում, մենք այնուհանդերձ՝ ռուսական քաղաքական իշխանության պայմաններում չենք զրկվի զարգացման հնարավորությունից, մանավանդ Ռուսաստանը երիտասարդ երկիր է, ապագայով պետություն, և այն ճնշումը, որի մասին այնքան շատ խոսում են, միշտ չի տիրապետի Ռուսաստանում»[1]։

Եվրոպայի հասարակայնությունը Հայկական հարցին ավելի հանդամանորեն ծանոթացնելու նպատակով, Գր. Զոհրապը 1913 թ. գրեց և Փարիզում ֆրանսերեն լույս ընծայեց «Հայկական հարցը փաստաթղթերու լույսի տակ» վերտառությամբ գրքույկը։ Որոշ նկատառումներով նա խնդրեց, որ այն հրապարակվի ոչ թե իր, այլ ֆրանսիացու ազգանունով։ Ա. Չոպանյանը կատարեց նրա ցանկությունը, և գրքույկը լույս տեսավ նույն թվին՝ Մարսել Լեար, «Հայկական հարցը վավերագրերի լույսի տակ» տիտղոսաթերթով (Marsel Lear, La question armenien à la Limicre des documents, Paris, 1913)։ Հեղինակի այս կարևոր աշխատությունը միայն 1973 թ. թարգմանվեց հայերեն Բեյրութի «Շիրակ» հրատարակչության կողմից։

Գրքույկի սկզբում Զոհրապը հայտարարում է, որ ինքը ներկայացնելով արևմտահայության ծանր կացությունը, չի կամենում բորբոքել ազգամիջյան խժդժություն կամ պահանջել վրիժառություն, այլ ուզում է, որ Թուրքիայում ու հատկապես նրա արևելյան նահանգներում ստեղծվի մի վարչակարգ՝ «ի շահ բոլորին»[2]։ Դրանով հրապարակախոսը դրսևորում էր իր հումանիզմն ու ինտերնացիոնալիզմը։ Ապա առաջ է քաշում դեմոկրատական վարչաձևի ստեղծման հարցը, դառնալով, որ ինչպես միապետությունը, այնպես էլ թեոկրատիկ բռնապետությունն առաջադեմ մարդկության կողմից արդեն մերժված են։ Նա գրում էր. «Աստվածապետական վարչաձևերուն օրը անցած է։ Իսլամ պետությունները կը տառապին և կը մեռնին կրոնապետական ըլլալնուն համար։ Ահա այս մեկն է, որ Թուրք զեկավարները պետք է ըմբռնեն, պետք է, որ իսլամները, մաս-

1 Геноцид армян..., с. 214.

2 ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 15։

1 ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 16։

2 Տե՛ս Գր. Զոհրապ, Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ, Պեյրութ, 1976, էջ 6։

նավորապես Թուրքերը, լսեն իրենց եռևեն ըսվածները, և փոխանակ վիրավորվելու, ջանան օգտվիլ անոնցմե...»[1]։

Այնուհետև Զոհրապն անդրադառնում է Հայկական հարցի պատմությանը։ Խոսելով այն մասին, որ հայերը վեց դար շարունակ գտնվել են օսմանյան լծի տակ ու ենթարկվել անասելի բռնությունների ու հալածանքների, նա ցույց է տալիս, որ շատերն իրենց կյանքը փրկելու համար հարկադրված են եղել կրոնափոխվել ու ձուլվել մահմեդական տարրերի հետ, ընդ որում, այդ բանը կատարվել է ոչ միայն խոր անցյալում, այլև նոր շրջանում. 1800 թ. արևմտահայերի զանգվածային ձուլում տեղի է ունեցել Բիթլիսի ու Սլիվանի, 1820 թ.՝ Թորթումի, Բաբերդի ու էրզրումի, 1830 թ.՝ Համշենի ու Տրապիզոնի գավառներում։ Արևմտահայերի մի մասն էլ ստիպված թողել է իր հայրենիքը և արտագաղթել արտասահման՝ գլխավորապես Ռուսաստան, եվրոպական ու ամերիկյան երկրներ։ «Բայց հայկական մեծ զանգվածը,— եզրափակում է հեղինակը,— կապված կը մնա իր հայրենի հողին»[2]։

Գալով Հայկական հարցի առաջացմանը, նա նշում է, որ այն ծագեց 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով, երբ ռուսները, գրավելով հայկական հողերը, շարժվում էին Թուրքիայի խորքերը։ Սուլթանը նրանց առաջխաղացումը կասեցնելու նպատակով ցանկացավ ստեղծել «տեսակ մը պատնեշ-պետություն» և 1877 թ. նոյեմբերին առաջարկեց հայերին, որ նրանք «հայ բնակչությամբ նահանգներուն համար քաղաքական ինքնավարություն մը պահանջեն օսմանյան գերիշխանության տակ»։ Բայց երբ բրիտանական նավերը հասան Կ. Պոլիս, սուլթանի երկյուղն անցավ, և նա հրաժարվեց հայկական ինքնավարության գաղափարից։ Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքման ժամանակ նա մերժեց ռուսական ներկայացուցիչների կողմից խմբագրված հայերի պահանջները, որի հետևանքով հայկական «վարչական ինքնավարություն» բանաձևը փոխարինվեց հայկական նահանգների «բարենորոգում և բարելավում» բառերով՝ Ռուսաստանի վերահսկողությամբ, իսկ Բեռլինի վեհաժողովում Անգլիայի օգնությամբ վերացրեց նաև

1 Գր. Զոհրապ, Հայկական հարցը..., էջ 6։

2 Նույն տեղը, էջ 7։

«Ռուսաստանի վերահսկողությամբ» ձևակերպումը։ Այդպես «ծնունդ առավ Պեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը»[1]։

Զոհրապը քննադատում է արևմտաեվրոպական տերությունների փարիսեցիական քաղաքականությունը, որոնք խոսքով հանդես էին գալիս հայկական բարենորոգումների օգտին, բայց գործով հովանավորում ու պաշտպանում էին սուլթանական բռնապետության հայահալած ու հայաջինջ վարքագիծը։ Նա ցույց է տալիս, որ Բեռլինի վեհաժողովից հետո Եվրոպայի անտարբերության հետևանքով «հայերու հալածանքը առաջ տարվեցավ այնպիսի մեթոդով և հետևողական ոգիով մը, որ սակայն հազվադեպ է Թուրքիո մեջ»[2]։ Ի վերջո, սուլթանական կառավարությունը 90-ական թվականներին կազմակերպեց հայկական ջարդեր, կոտորելով հարյուր հազարավոր անմեղ մարդկանց, չխնայելով ծերերին ու երեխաներին։ «Այս սարսափի արարներուն ի տես, եվրոպական դիվանագիտությունը ոչինչ ըրավ»[3]։

Զոհրապը մերկացնում է նաև երիտթուրքերի հայահալած քաղաքականությունը, որոնք 1907 թ. Փարիզի կոնգրեսում թեև խոստացան բարելավել հայերի դրությունը, բայց անցնելով իշխանության գլուխ, ոչ միայն չկատարեցին իրենց խոստումը, այլև ավելի սաստկացրին հայկական բռնություններն ու կեղեքումները։ Նրանց սահմանադրությունը «ջրեց իր վրա դրված հույսերը»[4]։ Ադանայի ջարդերը, ամեն տեսակ բալանը, բռնություններն ու պղծությունները «ցույց տվին, թե կրոնական մոլեռանդությունը ոչինչ կորսնցուցած էր իր ուժեն սահմանադրության վարչակարգի տակ... բուն Հայաստանի մեջ զանգվածային բնաջնջումներ չկատարվեցան, բայց ոճրագործությունները, կողոպուտները, զարգացան՝ շնորհիվ հեղինակներուն անպատիժ մնալուն»[5]։ Հրապարակախոսը նշում էր, որ նրանք, ովքեր կարծում էին, թե սահմանադրության հռչակումով պիտի ապրեն հանգիստ ու արդար վաստակով, խաբվեցան և հարկադրված կրկին բռնեցին արտագաղթի ճամփան, իսկ երիտթուրքերի կա-

1 Տե՛ս Գր. Զոհրապ, Հայկական հարցը..., էջ 8։

2 Տե՛ս նույն տեղը։

3 Նույն տեղը, էջ 9։

4 Տե՛ս նույն տեղը, էջ 10։

5 Նույն տեղը։

ռավարությունը «չհուզեցավ ատկե՝ Իր փափաքներուն իրականացումը կը տեսներ»[1]։

Զոհրապն անդրադառնում է արևմտահայերի թվաքանակին և նշում, որ ինչպես սուլթանական կառավարությունը, այնպես էլ Իթթիհադը քաղաքական նկատառումներով կեղծում են այն ու նվազեցնում։ Այսպես, ռուս-թուրքական պատերազմից հետո, մասնավորապես 1880 թ., Բ. Դուռը Հայկական հարցը միջազգային դիվանագիտության քննարկումից հանելու համար հայտարարեց, թե հայերը հայկական վիլայեթներում ու Կիլիկիայում կազմում են 726000 մարդ կամ այդ շրջանների բնակչության «աննշան փոքրամասնությունը»[2]։ Զոհրապը նշում էր, թե կառավարությունը հայերի թիվն այնքան է նվազեցնում, որքան ցանկանում է, չզգալով խղճի որևէ խայթ։ «Եվ ինչ խղճահարություն կուզեիք որ ցույց տար կառավարություն մը հանդեպ բնակչության մը թվին, երբ չի վարանիր նույն ինքն այդ բնակչությունը բնաջնջելու փորձեր ընել»[3]։ Հրապարակախոսը չի ընդունում նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալները, համարելով դրանք նվազ։ Հայերից հավաքած դիվնորական տուրքի տեղեկությունների հիման վրա ցույց էր տալիս, որ 80-ական թվականների սկզբներին Թուրքիայում արևմտահայերի թիվը կազմում է ոչ թե 2.680.000 մարդ, այլ անցնում է 3 միլիոնից[4]։ Այնուհետև նա քննադատում է Իթթիհադական կառավարության տվյալները, որը Հայկական հարցի վերաբացման օրերին ամեն կերպ աշխատում էր քիչ ներկայացնել հայերի թիվը. Զոհրապը նշում էր, որ, իրավ է, 90-ական թվականների կոտորածների, Ադանայի ջարդի ու արտագաղթի հետևանքով արևմտահայերը զգալիորեն նվազեցին, բայց 1912 թ. նրանք, այնուամենայնիվ, իրենց հայրենիքի բնակչության հարաբերական մեծամասնությունն էին կազմում՝ 39 տոկոսը (թուրքերը

1 Տե՛ս Գր. Զոհրապ, Հայկական հարցը..., էջ 10։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 12։

3 Նույն տեղը։

4 Տե՛ս նույն տեղը, էջ 14։

կազմում էին 25, իսկ քրդերը՝ 24,5 տոկոսը)[1]։ Հրապարակախոսը մերժում էր այն հեղինակներին, որոնք մահմեդական տարրերի քանակը բարձրացնելու և հայերինը իջեցնելու համար իրենց ազդությունից դաժան պայմանների բերումով հրաժարվող որոշ զանգվածների համարում էին ոչ թե հայեր, այլ մահմեդականներ։ Նա մասնավորապես հիշատակում էր զազաներին ու նշում, որ դրանք ոչ թե քրդեր են, այլ մահմեդականացվող հայեր։ Նրանց բարքերը, նիստուկացը հայկական են, շատերը գործածում են հայկական բառեր, խմորի և այլ առարկաների վրա խաչ են դնում։ Գրողը քննադատում էր նաև այն հեղինակներին, որոնք վերոհիշյալ միտումներով ժողովուրդների քանակը որոշում էին կրոնով։ «Կրոնը գործ չունի ազգային հարցերու մեջ»[2]։

Զոհրապը մերկացնում է Իթթիհադի քաղաքականությունը հայկական բարենորոգումների հարցում, նշելով, թե հենց որ տերություններն առաջ են քաշում այդ հարցը, երիտթուրքերը հայտարարում են, որ կիրագործեն դրանք, բայց հետո չեն կատարում իրենց խոստումը։ Ապա նա քննադատում է Իթթիհադի հրապարակած նախագիծը հայկական նահանգների կառավարման մասին և նշում, որ այն խստորեն կրճատում է հայ պատգամավորների թիվը և չի հաշվի առնում պաշտոնների բաշխումը ժողովուրդների միջև ըստ նրանց թվաքանակի։ «Կարճ՝ բոլոր այն տրամադրությունները, որոնք կը ձգտեին ապահովելու քրիստոնյաներուն մուտքը հանրային պաշտոններու՝ բացարձակապես չնչված են նոր օրենքին մեջ։ Ահա թե ինչպես կը հասկնա թուրք կառավարությունը, դեռ այսօր, քրիստոնյաներու պաշտպանությունը և բարենորոգումներու գործը»[3]։ Զոհրապը մերժում էր երիտթուրքերի այն հայտարարությունը, թե իբր իրենց օրենքները պաշտպանում են երկրի բոլոր քաղաքացիների իրավունքները և, հետևաբար, ավելորդ է հատուկ օրենք հրատարակել քրիստոնյաների, մասնավորապես հայերի մասին։ Նա ցույց է տալիս, որ Թուրքիայի սահմանադրությունը չի ապահովում մահմեդականների ու քրիստոնյաների հավասարությունը, որ երիտթուրքերը չեն իրագործում հայկական բարենո-

1 Տե՛ս Գր. Զոհրապ, Հայկական հարցը..., էջ 14։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, էջ 18։

բոգոմները, որովհետև վախենում են, թե քրիստոնյաները, այդ թվում նաև հայերը, կարող են մի օր հասնել անկախության։ Ուստի, նրանք ամենուրեք և միշտ քրիստոնյաների հանդեպ վարում են կասկածանքի ու խիստ հսկողության քաղաքականություն, հեռու են պահում պաշտոններից, կեղեքում են նրանց, թալանում և տնտեսապես քայքայում ու արտաքսում երկրից։ Հրապարակախոսը գտնում էր, որ Թուրքիայում ազգություններ-ի իրավահավասարություն ստեղծելու համար իթթիհադականները պետք է ոչ միայն հրաժարվեն այդ քաղաքականությունից, այլև վերանայեն մահմեդականության դոգմանները, քրիստոնյաներին ու մահմեդականների հավասար ներքաշեն վարչական ու դատական պաշտոններում, որ բոլորն ապրեն իրենց արդար վաստակով։

Գտնելով, որ Իթթիհադն իր բնույթով չի կարող լուծել Հայկական հարցը, Զոհրապն առաջ էր քաշում նրա լուծման իր տեսակետը։ Ամենից առաջ նա գտնում էր, թե «հայերը երբեք քաղաքական նպատակներ չեն սնուցած։ Կյանքի ապահովություն, պատվի, ինչքի ապահովություն, աշխատելու և իրենց աշխատանքի պտուղը վայելելու կարելիություն, իրենց ազգային մշակույթը պահելու իրավունք— այս ամենը կազմած են և այսօր ալ կը կազմեն իրենց միակ փառասիրությունը»[1]։ Դժվար չէ պատկերացնել, որ այդ վիճակի ստեղծման համար անհրաժեշտ էր վերացնել գոյություն ունեցող բռնությունները, ազգային ու սոցիալական ճնշումները և որոշակիորեն բարելավել հասարակական հարաբերությունները։

Զոհրապն ապա գտնում էր, թե քանի որ հայերը այլևս չեն հավատում թուրքական կառավարության խոստումներին, հիասթափված ու դառնացած են նրա վալիներից կամ նահանգապետերից, Հայկական հարցի լուծման համար հարկավոր է նշանակել եվրոպական կառավարիչ։ «Ոչ մեկ բարենորոգում կրնա կատարվիլ այնքան ատեն, որ Եվրոպայի կառավարիչ մը չի դրվի հայկական նահանգներուն գլուխը։ Այս էական պայմանը խարիսխը պետք է կազմե Թուրքահայաստանի մեջ կիրարկելի բարենորոգումներու։ Ասիկա նաև միակ միջոցն է վստահություն ներշնչելու բոլորին, իսլամներուն, ինչպես նաև հայերուն»[2]։

1 Գր. Զոհրապ, *Հայկական հարցը...*, էջ 9—10։

2 Նույն տեղը, էջ 24։

Այդ կառավարիչը կամ նահանգապետը պետք է կատարյալ ազատություն ունենա իր գործունեության մեջ։ «Այդ ազատությամբ մենք կը հասկնանք նահանգապետին բացարձակ իրավունքը՝ ընտրելու իր աշխատակիցները, նշանակելու կամ պաշտոնազրկելու պաշտոնատարներ և ամեն կարգի գատավորներ, մշակելու և գործադրության մեջ դնելու վարչական կանոններ՝ կարգել տալու համար օրենքները, և իրավունք, վերջապես, ունենալու ոստիկանական ուժի»[1]։ Եվրոպական կառավարիչը հայերին պետք է ներգրավի վարչական, դատական, ժանդարմական և ոստիկանական պաշտոններում, մի բան, որ թուրքական կառավարությունը միշտ հայտարարել է, «բայց երբեք փույթ չէ բրած հարգելու»։ Այնուհետև Իթթիհադը պետք է անցկացնի վարչական ապակենտրոնացում, այսինքն՝ հայաբնակ վիլայեթներին տա ինքնավարություն։ Ի մի բերելով իր մտքերը, հրապարակախոսը գրում էր. «Անփոփոխ կերպով, Հայկական նահանգներուն համար պահանջված բարենորոգումները կկայանային հետևյալ երեք միջոցներուն մեջ.

1. Եվրոպացի նահանգապետի մը նշանակումը, ընտրված պետություններու հովանավորությամբ, որ ամեն ազատություն ունենա գործելու։

2. Հայերու մասնակցությունը, արդար չափով, հանրային պաշտոններու։

3. Վարչական ապակեդրոնացում։

Ասոնք այն երեք բացարձակ նախապայմաններ են, որոնց հավանությունը չի կրնար չտալ կառավարություն մը, որ անկեղծորեն տոգորված ըլլա հայերուն, ինչպես և թուրքերուն և քյուրտերուն վիճակը բարելավելու փափաքով»[2]։

Բայց, այդուհանդերձ, հրապարակախոսը Հայկական հարցի լուծումը կապում էր Ռուսաստանի հետ։ Նա քննադատում էր ցարիզմի դիրքորոշումը 90-ական թվականների հայկական շարժումների նկատմամբ և նշում, որ ռուս կառավարությունը ճիշտ չէր հասկացել հայերի ձգտումները։ Հայ կուսակցությունները ոչ թե ուզում էին անջատվել Ռուսաստանից, այլ պահանջում էին այնպիսի վերակառուցումներ, ինչ ռուս երիտասարդությունը։ «Երբեք կարելի չէ եղած ամբաստանել հայերը, թե անջա-

1 Գր. Զոհրապ, *Հայկական հարցը...*, էջ 25—26։

2 Նույն տեղը, էջ 27։

տողական մտածումներ կը սնուցանեն։ Իրենց ձգտումներն իսկ Ռուսիո ապագայի մասին փաստ մըն են, թե կապված են այդ երկրին»[1]։ Իսկ այժմ, երբ ռուսական կառավարությունը ձեռնամուխ է եղել հայկական բարենորոգումների իրագործմանը, «կրցած է համոզվել, որ Թուրքիո հայերուն վիճակին բարելավման ի նպաստ աշխատելով, իրեն համար երախտագիտական նոր տիտղոսներ կը շահի անոնց կողմե»[2]։

Զոհրապի այս աշխատությունը կարևոր նշանակություն ունեցավ ոչ միայն նրա հասարակական-քաղաքական հայացքների վերլուծման, այլև Հայկական հարցը Եվրոպայում պրոպագանդելու համար։

Արշակ Չոպանյանը հետագայում իրավացիորեն գրում էր, թե Զոհրապի «Հայկական հարցը փաստաթղթերի լույսին տակ» գրքույկը «Հայկական հարցին վրա հայերու կողմե գրված գործերուն լավագույններեն մինն է...», որ այն Հայկական հարցի քննարկման օրերին լայն տարածում գտավ Փարիզում և Եվրոպայում, գործեց «լավագույն տպավորություն»[3]։

Գր. Զոհրապը առաջադրեց նաև հողային հարցի լուծման իր տեսակետը։ Դեռ 1908 թ. հոկտեմբերի 17-ին Ազգային ժողովին ներկայացրած իր նախագծում առաջարկում էր աղնիվ ու արդար, հասարակության մեջ վստահություն ու հեղինակություն վայելող, համիդյան վարչակարգին չծառայած մարդկանցից ստեղծել հանձնաժողովներ և ուղարկել գավառները՝ սուլթանի պաշտոնյաներին պաշտոնազրկելու, ձերբակալելու և դատելու հանձնարարությամբ։ Այդ հանձնաժողովները տերերին պետք է վերադարձնեին նրանցից բռնագրավված հողերը, օգնեին մուհաջիրներին վերադառնալու իրենց հայրենիք, նյութապես նպաստեին սուվից տառապող գյուղացիներին և խիստ պատժեին «այն ազդեցիկ պեյերը, անձերն ու աղաները, որոնք հայերու վրա տուրք կդնեն և ղիրենք տարապարհակ կաշխատեցնեն»[4]։ Դրանք, իհարկե, արմատական դեմոկրատական առաջարկություններ էին։

1 Գր. Զոհրապ, Հայկական հարցը..., էջ 30։
2 Նույն տեղը, էջ 31։
3 «Անահիտ», 1930, № 3։
4 Տե՛ս Առենագրությունք..., 1909, էջ 49։

1909 թ. մարտի 1-ին հրապարակախոսը դիմեց Թուրքական կառավարությանը, որպեսզի մայրաքաղաք բերեն ու արդարության «բովանդակ խստությամբ» պատժեն այնպիսի հանրահայտ հարստահարիչների ու ոճրագործների, ինչպիսիք են Քեռու Հյուսեին փաշան, Շաքիր աղան, Սեիդ Ալին և այլոք, որոնք տասնամյակներ շարունակ պատուհաս են եղել ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական բնակչության համար[1]։

1911 թ. նոյեմբերի 11-ին նա հիշատակագիր ներկայացրեց երիտթուրքական վարչապետին, ուր նշում էր. «Հակառակ անոր, որ սահմանադրության հռչակումեն ի վեր չորս տարի անցած է, Անատոլուի հայաբնակ նահանգներու կացության մեջ բարելավման ոչ մեկ նշան երևցած է, ընդհակառակը՝ վերջին երկու տարվա ըևթացքին այդ կացությունը անհանդուրժելի աստիճանի հասած է։ Հիշյալ նահանգներու մեջ ինչքի, կյանքի ու պատվի ապահովություն չէ մնացած, ու ջարդի սպառնալիքները պատճառ եղած են, որ ժողովուրդը ահ ու սարսափի մեջ ապրի... կհասկացվի, որ հայաբնակ գավառները դարձյալ արյան մեջ պիտի մնան, ինչպես էր առեն մը»[2]։

Ապա Զոհրապը գրում էր, որ ինքը բազմիցս ներկայացրել է գավառահայության դժնդակ կացությունը համապատասխան մինիստրություններին, բայց «դժբախտաբար, տեսա, որ իմ այս ձեռնարկներս որևէ արդյունք չտվին»[3]։ Նա համարձակորեն հայտարարում էր, որ իթթիհադական կառավարությունն իր գործնական քայլերով ձգտում է տնտեսապես քայքայել հայերին, սուլթանի նման ցանկանում է դատարկել Անատոլիայի նահանգները հայերից և պահանջում էր վերջ դնել այդ քաղաքականությանը[4]։

Զոհրապի համառ պահանջով երիտթուրքական վարչապետը ստեղծեց հողային հարցը վարչական եղանակով լուծելու իրավունքով օժտված հանձնաժողով և ներկայացրեց այն Օսմանյան պառլամենտի հաստատմանը։ Բայց այստեղ վճռականորեն առարկեցին այդ միջոցառման դեմ և մերժեցին[5]։ Այլ բան չէր

1 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, մարտի 2, № 3768։
2 Գր. Զոհրապ, Մեր կյանքեն, քրոնիկներ, նշմարներ, հրապարակական էջեր, ուղեորի նոթեր, Գահիրե, 1945, էջ 179։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 180։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 182—189։
5 Տե՛ս Առենագրությունք..., 1911, էջ 445։

կարելի սպասել մի պառլամենտից, որը բաղկացած էր գերազանցապես աղանների և մահմեդական ռեակցիոն հոգևորականության ներկայացուցիչներից։

Հայ ժողովրդի պատգամավորը հաճախ հաշվետվություն կամ ինֆորմացիա էր տալիս Ազգային ժողովում Օսմանյան պառլամենտում իր ծավալած գործունեության մասին։ 1911 թ. նոյեմբերի 25-ի նիստում խոսելով հողային հարցի մասին, նա ասում էր. «Մի կարծեք, որ օսմանյան հայ երեսփոխանները որևէ ջանք չըրին հողային խնդրո համար... փափաքեցանք, որ... օրենք մը հրատարակվի... կառավարությունը... օրինագիծ պատրաստեց և խորհրդարան բերավ, բայց հոն ամենաբուռն ընդդիմության առարկա դարձավ»[1]։

Զոհրապը գիտակցում էր հողային հարցի ամբողջ բարդությունը, Օսմանյան պառլամենտում հայ պատգամավորի անհրաժեշտ վիճակը, հասկանում էր նաև արևմտահայ գյուղացիության դժնդակ կացությունը։ Ուստի գտնում էր, որ պետք է վարել նուրբ քաղաքականություն և հեռու պահել ժողովրդին նորանոր աղետներից։ Ազգային ժողովի վերոհիշյալ նիստում նա շարունակում էր. «Թերևս ըսողներ գտնվին, թե... դուք ձեր ցավերը պարզեցեք բեմեն, եթե ոչ դրական օգուտ մը ձեռք բերելու, գեթ պատմության մեջ անցնելու համար։ Ես անոնց կպատասխանեմ, թե Օսմանյան խորհրդարանին մեջ հայ երեսփոխանը վայրկյան մը իսկ մոռանալու չէ հայ ազգին մասնավոր դիրքը և իր խոսքերուն առաջ բերելիք արդյունքն ալ լավ կշռելու է բերան բանալե առաջ... Բավլոֆ վստահ է, թե անդին Պուլկարիա մը կա, Պուշոն կմտածե, թե իր պաշտպանած դատին կհետևի Եվրոպա, Հայաստանի հետ կտեսնե... ոչ ոք, ընդհակառակը կտեսնե հոն քյուրդեր ու չի կրնար մոռանալ կոտորածը, որ Կիլիկիան արյունլվա ըրավ... հայերն են մենակ, որ այս երկրի մեջ առաջին ցուցումեն կոտորածի վտանգին կենթարկվին։ Քաղաքական սխալե ավելի ծանր բան մը, ոճիր մը պիտի ըլլա հայոց դժնդակ ու վտանգավոր կացություն մը ստեղծել մեր ձեռքով ու խոսքերով»[2]։

Հրապարակախոսը գտնում էր, որ պայքարի եղանակն ընտրելիս, պետք է ելնել արևմտահայության կոնկրետ կացությունից, իսկ այն պահանջում է ինչպես ազգային, այնպես էլ հողային հարցերը լուծել կառավարության հետ բանակցություններ վարելու, նրա վրա ճնշում գործադրելու, նույնիսկ սպառնալու ճանապարհով։ «Մենք այնպիսի ժամանակի մը մեջ կապրինք,— ասում էր նա,— որ արդարություն ձեռք բերելը դյուրին չէ»[1]։ Անհրաժեշտ է «սպառնալիքներ ընել դահլիճին, խորհրդարանի առջև հարցապնդում ուղղել իրեն, սպառնալիք ընել, բայց չգործադրել»[2]։

Այդպիսով, Զոհրապը ձգտում էր հողային հարցը լուծել ֆեոդալական հարաբերությունները վերացնելու ճանապարհով։ Դա, անշուշտ, ագրարային հարցի լուծման ամենադեմոկրատական եղանակներից մեկն էր։ Սակայն այդ բանը նա ուզում էր կատարել իթթիհադական կառավարության միջոցով, նրա վրա ճնշում և սպառնալիք գործադրելու մեթոդով։ Հարցի նման լուծումը թելադրվում էր դաժան անհրաժեշտությունից և չի կարող որևէ մեկին հիմք տալ լիբերալ հայացքներ վերագրելու անձնուրաց հասարակական գործչին։

Պետք է նշել, որ Զոհրապը ինչպես ազգային, այնպես էլ հողային հարցում դուրս էր գալիս ազգային շրջանակներից և մտահոգվում բոլոր ճնշված ժողովուրդների մասին։ Նա հայտարարում էր, որ հողային հարցը միայն հայկական խնդիր չէ, «հողային հարցը օսմանյան պուլկարները, օսմանյան հրեաներն ալ ունին»[3], «օսմանյան մյուս բոլոր ազգերը և ցեղեր մենե ավելի հանգիստ մը տեսած չունին։ Ալպանիոյ մեջ, Մակեդոնիոյ մեջ վիճակը ծանրակշիռ է»[4]։

Իրրև դեմոկրատական մտքի ներկայացուցիչ, Զոհրապն ավելի առաջ գնաց. նա տեսավ Թուրքիայում ոչ միայն ազգային ու հողային, այլև բանվորական հարցը։ Հրապարակախոսը ցույց էր տալիս, որ ինչպես Եվրոպայում, այնպես էլ Օսմանյան կայսրությունում առաջացել է գործավորների, այսինքն՝ բանվորների դասակարգ, որի ազատագրումը արդի հասարակության գլխավոր հարցերից մեկն է։ Նա իրավացիորեն քննադատում էր այդ հարցն անտեսողներին, համարելով նրանց իրակա-

1 Ատենագրություններ..., 1911, էջ 443։
2 Նույն տեղը, էջ 443։

1 Ատենագրություններ..., 1911, էջ 444։
2 Նույն տեղը, էջ 443։
3 Նույն տեղը, էջ 442։
4 Նույն տեղը, էջ 445։

նութիւնից հեռու կանգնած մարդիկ։ «Անտեղեակները միայն կրնան ըսել, թե գործավորական հարց չկա Թուրքիոյ մէջ։ Թեև մեծ ճարտարվեստը (արդյունաբերությունը— Ա. Հ.) դոյութիյուն չունի այս երկրին մեջ, բայց այսուհանդերձ գործավոր դասակարգ մը կա, և երկու միլիոնի մոտ կհաշվվին դայն՝ հողային գործավորները միասին առնելով. երկու միլիոն գործավոր արհամարհելի դասակա՞րգ մըն է միթե»[1]։

Զոհրապը խստորեն քննադատում էր կապիտալիստական բարքերը, բուրժուական այլանդակ հարաբերությունները և պաշտպանում այդ բարքերից տուժող, այդ հարաբերություններին զոհ գնացող հասարակ մարդկանց շահերը։ Հարստության կուտակումը առանձին անհատների ձեռքերում նա համարում էր հափշտակության ու կողոպուտի արդյունք և ցույց էր տալիս, որ դրամատերերը, տարվելով այդ հարստությամբ, դառնում են գիշատիչներ, ոտնահարում են մարդկային ու ազգային ամեն մի արժեք, ամեն մի սրբություն։ Ապա նշում էր, որ դրամագլխի (կապիտալի) ու աշխատության (աշխատանքի) միջև տեղի է ունենում այն աստիճանի ահեղ պայքար, որ նրանք պատրաստ են «իրարու արյուն խմել»։ Նա չէր ասում, թե ինչով կավարտվի այդ պայքարը, սակայն բերում էր Եվրոպայում այդ առիթով տարածված կարծիքներից երկուսը՝ կամ այդ պայքարը կհանդեցնի կողմերին «իրավախոհության մը», կամ գետին կտապալի դրամագլխին, բացելով նոր հորիզոններ քաղաքակրթության առջև և դնելով հարստության բաշխման գործը արդար հիմքերի վրա[2]։

Հրապարակախոսն այնուհետև նշում էր, որ այդ երկու դասակարգերը հակառակ դիրքերում են կանգնած նաև պատերազմի ու խաղաղության հարցերում։ Եթե դրամատերերը գործում են հօգուտ պատերազմի, որ հարստանան, ապա գործավորները՝ հանուն խաղաղության, որ պաշտպանեն մարդկանց կյանքը և նրանց ստեղծած արժեքները։ Նա ցույց էր տալիս, որ սոցիալիստները կանգնած են բանվորների կողմը և բարձր էր գնահատում նրանց գործունեությունը. «Այսօր ամենեն կույրերն անդամ պետք է ճանչնան ընկերվարականներու մատուցած մեծ ծառայությունը խաղաղության դատին, որ քաղաքակրթության

1 Տե՛ս Զոհրապ, Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, էջ 25—26։

2 Տե՛ս Զոհրապ, էջեր ուղեւորի մը օրագրեն, Իզմիր, 1922, էջ 4։

դատն է. բանակի դեմ բանակ՝ մին՝ արյուն թափելու և մյուսը թող չի տալու համար»[1]։

Զոհրապի կարծիքով, Եվրոպայի օրինակով Թուրքիայում նույնպես պետք է ստեղծել սոցիալիստական կամ, ինչպես ինքն էր ասում, ընկերվարական կազմակերպություն և նշում էր, որ հայերը «իբրև ամենեն զարգացյալ», պետք է ակտիվ մասնակցություն ունենան այդ գործին։ Նա իրեն համարում էր ընկերվարական, այն էլ «համոզված ընկերվարական»[2], ելնելով այն բանից, որ ընկերվարականները պաշտպանում են աշխատավորների շահերը, խաղաղության շահերը, որ նրանք ձգտում են թույլ չտալ հզորին յուրացնելու տկարի վաստակը, ուզում են հասարակության բարիքները հավասարապես բաշխել արտադրողների միջև։ «Ընկերվարությունը ուրիշ բան չէ, եթե ոչ արտադրության միջոցներու և հարստությունները արդար բաշխումը ընկերության մեջ»[3]։

Զոհրապը դիտեր Ռուսոյին, բարձր էր գնահատում նրան, նշելով, թե «Ռուսոն այն մատենագիրն է, որ ամենեն խորունկ ներգործությունն րրած է վրաս»[4]։

Նա տեղյակ էր նաև Կ. Մարքսին։ «Կապիտալը» համարում էր «հոյակապ գործ» և գտնում էր, որ այն դրել է «այսօրվա տնտեսագիտության հիմերը»[5]։ Բայց Թուրքիայի հետամնաց պայմանների պատճառով չյուրացրեց, առավել ևս՝ չպրոպագանդեց Մարքսի գիտական կոմունիզմը։

Դեռ 1908 թ. հուլիսին վերադառնալով Կ. Պոլիս, Զոհրապը փորձեց ստեղծել իր ակումբը կամ կուսակցությունը՝ «Ազատական կազմակերպությունը»[6]։ Սակայն այդ նրան չհաջողվեց. պոլսահայ մտավորականության քիչ թե շատ ազդեցիկ մասն արդեն այդ օրերին ընդգրկված էր լուրջ ազդեցություն ունեցող հայ բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների մեջ։ Զոհրապը չանդամագրվեց դրանցից և ոչ մեկին, մնաց անկուսակցական։ Մի առիթով նա հայտարարել է. «Ազգը այսօր

1 Տե՛ս Զոհրապ, էջեր ուղեւորի մը օրագրեն, էջ 21։

2 Տե՛ս Զոհրապ, Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, էջ 23։

3 Նույն տեղը, էջ 24։

4 Զոհրապ, էջեր ուղեւորի մը օրագրեն, էջ 37։

5 Տե՛ս Մ. Հյուսյան, Գրիգոր Զոհրապ, էջ 341։

6 Զոհրապ, Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, էջ 14—15։

ունի երկու մեծ կուսակցություններ, որոնց մեջ ոչ մեկուն պատկանելու պատիվ ունիմ, որովհետև իմ հոգեբանությունը տարբեր է անոնցմե»[1]։

Զոհրապը ցանկացավ Կ. Պոլսում հրապարակել «Նոր օր» վերնագրով թերթ, բայց նյութական միջոցների ու գաղափարակիցների բացակայության պատճառով չկարողացավ։ Հ. Ճ. Սիրունին նշում էր, որ նա այդ թերթը ուզում էր «դարձնել տեսակ մը մտքի օճախ, որպեսզի ղեկավարե հայ կյանքը, ստեղծված նոր պայմաններու մեջ»[3]։

Գր. Զոհրապը իր հսկայական եռանդը, իր ամբողջ կյանքը ի սպաս դրեց արևմտահայության փրկության գործին։ Նա խարազանում էր Իթթիհադին, արևմտահայ մեծահարուստներին, մաքառում էր խավարի ու հետամնացության, բռնության ու հալածանքների դեմ, ձգտում էր կործանել արգելակող հինը և բացել նորի համար լայն հնարավորություններ։ Ինչպես խոստովանում էր, ինքը «ապստամբության սերնդին կվերաբերի»[4]։

Զոհրապը սիրում էր իր ժողովրդին, արևմտահայ աշխատավոր չարքաշ զանգվածներին։ 1908 թ. օսմանյան պառլամենտի ընտրությունների օրերին, երբ նրա թեկնածությունն առաջ քաշեցին մի շարք տեղերում, նա համաձայնություն տվեց Սամաթիային, ասելով՝ «Ես ձեր համեստ ու ավերակ քաղը կպատվեմ, քան թե ուրիշ շեն արվարձանները մայրաքաղաքիս. անիկա կրակներու բոցեն, ծուխեն և գնդակներեն սևացած, ծածկված, կտոր-կտոր եղած դրոշակն է, որուն առջև կխոնարհվիմ և... երջանիկ կհամարիմ ինքզինքս առաջին ողջույնս ուղղելով իրեն»[5]։

Զոհրապը ձգտում էր ոչ միայն ազատել իր ժողովրդին, դոնե թևաքացնել նրա դրությունը և այդ նպատակին հասնելու համար ոչինչ չէր խնայում։ 1913 թ. նոյեմբերի 17-ին Ա. Չոպանյանին գրում էր. «Մեր դժբախտ դատին համար կաշխատիմ գիշեր ու ցերեկ»[1]։ Նա երազում էր տեսնել իր ժողովրդին ազատված օտար լծից, դարձած իր հայրենիքի տերն ու տնօրենը։ Ուստի կոչ էր անում հայ ժողովրդին, հայ երիտասարդությանը՝ «Մինչև վերջին շունչերնիդ ազատասիրտ ու ազատամիտ մնացեք»[2]։

Զոհրապը, իհարկե, որոշ հարցերում ուներ հակասական ու սխալ հայացքներ։ Մի կողմից արդարացիորեն քննադատում ու մերկացնում էր եվրոպական տերությունների կեղծավոր ու շահամոլ վարքագիծը, իսկ մյուս կողմից հավատում էր, թե նրանք կարող են լուծել Հայկական հարցը՝ Հայաստանում ձեռներեց ու բարեկիրթ կառավարիչներ նշանակելու եղանակով։ Հիմնականում ճիշտ քննադատելով իթթիհադական կառավարության շովինիստական ու հակաժողովրդական քաղաքականությունը, երբեմն դրական էր արտահայտվում նրա մասին։ Անջատելով պաշտոնյաների վարքագիծը պետության ընդհանուր քաղաքականությունից, նա ենթադրում էր, որ լավ նահանգապետները կարող են բարելավել ժողովրդի վիճակը, իսկ վատ նահանգապետներն ավելի վատթարացնել այն։ Ուստի պահանջում էր, որ հայկական վիլայեթներում նշանակվեն լավ կուսակալներ։

Բայց այդ թերությունները քիչ էին Զոհրապի այն մեծ գործունեության համեմատությամբ, երբ նա ձգտում էր դեմոկրատական սկզբունքներով լուծել հողային հարցը, ազատելով գյուղացիությանը ֆեոդալական-ճորտատիրական կապանքներից, Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի ժողովուրդների զարգացման համար բացել նոր հորիզոններ, փրկել արևմտահայությանը կոտորածներից ու ցեղասպանությունից։

Արևմտահայերի կյանքի դեմոկրատական վերակառուցման գաղափարներով էին մտահոգված նաև Սիամանթոն ու Դանիել Վարուժանը։ 1908 թ. հեղաշրջումից հետո, հավատալով, որ Թուրքիայի պատմության մեջ նոր էջ է բացվում, նրանք վերադարձան Թուրքիա և իրենց քնարին տվեցին խաղաղ ու շինարար բնույթ։ Նրանք կոչ արեցին արևմտահայերին մասնակցել ընդհանուրի գործին և նպաստել Թուրքիայի բարեկրթությանն ու

---

1 Ամենագրությունք..., 1910, էջ 366։

2 1908 թ. օգոստոսի 5-ին Ա. Չոպանյանին գրած նամակում նա գանգատվում էր մենակությունից, նշելով թե «մենակ, բոլորովին մենակ եմ...» (Արևմտահայ գրողների նամականի, էջ 41)։

3 Տե՛ս Արևմտահայ գրողների նամականի, էջ 407։

4 Տե՛ս Ստեփան Շահազիզ, Գրիգոր Զոհրապ, Պեյրութ, 1959, էջ 211։

5 Ա. Այպայաեան, նշվ. աշխ., էջ 196։

1 Արևմտահայ գրողների նամականի, էջ 49։

2 Փր. Զոհրապ, Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, էջ 25։

վանդվել է նրա «կյանքը, գույքը, պատիվն ու կուլտուրական զարգացումը»[1]։ Իսկ Եվրոպայի համար Հայկական հարցն առաջացել է 1878 թ., երբ տերությունները դարձրին այն միջազգային դիվանագիտության քննարկման առարկա։

Բանաստեղծը նշում էր, որ Հայկական հարցը «իր սկզբնական շրջանում զուտ քաղաքական խնդիր էր և հետամուտ էր ձեռք բերելու հայի կորցրած քաղաքական անկախությունը»[2]։ Բայց հազիվ թե իրավացի էր, երբ շարունակում էր. «... Էսօր նա հանդես է գալիս արդեն լոկ որպես քաղաքացիական աղատության խնդիր, որ իր պահանջը վերջիվերջո ձևակերպում է էսպես կյանքի, գույքի, պատվի և կուլտուրական զարգացման ապահովություն»[3]։ Հանրահայտ է, որ հայ բուրժուական շրջանները Հայկական հարցի լուծում ասելով հասկանում էին արևմտահայության ինքնավարության սահմանում, իսկ ժողովրդական զանգվածները ավելին՝ ինքնորոշում։

Հրապարակախոսը գտնում է, որ Ռուսաստանը, երբ իրեն միացրեց Արևելյան Հայաստանը, լուծեց պարսկահայերի հարցը։ Նա կարող էր և կարող է լուծել նաև արևմտահայերի հարցը, մանավանդ, որ «Թուրքը երբեք չի կարողացել և այժմ էլ չի կարող առնել ռուսի առաջը»[4]։ Բայց եվրոպական տերությունները լրջորեն խանգարել ու խանգարում են նրան իրագործելու նաև այդ պատմական առաքելությունը։

Հ. Թումանյանը հանգամանորեն վերլուծում է եվրոպական տերությունների, հատկապես Անգլիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի քաղաքականությունը Փոքր Ասիայում և եղրակացնում, որ նրանք, ելնելով իրենց գծած շահերից, պաշտպանում են Թուրքիային Ռուսաստանի դեմ և, հետևաբար, խոչընդոտում հայկական խնդրի լուծմանը։ Նա նշում է, որ հայկական ջարդերի ու կոտորածների մեջ Օսմանյան կառավարության հետ միասին մեղավոր են նաև այդ տերությունները։ «Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ,— գրում է հեղինակը,— վեր է կացել Հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճ-

1 Տե՛ս Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. IV, Եր., 1951, էջ 223։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը, էջ 229։

առաջադիմության։ Ճիշտ է, Աղանալի դեպքերի առիթով նրանք վերստին հիշեցրին իրենց ոազմի երգերը, մերկացրին Թուրք կառավարիչների նոր վանդալիզմը, հրեշավոր զազանություններն ու ոճրագործությունները, իմպերիալիստական տերությունների խարդավանքները, նորից փառաբանեցին հայերի հերոսությունները, բայց այնուհետև կրկին կանգնեցին Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի ժողովուրդների խաղաղ զարգացման ու առաջադիմության դիրքերում, կարծելով, որ երիտթուրքերը կապահովեն այդ ամենը։ Սիամանթոն ու Վարուժանը կոչ են անում տարագիր հայերին՝ վերադառնալ հայրենիք, շենացնել ավերված օջախները, ցույց են տալիս գյուղացու, արդեն նաև բանվորի չարքաշ կյանքը այն ակնկալությամբ, որ նոր կառավարիչները բարեփոխեն նրանց կացությունը, երազում են արդար ու անշար, երջանիկ ու բախտավոր ապագայի մասին, փափագում են տեսնել մարդկանց ու ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերություններ[1]։ Սակայն հակառակ հումանիստ մտածողների սպասումների, երիտթուրքական պարագլուխները վարեցին մոլի ազգայնական ու ռեակցիոն քաղաքականություն, կազմակերպեցին արևմտահայերի ցեղասպանությունները, միլիոնների հետ խոշտանգելով նաև նրանց։

* * *

Երիտթուրքական հեղափոխությունից հետո արևմտահայության ճակատագրով շարունակեցին մտահոգվել նաև արևելահայ դեմոկրատները։ Նրանք նույնպես տեսան, որ Իթթիհադի և Իթիլաֆի կուսակցությունները ոչնչով չբարելավեցին արևմտահայերի դրությունը և նշեցին, որ ընդհակառակը՝ ավելի վատթարացրին այն։ Ուստի սկսեցին ուղիներ որոնել իրենց արևմտահայ եղբայրների փրկության համար։

Հովհաննես Թումանյանը հանգամանորեն կանգ է առնում Հայկական հարցի վրա և վերլուծում նրա էությունն ու վճռման հնարավորները։ Նա ցույց է տալիս, որ այդ հարցը հայ ժողովրդի համար շատ է հին, գոյություն է ունեցել այն օրից, երբ

1 Տե՛ս Սիամանթո, Ամբողջական գործեր, 1954, նույնի՝ Ընտիր երկեր, Եր., 1957, Դանիել Վարուժան, Երկեր, Եր., 1984, նույնի՝ Նամականի, Եր., 1965, Գ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., 1976։

կական գաղանութիւններին ու հայկական սարսափներին։ Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ։ Եվ տեղ չկա խուսափելու»[1]։

Հրապարակախոսը ցույց է տալիս, որ 1908 թ. հեղաշրջումից հետո էլ հայերի ծանր դրությունը Թուրքիայում շարունակեց պահպանվել։ Իթթիհադական իշխանությունները, թուրք ու քուրդ աղաները կեղեքում ու հարստահարում են նրանց, ենթարկում անլուր տառապանքների։ Նրանք նաև կազմակերպում են հայկական ջարդեր ու շարունակում հին քաղաքականությունը։ «Նորից ոռնում է հին ծանոթ գույժը,— գրել է հեղինակը 1912 թ.։ Տաճկաստանում կոտորում են հայերին... Նորից կոտորածի մռայլ մղձավանջը ծանրանում է մեր հոգնած սրտերին...»[2]։

Առաջ քաշելով այն հարցը, թե ինչու և՛ համիդյան, և՛ երիտթուրքական երկրում հալածում ու կոտորում են հայերին, Հ. Թումանյանը փորձում է համեմատվել այն կարծիքների հետ, որոնք գտնում են, թե հայերը քրիստոնյաներ են, թե նրանք հեղափոխականներ են, թե տնտեսական խնդիր կա և այլն։ Սակայն նա դրանք համարում է երկրորդական, իսկ առաջնայինն այն է, որ թուրքական կառավարությունը թե հեղաշրջումից առաջ և թե հետո ձգտում է արտամղել հայերին և նրանց հայրենիքը դարձնել թուրքական հող։ Հայկական հարցը Թուրքիային «հուզող ամենածանր ցավերից մինն է, և հետզհետե թերևս դառնա ավելի ու ավելի ծանր, քանի թուրքն ստիպված լինի սեղմվել դեպի էս կողմերը (իմա՝ Արևելք— Ա. Բ.)։ Եվ ահա էս հարցից ազատվելու հնարը էսպես վճռել է թուրքի պետական հանճարը— հայերին կոտորել կամ հալածել, քշել գաղթեցնել»[3]։

Եվ նա այդ եղանակներով հասել է մեծ հաջողությունների։ Հետևանքը եղել է այն, որ կայսրության 9 հայաբնակ վիլայեթներում հայերի տոկոսը տատանվում է 14—24-ի սահմաններում, նրանք ոչ մի վիլայեթում չեն կազմում ազգաբնակչության 50 տոկոսը։ Միայն 90-ական թվականների կոտորածների ժամանակ Վանի վիլայեթում հայերի թիվը նվազեց 15—20

1 Հովհ. Թումանյան, Նշվ. աշխ., էջ 230—231։
2 Նույն տեղը, էջ 203։
3 Նույն տեղը, էջ 214։

տոկոսով, «գյուղեր ու տեղեր կան, ուր ժողովրդի կեսից ավելի ջարդվեց ու գաղթեց։ Եվ էս ջարդին ու գաղթին վերջ չկա»[1]։ Եվրոպական որոշ գիտնականներ գտնում են, որ եթե իրերի դրությունը այդպես շարունակվի, հայ ժողովուրդը շուտով Արևելքի մի քանի անհետացած կուլտուրական ազգերի նման «կիշնի պատմության ասպարեզից»[2]։

Հրապարակախոսը նշում էր, որ հայերի վիճակը որքան էլ շարունակում է մնալ անտանելի, այնուամենայնիվ, չի կարելի նրանց դրդել ապստամբության, քանի որ պայմաններն անբարենպաստ են։ Բայց եթե թուրքական բռնություններն ու կոտրածները գնալով ավելի ու ավելի ծավալվեն և «դանակը ոսկորին հասնի», այն ժամանակ նրանք պետք է ոտքի ելնեն ու արիաբար պաշտպանեն իրենց գոյությունը, ճեռք բերեն ազատություն։ «Ամեն մի ժողովուրդ,— գրում է նա,— ինչքան էլ նա ոայա լինի (որ հոտ կնշանակի), բաղկացած է կենդանի մարդկանցից, հորից, մորից, քրոջից, եղբորից, ամուսնուց, որդուց... Դրանք հավիտյան չեն կարող տանել թե իրենց և թե իրենց հարազատների տանջանքն ու անպատվությունը։ Մարդկային կարողությունն ու համբերությունը, ինչքան էլ մեծ լինի, մի սահման ունի»[3]։

Հ. Թումանյանը հավատում էր, որ հայերը եթե ապստամբվեն, Ռուսաստանը օգնության կհասնի նրանց և կազատի թուրքական արյունոտ տիրապետությունից։ Նա հույս էր տածում, որ Ռուսաստանը իր ազատարար ձեռքը կկարկառի հայերին անգամ այն ժամանակ, երբ նրանք չեն ապստամբվել, բայց տառապում են օսմանյան բռնակալների ճիրաններում։ «Մենք հավատում ենք, որ այժմ էլ, երբ միլիոնավոր մարդիկ կոտորածի առաջ սարսափահար կարեկցություն ու պաշտպանություն են աղերսում— ռուսական մեծ պետությունը չի հրաժարվի Արևելքի մորթոտվող ժողովուրդներին պաշտպանելու սրբազան ավանդություններից... մեր կյանքի փորձով գիտենք ու հավատում ենք... որ նա վերջ կդնի հայ ժողովրդի էս անվերջ կոտրածին, վայրենի ժողովուրդների անվերջ բարբարոսությանը, քաղաքակիրթ աշխարհի էս անվերջ խայտառակությանը»[4]։

1 Հովհ. Թումանյան, Նշվ. աշխ., էջ 214։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը, էջ 211։
4 Նույն տեղը, էջ 206։

Հրապարակախոսը գտնում է, որ Ռուսաստանի համար հայերին օգնելու գործում պայմանները հիմա անհամեմատ ավելի բարենպաստ են, քան առաջ, որովհետև եթե անցյալում Անգլիան ու Ֆրանսիան նրա թշնամիներն էին, այժմ՝ բարեկամները։ Բայց նա հիասթափվեց այդ պատրանքներից, երբ հրապարակվեց 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը։ Նա ներկայացրեց իր տարակուսանքը և հայ ժողովրդի լուռ արհամարհանքն այդ փաստաթղթի հանդեպ. «Արդյոք մի որևէ ձևով վճռվե՞ց Հայկական հարցը։ Արդյոք վերացա՞վ տաճկահայոց ամբողջ կյանքի ու մեր հողու վրից էդ կարմիր մղձավանջը, և կարո՞ղ ենք այսուհետև հանգիստ սրտով նվիրվել կուլտուրական աշխատանքի ու ավելի լայն խնդիրների։

Ո՞վ գիտի։

Չնայելով հայոց կաթողիկոսի ու նրա ներկայացուցիչ Նուբար փաշայի շնորհավորական հեռագրերին՝ հայ ժողովուրդն ամեն տեղ էս հարցի դեմը խորին լռություն է պահպանում, ծանր ու իմաստուն մի լռություն, իսկ երիտասարդ թուրքերը Ռուսաստանի սահմանի վրա զորահանդեսներ են սարքում»[1]։

Ինչևէ, Հ. Թումանյանը արևմտահայության ազատագրումը հաստատապես կապում էր Ռուսաստանի հետ, իսկ արևմտահայության փայլուն ապագան տեսնում էր դեմոկրատական սկզբունքներով վերակառուցված Ռուսաստանում. «Ռուսական սահմանադրությունն էլ, որ ծանր երկունքով հասունացած կյանքն է ծնել, ինչ ուզում է լինի, ինչքան էլ տատանվի— դեպի առաջ է գնալու, դեպի ավելի լայն հորիզոններ ու պայծառ օրեր...»[2]։ «Ռուսաստանում մենք ունեցել ենք և կարող ենք ունենալ կուլտուրական մաքառում... մենք Ռուսաստանում գտնվում ենք աշխարհիս լավ ժողովուրդներից մեկի և լավ գրականություններից մեկի ազդեցության տակ։ Տաճկահայաստանն էլ կազմում է Ռուսաստանի արևելյան ազդեցության մերձավոր շրջաններից մեկը, և գրեթե միայն Ռուսաստանի»[3]։ Այդ շրջանում նույնպես Ռուսաստանը վերջ կդնի արևմտահայության ծանր կացությանը։ Նա գրական էր գնահատում, որ Ռուսաստանի շահերն ու հայ ժողովրդի ցանկությունները համընկնում էին։ «Հենց

1 Հովհ. Թումանյան, Նշվ. աշխ., էջ 294։
2 Նույն տեղը, էջ 215։
3 Նույն տեղը։

դրա մեջ է կայանում հայ ժողովրդի օգնությունը, և դրանով է նա հաստատ։

Ահա թե ինչու և ինչպես իմ հույսերը ու համակրանքը կապվում են Ռուսաստանի հետ»[1]։

Վահան Տերյանն իր գրական-հրապարակախոսական գործունեության առաջին իսկ տարիներից կանգնեց հայկական կյանքի զարգացման առաջադիմական դիրքերում, մերժելով խավարն ու հետադիմությունը, դոգմատիզմն ու արկածախնդրությունը։ Նա խարազանում էր կղերականությանը, նշելով, որ նրա դերը մեր պատմության մեջ եղել է «շատ կորստաբեր, ավերիչ ըստ ամենայնի»[2], թե նա «սահմանափակ է մտքով և տգետ...», թե «ամեն ոք, ով շահագրգռված է մեր ժողովրդի առաջադիմությամբ, ամենից առաջ կղերի դեմ պիտի ուղղե իր հարվածները»[3]։

Հրապարակախոսը մերկացնում էր հայ բուրժուազիային, վեր հանում նրա գիշատիչ ձգտումները և ցույց տալիս դեմագոգիկ վարքագիծը։ Նա նշում էր, որ սա հոգևորականության նման «իր կաստայական շահերը հայտարարում է ընդհանուր ազգային շահեր և նրանց խանգարումն ու վնասը— ժողովրդական շահերի վնասում»[4]։ Հեղինակը քննադատում էր «Մշակին», մատնանշում նրա սխալներն ու թերությունները և հայտարարում, որ «ես «Մշակի» երկրպագուներից չեմ և չեմ կարող լինել»[5], հեգնում էր դաշնակցության դեկավարներին ու տեսաբաններին՝ Միքայելյան Քրիստափորին ու Հովհաննիսյան Միքայելին (Վարանդյանին)[6], ծիծաղելի էր համարում «սպեցիֆիկներին» առաջնորդ Դավիթ Անանունին, որը միայն իրեն ու յուրայիններին (այն էլ ոչ բոլորին) էր վերապահում իրերի միակ գիտական ու անսխալ ըմբռնումը[7]։

Բանաստեղծը շեշտում էր դարաշրջանի ամբողջ բարդու-

1 Հովհ. Թումանյան, Նշվ. աշխ.։ Հովհ. Թումանյանի ուսումնական կազմակերպման մասին տե՛ս նաև «Հորիզոն», 1918, հունվարի 16 (№ 11) և 19 (№ 14)։
2 Տե՛ս Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1961, էջ 254։
3 Նույն տեղը, էջ 255։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 256։
5 Նույն տեղը, հ. 3, էջ 336։
6 Տե՛ս նույն տեղը, էջ 279։
7 Տե՛ս նույն տեղը, էջ 280։

թյունն ու մտավորականության պատասխանատվությունը ժողովրդի առաջ. «... մենք կանգնած ենք խոշոր, գուցե ճակատագրական դալիքի առջև...»[1]։

Վ. Տերյանը անդրադառնում էր արևմտահայության հարցին և նշում, որ այն սկզբից ևեթ դրված է եղել մեր հասարակական-քաղաքական հրապարակի վրա և տասնամյակներ շարունակ ստեղծել ֆիզիկական ու հոգևոր լարում։ Հայ մտավորականությունը այդ հարցի վրա է կենտրոնացրել իր ողջ ուշադրությունը, նրա վրա է հիմնել իր լավագույն ապագայի բոլոր հույսերն ու ակնկալությունները, նրա լուծումից է սպասել մեր ժողովրդի ամեն տեսակ բարիքները, զարգացման ու բարգավաճման հեռանկարները։

Վ. Տերյանը սկզբից ևեթ ճիշտ էր կողմնորոշվում, երբ գրտնում էր, որ անհնարին է Հայկական հարցի լուծումը թուրքական տիրապետության պայմաններում, երբ նրա որոշումը կապում էր Ռուսաստանի, դեմոկրատական Ռուսաստանի հետ։ 1914 թ. ապրիլի 30-ին Թիֆլիսում կարդացած «Հայ գրականության գալիք օրը» դասախոսության մեջ ասում էր. «Ես տաճկահայկական հարցի լուծմանը Թուրքիայի սահմաններում չեմ հավատում։ Լավագույն լուծումն այդ հարցի համարում եմ Ռուսիայի գրավումը տաճկահայկական նահանգների։ Այս դեպքում գուշակողի դեր չեմ ուզում ստանձնել, կարող է պատահել, որ այդ հարցը (որ մեր ժողովրդի համար մի ահագին դժբախտություն է դարձել) այլ կերպ լուծվի։ Սակայն լավագույն լուծումը այդ հարցի ես համարում եմ ռուսական տիրապետությունը։ Եթե դա հնարավոր է՝ ուրեմն մեր ժողովրդի երկու խոշոր հատվածների միացումով ավելի ևս կզորեղանա այն կուլտուրական հոսանքը, որը փափագելի է ինձ համար. եթե չլինի այդ, ապագայում էլ մենք պիտի ձգտենք այդ միացման։ Տաճկաստանի վերածնության ես չեմ հավատում, իսկ Ռուսիայի ապագան ինձ համար աներկբայելի է։ Եվ կապելով իմ լավագույն հույսերը ռուս առաջավոր դեմոկրատիայի հույսերի և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ, ես չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու»[2]։

Այդպիսով, ինչպես Հ. Թումանյանը, այնպես էլ Վ. Տերյանը

1 Վ. Տերյան, հ. 2, էջ 249։

2 Նույն տեղը, էջ 292։

ցարական նվաճումները դիտում էին արևմտահայության ազատագրման համար որպես միջոց, իսկ նրա ապագան տեսնում էին դեմոկրատականորեն վերակառուցված Ռուսաստանի մեջ։

Պատերազմի տարիներին և հատկապես Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո Վ. Տերյանը հանդես եկավ արևմտահայության հարցի լուծման մի շարք իրական առաջարկություններով, որոնց մասին կխոսվի ստորև։

Ամփոփելով հայ պահպանողականների, լիբերալների ու անկուսակցական-դեմոկրատների հայացքներն արևմտահայության հարցի մասին, պետք է նշել, որ նրանք ունեին մի շարք ընդհանրություններ։ Դրանք բոլորը մտահոգված էին արևմտահայության գոյության ու հարատևման խնդիրներով, դատապարտում էին երիտթուրքերի հայահալած ու հայաջինջ քաղաքականությունը, հանդես էին գալիս ոչ թուրք ժողովուրդների, հատկապես հայերի օսմանացման կամ թուրքացման կուրսի դեմ, տրաբզիրներին կոչ էին անում վերադառնալ տուն և բարեկարգել ու ծաղկացնել հայրենիքը, պահանջում էին արևմտահայության անձի և գույքի ապահովում, անհրաժեշտ էին համարում Հայաստանի անկախության գաղափարը և այլն։

Բայց, այդուհանդերձ, դեմոկրատների հայացքները որոշակիորեն տարբերվում էին լիբերալների ու պահպանողականների հայացքներից։ Եթե պահպանողականներն ու լիբերալները հեղաշրջումից հետո առժամանակ դեռ փառաբանում էին սուլթանին, ապա դեմոկրատներն առաջին իսկ օրից քննադատում էին բռնապետի քաղաքականությունը և պահանջում էին վերացնել նրա շունչն ու մնացորդները։

Ի տարբերություն պահպանողականների ու լիբերալների, որոնք ձգտում էին ազգի ղեկավարությունը պահել եկեղեցու կամ բուրժուազիայի ձեռքերում, դեմոկրատները պահանջում էին հանձնել այն դեմոսին, ժողովրդին, Արևմտյան Հայաստանի աշխատավոր զանգվածներին։

Եթե պահպանողականներն ու լիբերալները հանդես էին գալիս գերազանցապես արևմտահայ բնակչության դրության բարելավման պահանջներով, դեմոկրատները, դրա հետ միասին, առաջ էին քաշում նաև թուրքական տիրապետության տակ ճնշվող մյուս ժողովուրդների վիճակի բարելավման հարցը։

Ի տարբերություն պահպանողականների ու լիբերալների, որոնք խնդիր էին դնում վերադարձնել հայերի բռնազրաված

հողերը և, իբրև կանոն, շրջանցում էին աղայական-ֆեոդալական հողատիրության ու գյուղացիության ֆեոդալական կախվածության հարցերը, դեմոկրատները պահանջում էին ոչ միայն վերադարձնել այդ հողերը, այլև պատասխանատվության կանչել ու պատժել իրենց ոճրագործություններով հռչակված ցեղապետերին և աղատել գյուղացիներին աղայական պարտավորություններից կամ ֆեոդալական կախումից։

Եթե պահպանողականները ու լիբերալները լռում էին բանվորական հարցի մասին, ապա դեմոկրատները ոչ միայն նկատում ու առաջ էին քաշում այն, այլև առաջարկում էին լուծել։ Դեմոկրատները համակրանք էին հայտնում սոցիալիստական ուսմունքի հանդեպ և նույնիսկ խնդիր էին դնում ուսումնասիրել Կ. Մարքսի հայացքները։

Ի տարբերություն պահպանողականների ու լիբերալների, որոնք արևմտահայության ազատագրությունն ու փրկությունը կապում էին եվրոպական տերությունների կամ միայն ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականության հետ, դեմոկրատները՝ վերածնված-դեմոկրատական Ռուսաստանի հետ։

«Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցություն

Երիտթուրքական հեղաշրջումից հետո իրենց դիրքերը վերանայեցին նաև հայ քաղաքական կուսակցությունները։

Դաշնակցականները 1908 թ. դեպքերը Օսմանյան կայսրության կյանքում համարեցին խոշոր իրադարձություն և հայտարարեցին, որ վերջ են դնում հեղափոխական գործունեությանը ու շարունակում են իթթիհադի հետ խաղաղ համագործակցությունը։ Նրանք աղդարարեցին, որ բռնապետությունը, իբր թե, արդեն տապալված է և իրական պայմաններ են ստեղծված Թուրքիայի ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու աղգային խնդիրների լուծման համար։ 1908 թ. հուլիսին, այսինքն՝ սահմանադրության հռչակումից անմիջապես հետո, դաշնակցության օրգան «Դրոշակը» գրում էր. «Հայ հեղափոխական դաշնակցությունը... ներշնչված ազդերի համերաշխության մեծ ակզբունքով, կշարունակե իր աշխատանքը, թև թևի տված «երիտասարդ Թուրքիայի» ռազմիկների հետ, մինչև որ կստացվեն

ռամկավարական սահմանադրության հաստատուն երաշխիքներ...»[1]։

Ինչպե՞ս էր պատկերացնում դաշնակցությունը արևմտահայության աղգային ու հողային կենսական հարցերի լուծումը։ Ամենից առաջ նա հայտարարում էր, որ Հայկական հարցը եթե մինչև հիմա միջազգային դիվանագիտության քննարկման առարկա էր, ապա այժմ դառնում է Թուրքիայի ներքին խնդիր։ Ուստի նրա լուծումը պետք է սպասել ոչ թե մեծ պետություններից, այլ համաոսմանյան պառլամենտից։ Կուսակցությունը նշում էր, որ ինքը չունի անջատողական «սին ծրագրեր» և գտնում էր, որ Հայկական հարցի լուծման ամենաճիշտ եղանակը վարչական ապակենտրոնացման ստեղծումն է։ «Մենք պիտք է համերաշխ ընթանանք այն տարրերի հետ,— գրում էր «Դրոշակը»,— որոնք պաշտպան են ապակենտրոնացման սիստեմի, շրջանային ու տեղական ամենալայն ինքնավարության... Միմիայն վարչական ապակենտրոնացման և կուլտուրական ինքնօրինության սիստեմի մեջ հայ ժողովուրդը հնարավորություն կունենա ազատորեն, առանց վերուստ տեղացող ճնշումների զարդացնել իր աղգային քաղաքականությունը, ապահովել իր ուրույն անհատականությունը, իր տնտեսական-սոցիալական բարօրությունը»[2]։ Այնուհետև Օսմանյան պետությունը, պահպանելով իր ամբողջականությունն ու միությունը, «պիտի թույլ տա առանձին շրջաններին կառավարելու՝ համաձայն իրենց հատուկ կարիքների ու պայմանների։ Եվ անհրաժեշտ է սահմանել վարչական նոր կազմակերպություն՝ ազգագրական (էթնոգրաֆիկ) հարիսխի վրա»[3]։

Դժվար չէ կռահել, որ կուսակցությունը չէր բավարարվում ապակենտրոնացումով, խնդիր էր դնում աղգային ինքնավարության կամ հայկական ինքնավարության ստեղծման մասին։

Դաշնակցությունը այնուհետև պահանջում էր՝ վերացնել սուլթանի սահմանած հայահատած միջոցառումները, ստեղծել անկաշկանդ էրեվեհիություն հայկական նահանգներում, աղատել քաղաքական բանտարկյալներին, թույլատրել հայրենիք վերադառնալու բազմահազար փախստականներին ու տարագիր-

1 «Դրոշակ», 1908, № 7, էջ 93։
2 Նույն տեղը, № 8, էջ 115։
3 Տե՛ս նույն տեղը։

ներին և վերադարձնել հայ գյուղացիներից բռնագրաված հողերը[1];

Քիչ ուշ դաշնակցությունը ավելի հանգամանորեն մշակեց իր պլատֆորմը և 1908 թ. սեպտեմբերի 1-ին ներկայացրեց այն առաջիկայում գումարվելիք օսմանյան պառլամենտին։ Այդ պլատֆորմում կուսակցությունը սկզբում հայտարարում էր, որ չի շեղվի մի տարի առաջ (1907 թ.) իր կողմից ընդունած ծրագրից, ուր ասվում էր, որ «հասարակության մեջ չարիքները վերջնականապես կոչնչանան ընկերվարական կարգերու հաստատումով, երբ տնտեսական կյանքի հիմը կկազմե աշխատանքը և արդյունաբերության բարիքները կհատկացվին միմիայն անոր ստեղծման մեջ մասնակցողներուն»[2];

Ազգային հարցի լուծման ամենահարմար ձևը, ըստ դաշնակցության կուսակցության, ֆեդերացիան է. «Ամեն մեկ պետության և մանավանդ Օսմանյան կայսրության նման բազմաթևոտ երկրի մը քաղաքական լավագույն կողմը ֆեդերատիվ, ապակենտրոնական ձևն է»[3]։ Սակայն այդ նպատակին, շարունակում էր կուսակցությունը, կարելի է հասնել աստիճանաբար, ռամկավարական բարեփոխումների և հարևան ժողովուրդների հետ համագործակցելու եղանակներով։

Այնուհետև դաշնակցությունը օսմանյան պառլամենտին ներկայացնում էր հետևյալ առաջարկությունները ու պահանջները.

Անհրաժեշտ է Օսմանյան կայսրությունը ճանաչել անկախ ու ամբողջական, քանի դեռ այն համարվում է սահմանադրական-ռամկավարական։

Արևմտյան Հայաստանը համարել այդ կայսրության անբաժան մասը, որը պետք է վարի իր տեղական գործերը ապակենտրոնացման սկզբունքով, այսինքն՝ այն սիստեմով, որից հավասարապես օգտվեն նրանում ապրող բոլոր ժողովուրդները։

Պետության ընդհանուր գործերը (արտաքին քաղաքականության, զորամասերի կազմակերպման, դրամահատման, մաքսի,

1 Տե՛ս «Դրոշակ», 1908, էջ 124։

2 Նույն տեղը, № 9—10, էջ 130—132։ «Արևելք», 1908, սեպտեմբերի 11, № 6897։

3 «Դրոշակ», 1908, № 9—10, էջ 130—132։

երկաթուղու, փոստ-հեռագրատան և այլն) վարում է օսմանյան կենտրոնական կառավարությունը։

Պառլամենտական, դատաստանական և տեղական վարչական բոլոր մարմինները պիտի ընտրվեն ընդհանուր, հավասար, գաղտնի և համեմատական քվեարկության սկզբունքներով։ Այդ «սկզբունքը կգործադրվի բոլոր ազգերու և կրոններու համար հավասարապես»[1];

Կայսրության վիլայեթները լայն ինքնավարությամբ վարում են նահանգական, իսկ համայնքները՝ համայնական գործերը (ճանապարհաշինարարության, առողջապահության, կրթության, ջրաբաշխման, ոստիկանական, գյուղատնտեսական գիտելիքների տարածման և այլն)։ Յուրաքանչյուր վիլայեթի եկամտի 20—25%-ը ծախսվում է տեղական պետքերի համար։

Վալիները, մութեսարիֆները, կայմակամները և ռեսները նշանակվում են վերադաս իշխանությունների կողմից, իսկ «տեղական մնացած բոլոր պաշտոնյաները կընտրվին համապատասխան խորհուրդներու կողմե»[2];

Վիլայեթների սահմանները որոշելիս պետք է մերժել հին վարչակարգի տեսակետները և հիմք ընդունել ազգային սկզբունքները, ձգտելով հասնել այն բանին, որ որքան հնարավոր է ստեղծել միաձույլ համախմբումներ։

Անհրաժեշտ է ոչնչացնել բոլոր դասային ու դասակարգային առանձնաշնորհումները և ստեղծել բոլոր ազգերի ու կրոնական համայնքների հավասարություն։ Պետական կառավարման գործերին պետք է մասնակցեն բոլոր ժողովուրդները՝ համաձայն իրենց քվի։

Սահմանել խոսքի, մամուլի, խղճի, ժողովների և գործադուլների ազատություն, անձի ու գույքի անձեռնմխելիություն։ Վերացնել երթևեկության սահմանափակումները և ստեղծել ազատ ու անկաշկանդ երթևեկություն։

Հիմնել ընդհանուր, պարտադիր և ձրի տարրական ուսուցում, տալ կատարյալ ազատություն կրթական ու կուլտուրական գործերին, բոլոր տեսակի դպրոցները ճանաչել իրավահավասար, դասավանդումը տանել մայրենի լեզվով, իսկ պետական

1 Տե՛ս «Դրոշակ», 1908, № 9—10։

2 Տե՛ս նույն տեղը։

լեզուն համարել թուրքերենը, դասավանդելով այն ոչ թուրքական դպրոցներում IV դասարանից։

Կուլտուր-կրթական միջոցները բաժանել ազգությունների միջև՝ ըստ նրանց թվաքանակի։

Պետական լեզուն գիտենալը պարտադիր է բոլոր ժողովուրդների համար, իսկ տեղական լեզուն՝ պարտադիր է տվյալ վայրում ծառայող բոլոր պաշտոնյաների համար։ Վարչատներում ու դատարաններում պետք է ճանաչել բոլոր տեղական լեզուները։ Անհրաժեշտ է դատավարությունն անել ձրի։

Սահմանել հավասար զինվորական ծառայություն, զորակոչելով բոլորին՝ առանց լեզվի ու կրոնի խտրության։ Զինվորական ծառայության ժամկետը կրճատել երկու տարով, իսկ զինվորների ռոճիկներն ավելացնել։ Անհապաղ պետք է ցրել համիդիե զորագնդերը։

Անհրաժեշտ է կրճատել պետական պաշտոնյաների թիվը, իսկ մնացածների ռոճիկները՝ իջեցնել։ Բարձրացնել մանր պաշտոնյաների ռոճիկները։

Դաշնակցության պլատֆորմում խոսվում էր նաև գյուղացիության հարցի մասին. «Ապահովել, պետության հաշվին, հողի որոշ տարածություն ամեն մեկ գյուղացուն։ Պետական և արքունական հողերը դարձնել համայնական սեփականություն»[1]։

Այնուհետև խնդիր էր դրվում՝ հողերից օգտվելու իրավունքը վերապահել «աշխատավորներուն, աշխատավորական սկզբունքներով։ Յուրաքանչյուր աշխատավոր իրավունք ունի այն չափով հող մշակելու, որ կարողանա, առանց ուրիշի աշխատանքը շահագործելու, բավարարություն տալ իր և իր ընտանիքի սպառողական պահանջներուն»[2]։

Անտառներից, արոտավայրերից և ձկնորսության վայրերից օգտվելու իրավունքը դնել համայնքների տնօրինման տակ, իսկ ստացած եկամուտները ծառայեցնել նրանց կարիքներին։

Հանքերն ու մյուս բնական հարստությունները համարել պետական սեփականություն։

Կուսակցության պլատֆորմը պահանջում էր հիմնովին փոխել հարկային համակարգը, անհապաղ վերացնելով օրամբ, բնգույարը և նման չվարձատրվող պարտուկիները, աշարը սահմանափակել բերքի 1/15-ով, իսկ աղնամբը կրճատել 1/13-ով։

Հարկերից պետք է բոլորովին ազատել չնչին եկամուտ ունեցողներին, իսկ հարուստների վրա սահմանել պրոգրեսիվ տուրք[1]։

Անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային մինիստրություն, սահմանելով ինչպես քաղաքների, այնպես էլ գյուղերի բանվորների աշխատաժամանակը։ Կրճատել վտանգավոր տեղերում աշխատաժամը, «վերացնել կանանց և երեխաների գիշերային աշխատանքը»[2]։ Մինչև 18 տարեկան պատանիների աշխատանքը սահմանել 6 ժամ, իսկ մինչև 15 տարեկան երեխաներինը՝ բոլորովին արգելել աշխատելը։ Վերջ տալ տուգանքների պատրվակով օրավարձի կրճատմանը և սահմանել կիրակնօրյա հանգիստ։ Բանվորներին ապահովագրել դժբախտ պատահարների, հիվանդության ու ծերության դեպքերում։

Բարելավել փոխադրական ու հաղորդակցական միջոցները, կառուցել երկաթուղիներ ու խճուղիներ առաջին հերթին երկրի այն շրջաններում, ուր խիստ է զգացվում դրանց կարիքը (օրինակ՝ հայկական գավառներում)[3]։

Երբ համեմատում ենք դաշնակցության այս ծրագիրը 1876 թ. միդհատյան սահմանադրության հետ, նրանց միջև հսկայական տարբերություններ ենք տեսնում։ Միդհատյան սահմանադրությունը մի խղճուկ փաստաթուղթ էր, որը հիմնականում կայուն ու անսասան էր պահում Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, սուլթանական բռնապետական կարգերը, մինչդեռ դաշնակցության ծրագիրը մեծ ու կարևոր փոփոխություններ էր մտցնում այդ կարգերում, Թուրքիայի զարգացման համար բացելով լայն հեռանկարներ։ Եթե Միդհատի պարագլուխները բողնեին իրենց մեծապետական, հետադիմական գաղափարները և գործնականում մտահոգվեին իրենց հայրենիքի ճակատագրով, պետք է մեծ ուշադրությամբ ունկնդրեին դաշնակցության առաջարկներին և կենսագործեին շատ բան, մանավանդ, երբ այդ առաջարկությունների զգալի մասը կրում էր եվրոպական երկրների առաջադեմ ուսմունքների ու կուսակցությունների ազդեցությունը։ Բայց երիտթուրքերն

1 «Դրոշակ», 1908, № 9—10։
2 Տե՛ս նույն տեղը։

1 Տե՛ս «Դրոշակ», 1908, № 9—10։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը։

օրգանապես անընդունակ էին ըմբռնելու և յուրացնելու ժամանակի առաջավոր հայացքները, կառչել էին իրենց դարն ապրած մահմեդական դոգմաներից և ինչամաբար էին վերաբերվում ամեն մի նորին ու առաջադիմականին։

Դաշնակցության ծրագիրն ուներ առաջադիմական լայն բովանդակություն։ Այն ուղղված էր հիմնականում ֆեոդալական հարաբերությունների դեմ և միջնադարականության համեմատությամբ մեծ քայլ էր դեպի առաջ։ Վերացնելով կամ սահմանափակելով գյուղի և քաղաքի աշխատավորների նկատմամբ գործադրվող դաժան բռնություններն ու ճնշումները, այդ ծրագրի իրագործումը կարող էր զգալիորեն թեթևացնել նրանց դրությունը։

Սակայն դաշնակցության ծրագիրը տառապում էր բուրժուական սահմանափակությամբ։ Նախ՝ ազգային հարցի լուծման կատարյալ ձևը համարում էր ֆեդերացիան։ Անշուշտ դա առաջադիմական էր ազգերի անիրավահավասարություն ստեղծող միապետական կարգերի համեմատությամբ, բայց «քաղքենիական իդեալ էր»[1] ազգային հարցի լուծման առաջադիմական ուսմունքների տեսակետից։ Բանն այն է, որ բուրժուական ֆեդերացիան, որպես կանոն, ստեղծվում է առանց հաշվի առնելու ազգային-տերիտորիալ սկզբունքները։ Արտահայտելով կապիտալիստների շահերը, այն, ըստ էության, էվոլյուցիա է կատարում դեպի միատարր պետությունը և վերջին հաշվով ապահովում տիրապետող ազգի գերիշխանությունը։ Ահա թե ինչու Կ. Մարքսը «ֆեդերալիզմի սկզբունքային թշնամի էր»[2]։ Սոցիալ-դեմոկրատիան չէր ընդունում ֆեդերացիան իբրև հարցի արմատական լուծում։ Վ. Ի. Լենինը գրում էր. «Ֆեդերացիայի իրավունքն ընդհանրապես մի անիմաստ բան է, որովհետև ֆեդերացիան երկկողմանի պայմանագիր է։ Մարքսիստները ընդհանրապես իրենց ծրագրում ֆեդերալիզմի պաշտպանության պահանջ դնել ոչ մի կերպ չեն կարող, այդ մասին խոսելն անդամ ավելորդ է»[3]։

Դաշնակցության պլատֆորմը գտնում էր, որ վալիները, մու-

---

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Ազգային և ազգային գաղութային հարցի մասին, Եր., 1957, էջ 313։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 289։

3 Նույն տեղը (Ընդգծագրությունն է)։

թեսարիֆները և կայմակամները պետք է նշանակվեն վերևից, իսկ խորհուրդների անդամներն ու երկրորդական պաշտոնյաները՝ ընտրվեն տեղական բնակչության կողմից։ Դա ոչ դեմոկրատական, միապետական տեսակետ էր, քանի որ երկրի վարչական միավորների կառավարման համար ավելի կարևոր դեր էին խաղում առաջնակարգ պաշտոնյաները, և նրանց նշանակումը վերևից համապատասխանում էր միապետության շահերին։

Կուսակցությունը կադետական ու էսէռական դիրքերում էր կանգնած հողային հարցում, որովհետև պահանջում էր կառավարության հաշվին հող տալ կարիքավոր գյուղացիներին և պետական ու արքունական հողերը դարձնել համայնական սեփականություն։

Դաշնակցությունը թեև քարոզում էր ազգերի իրավահավասարություն, բայց և այնպես պաշտպանում էր տիրապետող ազգի արտոնությունները, քանի որ նրա լեզուն ընդունում էր իբրև պետական լեզու և պարտադրում էր երկրի բոլոր ազգերին իմանալու այն։

Խոսելով պրոլետարիատի մասին, կուսակցությունը խնդիր էր դնում ոչ թե վերացնել նրա շահադործումը, այլ սահմանափակել այն, քիչ թե շատ բարելավել դրությունը։

Մի խոսքով, դաշնակցության ծրագիրը կամ պլատֆորմը առաջադիմական էր միդհատյան սահմանադրության կամ Իթթիհադի ծրագրի համեմատությամբ, բայց սահմանափակ էր ժամանակի ավելի առաջավոր գաղափարների, աշխատավորության շահերը արմատապես արտահայտող ծրագրերի նկատմամբ։

Մերձենալով երիտթուրքերին դեռ հեղաշրջումից առաջ, դաշնակցությունը շարունակեց համագործակցել նրանց հետ նաև Ադանայի կոտորածներից հետո։ 1909 թ. օգոստոսին երկու կուսակցությունները կնքեցին համաձայնագիր, որի մեջ ասվում էր, թե հայրենիքի ազատությունն ու տերիտորիալ ամբողջությունը պահպանելու, ինչպես և Օսմանյան կայսրությունում ապրող բնակիչների մեջ լավագույն հարաբերություններ հաստատելու համար Իթթիհադն ու դաշնակցությունը պարտավորվում են կենսագործել սահմանադրությունը, հակահարված տալ հետադիմական տարրերին, ցրել «բռնակալ բեժիմեն ժառանգ մնացած այն սուտ ղրույցները, թե հայերը անկախության կձգտին»,

հասնել նահանջական իրավունքների ընդարձակմանը, և այլն[1]։ Ապա նրանք հայտարարում էին, որ երկու կուսակցությունները զգալով իրենց վրա ընկած պատասխանատվության ամբողջ ծանրությունը, «կկանգնին կողք կողքի, խոսք կուտան միասին աշխատիլ, միասին պայքարել և միասին ճակատ տալ քաղաքական փորձությանց»[2]։

Բայց որքան Իթթիհադն ամրապնդում էր իր դիրքերը, որքան իշխանությունը հավաքելով իր ձեռքը դառնում էր եզակի կառավարող ու թելադրող ուժ, այնքան իր հետ համագործակցող, իր «կողքին կանգնած» դաշնակցությանը մղում էր հետին պլան և անտեսում կամ ուղղակի արհամարհում նրա պահանջները։ Եվ դաշնակցությունը ավելի ու ավելի նահանջելով օսմանյան պառլամենտին ներկայացրած վերոհիշյալ իր պլատֆորմից, սեղմվում, կուչ էր գալիս ու սահմանափակվում խիստ համեստ պահանջներով։ 1911 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իրենց VI համագումարում դաշնակցականները որոշեցին, թե պետք է ձգտել օրենքի միջոցով «ընդլայնել Թուրքիոյ հայոց ազգային սահմանադրությամբ ճանաչված ինքնավարությունը»[3]։ Այլ կերպ ասած՝ նրանք այժմ բավարարվում էին 1863 թ. ազգային խղճուկ սահմանադրության մասնակի ընդարձակումով, փորձելով ձեռք բերել ազգային ինքնավարություն։

Ինչ վերաբերում է հողային հարցին, ապա կուսակցության VI համագումարը որոշեց. «Հողավեճերը լուծել վարչական եղանակով և խառն հանձնաժողովների միջոցով, հենվելով օսմանյան հողային օրենքներուն և անոնցմե բխող լրացուցիչ լուսաբանություններուն։ Վիճելի հողերու և ջրերու նկատմամբ սեփականության իրավունք ճանաչել հին վավերաթղթեր ներկայացնողին, համաձայն 1909 թ. օգոստոսի 27-ի պետական խորհրդի որոշման»[4]։ Անդրադառնալով ազանների բռնագրաված հողերի հարցին, համադումարը որոշում էր. «Հայ գյուղերեն հեռացնել բոլոր այն բռնակալները, որոնք առնելիք գանձելու կամ այլ պատրվակներով 1890-ն ի վեր բնակություն հաստատած են հոն։ Անոնց պահանջներուն օրինավորությունը վերապահել

1 Տե՛ս «Ազատամարտ», 1909, օգոստոսի 24, № 63։

2 Տե՛ս նույն տեղը։

3 Տե՛ս «Դրոշակ», 1911, № 7—12, էջ 84։

4 Նույն տեղը, էջ 82։

քննելու դատարաններու կամ խառն հանձնախումբերու առջև»[1]։ Ապա համագումարի որոշումներում շարունակվում էր. «Վիճաբննել 1890-ն աստին ավատականներու և հարստահարիչներու կատարած հողային իրացումները։ Օրինավորության սլաքագային՝ այդպիսիներու հողերը (փոխականության կամ մասնավոր հատուցման մը միջոցով) միացնել մեկ կտորի մնջ, իր բնական սահմաններով»[2]։

Այդպիսով, նահանջելով 1908 թ. պլատֆորմից, դաշնակցականները այժմ սահմանափակվում էին սոսկ մասնակի միջոցառումներով և բռնակալության տարիներին իրենց հողերից զրկված գյուղացիներին ուղարկում էին արդարություն գտնելու կեղեքիչների ու բռնավորների շահերը պաշտպանող երիտթուրքական դատարաններում։

Անդրադառնալով իր կուսակցության հետսահմանադրական շրջանի քաղաքականությանը, Ռ. Տեր-Մինասյանը ստիպված էր խոստովանել, որ դաշնակցականները խոսքով արտահայտելով հայ աշխատավորության շահերը, գործով դարձել էին երիտթուրքերի «քաղաքականության ամենեն հավատարիմ կողմնակիցները»։ Գաղափարապես պահանջելով կայսրության վարչական և քաղաքական ապակենտրոնացում, «իրական կյանքի մեջ մենք ձուլված էինք Իթթիհադի հետ... հակառակ էինք... այլազգիներու, մակեդոնացիներու և արաբ ժողովուրդներու ձգտումներուն... դա հակասություն էր, և բացահայտ հակասություն։ Մեր հոգին ու մեր մարմինը բաժանված էին»[3]։

Երիտթուրքերը գնալով ավելի ու ավելի էին դաշնակցականներին արտամղում քաղաքական ասպարեզից։ Նրանք կրճատում էին դաշնակցական պաշտոնյաների և օսմանյան պառլամենտի հայ պատգամավորների թվաքանակը։ Ապա լքելով երեկվա իրենց դաշնակցական համախոհներին, մերձենում էին քուրդ աղաներին։ 1911 թ. օգոստոսի 6-ին Վանի ռուսական փոխհյուպատոս Ս. Պ. Օլֆերևը, նկատի ունենալով այդ երևույթը, գրում էր Կ. Պոլսի իր դեսպանին, որ այժմ երիտթուրքերի ու դաշնակցականների հարաբերությունների «պատկերը բոլորովին փոխ-

1 «Դրոշակ», 1911, № 7—12, էջ 83։

2 Նույն տեղը։

3 Ռուբեն Տեր-Մինասյան, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Լոս Անճելես—Գալիֆորնիա, 1952, հ. 2, էջ 42։

վել է, կյանքը մտել է իր սովորական նորմալ հունի մեջ, կրկին հարութիւն են առել հին հաշիվները և հստակ սրութիւնամբ զգացվում է ատելութիւն գյավուրների հանդեպ»[1]։

Բայց համբերութիւնը, վիրավորանք կուլ տալն իր սահմանն ունի։ Տեսնելով Իթթիհադի այդ քաղաքականութիւնը, դաշնակցականները (հատկապես կուսակցության շարքային անդամները) երկրի որոշ շրջաններում սկսեցին խղել իրենց հարաբերութիւնները երիտթուրքերի հետ ու քննադատել նրանց։ 1911 թ. փետրվարի 20-ին Ս. Պ. Օլֆերևը հաղորդում էր Կ. Պոլսի ռուսական դեսպանին, որ Վանում «դաշնակցականները կտրելով իրենց հարաբերութիւնները տեղի իթթիհադականների հետ, որոնցից բաւեկարգում էին սպասում, այժմ հատուկ եռանդով քննադատում են թուրքական կառավարութիւն միջոցառումները, նպատակ ունենալով վերադարձնել հայերի՝ իրենց կուսակցության նկատմամբ ունեցած համակրանքը»[2]։

1912 թ. աշնանը, երբ միջազգային դիվանագիտութիւնը վերստին անդրադարձավ Հայկական հարցին, դաշնակցութիւնը նորից սկսեց հույսեր կապել նրա հետ։ Կուսակցության պարագլուխները գտնում էին, որ Ամենայն հայոց կաթողիկոսը, վերցնելով հարցը իր ձեռքը, առաջ կտանի այն միջազգային բավիղներում և կհասցնի իր լուծմանը։ 1912 թ. սեպտեմբերի 21-ին դաշնակցութիւնի օրգան «Հորիզոնը», նշելով, որ Թիֆլիսի հայութիւնի կողմից պատգամավորութիւն է գնացել կաթողիկոսի մոտ՝ խնդրելու նրան դիմելու ցարին «իր ազդու միջամտութիւնամբ վերջ դնելու տաճկահայոց անապահով վիճակին», գրում էր. «Մենք համոզված ենք, որ Ամենայն հայոց կաթողիկոսը ընդառաջ կերթա Թիֆլիսի ժողովի դիմումին և իր հովվապետական գերագույն պարտականութիւնը կհամարե... նպաստել տաճկահայ տառապող ժողովրդի ապահովութեան», և կաթողիկոսը կարող է լիովին վստահ լինել, որ իր քայլը «համակրանք միայն կհարուցանե մեր սահմաններում և երախտագիտութեան զգացումներ տաճկահայոց սրտերում»[3]։

Նույն թվականի նոյեմբերին «Հորիզոնը» այն կարծիքն էր հայտնում, որ արևմտահայոց հարցը կարող է ունենալ երեք լուծում՝ բոլորն էլ կապված Ռուսաստանի հետ։ Առաջին. եթե Թուրքիան մասնատվի պետութիւնների միջև, Հայկական բարձրավանդակը, գտնվելով Ռուսաստանին մոտ, կանցնի նրա ձեռքը։ Երկրորդ. եթե հաստատվի միջազգային հսկողութիւն Թուրքիայի հանդեպ, հայաբնակ նահանգները նույն պատճառով կանցնեն Ռուսաստանի հսկողութեան տակ։ Երրորդ. եթե հայերին տրվի ինքնավարութիւն, նրա հովանավորութիւնը վերստին կտրվի Ռուսաստանին։ «Այդպիսով,— եզրափակում էր թերթը,— ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում թուրքահայ ժողովրդի բախտը կապված է Ռուսաստանի հետ»[1]։

Ելնելով այդ ամենից, թերթը հորդորում էր Ռուսաստանի հայերին՝ ազդովին դիմել ցարին և խնդրել, որ նա ներկայացնի հայոց հարցը առաջիկայում գումարվելիք պետութիւնների վեհաժողովին։

Սակայն պարբերականը միաժամանակ հարկ էր համարում նշել, որ Հայոց հարցի լուծումը չի կախված միայն Ռուսաստանից, այն կախված է նաև եվրոպական տերութիւններից։ Ուստի արևելահայերը, թույլտվութիւն վերցնելով ռուսական կառավարութիւնից, պետք է դիմեն նաև Բեռլինի դաշնագիրը ստորագրած մյուս պետութիւններին, խնդրելով, որ նրանք աջակցեն հայոց հարցի արդար լուծմանը։

Ամփոփելով իր ասելիքը, «Հորիզոնը» գրում էր. «Հայերի պահանջը տարրական բան է. կյանքի, գույքի և պատվի ապահովութիւն և կուլտուրական զարգացման հնարավորութիւն։ Թե ինչ քաղաքական ձև կստանա այս պահանջների իրագործումը՝ այդ մեզանից կախված չէ։ Մեզանից կախված է միմիայն մի բան. խնդրել այդ ամենը մեր արյունակից եղբայրների համար՝ նախ Ռուսաստանից, իբրև ռուս քաղաքացի, ապա նրա թույլտվութեամբ՝ Եվրոպայից, իբրև մի ազգ, որի կեսը տառապում է դարերով անհնարին նեղութեանց մեջ»[2]։

Սակայն 1913 թ. սկզբին «Հորիզոնը» արդեն չէր սահմանափակվում այդ պահանջներով։ Նա առաջ էր քաշում Ռուսաստանի հովանավորութեամբ ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարը, գտնելով, որ դա ձեռնտու կլինի նաև Ռուսաստանին։ «Ստեղծելով կիսանկախ հայկական շրջան,— գրում էր թերթը,—

1 ՌԱՖԱ, ֆ. Քաղարխիվ, 1911, ց. 482, գ. 719, թ. 99։
2 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1300, ց. 29, գ. 56, թ. 58։
3 «Հորիզոն», 1912, սեպտեմբերի 21, № 206։

1 «Հորիզոն», 1912, նոյեմբերի 23, № 259։
2 Նույն տեղը, նոյեմբերի 24, № 260։

հայաբնակ նահանգները դարձնելով ինքնավարություն իր հովանու տակ, Ռուսաստանը դրանով կաղատվի շատ գլխացավանքներից։ Այդ ինքնավար երկիրը կանջատե Թուրքիան Պարսկաստանից... իր գոյությունը պարտական լինելով Ռուսաստանին՝ այդ նորաստեղծ ինքնավար երկիրը կապված կմնա մեր պետության հետ անխզելի կապերով, իր կայունությունն ու ապահովությունը այդ կապի մեջ տեսնելով»[1]։

Առաջ տանելով Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջը, դաշնակցականները հասան այն բանին, որ, ինչպես արդեն ասվեց, մտցրին այն տերություններին ներկայացված պատրիարքարանի նախագծում։

Միաժամանակ նրանք սկսեցին զինվել և արտասահմանից ու Օսմանյան կայսրության եվրոպական մասից զենքեր տեղափոխել Արևմտյան Հայաստան։ Զբաղվարվելով դրանով, նրանք երշնկայում ձեռնամուխ եղան ռումբերի արտադրության։ Իմանալով այդ մասին, իթթիհադական իշխանությունները կատաբելին զանգվածային խուզարկումներ և հայտնաբերելով դաշնակցականների կուտակած զինամթերքները, բռնագրավեցին[2]։

Դաշնակցականները կազմակերպեցին նաև հայդուկային խմբեր և հանդես եկան հակաիթթիհադական ելույթներով։

1913 թ. օգոստոսի 17-ին նրանք հրավիրեցին կուսակցության VII համագումարը և մշակեցին իրենց պլատֆորմը Իթթիհադի նկատմամբ։ Համագումարից հետո դաշնակցականները «Դրոշակի» առաջնորդողում գրում էին. «Ցրենք վերջապես մահարեր պատրանքը։ Ժամանակն է նողկանքով երես դարձնենք Թուրք պաշտոնական շողոքորթ ժպիտներից, որոնք ամեն վտանգավոր դավերն եղան մեր ժողովրդի գոյության դեմ»[3]։ Երիտթուրքերի կառավարությունը «այս չորս տարում հայ ժողովրդի արյունը ծծեց վամպիրի պես, նրա անդարձ կորստյան վիհը փորեց և մենք՝ աղնվորեն գյուրահավատներ, պատրանքներով աչքերնիս շլացած անզգալիորեն քայլ առ քայլ դեպի այդ ճակատագրական անդունդը դիմեցինք։ Ցրենք, վերջապես, այդ մահարեր պատրանքը։ Ջխաբենք մեզ և չխաբվենք ուրիշներից»։

1 «Հորիզոն», 1913, փետրվարի 2, № 26։

2 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Քաղարխիվ, 1913, գ. 719, թ. 243, «Բյուզանդիոն», 1913, № 5025, 5033, «Մշակ», 1913, № 110, 111։

3 «Դրոշակ», 1913, № 4, էջ 49։

Համագումարը հայտարարում էր երիտթուրքերին. «Ձենք հավատում ձեզ, չենք կարող այսուհետև ձեզ վստահել. հայ ժողովրդի ապագան և նրա փրկությունը փնտրելու ենք միմիայն Եվրոպայի խոստացած իրական երաշխիքների մեջ»[1]։

Եվ այդպես դաշնակցությունն ավարտելով իր մեղրամիսն Իթթիհադի հետ, արդեն երես էր թեքում նրանից և կրկին դիմաղարձ կատարում դեպի Եվրոպա։

Բայց բավարարե՞ց նրան Եվրոպան, գոհ մնա՞ց այդ կուսակցությունը տերությունների կողմից հաստատված 1914 թ. հունվարի 26-ի Հայկական նահանգների բարենորոգումների նախագծից։ «Հորիզոնի» խմբագրությունը քանի դեռ չէր ստացել այդ նախագիծը, ռուսական պաշտոնական հաղորդումների հիման վրա գնահատում էր այն իր բացասական ու դրական կողմերով, ապա եզրակացնում, որ նախագիծը «կարող է ստանալ այնպիսի պայմաններ, որոնք անխուսափելիորեն և ոչ շատ հեռավոր ապագայում կտանեն դեպի (հայոց հարցի) լուծումը»[2]։

Բայց երբ ստացավ բարենորոգումների ծրագիրը, հիասթափվեց և արձանագրեց, որ «Հայկական բարենորոգմանց պահանջներն այնպես, ինչպես նրանք ձևակերպված են հունվարի 26-ի ռուս-տաճկական համաձայնության մեջ, ստեղծում են մեղ համար վերին աստիճանի անհաստատ դրություն։ Ոչ մի միջազգային երաշխիք չկա, որ ընդգծված պահանջները իրագործվելու են, հետևաբար և ոչ մի հիմք մեղ համար՝ հայկական խնդիրը հենց թեկուզ անցողական ստադիայի համար լուծված նկատելու»[3]։

Դաշնակցությունը բարենորոգումների ձախողման պատճառը տեսնում էր Գերմանիայի իմպերիալիստական քաղաքականության մեջ։ 1914 թ. ապրիլին «Դրոշակը» նշում էր. «Շատ համոզված ինքնավարության փոխարեն, հայկական ռեֆորմների ծրագիրը, շնորհիվ Գերմանիայի, վերջնվերջո գործնական հետևանքներով չափազանց առեղծվածային մի կետ, որ բազմաթիվ փորձությունների աղբյուր է դառնալու»[4]։

1 «Դրոշակ», 1913, № 4, էջ 51։

2 Տե՛ս «Հորիզոն», 1914, փետրվարի 5, № 27։

3 Նույն տեղը, 1914, փետրվարի 18, № 35։

4 «Դրոշակ», 1914, № 4, էջ 51։

1908 թ. հեղաշրջումից հետո դաշնակցությունը ձգտում էր իր գերիշխանությունը պահպանել ազգային կյանքում։ Այդ նպատակով նա շարունակեց պայքարել ինչպես հայ հոգևորականության, այնպես էլ քաղաքական կուսակցությունների դեմ։ Հոգեվորականներին չեզոքացնելու համար դաշնակցականները հայտարարում էին, որ «ազգային քաղաքական գործերով քաղաքական կուսակցությունները միայն պետք է զբաղվեն... Պատրիարքարանը պետք է սահմանափակվի իր կրոնական հանգամանքին ու գործերուն մեջ»[1]։ Պատրիարքարանի առարկմանը, թե կուսակցությունները չեն կարող ղեկավարել ամբողջ ազգը, քանի որ արտահայտում և պաշտպանում են նրա մի մասի շահերը, դաշնակցականները պատասխանում էին, որ այդ բնորոշ է հոգևորականությանը, որովհետև նա պաշտպանելով միայն լուսավորչականների շահերը, անտեսում է կաթոլիկներին ու բողոքականներին, մինչդեռ իրենք արտահայտում են ամբողջ ազգի շահերը[2]։

Երկրի մի շարք շրջաններում դաշնակցականները հոգևորականներին ուղղակի քշում էին ասպարեզից և ազգի կառավարումը վերցնում իրենց ձեռքը։ 1910 թ. «Բյուզանդիոնը» գրում էր. «Շաբաթ օրը Պայազատեն հետագիր հասավ պատրիարքարան, թե խումբ մը դաշնակցականներ առաջնորդարանի բոլոր պաշտոնական մարմինները դուրս հանած և բսած են, որ այլևս իրենք պիտի կառավարեն ազգային գործերը»[3]։

Ջրավարարվելով դրանով, դաշնակցականները փորձեցին տնօրինել եկեղեցական գույքը։ Ակնում նրանք առաջարկեցին քահանաներին վաճառել եկեղեցու ոսկեղենն ու արծաթեղենը և դրամը հանձնել իրենց, Այնթափում փորձեցին ուղղակի խլել եկեղեցին և այն վերածել ժողովատեղիի, նույնը կրկնեցին նաև Ջմյուռնիայում, ուր հոգևորականների դիմադրության հետևանքով առաջացավ արյունահեղություն։ Վասպուրականում նրանք տիրացան Աղթամարի վանքի կալվածքներին, տվեցին դրանք վարձակալության ու հավաքեցին եկամուտները[4]։

1 «Բյուզանդիոն», 1912, փետրվարի 12, № 4652։

2 Տե՛ս նույն տեղը։

3 Նույն տեղը, 1910, նոյեմբերի 21, № 4279։

4 Տե՛ս «Մշակ», 1909, նոյեմբերի 11, № 250, «Բյուզանդիոն», 1909, դեկտեմբերի 27, № 4007, ՀՍԶՄ ՊԿՌՊԱ, ֆ. 2000, գ. 6881, թ. 10, «Աշխատանք», 1912, № 7—54, էջ 8, № 8—55, էջ 11։

Հայ հոգևորականության դեմ մղվող պայքարում դաշնակցականները օգտագործում էին անարխիստական-մաներբուժական տարրերին՝ «նոր սերնդականներին», որոնք իրավացիորեն քննադատելով եկեղեցու հետամնաց հայացքները, ընկնում էին սակայն ծայրահեղությունների մեջ, վիրավորելով ժողովրդի կրոնական զգացմունքները, փորձելով ոտնատակ անել նրա ավանդական բարքերն ու սովորույթները, քարոզելով ընտանիքի վերացում, ազատ սեր և այլն։ «Նոր սերնդականների» կարծիքով պետական, կրոնական և ընտանեկան սահմանները շղթաներ են, որոնք պետք է ոչնչացնել[1]։

Բիրտ ուժի ու տեռորի շնորհիվ դաշնակցականները հասան նրան, որ պատրիարքարանը թույլատրեց նրանց եկեղեցիներում գումարել ժողովներ ու միտինգներ, պայմանով, որ հանդես չգան լուսավորչական կրոնի դեմ։ Սակայն Ամենայն Հայոց կաթողիկոսը շուտով կարգադրեց պատրիարքին՝ արգելել նման երևույթները։

Դաշնակցականները ազգային կյանքում իրենց գերիշխանությունը պահելու համար պայքարում էին նաև հայ քաղաքական կուսակցությունների դեմ։ Ճիշտ է, նրանք երբեմն հանդես էին գալիս համերաշխության ու համագործակցության կոչերով, բայց դրա տակ միշտ հասկանում էին իրենց իշխանությունը մյուսների վրա։

Դաշնակցականները մի առանձին ակտիվությամբ հանդես էին գալիս օսմանյան պառլամենտի պատգամավորների ընտրությունների ժամանակ։ Նրանք ձգտում էին որքան հնարավոր է արտամղել մյուս կուսակցություններին և երեսփոխաններ ընտրել իրենց ներկայացուցիչներին։ Բայց օսմանյան պառլամենտում դաշնակցության պատգամավորները ակտիվ դեր չէին խաղում և այդ պատճառով իրավացիորեն ծաղրվում էին ժողովրդի կողմից։ Այսպես, Վահան Փափազյանին թուրքերեն չիմանալու և պառլամենտում լուռ ու մունջ նստելու համար անվանում էին «համր երեսփոխան», իսկ Վռամյանի մասին ասում էին, թե նույն պատճառով նրա «պես մի շատախոս մարդու համար պառլամենտում սֆինքսային լռություն պահելու պարտավորված լինելը ամենից մեծ պատիժը կլինի»[2]։

1 Տե՛ս Ռուբեն Տեր-Մինասյան, նշվ. աշխ., հ. Ե, էջ 242։

2 Տե՛ս «Մշակ», 1912, հունիսի 17, № 130։

Դաշնակցականները գործուն մասնակցություն էին ցուցաբերում հարկահանությանը։ Նրանք մերձենում էին անգամ թուրք ու քուրդ կապալառուներին և գյուղացիներից հավաքում պանդաղան տուրքեր։ Նրանք հայտարարում էին, որ գանձած գումարները կհատկացվեն ազգի զինման ու ինքնապաշտպանության, կրթության ու լուսավորության նպատակներին, բայց իրականում, հաճախ, ծախսում էին իրենց անձնական կարիքների համար։ Ուստի գյուղացիները մի շարք շրջաններում հրաժարվում էին դաշնակցականներին վճարումներից ու նույնիսկ վռնդում էին նրանց։ Այսպես, 1909 թ. դեկտեմբերին Գավաշի հովտում գյուղի բնակիչները մերժեցին դաշնակցականների հարկային պահանջները և հեռագիր ուղարկեցին պատրիարքարան, խնդրելով, որ «զիրենք ազատեն այդ կեղեքումներեն»[1]։ 1910 թ. գարնանը Մշո դաշտի գյուղերից մեկում շինականները քշեցին դաշնակցական հարկահավաքին[2]։ Նրանց դեմ ըմբոստացան նաև Այնթափի, Դիարբեքիրի, Ուրֆայի և այլ շրջանների բնակիչները[3]։

Հար և նման վարքագծի պատճառով դաշնակցությունը գնալով մի շարք տեղերում կորցնում էր իր ազդեցությունն ու հեղինակությունը։ Դեռ 1909 թ. հունվարի 17-ին Վ. Շիրկովը հաղորդում էր, որ Բիթլիսի վիլայեթի հայերից շատերը դժգոհ են դաշնակցականներից, բայց վախենալով ահաբեկումներից, կատարում են նրանց կամքը[4]։

Վանի ռազմական փոխհյուպատոս Օլֆերևը 1910 թ. գրում էր. «Իմ մոտիկ շփումը Վանի հայերի հետ թույլ է տալիս եզրակացնել, որ դաշնակցականներն արդեն կորցրել են այստեղ իրենց ազդեցությունը և համակրանքը։ Ես գիտեմ դեպքեր, երբ գյուղացիները անիծելով ու ծեծելով վռնդել են նրանց իրենց գյուղերից ու ավաններից»[5] Ս. Օլֆերևը, անշուշտ, չափազանցում էր իրականությունը։ Նրա ընդհանրացումները կատարված էին մասնակի փաստերի հիման վրա։

1 Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, հունվարի 8։
2 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Քաղարխիվ, 1910, ց. 482, գ. 544, թ. 78։
3 Տե՛ս «Մշակ», 1911, մարտի 16, № 55։
4 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Քաղարխիվ, 1909, ց. 482, գ. 543, թ. 4։
5 Նույն տեղը, 1910, ց. 482, գ. 718, թ. 41—42։

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն

1908 թ. հեղաշրջումից հետո տարագրությունից Կ. Պոլիս վերադարձան նաև հնչակյան կուսակցության ղեկավարները։ Օգոստոսի 14-ին նկան Մեծն Մուրատը (Համբարձում Պոյաճյանը), Ս. Սապահ-Գյուլյանը, ապա՝ ուրիշներ։ Նրանք հայտարարեցին, որ կուսակցությունը կդիմագրավի երիտթուրքերին, եթե նրանք փորձեն հաստատել մի ազգության տիրապետությունը մյուսի վրա։ Կուսակցությունը պահանջում է «ազգությունների բացարձակ հավասարություն...», ազգություններն ինքնավարություն, «Հայաստանի ինքնավարություն...», միդհատյան սահմանադրության վերածում ամբողջ սահմանադրության, սուլթանիզմի լիակատար տապալում, խալիֆայության անջատում պետությունից և այլն։ Քանի դեռ չեն իրագործված այդ պահանջները, ասում էին նրանք, «մենք մեր կռվին դադար չպիտի տանք»[1]։

Հնչակյանների ղեկավարներն ապա շարունակում էին. «Մեր պայքարի մոտավոր նպատակը կլինի ինքնավարություն՝ Հայաստանի, Մակեդոնիայի և բոլոր բաղկացուցիչ ժողովուրդների համար, իսկ ռազմավարական սահմանադրություն՝ ամբողջ Թուրքիայի համար։ Մեր պայքարի հեռավոր նպատակը կլինի սոցիալիզմի տիրապետությունը Հայաստանի և ամբողջ Թուրքիայի մեջ»[2]։

Կուսակցության ղեկավարները հայտարարում էին, որ եթե հեղաշրջումից առաջ հնչակյանները պահանջում էին Հայաստանի անջատում Թուրքիայից, ապա այժմ հրաժարվում են այդ պահանջից, քանի որ արդեն տապալված է բռնապետությունը և հաստատված են սահմանադրական կարգեր։ Այժմ նրանք պայքարում են բովանդակ Թուրքիայի դեմոկրատացման, նրա բարեփոխման ու զարգացման, բոլոր ազգերի ինքնավարության, համախմբման ու համագործակցության համար[3]։

1909 թ. հուլիսի 12-ին Կ. Պոլսում լեռնալ պայմաններում հրավիրվեց հնչակյան կուսակցության VI համագումարը, որին մասնակցում էին Ամերիկայից, Ռուսաստանից, Կարսակաստա-

1 Տե՛ս «Հնչակ», 1908, № 6—7, էջ 59։
2 Նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 55։

նից, Բուլղարիայից, Եգիպտոսից, Թուրքիայից և այլ երկրներից եկած 79 ներկայացուցիչներ։ Նրանք քննության առան կուսակցության ծրագրի նախագիծը և որոշ փոփոխություններով հաստատեցին այն։

Ծրագիրն ազդարարում էր, որ պրոլետարիատը կատարյալ ազատություն կստանա այն ժամանակ, երբ կտիրի արտադրության բոլոր միջոցներին։ Այդ նպատակին հասնելու համար նրա կուսակցությունները ամբողջ աշխարհում պետք է համախմբվեն, առաջ բերեն «սոցիալիստական (ընկերային) հեղաշրջում», ավարտեն դասակարգային կռիվը և հաստատեն սոցիալիստական հասարակական կարգեր։

Թուրքիայում տիրապետող արդի վարչակարգը կործանարար է կայսրության բոլոր ժողովուրդների համար։ Նրանք տառապում են թե հին հարաբերությունների քայքայման և թե նոր՝ կապիտալիստական կարգերի զարգացման հետևանքով։ Հնչակյաններն ուզում են փրկել ողջ կայսրության ժողովուրդներին, ստեղծելով սոցիալիզմ։ Այդ նպատակին հասնելու համար կուսակցությունը գտնում է, որ պետք է ստեղծել երկարամյա լիազոր Օրենսդիր ժողով, որը քննի երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական հարցերը, հաստատի տեղական (նահանգների, գավառների, համայնքների) վարչական ընդարձակ ինքնավարություն՝ ընտրական սկզբունքներով, մասնակից դարձնելով այդ ընտրություններին 20 և ավելի տարիք ունեցող բոլոր քաղաքացիներին, անկախ ազգությունից, կրոնից ու սեռից։ Ընտրությունները պետք է լինեն ընդհանուր, գաղտնի, հավասար և ուղղակի քվեարկությամբ, սահմանելով ընտրվածների համար ոոճիկ։ Անհրաժեշտ է ոչնչացնել դասերը և բոլոր քաղաքացիներին հավասար ճանաչել օրենքի առաջ։ Սահմանել մամուլի, խոսքի, խղճի, ժողովների ու միությունների ազատություն և անձի ու գույքի անձեռնմխելիություն։ Պահել կրոնական հաստատությունները հավատացյալների միջոցներով։ Հաստատել ընդհանուր զինվորական ծառայություն, ունենալ խաղաղ պայմաններում ժողովրդական միլիցիա։ Սահմանել պարտադիր և ձրի ուսուցում, նյութական օժանդակություն ցույց տալով կարիքավորներին։ Թուրքերենը ճանաչել պետական լեզու և պարտադիր համարել բոլորի համար։ Բայց միաժամանակ բոլորն իրավունք ունեն հանդես գալու կառավարչա-

տներում ու դատարաններում իրենց մայրենի լեզուներով։ Բոլոր լեզուները պիտի իրավահավասար լինեն պետական ու դատական հաստատություններում։ Բուժումն ու դատավարությունները պետք է լինեն ձրի, իսկ մահապատիժները՝ վերացվեն։ Անհրաժեշտ է ստեղծել անկաշկանդ երթևեկություն և շնորհել տնտեսական ձեռնարկումների կատարյալ ազատություն։

Ծրագրում այնուհետև նշվում էր, որ ժողովրդի վիճակի բարելավման համար պետք է վերանայել գոյություն ունեցող հարկային համակարգը, ոչնչացնել անուղղակի հարկերը և մըտցընել պրոգրեսիվ հարկ, ազատել գյուղացիներին պարտքերից ու ապառքներից, վերացնել տարապարհակները (անկարիա, օլամ և այլն), սահմանել ութժամյա բանվորական օր, արգելել գիշերային ու արտակարգ աշխատանքները, կիրառելով դրանք խիստ բացառիկ դեպքերում։ Սահմանել գիշերային աշխատանք՝ ոչ ավելի, քան 5 ժամ և վճարել լրիվ օրվա աշխատավարձ։ Արգելել 14-ից ցածր տարիք ունեցող երեխաների աշխատանքը, իսկ 14—17 տարեկանների համար սահմանել վեցժամյա աշխատանքային օր։ Վերացնել կանանց աշխատանքը արտադրության այն ճյուղերում, ուր վնասակար է նրանց համար։ Կանանց աշխատանքից ազատել ծննդաբերությունից 4 շաբաթ առաջ և 6 շաբաթ հետո, պահպանելով աշխատավարձը։ Հիմնել մսուր, մանկապարտեզ, վերացնել տուգանքները, սահմանել պետական ապահովագրություն, աշխատավարձի նվազագույն չափ, արգելել աշխատավարձի վճարումը ապրանքներով, վճարել այն միայն հնչուն դրամով, պատասխանատվության ենթարկել աշխատանքային օրենդրությունը խախտող ձեռնարկատերերին և այլն։

Ծրագրում հատուկ տեղ էր հատկացվում հողային հարցին։ Պահանջվում էր՝ վերացնել այն բոլոր օրենքները, որոնք արգելակում կամ խոչընդոտում են գյուղացիների տնտեսության ազատ զարգացմանը, «վերացնել ճորտատիրական հարաբերությունների մնացորդները»[1], սահմանել մարաբաններին հովանավորող օրենք։ «Աշխատավոր ժողովրդին՝ ամեն պարտադրի տակ բռնի խլված հողերը վերադարձնել իրենց նախկին տեր-

1 Տե՛ս Ծրագիր սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության (Տաճկաստանի համար), Կ. Պոլիս, 1910, էջ 13։

րուն[1], «պետության օժանդակությամբ, ինչպես և տեղական ինքնավար մարմիններու օժանդակությամբ ու կանխավճար հավանությամբ գաղթականություններ հաստատել աղատ հողերու վրա», օգնել մանր հողատերերին, որ մշակեն իրենց հողակտորները սեփական ուժերով, կարողանան կիրառել իրենց տնտեսություններում մեքենաներ, ձեռք բերել պարարտանյութ, վաճառքի հանել արդյունքները, հիմնել գյուղատնտեսական տիպիկ ագարակներ ու դպրոցներ, բնաճացնել մանր հողատերերի վրա դրված հարկերը և այլն։

Անդրադառնալով ազգային հարցին, ծրագիրը գտնում էր, որ պետք է պաշտպանել իրավահավասարությունը, ժխտել մեկ ազգի տիրապետությունը մյուսի նկատմամբ, հարգել ազգերի ինքնորոշման իրավունքը։ Կուսակցությունը իր նպատակին հասնելու համար հրաժարվում էր հեղափոխական պրոպագանդայից և ծավալում պառլամենտական գործունեություն։ Միաժամանակ նա գործի էր դնում պայքարի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են գործադուլները, գյուղացիական ու արհեստակցական միությունները, արտադրական ընկերությունները կամ կոոպերատիվները, այսինքն՝ այն բոլոր եղանակները, «որոնք միջազգային սոցիալ-դեմոկրատիայի պայքարի զենքերը կհամարվին»[2]։

Այնուհետև ծրագրում նշվում էր, որ սոցիալ-դեմոկրատական գաղափարները պետք է պրոպագանդել Թուրքիայի բոլոր ազգությունների մեջ, ստեղծելով նրանց շրջանում սոցիալ-դեմոկրատական ֆրակցիաներ (հատվածներ), «որոնք պետք է կազմեն միջազգային ընդհանուր սոցիալ-դեմոկրատիայի մեկ մասը»[3]։

Անշուշտ, հնչակյանների ծրագրում կային միջազգային սոցիալ-դեմոկրատիայի փաստաթղթերից վերցրած բազմաթիվ դրույթներ։ Այն իր էությամբ ու բովանդակությամբ լայն դեմոկրատական էր։

Այդ համագումարից հետո հնչակյանները իրենց կուսակցությունը կոչեցին «Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն»։ Նրանց ծրագիրը երիտթուրքական կառավարության կողմից ճանաչվեց 1910 թ. հունվարին։

Երբ համեմատում ենք հնչակյանների այս ծրագիրը նրանց նախորդ (1887 թ.) ծրագրի հետ, տեսնում ենք բազմաթիվ նույնություններ. բայց կան նաև լուրջ տարբերություններ։ Եթե առաջին ծրագրում կուսակցությունն իր նպատակն էր համարում միայն արևմտահայության, ապա երկրորդ ծրագրում՝ ամբողջ Թուրքիայի տիրապետության տակ ընկած ժողովուրդների ազատագրումը։

Ի տարբերություն առաջին ծրագրի, ուր խնդիր էր դրվում այդ ազատագրումը ձեռք բերել հեղափոխության միջոցով, ապա երկրորդ ծրագրում՝ պառլամենտական պայքարի, գործադուլների, արհեստակցական միությունների, արտադրական ընկերությունների և նման այլ միջոցներով։

Եթե նախորդ ծրագրում կուսակցությունը պահանջում էր անջատել Արևմտյան Հայաստանը Թուրքիայից, ապա նոր ծրագրում մերժում էր «ամեն տեսակ անջատողականություն» և պրոպագանդում էր օսմանյան ժողովուրդների խաղաղ համագործակցություն ու զարգացում։

Ի տարբերություն հին ծրագրի, որի մեջ ագրարային հարցի լուծումը ենթադրվում էր կատարել համայնական հողատիրության և համայնական հողօգտագործման ստեղծումով[1], նոր ծրագրով այդ հարցի լուծման համար պահանջվում էր վերացնել գյուղացիական տնտեսությունների զարգացումը արգելակող կամ խոչընդոտող օրենքները, ճորտատիրական մնացորդները, վերադարձնել գյուղացիներից բռնագրավված տարածությունները, օգնել մանր հողագործներին, կազմակերպել արտադրական ղանազան ընկերություններ և մանրբուրժուական այլ միջոցառումներ։

Եթե հին ծրագրում պայքարի հիմնական ձևերից մեկը համարվում էր տեռորը, ապա նոր ծրագրում մերժվում էր այն, դանելով, որ Թուրքիայում այժմ ստեղծվել են այնպիսի նորմալ պայմաններ, որոնք թույլ են տալիս գործելու օրինական, լեգալ ճանապարհներով։

Այդպիսով, ինչպես դաշնակցականները, այնպես էլ հնչակ-

---

1 Տե՛ս Ծրագիր..., էջ 13։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 14։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 15։

---

1 Տե՛ս Ծրագիր հնչակյան կուսակցության, երրորդ հրատարակություն հանգերձ մեկնություններով, Լոնդոն, 1897, էջ 38—45։

յանները մերժելով անջատողական ձգտումները, Հայաստանի անկախության գաղափարները, պատրաստակամություն էին հայտնում համագործակցել երիտթուրքերի հետ, բարեկարգել բովանդակ Թուրքիան, առաջ տանել ու զարգացնել ազգային ու սոցիալական հարաբերությունները և այդ եղանակներով լուծել երկրի առջև կանգնած կենսական խնդիրները։

Բայց ԻԲԲիհադի պարագլուխները հաստատապես մնալով իրենց ռեակցիոն դիրքերում, հրաժարվեցին նաև հնչակյանների առաջարկություններից և նրանց հանդեպ նույնպես գործադրեցին հալածանքներ։

Այնժամ հնչակյանները մերձեցան երիտթուրքերի հակառակորդ «Հյուրիեթ վե իթիլաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցությանը և 1912 թ. փետրվարի 7-ին նրա հետ համաձայնություն կնքեցին։ Կողմերը պարտավորվում էին հարգել Օսմանյան կայսրության «ժողովրդապետական սկզբունքները», պաշտպանել նրա ամբողջականությունը, մերժելով անջատման ամեն մի փորձ, սահմանել ազգերի իրավահավասարություն, ապահովել Կ. Պոլսի հայոց պատրիարքի առանձնաշնորհումները, թուլատրել, որ հայերի ազգային հաստատությունները ղեկավարեն իրենց դպրոցները, ճանաչելով հայ երեխաներին տված վկայականները համազոր «պետական նույնատիճան դպրոցներու կողմե տված վկայականներուն»[1]։

Համաձայնության մեջ ապա ասվում էր, որ պետք է բարելավել բանվորների ու հողազուրկ գյուղացիների (հատկապես մարաբաների, օրթագճիների, այլըգճիների և նմանների) դրությունը, քննել բռնագրաված հողերի հարցը դատարաններում և վերադարձնել դրանք իրենց տերերին, բնակեցնել մուհաջիրներին կամ գաղթականներին պետական ազատ հողերի վրա, միաանաբար հանդես գալ ընտրական կամպանիաներում ու օսմանյան պառլամենտում և այլն[2]։

Այդ համաձայնագրի կնքումից 3 օր հետո՝ 1912 թ. փետրվարի 10-ին, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության Տաճկաստանի կենտրոնական վարչությունը դիմեց Թուրքիայի իր մասնաճյուղերին՝ պրոպագանդել նշված որոշումները բնակչության շրջանում, բարեկամական կապեր ստեղծել Իթիլաֆի

1 Տե՛ս ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 408, ց. 1, գ. 98, թ. 1։

2 Նույն տեղը։

տեղական կազմակերպությունների հետ, հեռանալ այլ կուսակցություններից, հատկապես դաշնակցականներից[1]։

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության ղեկավար Ս. Սապահ-Գյուլյանը հետագայում փորձելով արդարանալ, գրում էր, որ այդ համաձայնագիրը իր կուսակցության պատմության «կոթողներից մեկը կմնա և հայ ազատագրության էջերի մեջ իր ուրույն պատվավոր տեղը կունենա»[2], քանի որ, իբր, ուժեղացրել է հակասությունները ԻԲԲիհադի ու Իթիլաֆի միջև, սրել է վերջինիս պայքարը երիտթուրքերի դեմ և դրանով, որպես թե, թուլացրել նրանց հիմքերը։

Բայց այդ ամենը արևմտահայության համար անօգուտ էր։ Իթիլաֆն իր սոցիալական բազայով ու խնդիրներով համարյա նույնն էր, ինչ ԻԲԲիհադը։ Տարբերությունն այն էր, որ նրանցից առաջինն ուներ անգլիական, իսկ երկրորդը՝ գերմանական կողմնորոշում։ Նրանց համաձայնագիրն Իթիլաֆի հետ չէր լուծում արևմտահայության ոչ ազգային և ոչ էլ հողային խնդիրները։ «Հյուրիեթ վե իթիլաֆ» կուսակցության ստանձնած պարտավորությունները օսմանյան ժողովուրդների իրավահավասարության, բանվորների և գյուղացիների դրության բարելավման և նման հարցերի վերաբերյալ, ունեին դեմագոգիկ բնույթ, որոնք պետք էին նրան ոչ թե կենսագործելու, այլ իր դիրքերն ամրապնդելու, իր կողմնակիցների թիվը մեծացնելու համար։ Ըստ էության Իթիլաֆը ոչ թե համագործակցում էր հնչակյանների հետ, այլ խաբում էր նրանց, ինչպես ԻԲԲիհադը՝ դաշնակցականներին։

Պատահական չէ, որ երբ իթթիլաֆականները 1912 թ. հուլիսի 9-ին կատարեցին պետական հեղաշրջում և իշխանությունը վերցրեցին իրենց ձեռքը, շարունակեցին ԻԲԲիհադի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությունը։ Նրանք[3] բշնամական դիրք բռնեցին կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում նաև արևմտահայերի սոցիալական ու ազգային խնդիրների նկատմամբ։

«Մշակի» թղթակիցը, մոտիկից դիտենալով թուրք կուսակցությունների էությունը, Կ. Պոլսից հաղորդում էր. «Այլևս հայուն համար ԻԲԲիհադին և Իթիլաֆին միջև նախընտրություն

1 Տե՛ս ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 408, ց. 1, գ. 90, թ. 7։

2 Տե՛ս Ս. Սապահ-Գյուլյան, Պատասխանատուները, Փրովիտենս, 1916, էջ 286։

ընելու ժամանակը շատուց անցած է։ Ասոնք ամենքն ալ իրար կարժեն և... անընդունակ են որևէ բարենորոգում գործադրելու և հետևաբար հայուն հավատք ներշնչելու, հույս տալու և խանդավառելու, անոր կյանքին, ինչքին և պատվին ապահովություն տալով»[1]։

* * *

1908 թ. հետո հնչակյանները Բալուում, Ադանայում, Խարբերդի դաշտում, Մարզվանում, Դիարբեքիրում և այլուր հիմնեցին իրենց կուսակցության մասնաճյուղերը, պրոպագանդելով նոր ծրագիրը, քարոզեցին արհեստակցական միությունների ու կոոպերացիաների գաղափարը, զբաղվեցին կուլտուր-լուսավորական աշխատանքներով, բացեցին դպրոցներ և այլն։ Բայց ձեռք բերած արդյունքը համարյա աննշան էր։

Հնչակյանները որոշ աշխատանք կատարեցին արևմտահայության մեջ սոցիալիզմի գաղափարների պրոպագանդման ուղղությամբ։ 1910 թ. Կ. Պոլսում նրանք ստեղծեցին իրենց «Սոցիալ-դեմոկրատական ուսանողական միությունը», որի «Կայծ» ամսագիրը (1911—1914 թթ.) «շոշափում էր սոցիալիստական մտքի ու շարժման մի շարք կարևորագույն հարցեր...»[2]։ Այն «... կրում էր Անդրկովկասի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը»[3]։

Ուշագրավ է, որ եթե 1908 թ. առաջ հնչակյաններն ավելորդ էին համարում հարևան ժողովուրդների հետ համագործակցումը, ապա հետո փորձեցին դաշնակցել նրանց հետ։ Ս. Սապահ-Գյուլյանի վկայությամբ, քուրդ Բեդիրխան բեյը և նրա համախոհները, ծանոթանալով նրա կուսակցության ծրագրին, հավանեցին և իրենց շուրջը համախմբելով որոշ քուրդ պաշտոնյաների, ուսուցիչների ու աշակերտների, բացեցին ակումբներ։ Շուտով կազմվեց կենտրոնական վարչություն, որն իր մասնաճյուղերը հիմնեց Արևմտյան Հայաստանում, հատկապես Մուշում և այլ տեղերում։ Դրանք սկսեցին համագործակցել տեղական սոց.-դեմոկրատ հնչակյան մասնաճյուղերի հետ, հրատա-

1 «Մշակ», 1912, հոկտեմբերի 2, № 217։

2 Տե՛ս Մ. Վ. Առզումանյան, Բոլշևիկների գործունեությունը..., էջ 228—229։

3 Տե՛ս նույն տեղը։

րակել թերթ, արտատպելով «Հնչակի» առաջնորդողները, շրջաբերականները և այլ նյութեր։ Սակայն Իթթիհադը, օգտագործելով քրդերի մահմեդական կրոնը, կարողացավ խափանել հայ-քրդական մերձեցման այդ փորձերը[1]։

Ս. Սապահ-Գյուլյանը այնուհետև նշում էր, որ 1908 թ. հետո մայրաքաղաքի թուրքերի մեջ առաջացավ ռամկավարական-դեմոկրատական հոսանք, որը գլխավորում էր եվրոպական կրթություն ստացած, մասնագիտությամբ իրավաբան Մանիասա զադե Րեֆիկ բեյը։ Դեռ Համիդի վարչակարգի օրոք նա օգնել էր հնչակյաններին և մեղմել Գում-Գափուի ցույցի մասնակիցների դատավճիռը։ Սահմանադրությունից հետո Մանիասա զադե Րեֆիկ բեյը ավելի մոտիկից ծանոթացավ հնչակյանների գործունեությանը և, համակրելով նրանց շատ գաղափարները, պատրաստվեց իր հոսանքին տալ հակաիթթիհադական ուղղություն։ Հնչակյանները օգնում ու օժանդակում էին նրան, քաջալերում ձեռնարկումները։ Բայց Մանիասա զադե Րեֆիկ բեյը շուտով հանկարծամահ եղավ, և նրա ձեռնարկումները տապալվեցին[2]։

Հնչակյանները փորձեցին մերձենալ նաև արաբների ու այլ բնակիչների հետ, բայց ապարդյուն[3]։

* * *

1913 թ. հնչակյան կուսակցության առաջնորդները սկսեցին ավելի ու ավելի համոզվել, որ թուրքական տիրապետող վարչակարգը հնարավորություն չի տալիս բարեկարգելու երկիրը և իրագործելու իրենց գաղափարները։ Ա. Նազարբեկը գտնում էր, որ օսմանյան սահմանադրությունը արևմտահայության համար փրկություն չէ, քանի որ այն սոցիալիզմի գաղափարների տարածման ու զարգացման համար տարրական պայմաններ չի ստեղծում, չի նպաստում աշխատավոր զանգվածների կազմակերպմանը սոցիալիստական հեղափոխության իրականացման համար[4]։

1 Տե՛ս Ս. Սապահ-Գյուլյան, նշվ. աշխ., էջ 252։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 254—256։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 331։

4 Տե՛ս «Հնչակ», 1913, № 2, էջ 5։

Ս. Սապահ-Գյուլյանը նշում էր, որ Թուրքիայի միակ փըրկությունը նրանում բնակվող ազգությունների ինքնավարությունն է։ Նա ցույց էր տալիս, որ արևմտահայությունը դեռ 1860-ական թվականների սկզբներին ձեռք էր բերել ազգային սահմանադրություն, որի շնորհիվ տնօրինում էր ներքին գործերը։ Այդ սահմանադրությունը, թեև խիստ պոչատ, այնուամենայնիվ ինքնավարության մի ձև էր։ «Հիմք ունենալով արդեն եղածը,— շարունակում էր նա,— մնում է նրան տալ այն մասերը, ինչ որ պակասում են,— ճանաչել հայ սահմանադրության մասնակի գործադրական իշխանության իրավունքները, ընդարձակել նրա սահմանները ավելի դեմոկրատական հիմունքներով, Հայաստանի ամբողջ տարածության վրա,— դա ամենադյուրին միջոցը կաս Հայկական հարցը լուծելու»[1]։

Ս. Սապահ-Գյուլյանի կարծիքով հայերի օրինակով կայսրության մյուս ժողովուրդներին ևս պետք է տալ ինքնավարություն։ Եթե թուրքական կառավարությունը այդ չանի, կկործանի երկիրը, իսկ եթե հայերը չկարողանան ձեռք բերել ինքնավարություն, կձուլվեն ու կոչնչանան[2]։ Կուսակցության պարբերականը գտնում էր, որ Հայաստանի ինքնավարության ստեղծման գործում որոշակի շահագրգռվածություն ունի Ռուսաստանը։ Ցարիզմը տեսնում էր, որ Գերմանիան տիրելով Թուրքիայի տնտեսական բարձունքներին, շարժվում է դեպի Արևելք, դեպի Իրան։ Նրա առաջխաղացումը կանխելու համար Ռուսաստանը պետք է ստեղծի «ինքնավար Հայաստան այն ծավալով, որ Սև ծովից մինչև Միջերկրական ծովը մի պատվար շինի Փոքր Ասիայից դեպի Միջագետք—Մոսուլի, Բաղդադի, Բասրայի վիլայեթները»։ Թերթը պահանջում էր, որ ինքնավար Հայաստանը բացի հայկական վեց վիլայեթներից, ընդգրկի նաև Ադանայի, Մերսինի, Ճեպելը-Պերեքեքի, Գոզանի, Մարաշի և Ուրֆայի սանջակները։ Այդպիսի Հայաստանի ստեղծումով թեև շահագրգռված են նաև Անգլիան ու Ֆրանսիան, սակայն այն պետք է գտնվի Ռուսաստանի հովանավորության տակ, քանի որ «այդ իրավունքը ամենից ավելի պատկանում է Ռուսաստանին, որի

1 «Հնչակ», 1913, № 2, էջ 8։
2 Տե՛ս նույն տեղը։

բևարկությունը երբեք չի հակասում հայ ազգի քաղաքական շահերին»[1]։

«Հնչակի» Սյունիք ծածկանունով թղթակիցը ժխտում էր այն կարծիքը, որ իբր Եվրոպան չի ուզում զբաղվել Հայկական հարցով։ Նա գտնում էր, որ եթե հայերն իրենք առաջ քաշեն իրենց խնդիրը, տերությունները ոչ միայն կզբաղվեն, այլև կլուծեն այն։ «Եվրոպական դիպլոմատիան չէ, որ իր պարտականությունն ու պաշտոնը համարի քաղաքական աշխարհում հայկական խնդիր հուզելու»։ Դա պիտի կատարեն հայ կուսակցություններն ու ժողովուրդը։ Նրանք «պիտի իրենց ուժերը նետեն Հայաստանի ազատության կռվի մեջ և այն ժամանակ դիպլոմատիան էլ առիթ, տրամադրություն կունենա զբաղվելու հայկական խնդրով»[2]։

1913 թ. սեպտեմբերի 7-ին Ռումինիայի Կոստանցա քաղաքում հնչակյանները գումարեցին իրենց VII պատգամավորական ընդհանուր ժողովը կամ համագումարը։ Ելնելով այն բանից, որ երիտթուրքերը հինգ տարվա ընթացքում չեն բարելավել կայսրության ժողովուրդների, այդ թվում նաև արևմտահայերի դրությունը, ընդհակառակը, նույնիսկ վատթարացրել են այն և, հետևաբար, չեն կատարել իրենց հանդիսավոր խոստումները, նրանք որոշեցին պայքարել Իթթիհադի դեմ «մինչև որ ավելի հարմարավոր քաղաքական ու տնտեսական նոր պայմաններ առաջանան»[3]։

Հնչակյանները խնդիր էին դնում «պաշտպանել ինքնավար Հայաստանի գաղափարը՝ եվրոպական կոնտրոլով», անողոք պայքարել Իթթիհադի ձուլման քաղաքականության դեմ, մանևրելով կոմպրոմիսների մեջ ձախակողմյան կուսակցությունների հետ, առաջարկել արտասահմանյան իրենց մասնաճյուղերին, որ նրանք իրենց գործունեության մեջ «ֆիզիկապես, բարոյապես նախապատվություն տան Տաճկահայաստանին և տաճկահայ դատին»[4]։ Համագումարը որոշեց անցնել ընդհատակ և գործել անլեգալ պայմաններում։

Այդպիսով, հնչակյանները ինքնավար Հայաստանի պահան-

1 Տե՛ս «Հնչակ», 1913, № 3, էջ 13։
2 Նույն տեղը, № 4—5, էջ 13։
3 Տե՛ս նույն տեղը, 1914, № 1, էջ 27։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 25։

ջը՝ Ռուսաստանի հովանավորությամբ կամ Ռուսաստանի ազդեցության տակ, շուրջ 6—7 ամսվա ընթացքում փոխարինեցին ինքնավար Հայաստան՝ եվրոպական վերահսկողության պահանջով, ելնելով այն բանից, որ օգտվեին նաև մյուս մեծ տերությունների աջակցությունից։ 1913 թ. վերջերին «Սոց.-դեմոկրատ հնչակյան կուսակցության» կենտրոնական վարչության քարտուղար Բ. Վարազդատը քննադատում էր Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռնարկումը՝ Հայկական հարցով Եվրոպա պատգամավորություն ուղարկելու կապակցությամբ, համարելով, որ դա կատարվում է Ռուսաստանի թելադրանքով և պահանջում էր ստեղծել ինքնավար Հայաստան՝ «եվրոպական կոնտրոլի տակ՝ հետու և ռուսական և թրքական գգվանքներեն»[1]։

Հնչակյանները գտնում էին, որ ինքնավար Հայաստանի բարիքներից պետք է օգտվեին ոչ միայն հայերը, այլև այնտեղ բնակություն հաստատած բոլոր ժողովուրդները։

Սակայն նրանք շատ դառնացան, երբ ծանոթացան իրենց իսկ պաշտած Եվրոպայի հավանությունն ստացած 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումներին։ Բայց հնչակյանները, այնուամենայնիվ, համառորեն շարունակեցին եվրոպական վերահսկողություն պահանջել։ Նրանց օրգաններից մեկը՝ «Ծիրիտասարդ Հայաստանը», գրում էր. «Ինչ գործնական արժեք կարող է ներկայացնել մի նախագիծ, որի միջից բարենորոգումների միակ իրական հիմքը, Հայաստանի աշխարհագրական միությունը և գործադրության միակ անհրաժեշտ նախապայմանը՝ եվրոպական կոնտրոլը բացակայում էին»[2]։ Այնուհետև պարբերականը շարունակում էր. «... Հայկական հարցը լուծված չէ... Հայ ճնշված ու հարստահարված մասսան՝ պատնեշի վրա կանգնած՝ պետք է շարունակի իր ազատագրական պայքարը, մինչև որ իր սիրով փայփայած իղձերի պսակումը եվրոպական կոնտրոլով ինքնավար Հայաստանի ծրագիրը իրականանա...»[3]։

Այդպիսով, ի տարբերություն դաշնակցականների, որոնք վերջապես պահանջում էին ինքնավար Հայաստան՝ Ռուսաստանի վերահսկողությամբ, հնչակյանները՝ ինքնավար Հայաստան եվրոպական կոնտրոլով։

1 Տե՛ս «Հնչակ», էջ 23։

2 «Ծիրիտասարդ Հայաստան», 1914, հուլիսի 9, № 36։

3 Նույն տեղը, հունիսի 9, № 36։

Հայ սահմանադրական ոամկավար կուսակցություն

Վերակազմյալ հնչակյանների կուսակցությունը, որ ներհակությունների պատճառով պառակտվել էր դեռ 1906—1907 թթ., շարունակում էր մնալ այդ վիճակում նաև 1908 թ. հեղաշրջումից հետո։ Նրանց մեծ մասը՝ Սուրեն Պարթևյանի, Պետրոս Գարրիելյանի, Սարդիս Մալէէմզյանի, Վահրամ Գրիգորյանի և շուրջով սրանց միացած Միհրան Տամատյանի ու Վահան Թեքեյանի գլխավորությամբ կահիրեում 1907 թվից հրատարակում էին «Ազդ» թերթը[1]։ 1907 թ. նոյեմբերի 24-ին այդ վերակազմյալները դաշն կնքեցին հին հնչակյանների հետ, համերաշխվելով մի շարք սկզբունքային հարցերում։ Սահմանադրությունից հետո Ս. Սապահ-Գյուլյանը և նրա գաղափարակիցները առաջարկեցին նրանց ձուլվել իրենց կուսակցության կամ հին հնչակյանների մեջ, առանց որևէ պայմանի։ Սակայն գաղափարական տարաձայնությունների պատճառով մերժում ստացան, «ձուլումը չկայացավ»[2]։

Այս վերակազմյալները ողջունեցին օսմանյան սահմանադրության հռչակումը, հուսալով, որ այն հայերին հնարավորություն կտա ազատ շունչ քաշելու և զարգանալու, ձերբակալվածներին կարձակի զնդաններից, կնպաստի տարագիրներին վերադառնալու հայրենիք և վերջ կդնի արտագաղթին։ Նրանք ենթադրում էին, որ սահմանադրությունը օսմանյան քաղաքացիներին, այդ թվում նաև հայերին կտա խոսքի, խղճի, կրոնի և մամուլի ազատություն։

Բայց միաժամանակ վերակազմյալները չէին ուզում կորցնել աշխրջությունը, նշելով, որ հայերը չպետք է այնքան խանդավառվեն սահմանադրությամբ, որ թուլացնեն իրենց հեղափոխական «լարված, պրկված ջիղերը»։ Նրանք պետք է շարունակեն կռիվը, «մինչև որ բռնապետը և իր քամարիլյան վերջնապես ջախջախվեն և մինչև որ նոր բեժիմին տակ ազգերու ինքնուրույնությունը տևականորեն ապահովվի»[3]։

1 Տե՛ս «Զայն հայրենյաց», 1908, հոկտեմբերի 30, № 2, «Աշխատանո», 1912, № 44—91, էջ 2—3։

2 Տե՛ս Ս. Սապահ-Գյուլյան, նշվ. աշխ., էջ 250։

3 Տե՛ս «Ազդ», 1908, օգոստոսի 8։

Վերակազմյալները գտնում էին, որ հայ կուսակցություններ, հասարակական-քաղաքական ուժերը պետք է համախմբվեն և մշակեն միասնական ազգային քաղաքականություն, որպեսզի «...մեր ազգային ճակատագիրը օսմանյան սահմանադրական կառքին անիվներուն կապված՝ պատահականություններու զոհիթափն ի վար չքաշկռտվի խեղճուկրակորեն»[1]։ Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հրավիրել կուսակցությունների խորհրդակցություն և մշակել ընդհանուր տակտիկա «ներկա բախտորոշ վայրկյանին»։

Վերակազմյալները նշում էին, թե ոչ մի ժողովուրդ, առանց հեղափոխական-քաղաքական կազմակերպվածության, չի կարող պաշտպանել իր շահերը՝ նույնիսկ սահմանադրական վարչակարգում։ Արևմտահայությունը չի կարող կոթնել սահմանադրությանը և ջուրը գցել տասնամյակներ շարունակ իր ներկայացրած պահանջները։ «Չէ,— հայտարարում էին նրանք,— հայ հեղափոխականությունը այնքան թեթևամիտ ու ողորմելի չի կրնար ըլլալ, որ ներկա խանգավառության մեջ իր պատասխանատու դերին գիտակցությունը կորցնե ու այսօրվա փայլուն իրականության մեջ՝ այնքան տաժանքներու գնով առաջ տարած իր պահանջներուն ամբողջական զոհացումը իսկույն գրտնե»[2]։

1908 թ. աշնանը վերակազմյալները, շարունակելով բանակցությունները նախկին արմենական և միութենական կազմակերպությունները միավորող «Գաղափարակցական միության» հետ, ավարտեցին դրանք, Անդրանիկ Անդրեասյանի ասելով, հոկտեմբերի 1-ին[3], իսկ Արտակ Դարբինյանի վկայությամբ, հոկտեմբերի 4-ին[4] և Գրիգոր Պետիկյանի, Արմենակ Եկարյանի, Միքայել Նաթանյանի (արմենականներից), Միհրան Տամատյանի, Վահան Թեքեյանի, Սուրեն Պարթևյանի, Շավարշ Հովիվյանի ու Կարապետ Գրիգորյանի (վերակազմյալ հնչակյաններից) գլխավորությամբ հիմնեցին «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը»։ 1908 թ. հոկտեմբերի 18 (31)-ին նրանք ընդունեցին իրենց ծրագիրը, ուր զգալիորեն նահանջում էին վերոհիշյալ դիրքերից։

Այդ ծրագրում ռամկավարները հայտարարում էին, որ բռնապետության տապալումով բոլոր ազգերի համար սկսվել է խաղաղ զարգացման շրջան։ Ուստի անհրաժեշտ է դադարեցնել հեղափոխական գործունեությունը։ Ապա նշում էին, որ իրենց ծրագիրը թեև բովանդակությամբ ազգային է, սակայն ընթանալու է օսմանյան մյուս ժողովուրդների նպատակների հետ և «կրնա մեծապես նպաստել սահմանադրական ռեժիմին ամրապնդելուն և երկրին տևական անդորրությանն ու բարօրությանն համեմատորեն քիչ ժամանակի մեջ ապահովելուն»[1]։

Կուսակցությունն ընդունում է ազգերի գոյությունը, սակայն մերժում է նրանց ձուլումը, համարելով դա անիրավ և «վնասակար Օսմանյան պետության շահերուն»։ Կուսակցությունը գտնում է, որ «մեծամասնություն կազմող տարրը պետք է հարգե փոքրամասնություններու իրավունքները», որ «հայությունը կներկայանա Թուրքիո մեջ երկու որոշ հանգամանքով— իբրև օսմանյան քաղաքացիություն և իբրև հայ ազգայնություն։ Այս երկու հանգամանքները պետք է միասին գոյություն ունենան, առանց իրարու հետ շփոթելու առանց իրար հակասելու»[2]։ Ազգային անհատականության պահպանումն ու զարգացումը չպետք է դիտել իբրև ազգայնամոլություն կամ անջատում։

«Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը» հանդես էր գալիս որպես ամբողջ հայ ժողովրդի ազգային քաղաքական շահերի արտահայտիչ և հավակնություն ուներ համախմբել բոլոր դասերն ու դասակարգերը, կրոնական դավանանքներն ու աղանդները։ «Կուսակցության դրոշին տակ,— ասվում էր ծրագրում,— պարտաճանաչ հայ հարուստը, ժրաջան հայ աշխատավորն ու գիտակից հայ մտավորականը՝ ազգային ընդհանուր շահերուն անձկոտ կամավորությամբ մը ձեռք ձեռքի տված՝ պիտի քալեն դեպի ընդհանուր նպատակը»[3]։

Կուսակցությունը պիտի նպաստի աշխատավորների նյութական վիճակի բարելավմանը, առանց դժվարացնելու դրամագլխի մուտքը և արհեստագործության զարգացումը երկրում։ Թուր-

1 Տե՛ս «Ազգ», 1908, օգոստոսի 29։

2 Նույն տեղը։

3 Տե՛ս Անդրանիկ Անդրեասյան, Պատմություն համկավար ազատական կուսակցության Ամերիկայի արևմտյան շրջանի, Լոս-Անճելես, 1981, էջ 29։

4 Տե՛ս Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 193։

1 Տե՛ս «Բյուզանդիոն», 1908, նոյեմբերի 19, № 3684։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, նոյեմբերի 20, № 3685։

քիան դեռ հեռու է ընկերվարական սկզբունքների կիրառումից, այն պետք է վերակառուցել ռամկավարական եղանակներով։ Կուսակցությունը դեմ է դիկտատորությանը, համարելով այն բռնապետություն։ Նա կամենում է համագործակցել այլ կուսակցությունների հետ դեմոկրատական հիմունքներով, պատրաստելով «օսմանյան երկրին օգտակար քաղաքացիներ և հայ ազգին պիտանի անհատներ»[1]։

Ծրագրում նշվում էր, որ կուսակցությունը ճանաչում է ժողովրդի գերիշխանությունը, անհատների ու ազգերի ազատությունն ու հավասարությունը, օսմանյան պետության ամբողջականությունն ու զարգացումը։ Նա մերժում է ինչպես ազգերի ձուլումն ու անջատումը, այնպես էլ ազգայնամոլությունը, որը բնաբանն է՝ «Հայությունը օսմանցիության հետ»[2]։

Կուսակցության նպատակն է վերածել օսմանյան սահմանադրությունը ռամկավարական սահմանադրության, հաստատել երկրում ապակենտրոնացում, «աստիճանաբար ընդարձակելով համայնքներու և նահանգներու (հետևաբար նաև հայաբնակ նահանգներու) տեղական իրավասությունները»։ Նա պետք է հսկի հայոց օրենքով հաստատված ազգային իրավունքների «անվարար պահպանումին», կրոնական ազատությանն ու կրթական զարդացմանը, հետամուտ լինի ազգային սահմանադրության «ժամանակակից պահանջներուն», հասնի այն բանին, որ հայոց եկեղեցական գործերը անջատվեն վարչական գործերից, ստեղծվի «ազգային և կրթական միացյալ վարչություն»[3]։ Կուսակցությունը ձգտում է պահպանել ու զարգացնել հայոց լեզուն, պատմությունը, գրականությունը, ազգային բոլոր արժեքները։

Ռամկավարների ծրագրում այնուհետև հայտարարվում էր, որ կուսակցությունը «կգործէ սահմանադրական ռեժիմին տակ, իբրև քաղաքական օրինական կազմակերպություն, և ոչ իբրև հեղափոխական-ապստամբական գաղտնի մարմին»[4], նրա գործունեության հիմնական միջոցը մամուլն է, իսկ նպատակը՝ խաղաղ զարգացումը, այլ ազգերի կուսակցությունների հետ բարեկամական համագործակցությունը։

1 Տե՛ս «Բյուզանդիոն», 1908, նոյեմբերի 20, № 3685։
2 Նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը։

Սահմանադրության կատարելագործումն ու զարգացումը պետի հանգի նրան, որ բոլոր քաղաքացիները կարողանան ընդունվել պաշտոնի կառավարման ամեն մի ոլորտներում, ունենան ազատություն «օրենքի և հավասարության սահմանին մեջ, ունենան խոսքի ու մամուլի, միտինգների ու ընկերությունների, աշխատանքի ու տեղաշարժերի, տնտեսական գործունեությունների ազատություն, անձի ու գույքի անձեռնմխելիություն»[1]։

Անդրադառնալով երկրի պետական կառուցվածքին, ռամկավարների ծրագիրը ճանաչում էր սուլթանին կամ վեհապետին իբրև «կայսր օսմանցիներու», բայց գտնում էր, որ նա պարտավոր է հարգել սահմանադրությունը, օրենքները, հետամուտ լինել երկրի անկախությանն ու հողային ամբողջականության։ Օրենսդրական իշխանությունը պատկանում է կայսրին, երեսփոխանական ժողովին, ծերակույտին, իսկ գործադիր իշխանությունը՝ կայսրին ու նախարարներին։ Երեսփոխանները կամ դեպուտատներն ընտրվում են հավասար, գաղտնի և ուղղակի քվեարկությամբ։ Ընտրել կարող են 21, իսկ ընտրվել՝ 30 տարին լրացած ձայնի իրավունք ունեցող քաղաքացիներ։ Յուրաքանչյուր նահանգ ընտրում էր իր խորհրդարանը՝ ազգությունների թվի համեմատ[2]։ Անհրաժեշտ է անցկացնել նահանգների նոր բաժանում, ելնելով բնակչության ազգային առանձնահատկություններից։ Պետք է ընդարձակել նահանգների իրավունքները, սահմանելով, որ «յուրաքանչյուր նահանգ, ինչպես և համայնք, ինքը կվարե տեղական գործերը»։ Վարչական այդ միավորների գլխավարությունը կընտրվի նրանց բնակիչների կողմից։ Ոստիկաններն ու հարկահավաքները նույնպես կընտրվեն բնակիչների կողմից՝ յուրաքանչյուր ազգության թվին համեմատ։ Պաշտոնական հայտարարությունները պետականից զատ պիտի կատարվեն նաև տեղական լեզուներով։ Նահանգներից հավաքած հարկերի մի մասը պիտի հատկացնել տեղական կարիքներին։

Ծրագիրը գտնում էր, որ դատարանը պետք է անկախ լինի վարչական իշխանություններից, իսկ օրենքներն անհրաժեշտ է կատարելագործել, վերացնելով իրավազրկումը, գույքի բռնագրավումը, երկրից արտաքսելը, թափառաշրջիկությունն ու մու-

1 Տե՛ս «Բյուզանդիոն», 1908, նոյեմբերի 23, № 3687։
2 Տե՛ս նույն տեղը։

բացկանությունը։ Անհրաժեշտ է ձերբակալումը կատարել օրենքի թույլտվությամբ, բարելավել բանտի պայմանները և հատուցել վնասները։

Ռամկավարները խնդիր էին դնում կրթության ազատության մասին, այսինքն՝ «Ամեն օսմանցի իր ծախքով կրնա վարժարաններ բացել», «Յուրաքանչյուր ազգություն իրավունք ունի վարելու իր նախնական վարժարանները՝ պետության կրթական պյուչեն ստանալով իր համեմատական ծախսաբաժինը», «Պետության լեզուն (թուրքերեն) պարտավորիչ է ծխական նախակրթարաններու մեջ՝ տարրական դասընթացքին վերջ»[1]։ Նախնական կրթությունը համարել ձրի ու պարտադիր։ Կրթական ծրագիրը պիտի լինի միակերպ։ Պետությունը պետք է հսկի պետական ու ծխական նախակրթարանների ու երկրորդական վարժարանների գործունեությունը, բայց ամեն մի ազգի լեզվի, գրականության ու պատմության դասավանդումը անհրաժեշտ է դուրս բերել նրա հսկողությունից, դնելով տվյալ ազգի տնօրինման տակ։ Պետությունը հիմնում է բարձրագույն ու մասնագիտական ուսումնարաններ, որոնց դռները բաց պիտի լինեն բոլորի առջև։

Ծրագիրը գտնում էր, որ օսմանյան յուրաքանչյուր քաղաքացի ենթակա է զինվորագրության, ծառայելով բանակում 2 տարի։ Խաղաղ ժամանակ նա պետք է մնա իր ծննդավայրում, իսկ պատերազմի դեպքում՝ ուր առաջարկվում է։ Անհրաժեշտ է բարելավել զինվորների պայմանները։

Ռամկավարների ծրագրում հատուկ ուշադրություն էր դարձվում նաև հողային հարցին։ Պահանջվում էր բարեփոխել հարկային համակարգը, սահմանել պրոգրեսիվ հարկ, վերացնել մյուլթեզիմությունը կամ կապալառությունը, չեղյալ հայտարարել ապառքները, չհավաքել աղքատներից հարկեր, բարելավել աշխատավորների ու գյուղացիների դրությունը, բայց թողնել էժան վարկեր։ Հողագործներին տրամադրել «բավական հող՝ ... դյուրամատչելի պայմաններով», նկատի ունենալով առանձնապես նրանց, ովքեր տուժել են «վերջին բռնապետության երեսեն»։ Տարագիրներին կամ հին վարչակարգից փախածներին «պետական ծախքերով վերադարձնել իրենց բնակավայրերը»։ Մուհաջիրներին կամ նոր գաղթականներին բնա-

1 «Բյուզանդիոն», 1908, նոյեմբերի 23, № 3687։

կեցնելիս, պետք է հաշվի առնել տեղացիների կամ հնաբնակների ցանկությունը։ Բռնագրաված կալվածքները կամ հողատարածքները անհրաժեշտ է վերադարձնել նրանց նախկին տերերին «տեղական քննիչ հանձնաժողովներու միջոցով։ Բացարձակ ջնջում պետական և համայնական տարապարհակ աշխատանքներու»[1]։ Անհրաժեշտ է հատուկ օրենքներով խրախուսել ընկերությունների և երկրագործական դրամատների ստեղծումն ու զարգացումը։

Ծրագիրը, այնուհետև, խնդիր էր դնում, որ երկրի խաղաղության ու ժողովուրդների եղբայրության ապահովման համար պետք է հպատակեցնել թափառաշրջիկ բեյերին ու աղաներին օրենքի առաջ, բնակեցնել նրանց հաստատուն շրջաններում և «վարժեցնել զանոնք... բարկեշտ աշխատության»։ Պետք է «ջնջել պեյերու և աղաներու ավատական իրավունքներն և կամայական հարկահանությունները։ Ջինաթափ ընել թափառաշրջիկ և առհասարակ ապստամբող ցեղերը»։ Բայց մինչ այդ անհրաժեշտ է պաշտպանել հարևան խաղաղ բնակիչներին, կամ պետք տալ նրանց՝ ինքնապաշտպանության համար։ Դրանց հետ մեկտեղ պետք է «ջնջել համիդիե զորագնդերը»[2]։

Ծրագրի վերջում նշվում էր, որ կուսակցության մեջ կարող է մտնել «ամեն մի հայ, առանց դավանանքի ու դասակարգի խտրության»։ Նա պետք է նյութապես ու բարոյապես օգնի ծրագրի կենսագործմանը։ Ռամկավարները հայտարարում էին, որ իրենց կուսակցության կենտրոնը կգտնվի Կ. Պոլսում, իսկ մասնաճյուղերը՝ Թուրքիայի այլ շրջաններում և արտասահմանում։ Դրանք, ենթարկվելով կենտրոնին, տեղերում կլինեն ինքնավար և կգոյատևեն տեղական միջոցներով։

Անշուշտ, ռամկավարների այս ծրագիրը, իր էությամբ, բուրժուական էր, բայց անհամեմատ ավելի առաջադիմական էր, քան միհհատյան սահմանադրությունը, որովհետև մերժելով նրա խիստ սահմանափակությունն ու շովինիզմը, Թուրքիայի զարգացման համար բացում էր համեմատաբար լայն հեռանկարներ։

Ռամկավարների ղեկավարները կուսակցության ստեղծումից հետո մեկնեցին Կ. Պոլիս, որ ավելի մոտիկից կազմակերպեն

1 Տե՛ս «Բյուզանդիոն», 1908, նոյեմբերի 24, № 3688։
2 Տե՛ս նույն տեղը։

արեւմտահայության մեջ աշխատանքները և մեծացնեն իրենց կոմիտակիցների թիվը, սակայն արդյունքի համարյա չհասան, որովհետև մայրաքաղաքի մտավորականության գլխի մասը արդեն մտել էր առավելապես դաշնակցության մեջ, իսկ անկուսակցականները կամ հրաժարվում էին, կամ դերադասում էին չեզոք մնալ[1]։ Ռամկավարները քիչ թե շատ հաջողության հասան Վանում, ուր գրեթե բոլոր արմենականները մեխանիկորեն ընդգրկվեցին նրանց շարքերը։ 1909 թ. «Մշակի» մարտի ծածկանունով թղթակիցը գրում էր. «Քաղաքումս «սահմանադիր-ռամկավար կուսակցությունը» ուժեղանում է, նրա անդամների թիվը խտանում է»[2]։ «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության» կազմակերպություններ առաջացան նաև Կ. Պոլսում, Իզմիրում, Խարբերդում, Տիգրանակերտում, Կիլիկիայի առանձին քաղաքներում, Եգիպտոսում ու Ամերիկայում։ 1912 թ. «Աշխատանք» թերթի Հուր ծածկանունով թղթակիցը նշում էր, որ բոլոր ռամկավարների թիվը չի անցնում 1000 մարդուց[3]։

Լինելով սակավ և նեղվելով քաղաքական կուսակցություններից, հատկապես դաշնակցականների կողմից, ռամկավարներն անցնում էին պատրիարքարանի հովանավորության տակ և մի շարք հարցերում պաշտպանում էին նրա վարքագիծը։ Նրանք, օրինակ, քննադատում էին դաշնակցական կուսակցությանը, գտնելով, որ Ադանայի կոտորածների օրերին այն պետք է ոչ թե հակադրվեր պատրիարքարանին, այլ ընթանար նրա հետ։ Ռամկավար ղեկավարներից մեկը՝ Վ. Թեքեյանը 1910 թ. հուլիսին այդ առթիվ գրում էր. «Երբ պատրիարքարանն արդարության կխնդրեր կառավարութենեն ու ս. պատրիարքն ալ կհրաժարվեր այդ պատճառով, ազգը պետք էր ամբողջովին իբրև մեկ մարմին իր պատրիարքին հետ ըլլար և ոչ թե իր մեկ հատվածը կառավարական դերազոր կուսակցության մը հետ, որպիսին է ԻԲՔԻհատ վե թերաքին, առանձին համաձայնություն մը կնքելով, տկարեցներ պատրիարքի դիմումին ազդեցություն։ Ասիկա գործելակերպի (թաքթիք) սխալ մըն էր»[4]։

Հայկական հարցի քննարկման օրերին ռամկավարները հանդես եկան չափավոր պահանջներով։ Նրանք գեմ էին հեղափոխական կամ ապստամբական ելույթներին և պաշտպանում էին օսմանյան ժողովուրդների հետ հայ բնակչության խաղաղ զարգացման գաղափարը։ Նրանք գտնում էին, որ իրենց պահանջները օգտակար են ոչ միայն հայերին, այլև նրանց հարևաններին։ 1913 թ. հունվարին ռամկավարները «Վան-Տոսպում» հայտարարում էին. «Մենք ապստամբներ չենք և Հայկական հարցը անջատողական շարժում մը չէ երբեք, մեր պահանջները տարրական արդարության պահանջներ են, որոնց իրագործումով հավասարապես պիտի օգտվին նաև քուրդ ու թուրք ժողովուրդները և ի վերջո ամբողջ պետությունը»[1]։

Քիչ ուշ նրանք հարկ էին համարում նորից կրկնել այն. «Մի անգամ ընդմիշտ,— ասում էին «Վան-Տոսպի» առաջնորդողում,— կհայտարարենք, լավ մտիք ըրեք, հայ ազգը դժգոհ է, բայց ոչ ապստամբ», թե նա ամբողջ 30 տարվա ընթացքում ուրիշ նպատակ չի ունեցել, քան «հայ ցեղի ինքնուրույն կուլտուրայի զարգացումը նորոգված ու բարեկարգ օսմանյան պետության մեջ... այս է եղած մեր ազգային նշանաբանը»[2]։

1913 թ. փետրվարին ռամկավարներն ավելի կոնկրետ էին ներկայացնում Հայկական հարցի լուծման իրենց տեսակետը։ «Տվեք հայ ազգին իր քաղաքացիական տարրական իրավունքները, տվեք մեզ մեր կյանքի, գույքի և պատվի անձեռնմխելիության սրբազան իրավունքը, տվեք գոհացում մեր այդքան արդար պահանջին... Ապահովեցեք մեզ այս անգամ գործնական երաշխիքներով»[3]։ Ռամկավարները գտնում էին, որ Հայկական հարցի լուծման ամենազորեղ ազդակները եթե գտնվում են դրսում՝ օսմանյան կառավարության ու եվրոպական դիվանագիտության մեջ, ապա դրանցից մեկն էլ «պետք է փնտրենք մեր մեջ— հայության ոգիի մեջ»[4]։ Ուստի կոչ էին անում հայ կուսակցություններին՝ առժամանակ մոռանալ իրենց ներքին տարաձայնությունները և համախմբվել «այն հարցի շուրջը, որ կկոչվի տաճկահայկական հարց»[5]։

Շարադրելով ազգային հարցի լուծման իրենց տեսակետը,

1 Տե՛ս Ա. Պարթիկյան, նշվ. աշխ., էջ 205։
2 «Մշակ», 1909, № 77։
3 Տե՛ս «Աշխատանք», 1912, № 49—96, էջ 6։
4 «Բյուզանդիոն», 1910, № 4195։

1 «Վան-Տոսպ», 1913, № 1, էջ 3։
2 Նույն տեղը, № 2, էջ 14։
3 Նույն տեղը, № 3, էջ 27։
4 Տե՛ս նույն տեղը, № 4, էջ 40։
5 Տե՛ս նույն տեղը, էջ 38։

ռամկավարները չէին անտեսում նաև սոցիալ-տնտեսական խընդիրները։ Նրանք քննադատում էին Իթթիհադին, որ տարիներ շարունակ ձգձգում է հողային խնդրի լուծումը։ 1912 թ. հունիսին «Վան-Տոսպը» իր առաջնորդողներից մեկում գրում էր. «Ո՞ւր մնաց հայաբնակ նահանգները ղրկվելիք բարեկարգիչ հանձնախումբը։ Քանի մը ամիսներե (թերևս տարիներե) ի վեր որ կքալե ու կքալե, ու դեռ չհասավ»[1]։ Շաբաթաթերթը նշում էր, որ կառավարությունը ոչ միայն չի լուծել հողային հարցը, այլև չի հաստատել գոնե անձի ու գույքի ապահովություն, որի հետևանքով իրերի դրությունը առաջվա նման շարունակում է մնալ անտանելի։

Ռամկավարները պաշտպանում էին հասարակության աստիճանական զարգացումը, «դեմ կանգնելով հավասարապես ամեն տեսակ ծայրահեղություններու, որոնք աջեն կուգան, թե ձախեն միևնույնն է»[2]։ Նրանք գտնում էին, որ «ձախաթռիչ ծայրահեղությունը հասարակական կյանքի մեջ նույնքան բացասական երևույթ է, որքան աջամնաց ինքնասպան անշարժությունը. երկու ծայրերն ալ հավասարապես կթունավորեն առաջադիմության ընթացքը և կկասեցնեն անոր աստիճանական բարեշրջումը»[3]։

Տնտեսական զարգացման հարցերում ռամկավարները մեծ տեղ էին տալիս մեքենաներին, գտնելով, որ ինչքան արագ փոխարինվեն եղն ու ձին մեքենաներով, այնքան կարագանա հասարակության զարգացումը, այնքան կառաջադիմի հայ ազգը, այնքան նա կհարստանա։ Նրանք միաժամանակ նշում էին, որ անհրաժեշտ է ստեղծել ընկերություններ և քայլել ժամանակին համընթաց, քանի որ «անհատական, կղզիացած գործունեությունները վաղուց կորուսած են իրենց նշանակությունը քաղաքակիրթ երկրներու մեջ»[4]։

Ռամկավարները քննադատում էին նրանց, ովքեր Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում սոցիալիզմ էին պրոպագանդում։ Նրանք գտնում էին, որ այդ երկրներում առայժմ պետք է պրոպագանդել կապիտալիզմ, որովհետև նրա զարգացումը կարող է վերջ դնել եվրոպայի ազդեցությանն ու շահա-

1 «Վան—Տոսպ», 1912, № 15, էջ 1։
2 Տե՛ս նույն տեղը, № 1, էջ 2։
3 Նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 3։

գործմանը Թուրքիայում, կերպարանափոխել երկիրը, բարելավել նրա տնտեսական պայմանները, վերացնել աղքատությունն ու արտագաղթը, կասեցնել պետության սնանկությունը և զործարանային կյանքի բույում «ի մի ձուլել ազգային ու կրոնական մոլեռանդությամբ և անգործությամբ, իրարմե մեկուսացած, բայց հավասարապես տանջվող ժողովուրդը»[1]։ Սակայն արևմտահայ աշխատավոր զանգվածների մեջ հակակրանք ու ատելություն չառաջացնելու համար ռամկավարները հարկ էին համարում նշել, որ իրենք կապիտալիզմ են պրոպագանդում ոչ թե բուրժուաներ լինելու, այլ նրա անհրաժեշտությունը լավ հասկանալու համար[2]։

Այդպիսով, ռամկավարները Հայկական հարցի քննարկման օրերին ինչպես ազգային, այնպես էլ սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելիս, ելնում էին հիմնականում իրենց ծրագրից։ Նրանք թեև դժգոհ էին Իթթիհադից, բայց շարունակում էին հուսալ, որ այն երբևէ կբարելավի օսմանյան ժողովուրդների, այդ թվում նաև արևմտահայերի վիճակը։

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպես գնահատեցին ռամկավարները 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումները, պետք է ասել, որ սկզբում դրական վերաբերվեցին, բնութագրելով տերությունների ընդունած ծրագիրը որպես «հաջող վերջավորություն»։ Նրանք գրում էին, թե հայ ժողովուրդը «այսօր ուրեմն կրնա քիչ մը ավելի հույսով ու վստահությամբ նայիլ ապագային...»[3]։ Բայց հետո թերահավատությամբ լցվեցին այդ ծրագրի հանդեպ, նշելով, որ Թուրքիան անցյալում շատ է խոստացել բարելավել հայերի վիճակը և չի կատարել։ «Մի գուցե խոշոր հուսախաբություն մը ալ ներկա ծրագիրն ըլլա և օգուտ մը չտալե զատ մինչև իսկ նոր փորձանքներ բանա մեր գլխուն»[4]։ Ապա կանգնելով չեզոք դիրքում, ռամկավարները, այնուամենայնիվ, չուզեցին վատատես լինել։ «Ազգի» մարտի 18-ի առաջնորդողում նրանք շարունակում էին. «Չենք կրնար զուշակել, թե ինչ ապագա պիտի ունենա, որչափ տոկուն ու տևական պիտի ըլլա (ծրագիրը), բայց պետք է որ առանց հոռետեսության քիչ

1 Տե՛ս «Վան—Տոսպ», № 8, էջ 87։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 88։
3 Տե՛ս «Ազգ», 1914, մարտի 4, № 37։
4 Նույն տեղը, մարտի 18, № 39։

մը հույսով նայինք անոր վրա և մեր կողմե աշխատինք դյուրացնելու անոր գործադրությունը»[1]։

Ռամկավարների այդ անորոշ ու հեղհեղուկ դնահատականը պայմանավորված էր նրանով, որ Հայկական հարցի լուծումը կամ հայաբնակ նահանգներում բարենորոգումների անցկացումը կապում էին թե՛ մեծ տերությունների, թե՛ իթթիհադական կառավարության և թե՛ արևմտահայ հասարակական քաղաքական ուժերի հետ։ Նրանք կողմնորոշվում էին դեպի կաթողիկոսության ու պատրիարքարանի դիրքը, բայց միաժամանակ չէին կարող անտեսել դեմոկրատական լայն զանգվածների կարծիքը։ Համենայն դեպս, ռամկավարներից շատերը, հատկապես արմենականները, արևմտահայության ազատագրության հույսը շարունակում էին կապել ցարական Ռուսաստանի հետ։ 1910 թ. օգոստոսի 5-ին Վանի ռուսական փոխհյուպատոս Պրժևալսկին հաղորդում էր Կ. Պոլսի իր դեսպանին, որ արմենականները «բացահայտ խոսում են իրենց համակրանքի մասին Ռուսաստանի հանդեպ»[2]։

Ռամկավարները թեև իրենց հռչակում էին համազգային կուսակցություն, հասարակական բոլոր դասակարգերի ու խավերի արտահայտիչներ, բայց, ըստ էության, արտահայտում ու պաշտպանում էին արևմտահայ լիբերալ բուրժուազիայի շահերը։ Այդ բանը նկատել ու արձանագրում էին անգամ արևելահայ լիբերալ մտավորականները։ Հ. Առաքելյանը, օրինակ, 1911 թ. Կ. Պոլսում արտասանած իր ճառում ասում էր. «Մեր կարծիքով այս փոքր ազգի համար լավագույն երաշխավորությունն է աշխատել սահմանադրական-ռամկավար ծրագրով, որ ապահովում է փոքր ազգի գոյությունը։ Այս ծրագրով մենք փափագում էինք, որ Ռուսաստանի մեջ հայերը հարեին ռուս սահմանադրական-ռամկավարներին (իմա՝ կադետներին— Ա. Հ.)»[3]։ Նա հիացմունքով էր խոսում ռուսական կադետների մասին և հույս հայտնում, որ սահմանադրական ռամկավարները զարգանալով կարող են հասնել նրանց մակարդակին։ «Ճիշտ է, դուք դեռ զորեղ չեք,— ասում էր Հ. Առաքելյանը,— դեռ համարյա նորածին մանուկ եք, բայց ապահով կացեք, որ ապագան ձերն է»[4]։ Քիչ ուշ՝ 1913 թ., նա վերստին հայտարարում էր, որ ռամկավարների «կուսակցության ծրագրի էական կետերը նույնն են, ինչ որ Ռուսաստանի կադետ կոչված ծրագիրը»[5]։

Ռամկավարների ծրագիրը թեպետև մի շարք հարցերում նման էր դաշնակցականների ու հնչակյանների ծրագրերին, բայց որոշ հարցերում էլ տարբերվում էր նրանցից։ Այդ տարբերությունը արտահայտվում էր գերազանցապես այն բանում, որ ռամկավարների ծրագիրը համեմատաբար սահմանափակ էր։ Ռամկավարներն ընդգծում էին սուլթանի կամ միապետի առկայության անհրաժեշտությունը, բավարարվում էին չափավոր ու նեղ միջոցառումներով, անտեսում էին արևմտահայության դասակարգային շերտավորումը և այլն։

Վերակազմյալ հնչակյաններ

1908 թ. հեղաշրջումից հետո վերակազմյալ հնչակյանների մեծ մասը, ինչպես արդեն ասվեց, միացավ արմենականներին, որի հետևանքով առաջացավ «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը»։ Բայց նրանց փոքր մասը շարունակեց իր ինքնուրույն գոյությունը։ Սահմանադրության հռչակումից համարյա անմիջապես հետո արտասահմանից Կ. Պոլիս ժամանեցին այս հնչակյանների ղեկավարներ Ալեքսան Արզույանը (Վահե), Լևոն Լարենցը (Քիրիշճյան) և ուրիշներ, բերելով իրենց հետ նաև իրենց օրգանը՝ «Ձայն հայրենյաց» շաբաթաթերթը։ Սկզբնական շրջանում այն հրատարակվում էր Երվանդ Ջավուշյանի, ապա նաև՝ Ալեքսանդր Փանոսյանի (Ալփասլան) և այլոց խմբագրությամբ ու աշխատակցությամբ[3]։

Վերակազմյալ հնչակյանները փոքրաթիվ էին. 1912 թ. «Մշակի» Կ. Պոլսի Շառայլ ծածկանունով թղթակիցը նշում էր, որ նրանք հաշվվում են 50—100 մարդ[4]։ Այնուամենայնիվ, արևմտահայ հասարակական-քաղաքական ասպարեզում ճանաչված էին իրենց գործունեությամբ։ Նրանք աղջունեցին սահմանադրության հաստատումը և հայտարարեցին, որ կպաշտպանեն

1 «Ազգ», 1914, մարտի 18, № 39։
2 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Քաղարխիվ, 1910, ց. 482, գ. 718, թ. 107։
3 «Մշակ», 1911, սեպտեմբերի 4, № 193։

1 «Մշակ», 1911, սեպտեմբերի 6, № 194։
2 Տե՛ս «Մշակ», 1913, № 150։
3 Տե՛ս «Ձայն հայրենյաց», 1908, դեկտեմբերի 12, № 8։
4 Տե՛ս «Մշակ», 1912, մարտի 23։

Թուրքիայի խաղաղ զարգացումը, 1908 թ. սեպտեմբերի 12-ին աղդարարում էին՝ իրենք կկանդնեն այն ընդդիմադիր տարրերի կողմը, որոնք «փոթորկոտ օրերուն մեջ արդարության անկուն նախակարապետները եղան և բարեշրջման այս շրջանին՝ խաղաղության ու փրկության աներկյուղ և հավատարիմ դրոշակակիրները պիտի ըլլան անտարակույս»[1]։

Վերակազմյալները ապա շարունակում էին, որ դադարեցնում են «զինյալ ապստամբության ծրագիրը», նվիրվում են «խաղաղության պահպանումին և ազատության ընդհանրացումին...», կողմնակից են Օսմանյան կայսրության «ամբողջական պահպանումին», չունեն «որևէ անջատողական ձգտում և նպատակ...»։ Բայց միաժամանակ ավելացնում էին, որ իրենք, համարելով արևմտահայությանը օսմանյան միության անբաժան տարրը, չեն կամենում, որ այն լուծվի «այլ հոսանքներու մեջ», թեկուզ և նրա համար, «որպեսզի ապրի հայությունը, որպեսզի կարող ըլլա ան իր պատմական դերը կատարել Թուրքիո ընդհանուր քաղաքականության ավագ և կենսական գործին մեջ...»[2]։

Վերջում վերակազմյալները նշում էին, որ իրենք «բուռն և անհաշտորեն պայքարող ուժ մը պիտի ըլլան ընդդեմ ներքին ու արտաքին բոլոր ոտնձգությանց, որոնք պիտի վրդովվեն ընդհանուր խաղաղությունը, պիտի ջնջեն ազատական բեժիմը և պիտի ձգտին վերահաստատել նախկին տարաբաղադրիչ և անհանդուրժելի բռնակալություները»[3]։

Վերակազմյալ հնչակյաններն իրենց քաղաքական դիծն ավելի հանգամանորեն շարադրեցին «Ձայն հայրենյացում»։ Նրանք աղդարարում էին, որ իրենք ուզում են ամրապնդել երկրի ձեռք բերած ազատությունը, աջակցել նրա ընդհանուր զարգացմանը, հետու մնալով քաղաքական ամեն մի դավերից։ Անցյալը թողել է տնտեսական ու մտավոր քայքայում, հեղաշրջումը օսմանյան ժողովուրդներին կարող է տանել դերությունից դեպի ազատություն։ Այժմ նրանց պարտականությունն է համախմբվել ու առաջադիմել։ Գործի պիտի լծվեն հասարակական ու քաղաքական բոլոր ուժերը, դեն գցելով ներքին հակասություններն ու գրվոտոցները։ Վերակազմյալները խոստանում էին, որ իրենք

1 Տե՛ս ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 408, ց. 1, գ. 162, թ. 1։

2 Տե՛ս նույն տեղը։

3 Նույն տեղը։

կլինեն համընդհանուր գործը կազմակերպողների և այն դեպի նպատակը տանողների առաջին շարքերում[1]։

Բայց նրանք միաժամանակ հայտարարում էին, որ եթե հարձակում կատարվի հայ ժողովրդի գոյության ու կուլտուրական արժեքների վրա, ապա կդիմեն ինքնապաշտպանության։ Մատնանշելով այն փաստը, որ Իթթիհադը կամենում է ոտնատակ անել Բեռլինի 61-րդ հոդվածը, վերակազմյալները նշում էին, որ իրենք կդիմագրավեն, քանի որ այդ հոդվածը նախատեսում է հայերի դրության բարելավում, իսկ նրա վերացման դեպքում «հայաբնակ գավառներու խղճալի կացությունը նույնը կմնա»[2]։ Բայց եթե, շարունակում էին վերակազմյալները, Իթթիհադական կառավարությունը կատարի հօգուտ հայերի գոնե այնքան բարելավում, ինչքան խոստանում է 61-րդ հոդվածը, «այն ատեն խնդիրը կփակվի, որովհետև սահմանադրության լայնորեն գործադրումովը արդեն հարկ չպիտի մնա, որ մենք պետությանց դիմենք»[3]։ Այլ կերպ ասած, վերակազմյալներն ուզում էին, որ Թուրքական կառավարությունը լուծեր Հայկական հարցը, եթե ոչ՝ կդիմեին մեծ տերություններին։

1909 թ. հունվարին վերակազմյալների ղեկավարներից մեկը՝ Ա. Արզուլյանը հրապարակեց «Թուրք կոմիտեին» կոչը, որի մեջ նշում էր, որ Իթթիհադը մի կողմից քարոզում է եղբայրություն, հավասարություն և ազատություն, իսկ մյուս կողմից՝ կազմակերպում ու թույլատրում է հայերի հալածանքները, կեղեքումները, բռնարարումներն ու առևանգումները, չի օգնում աղքատներին ու սովահարներին։ Հայերը, «հակառակ Թուրք կասկածոտ վերաբերմունքին, անջատողական որևէ գաղափար չեն սնուցաներ, ոչ ալ Օսմանյան կայսրության քաղաքական միությունը խանգարելու դիտում ունին։ Անոնք կփափաքին տես-

1 Վերակազմյալ հնչակյանների ծրագիրը մեզ անհայտ է։ 1919 թ. Բոստոնում հրատարակվել է նրանց Ամերիկայի մասնաճյուղի ծրագրի նախագիծը, որը, ինչպես նշվում էր այդ փաստաթղթի վերջին մասում, պետք էր հաստատել «ընդհանուր պատգամավորական ժողովում, որը պիտի գումարվի անմիջապես, երբ քաղաքական պայմանները ներեն» (Ծրագիր վերակազմյալ հնչակյան (ազգայնական-ազատական) կուսակցության, Պոսթըն, 1919, էջ 44)։ Սրանից ավել մենք չգիտենք։ Ուստի վերակազմյալ հնչակյանների հայացքները ստիպված ենք վերլուծել նրանց պարբերականների նյութերի հիման վրա։

2 Տե՛ս «Ձայն հայրենյաց», 1908, նոյեմբերի 6, № 3։

3 Տե՛ս նույն տեղը։

նել օսմանյան ազգերու սահմանադրական հզոր հայրենիքը հարգված՝ օտարներն և երջանիկ՝ ներքնապես»[1]։

Վերակազմյալների գեկավարը անդրադառնում էր նաև երիտթուրքական ազգային հարցի լուծման երկու ծրագրերին՝ Ահմեդ Ռիզա բեյի խիստ կենտրոնացված և Սաբահեդդինի ապակենտրոնացված տեսակետներին և պաշտպանում Սաբահեդդինի նահանգների ու համայնքների ինքնավարությունների հաստատման առաջարկությունը, գտնելով, որ դա համապատասխանում է արևմտահայության շահերին։

«Ձայն հայրենյացը» նշում էր, որ բարենորոգումների ու բարելավումների կարիքը զգում են ոչ միայն հայերը, այլև օսմանյան բոլոր ժողովուրդները։ Բայց մենք, երբ պահանջում ենք սկսել գրանք հայերից, ելնում ենք այն իրական փաստից, որ նրանց «կացությունը ամենեն ավելի անտանելի է»[2]։ Բռնապետության տարիներին, շարունակում էր թերթը, ոչ մի ժողովուրդ այնպես չի տառապել, ինչպես հայերը, և այդ իրավիճակը շարունակվում է նաև հիմա։ Ապա ավելացնում էր. «... հայկական նահանգներու կամ թրքաբնակ հայերու վիճակին բարելավում ըսելով՝ ուրիշ բան և ուրիշ միտք չհասկացվի, այլ միմիայն սա կենսական բարենորոգությունը՝ որ այլևս միանգամ ընդմիշտ վերջ գտնեն իրենց կենաց, ընչից ու պատվո դեմ հարձակումները և արդար հատուցում ըլլա իրենց վնասներուն»[3]։

Թերթը գտնում էր, որ այդ բանին հասնելու ամենաառաջնակարգ միջոցներից մեկն այն է, որ կառավարությունը պատժի հին ու նոր քուրդ ավազակ-թալանչիներին, հողեր ու գույքեր բռնագրավողներին։ Եթե նա արտաքսի գոնե 10—15 նշանավոր ու ազդեցիկ այդպիսի անձանց, կխաղաղեցնի Հայաստանը, զգալիորեն կբարելավի նրա բնակչության վիճակը։ Պարբերականը նշում էր, որ Իթթիհադը կարող է այդ անել, բայց չի կամենում[4]։

Վերակազմյալները ծառացան Իթթիհադի դեմ, երբ տեսան, որ նա, հակառակ իրենց սպասածի, ոչ միայն չի գադարեցնում հայկական հալածանքները, այլև նոր ջարդեր է կազմակերպում։

1 «Ձայն հայրենյաց», 1909, հունվարի 18, № 11—12։

2 Տե՛ս նույն տեղը, փետրվարի 19, № 16։

3 Տե՛ս նույն տեղը։

4 Նույն տեղը, տե՛ս նաև «Ձայն հայրենյաց», 1909, հուլիսի 9, № 35—36, 1910, հունիսի 11, № 28։

Նրանք Ադանայի կոտորածների ամբողջ մեղքը բարդեցին երիտթուրքերի վրա և իրենց «Առավոտ» թերթում այնպես սուր քննադատեցին Իթթիհադին, որ կանչվեցին դատական պատասխանատվության[1]։ Իսկ երբ 1909 թ. հուլիսի 11-ին երիտթուրքերը հեղաշրջման տարեդարձի առթիվ ճաշկերույթի հրավիրեցին երկրի բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին, վերակազմյալները չներկայացան, հայտարարելով՝ «Ադանայի սրատակներք դնաքերուն առթիվ մեր զգացած սուգը մեղի թույլ չի տար ընդունիլ այն հրավերը, զոր հաճած էիք ուղղել մեզ, մասնակցելու համար այս գիշերվան հացկերույթին»[2]։

1908 թ. հեղաշրջումից հետո վերակազմյալ հնչակյանները շարադրեցին իրենց տեսակետը նաև հողային հարցի մասին։ «Ձայն հայրենյացը» գտնում էր, որ բռնակալության տարիներին հայերից հափշտակված հողերը անհրաժեշտ է վերադարձնել նրանց տերերին։ Դա թեև բարդ ու կնճռոտ խնդիր է, բայց կառավարության կողմից «հեռադրական մեյ մեկ հրամանի միայն կարոտ է միանգամ ընդմիշտ լուծելու համար»[3]։

Պարբերականի Սև Հողերցի ծածկանունով թղթակիցն ավելի հանգամանորեն էր անդրադառնում հողային հարցին և նշում նրա լուծման ուղին։ Նա գրում էր, որ տիրապետող իշխանությունները դեռ շատ տարիներ առաջ են բռնագրավել հայերի հողերը և այդ քաղաքականությունն ավելի սաստկացրել 1878 թվից հետո։ Թուրքերից զատ նրանց հողերը հափշտակել են նաև քրդերը, Կովկասից եկած չեչեններն ու չերքեզները, Ղրիմից տեղափոխված թաթարները և ուրիշներ։ Ապա նա շարունակում էր, որ թեև այժմ Թուրքիայում շատ կան լուծելի հարցեր, բայց ամենակարևորը հողային խնդիրն է։ Այն «հրատապ ատիճանի մը հասած է» և «իր անմիջական ու արդար լուծումը կսպասե արդի սահմանադրական կառավարութեննն»[4]։

Հողվածագիրը իրավացի էր համարում օսմանյան պառլամենտի հայ երեսփոխանների այն ելույթները, որոնք պահանջում էին վերադարձնել հայերից «զողացած կալվածքները»։ Նա մերժում էր այն առաջարկը, ըստ որի, հայերին հողերի դիմաց կարելի է փող տալ կամ որոշ տարածք երկրի այլ շրջաններում։

1 Տե՛ս «Մշակ», 1912, մարտի 23։

2 «Բյուզանդիոն», 1909, հուլիսի 26։

3 «Ձայն հայրենյաց», 1909, հուլիսի 9, № 35—36։

4 Տե՛ս նույն տեղը, 1910, հունիսի 11, № 28։

Բղթակցի կարծիքով, նման սակարկումները «այլևս աննկարելի էն»։ Իշխանություններն այդպիսի առաջարկություններ թող անեն հափշտակիչներին, իսկ հայերից բռնագրաված հողերը վերադարձնեն տերերին։ Հայերը պահանջում են իրենց հողերը, շարունակում էր նա, «պետք է գոհացնել զանոնք անպատճառ, եթե իրոք հայրենիքին ապագան փրկող ցեղային համերաշխություն մը կփափաքվի անոր ճակատագիրը վարող իշխանավորներուն կողմեն»[1]։

Վերակազմյալ հնչակյաններն անդրադարձան նաև սոցիալիզմի հարցին։ Նրանց տեսաբաններից մեկը՝ Լևոն Լարենցը նշում էր, որ սոցիալիզմը լավ գաղափար է, բայց Արևմուտքի զարգացած երկրների համար, իսկ Թուրքիայի նման մի երկրում, ուր ամենուրեք թագավորում են բռնություններն ու կոտորածները, աղքատությունն ու խեղճությունը, սոցիալիզմը «չի կրնար աճիլ ու արմատավորվիլ...»[2]։ Արևմտահայության համար, շարունակում էր նա, նույնիսկ աղետաբեր են սոցիալիզմի քարոզները։ Մատնված բախտի քմահաճույքին, կոտորածների ու ջարդերի սպառնալիքներին, այդ ժողովուրդը անգամ չգիտի՝ վազը ինքը կենդանի կմնա՞, թե ոչ։ «... Անգործություն է, սոփեստություն է այդպիսի ժողովուրդ մը թունավորել արևմուտյան արտակենտրոն մտքերուն վերացականություններով և հողային հարցերով, բանվորական խնդիրներով, եկեղեցու և պետության բաժանման կնճռոտություններով, արձակունակ բարոյականի վարդապետություններով կամ նմանօրինակ նորաբանություններով զբաղեցնելը»[3]։

Լևոն Լարենցը քննադատում էր նրանց, ովքեր արևմտահայությանը բաժանում էին դասակարգերի և հակադրում իրար։ Նա գտնում էր, որ ներկա պայմաններում նման մոտեցումը ոչ միայն սխալ է, այլև վնասակար։ «Այսօր մեր ազգը այնպիսի դժնդակ կացության մը մեջ կգտնվի, որ ուղղակի ազգադավություն պիտի ըլլար՝ ժողովուրդը կղերին դեմ, կղերը ժողովուրդին դեմ, գործավորը գործատերերին դեմ, հողատերը մշակին դեմ, աղքատը հարուստին դեմ, ամուսինը իր կնոջ դեմ զոգեղը, գիտնելը, բարոյական, կրոնական կամ տնտեսական ոչնչէ հարցի համար»[4]։

1 «Ձայն հայրենյաց», 1910, հունիսի 11, № 28։
2 Տե՛ս նույն տեղը, 1909, հունիսի 11, № 31—32։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը, № 23։

«Ձայն հայրենյացը» գրում էր, որ արտաքին հալածանքները հարվածում են հայության մարմնին, «իսկ ընկերվարականության անունով գործված չարիքները մեղի պես ազգի մը հոգին իսկ կսպանեն, ազգն իր էությամբ կմեռցնեն»[1]։

Վերակազմյալները մեծ համակրանք ունեին հայ կղերականության նկատմամբ։ Նրանք գտնում էին, որ այն կարևոր դեր է խաղում ազգի համախմբման և ղեկավարման գործում։ Ուշադրավ է, որ երբ Մատթեոս Իզմիրլյանն ընտրվեց Կ. Պոլսի հայոց պատրիարք, «Ձայն հայրենյացի» խմբագիր Երվանդ Զավուշյանը վերակազմյալների մայրաքաղաքի վարչության կողմից ներկայացավ նրան և շնորհավորելով, հայտարարեց. «Մեր կուսակցությունը իր գործունեության բաժինը ուրախությամբ պիտի բերե ձեզի»[2]։

Լևոն Լարենցը նշում էր, որ հայ ժողովուրդը գտնվում է բացառիկ վիճակում։ Ուստի չի կարելի պահանջել, որ նրա հոգևորականությունը հեռանա քաղաքական ասպարեզից, ինչպես դա կատարում են Արևմուտքում։ Ընդհակառակը՝ հայերը պետք է նպաստեն կղերականության ակտիվացմանն ազգային կյանքում, որովհետև նրանց եկեղեցին ավելի դեմոկրատական է, քան այլ քրիստոնյաներինը։ «Բոլոր այն հայերը,— գրում էր նա,— որոնք եկեղեցվո և պետության բաժանման պահանջքն ունին իրենց ծրագրին մեջ, ահավոր կերպով սխալ ու անիրավ գործ մը կրնեն...», քանզի հայ կղերը չունի այն միապետական-դավադրական դերը, ինչ այն խաղացել է Ֆրանսիայի պատմության մեջ։ «Հայ կղերը պաշտոնէություն է գերազանցորեն ժողովրդավար եկեղեցի մը, որ իր պաշտոնատարները ժողովրդի հավանությամբ կընտրե և սահմանադրական դրությամբ՝ քվեարկությամբ կուտա անոնց յուրաքանչյուրին պաշտոնը»[3]։

Վերակազմյալները մերժում էին տերությունների օգնության գաղափարը արևմտահայության ազատագրության գործում։ Նրանց օրգանը հայտարարում էր, թե այն ազգը, որը «օտարներե, և միայն օտարներե, ու այն ալ անձնապաշտ ու շահախնդիր օտարներե օգուտ կսպասե, հուսախաբություն մը կգտնե»[4]։

1 Տե՛ս «Ձայն հայրենյաց», 1909, սեպտեմբերի 11, № 47։
2 Նույն տեղը, 1908, հոկտեմբերի 30, № 2։
3 Նույն տեղը, 1910, հունվարի 7, № 11։
4 Նույն տեղը, 1909, նոյեմբերի 5, № 2։

Նրանք արևմտահայության փրկությունը տեսնում էին ոչ թե Թուրքիայի բզկտման ու տարանջատման, այլ նրա վերակառուցման ու բարելավման մեջ, օսմանյան ժողովուրդների համընդհանուր կյանքի զարգացման մեջ։ Նրանք գտնում էին, որ հայերը պետք է այնպես վարվեն, որ թուրք կառավարիչները երբեք չմտածեն, թե անջատողականներ են։ Երվանդ Զավրյանը նշում էր, որ Թուրքիայի ոչ հայանպաստ պայմաններում հայերը չպետք է վհատվեն և արտագաղթեն, ընդհակառակը՝ պետք է մնան հայրենիքում ու քաջաբար գոյատևեն, հասնեն տնտեսական ու մտավոր զարգացման և համոզեն իրենց թուրք հայրենակիցներին, թե «մենք իրենց կարծածին պես օսմանյան հայրենիքին դավաճանող չենք, այլ անոր հառաջադիմության, լուսավորության և ապագա մեծության նպաստող անհրաժեշտ ու կարևոր տարրը կկազմենք»[1]։ Դրա հետ միասին նա խնդիր էր դնում՝ հայերը, հատկապես երիտասարդները, կրթությունից զատ պետք է հմտանան նաև զինավարժության մեջ։ Միայն այդ եղանակով նրանք կարող են «կարևոր և պատկառելի դիրք մը գրավել Օսմանյան կայսրության կազմող մյուս տեղերուն մեջ»[2]։

Ջգուշով համոզել թուրք կառավարիչներին, որ հայերը կամենում են ապրել ու առաջադիմել օսմանյան բոլոր ժողովուրդների հետ միասին, վերակազմյալների «Ձայն հայրենյացը» իր «Ո՞րն է մեր ազգայնականությունը» առաջնորդողում գրում էր, որ հայերը անջատողական ձգտում, ուրիշ ազգերին գերիշխելու փափագ չունեն, ինչպես անգլիացիները, ռուսները, գերմանացիները, թուրքերը։ Նրանց «ազգայնական վարդապետության հիմնական սկզբունքն է հայության բարոյական, նյութական և պատմական շահերուն և իրավանց պաշտպանությունը, առանց վնասելու ուրիշ ազգերու շահուն, և առանց հարձակողական կամ արհամարհական դիրք բռնելու»[3]։

Բայց վերակազմյալները, հայտարարելով արևմտահայերի օսմանյան Թուրքիային նվիրվածության մասին, մյուս կողմից պահանջում էին, որ թուրքերն էլ պետք է հարգեն ու պաշտպանեն իրենց հայրենակից ժողովուրդների, այդ թվում նաև հայերի, իրավունքներն ու շահերը։ Միայն «փոխադարձ, համահավասար և համերաշխ գործակցությամբ կրնանք մեր երկրին ներքին ուժերը կազդուրել, կանոնավորել և նախապես հիշված արտաքին վտանգներուն դիմագրավել»[1]։

Այդպիսով, վերակազմյալ հնչակյանները արևմտահայության ազգային ու սոցիալական հարցերում կանգնած էին հիմնականում այն դիրքերում, ինչ սահմանադրական ռամկավարները, բայց նրանք ավելի չափավոր էին, քան ռամկավարները։ Եթե ռամկավարները հողային հարցի լուծման համար պահանջում էին վերացնել ֆեոդալական հարաբերությունները, վերանայել հարկային գործը և բարեկարգել այն, վերադարձնել հայերից բռնագրաված հողերն ու անցկացնել այլ միջոցառումներ, ապա վերակազմյալները հիմնականում սահմանափակվում էին հայ գյուղացիների հողերը վերադարձնելու պահանջով։ Ի տարբերություն ռամկավարների, որոնք խնդիր էին դնում անջատել եկեղեցին պետությունից, վերակազմյալները մերժում էին այդ տեսակետը։ Եթե ռամկավարները արևմտահայության ազատագրությունը կապում էին նաև տերությունների, հատկապես Ռուսաստանի հետ, վերակազմյալները շրջանցում էին այդ և այլն։

Բոլշևիկներ

«Վ. Ի. Լենինը տարբեր առիթներով անդրադարձել է երիտթուրքական հեղափոխությանը և բազմակողմանիորեն բնութագրել այն։ Դեռ 1908 թ. հուլիսի 23-ին (օգոստոսի 5) իր «Դյուրավառ նյութը համաշխարհային քաղաքականության մեջ» հոդվածում նա գրում էր. «Թուրքիայում հաղթանակեց երիտթուրքերի ղեկավարած հեղափոխական շարժումը զորքերի մեջ։ Ճիշտ է, այդ հաղթանակը կես հաղթություն կամ նույնիսկ հաղթության մի փոքր մասն է, որովհետև թուրքական Նիկոլայ Երկրորդը դլուխն ազատել է առայժմ թուրքական հռչակավոր սահմանադրությունը վերականգնելու խոստումով։ Սակայն այդպիսի կիսահաղթություններ հեղափոխություններում, հին իշխանության այդպիսի հարկադրական հապճեպ զիջումները ամենահաստատ գրավականն են քաղաքացիական պատերազմի նոր, անհամեմատ ավելի վճռական, ավելի սուր, ժողովրդական լայն մասսաներ ներքրավող հանկարծական իրադարձությունների»[2]։

1 «Ձայն հայրենյաց», 1909, հուլիսի 17, № 39։
2 Նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, 1910, օգոստոսի 5, № 31։

1 «Ձայն հայրենյաց», օգոստոսի 6, № 32։
2 Վ. Ի. Լենին, Բ֊ժ, հ. 17, էջ 211—212։

Այդ նույն թվի հոկտեմբերին «Իրագործությունները Բալկաններում և Պարսկաստանում» հոդվածում Վ. Ի. Լենինը գրում էր, որ իմպերիալիստները «երիտթուրքերին գովում են չափավորության և զսպվածության համար, այսինքն՝ թուրքական հեղափոխությունը գովում են այն բանի համար, որ նա թույլ է, այն բանի համար, որ նա չի արթնացնում ժողովրդի ստորին խավերին, չի հարուցում մասսաների իսկական ինքնուրույնությունը, այն բանի համար, որ այդ հեղափոխությունը թշնամի է Օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին,— և միաժամանակ շարունակում են առաջվա նման կողոպտել Թուրքիան»[1]։

1917 թ. օգոստոս-սեպտեմբերին գրած «Պետություն և հեղափոխություն» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը ասում էր. «Եթե օրինակի համար վերցնենք XX դարի հեղափոխությունները, ապա հարկ կլինի, իհարկե, պորտուգալական ու թուրքական հեղափոխություններն էլ բուրժուական համարել։ Բայց նրանցից ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույն, իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելիորեն հանդես չի գալիս այդ հեղափոխություններից և ոչ մեկի մեջ»[2]։

Այսպիսով, Վ. Ի. Լենինը թուրքական հեղափոխությունը բնութագրում էր որպես վերնախավային, մասսաներից կտրված, իսկ երիտթուրքերի կառավարությունը համարում էր հակաժողովրդական, որը ոչ միայն չէր արտահայտում աշխատավորների շահերը, այլև իր սուր ծայրով ուղղված էր նրանց դեմ։

Վ. Ի. Լենինը ազգային հարցի լուծումը տեսնում էր ամենից առաջ ազգերի ինքնորոշման, այսինքն՝ նրանց լիակատար անջատման և ինքնուրույն պետական կազմավորումների ստեղծման մեջ։ 1914 թ. փետրվարին գրած իր «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» աշխատությունում նա նշում էր. «.. ազգերի ինքնորոշում ասելով հասկացվում է նրանց պետական անջատումն օտարազգի կոլեկտիվներից, հասկացվում է ինքնուրույն ազգային պետության գոյացումը»[3]։ Նույն աշխատության

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 17, էջ 268։
2 Նույն տեղը, հ. 33, էջ 49—50։
3 Նույն տեղը, հ. 25, էջ 311։

մեջ, առարկելով Ռ. Լյուքսեմբուրգին և ուրիշներին, որոնք գրանում էին, թե պաշտպանել անջատման իրավունքը, նշանակում է պաշտպանել ճնշված ազգերի բուրժուական նացիոնալիզմը, Վ. Ի. Լենինը մատնանշում էր. «Եթե մենք չառաջադրենք և ագիտացիայի մեջ չանցկացնենք անջատման իրավունքի լոզունգը, մենք ջուր ածած կլինենք ոչ միայն ճնշող ազգի բուրժուազիայի, այլև այդ ազգի ֆեոդալների ու աբսոլյուտիզմի ջրաղացին»[1]։

Բայց միաժամանակ նա նշում էր, որ երբ ճնշող ազգի պրոլետարիատը առաջադրում է ճնշվող ազգի անջատման լոզունգը, ապա վերջինիս սոցիալիստները պետք է առաջ քաշեն ճնշող ազգի պրոլետարիատից չհեռանալու, նրա հետ համախմբվելու թեզը. «Պրոլետարիատը պետք է պահանջի այն գաղութների ու ազգերի քաղաքական անջատման ազատությունը, որոնց ճնշում է «իր ազգը»[2]։

«Մյուս կողմից, ճնշված ազգերի սոցիալիստները պետք է հատկապես պաշտպանեն ու կենսագործեն ճնշված ազգի բանվորների լիակատար և անվերապահ, այդ թվում նաև կազմակերպական միասնությունը ճնշող ազգի բանվորների հետ»[3]։

Զարգացնելով ու խորացնելով ազգերի ինքնորոշման անհրաժեշտությունը, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ ամբողջ ազգի անջատման հարցը քննելիս ամենից առաջ պետք է նկատի ունենալ հասարակության զարգացման շահերից, պրոլետարիատի դասակարգային պայքարի խնդիրներից։ Նրա կողմից կազմված «ՌՍԴԲԿ կենտկոմի՝ կուսակցական աշխատողների հետ ունեցած 1913 թվականի ամառվա խորհրդակցության բանաձևում» ասվում էր. «Ազգերի ինքնորոշման իրավունքի հարցը (այսինքն՝ անջատման հարցը պետության սահմանադրությամբ միանգամայն ազատ ու դեմոկրատական եղանակով լուծելն ապահովելը) անթույլատրելի է շփոթել այս կամ այն ազգի անջատման նպատակահարմարության հարցի հետ։ Այս վերջին հարցը ս.-դ. կուսակցությունը պետք է լուծի ամեն մի առանձին դեպքում միանգամայն ինքնուրույն կերպով՝ հիմնվելով հասարակական ամբողջ զարգացման շահերի և սոցիալիզմի համար պրոլետարիատի մղած դասակարգային պայքարի շահերի տեսակետից»[4]։

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 27, էջ 331։
2 Նույն տեղը, էջ 321։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը, հ. 24, էջ 74։

Վ. Ի. Լենինը հարկ էր համարում մատնանշել, թե սոցիալ-դեմոկրատիան չպետք է անտեսի այն հանգամանքը, որ «... ճնշված ազգերի կալվածատերերը, տերտերներն ու բուրժուազիան բանվորներին միմյանցից բաժանելու և նրանց հիմարացնելու ձգտումները հաճախ սքողում են նացոնալիստական լոզունգներով՝ նրանց թիկունքում գործարքներ կնքելով տիրապետող ազգի կալվածատերերի ու բուրժուազիայի հետ՝ ի վնաս բոլոր ազգերի աշխատավոր մասսաների»[1]։

Ազգային հարցի լուծման գործում առաջնությունը տալով ինքնորոշմանը, Վ. Ի. Լենինը կանգ էր առնում նաև ֆեդերացիայի ու ավտոնոմիայի կամ ինքնավարության տեսությունների վրա։ Նա ցույց էր տալիս, որ մարքսիստների համար ֆեդերացիան ու ավտոնոմիան ընդհանրապես անընդունելի, նույնիսկ անիմաստ են[2]։ Բայց պատմական կոնկրետ պայմաններում նրանց իրագործումը անհրաժեշտ է ու առաջադիմական։ 1916 թ. գրած «Սոցիալիստական հեղափոխությունը և ազգերի ինքնորոշման իրավունքը» թեզիսներում Վ. Ի. Լենինը նշում էր, որ ֆեդերացիան գերադասելի է ազգային անհրավահավասարությունից «իբրև լիակատար դեմոկրատական ցենտրալիզմի միակ ուղի»[3]։ Իսկ «Ինքնորոշման վերաբերյալ դիսկուսիայի արդյունքները» աշխատությունում նա ասում էր. «Հենց ինքնավարությունն է, որ տվյալ պետության սահմաններում բռնի կերպով պահվող ազգին թույլ է տալիս վերջնականապես կազմավորվելու իբրև ազգ, հավաքելու, ճանաչելու, կազմակերպելու իր ուժերը, ընտրելու միանգամայն հարմար մոմենտ, որ հայտարարի...»[4] իր անկախությունը։

Բայց մյուս կողմից Վ. Ի. Լենինը նշում էր, որ ի տարբերություն ինքնորոշման, որը հեղափոխական փոփոխություն է, ինքնավարությունը ռեֆորմիստական փոփոխություն է, քանի որ «... չի խարխլում տիրող դասակարգի իշխանության հիմքերը, լինելով միայն մի զիջում նրան, պահպանելով նրա տիրապետությունը»[5]։ Ռեֆորմիստական փոփոխությունը «... չի՛ վերացնում

1 Վ. Ի. Լենին, երկ, հ. 24, էջ 74։
2 Տե՛ս նույն տեղը, հ. 25, էջ 370։
3 Տե՛ս նույն տեղը, հ. 27, էջ 310։
4 Նույն տեղը, հ. 30, էջ 52—53։
5 Նույն տեղը, էջ 52։

տիրող ազգերի բոլոր արտոնությունները, չի՛ ստեղծում լիակատար իրավահավասարություն, չի՛ ոչնչացնում ամեն մի ազգային ճնշում։ «Ինքնավար» ազգը իրավահավասար չէ «տիրակալ» ազգի հետ»[1]։

Մշակելով ազգային հարցի մասին իր տեսությունը, Վ. Ի. Լենինը միաժամանակ ցույց տվեց, որ այդ հարցի լուծումն անհնարին է առանց հողային հարցի վճռման։ Ավելին՝ բազմաթիվ դեպքերում նա ագրարային հարցին տալիս էր առաջնակարգ նշանակություն, գտնելով, որ նրա արմատական լուծումը ինքնըստինքյան կհանդեցնի նաև ազգային հարցի վճռմանը։

Վ. Ի. Լենինը հողային հարցի մասին իր տեսությունը ավելի հանգամանորեն մշակեց «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—1907 թվականների ռուսական առաջին հեղափոխության ժամանակ» աշխատության մեջ։ Քննադատելով կադետների, տրուդովիկների, մենշևիկների, էսէռների և քաղաքական այլ կուսակցությունների ագրարային ծրագրերը, Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ Ռուսաստանում հողային հարցի միակ ճիշտ լուծումը հողի ազգայնացումն է։ Այն կունենա վիթխարի նյութական ու բարոյական նշանակություն։ Նյութական այն տեսակետից, որ ազգայնացումը լիակատար կսրբի Ռուսաստանում միջնադարյան մնացորդները, կվերանորոգի ասիական կիսափտած գյուղը և առաջ կմղի ագրոկուլտուրան։ Իսկ բարոյական այն տեսակետից, որ մահացու հարված կհասցնի բուրժուական մասնավոր սեփականությանը հողի նկատմամբ։ «Ագրարային հարցի ամեն մի այլ լուծում հեղափոխության ժամանակ ավելի քիչ բարենպաստ ելման կետեր է ստեղծում տնտեսական հետագա զարգացման համար»[2]։

Վ. Ի. Լենինի այդ ընդհանրացումները հետագայում օգտագործեցին նրա հետևորդները և ԽՍՀՄ-ում ստեղծեցին վնասաբեր վարչահրամայական սոցիալիզմ, իսկ ազգային հարցում սահմանեցին ժողովուրդների անիրավահավասարություն։

Բոլշևիկյան կուսակցության առաջնորդի այդ տեսական դրույթները պրոպագանդելու և զանգվածներին հասցնելու համար մեծ դեր խաղաց «Պրավդան»։ Այն տարբեր ժամանակներում ու տարբեր ուրիներով անդրադառնում էր Թուրքիայի

1 Վ. Ի. Լենին, հ. 30, էջ 52։
2 Նույն տեղը, հ. 16, էջ 373։

կրնկի տակ ընկած ժողովուրդների, այդ թվում նաև արևմտահայերի աղատագրության խնդիրներին և մատնանշում նրանց լուծման կոնկրետ ուղիները։ Այսպես, 1912 թ. հուլիսին պարբերականը «Թուրքական իրադարձությունները» հոդվածում, խոսելով իթթիլաֆականների կատարած հեղաշրջման մասին, գրում էր, որ երիտթուրքերի տիրապետությունն ընկավ այն պատճառով, որովհետև չէր ստանում ժողովրդական զանգվածներից պաշտպանություն, չէր վայելում նրանց, հատկապես նախկին վարչակարգի ժամանակ կոտորածներից արնաքամ եղած քրիստոնյաների վստահությունն ու նվիրվածությունը։ Երիտթուրքերը հենվում էին գլխավորապես զինվորների ուժի վրա, որոնց վիճակը նույնպես թողնելին անմխիթար։ Նրանք իշխանության գլուխ անցնելուց հետո իրենցից վանեցին Օսմանյան կայսրության ժողովուրդների համակրանքը և դրսևորեցին լիբերալ բուրժուազիային յուրահատուկ բոլոր արատներն ու թուլությունները։ Խոսքով լինելով լիբերալ, երիտթուրքերը գործով զբաղվում էին ամենաթունդ սևհարյուրակային նացիոնալիզմով։ Նրանք վախենում էին ժողովրդից, արգելակում էին նրա ցուցաբերած ամեն մի ինքնուրույնություն ու նախաձեռնություն։ Իթթիհադի խոստացած բարենորոգումները, որոնք կարող էին որոշ չափով թեթևացնել ընչազուրկ բնակչության վիճակը, չէին իրագործվում, իսկ կառավարման գլուխ անցած նոր մարդիկ զբաղվում էին մութ գործերով և դրանով հեղինակազրկում էին իրենց ժողովրդի մեջ[1]։

Երիտթուրքերը թեև կարողանային դիմանալ, շարունակում է թերթը, եթե բավարարած լինեին դոնե ոչ թուրք ժողովուրդների ազգային բուրժուազիային, սակայն նրանք կորցրել էին նաև սրանց համակրանքը։ Երիտթուրքերի ձգտումը՝ թուրքացնել սլավոններին, հայերին, հրեաներին, հույներին և Օսմանյան կայսրությունում բնակվող այլ ժողովուրդներին ավելի կոպիտ ու համառ բնույթ ընդունեց, քան Աբդուլ Համիդի ժամանակ։ Նրանց այդ քաղաքականության հետևանքով բռնկվեցին ապստամբություններ Արաբիայում, Ալբանիայում և այլ վայրերում։ Թուրքիայի պատերազմը Իտալիայի դեմ ավելի բարդացրեց իրավիճակը։ Այժմ հարցականի տակ է դրված Օսմանյան կայսրության գոյությունը։ Հնարավոր է, որ Թուրքիան դուրս

[1] Տե՛ս «Правда» 1912, 27 июля, № 76։

գա այդ վիճակից, սակայն այլևս չի կարող վերադառնալ սուլթանական նախկին վարչակարգին։

Պարբերականը գտնում է, որ «հարցը լավագույն կերպով կլուծեր պետության կազմակերպումը ինքնավար սկզբունքներով. այսինքն՝ յուրաքանչյուր առանձին ազգության ինքնակառավարման լայն իրավունքներ տալը։ Բայց արդյո՞ք դրա համար ժամանակը արդեն բաց չի թողած[2]։

1913 թ. հունիսին, այսինքն՝ երբ Հայկական հարցը վերստին դարձել էր միջազգային դիվանագիտության քննարկման առարկա, «Պրավդան» հաղորդում էր, որ արևմտահայերի անտանելի վիճակը, արտակարգ աղքատությունն ու խեղճությունը, հարկային դաժան հարստահարումները և վարչարարական անպատասխանությունը բոլորին հայտնի են։ Ռուսական շովինիստական շրջանները և նրանց գրչակները, արձանագրելով այդ ամենը, նպատակ ունեն ոչ այնքան թեթևացնել արևմտահայերի ծանր գրությունը, որքան հիմնավորել ու արդարացնել ցարիզմի նվաճողական քաղաքականությունը Փոքր Ասիայում, հանդես բերելով նրան իբրև հայերին պաշտպանի ու փրկողի դերում։ Սակայն նոր արկածախնդրությունները, եզրափակում էր հոդվածագիրը, միջազգային հարաբերությունների նոր բարդացումներն ու խտացումները օգտակար չեն ո՛չ դեմոկրատական Ռուսաստանի և ո՛չ էլ դեմոկրատական Հայաստանի համար[3]։

1913 թ. հուլիսին բոլշևիկյան «Ռաբոչայա պրավդան» «Փոքր Ասիան և Հայկական հարցը» հոդվածում վերլուծում էր Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Անգլիայի և այլ տերությունների նվաճողական քաղաքականությունը Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում և ցույց էր տալիս, որ եվրոպան պատրաստվում է զաղտնի կերպով բաժանել ասիական Թուրքիան ազդեցության գոտիների։ Գերմանիան նրազում է տիրանալ Անատոլիայի մեծ մասին, Ֆրանսիան՝ Սիրիային, Անգլիան՝ Միջագետքին և Պարսկական ծովախորշի մի մասին, իսկ Ռուսաստանը՝ Հայաստանին, ավելի ճիշտ՝ Արևմտյան Հայաստանին[3]։ Սակայն նրանց չի մտահոգում արևմտահայերի

[1] «Правда», 1912, 27 июля, № 76.

[2] Տե՛ս «Правда» (1912—1917 гг.) и «Социал-демократ» (1908—1917 гг.) о Закавказье (сборник), составитель Г. А. Исаакян, 1968, с. 90—91.

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 110։

բախտը, որոնք ճակատագրի բերումով ընկած են քրդական ֆեոդալների իշխանության տակ և անխնա կոտորվում ու հալածվում են նրանց կողմից։

Թերթն ապա նշում էր, որ Հայաստանում կա «Դաշնակցություն» անունով մի ազգայնական կազմակերպություն, որը հանդես է եկել դեռ 30 տարի առաջ։ Այն կազմակերպում էր հայ գյուղացիների ապստամբությունը թուրք ֆեոդալների դեմ, 1896 թ. զավթեց Օտտոմանյան բանկը, 1904 թ. ոտքի հանեց Սասունը, 1905 թ. փորձեց սեռորի ենթարկել սուլթանին, 1907 թ. ընդունեց «սոցիալիստական» ծրագիր, ապա բանակցությունների մեջ մտավ երիտթուրքերի հետ և Փարիզի կոնգրեսում որոշեցին զրկել Աբդուլ Համիդին գահից։ Բայց, այդուհանդերձ, դաշնակցականներն այժմ հանդես են գալիս հանուն սահմանադրական-դեմոկրատական վարչակարգի, Օսմանյան կայսրության անձեռնմխելիության, հանուն Հայաստանի ինքնավարության՝ որպես Թուրքիայի բաղկացուցիչ մասի, այսինքն՝ պաշտպանում են այն, ինչ պահանջում էին բալկանյան ֆեդերալիստները 1902 թ. Բրյուսելի կոնդրեսում, որին իրենք չներկայացան։

Պարբերականը գտնում էր, որ դաշնակցականները հանուն հայ գյուղացիության շահերի թող խախտեն երիտթուրքերի հետ կնքած իրենց բոլոր քաղաքական պայմանագրերը և, «համախմբելով բալկանյան դեմոկրատիայի հետ, ճակատամարտեն նացիոնալիզմի, թուրքական բեյերի և եվրոպական կապիտալիզմի դեմ։ Եվ թող նրանք բալկանյան դեմոկրատիայի հետ համագործակցելով պայքարեն ֆեդերացիայի համար։

Ահա հայ գյուղացիության փրկությունը։
Ահա ինչումն է հայ ժողովրդի փրկությունը»[1]։

1914 թ. փետրվարին, այսինքն հայանի բարենորոգումների ծրագրի հռչակումից հետո, բոլշևիկյան «Պուտ պրավդան» հանդես եկավ «Հայկական հարցի շուրջը» հոդվածով, որի մեջ մատնանշում էր, որ այդ հարցն արդեն օրվա խնդիր է։ Թե պաշտոնական ու դիվանագիտական շրջանները և թե հասարակական գանազան հոսանքները քննարկում են հայերի դրությունը Թուրքիայում։ Բայց նրանց հոգսը ոչ այնքան հայերի դրության բարելավումն է, որքան Արևմտյան Հայաստանի ձեռքբերումը, որպես շահաբեր նոր շուկայի։ Այդ տեսանկյունից են հետաքրքրվում հայկական հարցով նաև հայ բուրժուական ազգայնական կուսակցությունները։ Կովկասահայ բուրժուազիան կամենում է, որ Արևմտյան Հայաստանը անցնի Ռուսաստանին, քանզի դա իրեն մեծամեծ օգուտներ կբերի[2]։

Սակայն իրենք՝ արևմտահայերը քիչ են արտահայտում իրենց ցանկություններն ու տրամադրությունները, մինչդեռ նրանց է պատկանում վճռական խոսքը իրենց բախտի վերաբերյալ։ Ըստ երևույթին արևմտահայերը ինքնակալության ազգայնական պաշտպանության տակ անցնելը չեն համարում իրենց համար ոչ ցանկալի և ոչ էլ փրկարար։ Ահա թե ինչու կովկասահայ ազգայնականները վախենում են հրապարակել արևմտահայերի կարծիքը և գերադասում են հայկական հարցը վճռել կուլուարներում, խորհրդակցություններում ու զրուցաբաններում[3]։

Լրագիրն այնուհետև նշում էր. «Պրոլետարիատը բազմիցս իր բողոքն է արտահայտել Թուրքիայի գաղանությունների դեմ։ Առաջավոր բանվորները գիտակցում են, որ թուրքահայերի դրությունը անհրաժեշտ է փոխել Թուրքիայի հին կարգերի լիակատար վերափոխման ճանապարհով։ Մարքսիստները, այդուհանդերձ, հայտարարում են, որ Թուրքահայաստանի բախտի որոշման գլխավոր դերը կարող է և պետք է պատկանի իրենց՝ թուրքահայերին։

Հենց դրա համար էլ հայ մարքսիստները պայքարում են հայ բուրժուազիայի բոլոր հետադեմ-ազգայնական բաղձանքների դեմ, որոնք ձգտում էին տաճկահայերի հարցի շուրջը ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ պետք է թաղամեր հայ բանվորների ծավալվող շարժումը»[4]։

---

[1] «Правда» (1912—1917 гг.) и «Социл-демократ» (1908—1917 гг.) о Закавказье, с. 112.

[2] Տե՛ս «Правда» и «Социл-демократ» о Закавказье, էջ 176—177։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 177։

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 177—178։

Մարքս-լենինյան տեսակետը արևմտահայության հարցի լուծման մասին ավել կամ պակաս չափերով շարադրված է խորհրդահայ պատմաբանների աշխատություններում (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Մ. Վ. Ալազամանյան, Հայաստան 1914—1917, Եր., 1969, Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., Խ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., Ա. Ս. Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը... և այլն)։

Ստ. Շահումյանը զանազան առիթներով քննադատում էր թուրքական անտանելի կարգերը և անդրադառնում արևմտահայության կացության ու ազատագրման հարցերին։ Նա գտնում էր, որ աշխատավոր ու ճնշված ժողովուրդների պրոբլեմները պետք է լուծել մարքսիստական գաղափարների կենսարար ուժով և ինչպես անցյալում, այնպես էլ 1908 թ. հեղաշրջումից հետո պաշտպանում ու պրոպագանդում էր լենինյան տեսությունը ազգային ու ազգրարային խնդիրների վերաբերյալ։

Ստ. Շահումյանը ցույց էր տալիս, որ հողային հարցը Հայաստանում նույնպես ունի այնպիսի առաջնակարգ նշանակություն, ինչպես Ռուսաստանում։ Նա մերժում էր Գ. վ. Պլեխանովի ու մենշևիկների հողի մունիցիպալիզացիայի տեսությունը և պաշտպանում լենինյան նացիոնալիզացիան։ Քննադատելով դաշնակցականներին, նշում էր, որ ռուս և հայ գյուղացիների մասին խոսելիս պետք է շեշտը դնել նրանց կացության ոչ այնքան տարբերության, որքան նմանության վրա, որովհետև «ռուս գյուղացին նույնքան խորթ զավակ է ռուս կառավարության համար, ինչքան և հայ, վրացի, թուրք և այլ գյուղացիները»[1]։

Հրապարակախոսն այնուհետև ցույց էր տալիս, որ հայ գյուղացին աղքատ ու թշվառ է ոչ թե այն պատճառով, որ հայ է, այլ որովհետև դասվում է նույն սոցիալական ճնշման տակ, ինչ ռուս կամ այլ ազգի գյուղացիները։ «Ուրեմն չպետք է խաբել հայ գյուղացուն կեղծ ու ազգասիրական երկերով, այլ հարկավոր է ցույց տալ նրան աղքատության և տգիտության ճշմարիտ աղբյուրը, իսկական պատճառը, որպեսզի նա իմանա, թե ում դեմ և ում հետ ձեռք-ձեռքի տված նա պետք է կռվի, որպեսզի արժանանա ավելի լավ ապագայի»[2]։

Խստորեն քննադատելով Անդրկովկասի բուրժուական-նացիոնալիստական կառավարությունների ազգրարային քաղաքականությունը, հրապարակախոսը պահանջում էր, որ «հողային հարցի լուծումն Անդրկովկասում պետք է տեղի ունենա միայն նույն ճանապարհով, ինչ ճանապարհով դա տեղի ունեցավ Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո»[1]։ Սակայն նշում էր, որ «Հողային հարցն իր ամբողջ ծավալով կարող է լուծել միայն ինքը՝ ժողովուրդը, ինքը՝ գյուղացիական կոմիտեների մեջ կազմակերպված աշխատավոր գյուղացիությունը»[2]։

Կանդնելով լենինյան դիրքերում, Ստ. Շահումյանը 1908—1915 թվականներին հրապարակեցին մի շարք աշխատություններ ազգային հարցի մասին։ Հայ մտավորականության ճնշող մեծամասնությունը այդ տարիներին պահանջում էր ազգային ինքնավարություն, գտնելով, որ ազգային-կուլտուրական ինքնավարության ձևով բերումով միայն կարելի էր լուծել ազգային հարցը։ Ստ. Շահումյանը 1914 թ. «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշխատության մեջ գրում էր. «Մեզանում չկա մի կուսակցություն՝ կղերական թե բուրժուական, «խավարամիտ» թե «ազատամիտ», որ կողմնակից չլինի ազգային-կուլտուրական ավտոնոմիային։ Թե՛ տևրտերական «Հովիտը», թե՛ հայ վաճառականների օրգան «Մշակը» և թե՛ հայ մանրբուրժուական ու քաղքենիական ինտելիգենցիայի բերան «Հորիզոնը»— բոլորն էլ հայոց ազգի փրկությունը տեսնում են այդ ավտոնոմիայի մեջ»[3]։

Ստ. Շահումյանը մերժեց հայ գործիչների ավտոնոմիայի տեսակետը, քննադատեց հատկապես Դավիթ Անանունին, համարելով նրա հայացքները բուրժուական և հայտարարեց, որ նա ըստ էության ծառայում է «բուրժուական նացիոնալիզմին՝ ընդդեմ պրոլետարական ինտերնացիոնալիզմի»[4]։

Միաժամանակ Ստ. Շահումյանը համառոտակի շարադրեց մարքսիստական, լենինյան դրույթներն ազգային հարցի լուծման մասին։ Հակառակ բուրժուական ու մանրբուրժուական զաղափարաբանների, որոնք կարծում էին, թե ազգային հարցը կարելի է լուծել կապիտալիստական հասարակության պայմաններում, նա ցույց տվեց, որ այն հնարավոր է լուծել միայն այդ հասարակության տապալման միջոցով։

Հրապարակախոսի կարծիքով, ապագա ազատ երկրում պետք

1 Ստ. Շահումյան, երկ, հ. 2, էջ 248։
2 Նույն տեղը, էջ 249։

1 Ստ. Շահումյան, երկ, հ. 4, էջ 105։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, հ. 2, էջ 373։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 398։

է կատարել վարչական նոր բաժանում, ելնելով բնակչության ոչ միայն ազգային կազմից, այլև տնտեսական ու կենցաղային պայմաններից։ Հաստատելով քաղաքական կենտրոնացում, անհրաժեշտ է ստեղծել նաև վարչական ու դատական գործերի ապակենտրոնացում, այսինքն՝ հիմնել այնպիսի մի համակարգ, ուր «բոլոր պաշտոնյաները և դատավորները ընտրվում են ժողովրդի կողմից և պատասխանատու են օրենքի ու իրենց ընտրողների առաջ։ Մենք պահանջում ենք լայն տեղական ինքնավարություն և դրանից զատ՝ շրջանային ինքնավարություն (областное самоуправление) այն տեղերի համար, որոնք տարբերվում են իրենց տնտեսական ու կենցաղային պայմաններով և ազգային կազմով»[1]։

Նա նշում էր, որ ստեղծվելիք դեմոկրատական կարգերում պետք է ճանաչել լեզուների լիակատար ազատություն, այնպիսի ազատություն, որ քաղաքացիները կարողանան հանդես գալ իրենց մայրենի լեզուներով թե՛ գրականության մեջ, թե՛ ժողովներում ու միտինգներում, թե՛ դատարաններում ու դպրոցներում և թե՛ պետական ու հասարակական այլ հաստատություններում[2]։

Ստ. Շահումյանը պաշտպանում էր ազգերի ինքնորոշման կամ լիակատար անջատման ու սեփական պետականության ստեղծման լենինյան տեսակետը։ Նա գրում էր. «... մենք պահանջում ենք, որ պետական սահմանադրությունը երաշխավորի ազգերի ինքնորոշման իրավունքը։ Դա նշանակում է ամենից առաջ, որ ոչ մի որևէ ազգություն՝ օբյեկտիվ-տնտեսական թե սուբյեկտիվ-հոգեբանական պատճառներով չի կարող կամ չի ցանկանում մի ժողովուրդ կազմել ռուս և մյուս ազգերի հետ միասին,— նրան սահմանադրությունը իրավունք պետք է տա բաժանվելու և ինքնուրույն պետություն կազմելու»[3]։ Նա հարկ էր համարում շեշտել, որ «մենք այդ տեսակ բաժանում չենք քարոզում և չենք առաջարկում ներկայումս ոչ մի ազգության Ռուսաստանում, բայց ինքնորոշման իրավունքը ճանաչում ենք, ինչպես, օրինակ, ճանաչում ենք խոսքի ազատության կամ խղճի ազատության իրավունքը»[4]։

1 Տե՛ս Ստ. Շահումյան, երկ., հ. 2, էջ 415։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը, էջ 416։
4 Նույն տեղը։

Անդրադառնալով արևմտահայությանը, Ստ. Շահումյանը նրա ժխնդակ կացության և ողբերգության պատճառը համարում էր օսմանյան կարգերը, թուրքական կառավարության հայահալած ու հայակեր քաղաքականությունը։ Բայց նա միաժամանակ մեղադրում էր դաշնակցական ու հնչակյան կուսակցություններին այն բանում, որ նրանք չկարողացան ճիշտ կողմնորոշվել հանգամանքներում, չկարողացան այնպես ղեկավարել ժողովրդին, որ զերծ պահեին կատորածներից, քիչ թե շատ թեթևացնեին նրա դրությունը։

Բ. Մ. Կնունյանցը մերժեց բոլոր այն գրչակներին, որոնք բոլշևիկների և ռուս պրոլետարիատի 1905 թ. կատարած հերոսական գործունեության վրա ստվեր գցելու միտումով զրում ու զրպարտում էին երիտթուրքերի հեղաշրջման եղանակը, փառաբանում էին նրանց վարչակարգը։ Նա նշում էր, որ թեև դրանցից շատերն արդեն երես են դարձրել երիտթուրքերից, բայց և այնպես, օգտագործում են նրանց օրինակը իրենց քաղաքական հակառակորդներին կամ անցանկալի գաղափարները վարկաբեկելու համար։

Հրապարակախոսը հանգամանորեն վերլուծեց երիտթուրքերի հեղաշրջման էությունը և բացահայտեց նրա բացասական հետևանքները։ Նա ցույց տվեց, որ երիտթուրքերը հեղափոխությունը կատարեցին զորքի օգնությամբ և երկիրը դրեցին նրա գերիշխանության տակ։ Բայց հեղափոխությունից հետո էլ հենվում են զորքի վրա, որը «կարող է վաղն իսկ ոչինչ չթողնել նրանց պառլամենտարիզմի խաղաթղթային շենքից»[1]։ Երիտթուրքերը չեն արտահայտում բնակչության լայն խավերի՝ գյուղացիների ու արհեստավորների շահերը։ Այդ պատճառով էլ վերջիններս «առայժմ բոլորովին մի կողմ են քաշված հեղաշրջումից և իրենց պահանջներով հանդես չեն գալիս»[2]։ Ճիշտ է, Իթթիհադի ղեկավարները ժողովրդական զանգվածների համակրանքը շահելու և նրանց մեջ իրենց դիրքերն ամրապնդելու համար նրանց շատ բան են խոստանում, բայց դեռ չդիտենք, թե ինչ կանեն։

Համենայն դեպս, նշում էր հրապարակախոսը, «քանի դեռ ժողովրդական մասսաները անտարբեր են, քանի դեռ չկան սոցիալական խոր պահանջմունքներ, որոնք այդ մասսաներին

1 Տե՛ս Բ. Կնունյանց, նշվ. աշխ., էջ 544։
2 Տե՛ս նույն տեղը։

մղեն պառլամենտի ակտիվ պաշտպանության ուղին, քանի դեռ այդ մասսաները չեն ընտելացել ինքնագործունեության, ժողովրդական իշխանության գաղափարի հաղթանակը կառուցված է խախուտ հիմքի վրա»[1]։

Բ. Մ. Կնունյանցը շեշտում էր, որ երիտթուրքերի հեղափոխության հաղթանակը դեռ չի նշանակում անցում արևելյան բռնապետությունից դեպի եվրոպական դեմոկրատիզմ։ Այդ նպատակին հասնելու համար տակավին շատ բան պետք է կատարել։ Նա հույս էր տածում, որ երիտթուրքերի հեղափոխությունը զարկ կտա օսմանյան տիրապետության տակ հեծող ժողովուրդների ազատագրական պայքարին, կխորտակի հին կուռքերը և անհասանելին կդարձնի հասանելի[2]։ Սակայն Իթթիհադի պարագլուխների վարած ռեակցիոն քաղաքականության հետևանքով հրապարակախոսի հույսերն ի դերև ելան[3]։

Ալ. Մյասնիկյանը մերկացրեց երիտթուրքական հեղաշրջման ազգայնամոլ, հակաժողովրդական էությունը և ցույց տվեց, որ այն ոչնչով չբարելավեց օսմանյան տիրապետության տակ ընկած ժողովուրդների ծանր վիճակը։ Անդրադառնալով մասնավորապես արևմտահայերին, նա նշում էր. «... երիտասարդ թուրքերի օրով հայերի դրությունը բոլորովին չլավացավ։ Այդ դրությունը նույնն է, ինչ որ Համիդի օրերում»[4]։ Հրապարակախոսը ցույց էր տալիս, որ արևմտահայերի ջարդերը, նրանց կալվածքների հափշտակումը, թվաքանակի նվազումը անշեղորեն շարունակվում են։ Նա դատապարտում էր դաշնակցականներին, որոնք, ցուցաբերելով անհեռատեսություն, համագործակցեցին այնպիսի քաղաքական անբարեհույս և հետադիմական գործիչների հետ, ինչպիսին երիտթուրքերն էին[5]։

Ալ. Մյասնիկյանը 1913 թ. հանդես եկավ «Ազգային հարցի առթիվ» ծավալուն հոդվածով, որի մեջ սուր քննադատանց ազգային խնդրի լուծման բուրժուական ու մանրբուրժուական տեսակետները։ Նա մերժեց ֆեդերացիան ու ավտոնոմիան, համարելով դրանք հարցի վճռման սահմանափակ, բուրժուական ձևե-

1 Բ. Կնունյանց, նշվ. աշխ., էջ 544։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 544—545։
3 Տե՛ս Հ. Գ. Ինճիկյան, Հեղափոխության մարտիկը, Եր., 1979։
4 Ալ. Մյասնիկյան, Երկեր հինգ հատորով, հ. 1, Եր., 1984, էջ 396։
5 Տե՛ս նույն տեղը։

վեր և պաշտպանեց ազգերի ինքնորոշման լայն, դեմոկրատական գաղափարը, գտնելով, որ միայն ինքնորոշումն է արտահայտում աշխատավոր զանգվածների իսկական պահանջները։ Ազգային ինքնորոշումը «մի մտածված, կարևոր պահանջ է մարքսիստական ծրագրում»[1]— գրում էր նա։

Ալ. Մյասնիկյանը անդրադարձավ նաև Հայկական հարցին ու արևմտահայ ազգային ազատագրական շարժումներին և պաշտպանեց դրանց լուծման առաջադիմական տեսակետը։ 1913 թ. դեկտեմբերին հրատարակած «Ռուս լիբերալը Հայկական հարցի մասին» հոդվածում ցույց տվեց, որ Հայկական հարցը չի լուծվում ոչ միայն իմպերիալիստական տերությունների խարդավանքների, այլև Թուրքիայի ներքին ու հայ քաղաքական ուժերի հակասությունների պատճառով։ Նա մերժում էր ռուս լիբերալների այն դրույթը, ըստ որի Հայկական հարցի լուծման համար պետք է ռուսական կառավարող շրջաններում հայասպաստ կարծիք ստեղծել։ Հրապարակախոսը գտնում էր, թե արևմտահայերին օգնելու համար անհրաժեշտ է նպաստել ռուսական կարգերի դեմոկրատացմանը, օգտագործել Թուրքիայի ներքին կացությունը և նախապատրաստել արևմտահայերին «գալիք օրերի համար»[2]։

1914 թ. հունվարին «Հայկական հարցի գործնականը» հոդվածում Ալ. Մյասնիկյանն ավելի հանգամանորեն շարադրեց իր հայացքները Հայկական հարցի մասին։ Նա նշում էր, որ արևմտահայ շարժումը համահայկական շարժում չէ, այլ միայն թուրքահայ ժողովրդի շարժում է, միայն թուրքահայ խնդիր է։ Նրա էությունը «թուրքահայերի բարեկեցության, նրանց կյանքի ու գույքի, կյանքի ապահովության, նրանց մարդավայել կեցցաղի հարցն է»[3]։

Ալ. Մյասնիկյանը ցույց էր տալիս, որ անցյալում արևմտահայերի շարժումը նրանց անճարության ու պղտահայ մտավորականության ամլության պատճառներով սխալաբար առաջ էր տարվում արևելահայերի ուժերով։ Բայց 1908 թ. հեղաշրջումից հետո ուղղվել է այդ սխալը, այն արդեն անցել է արևմտահայերի ձեռքը։ «Թուրքահայից լավ ո՛վ կարող է ըմբռնել այդ հարցը,

1 Ալ. Մյասնիկյան, նշվ. աշխ., էջ 223։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 237։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 238։

ո՞վ կարող է ավելի հաջող կոչվել տանել հօգուտ հայկական դատի, եթե ոչ ինքը՝ Թուրքահայը։

Դրսի գնահատությունը մեծ մասամբ հիմնված է լինում անտեղյակության ու տհասության վրա. դրսի գնահատությունը առաջ է բերում մակերեսային վերաբերմունք դեպի հարցը, շահագործություն և նույնիսկ բախտախնդրություն։ Այդպիսով շարժման հիմքը խախուտ, անբնական և արհեստական է դառնում»[1]։

Բայց միաժամանակ հրապարակախոսը չէր անտեսում դրսի ուժերի կարևորությունը արևմտահայության հարցի լուծման գործում։ Շեշտելով, որ «Թուրքահայերի աղատագրությունը իրենց Թուրքահայերի ձեռքի գործը պետք է լինի»[2], նա գտնում էր, որ կովկասահայերը պետք է նպաստեն արևմտահայության խնդրի լուծմանը՝ «գործով թե խոսքով»[3]։

1914 թ. փետրվարին հրապարակած «Հայկական ռեֆորմների նախագիծը» հոդվածում, Ալ. Մյասնիկյանը վերլուծեց տերությունների 1914 թ. հունվարի 26-ին հայկական նահանգներում բարենորոգումների փաստաթղթի բովանդակությունը և ցույց տվեց, որ այն զուրկ է իրական արժեքից։ Նա նշում էր, որ տերությունների կողմից նշանակված գեներալ-ինսպեկտորներն ունեն ձևական նշանակություն, քանի որ նշանակելով ու աղատելով բոլոր պաշտոնյաներին և հսկելով նրանց գործունեությունը, այդպիսի իրավունքներ չունեն նահանգապետերի հանդեպ, իսկ նահանգապետը անգամ քաղաքակիրթ երկրներում «մի բնականախ իշխան է, տեղական փոքրիկ թագավոր, որ հակառակ համապետական օրենսդրական մարմինների կողմից հայտարարված կամ վաղուց և հետե գոյություն ունեցող օրենքների՝ որպես նոր օրենքներ, շարունակ հրատարակում և գործադրում է իր անվերջ որոշումները, ո՛ւր մնաց մի Թուրքիա, այն էլ նրա կոհորտում մնացած մի գավառը, որի անունն է Հայաստան, որտեղ նահանգապետները ավելի ևս սանձարձակ, ավելի ևս վայրագ գործունեություն են առաջ տանելու»[4]։

Հրապարակախոսն ապա մատնանշում էր, որ տերությունների բարենորոգումներով գործնական իրավունքներից զուրկ են նաև նահանգների կամ վիլայեթների գեներալ-խորհուրդները։ Նրանք կոչված են օժանդակելու նահանգապետներին, բայց ոչ երբեք լինելու օրենսդրական մարմիններ։ Բարենորոգումներն, ըստ էության, անլուծելի են Թողնում բնակչության ճնշող մեծամասնության համար կենսական նշանակություն ունեցող հողային հարցը և բազմաթիվ այլ խնդիրներ։

Ալ. Մյասնիկյանն այնուհետև եզրափակում էր. «Մեր կարծիքով՝ հայկական ռեֆորմների նախագիծը ոչ մի պատասխան չի տալիս այն «անհետաձգելի հարցին», որի անունն է Թուրքահայ խնդիր։ Դա Թուրքահայերի տնտեսական դժնդակ կացության և նրանց կատարյալ իրավազրկության հարցն է։ Ռեֆորմների նախագիծը ոչ մեկի և ոչ էլ մյուսի մեջ ոչ մի աղագրություն, շոշափելի աղագրություն չի մտցնում»[1]։

Հրապարակախոսի կարծիքով, արևմտահայերի հարցը չեն լուծի ոչ տերությունները և ոչ էլ նրանց ազդեցության տակ ընկած երիտթուրքերը։ Նրանք պետք է իրենց բախտը վերցնեն իրենց ձեռքը։ «Պետք է նախապատրաստել ժողովրդին,— ասում էր նա,— պետք է նրան ուժ տալ, պատրաստել ամեն մի անհրաժեշտ համար և լուծման սպասել հանդամանքների հաջող դասավորման դեպքում։ Բայց քաղաքականությունից պիտի անցնել դործի։ Թուրքահայերը պիտի հիշեն միշտ, որ իրենց աղատագրության գործը՝ նախ իրենց գործը պիտի լինի»[2]։

Այս տողերից, անշուշտ, չպետք է եզրակացնել, թե Ալ. Մյասնիկյանը արևմտահայությանը մեկուսի ըմբոստացման կոչ էր անում։ Նա խնդիր էր դնում, որ արևմտահայերն իրենք պետք է որոշեն, թե որ հանդամանքներում ինչպես վարվեն։

Բոլշևիկները քննադատում էին երիտթուրքերի նեղ, վերնաշերտային հեղափոխությունը և ցույց էին տալիս, որ նրանց տիրապետության տակ գտնվող ժողովուրդները, այդ թվում նաև արևմտահայերը, իրենք պետք է լուծեն իրենց ազգային ու սոցիալական խնդիրները՝ համատեղ պայքարի ու Թուրքիայի կատարյալ դեմոկրատական վերակառուցման միջոցով։

Ելնելով Օսմանյան կայսրության զարդացման տվյալ մակարդակից, բոլշևիկները գտնում էին, որ այդ երկրում ազդային

1 Ալ. Մյասնիկյան, նշվ. աշխ., էջ 239։
2 Նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 243։

1 Ալ. Մյասնիկյան, նշվ. աշխ., էջ 246։
2 Նույն տեղը, էջ 398։

հարցի լուծման առաջին քայլերը կարող են լինել ինքնավարությունը կամ ֆեդերացիան, ընդ որում նրանց առաջարկած ավտոնոմիան ու ֆեդերացիան որոշակիորեն տարբերվում էին բուրժուական շրջանների պահանջած ավտոնոմիայից ու ֆեդերացիայից։ Եթե բուրժուական շրջանները տեղական ժողովուրդների կամ վարչական միավորների համար նախատեսում էին նեղ իրավունքներ, ապա բոլշևիկները պահանջում էին նրանց տալ լայն իրավունքներ։

Բոլշևիկները գտնում էին, որ ժողովուրդների ազատագրման համար ազգային հարցի հետ միասին պետք է լուծել նաև հողային հարցը, ընդ որում, ի տարբերություն բուրժուական շրջանների, որոնք բավարարվում էին սահմանափակ միջոցառումներով, նրանք պահանջում էին հասարակական արմատական փոփոխություններ ու վերակառուցումներ։ Բոլշևիկները ազգային հարցի վերջնական լուծումը համարում էին ինքնորոշումը, իսկ հողային հարցինը՝ ազգայնացումը։

Պետք է նշել, որ հայ բոլշևիկները, վարելով ազգային կուսակցությունների դեմ քաղաքական պայքար, թույլ էին տալիս նրանց հանդեպ սխալ արտահայտություններ։ Ստ. Շահումյանը, օրինակ, 1916 թ. դեկտեմբերին գրած իր «Ազգային հարցը և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան» հոդվածում ասում էր, որ հնչակյան և դաշնակցական կուսակցությունների քաղաքականությունը հայ ազգի համար ստեղծել է «միմիայն դժբախտություն կոտորածներ ու ավերումներ»[1]։ Հազիվ թե կարելի է համաձայնվել նման պնդման հետ։ Անշուշտ, այդ կուսակցությունները ունեցել են սխալներ, հաճախ ճիշտ չեն առաջնորդել իրենց ժողովրդին, բայց այդուհանդերձ չի կարելի անտեսել, որ նրանք նպաստել են հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության վերելքին, կազմակերպել են նրա պաշտպանությունը, դիմադրավել են թուրք-քրդական ազաներին, ստիպել որ մեղմեն հայ գյուղացիների հանդեպ գործադրվող բռնությունները, որոշ տեղերում նույնիսկ ազատել են նրանց ֆեոդալական կնճռոտումներից։ Հնչակյաններն ու դաշնակցականները հրապարակել են պարբերականներ, պրոպագանդել են ժամանակի առաջավոր-դեմոկրատական գաղափարները հայերի մեջ

1 Տե՛ս Ստ. Շահումյան, երկ., հ. 2, էջ 408։

և օժանդակել նրանց հասարակական զարգացմանն ու քաղաքական հասունացմանը։ Միանգամայն սխալ է, երբ հայ բոլշևիկները արևմտահայերի ջարդերի պատճառը համարում էին հայ ազգային կուսակցությունների կամ հայդուկների գործունեությունը։ Արդեն հանրահայտ է, որ հայոց կոտորածները կազմակերպում էին թուրքական տիրակալները, իսկ կուսակցություններն ու հայդուկները պաշտպանում էին իրենց ժողովրդին, դիմադրավում էին նրանց։

«Սպեցիֆիկներ»

«Սպեցիֆիկները» («Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն») հակասական կարծիք հայտնեցին երիտթուրքական հեղաշրջման մասին։ Նրանց կուսակցության «Շեփոր» թերթի թղթակից էլվեսը պարբերականի առաջնորդողում հեղաշրջումից քիչ անց գրում էր, որ դա հեղափոխություն չէ։ «Սուլթանական աբսոլյուտիզմի կրճատումը հօգուտ իշխան Սաբահեդդինի և նմանների մինիստրական պորտֆելների— ոչ-ֆորմ է, որ գալիս է պետության ավելի հուսալի ձեռքերում դնելու, ուժեղացնելու, խլելով նրա ղեկը սուլթանիզմի հին սերունդից՝ նորին տալու համար... Այնպես որ Թուրքիայում տեղի է ունեցել հեղափոխություն առանց հեղաշրջման,— այսինքն բարենորոգում»[1]։ Էլվեսը գտնում էր, որ հեղաշրջումը չի խախտել պետության հիմքերը, լավագույն դեպքում հուշակել է «մի խրճճուկ սահմանադրություն— ժողովրդապետության մի կարիկատուրա»[2]։

Թղթակիցը թեև չէր անդրադառնում արևմտահայության դրությանը, բայց ելնելով այդ բնութագրումներից, պիտի ենթադրել, որ նրա կարծիքով հեղաշրջումը համարյա չի բարելավել այն։

Այլ էր սակայն Դավիթ Անանունի գնահատականը երիտթուրքական հեղաշրջման մասին։ «Ռուսահայերի հասարակական զարգացումը» գրքում նա հայտարարում էր, որ այն սահմանա-

1 «Շեփոր», 1908, № 10, էջ 2։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 3։

դրությունն պարզևեց երկրին, «բոլոր ցեղերն էլ գոհ էին նոր վիճակից»[1]։

«Սպեցիֆիկները» 1908 թ. հետո արևմտահայությանը հուզող ազգային ու ազրարային կենսական հարցերի մասին չհայտնեցին հատուկ տեսակետներ։ Բայց նրանց տեսաբան Դավիթ Անանունը 1913 թ. դաշնակցության «Նոր հոսանք» ամսագրում հանդես եկավ «Ազգային հարցը և դեմոկրատիան» վերնագրով հոդվածաշարով, ուր շարադրեց իր կուսակցության հայացքները ընդհանրապես ազգային հարցի մասին։ Նա գտնում էր, որ կապիտալիստական հասարակարգի մեջ նրա լուծումը պիտի փընտրել ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մեջ[2]։ Դա հիմնավորում էր նրանով, որ պատմական հանգամանքների բերումով բազմաթիվ երկրներում զանազան ազգեր խառնվել են իրար։ Անհնար է նրանց անջատել միմյանցից և հարցը լուծել տերիտորիալ սկզբունքով։ Ուստի, ազգային խնդրի լուծման համար պետք է հիմք ընդունել «ոչ թե տերիտորիայի սկզբունքը, այլ ազգային պատկանելության գիտակցությունը (ընդգծումը՝ Դ. Ա.)»[3]։ Հարցի այդպիսի լուծման դեպքում չի խզվի ազգային ներքին կապը, այսինքն՝ բանվորներին ու գյուղացիներին բուրժուաներին, հողատերերին ու տիրատերներին միացնող կապը։ Դա կնպաստի նաև այն բանին, որ ազգը կկարողանա ազգովին լուծել իր խնդիրները։

«Սպեցիֆիկների» տեսաբանը նշում էր, որ ազգային հարցի լուծման համար անհրաժեշտ է ստեղծել լեզուների իրավահավասարություն, միևնույն պետության տարածքում բնակվող ազգերը «ահմանազատել» իրարից, ստեղծել «պետական գործառնություն կատարող» ազգային մարմիններ, ազգային կուլտուրական ավտոնոմիաներ և նրանց իրավունք տալ, որ իրենք վարեն ազգային ներքին գործերը և մայրենի լեզվով զարգացնեն իրենց մշակութային կյանքը։ «Ազգային-կուլտուրական ավտոնոմիան,— գրում էր նա,— այն հաջող համադարմանն է, որ լուծում է նաև ազգային փոքրամասնության պահանջների հար-

1 Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. III (1901—1918), Վենետիկ, 1926, էջ 510։

2 Տե՛ս «Նոր հոսանք», 1913, № 2, էջ 312։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 365։

ցը և վերջ է տալիս այն իրավացի արտոնյալին, թե մեծամասնությունը, կամա թե ակամա, ճնշում է նրա ազգայնությունը»[1]։

Դ. Անանունը գտնում էր, որ հայերն ունեն ազգային-կուլտուրական ավտոնոմիա՝ Ռուսաստանում 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը (Պոլոժենիե), իսկ Թուրքիայում՝ Ազգային սահմանադրությունը։ Բայց դրանք պետք է զարգացնել և կատարելագործել, քանի որ գտնվում են սադմնային վիճակում[2]։

«Ազգային կուլտուրական-ավտոնոմիայի» եվրոպացի տեսաբանները նշում էին, որ բանվորներին պետք է բաժանել ըստ ազգությունների և դնել նրանց իրենց ազգային ղեկավարությունների տակ։ Այդ ղեկավարությունները, կապված լինելով միմյանց հետ ֆեդերատիվ սկզբունքներով, պետք է կազմակերպեն իրենց բանվորների ընդհանուր քաղաքական և տնտեսական պայքարը։ Նրանք հայտարարում էին, որ ստեղծված ֆեդերատիվ մարմնի որոշումները պետք է պարտադիր լինեն առանձին ազգային կոմիտեների համար։ Բայց եթե մի ազգային կոմիտե համաձայն չէ կենտրոնական մարմնի որոշման հետ, նա կարող է հետ կանչել կամ փոխարինել իր ներկայացուցչին։ «Ուրիշ խոսքով՝ ծանրության կենտրոնը գտնվում է ազգային կազմակերպությունների մեջ. այդ կազմակերպությունները սուվերեն են»[3]։

Ղեկավարվելով եվրոպական իր ուսուցիչների այդ դրույթներով, Դ. Անանունը հայ բանվորներին քարոզում էր մոտավորապես հետևյալը. «Եթե դու ուզում ես լավ սոցիալիստ լինել, դու պետք է նախ և առաջ լավ ազգասեր լինես։ Եղիր նախ լավ հայ, ապա կլինես լավ բանվոր։ Պաշտպանիր նախ քո ազգը, ապա կլինես լավ բանվոր։ Պաշտպանիր նախ քո ազգը, ապա կպաշտպանես քո դասակարգը»[4]։

«Սպեցիֆիկները» ազգային հարցի լուծման այս տեսությունը մշակել էին ոչ թե մի երկրի, այլ բոլոր բազմազգ երկրների համար։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ ազգային հարցը միևնույն սկզբունքներով պետք է լուծվեր նաև Ռուսաստանում ու Թուրքիայում, տարածվելով թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ հատվածների վրա։

1 «Նոր հոսանք», 1913, № 2, էջ 367։

2 Տե՛ս նույն տեղը։

3 Սա. Ճաճուլյան, Եվժ, հ. 2, էջ 420։

4 Նույն տեղը, էջ 424։

Ստ. Շահումյանը իր մի շարք աշխատություններում, հատկապես «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» գրքույկում հանգամանորեն վերլուծեց սպեցիֆիկների այդ տեսությունը և մերժեց այն։ Նա ցույց տվեց, որ մարքսիստները ելնելով կոնկրետ պայմաններից, կարող են ընդունել ազգերի թե՛ ինքնավարությունը, թե՛ ֆեդերացիան և թե՛ ինքնորոշումը։ Բայց նրանք վերջին հաշվով ունեն «միայն մի հատ ընդհանուր և պարտադիր սկզբունք, մի հիմնական կշռաչափ. դա մարդկության տնտեսական զարգացման և առաջադիմության շահերն են, որոնց հետ ներկայումս ներքին, անբաժանելի կապով կապված են բանվոր դասակարգի միջազգային ազատագրական շարժման շահերը։ Այդ է դերադույն սկզբունքը, մեր կրիտերիումը»[1]։

Ստ. Շահումյանը նշում էր, որ ներկա դարաշրջանում, տնտեսական ու քաղաքական զարգացման հետևանքով, ազգերը դնալով ավելի ու ավելի են մերձենում, կապվում ու կապակցվում միմյանց։ Անհրաժեշտ է նպաստել այդ ընդհանուր պրոցեսին, իսկ անջատման պահանջը պետք է պաշտպանել միայն բացառիկ դեպքերում։ Ով պրոպագանդում է ազգերի տարանջատում, նա պրոպագանդում է բուրժուական նացիոնալիզմ և հանդես է գալիս պրոլետարական ինտերնացիոնալիզմի դեմ։ Իրեն մարքսիստ հայտարարող Դ. Անանունը ըստ էության «ծառայում է միանգամայն բուրժուական նացիոնալիզմին՝ ընդդեմ պրոլետարական ինտերնացիոնալիզմի»[2]։ Նրա քարոզած ազգային-կուլտուրական ավտոնոմիան վնասակար է, քանի որ բուրժուական-նացիոնալիստական ոգի է մտցնում կուլտուրական գործի մեջ[3]։

Նա քննադատեց նաև Դ. Անանունի ազգային կազմակերպչական սկզբունքները, որոնք բանվորներին, բաժանելով ըստ ազգությունների, առաջարկում էին վարել դասակարգային կռիվ՝ իրենց ազգային կազմակերպությունների ղեկավարությամբ։ Նա նշում է իր ասելիքը գերմանական մարքսիստ Վիլհելմ Լիբկնեխտի այն անընդունելի խոսքերով, թե «մեզ, սոցիալիստներիս համար գոյություն չունի ազգությունների խնդիրը։ Մենք

1 Ստ. Շահումյան, *Երկ.*, հ. 2, էջ 381։

2 Նույն տեղը, էջ 398։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 409։

ճանաչում ենք միայն երկու ազգություն, մի կողմից՝ կապիտալիստների, բուրժուազիայի, իշխող դասակարգերի ազգությունը, իսկ մյուս կողմից՝ պրոլետարների, բախտից հալածվածների բանվոր դասակարգի ազգությունը... Բոլոր երկրների բանվորները կազմում են մի ազգություն՝ հակառակ մյուս ազգության, որը նույնպես մի է բոլոր երկրներում»[1]։

Ստ. Շահումյանը մատնանշեց, որ «սպեցիֆիկների» ղեկավարի ազգային-կուլտուրական ավտոնոմիայի տեսությունը նոր խոսք չէ, այն առաջադրվել է դեռ 1899 թ. Ավստրիայում, Բրյունի պարտայտագում, երբ դեռ չկար ռուս մարքսիստների ազգային ծրագիրը։ Այն բխում է հրեական բունդի ոգուց և պատահական չէ, որ 1903 թ., երբ ռուս մարքսիստները մերժեցին այն, մշակելով իրենց պրոլետարական ազգային ծրագիրը, բունդականները հեռացան մեր կուսակցությունից[2]։

Արևմտահայ ազգային ուժերի համախմբման գաղափարը և փորձերը

Ազգային ուժերի համախմբման կոչը հանրահայտ կոչ է։ Բուրժուազիան հաճախ է օգտագործել այն, ներկայացնելով իր դասակարգային շահերը որպես համազգային և ձգտելով իր քաղաքական նպատակներին ծառայեցնել ժողովրդի բոլոր կարողությունները։ Բայց արևմտահայ իրականության մեջ բուրժուազիան աշխատում էր ազգային ուժերի համախմբման կոչը ծառայեցնել ոչ միայն այդ նպատակին, այլև արևմտահայության ֆիզիկական գոյության պահպանության գործին։ Բանն այն է, որ թուրքական կառավարության զուլումի ու ձուլումի քաղաքականությունը դնալով ավելի ու ավելի էր սաստկացնում

1 Ստ. Շահումյան, *Երկ.*, հ. 2, էջ 425։

2 *Սույն աշխատության ձեռագիրը 1985 թ. «Հայաստան» հրատարակչության կողմից ուղարկվել է գրախոսության, եղել է Մ. Հ. Քոլարի մոտ, որն օգտագործել է այն և հրատարակել, առանց կատարելու համապատասխան վկայակոչումներ։ Կարծում ենք, որ ընթերցողը Մ. Հ. Քոլարի «Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос» (Ереван, 1988г.) աշխատության 170, 171, 185, 187, 189, 192—195, 206—211 և մեր ուսումնասիրության 342—347, 357—358, 362, 369—373, 375—383 էջերում նույնությունների հանդիպելիս, հավի կաճի այդ հանգամանքը։*

արևմտահայերի հալածանքները, մղում նրանց դեպի անողոք ու լիակատար կործանում։

Դրությունը վատթարանում էր նաև նրանով, որ հայ հասարակական-քաղաքական խավերը, բուրժուական կուսակցություններն ու կազմակերպությունները իրար դեմ վարում էին անդիջում կռիվներ և, ձգտելով որքան հնարավոր է հեղինակազրկել ու վարկաբեկել միմյանց, բարդում էին իրար վրա գործած ու չգործած մեղքեր։ Նրանք ավելի էին շիկացնում մթնոլորտը, երբ կռիվը պարբերականներից տեղափոխում էին փողոց և երբեմն ավարտում մարդասպանությամբ։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ նմանօրինակ վարքագիծը չլատում էր ազգային ուժերը, օգնում թշնամուն։

1890-ական թվականների կոտորածներից հետո արևմտահայ ազգային ուժերի համախմբման գաղափարը ստացավ ավելի մեծ հնչեղություն, մանավանդ, երբ 1896 թ. Վանում հասարակական-քաղաքական տարբեր ուժերը միավորվելով, դիմագրավեցին թշնամուն և գործնականորեն ապացուցեցին այդ միավորման արդյունավորությունը։ Հասարակական-քաղաքական տարբեր գործիչներ, տարբեր խավեր, տարբեր կուսակցություններ ու կազմակերպություններ այժմ սկսեցին ավելի լայնորեն սրոպագանդել այդ գաղափարը։

Գաղութահայության զանգվածները, տեսնելով, որ դաշնակցական ու հնչակյան կուսակցությունների թեժ կռիվներից տուժում է համազգային գործը, առաջարկեցին նրանց վերջ տալ այդ ամենին և պայմաններ ստեղծել ազգային ուժերի միավորման համար։ Այսպես, 1900 թ. ապրիլի 15-ին Նյու Բրիթենի (ԱՄՆ) հայերը գրում էին «Դրոշակի» և «Մարտի» խմբագրություններին. «Ներկա րոպեին, ուր պետք է բոլոր հայ ուժերը եղբայրաբար համախմբված ձեռք ձեռքի ուված առաջ տանեն Հայրենիքի փրկության գործը, սկսած են զիրար ամբաստանել և անձնական կուսակցական, վատ կիրքերու և սխալականության թատերաբեմ դարձնել հեղափոխության սուրբ գործը»։ Ապա շարադրելով այդ վարքագծի տխուր հետևանքները, շարունակում էին. «Նյու Պրիթենի հայ հասարակությունը կը պահանջե երկու կուսակցություններեն և անոնց ղեկավարներեն հանուն Հայրենիքի և ճշմարտության ու արդարության, որ փութան կազմելու անկախ ու չեզոք ազգայիններե բաղկացյալ ընկերական Պատվո ատյան, որ լիազոր պաշտոն ունենա քննելու երկու կուսակցությանց և վարիչներու իրար վրա բարդած ամբաստանությունները, որպեսզի ճշմարտությունը հրապարակ գա և վերջ դրվի ներկա վատ ու քանդիչ «ուղղության»[1]։ Նման կոչերով այդ կուսակցությունների կենտրոններին դիմեցին նաև Կրետեի, Կիպրոսի, Բոստոնի, Սելեմի, Ուայթնսուլի և այլ գաղթօջախների հայերը[2]։

Ազգային ուժերի համախմբման կոչով հանդես եկան նաև արևմտահայ ազգային-ազատագրական շարժման վետերանները։ 1906 թ. Անդրանիկը դիմեց «բոլոր հայ հեղափոխական զինվորներուն», ուր նշելով հայրենիքի օրհասական վիճակը, պահանջում էր՝ ժողովրդի փրկության համար նրա բոլոր խավերը պետք է համախմբվեն։ Նա ցույց էր տալիս, որ «թշնամին թողուլ և ներքին մանր մունր հաշիվներով զբաղվել, ոճիր է, Հայրենիքի մահն է»[3]։ Իր կոչի վերջում Անդրանիկը գրում էր. «ժամանակն է, որ սթափվինք, սեղմենք մեր շարքերը, ազատության գործը շատ դժվարին գործ մը դարձած է. մեծ ուժի կը կարոտի, ազգովին քով քովի գանք և այդ մեծ ուժը կազմենք... զորացնենք մեր կամքը, և վստահ ըլլանք որ կփրկվինք»[4]։

Այդ նույն ժամանակ ազգային ուժերի համախմբման կոչով հանդես եկավ հայ ազատագրական շարժման մի այլ վետերան՝ թուրքական բանտից նոր միայն փախած Մեծն Մուրատը (Համբարձում Պոյաճյան)[5]։ «Հնչակում» հրապարակած «Ավելի լավ է ուշ, քան երբեք» հոդվածում նա ասում էր, թե ժամանակով Փա-

1 Տե՛ս «Մարտ», 1900, № 25։

2 Տե՛ս նույն տեղը, 1901, № 28։

3 «Ռազմիկ», 1906, սեպտեմբերի 20, № 93։

4 Նույն տեղը։

5 Համբարձում Պոյաճյանը ծնվել է Հաճընում 1860 թ.։ Տեղի դպրոցն ավարտելուց հետո 1885 թ. մեկնում է Կ. Պոլիս և ընդունվում պետական բժշկական ուսումնարանը։ 1886 թ. մտնում է Հարմոյան Զագրյանի հիմնած «Հայոց հայրենյաց միության» մեջ, որը Թուրքն Խանազատի ջանքերով կապվում է հնչակյան կուսակցության հետ։ 1890 թ. Մուրատը այլոց հետ միասին կազմակերպում է Կ. Պոլսի Գում Գափուի նշանավոր ցույցը։ Օսմանյան իշխանությունների հետապնդումներից ազատվելու համար նա փախչում է Հունաստան, ապա մեկնում Կովկաս (նրա գլուխը գնահատված էր 2000 ոսկի)։ 1892 թ. մտնում է Թուրքիա, իսկ 1893 թ. բարձրանում Սասուն և Մ. Տամատյանի հետ ղեկավարում ապստամբությունը։ Սուլթանական իշխանությունները այդ ապստամբության ճնշումից հետո ձերբակալում են նրան, փակում Բրի-

րիղ, ինքն ստացել է բազմաթիվ նամակներ, որոնցում հեղինակները խնդրում և առաջարկում են իրեն՝ միջամտել «կուսակցությանց մեջ միություն կամ համերաշխություն առաջացնելու համար»։ Ընդառաջելով նրանց, Մուրատը դիմում է հայ ժողովրդին՝ «միահամուռ հեղափոխական գործին փարելու և խնդրել կուսակցությանց վարիչ մարմիններին, որպեսզի մեր ցրված ուժերը ընդհանուր թշնամու դեմ համերաշխելու կամ միացնելու գաղափարին զարկ տան և աշխատեն իրականացնել այդ։ Եվ որպեսզի այդ ցանկալի գաղափարը օր առաջ մարմին ստանա, կրկին ու կրկին կը խնդրեմ, որ հայ հեղափոխական կուսակցությանց վարիչ մարմինները միջոցներ ձեռք առնեն կազմելու հայ հեղափոխական կոնդրես մը, որու մասնակցեն

լիսի բանտում, այնուհետև տեղափոխում Տրիպոլի բանտը (Լիբանան)։ Դատապարտում են գնդակահարության, ապա փոխում են դատավճիռը 101 տարվա բանտարկության։ 1906 թ. հնչակյանները Մուրատին, նրա քրոջ ակտիվ մասնակցությամբ, փախցնում են բանտից և տանում Փարիզ։ 1907 թ. նա մեկնում է Եգիպտոս և նոյեմբերի 10-ին Կահիրեում կազմակերպված բազմամարդ միտինգում հանդիպում իր վաղեմի բնկեր Մ. Տամատյանին։ Ազատության երկու գինվորները ներկայանում են ժողովրդին «ձեռք ձեռքի տված» («Լուսաբեր», 1907, նոյեմբերի 19 (№ 447)։ Նախապես խոսում է Մ. Տամատյանը, բնութագրելով Մուրատի սխրագործությունները։ Ապա հանդես է գալիս Մուրատը. «Անոր երեսը բեմի վրա խանդավառ հիացումով լեցուց ամենքը, ժողովուրդը 5 վայրկյան ծափահարեց իր հերոսը» (Մշակ», 1908, փետրվարի 9 (№ 32))։ Բնութագրելով հայության դժնդակ կացությունը, նա եզրափակում է. «Եթե մինչև վերջ պիտի քաշշտենք սորուկի այս անարդ կյանքը, ավելի լավ է մեռնիլ, քան ապրիլ» (նույն տեղը)։ Այնուհետև Մուրատի և Մ. Տամատյանի միջև տեղի են ունենում պաշտոնական բանակցություններ, որի հետևանքով 1907 թ. նոյեմբերի 24-ին «Կենդրոնի երկու կուսակցությանց— Հնչակյանության և Վերակազմիալության միջև գործակցության դաշինք» (Սիրվարդ, Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճյան), Կյանքն ու գործունեությունը, Փրովիտանս, 1955, էջ 89)։ 1908 թ. Մուրատը Եգիպտոսից մեկնում է Ամերիկա (Նյու Յորք) և հայ կուսակցություններին համերաշխության ու համագործակցության կոչ հղում։ Այդ նույն թվին վերադառնում է Փարիզ, իսկ երիտթուրքական հեղաշրջումից հետո՝ օգոստոսի 14-ին, մեկնում Կ. Պոլիս։ 1908 թ. դեկտեմբերին Գողանի սանջակի կողմից ընտրվում է երիտթուրքական պառլամենտի անդամ, ուր հետևողականորեն պաշտպանում է արևմտահայության շահերը։ 1915 թ. հուլիսի 24-ին Կեսարիայում իթթիհատական դահիճները հողոտեցին նրան։ Մահից առաջ նա հայտարարեց. «Ազատության և արդարության համար կռվողները կախաղաններէ չեն վախենար։ «Ափսոս, որ դենք չի վերցուցինք, ապստամբության չի դիմեցինք, կռվի դաշտ չրնկանք...»։ Եվ հպարտորեն քայլում է դեպի կախաղան։

անխտիր հայ ժողովրդյան մեջ գործող բոլոր կուսակցությանց ներկայացուցիչները»[1]։

Մուրատը հույս էր հայտնում, որ իր կոչն իզուր չի անցնի, նշելով թե «ինչպես որ մեր ճնշված, սորուկ ժողովուրդը՝ յուր անտանելի դրությունը ազատելու համար՝ ուրիշ ելք չունի, բացի հեղափոխական ճանապարհեն, նույնպես ալ մեր հեղափոխական գործող մարմիններն այժմ իրենց վրա ինկած պարտականությունը լիովին կատարած լինելու և իրենց նպատակին հասնելու համար, ուրիշ ճամբա չունին, բացի միութենեն կամ համերաշխութենեն։ Իսկ եթե ոչ, եթե չըսեմ, թե անհնար կլինի հայկական դատի լուծումը, գեթ խիստ կդժվարանա, որուն համար պատմության առաջ պատասխանատու պիտի մնան հայ հեղափոխական կուսակցությունները»[2]։

Հարցի քննարկմանը գործուն մասնակցություն ունեցան նաև արևմտահայ լիբերալ-դեմոկրատական շրջանները։ Ա. Չոպանյանը, ջերմորեն պաշտպանելով համախմբման գաղափարը, նշում էր, որ նրա իրականացմանը խանգարում են կուսակցությունները և քննադատում էր նրանց, հատկապես դաշնակցականների պառակտողական վարքագիծը։ Հրապարակախոսը գրտնում էր, որ դաշնակցությունը միայն այն ժամանակ կնպաստի համախմբմանը, երբ ջախջախի իր շարքերում թաքնված իժերին, «որոնք գլխավոր պատճառը կկազմեն ազգային ուժերու պառակտումին»[3]։ Ա. Չոպանյանը ցույց էր տալիս, որ հայը հայի դեմ ավելի շատ է կռվում, հայը հային ավելի շատ է սպանում, քան իրեն հարստահարող ու հալածող թուրքին։ «Այո, ազգ մը, որ այսպիսի կենաց և մահու րոպեին մեջ ինքզինքը ըզբաղեցուցած է միայն զրազված՝ փոխանակ իր բուն թշնամիին դեմ միահաղույն ցցվելու, այդպիսի ազգ մը անարժան է ազատության»[4]։ Ա. Չոպանյանը խնդիր էր դնում, որ կուսակցությունները եթե չեն էլ կարող միանալ, գոնե համագործակցեն, օրհասական պահերին խորհրդակցեն միմյանց հետ և օգնեն իրար։ Նա զարմանք էր հայտնում, որ հայ կուսակցությունները վեր-

---

1 «Հնչակ», 1906, № 9—10, էջ 85—86, տե՛ս նաև «Իրավունք», 1907, ապրիլի 21, № 29, «Ազգ», 1907, մայիսի 18։

2 «Ապագա», 1907, մայիսի 5, № 47։

3 Տե՛ս «Անահիտ», 1900, № 9—11, էջ 247։

4 Նույն տեղը, 1903, № 8, էջ 11։

ձում են համագործակցել այլազգի ընդդիմադիր ուժերի հետ, իսկ իրարից խուսափում են[1]։

Հրապարակախոսը ցանկանում էր, որ 1906 թ. հիմնված «Փարիզի հայկական միությունը», Կահիրեի «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը» և «Բաքվի հայկական միությունը» կամ համաձուլվեին, կամ համագործակցեին միմյանց հետ և, կենտրոն ունենալով Կահիրեն, ղրաղվեին հայերի ոչ միայն նյութական օժանդակությամբ ու կուլտուր-լուսավորական, այլև ազգային-ազատագրական խնդիրներով[2]։ Միաժամանակ նա ուզում էր հայ սոցիալիստական ուժերն էլ առանձնանային ու ամփոփվեին «ուրույն ու զուտ բանվորական կուսակցության մը մեջ»[3]։

Արփ. Արփիարյանը ողջունեց համազգային միության ստեղծման գաղափարը, հայտարարելով, որ քաղաքական անկախությունից զրկված ժողովրդի համար նրա իրագործումը շատ կարևոր է։ Նա գտնում էր, որ այդ միության ստեղծման համար պետք է հավաքվել ազգային համաժողովի, որին պիտի մասնակցեն ոչ միայն կուսակցությունների ներկայացուցիչները, ինչպես պնդում էր Մինաս Չերազը, այլ հայության բոլոր շրջանների պատվիրակները[4]։

Արփ. Արփիարյանը նշում էր, որ համազգային ղեկավարությունը պետք է գտնվի Փարիզում և իրագործի հետևյալ ֆունկցիաները. նյութապես օգնի Հայաստանում բնակվող հայերին, քաջալերի նրանց տնտեսական ու կուլտուրական զարգացումը, կապեր ստեղծի հայրենիքի ու գաղթօջախների միջև, մերձենայի ու ամրապնդի ԱՄՆ-ի ու Եվրոպայի հայկական կենտրոնների հարաբերությունները, հետևի Եվրոպայի դիվանագիտությանը և ընտրի հայերի «շահերուն համաձայնող ուղղություն մը»։ Այդ ղեկավարությունը պետք է ունենա նվիրակներ, որոնք այցելելով հայաբնակ վայրերը, քարոզեն նրա նպատակները, հավաքեն միջոցներ և այլն[5]։

1 Տե՛ս «Անահիտ», 1902, № 7, էջ 162։

2 Տե՛ս նույն տեղը, 1906, № 8—9, էջ 184—185, «Լուսաբեր», 1905, № 67։

3 Տե՛ս նույն տեղը։

4 Տե՛ս «Լուսաբեր», 1905, հուլիսի 15, № 93։

5 Տե՛ս նույն տեղը, ապրիլի 1, № 50։

Հրապարակախոսի կարծիքով, ազգային միության ղեկավարությունը պետք է հանձնել Մեծն Մուրատին, որը, օգտագործելով իր հեղինակությունը, շատ բան կարող է անել։ Ընդ որում նա շեշտում էր, որ ինքը Մուրատին դիտում է ոչ թե իբրև դիկտատոր, այլ իբրև ազնիվ ու նվիրված հեղափոխական։ Եթե Մուրատն արդարացնի ժողովրդի հույսերը, լավ, եթե ոչ՝ մեր «աղաւոթքյունը մեզ կվերապահենք»[1]։

Արփ. Արփիարյանը գտնում էր, որ եթե ազգային ուժերը կարողանան միանալ և ստեղծել համազգային ղեկավարություն, ազգի «փրկության արևածագը ողջունած պիտի ըլլանք», եթե չկարողանան այդ անել, «ոչ թուրքը մեղադրենք, ոչ Եվրոպան։ Ամեն մարդ իր բրածը կքաշե, նույնպես ամեն ազգ ալ»[2]։

Հետագայում նա ավելի էր շեշտում ազգային ուժերի համախմբման անհրաժեշտությունը։ Իր ողբերգական մահից երկու օր առաջ «Լուսաբերի» համար գրած առաջնորդողում կանխագուշակում էր, որ վաղ թե ուշ Ռուսաստանն ու Թուրքիան պատերազմելու են իրար դեմ։ Հայը համակրելու է ռուսին։ Թուրքը դա լավ գիտենալով, հաղթի թե պարտվի, բնաջնջելու է հային։ Անհրաժեշտ է, որ պատրիարքարանը, կուսակցությունները և չեզոքները լրջորեն մտահոգվեն այդ մասին։ Արդյոք նրանք չե՞ն կարող «համագումար մը, նիստ մը ընելով խորհիլ և խորհրդակցել՝ Հայաստանի համար ռուս և թուրք պատերազմի մը հավանական հետևանքներուն վրա»[3]։

Մ. Փորթուգալյանը նույնպես արտահայտվեց ազգային ուժերի համախմբման օգտին։ Սակայն գտնում էր, որ համախմբումը կարող է կատարվել միայն համանման գաղափարակիցների միջև։ Նա հակադրում էր հայրենասիրությունը ընկերվարությանը և հայտարարում, որ դրանց միջև չի կարող լինել միավորում։ Ով ցանկանում է համախմբվել հայրենասիրության հողի վրա, նա պետք է հրաժարվի ընկերվարության գաղափարից։ «Ինչպես բնական օրենքով հակառակ տարրերը,— գրում էր Մ. Փորթուգալյանը,— չեն տարաբաղադրվիր, օրինակ, ջուրն ու յուղը, նույնպես և բարոյական օրենքով տարբեր գաղափարներն ու որոշ սկզբունքները չեն միախառնվիր, որպես հայրե-

1 Տե՛ս «Լուսաբեր», 1906, դեկտեմբերի 29, № 311։

2 Նույն տեղը, 1905, դեկտեմբերի 9, № 155։

3 Տե՛ս «Լուսաբեր», 1908, փետրվարի 20, № 485, «Մշակ», 1908, մարտի 9, № 54։

նախրությունն ու աշխարհաքաղաքացիական ընկերվարությունը»[1]։ Ավելի կոնկրետացնելով հարցը, նա դաշնակցական ու հնչակյան կուսակցություններին առաջարկում էր, որ եթե նրանք ուզում են ստեղծել ազգային ուժերի միավորում, ապա պետք է հրաժարվեն իրենց ընկերվարական, սոցիալ-դեմոկրատական ծրագրերից։

Մ. Փորթուգալյանի դիրքում կանդնեց Բոստոնում հրատարակվող «Արաքս» շաբաթաթերթի խմբագիր Վարդ Շահենին (Հովհաննես Հակոբյան)[2]։ Նա դեմ էր այն տեսակետին, որ պետք է հրավիրել համազգային համագումար, Եվրոպայում ստեղծել համահայկական վարչական կենտրոն և նրան օժտել ազգային նավը ղեկավարելու ֆունկցիաներով։ Նա գտնում էր, որ այդ կենտրոնը պետք է ստեղծել Հայրենիքում՝ Ամենայն հայոց կաթողիկոսի հովանու տակ[3]։

Արևմտահայ ազգային ուժերի համախմբման գաղափարը թափանցեց նաև պահպանողական շրջանները և հարկադրեց նրանց ևս ասել իրենց որոշակի կարծիքը։ «Կոչնակը» թեև հայտարարեց, որ ավելի հեշտ է լուծել բալկանյան կնճռոտ խնդիրը, քան «իրարու մոտ բերել մեր ազգին ցրվյալ անդամները»[4], այնուամենայնիվ գտնում էր, որ կարելի է հաղթահարել այդ խոչընդոտը։ Դրա համար անհրաժեշտ է մի կողմ դնել «հիմարական վիճաբանությունը»[5], ստեղծել համազգային միություն, առնելով նրա մեջ «հայ անունը կրող ամեն այր, կին, կամ մանուկ»[6] և միասնաբար ոտքի կանգնել «փրկելու համար մեր հայրենիքը իր հարստահարիչներուն ձեռքերեն»[7]։

Պահպանողական Մ. Ս. Գաբրիելյանը նշում էր, որ «Հայաստանը կամ ազգը փրկելը այնքան դյուրին գործ մը չէ»[8], Բայց գտնում էր, որ հնարավոր է։ Նա առաջարկում էր ստեղծել երկու կենտրոն կամ վարչություն՝ մեկը Թուրքիայի, մյուսը՝ արտասահմանի հայության համար։ Թուրքիայում այդ վարչությունը պիտի տանի խոհեմ ու զգույշ քաղաքականություն, կազմակերպի և միավորի ազգի ուժերը, ստեղծի համազգային հզոր միություն[1], իսկ արտասահմանում այն պետք է ղեկավարի բոլոր երկրների հայության աշխատանքները, միավորի ու համախմբի դրանք, հետևի միջազգային կացությանը և հարմար պահին առաջ քաշի Հայկական հարցը, սպասարկի և օգտակար լինի Ամենայն հայոց կաթողիկոսին ու Կ. Պոլսի պատրիարքին, մի խոսքով՝ անի «այն ամենը, զոր արտասահմանի հայությունը կարող է և պարտավոր է ընել հայկական դատին հաջողության համար և օգուտ հայ ժողովրդի վերածնության»[2]։

Սակայն հեղինակը երկյուղում է, որ այդ կենտրոններում կարող են մտնել որոշ անցանկալի երիտասարդներ և ծառայեցնել դրանք «հօգուտ մասնավոր կուսակցության մը»[3]։ Բայց և հույս էր հայտնում, որ այդ կենտրոններում կարող են մտնել «շնորհքով և բանիբուն երիտասարդներ» և ծառայեցնել դրանք իրենց նպատակին[4]։ Բոլոր դեպքերում Ս. Գաբրիելյանը ցանկանում էր, որ արևմտահայ համախմբումները ունենային խաղաղ բնույթ և չհակադրվեին տիրապետող կարգերին ու բարքերին։

Պահպանողական մի այլ ներկայացուցիչ՝ Մինաս Չերազը նշում էր, որ հայերն իրենց փրկության հույսը պետք է դնեն իրենց վրա։ Նրանք պետք է կաթողիկոսի գլխավորությամբ հավաքվեն համահայկական ժողովի, ընտրեն իրենց ղեկավարությունը, ստեղծեն համազգային միություն, մշակեն իրենց ծրագիրը և հարմար պահին գործադրեն այն։ Նա պահանջում էր, որ հայ բոլոր կուսակցությունները, թերևս դաշնակցականների նախաձեռնությամբ, Փարիզում հավաքվեին համագումարի, համաձուլվեին, կազմեին մեկ կուսակցություն և գործեին սոսկ այն ժամանակ, երբ բարենպաստ պայմաններ կլինեին։ Իսկ մնացած ժամանակ պետք է լռել՝ նորանոր աղետների ու կոտորածների առիթ չտալու համար։ Չերազը գրում էր, որ համահայկական ղեկավարության մեջ պետք է մտնեն խելոք ու ողջա-

---

1 «Արմենիա», 1898, սեպտեմբերի 3։
2 Տե՛ս «Արաքս», 1906, № 11, էջ 81։
3 Տե՛ս նույն տեղը, 1906, № 11, էջ 82։
4 Տե՛ս «Կոչնակ», 1901, հուլիսի 6, № 30, էջ 234։
5 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 27, № 33, էջ 258։
6 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 22, № 28, էջ 218։
7 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 27, № 33, էջ 258։
8 Նույն տեղը, հունիսի 29, № 29, էջ 227։

1 Տե՛ս Մ. Ս. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 198։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Տե՛ս «Կոչնակ», 1901, հունիսի 29, № 29, էջ 227։
4 Տե՛ս նույն տեղը։

միտ, ուշիմ ու հեռատես մարդիկ, որ կարողանան ճիշտ կողմնորոշվել հանգամանքներում և առաջ տանել ազգային նավը փոթորկահույզ օվկիանոսներում։ «Մեզի պետք են իշխան Մելքոն խանի, Գողոս փաշա Նուպարի և Հովհաննես խան Մասեհյանցի պես խորհրդատուներ»[1]։

Ուշադրավ է, որ ազգային ուժերի համախմբման կողմնակիցները նշմարում էին նաև այն վայրը, ուր պետք է գտնվեր նրանց կենտրոնը։ Ա. Զոպանյանը հարմար էր համարում Կահիրեն, Ա. Արփիարյանը՝ Փարիզը, «Իրավունք» թերթը՝ Թուրքիայի կենտրոնական քաղաքներից մեկը։ Այս վերջինը միաժամանակ գտնում էր, որ համահայկական կենտրոն պետք է ունենալ նաև արտասահմանում, քանի որ ազգային ղեկավար մարմինը Թուրքիայում չի կարող բարձրացնել ու առաջ տանել բոլոր հարցերը։ Մի շարք խնդիրներ ի վիճակի է արծարծել միայն արտասահմանի կենտրոնը։ Բացի դրանից, պատմությունը ցույց է տվել, նշում էր պարբերականը, որ Թուրքական բռնությունների պայմաններում հայերն իրար մատնելով ու դավաճանելով կարող են տապալել ժողովրդի համախմբման, հայրենիքի ու ժողովրդի ազատության գործը[2]։

***

Ժողովրդական դանդվածների և հասարակական շրջանների ճնշման տակ արևմտահայ ազգային ուժերի համախմբման հարցով սկսեցին զբաղվել նաև հայ բուրժուական կուսակցություններն ու կազմակերպությունները։ Հանդես եկան ամենից առաջ վերակազմյալ հնչակյանները։ Դա պայմանավորված էր նրանով, որ համախմբման գաղափարը համընկնում էր նրանց սկզբունքին. նրանք, ինչպես ասվեց, դեմ էին արևմտահայության դասակարգային բաժանման, մանավանդ միմյանց հակադրման տեսակետին, քարոզում էին ազգային համերաշխություն, ազգային ուժերի համախմբում և կուսակցությունների միաձուլում։

Ելնելով այն բանից, որ դաշնակցությունն իրեն համարում էր համազգային կուսակցություն և հաշվի առնելով նրա գերիշ-

1 «Լուսաբեր», 1908, փետրվարի 6, № 179։

2 Տե՛ս «Իրավունք», 1907, հունվարի 10։

խող դիրքը հայ իրականության մեջ, վերակազմյալները 1896—1901 թթ. միավորման հարցով մի քանի անգամ դիմեցին հենց այդ կուսակցությանը։ 1896 թ. սեպտեմբերի 12-ին նրանք նամակ ուղարկեցին Ժնևի դաշնակցության պարագլուխներին, իսկ սեպտեմբերի 23-ին ստացան պատասխան, ուր ասվում էր, որ միավորման գաղափարը մոտ է «թե մեր և թե մեր ընկերների սրտին»[1]։ Սակայն դրա համար անհրաժեշտ է, որ դուք վերջնականապես կազմակերպվեք իբրև կուսակցություն և «հայտարարեք հնչակյան կուսակցության մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին»[2]։

1896 թ. հոկտեմբերի 22-ին վերակազմյալները կրկնեցին իրենց առաջարկությունը, բայց ստացան նույն պատասխանը։ Նոյեմբերի 23-ին նրանց նորընտիր կոմիտեն վերստին փորձեց շարունակել միավորման բանակցությունները, սակայն դաշնակցականները նորից մերժեցին, պատճառաբանելով այս անգամ, թե նրանց ղեկավարներից մեկը՝ Արփիար Արփիարյանը, իբր, թուրքական լրտես է, թե հնչակյանները վարկաբեկում են իրար, իսկ դաշնակցականների համար անպատվաբեր է միավորվել վարկաբեկվածների հետ։

1897 թ. մարտի 21-ին վերակազմյալները նույն առաջարկությամբ մի անգամ էլ դիմեցին դաշնակցականներին։ Վերջիններս պատասխանեցին, թե կընդունեն նրանց առաջարկությունը, եթե Ա. Արփիարյանին հեռացնեն իրենց կուսակցությունից և ճանաչեն դաշնակցության ապակենտրոնացման սկզբունքը։ Ա. Արփիարյանը, ցանկանալով օժանդակել ընդհանուրի գործին, պատրաստակամություն հայտնեց կամավոր հեռանալ վերակազմյալների շարքերից։ Սակայն վերջիններս չընդունեցին նրա հրաժարականը, ինչպես և դաշնակցականների ապակենտրոնացման պայմանը։ Նրանք եկան այն եզրակացության, որ դաշնակցությունը «ոչ թե հնչակյան ու դաշնակցական կուսակցությունների միությունը ցանկացող է, այլ հնչակյան կուսակցության կործանումին կը հետապնդի»[3]։

1898 թ. դաշնակցության ընդհանուր ժողովում, երբ քննվեց վերակազմյալների առաջարկությունը միավորման մասին, որոշվեց մերժել այն, պատճառաբանելով, որ նրանք չեն ներ-

1 Տե՛ս «Մարտ», 1897, դեկտեմբերի 20, № 7։

2 Տե՛ս նույն տեղը։

3 Տե՛ս նույն տեղը, 1898, մայիսի 7, № 11։

կայացնում ամբողջ հնչակյան կուսակցությունը, չունեն հեղափոխական ոգի, վարկաբեկում են դաշնակցականներին, գրգռում են հայության արևելահայ ու արևմտահայ հատվածներն իրար դեմ, ունեն անվստահելի ղեկավարներ և այլն[1]։ Այդպիսով. երկու կուսակցությունների միջև ոչ միայն միություն չկայացավ, այլև վիհը գնալով ավելի խորացավ։ Նրանք իրենց պարբերականները լցրեցին փոխադարձ մեղադրանքներով, բարդելով միմյանց վրա եղած ու չեղած մեղքեր։

Այդուհանդերձ, վերակազմյալները շարունակեցին ազգային ուժերի համախմբման փորձերը։ 1901 թ. փետրվարին նրանց օրգան «Ձայն հայրենյացը» հնչակյաններին, դաշնակցականներին, չեզոքներին, անտարբերականներին, լուսավորչականներին, բողոքականներին և հայության այլ բեկորներին առաջարկեց դեն գցել փոխադարձ ատելությունը, ոխը, թշնամությունն ու կասկածամտությունը և միավորվել, քանզի այդ կերպ կարելի է փրկել «հայության կյանքը և Հայաստանի ապագան»[2], թերթը զատապարտում էր բոլոր նրանց, ովքեր քարոզում էին դասակարգային տեսություն, ընկերվարություն, հակակղերականություն, գտնելով, որ դրանք օբյեկտիվորեն դառնում են թուրքին «բաժանեա զի տիրեսցես» քաղաքականության անդիտակից գործակիցները[3]։

Ապա հայտարարում էր, որ իր «կոչումն է ազգային դրոշին տակ հավաքել ամեն դավանանքի, ամեն դասակարգի և ամեն վիճակի հայեր, այն խորին համոզումով, թե ազգային գոյության համար մղված պայքարին մեջ յուրաքանչյուր հայ յուր հատուկ դերն ունի կատարելու ու թեև հայությունը անկեղծորեն բաժանված ըլլա կրոնական համոզումներով, փիլիսոփայական և ընկերվարական տեսություններով, քաղաքական դավանանքներով, կրնա միանալ և պետք է միանա հայրենասիրության դրոշին տակ»[4]։ Այնուհետև առաջարկում էր, որ անհրաժեշտ է փորձված ու խելացի անձանցից ընտրել համազգային մի կազմակերպություն։ «Այս է ահա ազգին ամենեն կենսական պետքը»[5]։

1 Տե՛ս «Դրոշակ», 1899, № 4, էջ 6, № 9, Հավելված, էջ 38։
2 «Ձայն հայրենյաց», 1901, № 70։
3 Տե՛ս նույն տեղը, 1901, № 72։
4 Տե՛ս նույն տեղը։
5 Նույն տեղը, № 83։

Այդ նույն ժամանակ ազգային ուժերի համախմբման կոչերով հանդես էր գալիս նաև վերակազմյալների «Նոր կյանք» պարբերականը։ Իր «Միության խնդիրը» խորագիրը կրող առաջնորդողում այն ուզում էր «ճշմարիտ ու եղբայրական միություն»։ Իսկ այդպիսի «Միությունը որպեսզի իրական ու արդավանդ ըլլա՝ պետք է որ կատարվի անկեղծորեն, անշահախնդրորեն, եղբայրորեն, առանց պայմանի, այլ երկու կողմերեն հավասար զոհողություններով»[1]։

Վերակազմյալները հայտարարում էին, թե միության համար իրենք պատրաստ են ջնջել «հնչակյան կուսակցություն» անունը, դադարեցնել նրա պաշտոնական հրատարակությունները, վերջ տալ կենտրոնական վարչության գործունեությանը, չստանձնել ապագա կենտրոնական վարչությունում որևէ պաշտոն[2]։ Ապա գտնում էին, որ այդպիսի միության համար հարկ չկա անդրադառնալ անցյալին, որևէ մեկի վրա բարդել մեղադրանքներ։ «Մենք ամբողջ հանցանքը կը շալկենք։ Ահա մենք բարձրաձայն կհայտարարենք՝

— Մենք ենք հանցավորը»[3]։ Միայն թե միության գործը թող գլուխ գա։ Կատարելով ավելի գործնական քայլեր, վերակազմյալների կենտկոմը 1901 թ. նոյեմբերի 23-ին Լոնդոնից նամակ հղեց դաշնակցության Արևմտյան բյուրոյին, որի մեջ առաջարկում էր ջնջել «Նոր կյանք», «Մարտ», «Դրոշակ» անունները՝ իրրև տարբեր կուսակցությունների օրգաններ և հրատարակել մի այլ անունով թերթ՝ որպես միացյալ օրգան, չպահպանել կուսակցություններից որևէ մեկի հին անունը, կոչել նրանց նոր անունով, համատեղ հավաքվել և մշակել նորաստեղծ կուսակցության սկզբունքները և այլն[4]։

Սակայն դաշնակցականներն այս անգամ էլ մերժեցին վերակազմյալների առաջարկությունները։ Այնժամ նրանք փորձեցին վերամիավորվել հին հնչակյանների հետ։ Նրանք հասան այն բանին, որ 1902 թ. Լոնդոնում երկու կողմերը հավաքվելով համագումարի, որոշեցին դադարեցնել բանավեճերը և միավորվել։ Ընտրեցին նոր կենտրոն, որի մեջ մտան Սագուն (Սա-

1 «Նոր կյանք», 1901, № 15, էջ 227։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը, № 20, էջ 298։
4 Տե՛ս նույն տեղը, № 21, էջ 306։

ղաթել Գևորգյան), Համբարձում Արզումանյանը, Սիմոն Հովյանը (հներից), Վահրամ Գրիգորյանը, Ալեքսան Արզոյանը և Վահան Շահրիմանյանը (վերակազմյալներից)։ Վերակազմյալներն ու հնչակյանները հրաժարվեցին իրենց նոր անվանումներից և վերականգնեցին հնչակյանների հին անունն ու ծրագիրը[1]։

1902 թ. ապրիլի 1-ին «Հնչակը» գրում էր, որ կուսակցության երկու թևերը միավորվելով արդեն ստեղծել են ընդհանուր ղեկավարություն, որոշել են դեն գցել ոխը, վրիժառությունը, քինախնդրությունը և հայտարարում են, որ աչքերը հառած ապագային, «անկեղծորեն, առանց որևէ հետին մտքի, պինդ սեղմում ենք միմյանց ձեռքերը և գրկախառն համբուրվում միմյանց հետ»[2]։ Ապա նրանք հայտարարում էին, որ իրենք այլևս չեն բաժանվելու, չեն կրկնելու հին սխալը, քանզի համոզվել են, որ իրենց ուժը միասնության մեջ է։ «Մենք միասնում ենք, որովհետև այդ է պահանջում կիսավեր դարձած, տանջված, չարչարված մեր սիրելի, մեր պաշտելի Հայրենիքի ազատության գործը, որովհետև հարկավոր է, վերջապես, կրտրել, փշրել այն շղթան, որ կապել կաշկանդել է նրան դարերից ի վեր»[3]։

«Հնչակը» հույս էր հայտնում, որ այդ վերամիավորմանը կարձագանքեն նաև արմենականները։ 1902 թ. մայիսի 1-ին այն գրում էր. «Միության ձայնին գալիս են արմենական եղբայրները, որոնք այլևս անպետք և վնասակար են գտնում ուրույն մարմին կազմել և ուրույն, անօգուտ գործունեություն ունենալ, քանի որ նպատակը, որի համար կռվելու ելած էին՝ միևնույնն էր երկու տարբեր անունների համար էլ, քանի որ միևնույն հայրենիքն էր, որ կոչված էին ազատել միևնույն ընդհանուր թշնամու ձեռքից, քանի որ այլևս ամեն պատճառ դադարած էր անջատ մնալու, գալիս են և միանում հնչակյան եղբայրներին, միասին տանելու համար ամենի համար մեկ եղող թշնամու դեմ պարզված կռիվը»[4]։

1 Տե՛ս Պատմություն սոց.-դեմ. հնչակյան կուսակցության, 1887—1962, հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 272—279։

2 Տե՛ս «Հնչակ», 1902, № 1, էջ 2։

3 Նույն տեղը, տե՛ս նաև «Նոր կյանք», 1920, № 1, էջ 1, № 2, էջ 17, «Ձայն Հայրենյաց», 1902, № 131։

4 «Հնչակ», 1902, մայիսի 1, № 2, էջ 10։

Սակայն այդ հույսերը չիրականացան։ Ավելին՝ շուտով հընչակյանների երկու թևերի միջև վերսկսվեցին տարաձայնությունները, որոնք գնալով ընդունեցին ավելի սուր բնույթ և հասցրին պառակտման։ Հնչակյանները հավաքվելով համագումարի, կուսակցությունից արտաքսեցին վերակազմյալների լիդերներ Մ. Տամատյանին, Ա. Ոշականուն, Ալ. Արզուբանին (Վահին), Վահան Շահրիմանյանին, Վահրամ Գրիգորյանին, Կարապետ Փափազյանին և այլոց[1]։ Այդ որոշումը հիմնավորեցին նրանով, որ դրանք նպատակադրվել էին հափշտակել կուսակցության ղեկավարությունը։ Համագումարն ընտրեց նոր կենտրոն, որի մեջ մտան Ա. Նազարբեկյանը, Խանազատը, Կաճառյանը, Սիմոն Տաղրին, Արամ Աչըգպաշյանը և Ղամբարյանը։

Հնչակյան թևերի միջև պայքարը չսահմանափակվեց սոսկ պարբերականներով։ Այն ընթացավ նաև մարդասպանությամբ։ 1903 թ. հոկտեմբերին, այսինքն՝ հնչակյանների 3-րդ համագումարի օրերին, Լոնդոնում միաժամանակ սպանվեցին Բաքվի հընչակյան կազմակերպության պատգամավորներ Սաղաթել Գևորգյանն ու Արամ Գրիգորյանը (Համո), Բաթումի պատգամավոր Տիգրան Իշմիրյանը։ Որոշ ժամանակ անց Շվեյցարիայում ծանր վիրավորվեց Ա. Նազարբեկյանը, իսկ Ամերիկայում՝ «Արիատարած Հայաստանի» խմբագիր Ս. Սապահ-Գյուլյանը[2]։ Վերակազմյալները «որոշել էին 300 հնչակյանի տեռորի ենթարկել և դրանով մաքրել քաղաքական դաշտը՝ «Նոր կուրսը» իրականացնելու համար»[3]։ Ծավալելով վրիժառության կրքերը, հին հնչակյաններն իրենց հերթին սպանեցին վերակազմյալներից Մխե Շահենին և Գարեգին Չիլչյանին (Օդեսայում)։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին որոշակի բանակցություններ տեղի ունեցան նաև դաշնակցականների ու արմենականների միջև։ Օգտվելով այն հանգամանքից, որ 90-ական թվականների կոտորածների հետևանքով արմենականները թուլացել էին, դաշնակցականները ձգտում էին նրանց ձուլել իրենց կուսակցության մեջ և այդ ուղղությամբ հասան որոշ հաջողության[4]։ Սակայն տեսնելով, որ արմենականների հիմնական

1 Տե՛ս Պատմություն սոց.-դեմ. հնչակյան կուսակցության, հ. Ա, էջ 276։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 288, Ա. Պարթինյան, նշվ. աշխ., էջ 182—184, Խ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., գիրք երկրորդ, էջ 564։

3 Խ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 564։

4 Տե՛ս «Հայրենիք», 1923, № 10, էջ 128, 132, № 11, էջ 122։

դանգվածը, այնուամենայնիվ, շարունակում է գոյատևել, դաշնակցության ղեկավարները փորձեցին համագործակցել նրանց հետ և աստիճանաբար ներարկել իրենց քաղաքականությանը։ Այդ նպատակով նրանք դաղարեցրին միջկուսակցական պայքարը և սկսեցին որոնել մերձեցման եղրեր։

1902 թ. Վանի դաշնակցության ղեկավար Վարդգեսը (Հովհաննես Սերենկյուլյան) հայտարարեց, որ ինքը հակառակ է մասնակի ցույցերին ու կռիվներին և կողմնակից է ամբողջ ժողովուրդը ոտքի հանելու դաղափարին։ Նրա հայացքները դրականորեն ընդունեցին արմենականները։ Արտակ Դարբինյանը, նկատի առնելով այդ ժամանակահատվածը, իր հուշերում գրում է. «Եղավ պահ մը, որ արմենականներու մասնաժողովը եկավ այն եղրակացության, թե կարելի է դաշնակցության հետ համագործակցություն ստեղծել, որուն պիտի հաջորդեր երկու կազմակերպություններուն միաձուլումը։ Վարդգեսին Վան գտնված ժամանակ տեղի չունեցավ բնավ անհամաձայնություններ կամ պայքարներ, որոնք հաջորդ տարիներուն մինչև արյունահեղության պիտի հասնեին»[1]։

Սակայն 1904 թ., երբ Վարդգեսը ձերբակալվեց, երկու կուսակցությունների միջև հարաբերությունները խիստ լարվեցին։ Վանի դաշնակցական կազմակերպության նոր ղեկավարները՝ Վահան Փափազյանը, Իշխանը, Սարգիս Բարսեղյանը և ուրիշներ, հակառակ արմենականների, գտնում էին, որ կյանքի վերափոխման բանալին պետք է փնտրել ոչ թե ժողովրդին կրթելու, դաստիարակելու և հեղափոխության նախապատրաստելու, այլ հեղափոխական ցույցերի ու ընդվզումների մեջ։ Հետագայում արմենականների ղեկավարները փորձեցին շարունակել համագործակցության բանակցությունները դաշնակցականների հետ, բայց ապարդյուն։

***

1905 թ. ռուսական հեղափոխությունը մեծ ներգործություն ունեցավ ինչպես Թուրքիայի, այնպես էլ արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքի վրա։ Այն ցույց տվեց, թե ինչպես պետք է պայքարել բռնակալության դեմ, ինչ խոչընդոտներ

1 Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 132։

պետք է հաղթահարել նրա տապալման համար։ Տեսնելով համախմբված պայքարի արդյունավետությունը Ռուսաստանի մի շարք կենտրոններում և գիտակցելով միավորման անհրաժեշտությունը սուլթանական գարշապարի տակ ընկած արևմտահայության համար, հայ բուրժուական կուսակցական առանձին կազմակերպություններ սկսեցին մերձենալ, համագործակցել և նույնիսկ միաձուլվել։ Այսպես, 1906 թ. դեկտեմբերին Պարսկաստանի հնչակյան գործադիր հանձնախումբը և դաշնակցության կենտրոնական կոմիտեն ստորագրեցին «Համերաշխ գործունեության ծրագիր» և համարեցին այն պարտադիր «երկու կուսակցությունների Պարսկաստանում եղող մարմինների համար»[1]։

Քիչ անց 1907 թ. սկզբներին բանակցությունների մեջ մտան դաշնակցական ու հնչակյան կուսակցությունների ավելի ընդարձակ շրջանները և համաձայնվեցին դադարեցնել իրա դեմ պայքարը։ 1907 թ. դիմելով իրենց ստորադաս կազմակերպություններին, «Հայ հեղափոխական դաշնակցության Արևելյան բյուրոն»[2] և «Հնչակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցության Ռուսաստանի ու Կովկասի պատգամավորական ժողովը» հայտարարում էին, որ իրենք կազմել են «մի լիազոր մարմին՝ մշակելու միջոցներ միանգամ ընդմիշտ վերջ տալու միջկուսակցական անմիտ բշնամական հարաբերություններին և եղբայրասպանություններին»[3]։

Զգտնելով ավելի առաջ տանել ձեռնարկված գործը, 1907 թ. մարտի 16-ին հնչակյանների կենտրոնական վարչությունը դիմեց դաշնակցության ընդհանուր ժողովին, առաջարկելով երկու կուսակցությունների համագործակցություն աշխարհի բոլոր մասերում։ Սակայն դաշնակցականները առժամանակ լռեցին, իսկ հունիսի 15-ին պատասխանեցին, թե դա դեռ վաղ է։ Նույն թվի դեկտեմբերին Փարիզում բանասեր Կարապետ Բասմաջյանը իր տանը կազմակերպեց հնչակյանների ղեկավար Մեծն Մուրատի ու Ս. Սապահ-Գյուլյանի և դաշնակցության ներկայացուցիչ Ակնունու (Խ. Մալումյան) հանդիպումը՝ նպատակ ունենալով

1 Տե՛ս Ս. Սապահ-Գյուլյան, նշվ. աշխ., էջ 197։

2 Դաշնակցության Արևելյան բյուրոյի մեջ մտնում էին Կովկասի, Ռուսաստանի, Իրանի և Փոքր Ասիայի «Կարասխան—Խարբերդ—Տիգրանակերտ» գծից արևելք ընկած վայրերի կազմակերպությունները։

3 Տե՛ս «Դրոշակ», 1907, № 3, էջ 41։

մերձենալ երկու կուսակցությունների նաև մնացած շրջանների կազմակերպություններ։ Սակայն դաշնակցության ներկայացուցիչը մերժեց այդ հրավերը, առաջարկելով հնչակյաններին՝ մասնակցել նրանց համար անցանկալի Փարիզի առաջիկա կոնգրեսին. երկու կուսակցությունների միջև վիճն ավելի խորացավ[1]։

Ռուսական հեղափոխության տարիներին վերակազմյալները նոր փորձեր կատարեցին դաշնակցականների հետ մերձենալու և համագործակցելու ուղղությամբ, բայց վերստին չհասան արդյունքի։ Սակայն հին հնչակյանների հետ նրանք կարողացան որոշ համաձայնության գալ. 1907 թ. աշնանը երկու կուսակցությունները կնքեցին համագործակցության դաշնակցություն, որը թեև չէր վերացնում պառակտումը, բայց զգալիորեն մեղմում էր հակասությունները և շեշտում բռնապետության դեմ համատեղ պայքարի պատրաստակամությունը։ Կողմերը 1907 թ. նոյեմբերի 24-ի իրենց հայտարարության մեջ նշում էին. «Այսօր ուրախությամբ գալիս ենք հայտարարելու, որ հնչակյան կուսակցության և վերակազմյալ հնչակյան կուսակցության միջև «Համերաշխության դաշինք» է կնքված ամեհահայ հեղափոխական գործը շահադրգռող բոլոր անհրաժեշտ և էական խնդիրների մասին»[2]։ Այդ դաշինքը «իրավունք է տալիս հոգեբանական րոպեին միասին հարվածելու ընդհանուր թշնամուն»։ Միաժամանակ նրանք նշում էին, որ «իրենց կուսակցության կազմը և ինքնուրույնությունը պիտի պահեն՝ ազատ իրենց սկզբունքների պրոպագանդայի մեջ»[3]։

1906—1908 թթ. արմենականները ևս որոշակի քայլեր կատարեցին իրենց ուժերի վերադասավորման և գաղափարակից կազմակերպությունների հետ միավորման ուղղությամբ։ 1907 թ. հուլիսի 16-ին «Լուսաբերը» գրում էր, որ Վանում «արմենականներն ու հնչակյանները պիտի միարանին թևրևա, որպեսզի թուրք կանգնին դաշնակցական կուսակցության դեմ»[4]։ Մենք չգիտենք նրանց միավորման մասին Վանում։ Սակայն հայտնի է, որ Բուլղարիայում արմենականները 1907 թ. աշնանը միացան իրենց գաղափարակիցների՝ «Հեղափոխական միության» հետ և կազմեցին «Գաղափարակցական միություն»[1]։

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը հարված հասցրեց արևմտահայ ազգային ուժերի համախմբման փորձերին։ Հայ հասարակական-քաղաքական շրջանները, ենթադրելով, որ հեղաբեկում է սկսվում Թուրքիայի պատմության մեջ և հավատալով, որ այսուհետև համախմբվելու են օսմանյան բոլոր ժողովուրդները, հետ քաշվեցին 1908 թ. առաջ եկած ձեռնարկումներից և փորձեցին հարմարվել նոր պայմաններին։ Որոշ տեղերում նույնիսկ կազմալուծվեցին տարբեր կուսակցական կազմակերպությունների համախմբումներն ու միավորումները։

Բայց քիչ անց, երբ Իթթիհադը ցույց տվեց իր հրեշավոր կերպարանքը՝ ոչ թուրք ժողովուրդներին ձուլելու, նրանց սոցիալական հարստահարումներն ու կեղեքումները շարունակելու ու ավելի խստացնելու վարքագիծը, արևմտահայ ազգային ուժերի համախմբման գաղափարը կրկին մակերես բարձրացավ։ Նրա կենսագործման օգտին վերստին արտահայտվեցին հայ հասարակական բոլոր շրջանները, քաղաքական համարյա բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները, կամենալով յուրաքանչյուրը դարձյալ կատարել այդ համախմբումը իր ղեկավարությամբ։

Պահպանողականները գտնում էին, որ ազգային ուժերի համախմբումը պետք է իրագործել ինչ գնով էլ լինի։ Կ. Պոլսի հայոց պատրիարքը կոչ էր անում՝ ուշադրությունից չհեռացնել «ազգին այս կենսական օգուտը»[2]։ Նա առաջարկում էր հայ պատգամավորներին՝ համախմբման օրինակ ցույց տալ օսմանյան պառլամենտում, փոխադարձ զիջումներով ապահովել «ազգին բարձրագույն շահը»[3]։ Պատրիարքը դատապարտում էր միջկուսակցական կռիվները, ցանկանում էր նրանց վերացումը և կուզեր «տեսնել ամեն կուսակցություն և կազմակերպություն իր սկզբունքին և ուղղության բարձրության վրա և համախմբված ազգին շահին շուրջը»[4]։

1 Տե՛ս Ս. Սպանե-Կյուլպեն, նշվ. աշխ., էջ 205—212։

2 «Հնչակ», 1907, № 11, Հավելված։

3 Նույն տեղը, № 12, էջ 154։

4 «Լուսաբեր», 1907, հուլիսի 16, № 393։

1 1907 թ. նոյեմբերի 14-ին «Լուսաբերը» գրում էր, որ արմենականները «Միութենականներու» հետ մեկ մարմնի պես նոած «Գաղափարակցական միություն» կազմած էին։

2 Տե՛ս «Արարատ», 1914, հունիս, էջ 522։

3 Տե՛ս նույն տեղը։

4 Տե՛ս նույն տեղը, սեպտեմբեր, էջ 799։

«Արարատ» ամսագրի կարծիքով պետք է համախմբվեն ոչ միայն արևմտահայերը, այլև արևելահայերը, կազմեն համազգային հավաքական ուժ և լուծեն իրենց առջև կանգնած կենսական խնդիրները։ «Հասել է պատմական կարևոր ժամը, երբ ռուսահայն ու տաճկահայը միացած պետք է աշխատեն»[1]։

Լիբերալ «Մշակը» նշում էր, որ հայ ժողովրդի դժբախտության գործում մեծ դեր են խաղացել նրա ներքին երկպառակությունները։ Գաղտնիք չէ, որ ազգը տրոհվել է զանազան կուսակցությունների ու խմբավորումների, կրոնական աղանդների, որոնք տարիներ շարունակ իրար դեմ վարել են անզիջում պայքար և իրար տուն քանդել։ Այժմ հասել է ժամանակը, երբ նրանք պետք է համախմբվեն, կազմեն հավաքական ուժ և միասնաբար լուծեն իրենց խնդիրները։ Ուստի՝ «ողջունում ենք ազգային համերաշխության մեծ գաղափարը»[2]։

«Արևելքը» նույնպես դրվատեց ազգային ուժերի համախմբման փորձերը, նշելով, որ այն վերջ կդնի «միջկուսակցական անօգուտ, վրդովեցուցիչ և ջլատիչ պայքարներուն»[3] և նոանդ կհաղորդի հանրօգուտ գործին։ Թերթը դժգոհ չէր, որ կան տարբեր կուսակցություններ, ընդհակառակը՝ շեշտում էր նրանց գոյության անհրաժեշտությունը։ Բայց գտնում էր, որ նրանք ոչ թե պետք է պայքարեն իրար դեմ, այլ համագործակցեն իրար հետ և լուծեն համազգային խնդիրները։ Իսկ հայ ժողովուրդը պետք է «ուժ տա անոնց հարատևության և հզորացմանը»[4]։

Ազգային ուժերի համախմբման գաղափարը պաշտպանեց նաև արևմտահայ դեմոկրատիայի ներկայացուցիչ Գր. Զոհրապը։ Նա նույնիսկ փորձեց ստեղծել հասարակական տարբեր խավերի ու կուսակցությունների գործիչներից, իր խոսքերով ասած, բլոկ, անխախտ թողնելով յուրաքանչյուրի համոզմունքներն ու սկզբունքները։ Գր. Զոհրապը գրում էր. «Խնդիրը զանոնք (իմա՝ կուսակցություններին— Ա. Հ.) իրարու հետ պայքարեցնելու մեջ չէ, այլ հաշտեցնելու»[5]։ Իր նպատակին հասնե-

1 «Արարատ», 1914, ապրիլ, էջ 329։
2 «Մշակ», 1913, նոյեմբերի 14, № 254։
3 Տե՛ս «Արևելք», 1909, դեկտեմբերի 31, № 7220։
4 Տե՛ս նույն տեղը։
5 Ամենագրությունք..., 1910, էջ 228։

լու համար 1910 թ. մարտի 26-ին նա բանաձև ներկայացրեց Ազգային ժողովին, որի մեջ ասվում էր, թե ժողովը «կհրավիրե բոլոր ազգայինները և կուսակցությունները՝ փոխանակ պայքարելու իրարու դեմ՝ եղբայրաբար միանալ ազգային բազմապահանջ ցավերուն առջև»[1]։ Բայց նրա ձգտումները, ինչպես ինքն էր նշում, «որևէ արդյունքի չհանգեցան»[2]։

Ազգային ուժերի համախմբման կոչերով հանդես եկան նաև հայ քաղաքական կուսակցությունները։ 1909 թ. ապրիլին «Բյուզանդիոնը» գրում էր, որ դաշնակցությունը «հորդոր կկարդա հայ քաղաքական կուսակցություններուն ձեռք ձեռքի տալու և հանրության կենսական շահերուն ի պաշտպանություն միաբանությամբ գործելու, որուն նախաձեռնությունն ինքն իր վրա կառնե...»[3]։

Քիչ ուշ վերակազմյալ հնչակյանների վարչությունը դիմեց դաշնակցականներին, նշելով՝ «Մենք ինչո՞ւ հակառակություններ ունենանք իրարու հետ։ Չէ՞ որ միևնույն ազգին զավակներն ենք, որ իրարու քով կապրինք մայր հայրենիքին մեջ։ Մենք, որ իբրև դաշնակցական կամ հնչակյան, միասին ապրեցանք տառապած հայրենիքին մեջ, միասին տանջվեցանք, բանտարկվեցանք, ինչպես նաև միասին կռվեցանք հաճախ, ինչո՞ւ այժմ ալ միասին չգործենք»[4]։

Կուսակցությունների կոչերն ու բանակցություններն ավարտվեցին նրանով, որ 1913 թ. հոկտեմբերին Կ. Պոլսում դաշնակցության Արևմտյան բյուրոն, հին կամ սոց.-դեմ. հնչակյան կուսակցության տաճկական կենտրոնական վարչական մարմինը, Սահմանադրական ռամկավար կենտրոնական ակումբը և վերակազմյալ հնչակյանների կենտրոնական վարչությունը հայտարարեցին, որ այսուհետև համերաշխ կգործեն ազգային հարցերում, համատեղ հանդես կգան օսմանյան պառլամենտի պատգամավորների ընտրությունների ժամանակ, բայց որ ամենաարդիականն է, միասնաբար կգործեն հայկական նահանգների բարենորոգումների իրականացման համար։ «Միջկուսակցական այս համերաշխության կետ նպատակն է,— ասվում էր նրանց

1 Տե՛ս Ամենագրությունք..., 1910, էջ 228։
2 Տե՛ս նույն տեղը, 1911, էջ 33։
3 «Բյուզանդիոն», 1909, ապրիլի 9։
4 «Ձայն հայրենյաց», 1909, № 23։

հայտարարության մեջ,— բոլոր ուժերն ի սպաս դնել հայկական բարենորոգումներուն...»[1]։ Միաժամանակ նշվում էր, որ պետք է վերջացնել տարիներ շարունակ ձգձգվող, ազգային ուժերը պառակտող սին ու վնասակար վեճերը։

Չնայած այդ ամենին, 1914 թ. սկզբներին, երբ հրապարակ եկավ օսմանյան պառլամենտի պատգամավորների ընտրության հարցը, հայ քաղաքական կուսակցությունները վերսկսեցին իրար դեմ պայքարը։ Յուրաքանչյուրը ձգտում էր առաջադրել ու անցկացնել որքան հնարավոր է շատ ներկայացուցիչներ՝ իրենց նպատակին հասնելու համար դաշնակցականները դիմեցին նույնիսկ ահաբեկումների ու ծեծի, իսկ հնչակյաններն ու ռամկավարները 1914 թ. ապրիլին նրանց վերջնագիր ներկայացրին, պահանջելով դադարեցնել այդ ամենը, սպառնալով, որ հակառակ դեպքում 24 ժամ հետո կխզեն բարեկամական հարաբերությունները և չեղյալ կհայտարարեն համագործակցության համաձայնագրերը[2]։ Բայց նրանց վերջնագիրը նշանակություն չունեցավ։

Հայ ազգային ուժերի համախմբման հարցը նոր հնչեղություն ստացավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ ամբողջ սրությամբ դրվեց հայ ժողովրդի լինել կամ չլինելու խնդիրը։ Հասարակական-քաղաքական բոլոր շրջաններն այժմ քան երբեք անհրաժեշտ էին համարում համախմբումը, գտնելով, որ այն կնպաստի գոնե ազգի գոյության պաշտպանությանը։

Արևմտահայ ազգային ուժերի համախմբումը բարդ ու դժվարին գործ էր։ Կային, իհարկե, այդ համախմբման համար իրական պայմաններ։ Հայ հասարակության բոլոր խավերը շահագրգռված էին ժողովրդի պահպանության և հայրենիքի փրկության հարցերով։ Նրանք բոլորը պայքարում էին միևնույն լծի ու վայրագությունների դեմ։ Կուսակցությունների ծրագրերն ու գործելակերպերն ունեին մի շարք նույնություններ և մոտիկություններ։

Բայց արևմտահայ ազգային ուժերի համախմբման ճանապարհին կանգնած էին նաև լուրջ խոչընդոտներ։ Դրա իրագործմանը խանգարում էին թե հայության ցրվածությունը աշխարհով մեկ, թե նրա դասակարգային շերտավորումը, թե տարբեր դասակարգերի իրարամերժ շահերն ու ձգտումները, թե կուսակցությունների ծրագրերի ու գործելաեղանակների տարբերությունները։ Այդ տարանջատող ու բաժանող գործոններն ավելի հզոր դուրս եկան, քան միավորող։ Այդ պատճառով էլ հասարակական տարբեր շրջանների ձգտումներն ազգային ուժերի համախմբման ուղղությամբ ապարդյուն անցան։

Ազգային ուժերի համախմբումը շատ կարևոր էր հայ ժողովրդի համար. այն կնպաստեր արևմտահայության տնտեսական ու կուլտուրական առաջընթացին, կտար նրա ազատագրական պայքարին կազմակերպված բնույթ, թերևս կմեղմեր կուսակցությունների ներհակությունները, կմորիլիզացներ ժողովրդի կարողությունները, կամրապնդեր նրա դիմադրական ճակատը, որի հետևանքով արհավիրքի օրերին համեմատաբար քիչ կլիներ զոհերի թիվը։

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիները փոթորկալի եղան հայ հասարակական-քաղաքական կյանքում։ Տասնամյակներ շարունակ հայկական բուրժուական շրջանները, կապելով արևմտահայության բախտը մեծ տերությունների Թուրքիայի դեմ տարած հաղթանակի հետ, գտնում էին, որ արդեն հասել է բաղձալի ժամը, երբ պատմությունն իր արդար խոսքը պիտի ասի, պիտի վերջ դնի օսմանյան վայրագ տիրապետությանը և հայերին ազատագրի նրա լծից։ Բայց իրերի դրությունը հարկադրում էր նրանց ընտրել տարբեր ստրատեգիա։

Արևմտահայ շրջանները, գտնվելով Թուրքական բռնապետության գարշապարի տակ, հարկադրված եղան կանգնել նրա կողմը, քարոզելով հայ բնակչությանը պաշտպանել օսմանյան հայրենիքը։ Այսպես, Կ. Պոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը հուշագրում էր, որ երբ սկսվեց համաշխարհային պատերազմը, Կ. Պոլսում ենթադրեցինք, որ արևելահայերը կարող են անխոհեմ քայլ կատարել և դրանով լուրջ վնաս հասցնել արևմտահայերին։ Ուստի «1914 թ. հուլիս-օգոստոս ամիս-

---

[1] «Դրոշակ», 1913, № 11—12, էջ 188—189։

[2] Տե՛ս «Մշակ», 1914, մայիսի 3, № 94։

ներուն տոքթ. Ն. Տաղավարյան... Թիֆլիս գնաց իմ հրահանգովս ու հոն տեսակցություններ ունեցավ հայ մտավորական ու խնդահաս անձանց հետ, խնդրելով, որ մեծ զգուշությամբ շարժին, վասնզի իրենց թրքահայ եղբայրներուն կյանքը կրնա վտանգվիլ անխորհուրդ ձեռնարկներով ու ավելորդ ցույցերով։ Տոքթ. Տաղավարյանը ամիսս մը դարձավ բոլորովին հուսահատ, վասնզի հորդորները ոչ մեկ արդյունք ունեցած էին և ռուսահայոց մտայնությունը բոլորովին տարբեր կիվեր»[1]։

Երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, պատրիարքը 1914 թ. հոկտեմբերի 20 (նոյեմբերի 3)-ին հրավիրեց խորհրդակցություն՝ Վահրամ արք. Մանկունու, Համայակ արք. Դիմաքսյանի, Պետրոս Հալաճյանի, Գրիգոր Զոհրապի, Բյուզանդ Քեչյանի, Համբարձում Պոյաճյանի, Վարդգես Սերնկյուլյանի, Տիրան Քելեկյանի, Հարություն Շահրիկյանի, Դավիթ Տեր-Մովսիսյանի, Միհրան Մուրատյանի և այլոց մասնակցությամբ։ Այդ տարբեր հոսանքների ու կուսակցությունների ներկայացուցիչները արձանագրեցին, որ ազգի վիճակը ծանր է և հանձնաբարեցին պատրիարքարանին ու ազգային վարչությանը բարվոք հարաբերություններ մշակել իթթիհադական կառավարության հետ, «շրջաբերական հրահանգ մը ղրկել անմիջապես բոլոր գավառները և հրավիրել ժողովուրդը կատարել իր պարտականությունը»[2]։

Հոկտեմբերի 25-ին պատրիարքն այցելեց ներքին գործերի ու արդարադատության մինիստրներին և հայտնելով, թե հայ ազգը նվիրված է օսմանյան հայրենիքին, հաջողություն ցանկացավ իթթիհադական կառավարությանը։ Նրանք ընդունեցին դա ի գիտություն և խոստացան, որ իրենք կատարյալ բարյացակամ կլինեն հայերի հանդեպ[3]։

Այնուհետև պատրիարքը հայոց գավառական հոգևոր առաջնորդներին հանձնարարեց, որ քարոզեն հայերին կատարելու իրենց պարտականությունները օսմանյան հայրենիքի հանդեպ, տրամադրեն իշխանություններին նյութական միջոցներ, արձագանքեն նրանց կոչերին, նվիրեն մինչև իսկ իրենց կյանքը, եթե

1 Զավեն արքեպիսկոպոս, Պատրիարքական հուշերս. վավերագրեր և վկայություններ, Գահիրե, 1947, էջ 49—50։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 74—75։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 75։

«հայրենիքը անոր պետք ունի»[1]։ Ապա ավելացրեց, որ առաջնորդները հորդորեն հայ ժողովրդին սիրալիր վարվելու իրենց հարևանների հետ, հարգեն նրանց զգացմունքները, օգնեն ու օժանդակեն, զգույշ լինեն իրենց խոսքերի ու վարմունքների մեջ, ափեր չտան թյուրիմացությունների ու վիրավորանքների[2]։

Պատրիարքը իր նվիրվածությունը Իթթիհադի պարագլուխներին ցույց տալու համար նույնիսկ պատրաստակամություն հայտնեց, որ եթե կառավարությունը պատերազմի հետևանքով հարկադրված լինի Կ. Պոլսից տեղափոխվել Կոնիա, ինքը ևս կգնա նրա հետ։ Դա ղոյեց երիտթուրքական ղեկավարներին, որոնք, արք. Զավենի վկայությամբ, շնորհակալություն հայտնեցին «հայրենիքին հանդեպ մեր ունեցած սիրուն և տերության հանդեպ մեր հավատարմության համար, իմացնելով միանգամայն, թե պատրիարքներու մեջ միակն եմ, որ այսպիսի առաջարկ կրերեմ»[3]։

Քիչ ուշ պատրիարքը պատվիրակություն ուղարկեց Կ. Պոլսի գերմանական դեսպանի մոտ՝ հանձնարարելով շնորհավորել նրան նոր տարվա առթիվ և խնդրել Գերմանիայի բարյացակամությունը հայոց հանդեպ։ Դեսպանը պատասխանեց, որ քանի դեռ Գերմանիան ու Թուրքիան դաշնակիցներ են, հայերը չպետք է անհանգստանան։ «Ապահով եղեք, բոլորովին ոչ մեկ հայու քիթը պիտի արյունի, ոչ հոս և ոչ գավառներու մեջ»[4]։

Չնայած դրան, 1914 թ. վերջերին ու 1915 թ. սկզբներին թուրքական իշխանությունները Գերմանիայի ակտիվ պաշտպանությամբ սրի քաշեցին Վասպուրականի ու Էրզրումի մի շարք գավառների հայերին։ 1915 թ. մարտի 31-ին պատրիարքը պատվիրակ ուղարկեց Թալեաթ փաշայի մոտ, փորձելով կանխել կոտորածները։ Թալեաթը պատասխանեց. «Կոտորած չի կրնար ըլլալ գավառներու մեջ, որովհետև կառավարությունը համամիտ չէ»[5]։ Ապրիլի 8-ին պատրիարքը նույն հարցով ինքը գնաց Թալեաթի մոտ։ Վերջինս նրան նույնպես հանգստացրեց,

1 Տե՛ս Զավեն արքեպիսկոպոս, Պատրիարքարան..., էջ 76։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 77։

3 Նույն տեղը, էջ 78։

4 Նույն տեղը, էջ 84։

5 Նույն տեղը, էջ 94։

թե «հայոց դեմ որևէ մասնավոր քաղաքականություն չունի»[1], բայց շարունակից հայաջինջ իր կուրսը։

Պատերազմի տարիներին արևմտահայ լիբերալները ևս հանդես եկան օսմանյան հայրենիքի պաշտպանության քարոզներով և կոչ արեցին հայերին՝ կատարել իրենց պարտքը նրա առաջ։ «Բյուզանդիոնը», հրապարակելով իթթիհադական կառավարության այն հերյուրանքը, թե իբր Ռուսաստանն է եղել նախահարձակը, նա է սկսել պատերազմը Թուրքիայի դեմ, դիմում էր հայերին, որ նրանք կռվի ելնեն և պաշտպանեն հայրենիքը։ Իր առաջնորդողում թերթը գրում էր. «Օսմ. տերությունը մեծ պատերազմի մը ճգնաժամին մասնված է, և մեր ամենուս անկ է կատարել մեր վրա ինկած պարտականությունը»։ Այժմ, երբ թշնամին ոտք է դրել մեր հողի վրա, «ամեն ոք ուրիշ բան չի կրնար մտածել, բայց եթե փութալ պաշտպանել հայրենի երկիրը»[2]։

Պարբերականը հավատացնում էր, որ հայերը «կկատարեն իրենց ինկած անձնավորության բաժինն իբրև սահմանադրական երկրի մը քաղաքացիներ, դիտակից իրենց իրավունքներուն ու իրենց պարտականություններուն, վշտակից պետական ընդհանուր մարմնույն ցավերուն ու տառապանքներուն, և բախտակից անոր հաջողություններուն և ուրախություններուն, մերժելով ամեն անջատողական ձգտում այս կամ այն տարրին կողմե, և պինդ փարելով օսմ. տարրերու համերաշխության դաշին»[3]։

«Բյուզանդիոնը» հայերից նույնպես պահանջում էր բարիդրացիական հարաբերություններ մշակել իրենց մահմեդական հայրենակիցների հետ, ցուցաբերել համերաշխություն, մոռանալ անցյալում եղած տհաճությունները և գործով ապացուցել իրենց նվիրվածությունը երկրին[4]։

Թերթը պարբերաբար տեղեկություններ էր հաղորդում ռազմաճակատից, գնահատում թուրքամետ հոդվածներ, բայց միևնույն ժամանակ չէր լռում կայսրության արևելյան շրջաններում սկսված հայկական ջարդերի մասին։

1 Տե՛ս Զավեն արհեպիսկոպոս, Պատրիարքարան..., էջ 94։
2 «Բյուզանդիոն», 1914, հոկտեմբերի 25, № 5489։
3 Նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը։

Արևմտահայ անկուսակցական դեմոկրատիայի ներկայացուցիչ Գրիգոր Զոհրապը դեռ պատերազմի նախօրյակին կանխազուշակում էր նրա ահավոր հետևանքները հայ ժողովրդի համար։ Արշակ Զոպանյանի հետ այդ թեմայով զրուցելիս նա ասաց. «Վայ հայ ժողովրդին, եթե համաեվրոպական պատերազմ ծագի, Թուրքերը՝ իթթիհատեն ղեկավարված՝ անպատճառ կմիանան Գերմանիային, և Թյուրքահայության համար մահացու վտանգ կա այն ատենն»[1]։

Երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը ու այնուհետև բացվեց ռուս-թուրքական ռազմաճակատը, Գր. Զոհրապը, հավատարիմ մնալով իր ռուսական կողմնորոշմանը, ցանկանում էր Ռուսաստանի հաղթանակը, բայց հաշվի առնելով արևմտահայության բացառիկ ծանր կացությունը, չկոչեց արևմտահայերին ի զեն ընդդեմ Թուրքիայի, ընդհակառակը, լոյալ դտնվեց այն ուժերի հետ, որոնք օսմանյան հայրենիքի պաշտպանության էին քարոզում։

Գր. Զոհրապը լսեց Թուրքիան լքելու և արտասահման տարագրվելու իր բարեկամների խորհուրդներին։ Նա որոշեց մնալ իր ժողովրդի հետ և կիսել նրա ճակատագիրը։ Ուստի այդ խորհրդատուներին պատասխանում էր. «Որու Թողում այս անտեր և անգլուխ ժողովուրդը։ Չէ, փախչել չեմ կրնար, պետք է, պարտքս է մինչև վերջ պատնեշի վրա կենալ»[2]։ Եվ նա մնաց պատնեշի վրա։

Իսկ երբ Իթթիհադը 1915 թ. ապրիլին սկսեց բացահայտ գործադրել իր հայաջինջ ծրագիրը, մայիսի 19-ին Զոհրապը մտավ Թալեաթի մոտ և հայտարարեց՝ հաշիվ կտաք ձեր ոճրագործության համար։ Թալեաթի այն հեգնանքին, թե ով է իրենից հաշիվ պահանջելու, նա պատասխանեց. «Ես, խորհրդականի մեջ իբրև հայ մեպուսի, ձենն հաշիվ պիտի պահանջեմ»[3]։ Հետևյալ օրը երիտթուրքական իշխանությունները Զոհրապին ձերբակալեցին և տանելով Անատոլիայի խորքերը, զազանաբար հոշոտեցին։

Անդրադառնալով կուսակցություններին, նախատես պետք է նշել հետևյալը. երիտթուրքական կառավարությունը, պատրաստ-

1 «Անահիտ», 1930, № 3, էջ 8—9։
2 Ա. Ալպոյաճեան, Անհետացող դեմքեր, Գրիգոր Զոհրապ (իր կյանքը և գործը), էջ 245։
3 Նույն տեղը։

վելով Ռուսաստանի դեմ պատերազմի, դեռ 1914 թ. գարնանից գործակալներ էր ուղարկում Անդրկովկաս՝ հանձնարարությամբ, որ համոզեն երկրամասի ժողովուրդներին, պատերազմի դեպքում, կանգնել Թուրքիայի կողմը և ապստամբվել Ռուսաստանի դեմ։ Նրանք հայտարարում էին, որ Թուրքիան հաղթանակի դեպքում Անդրկովկասի ժողովուրդներին կշնորհի ազգային ինքնավարության և զարգացման լայն հնարավորություններ[1]։

Սակայն երկրամասի ժողովուրդները, հատկապես պրոլետարական առաջավոր ջոկատները, կարականապես մերժեցին ԻԲՔիհադի գործակալների առաջարկությունները և հասկացնել ավեցին նրանց, որ երիտթուրքերը այդ բոլոր բարիքները թող տան իրենց ճիրաններում տառապող ժողովուրդներին, իսկ Անդրկովկասի աղգությունները իրենց բախտը կապել են ռուսական պրոլետարիատի հետ, որը ցարիզմի տապալումից հետո կշնորհի նրանց ոչ թե ինքնավարություն, այլ ավելին՝ ազգային ինքնորոշում, պետություն։

Չնայած դրան, երիտթուրքերը շարունակեցին իրենց քաղաքականությունը։ Զբավարարվելով գործակալների քարոզներով, նրանք փորձեցին հասնել իրենց նպատակին Անդրկովկասի բուրժուական կուսակցությունների ու մահմեդական վերնաշերտերի միջոցով։ ԻԲՔիհադի ղեկավարները նույն առաջարկությամբ դիմեցին դաշնակցությանը և թույլատրեցին, որ այդ կուսակցությունը իր հերթական VIII համաժողովը գումարի Էրզրումում։ Բայց դաշնակցությունը 1914 թ. հուլիսին կայացած իր համաժողովում որոշում ընդունեց՝ ռուս-թուրքական պատերազմի դեպքում պահել չեզոքություն։

Դաշնակցության այդ որոշումից անհանգստացած երիտթուրքական ղեկավարները շուտով մայրաքաղաքից էրզրում ուղարկեցին իրենց նշանավոր գործիչներից մեկին՝ Բեհաեդդին Շաքիրին, հանձնարարությամբ՝ հայերին թեքել Թուրքիայի

1 ԻԲՔիհադի այդ գործունեությունը հանգամանորեն լուսաբանված է սովետահայ պատմաբանների աշխատություններում (տե՛ս Е. К. Саркисян, Экспансионистская политика Османской империи в Закавказье, Е., 1962, Ա. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր., 1965, Մ. Վ. Ազումանյան, Հայաստան 1914—1917, Հր. Ս. Ոսկանյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986)։

կողմը։ Մենք չգիտենք, թե հասնելով էրզրում, նա հայկական որ շրջանների հետ սկսեց վարել բանակցություն։ Սակայն ենթադրում ենք, որ նա կարող էր բանակցել նաև դաշնակցականների հետ, մանավանդ, երբ այդ քաղաքում դաշնակցականները առաջնակարգ դեր էին խաղում։ Գործին տեղյակ Ռուբեն Տեր-Մինասյանը հաղորդում էր, որ 1914 թ. օգոստոսին Բեհաեդդին Շաքիրը ժամանելով էրզրում սկսեց բանակցել հայերի հետ, նպատակ ունենալով պարզել նրանց դիրքը՝ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ։ Նա հայտարարեց, որ Ռուսաստանը և նրա դաշնակիցները չեն կարող դիմանալ եռյակ միությանը, մանավանդ, եթե Թուրքիան էլ հանդես գա նրանց դեմ։ ԻԲՔիհադի ներկայացուցիչը հավաստիացնում էր, որ Թուրքիայի հետևից Անատոլուի դեմ ոտքի կելնեն բոլոր մահմեդականները՝ սկսած Մարոկկոյից, վերջացրած Աֆղանստանով, Կովկասում նրանց կհետևեն նաև վրացիներն ու բոլոր մահմեդականները։ Մեր հաջողությունները, շարունակում էր Բեհաեդդին Շաքիրը, ամբողջապես գտնվում է հայերի ձեռքում։ Եթե նրանք զլխավորեն հակառուսական շարժումը, մենք կկարողանանք հակառակորդին շպրտել կովկասյան լեռներից դեպի հյուսիս։ Այնուհետև՝ Թիֆլիսի, Քութայիսիի, Բաթումի նահանգներից և Տրապիզոնի նահանգի մի մասից կստեղծենք ինքնավար Վրաստան, Բաքվի, Ելիզավետպոլի և Դաղստանի նահանգներից՝ ինքնավար մահմեդական մարզ, իսկ Երևանի, Կարսի նահանգներից, Ելիզավետպոլի նահանգի արևմտյան մասից՝ ինքնավար Հայաստան, միացնելով նրան նաև էրզրումի, Վանի ու Բիթլիսի վիլայեթները[1]։

Հասկանալի է, որ ԻԲՔիհադական ներկայացուցիչը տալիս էր այդ առատ խոստումները ոչ թե հետագայում կենսագործելու, այլ հայերին և Անդրկովկասի ժողովուրդներին միայն խաբելու համար։ Հայերը նրան պատասխանեցին, որ ռուս-թուրքական պատերազմի դեպքում իրենք քաղաքական նպատակներ չեն հետապնդի ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանում, այլ կլինեն լոյալ կամ օրինապահ իրենց պետությունների հանդեպ։ Ապա ավելացրին, որ Թուրքիայի պատերազմը Ռուսաստանի դեմ կլինի միայն բախտախնդրություն, որը սպառնալիք կտակ կդնի Օսմանյան կայսրության գոյության վրա։ Բեհաեդդին

1 Տե՛ս «Геноцид армян...», էջ 296։

Շաքիրը դժգոհ մնաց հայերի պատասխանից և չհասնելով նպատակին, մեկնեց մայրաքաղաք։ Հետագայում Իթթիհադը նոր փորձեր կատարեց հայերին իր կողմը թեքելու համար, բայց հայերը, ունենալով դարերից եկած որոշակի ռուսական կողմնորոշում, մնացին անդրդվելի[1]։

Համենայն դեպս, եթե դաշնակցության Արևելյան բյուրոն հետագայում խախտեց կուսակցության վերոհիշյալ համաժողովի որոշումը, կանգնելով Ռուսաստանի կողմը և հավաքելով կամավորական ջոկատներ Թուրքիայի դեմ, ապա Արևմտյան բյուրոն պահպանեց այն՝ ինչպես կայսրության արևելյան, այնպես էլ արևմտյան շրջաններում։ Թուրքիայի դաշնակցականները դիմագրավեցին Իթթիհադին միայն այն ժամանակ, երբ նա սկսեց իրագործել հայոց ցեղասպանությունը։

Երիտթուրքերը հնչակյաններին բռնությունների ու հալածանքների ենթարկեցին դեռ պատերազմից առաջ։ Պատճառն այն էր, որ նրանք հակաիթթիհադական կոալիցիայի մեջ էին մտել իթթիլաֆականների հետ։ Սակայն երիտթուրքերն իրենց վարքագիծն արդարացնելու համար հնչակյաններին մեղադրեցին «հայրենիքի դավաճանության» մեջ և ձերբակալեցին նրանց ղեկավարներին։ 1915 թ. մայիսի 14 (27)-ին Թուրքական դատարանը 20 հնչակյանների մասին մահավճիռ արձակեց՝ կախաղանի միջոցով, որը գործադրվեց նույն թվի հունիսի 2 (15)-ին Կ. Պոլսի սուլթան Բայազեդի հրապարակում։

Հնչակյան նշանավոր գործիչներից մեկը՝ Փարամազը (Սարգիս Մաթևոսյան) դատավարության վերջին նիստում՝ 1915 թ. մայիսի 14-ին հայտարարեց. թե ինչեր ասես, որ չարեցին հընչակյանները Թուրքիայի բարեփոխման, հայ ու թուրք ժողովուրդների եղբայրության, փոխադարձ վստահության համար, սակայն թուրք տիրակալները ոչ միայն ամլության դատապարտեցին «մեր ահագին ջանքերը, այլև գիտակցարար հետամուտ եղան մեր բնաջնջումին»։ Նրանք քաջալերեցին հայոց ոճիրներն ու հարստահարությունները, ձգտեցին լռեցնել բողոքները և իրենց վարքագիծն արդարացնելու համար հրապարակ նետեցին հնչակյան անկախ Հայաստանի ամբաստանությունը։ «Մենք ո՛չ ներքաղաքական չենք այս երկրին հանդեպ, ընդհակառակը ինքն

[1] Տե՛ս «Геноцид армян...», էջ 297։

է որ կանջատվի մեզմե, չի կրնալով հաշտվիլ մեզ ոգևորող դաղափարներու հետ»[1]։

Փարամազի հետ միասին կախաղան բարձրացվեցին ևս 19 հնչակյաններ՝ Հակոբ Գազազյանը, Գաբրիել Քեշիշյանը, Սրմբատ Գլըճյանը, Ռուբեն Կարապետյանը, Պետրոս Թորոսյանը, Արամ Աչըքպաշյանը և ուրիշներ։ Թուրքական դատարանը նման մահավճիռ արձակեց նաև Ս. Սապահ-Գյուլյանի ու Վարազդատի մասին, որոնք, սակայն, ժամանակին թողել էին Թուրքիան և մեկնել արտասահման[2]։

Իթթիհադը ջախջախեց նաև հնչակյան կազմակերպությունները։ Իսկ նրանք, որոնք շարունակեցին այս կամ այն կերպ դոյատևել, պատերազմի տարիներին չկարողացան կազմակերպել հայերին հակակառավարական ելույթների։ Հնչակյաններից քչերը մասնակցեցին 1915 թ. հայկական ղոյամարտերին և ավելի քչերը ղեկավարեցին դրանք։ Նրանք, ինչպես ցույց կտրվի ստորև, ակտիվ գործունեություն ծավալեցին այլ վայրերում, մասնավորապես Անդրկովկասում։

Հայ սահմանադրական ռամկավարների կուսակցությունը ռուս-թուրքական պատերազմի սկզբում կանգնեց օսմանյան հայրենիքի պաշտպանության դիրքերում և կոչ արեց հայերին կատարել իրենց զինվորական պարտքը։ Այսպես, 1914 թ. նոյեմբերի 1 (14)-ին իր «Փոթորիկ» առաջնորդողում կուսակցության օրգան «Վան-Տոսպ» շաբաթաթերթը գրում էր. «Ամեն օսմանցի միակ նշանարան մը պետք է ունենա— կատարել պարտականությունը խղճի մտոք։ Մենք հայերս ցարդ ցույց տված ենք հավատարմություն և ուղղամտություն— այդ կպահանջվի մեզմե այժմ ալ։ Ոչ ռազմիկներեն ալ կսպասվի ամենակատարյալ լրջախոհություն և հաստատուն հավատք դեպի վարիչ շրջանակներու անկեղծությունն ու կարողությունը»[3]։

Շաբաթաթերթը մի այլ համարում հայտարարում էր, որ պետք է «հրաժարել ընդմիշտ, պատերազմի միջոցին, ներքին վրդովիչ քաղաքականութենե, այս կսովորեցնե ներկա պատե-

[1] *Հիսունամյակ...*, էջ 300, տե՛ս նաև Սիրվարդ, Փարամազ, Փրովիանս, 1954, էջ 105։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 295—296։

[3] «Վան-Տոսպ», 1914, նոյեմբերի 1, № 40—89, էջ 435—436։

բազմի ընթացքին եվրոպական տերություններու որդեգրած ուղղությունը»[1]։

Պատերազմի սկզբում ռամկավարները դեմ էին նաև կամավորական շարժմանը։ Նրանց նշանավոր դեմքերից մեկը՝ Ա. Դարբինյանը հուշագրում էր, որ այժմ ստեղծվել են այնպիսի պայմաններ, երբ տիրապետող վերնաշերտերը ավելի հեշտությամբ կարող են իրագործել հայկական ջարդեր, քան Աբդուլ Համիդ II-ի կառավարման տարիներին, որ «կամավորական շարժումը պիտի բորբոքե թուրքերու մինչև այժմ զսպված բարբարոսական կիրքը և այս անգամ թուրքահայությունը անխնայորեն պիտի ջարդվի ամեն տեղ, մանավանդ որ ինքնապաշտպանության միջոցներեն բոլորովին զուրկ է»[2]։

Սակայն երբ երիտթուրքերը ձեռնարկեցին արևմտահայության ցեղասպանությունը, ռամկավարները, ինչպես ցույց կտրվի ստորև, փոխեցին իրենց դիրքը։

Այդպիսով, Թուրքիայում գործող բոլոր հայ հասարակական-քաղաքական ուժերը կանգնեցին օսմանյան հայրենիքի պաշտպանության դիրքերում և որևէ մեկը հանդես չեկավ (թուրքական բռնապետական պայմաններում չէր էլ կարող հանդես գալ) հակաիթթիհադական, ապստամբական կոչերով կամ գործողություններով։ Ընդհակառակը՝ նրանք հայերից պահանջում էին կատարել իրենց հայրենասիրական պարտքը և առիթ չտալ խժդժություններին։ Միայն այն ժամանակ նրանք դիմագրավեցին և կանգնեցին ինքնապաշտպանության ավանգարդում, երբ իթթիհադական իշխանությունները ձեռնարկեցին հայոց ցեղասպանությունը։ Ուստի հիմնազուրկ են անցյալի ու ժամանակակից պատմության այն թուրք կեղծարարները և պետական ու հասարակական գործիչները, որոնք փորձում են երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը կամ հայերի տեղահանությունը բացատրել, իբր թե նրանց ապստամբություններով և թուրքական բիկունքում սպառնալից դրության ստեղծումով[3]։ Այդ փաստերը մի անգամ ևս հաստատում են համընդհանուր ընդունելություն գտած այն ճշմարտությունը, որ երիտթուրքերի կառավարությունը ծրագրել էր բնաջնջել հայերին, և պատերազմական վիճակը նպաստեց նրան՝ կենսագործելու այդ հրեշավոր ծրագիրը։

[1] «Վան-Տոսպ», 1914, դեկտեմբերի 15, № 43—92, էջ 460։

[2] Տե՛ս Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 254։

[3] Այս տեսակի քննադատությունը հանգամանորեն տե՛ս Ս. Կ. Պողոսյան, Գոյատևման պայքարի քառուղիներում, Եր., 1988։

* * *

Այլ էր, սակայն, արևելահայ հասարակական-քաղաքական շրջանների դիրքորոշումը։ Երբ սկսվեց առաջին աշխարհամարտը, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը 1914 թ. օգոստոսի 5-ին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին հղեց մի նամակ, որի մեջ գրում էր, թե Ռուսաստանը եթե թուլացնի իր ուշադրությունը արևմտահայության հանդեպ, ապա այն կենթարկվի ահավոր աղետների։ Կայսերական կառավարությունն այլևս չպիտի կասկածի, որ իր բարեկամական ներգործման փորձերը Թուրքիայի վրա արդեն ապարդյուն են։ Բ. Դուռը, պաշտպանություն ստանալով Գերմանիայից, չեղյալ է հայտարարել 1914 թ. հունվարի 26-ի հանրահայտ համաձայնագիրը և չի ցանկանում որևէ չափով բարելավել արևմտահայերի դրությունը։ Ապա կաթողիկոսն առաջարկում էր, որ քանի դեռ Արևմտյան Հայաստանը մնում է Թուրքիայի կազմում, անհրաժեշտ է իրագործել հետևյալ միջոցառումները. Անատոլիայում հայկական նահանգներից կազմել մեկ անրաժան մարզ, նրան ղեկավար նշանակել Ռուսաստանի կողմից ընտրված և Բ. Դռնից անկախ բարձրագույն տիտղոսով մի քրիստոնյա, ստեղծել այդ մարզում լայն ինքնակառավարում, ընդգրկելով նրա մեջ քրիստոնյա ու մահմեդական ներկայացուցիչների, բոլոր բարեփոխումների իրականացման իրավունքը տալ միայն Ռուսաստանին։ Այդ բարեփոխումները կենսագործել ներկա պատերազմի ավարտից հետո։ Բայց հաշվի առնելով, որ այժմ Թուրքիայում ղորակոչման հետևանքով հայերի մեջ խուճապ է առաջացել, ուստի ցարական կառավարությունը պետք է պահանջի Բ. Դռնից, որ նա միջոցներ ձեռնարկի հայերի կյանքն ու գույքը ապահովելու համար և բնակեցնի դեներալ-ինսպեկտորներին իրենց տեղերում՝ 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումների կենսագործման համար[1]։

1914 թ. նոյեմբերի 8-ին, երբ արդեն բացվել էր պատերազմի Կովկասյան ռազմաճակատը, Ամենայն հայոց կաթողի-

[1] Տե՛ս «Геноцид армян...», էջ 242—244։

կոսը կրկին դիմեց փոխարքային, խնդրելով, որ ինքնակալը հայտարարի, թե այսօրվանից անգամանալիորեն լուծվում է արևմտահայերի հարցը՝ տրվում է նրանց Ռուսաստանի կողմից ինքնավարություն, որը կընդգրկի իր մեջ վեց վիլայեթները (Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Սվազի, Դիարբեքիրի և Խարբերդի) ու Կիլիկիան։ Այդպիսով, եղրափակում էր Գևորգ V-ը, Ռուսաստանը «կավարտի Թուրքիայի լծի տակ դարերով տառապող քրիստոնյա ժողովուրդների ազատագրման իր պատմական առաքելությունը»[1]։

Արևելահայ լիբերալները ըստ էության կանգնեցին այն նույն դիրքերում, ինչ կաթողիկոսը։ Նրանց օրգան «Մշակը», կանխագուշակելով մոտալուտ ռուս-թուրքական պատերազմը, զբաղնում էր, որ Ռուսաստանի կողմից այն կլինի ոչ թե նվաճողական, այլ ազատագրական, քանի որ նա կփրկի օսմանյան գարշապարի տակ դարեր շարունակ տառապող արևմտահայերին։ Նման պայմաններում հայերը պետք է արտահայտեն իրենց ցանկությունը, պահանջելով ինքնավարություն «Ռուսաստանի հովանավորության ներքո»[2]։ Երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, պարբերականը գտնում էր, որ այժմ, քան երբևէ հնչեցել է Հայկական հարցի լուծումը, որովհետև Ռուսաստանը, Անգլիան ու Ֆրանսիան համերաշխ են գործում, իսկ Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի դիմադրությունը արժեք չի ներկայացնում։

Թերթն ապա նշում էր, որ ռուսական որոշ շրջաններ գտնում են, թե Հայաստանին պետք է տալ ինքնավարություն, իսկ մյուսները դեռ վաղաժամ են համարում այն։ Բայց կարևորն այժմ այն է, որ բոլորը ցանկանում են Հայաստանի ազատագրումը թուրքական լծից[3]։ «Մշակի» կարծիքով, Արևմտյան Հայաստանի հարցը կարելի է լուծել երկու եղանակով. այն «կամ պարզապես կցվելու է Ռուսաստանին, կամ նրան տրվելու է ինքնավարություն՝ Ռուսաստանի հովանավորության ներքո։ Այս դեպքում ցանկալի էր, որ նրան կցվեր և Կիլիկիան»[4]։ Թերթը, իհարկե, գերապատվությունը տալիս էր հարցի լուծման երկրորդ եղանակին։

1 Տե՛ս «Геноцид армян...», էջ 246։

2 Տե՛ս «Մշակ», 1914, հոկտեմբերի 30, № 245։

3 Տե՛ս նույն տեղը, 1914, նոյեմբերի 5, № 250։

4 Տե՛ս նույն տեղը, 1914, նոյեմբերի 15, № 259։

Պարբերականը անդրադառնում էր նաև արևելահայերին և նշում, որ նրանք որևէ պահանջ չեն առաջադրում, իսկ եթե ներկայացնեն, ապա պիտի ստանան այնպիսի լուծում, ինչ կայսրության մյուս քաղաքացիները. «Եթե մենք խոսում ենք ինքնավարության, ավտոնոմիայի, ռեֆորմների մասին, դա բացառապես թուրքահայերի համար է։ Իսկ ռուսահայերը, իբրև Ռուսաստանի քաղաքացիներ և հպատակներ, կստանան այն ամենը, ինչ որ կստանան կայսրության մյուս հպատակները»[1]։ Այդպիսի հարցադրումը պայմանավորված էր նրանով, որ լիբերալները, շահագրգռված լինելով արևմտահայության խնդրի լուծումով, խուսափում էին սրել իրենց հարաբերությունները ինքնակալության հետ։

Արևելահայ բուրժուական գործիչները խոսում էին նաև ապագա Հայաստանի վարչական կառուցվածքի մասին։ Ոմանք բավարարվում էին ինքնավարության հաստատումով, մյուսները խնդիր էին դնում՝ ստեղծել հայկական կիսանկախ պետություն՝ Ռոմանովներից սերված որևէ իշխանի գլխավորությամբ[2]։

Սակայն արևելահայ բուրժուազիային ավելի շատ հետաքրքրողը Արևմտյան Հայաստանի տնտեսական հարստություններն էին, նրանց շահագործումն ու եկամուտներ ստանալը։ 1916 թ. «Պայքար» շաբաթաթերթը գրում էր. «Հայ բուրժուազիայի համար Տաճկահայաստանը հմայիչ և փայփայիչ է հանդիսացել միշտ— որպես հարուստ մի երկրի, տնտեսական նոր գործառնությունների նպատակահարմար մի վայր»[3]։ Դեռ 1911 թ. հայտնի կապիտալիստ Մանթաշյանը, որ «Թիֆլիսի առևտրական բանկի» տերն էր, առաջարկեց ցարական իշխանություններին՝ թույլատրել իրեն Արևմտյան Հայաստանում բացելու հատուկ բանկ։ Բայց ցարական իշխանությունները մերժեցին, ենթադրելով, որ նրա ցանկությունն ունի սուր ազգայնական երանգ և որպես այդպիսին խանգարում է հիմնավորելու և ղարգացնելու Թուրքիայի հայկական վիլայեթներում մաքուր ռուսական ուղղությունը[4]։

1 «Մշակ», 1914, նոյեմբերի 14, № 258։

2 Տե՛ս Г. Д. Мнацаканян, Разрешение армянского вопроса, М., 1914, էջ 35—37։

3 «Պայքար», 1916, սեպտեմբերի 11, № 37 (Ա. Կարինյան, Տաճկաձայ խնդրի շուրջը)։

4 Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Եր., 1965, էջ 133։

Երբ սկսվեց առաջին աշխարհամարտը, հայ կապիտալիստներն ավելի ակտիվացրին Արևմտյան Հայաստանում տնտեսական գործունեությունը ծավալելու իրենց ցանկությունները։ 1915—1916 թթ. նրանք աշխատում էին համախմբել Ռուսաստանում ցաք ու ցրիվ եղած իրենց ուժերը և հաստատվելով Արևմտյան Հայաստանում, ավելի սերտացնել նրա կապերը Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնների հետ։ Այդ նպատակով շուտով բանակցություններ սկսեցին Մանթաշյանի կովկասյան, Թիֆլիսի վաճառականական և ժամհարյանի բանկերը։ Զբաղվարվելով Ռուսաստանով ու Արևմտյան Հայաստանով, նրանք ծրագրում էին թափանցել Պարսկաստան ու դիրքեր նվաճել նաև Ասիայի այդ մասում։ Սակայն հայ կապիտալիստների այդ մտահղացումները սուբյեկտիվ և օբյեկտիվ մի շարք պատճառներով չիրագործվեցին[1]։

Հայ մեծահարուստները գործուն դեր էին խաղում պատերազմի համար կատարվող ձեռնարկումներում։ Նրանք ընտրվում էին Անդրկովկասում ստեղծված ռազմարդյունաբերական կոմիտեներում որպես նախագահներ, անդամներ և կատարում ցարական իշխանությունների հանձնարարությունները։ Այսպես, Բաքվի ռազմարդյունաբերական կոմիտեի նախագահն էր հայտնի կապիտալիստ Ա. Օ. Ղուկասովը, Թիֆլիսի մարզային կոմիտեի նախագահը՝ Ա. Ի. Խատիսովը, Երևանի կոմիտեի նախագահը՝ քաղաքագլուխ Ս. Ն. Խաչատուրովը և այլն։ Հայ կապիտալիստները կարևոր դեր էին խաղում նաև Ալեքսանդրապոլի, Նախիջևանի և երկրամասի այլ ռազմարդյունաբերական կոմիտեներում[2]։ Նրանք կազմակերպում էին ցարական բանակի ռազմական հանդերձավորման ու պարենավորման գործը, կոչ էին անում բնակչությանը՝ օժանդակել կառավարությանը նրա մղած «արդարացի» և «ազատարար» պատերազմում, նպաստում էին զորակոչին և այլն։

Անշուշտ, ցարական կառավարությունը խաբում էր կովկասահայ բուրժուազիային և օգտագործում նրան իր նվաճողական քաղաքականության համար։ Նրա նպատակը ոչ թե արևմտահայության ազատագրումն էր, այլ նորանոր տարածքյունների գրավումը և դրանց ծառայեցումը ռուս կալվածատերերի և արդյունաբերողների շահերին։ Ինչ վերաբերում է արևելահայ բուրժուազիային, ապա նա, ինչ խոսք, երազում էր տեսնել Արևմտահայաստանը ազատագրված թուրքական տիրապետությունից և ինքնավար սկզբունքներով մտած Ռուսաստանի կազմում, բայց նա կբավարարվեր նաև, եթե ցարիզմը ուղղակի անեքսիայի ենթարկեր այն, չտալով նույնիսկ ինքնավարություն, որովհետև այդ դեպքում ևս նա տնտեսական գործունեության լայն ասպարեզ կունենար և համագործակցելով ռուսական վարչակարգի հետ, կստանար մեծամեծ շահույթներ։

Ստ. Շահումյանը վերլուծելով ցարիզմի քաղաքականությունը և կովկասահայ բուրժուազիայի ձգտումները, 1916 թ. ամռանը գրում էր. «Ռուս կառավարության քաղաքականությունը մոտիկ արևելքում՝ թե՛ Բալկաններում և թե՛ Կովկասում՝ միշտ քողարկվել է կեղծ մարդասիրությամբ։ Ռուս բռնակալները հանդես են եկել միշտ «քրիստոնյա ազգերին», տաճկական լծից ազատագրողների կեղծ դիմակի տակ։ Նրանց նպատակն է եղել ոչ թե ազատել «ալավոն եղբայրներին» կամ «քրիստոնյա» հայերին, այլ նոր նվաճումներ գործել և մոտենալ Պոլսին Սև ծովի այն կամ այս կողմից։ Ինչ կարող էր ունենալ դրա դեմ կովկասահայ բուրժուազիան։ «Տաճկահայաստանը» նվաճելու դեպքում նրա առաջ կբացվեր նոր ասպարեզ անսահման շահագործության համար, իսկ եթե այդ նվաճումը չհաջողվեր, համենայն դեպս իր քաղաքականությամբ նա շահում էր ռուս կառավարության սիրտը և կարող էր հուսալ, որ կվայելի նրա հովանավորությունը Կովկասում»[1]։

Կովկասահայ լիբերալ-բուրժուական գաղափարախոսների դիրքերում էին կանգնած նաև արտասահմանի հայ բուրժուական մտավորականները։

Մ. Փորթուգալյանը ռուս-թուրքական պատերազմի սկզբում «Արմենիա» լրագրի «Թյուրքահայերի վիճակը և մեր պարտքը» առաջնորդողում նախապես նշելով, որ թուրքերը, օգտագործելով պատերազմական վիճակը, կոտորում են հայերին, պահանջում էր, որ պետք է կազմակերպել նրանց ինքնապաշտպանությունը։ Մատնանշելով այն փաստը, որ ռուսահայերը կամավորական ջոկատներով օգնության են սլանում Թուրքիայում

1 Տե՛ս Գ. Ա. Ջալեբյան, *Մոտիկ անցյալից*, Եր., 1969, էջ 79—82։
2 Տե՛ս Մ. Վ. Ազոյանց, *Հայաստան 1914—1917*, էջ 170—171։

1 Ստ. Շահումյան, *Երկ.*, հ. 3, էջ 49։

տանջվող ու նահատակվող իրենց եղբայրներին, նա խնդիր էր դնում, որ արտասահմանի հայերը չպետք է անտարբեր մնան նրանց բախտի հանդեպ։ Եթե չեն կարող կամավորներ ուղարկել, գոնե օգնեն ռուսահայ կամավորներին նյութական միջոցներով։ Հրապարակախոսը հայտարարում էր. «Ով որ հայ է, ով որ հայի անուն, հայի արյուն ու սիրտ կկրե, ինչ կուսակցության ալ պատկանի, իր պարտքը պիտի համարի համերաշխության համար մասնակցել այս գործին, որ ընդհանուր հայության գործն է, ընդհանուր հայության պարտքն է։ Թյուրքահայաստանը ոչ այս, ոչ այն կուսակցության կպատկանի, այլ ընդհանուր հայության, անոր օգտի համար չաշխատողը ոչ թե այս կամ այն կուսակցութենեն դուրս, այլ հայութենեն դուրս պետք է համարի ինքը...»[1]։

Մ. Փորթուգալյանը ապա հայտարարում էր, որ հայ կամավորներին նյութապես օգնելու նպատակով Մարսելում արդեն ստեղծվել է «Կովկասի հայ կամավորներուն նպաստող կոմիտե»։ Արտասահմանի կամ գաղթաբնակ հայերը կարող են իրենց նվերներն ուղարկել այդ կոմիտեին, որը կտեղափոխի Թիֆլիս, ուր դրանք կծառայեն իրենց նպատակներին։ Այնուհետև թերթում նա պարբերաբար հրատարակում էր նվիրատուների ազգանուններն ու տված գումարները։

Հրապարակախոսը, սակայն չբավարարվեց միայն նվիրատվությամբ, շուտով կոչ հղեց, որ արտասահմանի հայերը պետք է նաև կամավորներ տրամադրեն Թուրքիայի դեմ պատերազմող պետություններին։ Նա գտնում էր, որ այդ տերությունների մի մասը վարում է բարբարոսական, զավթողական, թալանչիական (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա), մյուսը՝ ազատարար (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա) պատերազմ։ Հայերը պետք է օգնեն վերջիններիս, քանի որ իրենց հայրենիքի շահերը, արևմտահայության փրկության գործը այդ են պահանջում։ Ներկայ չպետք է անտարբեր մնան և սպասեն, որ օտարը վճռի իրենց բախտը, բոլոր ազգերը արյունով են գրել իրենց պատմության ազատագրության էջերը։ Հայերը ևս պետք է այդպես վարվեն։ «Արմենիան» 1915 թ. մարտի արտասահմանի երիտասարդությանն ուղղված կոչում գրում էր. «Պատմությունը ցույց է տվել, թե քանի որ մի ազգ սուրը ձեռքին չի

1 «Արմենիա», 1914, նոյեմբերի 25, № 17։

վազել պատերազմի դաշտ իր ազատությունը պաշտպանելու կամ վերականգնելու համար, նա մնացել է միշտ ստրուկ ուրիշներին»։ Եվ ապա՝ «Ընկերներ, ժամը հնչել է սուրը ազատության, թողեք, եկեք, ուր որ ալ լինեք, Ամերիկայում, թե Աֆրիկայում, աշխարհի որ ծայրում որ եք, կամավոր գրվեք հայ անունով ուր որ կարող եք քաղաքակիրթ դաշնակից բանակներում։ Թող հայ անունը ևս հնչի ազատարար բանակների շարքում և երբ ունենանք մենք ևս քաջեր, քաղաքակիրթ մեծ ազգերը կտեսնեն հայի ազատ լինելու արժանիքը»[1]։

Մ. Փորթուգալյանը գտնում էր, որ Թուրքիայի ջախջախման հետևանքով հայությունը կարող է ձեռք բերել ազատություն՝ իր անկախության հռչակումով, ազատ ու բարգավաճ Հայաստանի ստեղծումով։ «Այդ լուսաշող հեռապատկերն է, որ մեր հայրենիքի կարմիր հորիզոնի վրա ըղձալի տեսիլքի մը պես կուրվագծվի, ուր սակայն այժմ սարսափահար ու արյունազարդ Հայաստանի պատկերը միայն կա իրական»[2]։ Ապա նշում է, թե որքան էլ ծանր են հայերի տառապանքներն ու կորուստները, այնուամենայնիվ, նրանք պետք է գիտակցեն, որ իրենց ազատության ու անկախության նպատակները երբեք այնպես մոտ չեն իրականացման, ինչպես այժմ[3]։

Բայց հրապարակախոսը գտնում էր, որ արևմտահայերը կարող են փրկվել նաև «Ռուսիայի հովանավորության տակ» անցնելով[4]։ Հարկավոր է ամբողջ ուժով ու եռանդով կպչել գործին, պահը օրհասական է, «այժմ կամ երբեք»[5]։

Համարյա նույն դիրքերից հանդես եկավ նաև Արշակ Զոպանյանը, որի կարծիքով Անգլիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը վարում են ազատագրական, իսկ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան ու Թուրքիան զավթողական, հետադիմական պատերազմ։ Ուստի կոչ էր անում հայերին՝ ամենուրեք օժանդակել Անտանտի տերություններին, կամավորներ գրվել Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի բանակներում և արիաբար կռվել Եռյակ միության ու Թուրքիայի դեմ։ «Ընենք ինչ որ կըրնանք,— գրում էր նա,— որպեսզի մենք ալ, վաղը աշխարհիս

1 «Արմենիա», 1915, մարտի 31, № 35։
2 Նույն տեղը, 1914, դեկտեմբերի 16, № 20։
3 Տե՛ս նույն տեղը, 1915, մարտի 10, № 32։
4 Տե՛ս նույն տեղը, մարտի 31, № 35։
5 Տե՛ս նույն տեղը, 1914, նոյեմբերի 25, № 17։

վերև ծագելիք արդարության արևին տակ, ազատամարտիկ ազգերուն շարքին մեջ, ազատության արժանի քովը բարձրաճակատ կարենանք երևալ»[1]։

Հրապարակախոսը խնդիր էր դնում՝ անպայմանորեն օգնել հատկապես Ռուսաստանին, որովհետև Թուրքիայի դեմ տարած նրա հաղթանակը ազատություն կբերի արևմտահայությանը։ Երբ ռուսական զորքերը ջախջախելով Թուրքերին հաջողությամբ առաջ էին շարժվում Ասիական ռազմաճակատում, Ա. Զոպանյանը գտնում էր, որ արդեն իրագործվում են Հայկական հարցի լուծման ու արևմտահայության ազատագրման իր երազանքները։ 1914 թ. դեկտեմբերի 24-ին, Վ. Արզումանին հղած նամակում նա գրում էր. «Ռուսահայ հարաբերությունները լավ են ինչպես երբեք չեն եղած... նույնիսկ եթե էրզրումեն մինչև Սիս ռուսը գրավե և պարզապես կցե, նորեն հայուն համար շատ լավ է... Հայկական կյանքը, հայ լեզուն, կուլտուրան պիտի ծաղկին ու տիրապետեն»[2]։

1915 թ. մայիսի 25-ին Փարիզում Ա. Զոպանյանը հանդես եկավ մի դասախոսությամբ, որի մեջ համառոտակի նշելով, թե ինչպես են թուրքերը հաստատվել Փոքր Ասիայում ու ստրկացրել նրա ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին, կանգ առավ հայ ժողովրդի ազատագրության հարցի վրա։ Հրապարակախոսը հարկ չէր համարում խոսել կովկասահայերի մասին, գտնելով, որ նրանք ապահով վիճակում են։ Նրա հոգսը արևմտահայերն էին։ Հեռատես ենթադրում էր, որ ներկա պատերազմը հայերին բերելու է ոչ թե բարենորոգումների նոր ծրագիր, այլ «իրական, արմատական, վերջնական ազատում»[3]։ Այդ ազատության տակ նա չէր հասկանում անկախություն, Տիգրան Մեծի ժամանակների Հայաստանի վերականգնում, գրտնելով, որ «... ատիկա անկարելի է...», այլ այնպիսի Հայաստան, որը Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հովանու տակ կարողանա «ապրել ինքնավար կյանքով մը, հայ կյանքով մը»[4]։

Ա. Զոպանյանը նշում էր, որ տերությունները, ինքնավար Հայաստան ստեղծելիս, պետք է նրա մեջ մտցնեն թե՛ վեց վիլայեթները և թե՛ Կիլիկիան, որ նա ելք ունենա դեպի ծով, հնարավորություն ստանա տնտեսական ու քաղաքական լիակատար զարգացման համար։ Նրա կարծիքով, այդ «ցանկությունները համեստ են և իրագործելի»[1]։

Ա. Զոպանյանը ողջունեց ցարիզմի անկումը և հույս էր տածում, որ ժամանակավոր կառավարությունը, պատերազմը հասցնելով մինչև հաղթական վախճանի, կազատագրի Արևմտյան Հայաստանը և կլուծի Հայկական հարցը։ Բայց չվհատվեց, երբ այդ տեղի չունեցավ, քանզի այժմ մեծ հույսեր էր կապում Արևմտյան Հայաստանի մասին հրապարակված լենինյան հանրահայտ դեկրետի հետ[2]։

Արևելահայ անկուսակցական դեմոկրատները մերկացնում ու դատապարտում էին իմպերիալիստական տերությունների վայրագություններըւ Նրանք մասսաներին բացատրում էին պատերազմի գիշատիչ բնույթը և պաշտպանում դեմոկրատիայի շահերը։ Հ. Թումանյանը նշում էր, որ պատերազմի գլխավոր հանցագործներից մեկը Գերմանիան է։ Վիլհելմ կայսրն ու նրա գործակալները ինքնամոլությունից հարբած մոնչում են՝ «Գերմանիա, Գերմանիա ամեն բանից վեր»[3], ամեն ինչ ոտնահարում են, այնպիսի ոճրագործություններ են կատարում, որ շներն անգամ «անընդունակ են էս տեսակ արարքների»[4]։ Բանաստեղծը հաստատ համոզմունք էր հայտնում, որ Գերմանիայի պատրաստությունները որքան էլ ահռելի լինեն, միևնույն է, խորտակվելու է։ Ապա նշում էր, որ պատերազմի հանցագործներ են նաև մյուս իմպերիալիստական պետությունները, բայց գիտենալով, որ ոչ մի ժողովուրդ պատերազմ չի սիրում, չի ցանկանում սպանել անմեղ մարդկանց, աշխատում են արդարանալ, հայտարարելով, թե իրենք չեն պատերազմի պատճառն ու նախահարձակը։ Սակայն նրանք չեն կարող «աշխարհին խաբել, մանավանդ քառասուն տարվա ամեն տեսակի պատրաստություններն ու ազգերի դեմ սարքած դավադրությունները հրապարակ հանելուց հետո»[5]։

1 «Մշակ», 1914, հոկտեմբերի 17, № 234։
2 Ա. Զոպանյան, Նամականի, եր., 1980, էջ 120։
3 Տե՛ս Ա. Զոպանյան, Հայաստանը թուրք լուծին տակ, Պոստոն, 1918, էջ 38։
4 Նույն տեղը։

1 Տե՛ս Ա. Զոպանյան, Հայաստանը..., էջ 39։
2 Տե՛ս Կ. Դալլաքյան, Արշակ Զոպանյան, էջ 333։
3 Հովհ. Թումանյան, հ. IV, էջ 305։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 301։
5 Նույն տեղը, էջ 305։

Հրապարակախոսը հստակորեն տեսնում էր ոչ միայն կառավարողների ու ժողովուրդների միջև եղած տարբերությունները, այլև նրանց շահերի հակասություններն ու բախումները։ Նա խորին համոզմունքով նշում էր. «Ինչ կոխիվ ու կոտորած ուղում է լինի՝ հնագույն բռնապետներից մինչև դեմոկրատիկ հասարակապետությունները՝ միշտ սարքված են երկրները կառավարողների և ղեկավար շրջանների ու ղեկավար մարդկանց ձեռքով։ Եվ միշտ էդ արվել է հասարակ ժողովրդի, աշխատավոր մարդու կամքի և ցանկության հակառակ»[1]։

Հ. Թումանյանն այնուհետև անդրադառնում էր արևմտահայությանը և բնութագրում նրա ողբերգական վիճակը։ Նշում էր, որ Թուրքերի երևալուց մինչև այժմ այդ ժողովուրդը ենթարկված է անլուր սարսափների ու կոտորածների, նրա պատմությունը շաղախված է արյունով ու արտասուքով։ Իսկ այսօր «Թուրք կառավարությունը վեր է կացել գերազանցելու իր մինչև օրս կատարած ոճիրները, կոտորածով մի անգամ ընդմիշտ վերջ դնելու հայ ժողովրդի բողոքին ու դատին։ Սկսել է կոտորած էրզրումից մինչև Կիլիկիա, Սև ծովից մինչև Միջագետք»[2]։

Բանաստեղծը գտնում էր, որ այս օրերին անհրաժեշտ է ամտահոգվել հայ ժողովրդի ֆիզիկական փրկության հարցով և փորձում էր ելքը որոնել համաշխարհային առաջադեմ հասարակայնության ուժի մեջ։ «Հայոց գրողների ընկերությունը այս ահավոր ճգնաժամին դիմում է ազգերի խղճմտանքին ի դեմս նրանց լուսավոր հաստատությունների և լավագույն զավակների, խնդրում է բարձրացնել իրենց ազդու ձայնը այս անօրինակ ոճիրի հանդեպ հանուն մարդասիրության... և կուլտուրայի»[3]։

Հ. Թումանյանը, սակայն, հայ ժողովրդի իսկական փրկությունը կապում էր Ռուսաստանի հեղափոխության հետ։ 1915 թ. Նա գրում էր. «Ռուսական հեղափոխության անելիքներն ուժեղ քաշով ծավալվելու են կենտրոնական պետությունների հոգնած ժողովուրդների մեջ։ Բոլոր մեծ ու փոքր կայղերները ընկնելու են իրենց գահերից»[4]։ Կովկասյան ժողովուրդները կզգան իրենց ընդհարումների անմտությունը և կմերձենան իրար։ Նրանց բա-

1 Հովհ. Թումանյան, հ. IV, էջ 423։
2 Նույն տեղը, էջ 310—311։
3 Նույն տեղը, էջ 311։
4 Նույն տեղը, էջ 315։

րեկամությունը կատարվելու է աշխատավոր զանգվածների ձեռքերով։ «Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան մեծ դեր է կատարելու սրա մեջ»[1]։

Հրապարակախոսը հույս էր տածում, որ կործանվելու է նաև Թուրքական բռնակալությունը և բարեհաջող լուծվելու է Հայկական հարցը։ Դրա հետևանքով հայերի առաջ բացվելու են լայն հորիզոններ։ Նրանք հնարավորություն կստանան լավ ապրելու և զարգվելու մեծ խնդիրներով, կմտնեն առաջադեմ ազգերի եղբայրության մեջ և նրանց հետ կլուծեն համամարդկային հարցեր, կգնան դեպի պայծառ ապագա։ Եվ այն ողբերգությունը, որ այսօր ապրում է հայ ժողովուրդը, կլինի վերջինը, որովհետև «մեզ հետ է ռուսական մեծ բանակն ու բովանդակ Ռուսաստանը»[2]։

Հ. Թումանյանը մեծ հավատով էր լցված հայ ժողովրդի կենսունակության հանդեպ, նշում էր. «Ոչ մի բռնակալ, և ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հզոր հատկությունը»[3]։ Հայաստանը պետք է խոսի։ «Եվ պետք է խոսի էնքան լուրջ ու զգաստ, ինչքան լուրջ ու զգաստ է լինելու ամենից մեծ վշտավորն ու ամենից շատ վտանգվածը ժողովուրդների մեջ, այլև էնքան հաստատուն ու բաց ճակատով կարող է խոսել մի ժողովուրդ, որ ապրել է մարդկային լավագույն ձգտումներով և ամեն ինչ տվել է ու կտա ազատ կյանքի համար»[4]։

Բանաստեղծը հայ ժողովրդի վերածնունդը կապում էր բոլշևիկյան կուսակցության հետ։ 1918 թ. Ս. Գորոդեցկուն հղած նամակում գրում էր. «Եվ ես կարծում եմ, որ բոլշևիզմի մեծ խիզախումները խորթ չեն ռուս մարդու հոգուն։ Իսկ ռուս ժողովուրդը առհասարակ մեծ միսիա ունի կատարելու ժողովուրդների կյանքում»[5]։

Վահան Տերյանը պատերազմի տարիներին հանդես եկավ «Հոգևոր Հայաստան» ծավալուն հոդվածով, որի առանցքը այն միտքն էր, թե հայ ժողովրդի գոյության ու հարատևման նեցուկը նրա հոգևոր կյանքի՝ լեզվի, գրականության, պատմու-

1 Հովհ. Թումանյան, հ. IV, էջ 316։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 316։
3 Նույն տեղը, էջ 335։
4 Նույն տեղը, էջ 396։
5 Նույն տեղը, էջ 412։

բյան և այլ արժեքների պահպանումն ու զարգացումն է։ Այդ հոդվածում նա, ինչպես նշում են մասնագետները, դիմագրավում էր ցարիզմի փոքր ազգերին ձուլելու քաղաքականությանը[1]։

Միաժամանակ պետը խորապես մտահոգված էր Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդրով։ Նա ցանկանում էր Հայկական հարցի անհապաղ ու արմատական լուծում։ Հրապարակախոսը գրում էր. «... ամեն մի հայ մարդու համար այդ հարցը սրբազան մի ավանդ է դարձել, նվիրական մի տվայտանք, ամեն մի հայ մարդու առջև ծառացել էր իր եղերական, արյունաներկ պատկերով։

Մի՞թե կարող ենք սառնասիրտ լինել մենք, երբ այժմ դրված է այդ հարցը, երբ կանգնած ենք նրա այս կամ այն լուծման հանդեպ։

Մի՞թե իրավունք ունենք մենք տարակուսելու կամ տատանվելու, պետք է հավատալ, պետք է հուսալ լիասիրտ, պետք է տենչալ սրտի բոլոր զորությամբ և մեր բոլոր կարողությամբ ձգտել, որ այժմ վերջնական կերպով լուծվի այդ սյունկուիկ հարցը»[2]։

Ապա շարունակում էր. «... ամեն մի հայ պիտի շահագրգռված լինի Թուրքահայերի ազատագրումով, ինչ ձևով էլ լինի այդ ազատագրումը»[3]։ Բանաստեղծը արևմտահայության փրկությունը չէր կապում իմպերիալիստական տերությունների քաղաքականության կամ նրանց բորբոքած պատերազմներհ հետ։ Ընդհակառակը՝ նա բնութագրում է դրանք որպես հայ ժողովրդի համար աղետաբեր ու կործանարար։

Հավատարիմ իր ռուսական կողմնորոշմանը, Վ. Տերյանը արևմտահայության ազատագրումը առաջվա նման կապում էր դեմոկրատական Ռուսաստանի հետ։ 1914 թ. աշնանն իր «Նամակներ հյուսիսից» նոթերում, որոնք ուղարկում էր Մոսկվայից «Մշակին», գրում էր. «Նոր չէ, որ հայությունը պիտի վկայե իր համակրությունը և ձգտումը դեպի Ռուսաստանը։ Դա մի պատմական ավանդություն է արդեն մեզ համար։

Մեր ժողովուրդը բնազդով միշտ զգացել է իր փրկության ուղիղ ճանապարհը, և մեր մտավորականության լավագույն

1 Տե՛ս Վ. Տերյան, հ. 2, էջ 480։
2 Նույն տեղը, էջ 305։
3 Նույն տեղը, էջ 307։

ներկայացուցիչները արտահայտել են այդ զգացմունքը շատ պարզ ու ցայտուն կերպով»[1]։

1915 թ. նա հրապարակեց «Մեր պարտքը» հրապարակախոսական հոդվածը, որի մեջ նշում էր, թե այսօր մեծ ժողովուրդները գերագույն լարումով հավաքում ու համախմբում են իրենց տարբեր խավերն ու հատվածները, որպեսզի փրկեն իրենց գոյությունը։ Եթե մեծերն են այդպես վարվում, ապա փոքրերի համար նման քայլն ավելի քան անհրաժեշտ է[2]։ Հայ ժողովուրդը ևս պետք է հավաքի ու համախմբի իր ուժերը, քանի որ նրա առջև դրված է ոչ թե կուլտուրական առաջընթացի, այլ «ֆիզիկական գոյության խնդիրը»[3]։ Անհրաժեշտ է առժամանակ մոռանալ անձնական ու կուսակցական տարաձայնությունները և համախմբել «վերահաս վտանգի առաջն առնել»[4]։

Բանաստեղծը նշում էր. «Միամտություն կլիներ կարծել, որ հնարավոր է ընդմիշտ վերացնել մի հասարակության միջից տարբեր հատվածների ընդհարումը։ Հակամարտ ուժերի բախումով է առաջ ընթանում կյանքը»[5]։ Բայց այժմ, երբ մոմենտը կրիտիկական է, պետք է միանան «իշխանն ու բանվորը, կինը և մարդը։ Կանցնի արհավիրքը, և նրանք նորից կանջատվեն, կկռվեն։ Սակայն արհավիրքի ժամին հանցանք է և մահացու մեղք ջլատել ուժերը անջատական զգացումներով ու գործողություններով»[6]։

Պոետը շեշտում էր «Այսօր մենք պետք է մտածենք ոչ թե մեզ անջատող, մեզ իրարից տարբերող ու բաժանող փաստերի մասին, այլ միայն միացնող, ձուլող, գումարող, որովհետև միայն այդ միացումով և համերաշխ գործողությամբ պիտի կարող լինենք պահպանել մեր ժողովուրդը, ապահովել մեր ամբողջ ապագան»։

Վերջում նա ավելացնում էր. «Դոնե այս ճակատագրական րոպեին ըմբռնենք, հավատանք միմյանց փոխադարձաբար և զորանանք այդ լիասիրտ հավատով այս դժվարին օրերում»[7]։

1 Տե՛ս «Մշակ», 1914, հոկտեմբերի 11, № 229։
2 Տե՛ս Վ. Տերյան, հ. IV, եր., 1925, էջ 196։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 197։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 198։
5 Նույն տեղը։
6 Տե՛ս նույն տեղը, էջ 199։
7 Նույն տեղը։

Վ. Տերյանը հրապարակախոսական մի այլ հոդվածում («Ինքնակոչ փրկիչները») առաջարկում էր ազգային արժեքներին ու ավանդներին հավատարիմ մնացած մտավորականությանը՝ անհապաղ կազմակերպել հայ հասարակությունը, ձուլել նրա տարբեր խավերը, ընտրել իր միջից համազգային մարմին, օժտել նրան ազգը ղեկավարելու ֆունկցիաներով և, ազգով դիմագրավելով արհավիրքին, փրկել ժողովուրդը վերահաս կործանումից։ Նա գտնում էր, որ համազգային այդ ձեռնարկումից կարող են հեռու մնալ նրանք, ովքեր «զանազան եպիսկոպոսների փեշերի հովանին են որոնում», ովքեր գերադասում են «գնալ հին, ծեծված, անօգուտ ուղիներով՝ ողորմություն խընդրելու, պետական բարձրաստիճան աղվեսների շեմքերը մաշելու, նրանց թակարդ-սալոններում ճեմելու ճանապարհով», նրանք, ովքեր «կռվի դաշտ ուղարկեցին աղնվագույն ուժեր», դրսևորելով քաղաքական աններելի սխալներ և ազգակործան արատներ[1]։

Ընդհանրապես պետք է նշել, որ Վ. Տերյանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հանդես եկավ մի շարք հոդվածներով, որոնք, է. Ջրբաշյանի խոսքերով ասած, «տոգորված էին հայրենիքի ճակատագրի հանդեպ ունեցած սաստիկ ցավով ու վսեմ սիրով, քաղաքացիական կրքոտությամբ ու մտքի հասունությամբ»[2]։

Վ. Տերյանը արևմտահայության ազատագրության իր ծրագիրն ավելի հիմնավոր ու բովանդակալից շարադրեց 1917 թ. նոյեմբերին ժողովրդական կոմիսարների խորհրդին ներկայացրած Թուրքահայաստանի մասին հանրահայտ զեկուցագրում։ Նա վերլուծում էր արևմտահայության մղձավանջային վիճակը, բնութագրում թուրքական կառավարության հայակեր վարքագիծը, խոսում իմպերիալիստական տերությունների շահամոլ քաղաքականության մասին և նշում հայկական հարցի լուծման ուղին։

Հրապարակախոսը գրում էր. «Մենք, հայ սոցիալ-դեմոկրատներս (բոլշևիկներս), հաստատ գիտենք, որ լոկ պրոլետարական-գյուղացիական հեղափոխությունը և բանվորների ու

1 Տե՛ս Վ. Տերյան, հ. IV, եր., 1925, էջ 260—261։

2 «Հայրենիքի ձայն», 1985, հունիսի 19, № 25։

չքավորագույն գյուղացիների կառավարության ստեղծումը կարող է ազատություն բերել մեր արտասահմանյան եղբայրներին, թուրքահայերին և բուժել նրանց խոր վերքերը։ Մենք միշտ այդ բանը նշում էինք հայ գյուղացի ու բանվոր մասսաներին։ Մենք միշտ խորտակում էինք մանրբուրժուական և բուրժուական կուսակցությունների կողմից նրանց ներշնչվող պատրանքները ոչ միայն Եվրոպայի իմպերիալիստական դիվանագիտության վերաբերյալ, այլև կադետների հետ կոալիցիայի մեջ մտած և Կերենսկու կողմից գլխավորված հեղափոխական դեմոկրատական կառավարության վերաբերյալ»[1]։

Վ. Տերյանը գտնում էր, որ ժողովրդական կոմիսարները մեծապես նպաստած կլինեն գործին, եթե այժմ իսկ հեռագրեկրետ հրապարակեին և վճռականորեն պաշտպաններին արևմտահայերի «լիակատար ազգային ինքնորոշման գաղտնիքը», միաժամանակ խոստանալով, որ իրենք նրաշխիք կստեղծեն այդ ինքնորոշման իրականացման համար։ Դա հնարավորություն կտա աշխարհի տարբեր մասերում ցրված հայերին վերադառնալու հայրենիք և շենացնելու իրենց ավերված օջախները։ Միայն այդ դեպքում «կարելի է խոսել Հայաստանի իսկական ինքնորոշման մասին»։ Բայց այդ ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է ռուսական զորամասերը դուրս չբերել «պատերազմի իրավունքով մեր կողմից գրավված Հայաստանի մասից, մինչև այնտեղ չստեղծվեն անձնական անվտանգության հաստատուն երաշխիքներ, և մինչև այնտեղ նոր կարգ չհաստատվի»[2]։

Հաշվի առնելով, որ Անդրկովկասում ստեղծվել էին բուրժուական կարգեր, Վ. Տերյանը գտնում էր, որ նորաստեղծ Հայաստանի վարչությունը կամ, ինչպես ինքն էր ասում, կառավարումը անմիջապես պետք է ենթարկվեր ոչ թե այդ կարգերին, այլ Ռուսաստանի «կենտրոնական իշխանությանը»։ Այնուհետև նա անհրաժեշտ էր համարում Հայաստանի նորաստեղծ կառավարության մեջ ներգրավել արևմտահայ ներկայացուցիչների և դրանցից ստեղծել «Հայաստանի մարզերի կառավարման Գլխավոր կոմիսարիատին կից հատուկ խորհուրդ»[3]։

Վ. Տերյանի այս ծրագիրը բխում էր արևմտահայերի կենսական շահերից և միակ իրական ուղին էր նրանց ազատա-

1 Վ. Տերյան, հ. 3, էջ 506։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 507։

3 Տե՛ս նույն տեղը։

գրման համար։ Ռուսական զորամասերի պահելը Արևմտյան Հայաստանում չէր լինի իմպերիալիստական քաղաքականություն, որովհետև Ռուսաստանում իշխանության գլուխ կանգնած էին ոչ թե կալվածատերերի ու կապիտալիստների պահանջները բավարարող, նրանց համար նորանոր հողեր նվաճող բուրժուազիան, այլ արդեն աշխատավորների կենսական շահերն արտահայտող ու պաշտպանող, նրանց ստրկական ու գաղութային լծից ազատող խորհուրդները։

Վ. Տերյանի «Զեկուցագրի» հիման վրա 1917 թ. դեկտեմբերի 29 (1918-ի հունվարի 11)-ին Խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդն ընդունեց «Դեկրետ Թուրքահայաստանի մասին» կամ նրա ինքնորոշման վերաբերյալ օրենք, որի մասին խոսք կլինի ստորև։

* * *

Անցնենք այժմ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումներին։

Դաշնակցությունը մեծ հույսեր էր կապում Անտանտի տերությունների հետ, գտնելով, որ նրանց հաղթանակը Թուրքիայի հանդեպ ազատություն կբերի արևմտահայությանը։ Ուստի պատերազմի առաջին իսկ օրից լծվեց ցարիզմի ռազմակառքին և արձագանքելով նրա կոչին, ձեռնամուխ եղավ հայկական կամավորական ջոկատների ստեղծմանը։ Կուսակցության Արևելյան բյուրոյի փաստաթղթերից մեկում ասվում էր. «Կամավորների կազմակերպումով մենք նպատակ ունենք մեր մասնակցությունը բերել այն պատերազմին, որով և ընդհանուր հաշվեհարդարի միջոցին ավելի մեծ իրավունքով պահանջել, որ դումարվելիք վեհաժողովը լուծե մեր հարցն էլ»։ Ապա հույս էր հայտնում, որ Անտանտի հաղթության դեպքում Արևմտյան Հայաստանը կստանա ինքնավարություն, որ իբր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունը մեծ համակրանքով է ընդունել «վեց վիլայեթների և նրանց անբաժան մաս Կիլիկիայի ինքնավարության միտքը»[1]։

Համերաշխվելով ցարիզմի հետ, դաշնակցությունը պաշտո-

1 Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916 թթ.), էջ 180—181։

նապես հայտարարեց, որ ինքը հրաժարվում է հեղափոխական գործունեությունից, մերժում է համագործակցել բոլոր այն կուսակցությունների հետ, որոնք զբաղվում են նման գործունեությամբ, «... քանի որ նրանք, հետապնդելով ընդհանուր հեղափոխական նպատակներ, կխանգարեն դաշնակցականներին հասնելու իրենց գլխավոր նպատակին՝ թուրքահայերի ազատագրմանը ռուսական զենքի օգնությամբ»[1]։

1914 թ. աշնանը Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչությունն արդեն արձանագրում էր. «Դաշնակցություն կուսակցությունը վերջին ժամանակներս ոչ մի հեղափոխական գործունեություն չի դրսևորում և բացառապես զբաղված է զինվորների ջոկատների կազմակերպմամբ, ուսուցումով և Թուրքիա ուղարկելով թուրքական կառավարության դեմ պայքարի համար, որ թույլ է տվել կայսրական մեծության փոխարքան Կովկասում»[2]։ Այդ օրերին ինքնակալությունն ու դաշնակցությունն այնքան էին մտերմացել, որ ցարական զրաքննությունը նույնիսկ արգելում էր վատ բան գրել դաշնակցության մասին, իսկ իշխանությունները թույլատրում էին նրա զրականության մուտքը Ռուսաստան[3]։ Ավելին, ցարական կառավարությունը բանտերից ազատեց դաշնակցականներին և նրանց լծեց հայկական կամավորական ջոկատների ստեղծման գործին։

Ինչպես ճիշտ են նշում պատմաբանները, կովկասյան իշխանությունները, չարաշահելով հայ ժողովրդի հայրենասիրական զգացմունքները և օգտագործելով հայ բուրժուազիայի ու նրա կուսակցությունների, հատկապես դաշնակցության ոգևորությունը, խրախուսեցին ու ղեկավարեցին հայկական կամավորական ջոկատների ստեղծումը, խոստանալով նրանց Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների ու Կիլիկիայի ինքնավարություն, բայց գործնականում լսել անգամ չուզենալով այդ մասին։ 1914 թ. նոյեմբերի 29-ին Թիֆլիսում ցարը նույնիսկ ընդունեց Ամենայն հայոց կաթողիկոսին և հայտնեց նրան հուսադրող խոսքեր[4]։

1 Տե՛ս Մ. Վ. Ազգումանյան, Հայաստան 1914—1917, էջ 168։

2 Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 182։

3 Տե՛ս նույն տեղը։

4 Մեր պատմագրության մեջ հաճախ է հիշատակվում այն խաղը, որ սարքեց փոխարքա Վորոնցով-Դաշկովը հայ երևելիների գլխին։ Երբ կաթողիկոսը Թիֆլիսից մեկնում է էջմիածին, փոխարքան հրավիրում է Մեսրոպ

Հայկական կամավորական ջոկատների կազմակերպման գործը ձևականորեն թեև ղեկավարում էր 1912 թ. Հայկական հարցը միջազգային ոլորտներում ներկայացնելու համար ստեղծված Ազգային բյուրոն, բայց փաստորեն՝ դաշնակցությունը։ Այդ կուսակցությունն էր ուղարկում աշխարհի, հատկապես Ռուսաստանի, տարբեր շրջանները գործակալներ, հղում կոչեր, վարում ցարական իշխանությունների հետ բանակցություններ, դրանցում ու տեղավորում ներկայացողների մի մասին, մերժում և վշտացնում մյուսներին։ Եվ այդ բոլորը նա կատարում էր կովկասյան իշխանությունների թելադրանքով ու դիտությամբ։ Փաստորեն դաշնակցությունը, հետապնդելով ազգային ազատագրական խնդիրներ, ծառայում էր ցարիզմին, օգնում նրա նվաճողական նպատակների իրագործմանը։

1914 թ. սեպտեմբերի 21—23-ը դաշնակցության Արևելյան բյուրոյի ղեկավարությամբ կայացավ կուսակցության կովկասյան շրջանային ժողովը, որը քննության առավ կամավորական ջոկատների կազմակերպման խնդիրը։ Նշվեց, որ կառավարությունն իր վրա է վերցնում այդ ջոկատների հանդերձավորման ու պարենավորման հոգսը, իսկ դաշնակցությունը՝ նրանց ուսուցման գործը։ Ապա ցանկություն հայտնվեց, որ Ազգային բյուրոն կամավորներ տալու հարցով բանակցություններ վարի Անտանտի նաև մյուս տերությունների հետ[1]։

Սկզբնական շրջանում կազմվեցին կամավորական չորս, այնուհետև ևս երեք խումբ։ Մինչև 1915 թ. վերջը հայ կամավորների թիվը հասավ, ըստ ոմանց, 6000-ի, իսկ ըստ այլոց՝ 10.000-ի[2]։ Նրանց նյութական միջոցները տրամադրում էր հիմնականում ցարական կառավարությունը, բայց որոշ գումարներ

եպիսկոպոսին և տալիս նրան մի կնքված արկղ, որ ուղարկի էջմիածին։ Նա նշում է, թե այդ արկղի մեջ, իբր, դրված է ինքնակալի հրովարտակը Հայկական հարցի լուծման և հայկական ինքնավարության վերաբերյալ։ Եպիսկոպոսը տալիս է արկղը դյուղատնտես Գյուզալյանին, որ տանի էջմիածին։ Հանձնարարությունը կատարվում է։ Բայց ո՞վ փոբձանք... Ալեքսանդրապոլում արկղը գողանում են՝ թանկարժեք դանձի հետ միասին։ Գողերը, իհարկե, փոխարքայի գործակալներն էին։ Երբ հայ երևելիները խնդրում են Վորոնցով-Դաշկովին՝ հրովարտակի երկրորդ օրինակը տալու մասին, նա մերժում է, համարելով դա անհնարին։

1 *Տե՛ս* Մ. Վ. Առզումանյան, նշվ. աշխ., էջ 180—181։

2 *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 548, Հայ ժողովրդի պատմություն, Եր., 1985, էջ 323։*

տալիս էին նաև հայերը։ Միայն 1915 թ. վերջերին հանգանակվել էր 1.444.000 ռուբլի, որից 1.020.000 ռուբլին Ռուսաստանի հայերից[1]։

Դաշնակցության մենաշնորհ դիրքը և ակտիվությունը ազգային ու կամավորական հարցերում դժգոհություն էր առաջացնում նրա հակառակ շրջաններում։ Ուստի, 1915 թ. փետրվարին կատարվեցին Ազգային բյուրոյի նոր ընտրություններ։ Պատվավոր նախագահ ընտրվեց Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, փոխնախագահներ՝ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսովը և Ներսիսյան դպրոցի ռեկտոր Հ. Խոնունցը, իսկ անդամներ՝ Ա. Բաբախանյանը, Հ. Թումանյանը, Հ. Սպենդիարյանը, Ս. Հարությունյանը, Խ. Աֆրիկյանը, Կ. Ստեփանյանը, Ջ. Քալանթարյանը, Ս. Կյուլպենկյանը, Ա. Արեյանը, Ստ. Լիսիցյանը և ուրիշներ։ Ազգային բյուրոյի այս նոր կազմում դաշնակցականները դարձյալ գերակշռություն ստացան[2]։ Այդ պատճառով էլ հակադաշնակցականների դժգոհությունը շարունակվեց և հանգեցրեց նրան, որ 1916 թ. մարտին «Մշակի» խմբագրությունում տեղի ունեցավ մշակականների, ռամկավարների, հնչակյանների, վերակազմյալ հնչակյանների, «Գաղափար», «Վան-Տոսպ», «Հովիտ» թերթերի ներկայացուցիչների մասնակցությամբ խորհրդակցություն[3]։ Խորհրդակցությունը փորձեց նսեմացնել դաշնակցության գերիշխանությունը, նույնիսկ Ազգային բյուրոն վերացնելու և նրա փոխարեն «Համաձայնության կոմիտե» ստեղծելու ճանապարհով։ Բայց այդ փորձերն ապարդյուն անցան։ «Ազգային բյուրոն մինչև վերջ էլ դաշնակցության ձեռքին մնաց որպես նրա դիրքերն ամրապնդելու գործիք»[4]։

Հայկական կամավորական ջոկատները, անշուշտ, օբյեկտիվորեն նպաստում էին ցարիզմի նվաճողական քաղաքականությանը և առիթ էին տալիս երիտթուրքերի հայաջինջ վարքագծի ակտիվացմանը, յուղ էին լցնում սրանց կրակին։ Բայց այնուամենայնիվ, այդ ջոկատների ստեղծումն ու կազմակերպումը, ինչպես իրավամբ նշում են պատմաբանները, բխում էր հայ ժողովրդի ազատատենչ ձգտումներից։ Համալրելով Կովկասյան

---

1 *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 548։*

2 *Տե՛ս նույն տեղը, էջ 547,* Մ. Վ. Առզումանյան, նշվ. աշխ., էջ 188։

3 *Տե՛ս* Մ. Վ. Առզումանյան, նշվ. աշխ., էջ 188։

4 *Նույն տեղը, էջ 189։*

ռազմաճակատում գործող ռուսական բանակի շարքերը, հայ կամավորները ցանկանում էին ոչ թե օժանդակել ցարիզմի իմպերիալիստական ձգտումներին, այլ ազատագրել իրենց եղբայրներին թուրքական բիրտ լծից։ Նրանք մասնակցեցին մի շարք ճակատամարտերի, գործեցին խիզախություններ և հազարավոր արևմտահայերի փրկեցին անվերապահ կոտորածներից[1]։

Հնչակյան կուսակցությունը, քանի դեռ չէր բացվել առաջին համաշխարհային պատերազմի կովկասյան ռազմաճակատը, գտնում էր, որ հայ ժողովուրդը չպետք է կապի իր ազատագրության հույսերը եվրոպական դիվանագիտության հետ։ Նա պետք է հենվի «միայն իր սեփական ուժերի, ինքնօգնության կենսունակ ազդակներու վրա»[2]։ Հայ աշխատավոր, ճնշված զանգվածները պետք է կազմակերպվեն և համախմբվեն, միավորվեն և մարտնչեն տիրողների դեմ։ Միայն այդ ճանապարհով նրանք ձեռք կբերեն իրենց փրկությունը։ 1914 թ. հոկտեմբերին կուսակցության օրգաններից մեկը՝ «Երիտասարդ Հայաստանը» գրում էր. «Հայ ժողովրդի ազատագրությունը իր սեփական գործն է, պետք է հաստատապես ներշնչվել այս գիտակցությամբ և կազմակերպվել ու միշտ կազմակերպվել»[3]։

Երբ Թուրքիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, հնչակյանները նախանշեցին, որ դրանով այդ երկիրը կարդաց իր մահավճիռը, քանի որ այժմ կործանվելու է ոչ միայն եվրոպական, այլև ասիական Թուրքիան[4]։ Նրանք հույս էին տածում, որ պատերազմը լուծելու է Հայկական հարցը, «հայերի համար աղատության արշալույս է ծագում. նրանց դարավոր տառապանքը, վիշտն ու ցավը պիտի անհետանա շուտով, երբ ռուսական հաղթական բանակը նվաճե Հայաստանը»[5]։

Հնչակյանները գտնում էին, որ եթե առաջ Ռուսաստանը Հայաստան էր ուղում առանց հայերի, ապա այժմ նրա քաղաքականությունը փոխված է, հիմա նա ուղում է պայմաններ ստեղծել հայության զարգացման համար, քանի որ գիտակցում է,

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 546—552։
2 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1914, հոկտեմբերի 20, № 2։
3 Նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, նոյեմբերի 3, № 4։
5 Տե՛ս նույն տեղը, նոյեմբերի 17, № 6։

որ այդ ժողովուրդը կնպաստի իր փոքրաթիվ առաջխաղացմանը, ծավալմանը, նորանոր դիրքերի նվաճմանը։ Ուստի հընչակյանները արձագանքեցին ցարական կոչին և ձեռնամուխ եղան հայկական կամավորական խմբերի ստեղծմանը և ռազմաճակատ ուղարկեցին երեք ջոկատ։ Հնչակյան կուսակցության կարծիքով, հայ ժողովուրդը պետք է մերժի հատվածական կամ մասնավոր պահանջներն ու գործունեությունը թե հայրենիքում և թե գաղթօջախներում։ «Վանենք մեր միջից հատվածական եսականությունը,— գրում էր «Երիտասարդ Հայաստանը»,— փարենք գործին մեր ամբողջ եռանդով և աշխատենք հնարավոր դարձնել մեր ուժերի համագործակցությունը, փոխադարձ անկեղծության ու վստահության զգացումներով, ոչ միայն կռվի դաշտում, այլև նրանից դուրս, արտասահմանյան գաղութների մեջ։ Այս է պահանջում գործի շահը, այս է պահանջում քաղաքական այն եզակի մոմենտը, որ համաշխարհային պատմության մեջ ազգերի վերածնության ու անկախության մի նոր դարագլուխ պիտի բանա»[1]։

Հնչակյանները Հայկական հարցի լուծում ասելով հասկանում էին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միացյալ ինքնավարության հաստատում, ընդ որում, եթե պատերազմից առաջ ցանկանում էին, որ այդ ինքնավարությունը լիներ Թուրքիայի կազմում, ապա այժմ՝ Ռուսաստանի հովանավորության տակ։ Նրանք գտնում էին, որ Անգլիան ու Ֆրանսիան այժմ «հակառակ չեն լինելու ինքնավար Հայաստանի կազմությանը, լինի այդ եզակ համաձայնության, թե նրանցից մեկի հովանավորության տակ»[2]։ Այդպիսով, հնչակյանները հաշվի չէին առնում Անտանտի տերությունների գիշատիչ ձգտումները և իրենց իղձերի ու ցանկությունների կենսագործումը միամտաբար կապում էին նրանց քաղաքականության հետ։

Պատերազմի տարիներին հնչակյանների տեսաբան Ս. Սապահ-Գյուլյանը Կահիրեում հրապարակած «Ինքնավար Հայաստան» գրքույկում խնդիր էր դնում, որ աշխարհում ցրված հայերը պետք է համախմբվեն՝ «որքան կարելի է սերտ ու ամուր», դառնան «մի ամբողջություն», հաշվի չառնելով դավանանքն ու

1 «Երիտասարդ Հայաստան», 1914, դեկտեմբերի 15, № 10։
2 Տե՛ս նույն տեղը, դեկտեմբերի 29, № 12։

կրոնը, դասային ու դասակարգային բաժանումները[1]։ Նրանք պետք է միավորեն իրենց նյութական ու բարոյական, քաղաքական ու մշակութային միջոցները և գործեն՝ «Ամենքը մեկի համար, մեկը՝ ամենքի» սկզբունքով[2]։ Միայն այդպիսի համախմբումը կփրկի կործանման դատապարտված հայերին։

Եվ ապա, հայերը պետք է ընտրեն բոլոր կուսակցություններ ի ներկայացուցիչներից բաղկացած համազգային գնկավարություն, որը, ներկայանալով խաղաղության կոնգրեսին, պահանջի նվազագույնը՝ Հայաստանի ու Կիլիկիայի քաղաքական ինքնավարություն՝ իր ամբողջ բնույթով ու պառլամենտական վարչակարգով։ Իսկ հայրենիքում հայ ժողովուրդը պետք է բարձրացնի հեղափոխություն, սկսելով այն «Հայաստանի հյուսիսարևելյան սահմանից, Կովկասի ռազմաճակատից»՝ Ռուսաստանի հովանավորությամբ և օգնությամբ։

Երբ Թուրքիան վերջնականապես կործանվի ու մասնատվի, «այդ ժամանակ վեհագույն ճիգ պիտի թափել և խորունկ, տևական, ուժեղ հայկական լայնածավալ շարժում առաջ բերել և մի քանի հարմարավոր վայրեր գրավելով՝ նրանց վրա հեղափոխական կարմիր դրոշ ծածանեցնել։ Մեր 500 տարվա ճիգը այդ է պահանջում։

Եթե կարողացանք այդ անել՝ վստահ, անկասկած լիննենք, որ ինքնավար Հայաստան, Կիլիկիա կունեննանք»[3]։

Ս. Սապահ-Գյուլյանը այնուհետև շարունակում էր, որ անցյալում, երբ Թուրքիան պարտվել է, առաջացել են փոքր պետություններ ու ինքնավար երկրներ։ Այդպես կլինի նաև մեր օրերում։ Թուրքիայի անկումն ու մասնատումը, միջպետությունների ու միջերկրների ստեղծումը ձեռնտու են եղել մեծ տերություններին։ Դրանք ձեռնտու կլինեն նրանց նաև այժմ։ Եթե այդ պետությունները տատանվեն, հայերն իրենց հեղափոխական գործունեությամբ պետք է վերջ դնեն նրանց տատանումներին ու քաշեն իրենց կողմը։ Այնպես որ, եզրափակում էր հեղինակը, «Մեր բախտը մեր ձեռքն է։ Պատասխանատուն մենք ենք մենք»[4]։

Ս. Սապահ-Գյուլյանը, իհարկե, չէր շրջանցում իմպերիա-

1 Տե՛ս Ս. Սապահ-Գյուլյան, Ինքնավար Հայաստան, էջ 89։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 95։

3 Տե՛ս նույն տեղը։

4 Նույն տեղը, էջ 96։

լիստական տերությունների փոխհարաբերությունները, նրանց հակասությունները, բայց սխալաբար կարծում էր, որ դրանք նպաստավոր են հայերի վերոհիշյալ գործողությունների համար։ Նա տեսնում էր միայն կործանվող ու մասնատվող, բայց ոչ երբեք ոճրագործ ու հայակեր Թուրքիան։ Հեղինակը հաշվի չէր առնում, որ մեծ տերությունների հակասությունների արանքում ճզմվող հայերն ի վիճակի չէին ապստամբվել, հեղափոխություն բարձրացնել և, ներգործել միջազգային դիվանագիտության վրա, ծառայեցնեին այն իրենց շահերին։ Ս. Սապահ-Գյուլյանը մեկն էր այն տեսաբաններից, որոնք ոչ մի բանի այնպես նվիրված չնկատեին, որքան իրենց վարդագույն անուրջներին։

Հայ սահմանադրական ռամկավարների կուսակցությունը, որ պատերազմի սկզբում գործում էր հիմնականում Թուրքիայում (ավելի ճիշտ՝ Վան-Վասպուրականում) և կանգնած էր օրինապահ քաղաքացիներ լինելու դիրքերում, մերժում էր հակահեղհեղական ելույթները, դատապարտում կամավորական շարժումը, պատերազմի ընթացքում (1915 թ. գարնանը), երբ հարկադրված տեղափոխվեց Անդրկովկաս ու հաստատվեց Թիֆլիսում, տեսնելով երիտթուրքերի կողմից իրագործվող հայկական ցեղասպանությունը, անմեղ ու անպաշտպան արևմտահայության բնաջնջումը, փոխեց իր տեսակետը և կոչ արեց պայքարել իթթիհադականների վայրագությունների դեմ, փրկել արևմտահայությանը ոչնչացումից։ Կուսակցության օրգան «Վան-Տոսպը», որ արդեն հրատարակվում էր Թիֆլիսում, 1915 թ. հուլիսին նկարագրելով հայկական ջարդերը Թուրքիայում, իր առաջնորդողներից մեկում գրում էր. «Վրեժ։ Այդ է միակ բառը, որ պետք է ոգևորե կոտորածեն ազատ մնացող յուրաքանչյուր հայու սիրտը։ Վրեժ՝ մեր մորթոտվող եղբայրներուն ու քույրերուն, մեր ավերակներուն, մեր արյունի մեջ խեղդված յուրաքանչյուրին համար։ Վրեժ այն վայրենի ոհմակներու հանդեպ, որ այս պահուս դիվային հրճվանքով կլոզան հոսող հայ արյան մեջ... աչքի տեղ աչքեր և ականային տեղ ականաներ»[1]։

Ուրախությամբ արձանագրելով, որ ռուսները ջախջախում են թշնամուն և առաջ շարժվում, շարաթթերթը ցանկանում

1 «Վան-Տոսպ», 1915, հուլիսի 3, № 14—106, էջ 2։

էր, որ նրանք ոչ թե կտրեն Թուրք օձի պոչը, այլ ճզմեն գլուխը. «Ամեն մի հայ, կին թե տղամարդ, հարուստ թե աղքատ իր ներկայական պարտականությունը պիտի համարի մասնակցել ներկա ազատագրական և վրեժխնդրական արշավանքին— իր ընդունակություններուն, իր տրամադրելի միջոցներուն չափով»[1]։ Նրանք, ովքեր չեն կարող զինվոր լինել, պետք է օգնեն ընդհանուրի գործին նյութական միջոցներով։ Պետք է ապացուցել «եր ռուս և հայ եղբայրներուն՝ թե ոչինչ չենք խնայեր մերովնն վերցնելու համար իրանց կրած գործին ծանրությունը»[1]։

Եթե առաջ ռամկավարները դեմ էին կամավորական շարժմանը, ապա այժմ «իրենց մասնակցությունը բերեցին դրան»[2]։ Նրանք կանգնեցին արևելահայ մարտական շրջանների դիրքերում։

Ցարիզմի մարտակառքին լծվեցին նաև հայ կադետները։ Չորրորդ Պետական դումայի դեպուտատ Մ. Պապաջանովը հանդուն կերպով միջնորդում էր ռուսական իշխանությունների առաջ, որ նրանք բանտերից ու աքսորից ազատեն հայ զանազան կուսակցություններին, հատկապես դաշնակցությանը պատկանող անձանց և թույլատրեն արտասահմանից վերադառնան տարագրվածները, որպեսզի օգնեն ընդհանուրի գործին, այսինքն՝ ծառայեն ցարիզմի զավթողական նպատակներին։ Կադետների ներկայացուցիչները նույնպես մեկնում էին ռուսական քաղաքները, հավաքագրում կամավորներ, կազմակերպում հանգանակություններ և կատարում ինքնակալական իշխանությունների այլ հանձնարարություններ։ Հայկական պարբերականներում կադետները հանդես էին գալիս հոդվածներով և նշում, թե ներկա պատերազմում Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան պարտվելու են, իսկ նրանց դաշնակից Թուրքիան հանձնվելու է հաղթողների ողորմածությանը։ Անտանտի երկրները բաժանելու են այն երեք ազդեցության շրջանների. Անգլիան գերիշխելու է Արաբիայում ու Միջագետքում, Ֆրանսիան՝ Սիրիայում, իսկ Ռուսաստանը՝ Հայաստանում, շնորհելով նրան ինքնավարություն։ Կադետները որոշում էին ինքնավար Հայաստանի սահմանները ելնելով ոչ միայն պատմական, այլև դեմոգրաֆիկ սկզբունքներից։ Նշում էին, որ այն պետք է

1 Տե՛ս «Վան-Տոսպ», 1915, հուլիսի 3, № 14—106, էջ 2։

2 Տե՛ս Հր. Ռ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 341։

ընդգրկի Վանի (379.800 մարդ), Բիթլիսի (398.700 մարդ), Էրզրումի (645.700 մարդ), Սվազի (1.057.500 մարդ), Խարբերդի (575.200 մարդ), Դիարբեքիրի (471.500 մարդ), Տրապիզոնի (1265.000 մարդ) և Ադանայի (422.000 մարդ) վիլայեթները, ընդամենը 5.215.400 բնակչությամբ։ Այդ բնակչության ավելի քան 2 միլիոնը հայեր են, ընդ որում Վանի, Բիթլիսի և Ադանայի վիլայեթներում նրանք կազմում են բացարձակ, իսկ մնացած վիլայեթներում՝ հարաբերական մեծամասնություն։

Կադետները գտնում էին, որ այդ վիլայեթներից պետք է կտրել մի քանիսի ծայրագավառները, որտեղ հայերը սակավաթիվ են, իսկ մյուս ժողովուրդները ստվարաթիվ։ «Այդպես են Տրապիզոնի վիլայեթի արևմտյան մասը... Սվազի վիլայեթի արևմտյան և հյուսիսարևմտյան մասերը, Բիթլիսի ու Դիարբեքիրի վիլայեթների Միջագետքին սահմանակից հարավային մասերը»[1]։ Դրա հետևանքով ազգաբնակչությունը վերհիշյալ 5.215.400-ից կպակասի շուրջ կես միլիոնով, բայց ոչ թե հայերի, այլ հիմնականում այլ ժողովուրդների հաշվին։

Կադետները հույս էին հայտնում, որ երբ Հայաստանը ստանա ինքնավարություն, նրա տարագիր բոլոր որդիները հետ կվերադառնան, կշենացնեն իրենց օջախները և ազգությունը կդնեն ավելի ամուր հիմքերի վրա։ Նրանք գտնում էին, որ Հայաստանը կարող է ստանալ ինքնավարություն միայն Ռուսաստանի օգնությամբ։ Իսկ Ռուսաստանն էլ նրա ինքնավարությունից կունենա իր օգուտները։ Ինչ վերաբերում է ռուս մարդասեր հասարակայնությանը, ապա նա կողջունի այդ բանը, քանզի տեսնում է, որ «ազատագրվում է բազմաչարչար մի փոքրիկ ժողովուրդ» և հնարավորություն է ստանում «մասնակից լինելու քաղաքակրթության բարիքներին, սկսելու իր առանձնակի, ազգային հասարակական կյանքը»[2]։

Պատերազմի տարիներին արևմտահայերի հարցի լուծման իրենց տեսակետով հանդես եկան նաև «սպեցիֆիկները»։ Նրանց ղեկավար Դ. Անանունը «Հայության հավաքումը» հոդվածաշարում նախապես նշում էր, որ հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում ունեցել է հավաքման գաղափար ու մեծ ցանկություն, սակայն չի հասել նպատակին։ Անհաղթահարելի

1 «Արարատ», 1914, դեկտեմբեր, էջ 1090։

2 Տե՛ս նույն տեղը։

իշխընդոտները մեր օրերում նույնպես թույլ չեն տալիս նրան իրագործելու այդ նպատակը։ Ուստի հայերը ամենուրեք պետք է հրաժարվեն քաղաքական, այսինքն՝ պետական հավաքման ու համախմբման ձգտումներից և կենսագործեն իրենց կուլտուր-կրթական խնդիրները։

Խոսելով արևելահայերի մասին, Դ. Անանունը նշում էր, որ նրանք, ինչպես և հայ քաղաքական կուսակցությունները, չեն պահանջել Ռուսաստանից անջատվել, չեն պահանջել «անգամ տերիտորիալ ինքնուրույնություն»։ Նրանք «բոլորը ցանկացել են տեսնել Ռուսաստանը դարձած ամկամալար ու բարենորոգված երկիր և հայերին այդ երկրի իրավահավասար քաղաքացիներ»։ Նրանք բոլորը ցանկացել են ունենալ անարգել հոգևոր զարգացման հաստատություններ։ Ուստի «սպեցիֆիկների» ղեկավարը արևելահայերի համար առաջադրում էր «ազգային-կուլտուրական ինքնուրույնության պահանջը»[1]։

Անդրադառնալով արևմտահայերին, Դ. Անանունը գտնում էր, որ նրանք արդեն ձեռք են բերել հոգևոր հավաքման և կուլտուր-կրթական զարգացման այնպիսի միջոց, ինչպիսին է 1863 թ. Ազգային սահմանադրությունը, «այնպիսի խոշոր նվաճում, որի մասին չէին կարող երազել ռուսահայերը»[2]։ Նա մերժում էր հայ որոշակի շրջանների քաղաքական հավաքման պահանջը, «արևի տակ իր տեղն ունենալու» ձգտումները, նրանց այն ծրագրերը, որոնք գտնում էին, թե հայկական վեց վիլայեթների բախտն այնպես պետք է տնօրինել, որ դառնան հայերի համար թե հարաբար անկյուն և «թե մի հայկական քաղաքական միավոր»։ Դ. Անանունը այդպիսի ծրագրերը նախ համարում էր անիրագործելի, նշելով, թե «վեց վիլայեթների ստացման համար ավելի հզոր գործոններ են հարկավոր, իսկ դա պակասում է հայերին»[3]։ Երկրորդ՝ հարցի նման լուծումը անուշադրության ու անտերության կմատներ այն հայերին, որոնք բնակվում են Թուրքիայի կենտրոնական ու արևմտյան շրջաններում և որոնք հանդիսանում են արևմտահայերի ավելի կուլտուրական ու զարգացած մասը։

«Սպեցիֆիկների» ղեկավարը գտնում էր, որ արևմտահայության հարցը կարող է լուծել միայն նրա հոգևոր հավաքումը։ Դրա համար պետք է վարել այնպիսի ազգային քաղաքականություն, որը «չպիտի մերժե համայնակեցության անհրաժեշտությունը Թուրքիայում (ինչպես այդ չի մերժվում Ռուսաստանի համար)։ Դա հիմնական դրույթն է»[1]։ Ապա շարունակում էր. «Եթե Թուրքիան անտանելի է իր քաղաքական կյանքով, պիտի նպաստել նրա բարենորոգմանը, որքան էլ դա ծանր գործ լինի։ Կարող է լինել Թուրքիայի բաժանման հարց, սակայն այստեղ հայերին չեն հարցնելու, և նրանք պիտի հպատակվեն նրան, ում բաժին են ընկել։ Թույլը և անզորը այլ կերպ չի կարող վարվել»[2]։

Հավատարիմ իր «կուլտուր-ազգային ինքնավարության» դաղափարին, Դ. Անանունը եզրափակում էր՝ բոլոր դեպքերում արևմտահայերը «պիտի ընդգրկեն ազգային-կուլտուրական ինքնավարության պահանջը։ Ճանապարհը այդ պահանջի համար հարթված է. դա ազգային սահմանադրության գոյությունն է»։ Հայոց հարցի լուծումը «պետք է փնտրել Թուրքիայում և ազգային-կուլտուրական ինքնուրույնության միջոցով»[3]։

Այդ տեսակետին էր կանգնած նաև Դ. Անանունի գաղափարակից Բ. Իշխանյանը։ Նա գտնում էր, որ հայկական հարցի լուծման համար առաջացել է մի բարենպաստ պայման։ Դա այն է, որ եթե առաջ Անգլիան Ռուսաստանի թշնամին էր, ապա այժմ՝ նրա դաշնակիցը։ Նրանք միասին պատերազմում են Թուրքիայի դեմ։ Երբ Գերմանիան պարտվի, Թուրքիան կդառնա դաշնակիցների ավարը։ Բայց հայկական հարցի լուծման համար կա մի լուրջ դժվարություն։ Այդ հայության ցրվածությունն է Թուրքիայով մեկ։ Մի տեղում հայերն են կազմում մեծամասնություն (Վանում), մի այլ տեղում՝ թուրքերը (Էրզրումում)։ Նման պայմաններում հայկական հարցը արմատապես չի լուծվի, եթե անգամ ստեղծել վեց վիլայեթների ու Կիլիկիայի միասնական ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության ներքո, քանի որ անուշադրության կմատնվեն Օսմանյան կայսրության կենտրոնական ու արևմտյան շրջաններում բնակվող հայերը[4]։

1 Տե՛ս «Մշակ», 1914, հոկտեմբերի 17, № 234։
2 Տե՛ս նույն տեղը, հոկտեմբերի 18, № 235։
3 Տե՛ս նույն տեղը, հոկտեմբերի 19, № 236։

1 Տե՛ս «Մշակ», 1914, հոկտեմբերի 19, № 236։
2 Նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը։
4 Տե՛ս նույն տեղը, դեկտեմբերի 10, № 279։

Բ. Իշխանյանը գտնում էր, որ Հայկական հարցի լուծման համար Թուրքիայի հայաբնակ վիլայեթները կամ նրանց մի մասը (ինչպես կորոշեն Անտանտի հաղթող տերությունները) նախ պետք է միացնել Կովկասին, «մտցնելով այնտեղ տնտեսական և ցեղական ազգային առանձնահատկությունների համապատասխան լայն ինքնավարական-վարչական ձևեր։ Երկրորդ՝ Փոքր Ասիայում և Եվրոպ. Թուրքիայում մնացած հայկական հատվածի համար մտցնել իրավաքաղաքացիական արմատական ռեֆորմներ և ազգային-կուլտուրական (էքստերիտորիական) ավտոնոմիա»[1]։ Հայաբնակ շրջանների միացումը Կովկասին, շարունակում էր հեղինակը, շատ բաներով լավ կլինի նրանց բնակիչների և, առաջին հերթին, հայերի համար, քանի որ Ռուսաստանը, գտնվելով անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա, կնպաստի նրանց սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացմանը, իսկ Թուրքիայում մնացած հայերի համար պետք է մտցվեն բարենորոգումներ և նրանց տրվի ազատ զարգացման իրավունքներ։ Այնուհետև նա կրկնում էր Դ. Անանունին, ասելով, որ 1863 թ. արևմտահայ սահմանադրությունը «պետք է իր կուլտուրական գործունեության բովանդակությամբ ընդարձակել, աշխարհականացնել իր վերին վարչական դեկավար օրգաններով և նրա գոյությունը ամրացնել հիմնական օրենքներով»[2]։

Այդպիսով, ինչպես Դ. Անանունը, այնպես էլ Բ. Իշխանյանը թե պատերազմից առաջ և թե պատերազմի տարիներին շարունակում էին պաշտպանել հայկական հարցի լուծման «կուլտուրա-ազգային ինքնավարության» գաղափարը, որը հավիտ թե կարելի էր իրագործել։

* * *

Այլ էր, սակայն, բոլշևիկների տեսակետը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Այն ժամանակ, երբ II Ինտերնացիոնալի կուսակցությունները հանդես եկան հանուն, այսպես կոչված, հայրենիքի պաշտպանության և այդպիսով կանգնեցին իրենց երկրների բուրժուազիայի կողմը, դավաճանելով պրոլետարիատին, բոլշևիկները հետևողականորեն պայքարեցին բանվոր դասակարգի շահերի համար, մշակելով մարքսիստական պլատֆորմ պատերազմի ու խաղաղության պրոբլեմների մասին։ Նրանք կոչ արեցին իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի, ցանկանալ պրոլետարիատի հաղթանակը և պատերազմող բոլոր երկրների կառավարությունների պարտությունը, լիակատար խզել կապերը կրախի մատնված II Ինտերնացիոնալի հետ և ստեղծել նոր՝ III Ինտերնացիոնալ։

Կուսակցության առաջնորդ Վ. Ի. Լենինը հիմնովին հերքեց բուրժուական ու մանր բուրժուական շրջանների այն հայտարարությունները, որ իբր բոլշևիկները անտարբեր են հայրենիքի հանդեպ։ Նա ցույց տվեց, որ հայրենասերը նա չէ, ով կողմնակից է թալանչիական պատերազմի և այդպիսով պաշտպանում է կալվածատերերի ու բուրժուազիայի քաղաքականությունը, այլ նա, ով պայքարում է աշխատավոր զանգվածների շահերի համար, ով ցանկանում է «... ազատ ու անկախ, ինքնուրույն, դեմոկրատական, հանրապետական, հպարտ Վելիկոռուսիա, որը հարևանների նկատմամբ իր հարաբերությունները կառուցի հավասարության մարդկային սկզբունքի վրա, այլ ոչ թե մեծ ազգն ստորացնող արտոնությունների ճորտատիրական սկզբունքի վրա»[1]։

Անդրկովկասում լենինյան թեզերը կենսագործելու նպատակով, 1915 թ. հոկտեմբերի 4-ին Բաքվում, Ստ. Շահումյանի ղեկավարությամբ, հրավիրվեց կուսակցական ընդհատակյա խորհրդակցություն, որին մասնակցեցին Թիֆլիսի, Բաքվի և Քութայիսի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչները։ Ստ. Շահումյանի զեկուցման հիման վրա խորհրդակցությունն ընդունեց մի շարք կարևոր որոշումներ։ Այն նշեց, որ Անդրկովկասում հայ բուրժուազիայի, վրաց ազնվականության և ադրբեջանական բեգերի վարած քաղաքականության հետևանքով ազգային հարաբերությունները խիստ սրվել են։ Նրանցից յուրաքանչյուրը ձգտում է հաճոյանալ ինքնակալական իշխա-

1 «Մշակ», 1914, դեկտեմբերի 11, № 280։

2 Տե՛ս նույն տեղը։

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ., հ. 26, էջ 127։

նություններին և ստանալով նրանց պաշտպանությունը, ավելի ամրապնդել իր քաղաքական ու տնտեսական դիրքերը, մեծացնել հարստությունը։ Վրաց ու ադրբեջանական ազնվականությունը, չհանդուրժելով հայ բուրժուազիայի ազդեցությունը փոխարքայի վրա, իրար հետ բոլոր կնքելով ջանում են վարկաբեկել հայ կապիտալիստներին և, չբավարարվելով դրանով, աշխատում են իրենց դասակարգային քաղաքականության և մրցակցության ոլորտում ներգրավել վրացական ու ադրբեջանական աշխատավոր զանգվածներին և նրանց մեջ չարություն ու ատելություն բորբոքել ամբողջ հայ ժողովրդի հանդեպ[1]։

Խորհրդակցությունը միաժամանակ դատապարտեց հայ բուրժուազիայի ու դաշնակցության վարքագիծը և հանձնարարեց բոլշևիկներին մերկացնել Անդրկովկասի իշխող դասակարգերի հանցավոր քաղաքականությունը, կոչ արեց աշխատավոր զանգվածներին՝ չենթարկվել նրանց պրովոկացիաներին և «հիշել, որ միայն բոլոր ազգությունների դեմոկրատիայի միասնության մեջ է նրանց հաղթանակի ու ազատագրման գրավականը...»[2]։

Խորհրդակցությունն ընտրեց ՌՍԴԲԿ կովկասյան բյուրո, որի կազմի մեջ մտան Ստ. Շահումյանը, Ֆ. Մախարաձեն, Ի. Ֆիոլետովը, Ս. Քավթարաձեն, Ն. Ալաջալովան և ուրիշներ[3]։ Նրանց ղեկավարությամբ Անդրկովկասի բոլշևիկները մեծ ջանքեր գործադրեցին Բաքվի խորհրդակցության որոշումները կենսագործելու և աշխատավորների մեջ քաղաքական աշխատանքներն ուժեղացնելու համար։ Կարևոր դեր խաղաց հատկապես 1915 թ. դեկտեմբերի սկզբներից Թիֆլիսում հայերեն լեզվով հրատարակվող նրանց «Պայքար» շաբաթաթերթը, որը լայնորեն լուսաբանում էր կովկասահայ իրականությունը, անհաշտ կռիվ մղելով բուրժուական ազգայնական գաղափարախոսության ու քաղաքականության դեմ, ձգտում էր բարձրացնել երկրամասի աշխատավորության ինտերնացիոնալ գիտակցությունը և համախմբել նրան լենինյան կուսակցության շուրջը։

1 Տե՛ս Ստ. Շահումյան, երկ, հ. 3, էջ 27։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 28—29։

3 Տե՛ս Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր, Եր., 1963, էջ 168—169։

Հայաստանի բոլշևիկները ակտիվացրեցին տեղական կուսակցական խմբերը և աշխատանքներ ծավալեցին քաղաքներում ու գյուղերում, բացատրելով ազգաբնակչությանը պատերազմի իմպերիալիստական բնույթը, ազգային կուսակցությունների, այդ թվում նաև դաշնակցության սխալ քաղաքականությունը։ Նրանք լուրջ աշխատանքներ տարան նաև ցարական զորամասերում, դաստիարակելով զինվորներին հեղափոխության և ցարիզմի դեմ ատելության ոգով[1]։

Բոլշևիկների գլխավոր հոգսերից մեկն էլ արևմտահայության փրկության հարցն էր։ Նրանք մերժում էին հայ քաղաքական կուսակցությունների այն պնդումները, թե բոլշևիկներն իրր ազգություն չեն ճանաչում, արևմտահայերի հարցը նրանց սրտին խորթ է։ Բոլշևիկները ցույց էին տալիս, որ արևմտահայերի խնդրով իրենք զբաղվել են իրենց երևան գալու հենց առաջին օրից, սակայն չեն ընդունել արևմտահայերի ազատագրության այն ուղին, ինչ ընտրել էին հայ բուրժուական կուսակցությունները։ Նրանք մերժում էին կամավորական խմբերի ստեղծումն ու թուրքերի դեմ ուղարկելը, գտնելով, որ դա առիթ կտա երիտթուրքական ոճրագործներին ավելի սաստկացնելու հայերի հալածանքները և կազմակերպելու նրանց զանգվածային կոտորածները։ Ճիշտ է, հայ կամավորները գնում էին իրենց տանջված եղբայրներին փրկելու, ազատելու օսմանյան դարավոր բռնություններից և այդ իմաստով մեկնում էին կռվելու և մեռնելու ազնիվ ու վեհ գաղափարների համար։ Բայց այդուհանդերձ բոլշևիկները սխալ ու կորստաբեր էին համարում այդ ուղին։ Ստ. Շահումյանը 1916 թ. ամռանը գրում էր. «Այո, մենք հակառակ ենք եղել դաշնակցականների, հնչակյանների ազգային քաղաքականության։ Մենք ասել ենք նրանց՝ դուք, պարոններ, հայ ազգի համար կույր առաջնորդներ եք։ Դուք ունեք բարի ցանկություններ, բայց ձեր գործերը, ձեր ընտրած ճանապարհը կորստաբեր են հայ ժողովրդի համար»[2]։

Հայ ժողովուրդը «ապրում էր երկու հրեշավոր բռնակալնե-

1 Տե՛ս Հ. Մելիքյան, Հեղափոխական շարժումները Կովկասյան բանակում (1914—1917), Եր., 1975, Մ. Արզումանյան, նշվ. աշխ.։

2 Ստ. Շահումյան, երկ, հ. 3, էջ 47։

րի՝ արյունոտ ցարի ու կարմիր սուլթանի իշխանության տակ։ Նա շրջապատված էր իրենից է՛լ ավելի հետամնաց, դժբախտ տաճիկ և քուրդ ժողովուրդներով՝ Տաճկաստանում և Թուրք ու վրացի ժողովուրդներով՝ Ռուսաստանում։ Հարկավոր էր խելոք և հեռատես քաղաքականությամբ ձգտել որքան կարելի է համերաշխ ապրել հարևանների հետ։ Հարկավոր էր այնպես դեկավարել քաղաքականության նավը, որ նա չջախջախվի «... տաճիկ Սցիլլայի և ռուսական դեսպոտիզմի խարիբդայի» արանքում...»[1]։

Ստ. Շահումյանը նշում էր, որ հայերի դժնդակ կացության պատճառը, անշուշտ, բռնապետական վայրագ կարգերն են և ոչ դաշնակցությունը կամ այլ կուսակցությունները, նրանք ի վիճակի չեն «դժոխքը դրախտ դարձնել»։ Բայց «... կուսակցությունները ստեղծվում են հենց նրա համար, որ ըստ կարելույն լավացնեն ժողովրդի դրությունը, որ խելացի կերպով առաջնորդեն մասսաներին և տանեն նրանց ազատության ճանապարհով»[2]։

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո բոլշևիկները շարունակեցին պայքարը աշխատավորության ազատագրության համար, քանի որ այդ ազատությունը դեռ չէր իրագործվել։ Ներքին քաղաքականության ասպարեզում նրանք կոչ արեցին ամբողջ իշխանությունը խորհուրդներին, հողը՝ գյուղացիներին, իսկ արտաքին քաղաքականության բնագավառում առաջադրեցին ոչ թե իմպերիալիստական բուրժուազիայի «պատերազմ մինչև վերջ», «հայրենիքի պաշտպանություն» լոզունգները, այլ «բոլոր երկրների պրոլետարների եղբայրության լոզունգը»[3], կոչ արեցին հասնել ընդհանուր հաշտության՝ «առանց անեքսիաների և ռազմատուգանքների, ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա»[4]։

Բոլշևիկները գտնում էին, որ չպետք է կնքել այնպիսի հաշտություն, որ վերադարձ կատարվի դեպի նախապատերազմյան

1 Տե՛ս Ստ. Շահումյան, երկ, հ. 3, էջ 48։
2 Նույն տեղը։
3 Տե՛ս նույն տեղը, էջ 95։
4 Տե՛ս նույն տեղը, էջ 125։

վիճակը, կամ իմպերիալիստական մի զավթումը փոխարինվի մի այլ զավթումով։ Անհրաժեշտ է կնքել «այնպիսի հաշտություն, որի պայմանը բոլոր գրաված մարզերից (Բելգիայից, Լեհաստանից, Սերբիայից, Ռումինիայից, Պարսկաստանից և Միջագետքից) զորքերի ընդհանուր դուրս բերումն է և եվրոպական խոշոր տերությունների կազմում բռնությամբ պահվող բոլոր ազգերին ու այդ տերությունների գաղութներին իրավունք վերապահելը՝ ազատորեն լուծելու իրենց պետական գոյության հարցը»[1]։

Բոլշևիկների այդ կարևոր դրույթը, պաշտպանելով համաշխարհային իմպերիալիզմի կողմից ճնշված ու հարստահարված ժողովուրդների կենսական շահերը, դուռ էր բացում նաև արևմտահայության հարցի լուծման համար։

1917 թ. հոկտեմբերի 6-ին կայացած ՌՍԴԲԿ Կովկասյան երկրային համագումարում Ստ. Շահումյանն ավելի կոնկրետ էր դնում այդ խնդրի լուծումը։ Նա գտնում էր, որ Անդրկովկասը պետք է բաժանել երեք մարզերի. 1) Արևմտյան Անդրկովկաս— Քութայիսի, Բաթումի նահանգները և Թիֆլիսի նահանգի մի մասը. 2) Արևելյան Անդրկովկաս— Երևանի, Կարսի, Ելիզավետպոլի նահանգները և Թիֆլիսի նահանգի մի մասը, 3) Բաքվի նահանգը, Ելիզավետպոլի նահանգի մի մասը և Դաղստանի մարզը։ Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին կամ Թուրքահայաստանին, ապա նրա «հարցի լուծումը մենք պետք է թողնենք հենց այդ մարզի բնակչությանը...»[2]։ Եթե նրանք ուզում են մտնել Ռուսաստանի կազմում, պետք է միանան հայերին, իսկ եթե ուզում են ստեղծել ազգային-կուլտուրական ինքնավարություն, ապա «ամբողջ կուլտուր-դաստիարակչական աշխատանքը տրվում է ազգային սեյմերին, որոնք միավորում են տվյալ ազգի անդամներին, որտեղ էլ որ նրանք գտնվեն»[3]։ Ստ. Շահումյանը կուլտուր-ազգային ինքնավարությունը թեև համարում էր բացահայտ ազգայնական, բայց հավատարիմ մնալով ազգերի ինքնորոշման բոլշևիկյան քաղաքա-

1 Տե՛ս Ստ. Շահումյան, երկ, հ. 3, էջ 127։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 270։
3 Տե՛ս նույն տեղը։

կանությանը, ուզում էր ընդունել կառավարման նաև այդ ձևը, եթե բնակիչները ընտրեին այն[1]։

Քիչ անց, 1917 թ. հոկտեմբերի 15-ին, Ստ. Շահումյանը կրկին անդրադարձավ Արևմտյան Հայաստանի հարցին և նշեց, որ ինչպես սա, այնպես էլ մյուս վիճելի մարզերը (Էլզաս—Լոթարինգիան, Մերձբալթյան երկրները, Լեհաստանը և այլն) ընդհանուր քվեարկությամբ իրենք պետք է որոշեն իրենց բախտը՝ «արդյոք ուզո՞ւմ են միանալ պետություններից որևէ մեկին, թե՞ ինքնուրույն կերպով գոյություն ունենալ», «... այդ է վիճելի մարզերի ստեղծված չափազանց խճճված դրությունից դուրս գալու միակ էական ելքը»[2]։

Հոկտեմբերյան սոցիալիստական հայտնի հեղափոխության հաղթանակից հետո նորաստեղծ խորհրդային կառավարությունը լուծեց ցարիզմի կրնկի տակ ընկած մի շարք ժողովուրդների հարցը։ 1917 թ. դեկտեմբերի 29 (1918 թ. հունվարի 11-ին) այն ընդունեց նաև օրենք Արևմտյան Հայաստանի ինքնորոշման կամ «Դեկրետ «Թուրքահայաստանի» մասին»[3]։ Ահա այդ դեկրետը.

«Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն։

«Ժողովրդական կոմիսարների խորհուրդը գտնում է, որ այդ իրավունքի կենսագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների պայմաններում, որոնք բացարձակապես անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար։

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը այդպիսի երաշխիքներ է համարում՝

1. Զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանից» և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը՝

[1] Տե՛ս Ստ. Շահումյան, երկ, հ. 3, էջ 270։

[2] Նույն տեղը, էջ 281։

[3] «Դեկրետի» ստեղծման պատմությունը հանգամանորեն տե՛ս Լ. Ա. Խուրշուդյան, Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Եր., 1977, էջ 14—55։

«Թուրքահայաստանի» բնակիչների անձնական ու գույքային անվտանգությունը ապահովելու նպատակով։

2. Տարբեր երկրներում ցրված գաղթական-հայերի, ինչպես նաև վտարանդի հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները։

3. Պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները, որի վրա ժողովրդական կոմիսարների խորհուրդը պետք է պնդի թուրքական իշխանությունների հետ ունենալիք խաղաղ բանակցությունների ժամանակ։

4. «Թուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական կառավարչության կազմակերպումը՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի դեպուտատների խորհրդի ձևով։

Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարվում է ամեն տեսակ օգնություն ցույց տալ «Թուրքահայաստանի» բնակչությանը 2-րդ և 3-րդ կետերի իրականացման գործում, ինչպես նաև ձեռնամուխ լինել խառը հանձնաժողով ստեղծելու «Թուրքահայաստանի» սահմաններից զորքերը հանելու ժամկետն ու եղանակները սահմանելու համար (կետ 1-ին)։

Ս ա ն ո թ ու թ յ ու ն.— «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները որոշվում են հայ ժողովրդի՝ դեմոկրատականորեն ընտրված ներկայացուցիչների կողմից, խառը և վիճելի (մուսուլմանական և այլն) օկրուգների դեմոկրատական ընտրված ներկայացուցիչների համաձայնությամբ՝ Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսարի հետ միասին։

Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ՝
Վ. Ուլյանով (Լենին)
Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար՝
Ի. Ջուղաշվիլի (Ստալին)»[1]

[1] Հայաստանը... փաստաթղթերում, էջ 418—419։

Անշուշտ այդ դեկրետը կլուծեր Թուրքահայաստանի հարցը հայերի օգտին, եթե ռուսական զորքերը դուրս չբերվեին այնտեղից և պաշտպաններ նրանց։ Սակայն զորքերի դուրս բերումն ի չիք դարձրեց դեկրետի հայամետ էությունը և լայն դուռ բացեց թուրքական ներխուժման համար։ Վերջիվերջո անհրաժեշտ էր նկատել, որ կոտորածներից արնաքամ եղած ու աստանդական ընկած արևմտահայերը ի վիճակի չէին սեփական ուժերով պահել իրենց հայրենիքի անկախությունը և ապահովել օրինական հանրաքվեն։

Այդպիսով, XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ հասարակական քաղաքական բոլոր հոսանքներն ու կուսակցությունները ձգտում էին ազատագրել արևմտահայությանը օսմանյան բռնություններից ու ճնշումներից, փրկել նրան կործանումից։ Գիտակցելով, որ ազգային ուժերն անկարող էին այդ անել, նրանցից ոմանք ապավինում էին դրսաշխարհի իմպերիալիստական, մյուսները՝ դեմոկրատական շրջաններին։ Եղան նաև ժամանակներ, որ նրանք փրկության հույսեր կապեցին Թուրքիայի նորքին իրադարձությունների հետ։ Բայց այդ որոնումները ի դերև ելան։ Եթե հետադարձ հայացք նետենք մեր ազգային ազատագրական պայքարի անցած ուղուն ու որոնենք նրա պարտության պատճառները, ապա պետք է նկատենք, որ դրանք ոչ այնքան ազգային կուսակցությունների ներհակությունների կամ նրանց ղեկավարների սուբյեկտիվ սխալների հետևանք էին, որքան այն աշխարհագրական միջավայրի ու օբյեկտիվ հասարակական քաղաքական պայմանների, որոնց մեջ ապրում էր հայ ժողովուրդը։

Պատմական հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ արևմտահայության ճակատագիրը վճռեցին ոչ թե ներքին՝ ազգային փոքր ու տկար, այլ արտաքին աննամեմատ մեծ և հզոր ուժերը։ Տերությունների շահերը բախվեցին Հայաստանում, ունեցան հայավնաս ընթացք։ Թուրքական կառավարությունը օգտագործեց այդ իրադրությունը և, տեղահանելով ու կոտորելով արևմտահայերին, տիրացավ նրանց հայրենիքին։ Արևմտահայերը թեև դիմեցին ինքնապաշտպանության ու հերոսական էջեր գրեցին իրենց բազմադարյան պատմության մեջ, բայց անկարող եղան փոխել իրերի ընթացքը։

Երևան, 1985 թ.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մարքսիզմի դասականներ

Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Երկեր*, հհ. 2, 39։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունները ռուս քաղաքական գործիչների հետ, Եր., 1957։

Վ. Ի. Լենին, *Երկերի լիակատար ժողովածու*, հհ. 2, 7, 16, 17, 24, 25, 26, 27, 30, 33, 47։

Վ. Ի. Լենին, *Ազգային ու ազգային գաղութային հարցի մասին*, Եր., 1957։

Կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության գործիչներ

Կնունյանց Բ., *Ընտիր երկեր*, Եր., 1978։

Մարտունի Ալ. (Ալ. Մյասնիկյան), *Կուսակցությունները գաղութահայության մեջ*, Թիֆլիս, 1924։

Մյասնիկյան Ալ., *Երկեր հինգ հատորով*, հ. 1, Եր., 1984։

Մռավյան Ա., *Դաշնակցության կրիզիսը*, Վիեննա, 1907։

Շահումյան Ստ., *Երկերի լիակատար ժողովածու*, հհ. 1, 2, 3, 4։

Ջափարիձե Գ. Ա., *Ընտիր հոդվածներ, ճառեր և նամակներ*, Եր., 1970։

Սպանդարյան Ս., *Ընտիր երկեր*, Եր., 1982։

Արխիվային նյութեր

Հայկական ԽՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ (ՀԽՍՀ ԿՊՊԱ),
Ֆ. 56, ց. 1, գգ. 52, 99։
Ֆ. 57, ց. 1, գգ. 299, 563, ց. 2, գ. 685։
Ֆ. 408, ց. 1, գգ. 90, 98, 162։
Ֆ. 427, ց. 1, գգ. 4, 5, 26, 27, 28, 66։

ԽՍՀՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ
Ֆ. 1300, ց. 29, գ. 56, ֆ. 2000, գ. 6881։

Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ
Ֆ. Քաղարխիվ, 1909, ց. 482, գ. 543, 1910, ց. 482, գգ. 544, 718, 1911, ց. 482, գ. 719, 1913, գ. 719։

Տպագիր աղբյուրներ

Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820—1920 թթ.)։ Տեքստը պատրաստեցին, առաջաբանը և ծանոթագրությունները գրեցին Ա. Զաքարյանը, Գ. Հովհաննիսյանը, Եր., 1982։

Առենագրություն աղգային ժողովո, Կ. Պոլիս, 1909։

Արևմտահայ գրողների նամականի, Եր., 1972։

Դիվան Հ. Հ. դաշնակցության, Բոստոն, 1934, հ. 1։

Սրագիր հնչակյան կուսակցության, երրորդ հրատարակություն հանդերձ մեկնություններով, Լոնդոն, 1897։

Սրագիր սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության (Տաճկաստանի համար), Կ. Պոլիս, 1910։

Հ. Հ. դաշնակցության ծրագիրը, Կ. Պոլիս, 1908։

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Եր., 1972։

Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ծրագրի նախագիծը, կազմակերպական սիստեմը և կանոնադրությունը, 1905։

Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. проф. М. Г. Нерсисяна, Е., 1966.

Գրականություն

Ալպոյաճեան Ա., Անհետացող դեմքեր, Գրիգոր Զոհրապ (իր կյանքը և գործը), Կ. Պոլիս, 1919։

Անանուն Գ., Ռուսահայերի հասարակական գործագումը, հ. 3 (1901—1918), Վենետիկ, 1926։

Անդրեասյան Ա., Պատմություն ռամկավար ազատական կուսակցության Ամերիկայի արևմտյան շրջան, Լոս-Անճելես, 1981։

Անեմյան Հ., Հայոց Հայրիկ, հ. 1, Թավրիզ, 1927։

Ավետիսյան Վ. Ա., Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Եր., 1976։

Աւգումանյան Մ. Վ., Բոլշևիկների գործունեությունը և հեղափոխական շարժումները Հայաստանում 1907—1917 թթ., Եր., 1959։

Աւգումանյան Մ. Վ., Հայաստան 1914—1917 թթ., Եր., 1969։

Բարսեղյան Խ. Հ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, գիրք երկրորդ, Եր., 1967, 1975։

Պարամանյան Ս., Նոր պատմություն հայոց համառոտ, սկզբեն մինչև մեր օրերը (1908), Կ. Պոլիս, 1909։

Պարամանյան Ս., Ամենապատիվ S. S. Մատթեոս ս. արքեպիսկոպոս Իզմիրլյան, բարձրաշնորհ տ. Եղիշե ս. եպիսկոպոս Դուրյան, Կ. Պոլիս, 1908։

Պարբիեյյան Սմբատ Մ., Հայկական հզնաժամը և վերածնունդը, Պոսթոն, 1905։

Պաբբիեյյան Վ., Դանիել Վարուժան, Եր., 1978։

Պալյաճյան Կ., Արշակ Զոպանյան, Եր., 1987։

Պարբիեյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947։

Սեամյան Հ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Աղեքսանդրիա, 1929։

Զավեն արեեպիսկոպոս, Պատրիարքական հուշերս. վավերագրեր և վկայություններ, Գահիրե, 1947։

Զոհրապ Գր., Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ, Պեյրութ, 1976։

Զոհրապ Գր., Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, Կ. Պոլիս, 1910։

Զոհրապ Գր., Մեր կյանքեն, քրոնիկներ, նշմարներ, հրապարակական էջեր, ուղևորի նոթեր, Գահիրե, 1945։

Զոհրապ Գր., էջեր ուղևորի մը օրագրեն, Իզմիր, 1922։

Թամրազյան Հր., Սիամանթո, Եր., 1969։

Թումանյան Հովհ., Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1951։

Ինճիկյան Հ. Գ., Հեղափոխության մարտիկը, Եր., 1979։

Իշխանյան Ք., Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907։

Խուրշուդյան Լ. Ա., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Եր., 1964։

Խուրշուդյան Լ. Ա., Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Եր., 1977։

Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916 թթ.), Եր., 1965։

Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Եր., 1980։

Համբարյան Ա. Ս., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Եր., 1965։

Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914), Եր., 1979։

Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր, Եր., 1963։

Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Եր., 1974, հ. VI, 1981։

Հայ նոր գրականության պատմություն, հ. 4, Եր., 1972, հ. 5, 1979։

Հիսունամյակ (1887—1937) սոց.-դեմ. հնչակյան կուսակցության, հ. Ա, Փրովիտենս, 1938։

Հյուսյան Մ., Գրիգոր Զոհրապ, Եր., 1957։

Հովճաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2, Եր., 1956։

Հուշարձան նվիրված սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության քառասունամյակին, Փարիզ, 1930։

Հուշեր Արմենակ Եկարյանի, Գահիրե, 1947։

Ղարիբջանյան Գ. Բ., Կառլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, Եր., 1971։

Մաճուկյան Ա., Հակոբ Պարոնյան, Եր., 1964։

Մելիքյան Հ. Ս., Հեղափոխական շարժումները Կովկասյան բանակում (1914—1917), Եր., 1975։

Մխիթարյան Մ. Ն., XIX դ. II կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Եր., 1976։

Մկռտիչ Տիգրան, Ամիտայի արձագանքներ ու վերակոչումներ, հ. Բ, Նյու Յորք, 1953։

Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Եր., 1955։

Շահազիզ Ստեփան, Գրիգոր Զոհրապ, Պեյրութ, 1959։

Զոպանյան Ա., Հայաստանը թուրք լուծին տակ, Պոստոն, 1918։

Զօպանյան Ա., Նամականի, Եր., 1980։
Պատմություն սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության, 1887—1962, հ. Ա, Պեյրութ, 1962։
Պողոսյան Ս. Կ., Գոյատևման պայքարի քառուղիներում, Եր., 1988։
Ջաղեթյան Գ. Ա., Մոտիկ անցյալից, Եր., 1969։
Ռշտունի Վ., Դանիել Վարուժան, Եր., 1961։
Սարինյան Ս., Րաֆֆի, Եր., 1957։
Սասյան-Կյուլյան, Ս., Ինքնավար Հայաստան, Գահիրե։
Սապահ-Կյուլյան Ս., Պատասխանատուները, Փրավիտենս, 1916։
Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները, Պեյրութ, 1969։
Սերոբյան Մ., Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով (վերլուծումներ Հայկական հարցի շուրջը), Գահիրե, 1948։
Սիամանթո, Ամբողջական գործեր, 1954։
Սիամանթո, Ընտիր երկեր, Եր., 1957։
Սիմոնյան Հր. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986։
Սիրվարդ, Փարամազ, Փրավիտենս, 1954։
Ստեփանյան Գ. Խ., Հակոբ Պարոնյան, Եր., 1964։
Ստեփանյան Գ. Խ., Արփիար Արփիարյան, Եր., 1955։
Սևակ Պ., Երկերի ժողովածու, հ. 6, Եր., 1976։
Վարանդյան Մ., Հայ հեղափոխական դաշնակցության պատմություն, հ. Ա, Փարիզ, 1932։
Վարուժան Դանիել, Երկեր, Եր., 1984։
Վարուժան Դանիել, Նամականի, Եր., 1965։
Տեյան Վ., Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1961, հ. 3, Եր., 1963։
Տեր-Միհայան Ռաբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Լոս Անճելոս—Գալիֆորնիա, 1952, հ. Զ։
Րաֆֆի, Երկերի ժողովածու, հհ. 3, 4, 6, 9, 10, Եր., 1962—64 թթ.։
Փափազյան Վ., Իմ հուշերը, հ. 2, Պեյրութ, 1952։
Օրմանյան Մ., Ազգապատում, մաս Գ, Երուսաղեմ, 1927։
Օրմանյան Մ., Խոհք և խոսք, Երուսաղեմ, 1929։
Мнацаканян Г. Д., Разрешение армянского вопроса. М., 1914.

Պարբերականներ

Ազատամարտ, 1909, № 63, 1911, № 7—12։
Ազգ, 1907, ապրիլի 20, հուլիսի 6, 20, 27, օգոստոսի 10, 1908, մայիսի 9, 25, հունիսի 6, 27, հուլիսի 4, օգոստոսի 8, 29, 1914, №№ 37, 39։
Ազատ բեմ, 1905, № 25։
Արծիվ Վասպուրական, 1956, № 2։
Անահիտ, 1899, № 1—2, 3, 7, 12, 1900, № 3, 4—11, 1901, № 2, 3, 6—7, 10—11, 1902, № 2, 7, 1903, № 8, 1905, № 2, 1906, № 3—5, 8—12, 1907, № 1—2, 1908, №1—4, 1909, № 1—6, 1910, № 11—12, 1930, № 3։
Ապագա, 1907, № 19, 47։
Աշխատանք, 1912, № 7—96։
Արարատ, 1880, 1888, 1895, 1907, 1908, հուլիս-օգոստոս, սեպտեմբեր, 1909, ապրիլ, 1910, օգոստոս, 1912, սեպտեմբեր, 1913, փետրվար-մարտ, 1914, փետրվար-մարտ, հունիս, սեպտեմբեր, դեկտեմբեր։
Արաքս, 1905, № 1—6, 8, 9, 1906, № 11, 12, 15, 34, 41, 46, 1907, № 1, 3։
Արմենիա, 1886, հունվարի 9, 16, 19, 1889, մարտի 27, 1897, հունվարի 27, մայիսի 5, սեպտեմբերի 18, հոկտեմբերի 2, նոյեմբերի 13, 1898, հունվարի 1, մարտի 23, սեպտեմբերի 3, 1899, օգոստոսի 30, հոկտեմբերի 4, նոյեմբերի 15
1900, փետրվարի 17, ապրիլի 4, նոյեմբերի 14,
1901, փետրվարի 20, հոկտեմբերի 27,
1902, հունվարի 22, նոյեմբերի 5,
1903, փետրվարի 4, 25, օգոստոսի 6, սեպտեմբերի 23, հոկտեմբերի 7
1904, ապրիլի 9, 23, 30, հունիսի 4, օգոստոսի 6, սեպտեմբերի 28, հոկտեմբերի 13, 15, դեկտեմբերի 21,
1905, հունվարի 18, 25, մայիսի 10, նոյեմբերի 15, դեկտեմբերի 20
1906, հունվարի 17, փետրվարի 17, հունիսի 27, հուլիսի 6, հոկտեմբերի 3, 17, 24, նոյեմբերի 7, դեկտեմբերի 5,
1907, հունվարի 9, մարտի 6, ապրիլի 3, 10, հուլիսի 6, օգոստոսի 24, սեպտեմբերի 11, նոյեմբերի 3,
1908, օգոստոսի 5, սեպտեմբերի 9, 16, հոկտեմբերի 14, 28, նոյեմբերի 11
1913, հոկտեմբերի 15, 29, նոյեմբերի 26,
1914, ապրիլի 1, նոյեմբերի 25, դեկտեմբերի 16,
1915, մարտի 10, 31։
Արևելք, 1885, № 301, 367, 1890, № 1860, 1897, 1916, 2049, 2053,
1901, № 4622, 4711, 4717, 4728, 4792,
1904, № 5521, 1905, 6037, 6049,
1908, № 6848, 6850, 6855, 6894,
1909, № 7211, 7217, 7219, 7220,
1910, № 7221, 7222, 7223, 7236, 7239։
Բանվոր, 1904, № 1—2։
Բանբեր Երևանի համալսարանի, 1968, № 1։
Բյուզանդիոն, 1908, № 3590, 3598, 3684, 3685,
1909, № 37557, 3778, 4007, 1910, 4195, 4279,
1911, № 4625, 1912, 4630, 4652, 4660,
1913, № 5025, 5033, 5131, 1914, 5265, 5489։
Դրոշակ, 1890, № 1, 1901, № 1—3, 1894, № 10—11, 1895, № 8, 10,
1898, № 4, 6, 7, 1899, № 4, 8, 9,
1900, № 1, 2, 4, 1901, № 4, 5, 7, 1902, № 7, 1904, № 4, 8, 10,
1905, № 5, 1907, № 3, 1908, № 7—10, 1913, № 2—4, 11—12։
Երիտասարդ Հայաստան, 1914, № 2, 4, 6, 10, 12, 36։
Երկրի ձայն, 1907, № 25, 28։
Զարթոնք, 1960, դեկտեմբերի 25։
Իրավունք, 1907, № 29։

Ճումա, 1905, № 3, 6—10։
Ժուսարհր, 1905, № 5, 54, 60, 67, 76, 90, 93, 132, 141, 143, 164, 1905, № 169, 171, 172, 175, 179, 203, 240, 291, 301, 304, 311, 1907, № 325, 330, 380, 383, 393, 394, 395, 415, 429, 440, 456, 1908, № 485, 521, 524, 527։
Ժողնակ, 1901, № 28—30, 33։
Ժայրենիք, 1923, № 10, 11։
Ժայրենիքի ձայն, 1985, № 25։
Ընկակ, 1889, № 1, 1891, № 14, 1897, № 10, 1902, № 1, 2, 1906, № 8—10, 1907, № 1, 2, 6—7, 9—12, 1908, № 6, 7, 1913, № 2—5, 1914, № 1։
Հովիվ, 1906, № 1, 41, 42, 1908, № 21։
Հորիզոն, 1912, № 206, 259, 260, 1913, № 11, 14, 26, 1914, № 4, 27, 35։
Ձայն, 1906, № 1։
Ձայն Ժայրենյաց, 1901, № 70, 72, 83, 1902, № 119, 125, 131, 1903, № 218, 229, 232, 233, 1904, № 260, 309, 310, 1905, № 369, 1908, № 2, 3, 8, 1909, № 3, 11, 12, 16, 23, 31, 32, 35, 36, 39, 1910, № 11, 23, 28, 31, 32։
Մասիս, 1878, № 2122, 2143, 2148, 2198, 1879, № 2332, 2461, 1886, № 3870։
Մարտ, 1897, № 3, 6, 7, 1898, № 9, 11, 14, 1899, № 16—19, 1900, 23—26, 1886, № 3870։
Մարտ, 1897, № 3, 6, 7, 1898, № 9, 11, 14, 1899, № 16—19, 1900, № 23—26, 1901, № 28։
Մեղու Ժայաստանի, 1878, № 3, 5, 10, 15, 26, 32, 33, 35, 42, 1880, № 12, 15, 31, 63, 1881, № 2, 191, 192, 233, 1882, № 5, 66, 132, 1883, № 25։
Մշակ, 1881, № 5, 21, 23, 34, 40, 202, 216, 1885, № 20, 82, 93, 116, 1889, № 100, 1890, № 7, 1895, № 55, 56, 88, 89, 1901, № 281, 1902, № 201, 1904, № 76։ 1905, № 193, 1906, № 8, 138, 159, 219, 1907, № 24, 1908, № 49, 54, 90, 105, 151, 154, 155, 158, 162, 178, 185, 194, 197, 210, 265, 1909, № 250, 1911, № 55, 153, 193, 194, 219, 233, 1912, № 130, 196, 217, 1913, № 21, 110, 111, 150, 254, 272, 274, 275, 277, 279, 290, 1914, № 33, 45, 77, 94, 229, 234—236, 245, 250, 258, 259, 279, 280։։
Նաիրի, 1975, № 46—50։
Մուրճ, 1895, № 3—4, 1906, № 1, 3, 7, 1907, № 3։
Նոր կյանք, 1898, № 4, 12, 13, 14, 1899, № 1, 12, 20, 22, 1900, № 2, 9, 1901, № 3, 5, 15, 18—21։ 1902, № 1, 2։
Նոր հոսանք, 1913, № 2։
Նորք, գիրք 2-րդ, 1922։
Շևփոր, 1908, № 10։
Շիրակ, 1905, № 10—11։

Պայքար, 1916, № 37, 1951, № 63։
Պատմա-բանասիրական հանդես, 1965, № 4։
Պրոլետարիատի հոիվը, 1903, № 2—3։
Ռազմիկ, 1906, № 93։
Ռահվիրա, 1912, № 2։
Վան-Տոսպ, 1913, № 1—4, 8, 1914, № 40—92, 1915, № 14—106։
Վերածնություն, 1903, № 6, 9, 24։

«Правда» (1912—1917) и «Социал-демократ» (1908—1917 гг.) о Закавказье (сборник), составитель Г. А. Исаакян, Е., 1968.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

Գլուխ առաջին

Հայ հասարակական հոսանքների տեսակետները
արևմտահայության ազատագրության մասին . . . 6
Կղերապահպանողականներ 6
Ազգային-պահպանողականներ . . . 45
Բուրժուական գաղափարախոսներ 56
Դեմոկրատներ 121

Գլուխ երկրորդ

Հայ բաղաքական կուսակցությունների ու
կազմակերպությունների դիրքը . . . 157
Արմենականներ 157
Հնչակյաններ և վերակազմյալ Հնչակյաններ . . . 177
«Հայ հեղափոխականների դաշնակցություն»
կուսակցությունը 210
Սոցիալ-դեմոկրատներ 240
Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ
կազմակերպություն («Սպեցիֆիկներ») . . . 248

Գլուխ երրորդ

Հայ հասարակական-բաղաքական ուժերի դիրքորոշումը
1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո . . . 256
Պահպանողականներ 260
Լիբերալներ 279
Անկուսակցական դեմոկրատներ 305
«Հայ հեղափոխականների դաշնակցություն»
կուսակցությունը 334
Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն . . 351
Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն . 363
Վերակազմյալ հնչակյաններ 375
Բոլշևիկներ 383
«Սպեցիֆիկներ» 401
Արևմտահայ ազգային ուժերի համախմբման
գաղափարը և փորձերը 405
Հայ հասարակական քաղաքական շրջանների դիրքորոշումը
առաջին համաշխարհային պատերազմի տարիներին . . 427
Աղբյուրների և գրականության ցանկ 473

Ազատ Սարգսի Համբարյան

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(XIX դարի վերջ— XX դարի սկիզբ)

Азат Саркисович Амбарян

АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ МЫСЛЬ О ПУТЯХ ОСВОБОЖДЕНИЯ ЗАПАДНЫХ АРМЯН

(конец XIX—начало XX вв.)

(На армянском языке)

Ереван «Айастан» 1990

Հրատ. խմբագիր՝ էդ. Վ. Գևորգյան
Նկարիչ՝ Է. Բ. Ղազարյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ն. Բ. Նահապետյան
Վերատեսող սրբագրիչ՝ Լ. Մ. Գևորգյան

ИБ 5773

Հանձնված է շարվածքի 28.06.89 թ.։ Ստորագրված է տպագր. 22.05.90 թ.։ ՎՖ 05080։ Ֆորմատ՝ 84×108¹/₃₂։ Թուղթ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրության՝ բարձր։ 25,2 պայմ. տպագր. մամ., 24,36 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 10.000։ Պատվեր՝ 10։ Գինը՝ 2 ռ. 80 կոպ.։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ա. Իսահակյան 28։

Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան փող. № 23/1։

Типография № 6 Госкомитета Арм. ССР,
по делам издательств, полиграфии
и книжной торговли.
Ереван, ул. Туманяна 23/1.